ԿԵՆՑԱՂ

ԻՄ ԲԱՅԼԲԱՅՈՑ

ԵՒ

ՔՐԻՍՏՈՆԷԻՑ

Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան կողմէ
Հայկական ՍՍՌ Գիտութիւնների
Ակադեմիայի Մատենադարանին

1966

2

ՏԵԱՌՆ

ԿՊՉՈՒԹԻՒՍԻ ՓԻԼԻՕՐԱՅ

ԿԵՆՑԱՂ

ԻՄԱՍՏԱՍԷՐՈՑ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ՔԵՐՈՊԷԻ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋՆԱՒՈՐ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

1901
Հիսուն

Ի ՎԻՆՆԱՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1845

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՏՈՒՆ ԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՀԱՄԲԱՒԱՏԵՆՉՍ այս յօրինուած մեծի մա-
տենագրին Ցլէօրեայ նախագիծ օրինակ վը-
կայեալ է յամենեցուն զգաստասէր և ճշմարիտ
քաղաքավարութեան՝ նկարագրեալն բարուց և
սովորութեանց աստուածընտիր և աստուած-
ուսոյց ազգին, և ճշգրտահան պատկեր վա-
րուց հաւատացելոցս Քրիստոսի՝ զՀարցն մե-
ծոց առաջնոց յանդիման մեզ առնելով զգնացս
ուղղութեան։ Վասնզի և կրկնակի մասամբք
մատենիս իբրև առաջնորդ հաւատարիմ և ի-
մաստուն պատահեալ սորա ընթերցողին՝ որ-
պէս ուղևորի որ մոլորեալ իցէ յարահետս ճա-
նապարհէ, առեալ ածէ զնա յերկիրն Հայրե-
նի, և ճառ արկեալ պատմէ զմիոյ միոյ յանձ-
կալից վայրացն և զկենցաղավարութենէ նախ
նեացն նորա. և այնչափ քաղցրանայ նմին զի
յաւարտ բանիցն այլ յայլմէ թողու զնա, որ-
պէս երբեմն զուարճանն սուրբ զՅուբիլ։ Ա-
ռնն այնուհետեւ միտք սիրայորդոր ընթերցո-
ղին ՚ի նախանձ բարի գնացից մարդկանն որոց
քաղաքավարութիւն յերկինս է, և անջինջ
դրոշմեալ ՚ինայ ՚ի սրտին գործարանի նկատե-

լոյն ամենայնի պատկեր Աստուածարուեստ. պատկեր ոչ անմահն արդարև ի ստուերատիպ մթութեանց ինչ՝ սակս տակաւ Թուլացելոցս կարգաց, այլ նովին իսկ անաղօտ և պայծառացեալ փայլէ ի նմա նկարուցն գեղեցկութիւն։

Այսոյ որոյ և ոչ ինչ տարագիպ ընծայի արգեօք մատեանս այս և ի մեր բարբառ ի ժամանակի յորում արտասուալից աչօք տեսանեմք հաւաստեալ յամենայն ի դասս մարդկան զԱերթողահօրն մերոյ երանելւոյ զողբալից կանխասացութիւնսն. քանզի չատ իսկ խրթնացան արդ եկեղեցիք ի բարեզարդութենէ բեմիւն, և շատք ի ժողովրդոց զանուն ևեթ կրեն զհաւատացելոց Քրիստոսի. որպէս տեսցեն ընթերցողք յայտ յանդիման յորժամ զանս մատենիս ընդ մերոյս կշռեալ համեմատեսցեն զնացիւք։ Այսպէս մեր այս է յոյս ակնկալութեան, եթէ ոչ սակաւ ոգեշահ գըտցի մատեանս որոց քաջ մտադրութեամբ զսկզբան գայցեն, և զգծագիրս ուղղութեանցն ջան ի գործ առնիցեն յանձինս իւրեանց ձըշգրտել։ Այսմ է արդ սուղ ինչ բանիւք ծանօթս տալ զվարուց մատենագրին, և ապա նմին ինքեան թողեալ զատենախօսութեանն ասպարէզ՝ թարգմանն ևեթ հաւատարիմ անցեալ կալ մեզ ի միջի ախորժ յօժարութեամբ և ազգասէր ջանիւ։

ՎԱՐԴԱՊԵՏ ՖԼՈՐԵՆՑԻՈՅ

ԿՂԴՈՒՈՍ ՖԼՈՐԻ, հայր պատմաբանից եկեղեցւոյ Քրիստոսի ըզ վինի Եւսեբեայ կեսարացւոյ կացին, ծնաւ՝ ի փարիզ Գաղղիացւոց՝ ի վեց դեկտեմբերի յամի տեառն 1640, և մարդեցաւ առ ոտս հարցն Ձիսուսեանց զամս վեց։ Եւ ոչ միայն ընդհասարտ յոյժ զանձն խոստովանէր քաջացն այնոցիկ վարդապետաց զամենայն աւուրս իւր, այլ և զարգասիս հրահանգաց նոցին բազմաբեղուն ընծայեաց յիւրում անձինն և՝ ի մանկունս եկեղեցւոյ։ Քանզի այր առեներհատ և իրաւագէտ գոլով հօրն նորա, յաւուրն օրինաց և պատմութեան կարգեաց եդ զառաջինն և զորդեակն իւր։ և քաջացաւ պատանին՝ ի վարժս իրացն, և զամս ինն հանապազորդեաց՝ ի նոյն։ սակայն չընդաբոյս բարուցն անգորրասիր բարեպաշտութեան յաղթահարեալ՝ ի վերջին՝ եւս զանձն իւր՝ ի խորս աստուածաբանականին և սրբոց հարցն մատենից, և կոչեցաւ արժանապէս՝ ի ձեռնադրութիւն քահանայութեան։ Եւ այնչափ պայծառացաւ՝ ի գերատեճան պայմանին, զի և՝ ի Լուդովիկոսէ ԺԴ աքսոյէ մեծարեալ ամբարձաւ՝ ի պատիւ բարձակցութեան Ֆենելընի մեծի, այս է՝ ի դաստիարակել ընդ նմին զաքսորդիան վեհազունս։ և ոչ ինչ ընդհատաւ՝ ի նմանէ յաջողեցաւ՝ ի կարևոր պաշտամանն։ Յօդացաւ և քառասնից Գաղղիական ճեմարանին։ ընկալաւ և այլ ևս աւագութիւնս եկեղեցականս յաքսայակոյս կոմսանէ։ բայց ոչ՝ ի ըզգաստասէր չափաւորութենէն դրդուեցաւ ինչ նա, և ոչ

յանդուզ վաստակոցն գրաւորականաց կասեցաւ երբեք՝ յորս պարապեր անխոնջ ի փառս անդ աբբահեռաց իբրև յանմարդի անապատի: Եւ արդեօք ոչ ինչ դանգաղելի էր մեզ զմի ի բազմաթիւ երկասիրութեանց քոյին առնս ի մէջ ածել, և զկարեւոր գիտելիսն տալ զնոցանէ. այլ զի առ ժամայս զմիոյ ի փոքրագունիցն ևեթ նորա մատենագրութեանց առաջի արկեալ է մեր ընծայել՝ զմարգմանութիւն, այլում լեզի պատեհի զբովանդակ գրուածոց նորին առնել պարապով ջհամար: Մեզ շատ իցէ յուշի կապել, զի յոմանս ի շարագրաց ծացն այնպիսի ինն փայլեցոյց նա հանճար և վսեմութիւն և վայելչահիւս բանից քաղցրութիւն, զի և աքանչելոյն Պոսիւէի վկայեցաւ զուգակից. քանզի և է իսկ աստուածբան քաջ, և գաւառս կորովամիտ, և խորաշրնին խնամատար, և պատմիչ անակնառու, և հռետոր ամբարիշտ և յինքն յանկուցաչնող զընթերցանելսն առ հասարակ: Այլ ներեսցի մեզ գերագոյն ամենայնի զայս վերընծայել նմին գրուածս, զի որպէս ասաց ոմն, «Ձեկաց աք այլ մատենագիր որ հանգոյն նմին և հմտութեամբն և խոնարհութեամբ ծայրագեալ իցէ. որ ընդ այնչափ աւագութեանն և անպատճոյ այնպէս իցէ ի գնացսն, և հեզահամբոյր ի բարսն, և անարատ մտաւքն յամենայնի. և որոյ մեն մի ի բանիցն մարգասիրութիւն լեալ իցէ, և մեն մի ի գործոցն առաքինութիւն»:

Ձայս օրինակ քաղաքավարեալ ի մարմնի մեծս այս և արժանի քարոզ չքնաղ և նախանձելի վարուց Քրիստոնէիցն առաջնոց զամս ուրեսուն և երիս, փոխեցաւ առ անճկալին իւր Քրիստոս յամի 1723, ի յոգեբաստանեղորգի աւուր ամենեցուն յուլիսի:



ԿԵՆՑԱՂ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՍ

Յաղագս որոց զոր ընտրեաց Աստուած ՚ի պահպանութիւն Ձեմարիտ կրօնիդ մինչև ՚ի ժամանակս քարոզութեան աւետարանին, չքնաղ իմն օրինակ է մարդկային կենաց, և պատշաճագոյն մերում բնութեան։ Օ՛ ՚ի սովորութիւնս նորա օրէնք հայթայթելոյ զկեանս, պարապելոյ ՚ի գործ, և բնականալոյ ՚ի քաղաքաժողով ընկերութեան այնպէս իմաստութեամբ կարգեալ են, զի մարթիմք ուսանել անտի ոչ զբարոյականն միայն, այլ և զտնտեսականն և զքաղաքական։ Այս սակայն այնպէս տարօրինակ են սովորութիւնքնոցա ՚ի մերոց,

զի ՚ի սկզբան անդ և սարտուցանէն իմն զմեզ
Վհանգի չիք տեսանել առ Իսրայելացիս զիա-
ռաց անուանսն, և ոչ զբազումազգի ազգի ա-
ւազութիւնս, և ոչ զզանազան պայմանս կե-
նաց՝ որք առ մեզս են։ Ոմինեքին նոքա երկ-
րագործք էին և խաշնարածք, ամենեքին առ
հասարակ ՚ի վաստակոց ձեռացն իւրեանց
կէին. ամենեքին կանամբիք էին, և յօրհնու-
թիւնս համարէր առ նոսա բազմութիւն զա-
ւակաց։ Ոչ նոքա թուին մեզ խորութիւնք
կերակրոյն, և անանոյ սրբոց և անսրբոց, և
ստէպ ստէպ մկրտութիւնքն նոցա. և նողկամբ
մեք յարիւնահեղ զոհից զենմանց։ Ցեսանեմք
դարձեալ զյօժարամտութիւն նոցա ՚ի կռա-
պաշտութիւն, վասն որոյ և զյաձախ կշտամ-
բանս գրոց զանհնազանդութենէ նոցա և ըզ-
խստապարանոցութենէ, և զի թանձրամիտս և
կարի մարմնաւորս կոչեն զնոսա վարդապետք
եկեղեցւոյ։ Ոչ այսոքիւք և խառնիխուռն իմն
նախաժամն կարծիք, թէ որ ինչ էին է՝ այն
և թերի իցէ, դիւրահաւանս գործեն զմեզ ե-
թէ նոքա աքք անոսայք և տգէտք էին. վասն
որոյ և սովորութիւնք նոցա անգոնեալիք ի-
ցեն մանաւանդ քան թէ զարմանալիք։

Այլ վասն այսորիկ խոկ արդեօք սակաւք են
որ յընթերցումն աստուածաշունչ մատենից
պարապիցին, և մանաւանդ հնոցն կտակարա-
նաց, կամ սակաւք ՚ի պարապելոց անտի օգտին

ինչ: Օ ի բարեպարիշտքն՝ի քրիստոնեայս, որոց դեռ և պաշարեալ են միտք՝ի մոռահաձու-
Թեանց աստի, չըտնուն յերեսաց օտարոտի սո-
վորութեանցն, և անխտիր զամենայն անկատա-
րութեէ հին օրինաց գրեն, և կամ այնպէս հա-
մարին եթէ խորհուրդք իմն ծածուկք ընդ ար-
տաքին կերպարանօքն կայցեն անհասք ին-
քեանց՝ոսկ որ գայթ՝ի գայթի կան՝ի հաւատս
և Թերուղիղ են սրտիւք, վտանգին՝ի փորձու-
Թենէ անգոմնելոյ սմին իրի և զդիրս սուրբս
ինքնին գլխովին, իբր այն Թէ զընչենոյ ձառի-
ցեն. կամ Թէ ձախողակի իմաստասիրութեամբ
իրաւունս իմն ախտիցն իւրեանց հնարին անտի
հայթայթել:

Ասկայն զՈսրայելացւոցն սովորութիս ընդ
Հռոմոցն եգեալ՝ի կլիս, կամ Թէ ընդ Յու-
նացն և ընդ Աղիպտացւոց և ընդ այլոց նախնի
ազգաց որ պատուականագոյնք մեզ Թուիցին,
այս ամենայն մոլորութիք մոռց՝ի բաց՝ի մէնջ
փարատին: Ընդ է տեսանել այնուհետև վսեմ
իմն պարզութիւն վերջ քան զամենայն բարե-
ձևութիւնս. և զի որ ինչ՝ի բարեաց մասին գոյր
՝ի սովորութիւնս այլոց ժամանակակից ազգաց,
նոքիմիք վաղուց և պերձացեալ էին Ասրայէլա-
ցիք, բայց և՝ի բազմագունիցն՝ի յոռութեանց
նոցա զերծք. և զի անհամեմատ առաւելու-
Թեամբ զանցանէին և զնոքօք այնու զի քաջ
գիտէին եթէ առ ինչ ուղղել էին զկենցաղոյս

ընթացս. քանզի Յանաչէին զՀմարիան կրօնս որ հիմն է ուղղութեան վարուց։

Յայնժամ ասա ՚ի միտ առնուցումք եթէ զիարդ խորել լեզ ընդ այնոսիկ ՚ի սովորութենէ նոցա յորոց գալշիմքն, ընդ այնոսիկ որ առ ժամանակաւն ևեթ և վայրացն հեռաւորութեան թուին մեզ անգոմնելիք՝ ինքնին անգանազանք գոլով, և ընդ այնոսիկ որ ինքնին գովելիք եղեն, և առ ապականութեան ևեթ մերոցս բարոյից դժպհիք մեզ թուիցին։ Վասն զի խոհիր զանազանութեանն որ ընդ նոսա և ընդ մեզ՝ ոչ այնչափ անտի է զի մեք քրիստոնէութեամբս առաւել լուսաւորեալ եմք քան զնոսա, այլ անտի մանաւանդ զի յուղղութենէ նոցա նուազեալ գտանիմք։ Իբր ոչ եթէ քրիստոնէութիւնն իցէ որ եմոյծ ՚ի նոսա զմեծ զայս աննմանութիւն վարուց մերոց ընդ նոցայն, զարհամարհութիւն աշխատութեան, զյօժարութիւն մեր ՚ի խաղս, զմեծարգութիւն կանանց և զմանկտուց, և զխորշումն յանպատշաճ Ա ՚ի ժուժկալ կենաց՝ որով այսքան ընդհատ եմք ՚ի նախնեացն վարուց։ Այլապէս զՀովիւն զայնոսիկ և զերկրագործ մարդիկ որ ՚ի պատմութեան Իսրայելացւոց, առ որս դուն ուրեք ՚ի պէտս գայր արծաթ, և փարթամ մեծութիւն, դիւրագոյն և էր արդեօք յարդարել ընտիր քրիստոնեայս, քան թէ զաւագորեարս մեր և զերաւագետս և զգանձապետս և զան-

չափ բազմութիւն մարդկան որ կեանս վա-
րեն դատարկասուն և ստահակ աղքատու-
թեամբ լի ։ Ո՛չ այս ամենայն քաջ յերևան
ածել նկարագիր վարուց քրիստոնէից, զոր ըզ-
հետ Իսրայէլացւոցն սովորութեանց յանդի-
ման արարից ։

Սակայն ոչ ներբողս ինչ աստանօր կամ է
ինձ յօրինել, այլ պատմագրել և եթէ պարզա-
բար, որպէս որք ջհեռաւոր վայրաց գրիցեն
զիրս ճանապարհորդից· վասն որոյ և զբարին բա-
րի ասացից, և զչարն չար, և զանզանազանն
անզանազան ։ Շատ է ինձ զի որ զգիրս զայս
յաին արկանիցէ, զերծ՝ի մտահաճութեանց
գտանիցի, որպէս զի պարզ մտօք և ուղղ սրտիւ
գիտասցէ դատ առնել զսովորութեանցս զայս-
ցանէ ։ Եւ աղաչեմ՝ի քաց թօթափել զի-
մաստս աշխարհիս մերոյ և ժամանակի, առ՝ի
կարող լինելոյ նկատել զԻսրայէլացւոցն ըստ
հանգամանաց և տեղեաց յորս նոքայն բնա-
կեին, ՝ի կլուռ գնել զնոսա ընդ ազգս բնակեալս
առ նոքօք, և այնպէս խելամուտ լինել ոգւոյ
և մտաց նոցա ։

Վասնզի որք ոչն՝ի սպառ տգէտք են պատ-
մութեանց, տեսանեն զանմանութիւնն մեծ
՝ի բարս մարդկան ներգործեալ՝ի հեռաւորու-
թենէ ժամանակաց և տեղեաց ։ Ի նմին աշ-
խարհի բնակեմք մեք՝ուր երբեմն Պաղեստացիք
բնակէին, և ապա Հռոմայ· այլ քանի օտարա-

ցեալ եմք արդ՝ ի սովորութեանց երկաքանչիւր աղգացն, և՝ ի փրանկացն իսկ, որք իբր ուղիղ հարիւր ամաց յառաջ ունէին զաշխարհս զայս։ Պաքէն և զարդիս զինչ նմանութիւն ինէ սովորութեանց մերոց ընդ Հագարացւոցն, և ընդ Հնդկացոց, և ընդ Ալինեացւոց։ Պատ՝ ի հեռաւորութիւն տեղեաց յաւելեալ և զժամանակին, ոչ ևս լուցի մեզ զարմանալ զի այնչափ օտար իցեն սովորութիւնք մեր՝ ի նոցայոցն՝ որք՝ ի Պաղեստին յառաջ քան զերիս հազար ամն բնակէին. զարմանք այն իսկ են եթէ նման ինչ ուրեք երբէք մերոցն գտանիցեմք՝ ի նոսա։

Այս ոչ՝ ի դէպ է կարծել թէ սահմանեալ կարգք իցեն փոփոխութեանցս այսոցիկ, և նովիւն կարգաւ միշտ յառաջատիցեն։ Խաղալ ամգամ յաշխարհս սահմանակիցս այլ և այլ են սովորութիւնք առ զանազանութեան կրօնից և տէրութեանց, որպէս արդ՝ ի Պարսիս և Ալբիկէ, որք ընդ Հռոմովք զնոյն ունէին Որէնս։ Այս ընդ հակառակն քաղաքականութիւն է արդ սովորութեանց Պարսիցւոց աշխարհին ընդ Վերմանացւոց, ուր առ Հռոմովք բնաւ անմնմանք էին միմեանց. զնոյն է ասել և յաղագս այլ և այլ ժամանակաց։ Որք անտեղեակքն են պատմութեանց, լուեալ եթէ մարդիկ՝ ի հնումն պարզամիտ քան զմեզ էին, կարծեն եթէ աշխարհս երթայ և Հարտարա-

մոհ. և թէ որչափ յառաջինն ամն ժամիմք, նոյնչափ թանձրամիտս և տգէտս գտանեմք զմարդիկ։

Ա.ՀԼԷ այնպէս յաշխարհս զորս հետ զհետ այլ և այլ կալան ազգք. զի խռովութիւնք և պատերազմունք որ՝ի վերայ հասին՝ ածեալ ձգեցին զհետ բազումանգամ թշուառութիւն և տգիտութիւն յետ ամացն յաջողութեանց և բարգաւաճութեանց։ Այսպէսն ծաղկեալ և արդ Իտալիա քան յառաջքան գուէթ հարիւր ամս. բայց ուէթ հարիւր և ամօք՝ի վեր առ ինքնակալօք բարեբախտիկ և էր և շքեղ քան այժմ։ Իսկ այլ և ուէթ հարիւր ամս յառաջ մատուցեալ առ հիմնարկութեամբն Հռոմայ գտանեմք զնա նուազեալ յոյժ՝ի ճոխութենէ և՝ի բարգաւաճութենէ, թէպէտ և անդստին յայնց ժամանակաց մարդաշատ։ Ըստ այսմ որչափ՝ի վաղագոյն ժամանակս՝ի վեր մատիցես, նոյնչափ առաւել թշուառագոյն գտցես զնա և վայրագ։

Վասնզի հասակ ինն է և ազգաց որպէս մարդոյ. և ամք գեղածաղկիկք Աղեքսանդրիւ էին, Հռոմոյն առ Օգոստեաւ, և Իսրայէլացւոյն առ Սողոմոնիւ։

Այս յազգս իւրաքանչիւր՝ի դէպ է նկատել զսկիզբնոցա, զբարեբաստութեան ամին, և զանկումն։ Այս ըստ այսոցիկ առաջի կայ մեզ խօսել զԻսրայելացւոց ընդ բնաւ ժամա-

նախն յորս կացին, ՚ի կոչմանէն Քրահամու մինչև ՚ի յետին կործանումն Երուսաղէմի, որք ժողովին ընդ ամենայն աւելի քան զերկուս հազար ամս: Եւ հատանեմք զայն յերիս՝ ըստ եբրից զանազան հանգամանաց ժողովրդեանս, սկիզբն արարեալ նախ ՚ի նահապետաց, ուստի անցցուք ապա Հառել զԽորայելացւոց յելիցն Նոցա Յոգիպտոսէ մինչև ՚ի գերութիւնն Բաբելացւոց, և յետ ամենայնի զՔրիստոս՝ ՚ի դարձէ գերւոյն մինչև ՚ի քարոզութիւն աւետարանին:

ՄԱՆ ԲՈՒԺԻՆ

ՅԱՂԱԳՍ ՆԱՀԱՊԵՏԱՑ

ՅՕԳՈՒԲՆ ԲՈՒԺԻՆ

Աքնուականութիւն նոցա :

Աքնուականն վարիչին կենցաղ նահապետք ի բարեկենդանութեան . սակայն անպատճառ էին կեանք նոցա և աշխատաւոր : Քրտամբ հաց ուտէին զնախահարս իւր զամենեսին, և ոչ խորթացոյց զաքնուականութիւն իւր, յաղագի իւրում ամուսնացեալ : Հոգացաւ ի ցեղէ իւր մի տալ կին և որդւոյ իւրում, յոր ամենայն օրհնութիւնք Աստուծոյ անկանէին . զնոյն պատուիրեաց և Իսահակ Յակոբու :

Հարք երկարակեցութեամբն իւրեանց քաջ դաստիարակէին զորդիսն, և յարդարէին զնոսա անդստին յառաջին տիոցն ուշիմս և հան-

Ճարեղս։ Ի քրահամ եկեաց դալ մի և աւելի ընդ Աեմայ. որով և ոչ ինչ դժուարին էր նմա յայնչափ ամս ժամանակի ուսանել ի նմանէ՝ զինչպիսի ինչ էր աշխարհնախքան զջնհեղեղ ջուրցն։ Ել մեկնեցաւ նա քնաւ ի հօրէն իւրմէ ի Ճարայէ, և զեօթանասնամեակաւ ուրեմն էր յորժամ բարձաւ նա ի նմանէ. իսկ Ասահակայ եօթանասուն և հինգ ամաք եին յորժամ մեռաւ Ի քրահամ. և յասեն ուրեք գիրք թէ երբեք հեռացաւ նա ի ծնողէն։ Ի ստ սմին օրինակի և այլոց նահապետաց կեցեալ հարուստ ժամանակս ընդ հարս իւրեանց, զարգանային հմտութեամբք նոցա և հնարագիտութեամբք. զհետ երթային առաջարկութեան խորհրդոց նոցա, և ի նոցին իմաստս կրթեին, անյողդողդք և անչեղուխք յուղղութեան կենաց. քանզի և փոխել գիւրին ոչ էր զսահմանս՝ որոց տակաւին կենդանի էին. և զի դարձեալ ծերք իշխէին ոչ մանկտւոյն միայն, այլ և ծերոց կրտսերագունից քան զին քեանս։

Օպատմութիւնս անցից անցելոց գիւրաւ մարթ էր ուսանել յետնոց ի տուչութենէ ծերոցունեաց՝ որք ի քանէ յօժարամիտք են ի պատմել և շատ ևս ժամանակ էր նոցա պատմելոյ. վասն որոյ և չէին կարի իսկ պէտք գրոց. և յառաջքան զի՝ ոմնէս չգտանեմք թէ այլ ոք մատենագրեալ իցէ։ Ակայն գժուարահաւատ

Թուի՝ զի այնպէս անսխալ զԹուակարգու-
Թիւնն որպէս ունէին Աովսէս զամաց կենաց
նահապետացն, զԱդամայն [1], և զամենեցուն
որոց գիտի [2], և զանվրէպ հաշիւ համարոյ ժա-
մանակին յորում սկսաւ ջրհեղեղ ջուրցն և
դադարեաց, և զչափս տապանին [3], անմո-
ռաց Ի մտի կալեալ էիցէ մարդկանն։ Այլ աքան
չելեաց գրել զիրսն աստանօր և կամ յայտնու-
Թեան՝ աւելորդ համարիմ. զի հաւանագոյն
է եթէ գիւտ գրոց յառաջ իսկ լեալ էիցէ քան
զջրհեղեղ ջուրց, որպէս երգք և քնարք [4]
որ ոչ կարևորք էին մարդկան իբրև զդպրու-
Թիւն։ Այլ Թէպէտ և ոչ ինչ անտեղի է ա-
սել զի Աովսէս և մարդկօրէն տեղեկացեալ
էր բազում ինչ իրաց զորս ստուգապատում
առնէ մեզ, սակայն հանդերձ այսու ամենայ-
նիւ և Ի Հոգւոյն սրբոյ առաքնորդեցաւ Ի
գրել զայս ինչ և ոչ զայն, և Ի բացատրել զնո-
սին պատշաճագոյն բարւոք։

Դարձեալ և փոյթ մեծ էր նահապետաց ա-
ւանդել յետնոց զյիշատակս երևելի անցից՝
կանգնելով սեղանս, և կարկառս վիմաց և այլ
արձանս հաստատունս [5]։ Ի սոյն իսկ Աբրա-
համ սեղանս բարձրացուցանէր Ի տեղին յորս
երևեցաւ նմա Աստուած [6]։ Յակոբ զվէմն

1 Ծննդ. Ե։
2 Ննգ. Է. 11։
3 Ննգ. Ը. 13։ Ձ. 15։
4 Ննգ. Գ. 22։
5 Ննգ. Իսր. 8։ Ժգ. 18։
6 Ննգ. ԻԸ. 48։

որ ՚ի տեսլեան անդ հրաշալի սանդղոցն ընդ
մնարսն կայր՝ առեալ խորան սրբեր Աստուծոյ՝,
և զկարկառ քարանցն ՚ի նշան ուխտին ընդ
Յաբանու՝ կարկառ վկայ անուաներ [2]: Զ-
սոյն զայս ցոյց նշանակի ունէին և արձանն շի-
րիմ Յակոբեայ, և ջնջորն զրկման, հանդերձ
այլովք ջնջորովք որ ՚ի պատմութեան վարուց
Տահակայ. եր զի և շատ համարէին նոր ա-
նուանս կոչել տեղեացն: Հանգոյն ինն և Հոգով
և Հոռոմք զդիւցազանցն իւրեանց պատմէին,
յորս երիցագոյնք մատ ՚ի ժամանակս նահա-
պետաց հանդիպէին լեալ: Յ՚ եր Յլլադա աբ-
ձանաք նոցա. և յամենայն տեղիս ընդ որս
Էանց Կնեաս, Յլլադա, ՚ի Սիկիլիա և Յի-
տալիա յիշատակարանք ՚ի նմանէ թողան [3]:

Յե անուանք իսկ նահապետացն արձանք
ինն յիշատակաց էին պարզագոյնք և առաւել
ընդելականք. որոց յայտ առնելով որ ՚ի ծնըն-
դեան նոցա զնորահրաշ դէպս, կամ զընորհս
ընկալեալս ՚ի տեառնէ, էին որպէս պատմու-
թիւն ինն նոցա համառօտ: Հանգի խնամով
պատմէին հարք որդւոց վասն որոյ իրաց այն-
պէս կոչեցանն. և անմոռնթ իսկ եր կոչել զա-
նուանս նոցա և յաճել զնեալսն ՚ի յուշ: Ո-
պաքէն մեծանձն և աղնուական հոգւոյ ե ցոյց

[1] Ծննդ. ԼԱ. 48:
[2] Ընդ. Ի. 18:
[3] Պատմիչքս Յունաց եւ Լատին:
Դիոն. ասիկ. գիրք Ջ:

այսպիսի ինամս ունել զորդւոց, և նախահոգ տնտեսութիւն զՀանդերձելոց։

Ի ջատաք եին ամենևին նահապետքն, և տե- րութիւն իին փոքր էր տուն նոցա, և տանուս տերքը իւրաքանչիւր որպէս Թագաւորք. քանզի և զինչ պակասէր Ի քրահամու առ Ի վիշտ- լոյ զնա Թագաւոր, բայց Թարմատար անուանքըն մեծարանաց, և շուք և ձևք ինչ տաղտ կալիք։ Ընդ ոչ ուրուք իշխանութեամբ էր նա- ուխտս դնելին ընդ նմա արք Թագաւորք, և պատերազմ և խաղաղութիւն Ի կամս նորա կային։ Ո՛նիքակակցութիւն Խահակայ իրըն դրեցին Թագաւորք. և Ի ամայիլ և Ի՛ակոբ և Ի՛սաւ Ի նմին ինքնիշխանութեան կային։ Ի՛պա մի Ի կերպարանաց բանիցն պատրեալ՝ դուշնաքեայ զոք համարեսցուք զԻ՛քրահամ քան զԻ՛մորփաղ և զԻ՛քիմելէք՝ այնու զի ոչ և զնա Թագաւոր կոչեն գիրք իբրև զնոսա։ Ի՛այլ նա հզօր էր զօրութեամբ իբրև զմի Ի չորից Թագաւորացն զորս Եհար ընդօծնօք իւ րովք, և օգնականութեամբ դաշնաւորացն ե- րեքեան։ այսու առաւել զանազանեալ Ի նոցա- նէ, զի ոչ իբրև զնոսա Ի քաղաքս ամրանայր, այլ աշխարհ նորա ընդ նմա չքնէր ուր և իցէ նեն կամէր։ Ի՛ոչ ինչ աւելի արժանահաւատ Ի պատմութեանց ժամանակին գիտել մեզ,

1 Ծննն. ԺԴ. 26. 28։ 2 Ընդ. ԺԴ։

բայց զի Թագաւորութիւնք սակաւաւորք էին յոյժ յայժմէ և յարևելս անգամ. իսկ յայլ նահանգս և՛ս սակաւաւորք յետ բազում իսկ ժամանակաց։

ՅՕԳՈՒԸՆ ԵՐԿՐՈՐԴ

Սաղմոսածք նոցա և գործ։

Ա՛ՆԴՈՒԹԻՒՆՔ նահապետաց՝ի վեր քան զա մենայն արջառք և խաշինք էին։ Այսր է թէ բազումք էին յոյժ և Աբրահամու, մինչև հարկ լինել մեկնել նմա յերջօրդւոյ իւրմէ՝ի Կ՚ովտ տայ, զի ոչ բաւեր նոցա երկիրն բնակելոյ՝ի միասին[1]։ Նոքիմքն մեծացեալ գարձաւ և Յակոբ՝ի Միջագետաց, զի պատարագքն զոր առաքեաց Լ՚սաւայ եղջօր իւրում, արջառք և խաշինք էին առ հասարակ հինգ հարիւր և հինսուն Թուով[2], ուրանօր և զազգս անասնոցն Ե տեսանել զոր գարմանէին նոքա. զի ոչ գոյին առ նոսա երամակք ձիոց և խոզից, այլ այծեաց միայն և մաքեաց և ուղտուց, և արջառոց և էշոց։ Յիրաւի էր նոցա օրոց այսչափ անդեայք գոյին՝ մեծ համարել զքրամբառս և զգուբայշախարհին՝ յորում չգոյր այլ գետ բայց

1 Ծննդ. ԻԳ. 6։ 2 Ա՚ղդ. ԼԲ. 16. ևն։

Յորդանան միայն, և անձրևք և սակաւ էին յոյժ։

Այլ նոցա և գերիք, և բազումն յոյժ ունէր Աքրահամ. զի յընդոծնացն միայն որ առնմա վարժեալք էին՝ առ և զինեաց երեքարիւր և ութ և տասն[1]։ Այսպա ըստ նմին հաւատոյ թեան էին՝ ի նոսա և բազմութիւն տղայոց և ծերոց և աղախնայց և արծաթագին ծառայից[2]։ Ի դառնալ իւրում յԱգիպտոսէ էր նա, ասեն գիրք, մեծատուն ոսկւով և արծաթով։ Այսպանջանքն և գինդք զորս ծառայ նորա Աղեազար ընծայ արար Ռեբեկայ՝ ի դիմաց նորա, կրէին վեց ունկի ոսկւոյ[3]. և՝ի ստանալոյ նորա զվայր շիրմին յայտ է զի՝ ի ժամանակաց անտի՝ ի պէտս գայր առ նոսա արծաթ[4]։ Ոսկ զի՝ ի վար արկանէին և պատմուճանս աղնիւս, և խունկս անուշից, յայտ՝ ի հանդերձիցն Այսաւայ է զոր զգեցաւ Յակոբ առ՝ ի զօրհնու թիւնս հօրն ընդունելոյ[5]։

Հանդերձ այսքան մեծութեամբքն և մըշտաջանք էին նոքա՝ ի վաստակս, հանապազ յանդիմ և ընդ վրանօք, փոխելով տեղւոջէ՝ ի տեղի զկայս իւրեանց որպէս և դեպ լինէր նոցա արօտս գտանել անասնոցն։ Որով ստէպ խոռբանաչու լեալ, բազում անգամ հարեալ նոցա

1 Ծնն. ԺԴ. 14։
2 Ընդ. ԺԴ. 2։
3 Ընդ. ԻԴ. 22։
4 Ընդ. ԻԴ. 16։
5 Ընդ. Իէ. 27։

զվրանան՝ անդէն ժողովէին, քանզի և չմարթէր իսկ այնչափ աղխիւն երկար Ճանապարհ հատանել՝ ի միում աւուր։ Իբր ոչ եթէ անկարասնային և նոքա տունս չինել որպես զայլս ի բնակչաց աշխարհին, այլ զի զբնակելն՝ ի խորանս լաւագոյն համարէին։ Վասնզի խորանաբնակ կենալ հին և սովորութիւն, այն հաւաստի իսկ է. զի քան զկանգնուածս տանց գիւրագոյն է վրանահարուելն. այլ և զի վրանաբնակ կենացաղ առաքինագոյն կենաց ցուցաւ միշտ նշանակ, իբր ոչ այնպես քարշելի բնութեանն զհետ երկրաւորաց, վասն որոյ և առաւել յայտարար պայմանի կենաց նահապետացն որ իբրև պանդուխտս կային՝ ի վերայ երկրի՝ ակն ունելով աւետեացն Աստուծոյ, որ կատարելոց կին ապագային զհին մահու նոցա՝։ Զաքինք՝ ի քաղաքաց յիշատակեալք՝ ի գիրս՝ ի չարաց չինեցան, ի Կայենէ և՝ ի Կերովբայ՝։ Ոչ քա առաքինք էն որ պատասպարեալ ամրացան՝ ի քաղաքս առ խուսելոյ՝ ի պատժոյ չարեացն իւրեանց, և խաւելոյ աներկիւղ՝ ի յանցանս. իսկ արք արդարք՝ ի բացի կային, և ոչ յիմեքէ ինչ երկրնչէին։

Զաւելքան զամենայն գործս՝ ի խաչնարածութիւն պարապեին նահապետք, որպես և տեսանել զայս ամենայն ուրեք՝ ի պատմու-

1 Եբր. ԺԱ. 7. 13։ 2 Ծննդ. Դ. 17։ ԺԱ. 10։

թեան վարուց նոցա, և՛ ի բանից իսկ որդւոցն Յակոբայ առ փարաւոնէ արքայ Եգիպտացւոց[1]: Անպէտ և անմեղն կեանք երկրագործութեան, այլ հովուութիւն կատարելագոյն էա. նա կայենի էլ մտան, և սա Աբելէ. զի սորայս պարզութիւն վէհ էա է և գերազանց, և նուազագոյն տաժանուամբ նորա, և նուազ էա երկրաքարշ՝ի վերայ այսոցիկ և շահեկանագոյն յոյժ: Ընծն կատուին և զչափաւորը խաշնադարմանն լինել վեհագոյն դներ մշակութեան զոր առաջին դասէր՝ի հնարս բազմացուցանելոյ զինչս[2]:

Յարդար կրտամբանացն Յակոբու առ Լաբան՝ի միտ առնումբ զփոյթ սնդութեան նահապետաց՝ի հովուութիւն, մինչև վասն այնր յանձն առնուլ նոցա զամենայն տառապանս: "Այս քսան ամ է, ասէ Յակոբ, զի եմ ընդ քեզ... զգերեկ այրեալ լինէի՝ի տօթոյ, և զզացգ՝ի ցրտոյ. հասեալ էր քունս յաչաց իմոց"[3]: Եւ յաշխատութեանէ աղջկանցն իսկ զվաստակս արանց է իմաստասիրել: Ի հեռաստանէ գայր Ռաբեկա հանել ջուր, և յուս իւր տանէր զայն. և Հռաքել[4] զխաղնս հօր իւրոյ արածէր, զի աղնուականութիւն նոցա և գեղ երեսաց չյաւելոյր՝ի նոսա զփափկութիւն: Պարզութիւն նախնի դարուցն պահէցաւ յերկար ժամանակ

1 Ծնն. խգ. 3: 3 Ծնդ. ԼԱ. 40:
2 Յաղագս Աբդորդ. վիպէն: 4 Ծնդ. ԻԹ. 15: ԻԹ. 9:

1901 հունվ.
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

և առ Յեփես, որք ապաքէն բարգաւաճեալ իսկ էին յոյժ։ Յոմերոս ամենայն ուրեք առաջի առնէ մեզ օրինակս այսոցիկ, և զսոքիմք յածին առ հասարակ և քերթուածունքն հռովմայեցիք։ Ահա և առաւել քան զկնգերիւք ամն զկնի նահապետացն դարու տակաւին ևս ոմանք յայգատորերըն Ասորւոց, Արաբացւոյ, և Սիկիլացւոց աշխարհին խաշնադարմանք էին, որք և յերկար պարապուածեան անդ հովուական կենցաղոյն, և՛ի զուարթուածեան խանդի մտացն զոր վառէր՛ի նոսա գեղեցկուածիւն աշխարհացն այնոցիկ՝ յորինեցին երգս անսեթևեթս և հաճոյականս յոյժ։

ՅՕԴՈՒԱԾՔ ԵՐՐՈՐԴ

Սակաւապիտուածիւն նոցա։

Օտար եր՛ի նահապետաց փափկուածիւն՛ի կերակուրս և յայլ պէտս կենաց։ Ընկալաւանն եփեալ՛ի Յակոբայ, որով այնպէս փորձեցաւն Ասա՛, քաջ յուշանէ զսովորական կերակուրս նոցա. բայց տան մեզ գիրք և զօրինակ բազմախորհրդիկ սեղանոյ յընթրիսն զոր պատրաստեաց Աբրահամ հրեշտակացն երից՝. քանզի եդ նա առաջի նոցա որթ մի, նկանս դալար և

1 Ծննդ. ԺԸ. 29։ 2 Ընդդ. ԺՐ. 6. ևն։

փեսալը ընդ մէջտրով, և կոպի և կաթեն։ Յրևի և ազգ իմն համադամոց գոլ նոցա, զոր կազմեաց Աբեբեկա վասն Եսահակայ. այլամբ հասակին ներէին նմա արդեօք զիափիկուԹիւնս զայս։ Ներկուց ուրուց պատրաստեալ էր համադամն այն[1]. իսկ Աբրահամ որԹ մի ողջ եդ առաջի հրեշտակացն, և նկանս երիս զբուրոյ ալեր նաշհոյ, որ առաւել ենքն զերկուս չափս Սաղմիոյ՝ կշիռս Էբբրիսուն և վեց լտեր։ Յորմէ-յայտ է, զի արք ժամանակին այնորիկ շատակերք էին յոյժ ըստ բազում յոյժ աշխատուԹեանն, և զի յաղԹահասակք ևս էին արդեօք՝ ըստ երկարակեաց կենացն։ Պաքէն և Յոյնք զդիւցազանց դարուն որեար հսկայս համարէին, և Հոմերոս շատակերս յոյժ համարի զնոսա. և՝ի հիւրընկալել Աբեմայ զՀադիսեաս, դնէ նմա առաջի և չորից ընկերաց նորա խոզ մի հնգամեայ[2]։

Դիւցազունք Հոմերոսի սպասաւորեն միմեանց. զնոյն և առ նահապետս է տեսանել։ Աբրահամ, որոյ այնչափ ծառայք էին, և ինքն հարիւրամեայ, անձամբ ածէր ջուր՝ լուանալ զոտս աստուածարեալ հիւրոցն, ինքնին փութացուցանէր զկին իւր պատրաստել զկանանս, և ինքնին յանդեայ ընԹացեալ ընտրէր զորԹն, և դարձեալ անդրէն առ նոսա՝ի սպասու կայր[3]։

1 Ծնն. ԻԸ. 9։ 3 Ղնգ. ԺԲ. 4։
2 Ոդիս. ԺԴ։

Հաւանեալ իսկ եմ եթէ օտարասիրութեն եկն նա յայսոսիկ, բայց ապաքէն զամենայն իսկ զկեանս իւրեանց այսպէս անօրինեցին նահապետք. որպէս զի յօգնականութեն ևեթ եկն ծառայքն, և ոչ առ աղատս կացուցանելոյ զնոսա յաշխատութենէ։ Վասնզի և ո՞ բնաւգատեր զՅակոբ յերթալն ի Միջագետս՝ միայնակ ցուպ ի ձեռին Հանապարհ առնել աւելի քան զփարսախս երկերիւր[1]. քանզի և ոչ ինչ նուաճեր Հանապարհն ի Վերարայէ ի Խառան. ո՛այլ բայց արժանագով պարզութեն վարուցն, և աշխատասիրութեն. վասն որոյ և ի վերայ Հասանել գիշերոյն ընկողմաներ զՀանապարհայն, վէմ մի ընդ բարձի ընդ մնարան եդեալ։ Այսն որոյ և խանդակաթ սէր իւր առ Յովսէփ յարգելոյր զնա ի չկղելոյ միայնակ աւուր միոյ Հանապարհ՝ի Վերբրոնէ մինչև ի Սիւքէմ՝ի խնդիր եղբարցն. ուր չգտեալ զնոսա Յովսեփու՝ տարագէմ գնայր այլևս օր մի և աւելի մինչ՝ի Դոթգայիմ, մինչդեռ տակաւին մանուկ էր վեշտասանամեայ[2]։

Ապաքէն վասն այսպիսի անպաՀպՀէ կենցաղ և աշխատանաց ժամանակին նահապետք ի բազմաժանակեայ ծերութեն և մեռանէին անցաւ, Ազբահամ և Իսահակ կեցին զամն իբրև երկերիւր. նոյնպէս և որոց կեանք չայսմի են մեզ՝ ձգեցին զաւուրս իբրեանց անդր քան զՀարիւր

[1] Ծննդ. ԼԲ. 11։ [2] Ածգ. Լի. 15։

ամ. և ոչ ուրեք պատմի Թէ յայնչափ ամն հիւանդացեալ ինչ էցէ նոցա։ “Այլ պակասեալ նորա մեռանել ի բարւոք ծերութեան, ալեւորեալ և լի աւուրբք,,[1]. այսպէս զմահուանէ նոցա խօսին աստուածային տառք։ Այլ մինչև ի հրամանն Յովսեփու Այգիպտոս առ ծառայս իւր դիւազարդս՝ պատել զմարմին հօր իւրոյ՝ չէք զգեղոյ այլուր յիշատակութիւն. և բազումք նախ առաջին զԱյգիպտացիսն ասեն լինել գտիչս դեղոյ։

Հիասցի ոք արդեօք և ընդ ժուժկալութիւն նահապետացս առ կանայս՝ զմտաւ ածեալ զբազմամկնութեանն ապատութիւն, և զիղձս բազմոդութեան[2]։ Աբրահամ՝ որում խոստացեալ էր Աստուած հայր առնել զնա բազմութեան ազգաց, ամուլ ունելով կին՝ Սարրհէր բնաւ միս ևս առնուլ. և ի մոխ եգեալ էր զամենայն ինչս իւր Թողուլ երիցագունի ծառային իւրում[3]։ Խրատու գնոջ իւրոյ էառ նա զերկրորդն, և այն յոլովսուն և վեց ամաց հասակին[4]։ Այլ ոչ ի գէպ է ասել եթէ տակաւին մանկութիւն իմն համարէր հասակն այն առ բազմութեան ամացն յորս եկեաց, այս են ամք հարիւր եօթանասուն և հինգ. զի աւանիկ զկնի ամաց երեքտասանից՝ ծերացեալ կոչէ նա

1 Ծննդ. Ի. 2։ 3 Ադ. ԺԶ. 2։
2 Օգոստ. Յղ. Քաղաք. ԺԶ. 2։ 4 Ադ. ԺԶ. 10։

զանձն իւր և զ[1]արդա՝ որ իբր տասն ամաց կրտսեր էր քան զնա. և ծիծաղին երկոքեան ընդ աւետիս որդեծնութեանն իբր ընդ անհաւատալի ինն աքանչելիս։ [2]Վեպէտ և ծեր էր Աբրահամ, և որդիս ըղձայր տեսանել Յոսահակայ, չետ նմա կին մինչև՝ի քառասուն ամ հասակի նորա[3]. և Թեպէտ ամն քսան ամուլ եկաց Ռեբեկա, և կրկին որդիս միայն ծնաւ երկուորեակս, սակայն չէառ Յոսահակ բնաւ այլ կին[4]։

Ընդունուլ էառ Յակոբ երկուս կանայս միանգամայն, և Լարձն երկուս, բայց այս որպէս. եկաց նա զամն եօթանասուն և եօթն առ հօր իւրում, սպասելով մեծի օրհնութեանն որ նմա անկանէր՝ հրաժարելով անտի եղբօրն։ Ընդ՝ի սմին հասակի խորհի նա ամուսնանալ. խնդրէ զՀռաքելն, և չհասանէ խնդրոյն՝ բայց զկնի եօթնամեայ ծառայութեանն[5]։ Ընդ՝ի հասակի ութսուն և չորից ամաց, և ընդդէմ կամացն զկին առ տան նմա կնութեան։ Ընդ՝ի զնա առ իւր՝ ոչ կամելով առակել զնա. և զի զբազմակնութիւն չարգելուին յայնժամ օրինք, և ոչ զերկուս քոյս միանգամայն ածել կնութեան, առնու և զյառաջագոյն խոստացեալն իւր։ Հռաքել քանզի ամուլ էր, տայ

1 Ծննն. ԻԼ. 11։
2 Ընդ. Ե. 20։
3 Ընդ. Խե։
4 Ընդ. Իթ։
5 Ընդ. Լ։

նմա զաղախին իւր՝ ճնանել որդիս ՚ի նմանէ. և այս սովորութիւն պաշտէր ՚ի ժամանակին փոխանակ որդեգրութե՛ն. որով և քոյրն վարեցաւ առ բազմացուցանելոյ և՛ զնա զազգատոհմ իւր։ Յայսմ ամենայնի այսպէս խմաստասիրէ սուրբն Գրիգոր Նարեկացին. "Պատճէն չընդ թեղունումք խնդրեալ Յակոբայ այլ կին բաց ՚ի միոջէն. և ոչ դարձեալ ընդ բազմաց եղեալ, բայց առ ՚ի պահել առ նոսա զամուսնական հաւատարմութիւնն"։ Այլ ոչ ՚ի դեպ է կարծել թէ էին նորա յառաջագոյն և այլ կանայք, զի ընդդէմ էր յայնժամ զվերջնոյն միայն խօսել։

Վակայն և ոչ անպարսաւս արձակել կամ է ինձ զամենայն նահապետս. քանզի որ ինչ իրք պատմին վասն Յուդայ և որդւոց նորա՝ զսորին հակառակն հաստատեն. այլ զայս միայն ցուցանել կամիմ, զի անհնար է արատս ինչ անսրբբ բուրեան դնել ՚ի նոսա՝ զորս աստուածգիրքն գիրք ընդ արդարոն թուէն։ Պատ թէ ոչ՝ այն յայտնի իսկ է զի և ՚ի ժամանակաց անտի առ պահանեալ էր յոյժ բնութիւն մարդկան։

Վասպիսի իմն էր աւասիկ նախկին կենցաղ ժողովրդեանն Աստուծոյ. աղատութիւն համարձակ ընդ տերութեամբ հօր՝ որ ունէր ընդ միապետականն իշխանութիւն յազգատոհմի իւրում և ՚ի տան. կեանք անպաճոյճ և բարե-

1 Յղ. Գաղաք. ԺՐ. ըբ։ 2 Ծնն. ԼՂ։

կեցիկ՝ ամենայն կարևորօքն լիացեալ և արհամարհութիւն մեծ աւելորդացն, գովելի վաստակովք՝ հանդերձ ջանիւ և ձարտարութեամբ, անվրդով և անփառասէր։

Այսպէսօրէք արդ՝ ի ձառս երկրորդին, որ է Խորայելացւոցն կենցաղ յելից յԱիգիպտոսէ մինչև ցգերութիւն Բաբելացւոց. և ունի սա չափ ժամանակի առաւելքան զինն հարիւր ամաց, և բազմագոյնք յաստուածային գրոց՝ ի ժամանակ անդր բերին։

Մ Ա Տ Ե Ա Կ Ո Ր Դ

ՅԱՂԱԳՍ ԽՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ

ՅՕԳՈՒՔՆ ԵՒ ՂՈՒԿԱՆ

Աշնուականութիւն նոցա։

Թէպէտ և բազմացեալ էր յոյժ ժողովուրդն, սակայն որպէս դեռ և ազգատոհմ մի՝որ դէք Իսրայելի կոչէին. որպէս և որդիք Լդոմայ, և որդիք Մովաբայ, այլովքն հանդերձ. քանզի չէ և ընդ միմեանս խառնեալ ազգիս այսօրիկ, այլ իւրաքանչիւր գիտէր յումմէ սերեալն էր, և պարծէր ՚ի նահապետ իւր։ Յորմէ յայտնի է, զի առ նախնիս որդիք ասէլ զազգն և զտոհմն նշանակէ. ըստ որում և Հոմէր զՅոյնս բազումուրեք որպէս Յունաց կոչէ, և զՏրովացիս զաւակ Տրովացւոց. և նոքին Յոյնք զժիշկս և զքերթողս որպէս բժշկայ

անուանէին և որդիս քերթողաց։ Ի՞նչ Հրեայ եցիս՝ որդիք արևելից զազգս արևելեայս յայտ առնէ, և որդիք Հեղիաբայ՝ զլատս, և որդիք մարդկան կամ Ադամայ՝ զենաւ ազգ մարդկան։ Եւ յաւետարանին յաձախ ընթեռնուաք, որդիք աշխարհիս այսորիկ, որդիք խաւարի և որդիք լուսոյ, և մանկունք առաքեալք։

Յերկոտասան ցեղս որոշէին Իսրայէլացիք. նոքունչափ ցեղք էին և Իսմայէլացւոց և Պաբսիոյ։ Ի չորից ցեղից կազմէր ի նախնումն քնաւ ազգն Ղեւնացւոց, որք ապա ի տան ցեղս բարձանեալ կոչեցան յանուն տասանց դիւցազանց, որ վասն այնորիկ իսկ կոչէին Հայրունիք՝ որ Թարգմանի մականուն[2]. և միոյ միոյ ի նոցանէ արձանք կանգնեալ էին ի հրապարակի։ Հանգոյն սոցա և Հռոմոյն ազգ զաւրաջինն յերիս կամ ի չորս ցեղս տրոհէր. այլ ապայ ձախողեցին ցեղք մինչև ցերեսունև հինգ՝ որոց անուանք դեռ ևս յայտնի էն։ Իսայց ուր երկաքանչիւր ազգացդ ցեղք ի բազում այլ և այլ տոհմից գումարեալ կազմէին ի բարեկարգութիւն ժողովոյ և Թուարկութեան, Իսրայէլացւոցն բնաւորապես որոշէր. զի էին ազգատոհմք երկոտասան մեծամեծք սերեալք յերկոտասան եղբարց։ Ո՛չ գուշեաւ պահէին

[1] Մարկ. Բ. 19։ Դեմոսթ. ի Ցխմկր. ի Լեպ. [2] Քսենոփ. Դաստ. Կիւր. տին. Ե. տե՛ս Ուշգ։

զազգահամար իւրեանց, և գիտէին ամենեքեան զկարգ նախնեացն իւրեանց մինչև ցառաջինն նահապետ ցեղին, յորմէ և 'ի նախասարդն 'ի վեր ելանել ոչ ինչ էր դժուարին. նմին իրի և ստուգապէս եղբարք էին նոքա և ազգականք ըստ բարբառոյ արևելեայց, և Ձշմարիտ աղնուականք՝ եթէ քնաւ ուրեք կայցին աղնուականք 'ի վերայ երկրի։

Նախառն պահեալ էր նոցա զտոհմ իւրեանց, զգուշանալով որպէս զՀայր իւրեանց յամուսնանալոյ ընդ անիծեալ ազգս որդւոցն Վհանանու. քանզի և չտեսանեմք իսկ եթէ ուրեք երբէք զգուշացեալ իցեն նահապետք 'ի խնամուԹիւնս առնելոյ ընդ այլ յազգաց. և ոչ յայտնապէս արգելուն օրինք[1] չխառնել զազակ ընդ այլ ազգս բայ 'ի Վհանանացւոց։ Նդատին 'ի նոցին օրինաց սահմանեալ էին կալուածք տոհմից իւրաքանչիւր ուրոյն, յորս քնակեցին ընդ ամն ինն հարիւր՝ զորոց քառն հարեալ և մեր պատմէ։ Նդ ինձ յայժ իրացայի Թուի աղնուական համարել զտոհմն որ զայսպիսի ազգահամար որդի 'ի հօրէ յառաջ քերէ անխառն ընդ այլազումցեղի, և 'ի նմին երկրի միշտ քնակեալ։ Նպաքէն սակաւք ոմանք յազատոբերոյն Եւրոպիոյ զսոյն պարծանս ժառանգեն։

Նայլ այսու պատրիմք մեք, զի չտեսանեմք

[1] Եբ. Գ։ Երկրորդ օրէնք. Ի. 3։

առ Իսրայէլացիս զմեծարանաց անուանն զա-
զատանուցն մերոյ. զի այր իւրաքանչիւր յիւր
անուն Հանաչէր առ նոսա: Իսայց սակայն մե-
ծաց իրաց նշանակք էին անուանք նոցա. որպէս
զնահապետացն. զի անուն Աստուծոյ յոլո-
վակի փակեր ՚ի նոսին, և աղօթք նոցին համա-
ռօտք էին այնոքիկ: Աղիա և Յովելբարդեաք
են ՚ի կրկին անուանց Աստուծոյ այլ և այլ օ-
րինակաւ կցեալ. Յովսափատ և Ասափատիա
զգատատանան Աստուծոյ յայտ առնեն. Յով-
սեդեկ և Ասդեկիա՝ զարդարութիւն նորա.
Յովաննա կամ Յովհաննէս Շնանեան զողոր-
մութիւն նորա. իսկ Նաթանայէլ Աղիաթան,
Յոնաթան և Նաթանիա՝ չորեքին ևս աս-
տուածատուր կամ աստուածաշնորհ թարգ-
մանին: Ասերթ զօրութեամբ էր իմաստասի-
րել ՚ի նոսա զանունն Աստուծոյ, որպէս ՚ի Նա-
թան, ՚ի Պաւթէ, Ասվեդ, Ասզա և Նզրաս.
և մերթ ազդմամբ, որպէս Նղիազար, Աս-
զնէլ, Ասդիաս: Նդ խորհրդաւոր իմն էին
առ նոսա անուանք և մարգարէականք, որ-
պէս Յեսու կամ Յիսուս, և որպէս զորս ՚ի
հրամանացն Աստուծոյ եդին որդւոց իւրեանց
Ովսէէ և Նսայիաս [1]: Նսկ այլք յանուանց
զբարեպաշտութիւն Հարցն ցուցանէին, որպէս
է տեսանել յանուանս եղբարց Պաւթի և որ-

[1] Ովսէէ. Ա. 4, 6, 9:

դեսց նորա [1]։ Ահա այսպիսիք էին անուանք նոցա, զորս խժականս համարիմք առ տգիտութեան երբայականին։ Եւ չիցէն լաւքան զբերդից և զգեղից անուանսն՝ որովք ազատաւ նին մեր Հոխանայ։ Եւ յոյն անուանքն՝ քաղցրալուրք յականջս մեր՝ հանդուգնատիպ երբայեցւոցն էն, յորովիցն [2] ի նոցանէ բարդեալ [3] ի դիցն անուանց, որպէս Աւետոր, Աւիոզինէս, Հերմադորոս, Հեփեստիոն, Աքենայիս, Արտեմիսիա. կամ յախտրժակաց ազգին [4] ի հրաշ հանգս խաղուց, մանաւանդ ձիրնթացից, որպէս Փիլեպպոս, Աամասիպպոս, կամ Ալպոդոմաս, Աղեսիպպոս, և Ալպոմեդոն։

Յորովհետև զանուն Հօրն [5] ի վերայ յաւելոյ ին, կամ առ քաջ յայտարարութիւն, և կամ [6] ի պատիւ, առ [7] ի ցուցանել թէ մեծարուն էր Հայրն։ Եւ [8] ի սոյն յայս արդեօք ակնարկէ Մովսէսն յասելն. "Պարծանք որդւոց հարք իւրեանց ..." [9]։ Ի հոմերի բանիցն յայտ է զի և Յունիք հայրենի անուամբն վարէին առ [10] ի պատիւ [11]։ Եւ զի որպէս մանկիկք և զմօրն անուն տային յորժամ Հայրն բազում կանայս ունէր, և կամ մայրն տոհմիկ և ազ էր. նմին իսկ Յունաք և եղբարք նորա առնէին ուրեք որդիք Շաբուհեայ կոչին յանուն քեռ Ալաւթի [12]։ Եւ

1 Եսայի. Լ. 4։ ա. Մնացորդք. ԺԱ. 8։ Գ. 1։
2 Աւակէ. ԺԲ. 6։
3 Եղիակ. Ա. Ե. կը։
4 ա. Մնացորդք. Բ. 16։ Երեմ. ԺԱ։ Ս. Գրիպ։

անուն Հօրն չէր բաւական՝ի ծանօթանալ, յա-
ւելուին և զՀաւոյն անուն. որպէս Պօղոսիա
որդի Քաղկամայ որդւոյ Յաւհաննու։ Այլ այս
պատճառաք էին շարայարուեան անուանցն
մինչև՝ի նախահաւն և անդր ևս, որ մեզ տաղտ-
կալին թուի։ Իսկ երբեմն զաւելի անուն և՝ի
ցեղապետէն առնուին կամ՝ի քաղաքէն, և
կամ յաշխարհէն՝ եթէ օտարածինք էին, որ-
պէս Աւրիա քետացի, և Աւռնա յեբուսացի։

Յոյնք՝ի Հօրէ կամ յաշխարհէն ևեթ առ-
նուին զմականուն. Հռոմք յազգատոհմէն՝
յաւելեալ յայն և զնշանակս աւագութեանն
կամ յաղթութեան. այլ՝ի հասարակաց ար-
ձանագրութիւնս հայրենի ևեթ անուամբ վա-
րեին։ Ոնոյն ունին սովորութիւն ցարդ և բա-
զումք յազգաց Աւրոպիոյ. զի յոլովագոյնք՝ի
մականուանց մերոց յատուկ անուանք են հարց
՝ի վերայ որդւոց կոչեցեալք. իսկ կոմսութեան
անուանք, որպէս և կոմսութիւնք, չեն աւե-
լի քան զեօթին հարիւր ամն յորմէ հետէ սկը-
սան։ Ոչ ամն որպ յընթեռնուլ անդ՝ի սուրբ
գիրս՝ Պաւիթ որդի Յեսուայ, և Պողոմոն
որդի Պաւթի, չէ պարտ աւելի քան զարմա-
նալ քան յորժամ ընթեռնուցուք՝ի յոյն մա-
տենագիրս՝ Աղեքսանդր որդի Փիլիպպոսի, և
Պողոմէոս որդի Լագոսի։

Աբ՝ի ծննդենէ մեծարեալ առ Խորայե-
լացիս՝ Պատուոյն ևեթ ցեղ էր և քահա-

նայից, զի ազգաւ Համօրէն սրբեալ էին 'ի պաշտօն տեառն, և ամենայն ժառանգութիւն նոցա և բաժին 'ի տասանորդաց անտի էր և յերախայրեաց զորս ընդունէր յայնց ցեղից։ Ի Վ Լատացիս յորդւոցն Ղհարոնի միայն ընտրեին 'ի քահանայ, և այլքն ամենեքին յայլ գործս պաշտաման պարապէին, 'ի սաղմոսերգութիւն, 'ի տապանակին պահպանութիւն և տաճարին, և յուսուցանել զժողովուրդն։ Հռչակաւորք էին առ նոսա յոյժ և այլ երկու ցեղք, Յուդայեանն՝ երևելին և բազմաթիւ քան զամենեսին անդստին 'ի սկզբանէ, յորմէ թագաւորք և Ղեսիայն ծնանելոց էին ըստ մարգարէութեանն Յակոբու՝, և Ղփրեմայն՝ վասն Յովսեփու։ Ի ցեղս իւրաքանչիւր նախամեծարք էին գաւազանք անդրանկաց, և տանուտեարք. նմին իրի զարմացեալ Մաւուղայ 'ի մեծարելն 'ի Մամուէլէ՝ ասէր. "Ոչ ապաքէն առն միոյ յիմինեցւոյ ,, եմ ես՝ փոքու գաւազանի ցեղին Իսրայէլի, ,, և կրտսերոյ ցեղի յամենայն իշխանութենէ ,, Բենիամինի ,,[2]։

Այլ և հասակն մեծարոյ առնէր զնոսա, որպէս զի ծերութեան 'ի բարբառ գրոց զշուք և զպատիւ յայտ առնել. քանզի բազմաժամանակեայ ալեօք ևեթ, և հմտութեամբ մարթ էր երևելի լինել յորս միօրինակ աշխատակից

1 Ծնն. խթ. 10։ 2 Ա. Թագ. թ. 21։

էին ամենեքին, և Հոխք գոգցես առ Հասարակ, մեռեալք նովին օրինակաւ և ի նոյն գործս պա-
րապեալք։

ՅՕԴՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՅՏԱԿՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ

Մշակութիւն նոցա։

Ըստ ամենայնի առ Իսրայէլացիս արուեստս պատուականս. զի ի ցեղապետէն Յուդայ մին-
չև ցկրսեր որդին Ղեւնիամինի երկրագործք էին ամենեքեան և խաչնադարմանք, և ին-
քեանք առաջնորդէին հօտից։ Ընդունին ի Վաթսան առ որում ագաւ Վ Լատացին՝ ըղոյ
զկինն պղծեցին, յանդոյ անտի գայր անագա-
նի ի գործոյ իւրմէ ՝ ի հրաւիրէլն զնա առ
ինքն։ Վեղէոն ինքնին ծեծէր զցորեան յե-
րեւել նմա հրեշտակին՝ և յասել՝ Թէ փրկես-
ցես զԻսրայէլ։ Հուրթ ի քաղել անդ հաս
կըս՝ ընդրկս եգիտ առաջի Յոսոսայ՝։ Ա-
ւուղ այր Թագաւոր՝ ածէր զցից եզանց՝, յոր-
ժամ պատմեցաւ նմա մծտալուտ վտանգ Յա-
բիսայ քաղաքի Վազաագու. և Վաւիթ, որ-

1 Դատ. ԺԹ. 16։
2 Ընդ. Զ. 12։
3 Հուրթ։
4 Ա. Թագ. ԺԱ. 12։

պէս ամենեցուն է յայտ, արածէր խաչինս յոր-
ժամ առաքեցաւ առ նա Ամուէլ օծանել՝ի
Թագաւոր, որ և յետ երգելոյ քնարաւն առա-
ջի Աւուղայ՝ անդրէն՝ի հօտ իւր դառնայր [1]։
այլ և յաւուրս Թագաւորութեան նորա՝ խրա-
խութիւն մեծ առնէին որդիքն նորա՝ի ժա-
մանակի կտրոցն [2]։ Եւ Աղիսկէ՝ի մարգարէ-
ութիւն կոչէր՝ի վարել անդ երկոտասան ե-
ղամբք հօրն [3]։ և մանուկն զոր նա յարոյց՝ յեր-
կաղ ընդ հօր իւրում՝ի հունձս հիւանդա-
գեալ էր։ և այրն Յուդիթայ Թեպետ և մե-
ծատուն՝ նոյնպէս՝ի հունձս հիւանդացեալ՝ որ
և մեռաւ իսկ։ Եւ այսպիսի օրինակօք լի են
աստուածաշունչ մատեանք։

Այսոքիկ առաւելհարաւ այնոցիկ արդեօք
Թուեսցին՝ որ անտեղեակք են նախնի պատ-
մութեանց, և զարդի սովորութիւնս նոքա պա-
տուէն։ որով՝ի լսել Թէ հողագործ էին նոքա
և հովիւք, գեղջուկս ոմանս կարծեն լեալ
զնոսա Թանձրաբարոյս, ոլք հեծութեամբ և
տառապանօք զկեանս պաճարէին, արհամարհք,
վերհերոտք և անհրահանգք։ Եւ զայն ոչ ըզ-
մտաւ աճէն, զի վասն այնորիկ եղուկք են գիւ-
ղականք մեր՝ զի ամենեցուն ծառայք են, տըր-
նելով նոցա ոչ միայն՝ի հայթայթանս կենաց
իւրեանց, այլ և՝ի հարկանել զպէտս ամենեցուն

1 ա. Թագ. ԺԶ. 15։ 3 ֆ. Թագ. ԺԹ. 19։
2 բ. Թագ. ԻԳ. 13։ 4 Անգ. Դ. 18։

որ մեծարին'ի մէնջ. քանզի և նոքա իսկ են որ
կերակրեն զբազաբացին, զդատաւորն, զգան-
ձապետն, զազատորեայն, և զվիճակաւորս և
կեղեցւոյ. և որպիսի հնարս և իմանայցեն ոք առ
'ի փոխանակել զարծաթ ընդ վաճառս, և զվա-
ճառս ընդ արծաթոյ, ամենայն վճարի բերովք
երկրի, և անասնովք որ յերկրէ անտի կեանս:
Սակայն և այնպէս 'ի համեմատել անդ ընդ
միմեանս զազգս ազգս մարդկան, զգիւղականան
ստորև ամենեցուն դասեմք. և բազումք զմե-
ծամեծս'ի քաղաքացեաց, զանպիտանան, զվա-
տըս, զանհանճարս և զպղերգս՝ յարգոյ և ս
համարին, այնու զի գոն նոցա արծաթ բա-
զում, և բարեկեցիկ վարեն կեանս և 'ի
փափկութեան:

Այլ եթէ քաղաք իմն նկարիցեմք 'ի միտ՝
յորում չգուցէ խոիր մեծ ընդ այր և ընդ այր,
յորում աղնուականութիւնն չիցէ անգործու-
թիւն, այլ մտադիւր պահպանութիւն ազա-
տութեան անձին, այս է հպատակութիւն օ-
րինաց և եթ և տիրական իշխանութեան, կեալ
'ի ստացուածոց իւրոց առանց ումեք ծառայե-
լոյ, և փոքու շատանալ մանաւանդ քան վա-
տութիւն յանձն առնուլ 'ի բազմացուցանել
ինչս, քաղաք իմն ասեմ՝ ուր անարգիցին գա-
տարկ և փափկասուն կեանք, և անգիտութիւն
կարևորաց 'ի կեանս, և քան զհետութիւն
յարգիցի 'ի նմա կորով մարմնոյ, յայնպիսում

աշխարհի առաւել յոյժ նախամեծար իցէ երկրագործութիւն և խաշնարդարմանն լինել՝ քան յօրանալ՝ի խաղս և՝ի զբօսանս։ Արդ առ՝ի գիտ այսպիսւոմ աշխարհի և մարդկան չէ պարտ՝ի խնդիր ելանել պղատոնեան հասարակապետութեան. զի ահա ընդ ամս չորեք-հազար այսպիսի էր կենցաղ առաւելագոյն մասին մարդկան։

Այլ կամեցեալ՝ի նոցանէ սկիզբն առնել որ քաջածանօթք եւս իցեն մեզ, ապաքէն այսպիսիք էին օրէնք Յունաց և Հռոմայ։ Արդ Հռոմերի ամենայն ուրեք թագաւորք և իշխանք՝ի քերոյ երկրի իւրեանց կեան, և՝ի խաշանց, և ձեռօք իւրեանց վաստակեն։ Նախոգոս առաքեր քերթուածին առ՝ի յորդոր երկրագործութեան՝ առաջի դնելով զայն որպէս միայն հնարս կենցաղավարելոյ և մեծանալոյ արդարութեամբ, և յանդիմանելով զեղբայր իւր՝ որում՝ զքերթուածն ուղղէձ, վասն կամելոյ նորա պաշտպանութեամբ դատից և օրինաց յընչից պլոց կեալ. ազգ ինն պղերգութեան համարեալ զգործն զայն՝ որ արդ յոլովից է պարապուն։ Վարձեալ՝ի Ցնտեսութեան գրոցն Քենոփոնի յայտ է, զի առ Պոյնս մի օրինակ կարգ էր մշակութեան և՝ի ծայր բարձրաձութեան նոցա։

Վասն իրի և գյօժարութեան նախնի հռոմ մոց յերկրագործութիւն՝ չէ պարտ թանձրա-

մտութեան նոցա գրել կամ անդպրութեան, որ մանաւանդ ուղղախոհութեան նոցա է՛ր հանդէս։ Ո՛չ որպէս յառնեսին ձեռք և մարմին յաշխատութիւն հաստեալ էին, զմտաւ ածէին նոքաւթէ պարտ և արժան է առնեցուն՝ ի գործ վարել զնոսա, և թէ յայլ ինչ չմարթէին պատշաճագոյն աշխատ առնել զնոսա՝ որպէս՝ ի ժողովելնոքօք յերկրէ զտոյգն կերակուր, և զմեծութիւն անխարդախ։ Պաքէն ոչ առ ագահութեան ախտ՝ ի նոյն բերկին որք յարհամարհս գրէին զոսկի, և առ ոչ ինչ համարէին զպարգևս օտարաց. ոչ առ նուաղ քաջութեան կամ զօրութեան, որք առ նովիմբ ժամանակօք ընդ ձեռամբ նուաճեցին զընաւ Իտալիա, և մեծացան յոյժ զօրութեամբ, որով ապա և զտիեզերս հնազանդեցին բոլոր, այլ զի անապատական և ժուժկալ կենօքն արիանային նոքա, և նուաւ սկզբին զմարմինս իւրեանց՝ ի գործ և յաշխատութիւն և՝ ի խիստ կարգս ջինաց։ Որոյ զվարս համարակալին Պատուհի ընթերցեալ իցէ, ոչ զվատութեան կամ զվերհերոտութեան ինչ բերէ զնմանէ կարծիս, սակայն այսպիսի այլն մեծ, որ՝ ի պայծառ աւուրս ընկերհաչտութեան ընդ ամենայն իշխանութիւնս էանց, և եկաց կուսակալ և զօրապետ և առենաբան հզօր, և քաջ իրաւագէտ, և քաղաքավար մեծիմաստ, այսպիսին այր հանճարեղ ոչ ինչ ամօթ համարեցաւ մանր՝ ի գրի

առնել ՝որպէս պարտ իցէ գործել զերկիր, կամ մշակել զայգիս, կամ կազմել զգոմն անասնոց և զհնձան գինւոյ և զմամուլ ձիթոյ, և զայլն ամենայն ի ըստ միոջէ. որով և յայտ արար եթէ քաջ հմուտ էր արուեստին, և յօգուտ այլոց մատենագրէր զայն, և ոչ՝ի ցոյց ինչ։

Այսմ որոյ զհնմարիսն կամեցեալ լինել խոս տովան, վայրապար է մեզ արհամարհել զերկրագործութիւն՝ որ այնպէս գեղեցիկ միաբանի ընդ քաջութեան, և ընդ ամենայն օձանս պատերազմի և խաղաղութեան, որպէս և ընդ ստոյգն քաղաքավարութեան։ Այլ ուսցի՛ ինչ սակս արհամարհանաց այս, բայց եթէ՝ի նախնեացն մերոց սովորութենէ, որոց խառն ընդ ազինս Վերմանիոյ յանտառախիտ քաղաքս ունելով բնակութիւն՝ անմարթ էր ժողովել նոցա ցորեան և գինի և զմիրգս կարևորս, և որսորդութեամբ հայթայթէին զկէտսն. ըստ որում է տեսանել ցայսօր և՛ի վայրագ ազինս ցրտաշունչ աշխարհացն Վերիկա։ Իսկ իբրև անցին նոքա ընդ Հռենոս գետ և բնակեցին յարգաւանդաւող քաղաքս, սիրելի եղեն նոցա արդիւնաբերկրագործութեան և առևտրի արուեստից և վաճառականութեան, այլ ոչ և վաստակելն՝ի նոյնս. զի Հռոմոյ թողեալ զայն, զորս և ընդ ձեռամբ արարեալ էին, կացին ինքեանք յաղամարութեան իւրեանց, և պարծեցան իսկ ընդ այն յանցանել ժամանա-

կաց, և աշնուականութիւն իմն զայն վարիան. յորմէ բուժել զմիտս գեղ և անկարանամք։

Ա՛ւր որչափ արհամարհեցաւն առ նոսա երկրագործութիւն, նոյնչափ առաւել յարգեցաւ որսորդութիւն, զորմէ սակաւ յոյժ փոյթ եր առաջնոցն։ Ուսկ սոցա մեծ ինչ համարեալ, ոչ ինչ թողին 'ի հնարից 'ի կատարումն անձեռնի զայն, չհնայեալ ինչպէս և 'ի վաստակս։ Ապա կայն տիրապէս ասացեալ, աշխատութիւնն 'ի մշակութիւն անգից և 'ի բուծումն ընտանի անասնոց, օգտակար և ի քան զբնաւ ջանս յորս երեսոց՝ որ միասակար և ի յաձախ արտորէից։ Այս առողջագոյն են չափաւոր հրահանգք պահպանութեան հօտից, քան զբուռն և զբեզբեզուկ շարժումն որսորդութեան. և արջառ և ոչխար կարևոր են առ 'ի կեանս գոնեա իբրև զշուն և զձիս։ Ապա ասն որոյ զմտաւ ածել պարտ եր մեզ թէ իցէն սովորութիւնք մերկայսոսիկ իմաստախոհք իբրև զնախնեացն։

Վարձեալ երկրագործութիւն ոչ առ Յոնս ևեթ և առ Հռոմն մեծարեալ եր՝ որպէս առ Եբրայեցիս, այլ և Պարքեդոնացիք 'ի փիւնիկեցւոց սերեալք՝ 'ի նոյն մեծապէս կրթեին զանձինս, որպէս յայտ է 'ի քան և ուրոյն Մագոնի[1]. իսկ առ Եգիպտացիսն այնչափ արգոյ եր, զի զանասունս պիտանիս յայն՝ 'ի պաշտօն առնուին։ Պարսիկք 'ի գաւառս գա-

[1] Պարրոն 'ի Յառաջաբ։

ւառս ընդարձակածաւալ տերութիւնէ իւրեանց վերակացուս եդեալ էին Հոգ տանել միակուռ թեան անդաստանաց. և կրտսերն Աիւրոս ձեռաք իակ իւրովք դարմանիք զբուրաստան իւր[1]: Ընդ փուխաջան երկրագործութիւն Աաղդէացւոյն ոչ աք յերկուանայցէ՝ յածել զմտաւ զբազմահունձ անդաստանս Խաբելոնի, որ ընդ միոյ երկերիւր տային և երեքարիւր[2]: Ըստ նմին և Ալինեացւոցն պատմութիւն ուսուցանէ մեզ՝ զի և յաշխարհին յայնմիկ անդաստին'ի սկզբանէ, և 'ի բարգաւաճ անգամ աւուրան,'ի պատուի էր երկրագործութիւն: Ոյն որոյ և արհամարհութիւնս այս միակութեան 'ի տիրելոյ անտի ազգացն հիւսիսոյ 'ի ներքս ետ մուտ յաշխարհ ամենայն:

Ոչ 'ի բաց թողուք ուրեմն զնուաստ մտածութիւնս յոր սերտեցաքս 'ի տղայութեան հասակին: Վոխանակ գիւղին մերոյ յորս աստի հայեցեալ տպարանս բերդաձև տեսանեմք և ամարաստան զբօսարանս, և անտի հիւղս գծուծս, յանդիման մեզ նկարեսցուք զագարակս Հռոմոյն լայնածաւալս, զոր գիւղս[3] անուանէին, յորս էին բնակարան տանուտեառնն, գաւիթք, շտեմարան ցորենոյ, գոմք, և տունք սարկացն ամբարձեալք առ միմեամբք գեղեցիկ համեմատութեամբ, ամուրք, պահ-

1 Քսենոփ. Կնառս:
2 Երոդ. Ա:
3 Villa.

պանեալք և մաքուրք, ըստ որում ստորագրեն զայնոսիկ Պօղոս և Պողոմէոս՝ազգումք ի տրկաց անտի երանելիք և էին և բարեկեցիկք և քաջ զգեցեալք քան զքաղաքացիս մեր, ոչ ինչ զորդւոցն Հոգալով. նոյնպէս և տանուտեարք հանդերձ անտեսութեամբն առատութեամբ և կէսին քան զազատորեարն մեր։ Տեսանիցես առ Վաւենոփոնի աթենացի զոմն, որ այգուն այգուն ձեմս առնելով ընդ վիճակս երկրի իւրոյ, և ինքնին յայլ ելանելով գործաւորացն՝ կրթանօք մարմնոյն յաւելոյր յառաջութիւն իւր, և վաստակօքն չինչս, որպէս զի կարող լինել նմա ի բազմութենէ ստացուածոցն մատն հանել մերձենալ իւրոց, և տերութեան, և բարեկամաց[1]։ Պատմէ Արիստոն[2] զյոլովից գիւղականաց սիկիլիացւոց, զի առ բազում հարստութեանն և մեծագործութեան՝ և զտունս իւրեանց զարդարեալ էին մեծագին պատկերօք, և ի գործ վարեին աւրհնութիւն քանդակեալս յոսկւոյ և յարծաթոյ։

Պարտ է ապա յայս հանգուցանել զբանս, եթէ ցորչափ քաջք և բազմահարուստք իւրաքանչիւր քաղաքի ոչ ամօթ համարեցան պարապել[3] ի հողագործութիւն՝ յերիցագոյնն քան զամենայն արուեստս, երանաւէտ քան զամենեսին գտան ի կեանս իւրեանց վասն ընդհակցութեան այսմ կենաց ընդ բնութեանս. զեր-

1 Քսենոփ. Տնտես։ 2 Գիրք Դ. ի վերջ։

կայնաւուրս կեցին նոքա, և ՚ի քաջողջուԹեան. մարմին նոցա տեւողագոյն էր ՚ի պատերազմ և ՚ի վիշտս ձանձապարհի, և միտք զգօնագոյն և անյողդողդ։ Ոյժն ժամանակ էր նոցա պաբասոյ, նմին իբր և սակաւ ուրեք տաղտուկ. և չափաբեր հանձար բազում՚ի փափկուԹիւնս, զի աշխատուԹիւն և զդոյզն զբօսանս անուշէր նոցա։ Ընտրհեին չար, և օգուտ սակաւ էր նոցա ՚ի չար գործելոյ. զի ժուժկալ և անպաձոյկ կենցաղ նոցա անկարօտ էր մեծամեծ ծախուց և փոխառուԹեանց. վասն որոյ և դուն ուրեք լինեին ՚ի նոսա վիձք և դատաստանք, վաձառուԹիւնս տացուածոց, և կործանուԹիւնս տանց. ուր ուրեմն նենգուԹիւնք և հարստահարուԹիւնք, և այլ պեսպես ոձիրք անիրաւուԹեանց, յորս զառածանեն զմարդիկ աղքատուԹիւն ստոյգ կամ կարծեցեալ, և չկամել նոցա կամ չկարել վաստակել ձեռօք իւրեանց։ ՚Այլ որ չար և ան է, օրինակ մեծատանց և ազատորեբոյն զամենեսին զհետ ձգէ. և որ սակաւ մի ՚ի վերոյ քան զուսումին կարծէ զանձն՝ աշխատել ամաչէ այնուհետև, և աս առաւել զերկիւղ գործել։ Ոյ՝ան այսորիկ այնչափ ձիգն է և զան յամենեսին հայԹայԹելոյ զկեանսն ձարտարմտուԹեամբ, և հնարք նորանորք առ հեղուլ զարծաԹն քսակ ՚ի քսակէ։ ՚Այլ Թե արդաբուԹեամբ գործիցին այդ ամենայն ձարտարուԹիւնք ՚ի ջանահնար հայԹայԹանս կե-

նաց, զայն Աստուած գիտէ. Թողում ասել զի բազումանգամ հնարագիտութիւնք ամենայն ի զուր ելանեն. ուր որք գործենն զերկիր՝ հանապազ կերակրին, մանաւանդ եթէ չյափըշտակեսցեն զայն այլք ի նոցանէ։

Այսպէս որոյ անապատական և բազմավաստակ Երջայեցւոցն կենցաղ ոչ միայն չառնէ զնոսա արհամարհս, այլև իմաստութեան նոցա է տարացոյց և բարւոքն դաստիարակութեան, և հաստատութեան մտացն ի պահպանութիւն խրատուց հարցն իւրեանց։ Վասն որոյ նոքա զի մարդն եգաւ ի դրախտին գործել զերկիր[1], և զի զկնի մեղացն ի դժնդակագոյն եւս և ի խիստ կեանս մահանեցաւ[2]։ Հաւանեալ էին անսուտ Ճշմարտութեանցն յաՃախ քարոզելոց ի գիրս Սողոմոնի[3], եթէ կատարումն ծնունդ է հեղգութեան. և թէ որ զնջէ ամարայնի և չժողովէ զհունձս, և կամ չաշխատի զձմեռն առ ահի ցրտոյ՝ արժանի է մուրանալոյ հաց, և չգտանելոյ. և թէ առատութիւն՝ աշխատութեան պտուղ է, և թէ մեծութիւնք անձանք հեռի են յօրհնութենէ։ Նմին մատենի քան զփարթամութիւն աղաւաւ և զմեծութիւն ամբարտաւան՝ նախատեալ մեծարի աղքատութիւն սակաւապէտ գոհութեամբ և ուրախութեամբ։ Ինդ և յոռու-

1 Ծնն. Բ. 15։ 3 Առակ. Ժ. 4։ Սիդ. Ե։
2 Ծնն. Գ. 17։

Թիւնք երկաքանչիւրոցն ծայրայեղ անչափու-
Թեանց, տնանկուԹեան և ՀոխուԹեան, ակն
յանդիման տեսանին, և իղձք իմաստնոյ առ
կարևորս ևԹէ կենայց ձգեալ։ Այդ մի առ
մի առնու իմաստունն ուսուցանել և զտնտե-
սուԹեան կարգս. «Պատրաստեա, ասէ, յեր
զգործս քո, և պատրաստեա 'ի դաստակերտս
քո, և գնա դու զկնի իմ, և շինեսցես վերըս-
տին զտուն քո»։ Որ 'ի դէպ ելանէ և ասա-
ցուածն Պատուիրի, ԹԷ առ 'ի մանկէ չէ պարտ
խորհել, այլ առ 'ի շինել խորհել արժան է։

Այդ որ ինչ միանգամ Ի բնական և յատ-
նային իսկ գիրս սուրբս աշխատուԹիւն կոչի
կամ գործ կամ ստացուածք, 'ի գեղջկից վաս-
տակս գլխի ամենայնին, և զանդից են ամենայն
ուրէք բանք, և զայգեաց, զարօտից, զարջա-
ռոց և զվաշանց, յորոց և յոլովակի առնուն
գիրք զփոխաբերական ձևս բանից. որպէս յոր
ժամ զԹագաւորս և զիշխանս Հովիւս կոչեցէ,
և զժողովուրդն ոչխարս, և զվարուԹիւնն ա-
բածուն։ Այսպէս Իսրայէլացիք զամենայն
կերակուր իւրեանց 'ի ստոյգն մեծուԹեանց
խնդրէին, յանդից ասեմ և յարջառոց, ուստի
իսկ են ամենայն ՀոխուԹիւնք մարդկան՝ որ
ձեռագործ արուեստիւքն ժողովիցին, և որ
վաճառաշահուԹեամբ կամ եկամտիւք և
կամ սեղանաւորուԹեամբ։

1 Աւակ. Ի. 4, 13։ ԻԱ. 15։ Ի. 21։ Իէ. 1։ ՃԹ. 1։
Ղ. 8. 9։ ՌԴ. 27։

ՅՕԹՈՒԸՆ ԵՐԻՈՐԴ

*Յաղագս սրբոյ երկրին հանգամանացն ; և արգասաւորու-
Թեան նորա :*

ԱՆԱԿԵՒՆ նոքա յերկիրն խոստացեալ առ նահապետսն, զոր վասն արգասաւորհողու-Թեանն երկիր կաթնաբուխ և մեղրածորան անուանեն զնա գիրք : Վասն և առ մերովս աշխարհօք ջերն սաստիկ է անդ, այլ անկանի ընդ բարեխառն գօտեաւ՝ ընդ երեսուն և մի և ընդ երեսուն և երիս աստիճանս լայնուԹե : Ի հարաւոյ սահմանեն զնա լերինք մեծամեծք, հովանի առնելով նմին ՚ի կիզանող օդոց անապատին Ա.րաբիոյ, և ձգեալ երկայնեալ ընդ նմա հարուստ մի ընդ արևելս կոյս. յարևմտից սահմանէ զնա ծովն միջերկրական, որ տարածեալ ընդ հիւսիս՝ քաղցրասիւդ հողմով քշեն զովացուցանէ զտապն. իսկ ՚ի հիւսիսոյ պատնէշ կայ նմա լեառն Լիբանանու պահպանել զնա ՚ի ցրտոյ : Ա.յս ծով սովորաբար ծով մեծ անուանի ՚ի գրոց. զի ովկիանն անծանօԹ եր Լ.բրայեցւոց, և զլիճն և զամենայն տարածուԹիւն ջուրց ծով անուանէին : Լերինք և բլուրք՝ կարևորք այգեաց և մրգաբեր ծառոց և անդեայց այլակերպեն ամենայն ուրեք զգ-

տեսիլ աշխարհին. և ձորք խիտ առ խիտ առուս յորձանաց գործեալ ոռոգանեն զերկիրն յորում չիք այլ գետ՝ բայց Յորդանան միայն։ Ընձրևք սակաւք էն անդ, այլ սահմանեալ ժամանակաւ, այս ինքն յաւուրս գարնանոյ և աշնանոյ, կանուխ և անագան՝ կամ առաւօտուն և երեկոյին կուեցեալ՝ի գրոց, իբրև զմի օր առեալ զտարին։ Ո՛ամառն զնուազութիւն անձրևաց ընուն պարարտութիւնք յօղոց։ ԵՒն՝ի նմա և դաշտք Ճահաւորք՝ի մշակութիւն և յարօտս անասնոց, մանաւանդ ընդարձակ դաշտն Գալիլեայ։ ԵՒյս ամենայն զանազանութիւնք վայրաց յանձուկ երկրին տեսարան գեղեցիկ պարզէին առաջի աչաց, և առաւել զի ևր աշխարհն բնակչօք, և քաջ մշակեալ։

ԵՒանզի ոչ է պարտ զսրբոյ երկրէն ըստ այժմու կերպարանացն առնել դատաստան. զի անդստին յաւուրց անտի խաչակրաց մինչև յանկումն ընդ ձեռ Տաճկաց յանդադար յափշտակութիւնս եղև, որով և անապատացեալ է արդ, և գիւղք աղքատիկք ևւեթ՝ի նմա տեսանին, և աւերակք, և դաշտք խոպանացեալք և անտերունչք, որք դեռ ևս իսկ գալարագեղք են և բազմարօտք՝ի ցոյց քնիկ արգաստուրութեանն։ Ընդհանամ թողեալ է զնա Տաճկին, որպէս և զամենայն գաւառս տերութեան իւրոյ, և բազում ազգատոհմք ԵՒրաբացւոց վրանաւորաց շրջին՝ի նմա ըստ կամս,

և համարձակ անդ աւար հարկանէին։ Այսպա
առ՝ի խելամուտ լինելոյ եթէ որպիսի՛ ինչ էր
նա երբեմն՝ ընթեռնուլ պարտ է զնախնի մա-
տենագիրս, զՅովսեպոս, և առաւել զսա-
տուածաշունչ մատեանս[1]։ Ջես ինձ աղէ զզրոյց
սըն զոր տան զնմանէ լսեաքն Յովսիպոս, և
զզարմանալի ողկոյզն խաղողոյ զոր ընդ իւ-
րեանս ածին. և զի մի անհաւատասցիս, հա-
մառատեա զխաղողս Կաղղինոյ ընդ Կտալա-
ցւոց աշխարհին՝ որ քան զՅաղեստինացւոցն
ցրտին է։ Այստ սին իմն և զայլոց պտղոց բազ-
մաց, յորոց և յանուանցն յայտ է թէ Կիսոյա-
ծան և Կիփրիկեայ, թէպետ և ոչ ընդ անուան-
սըն բերեն և զնիկ չափ մեծութեան և զհամ։

Յորեան և գարի բազում ժողովէին Կարա-
ելայիք. և ցորեան ևեթ էր գլխաւոր վա-
ճառ նոցա[2] զոր՝ի Ցիւրոս տանէին. էր նոցա
իւղ և մեղր առատ. այգիք ծածկէին զլերինս
Յուդայ և զՀրեմայ, և ծառք արմաւենեաց
շուրջ պատէին զՀրիքով՝ի բազում հարստու-
թիւն բնակչացն, և անդ էր բազմամիւն աղնիւ
անգիւտ ընդ տիեզերս[3]։

Այթէ ոչ արգասաւորութիւնս այս էր, և
փոյթ մեծ բնակչացն՝ի մշակութիւն, ոչ էր
մարթ յայնպիսում անձուկ երկրին այնչափ
բազմութեան մարդկան սնանել. զի հաւա-

1 Ցովս. յղ. Պորղ. Գ., ը։ 3 Ցովս. յղ. Պորղ. Ա. Ը։
Աղդ. Բ., ը։ Թիւք. ԺԳ. 24։ Պլին. ԺԳ. ը։
2 Եզեկ. ԻԷ. 17։

տոց նախ պէտք էն առ՝ի հաւատալ ամենայնի զոր ասէն գիրքը։ Պաքէնն՝ի մտանել ժողովըր դեան յերկիրն յայն՝ թիւ համարոյ նոցա՝ի քսանամենից և՝ի վեր մինչև յվաթսնամենիս առաւելոյր քան զվեց հարիւր հազար այր պատերազմող[1]։ Ի ձակատամարտին Պաքեայ, ցեղին Լեւիամին որ կրտսերագոյնն էր յամենեսին՝ էին քսան և հինգ հազարաց սուսերամերկաց[2]. իսկ այլոց ցեղցն առհասարակ էին քառասուն բիւրք. և Ասուղ՝ի պատերազմ ած՝ի ջնջելն զՄադեկ արս երկեբիւր և տասն հազար[3]։ Յե Պաւեթի էին երկոտասան գունդք զօրաց՝ քսան և չորից հազարաց, միահամուռ ամենեքին երկեբիւր ուղսուն և ութ հազար, որք փոխանակաւ ամոյ ամոյ պաշտէին զնա։ Իսկ յաշխարհահամարին որով բարկացոյց զՏէր՝ գտան՝ի Յուդայ չորեքբիւր յիսուն հազար արանց սուսերակռոց[4]։ Յովսափատու՝ ըստ անձկագոյն բաժնի իւրոյ՝ առաւել ևս յաձախեաց բազմութիւն ժողովրդեան. զի թէպէտ և զերիր մասն Թագաւորութեանն Պաւեթի ունէր ընդ ձեռամբ, հանդերձ զօրաց նորա էին հարիւր և ութսուն հազարաց, և ամենեքին զօրաւորք՝ի պատերազմի, Թող զպահակապանս բերդից[5]։

1 Թիւք. ԻԱ. 32։
2 Դատ. Ի. 15, 17։
3 ՚ի՛ա. Թագ. Իե. 4։ Թարգմանութիւն Ա՛ռաքելոցն քան զվեց հարիւր հազար այր պատերազմող։ Ի ձակատամարտին Պաքեայ, ցեղին Լեւիամին որ կրտսերագոյնն էր յամենեսին՝ էին քսան և հինգ հազարաց սուսերամերկաց. իսկ այլոց ցեղցն առհասարակ էին քառասուն բիւրք. և Ասուղ՝ի պատերազմ ած՝ի ջնջելն զՄադեկ արս երկեբիւր և տասն հազար։ Յե Պաւեթի էին երկոտասան գունդք զօրաց՝ քսան և չորից հազարաց, միահամուռ ամենեքին երկեբիւր ուղսուն և ութ հազար, որք փոխանակաւ ամոյ ամոյ պաշտէին զնա։ Իսկ յաշխարհահամարին որով բարկացոյց զՏէր՝ գտան՝ի Յուդայ չորեքբիւր յիսուն հազար արանց սուսերակռոց։ Յովսափատու՝ ըստ անձկագոյն բաժնի իւրոյ՝ առաւել ևս յաձախեաց բազմութիւն ժողովրդեան. զի թէպէտ և զերիր մասն Թագաւորութեանն Պաւեթի ունէր ընդ ձեռամբ, հանդերձ զօրաց նորա էին հարիւր և ութսուն հազարաց, և ամենեքին զօրաւորք՝ի պատերազմի, Թող զպահակապանս բերդից։
4 ՚ի՛ա. Մնաց. Իե. 2։ ՚ի՛բ. Թագաւ. Իփ. 9։
5 ՚ի՛բ. Մնաց. ԻԷ. 14, 15։

Այլ վիք ինչ յայսոսիկ դժուարահաւատ, զի զայսպիսիս և արտաքնոցն վէպք պատմեն։ Քանաւասր քաղաքին Աղեքսանդրիոյ Լուկիանոս յիւրոց ևեթ բնակչացն զինուորք էին եօթն հարիւր հազար։ Ի Հռոմ յառաջին աշխարհահռչակութեան Վերուխոսի Տուղղիոսի յամին հազարերորդի ութհարիւրորդի ութերորդի վինուա. Թեան քաղաքին՝ գտան արք ութսուն հազարաց որ կալողք էին զէն առնուլ[1]։ Այլ սոքա ամենեքին կերակրէին յանդաստանացն որ շուրջ զնովաւ, յորոց բազումք արդ անարգասարողք և անապատացեալ կան. քանզի և ոչ ձգեր իշխանութիւն նոցա անդր առաւել քան զուտ կամ զտան փարսախ։

Այս այս էր հաստատագոյն հիմն քաղաքականութեանն նախնեաց. "Ի բազում զօրս, ասէ իմաստունն, փառք թագաւորի, 'ի նուազ զէլ ժողովրդոց" բեկումն հզօրաց[2]։ Զոյժ առաւել յուսային նոքա 'ի բազմութիւն զօրաց քան 'ի խորագիտութիւն, և առաւել քան 'ի հնարել ծածուկ համախոհութիւնս ընդ սահմանակից թագաւորութիւնս, և 'ի տալ ծել հերձուածս 'ի նոսա և առնել իւրեանց անուն սուտ համբաւոյն, 'ի բազմամարդութիւն աշխարհին ջանային, և 'ի մշակուն, և 'ի յարգել զայն ըստ կարի, թէպէտ անձուկ և թէ ընդարձակ վիճակէր նոցա այն։ Ջանա-

1 Տակիտ. Տարեգր. Ա. ի։ 2 Առակ. ԻԴ. 18։

հնար լինէին Թէոֆաբեռն զամուսնութիւնն առնել և հեշտին զկենցաղս, պատրաստել քաջ ողջութիւն աշխարհին և առատութիւն, և ի քնիկ երկրէն զկարևորսն զամենայն հանել։ Յաշխատութիւնս կրթէին զարս աշխարհին իւրեանց, և ուսուցանէին նոցա հայրենասէրս լինել, միաբանս և հպատակս օրինաց. և այս աւասիկ կոչէր առ նոսա քաղաքավարութիւն։ Քսիցես. գեղեցիկ են վարդապետութիւնքդ, այլ աղէ ի գործ անդր մատիցուք, և ցոյց մեզ զիարդ աշխարհ մի փոքրիկ իբրև զՊաղեստին այնչափ բազմութիւն մարդկան մնուցանիցէ։ Քս. ի խելամուտ լինել այդմ պարտ է երկայնամտութեամբ հաշիւ արարեալ մանր առ մանր զթիւ համարոյ ամենայնի. զի առանց այսր չիք և ոչ մի ինչ ցոյց հաստատուն։

Հասոյց մեզ Յովսեպոս հատուած մի ցանկալի ի բանիցն Հեկատեայ աբդերացւոյ[1], այն որ առ մեծն Ղեքսանդրիւ եկաց, և զՀեբ չոգաւ ապա առաջնոյն Պտղոմեայ։ Այս բազում ինչ գրելով արժանի գիտելոյ զբարուց և զսովորութեանց Հրէայեցւոց, ի վերայ բերէ թէ աշխարհն յորում բնակին "Ի իբր երեսուն բիւր արտաւար, երկիր բարի և պարարտ.,,[2]։ Արտաւար ի ըստ Հերոդոտեայ[3] և Հարիւր կանգուն, այսինքն և Հարիւր և

1 Յովս. ընդդէմ Ապիոն։ 3 Հերոդոտ. ի Հոմ։
2 Նոր։

յիսուն ոտնաչափս, որ բազմապատկեալ ՚ի քառակուսի՝ տան քսան և երկու հազար և հինգ հարիւր ոտնաչափս։ Արդ արտաւարս մեր հարիւր փարսախաց՝ ունի քառասուն հազար քառակուսի ոտն, առ միւն մի փարսախ բաշխեալ քսան ոտն. որով ինն արտաւարք մերոյ աշխարհիս համեմատին վեշտասան արտաւարացն Նիւստաթէոսի։

Ցեղեկացեալ իմ Թէ որչափ ցորեան ժողովցի յարգաւանդահող անդաստանաց մերոց, ճանեայ զի միւն մի արտաւար բերէ մոդ մի ցորենոյ՝ չափ փարիզոյ։ Ինդրեցի դարձեալ զչափ կերակրոյ առն իւրաքանչիւր, և գիտացի զի աւուր աւուր առնուլով ուրուք երկու լիտր և վեց ունկի հացի, սպառէ յամսեանն քոռ մի ցորենոյ, որ առնեն յամին երիս քսեստս։ Այլ չէ այդ բաւ առն իսրայէլացւոյ. այլ որպէս տեսանեմք ՚ի սուրբ գիրս՝, նոյնչափ և պարտ է ՚ի վերայ յաւելուլ. զի յորժամ առաքեաց նոցա Աստուած զմանանայն, պատուէր ետ զոր հանապազ ժողովել իւրաքանչիւր ՚ինմանէ չափով ըստ գլուխ ՚ոչ շատ և ոչ սակաւ. և բազում անգամ վկայի անդէն՝ Թէ այն էր իւրաքանչիւր ըստ բաւականին։ Արդ չափն նշանակեալ՝ ՚ի սուրբ գիրս առաւել է քան զհինգ լիտր և կէս. որ զի ՚ի միում ամի եօթն քսեստս առնեն, ապա բերք արտաւարի միոյ բաւէին՝

1 ԵԼՔ. ԺԶ. 26։ 2 ԱՒԳ. ԺԲ. 2։

Թէ քաջ՝ երկուց ևեթ ոմանց ։ Այլ զի երեք-
արիւր բիւրք արտավարաց Հեկատեայ ժողո-
վին՝ի Հարիւր վաթսուն և ուրք բիւր և եօթն
հազար և հինգ հարիւր արտավարս, ապա
մարթէին կերակրիլ յայնցանէ երեքարիւր և-
ըեսուն և եօթն բիւր և հինգ հազար մարդիկ ։

Ապաքէն այս Թիւ նուազ է քան զՀարիւր և
քսան բիւրս սուսերաւորացՅովսափատու, այն
զի չտիրէր նա և կիսոյ աշխարհին. և Թէպէտ
ամենայն այլ իսրայէլացի՝ աւագն և անաւագ
զէն տանէր, սակայն տակաւին ոչ սակաւք ան-
պիտանք էին՝ի գործ պատերազմի. Թող զկա-
նայս՝ որոց Թիւ Համարոյ ոչ ինչ ընդհատ էր
յարանց. Թող և զծերս և զտղայս, որք Թէ-
պէտ և սակաւ ինչ առնուցուն՝ի կերակուր
քան զայլսն՝ սակայն առ բազմութեանն ծա-
խեացին ոչ սակաւ քոռ ցորենոյ ։ Այր զի և
ըստ օրինաց Հարկ էր զեօթներորդ ամն ան-
գործ Թողուլ զերկիր ։

Այլ յուշ ածել պարտ է զի բանն Հեկա-
տեայ է վասն անդոյ գործելոց, և արգաւանդ
դահողին՝ի նոցանէ. զի զբնաւ տարածու-
Թիւն աշխարհին՝ի միասին առեալ՝ չորեքտա-
սանիցս առաւել է քան զայն. զի ըստ աշխար-
հացուցից մերոց չափ տարածութեան նորա
ոչ ինչ նուազ է քան զՀինգ քառակուսի աստի-
ճանս. և զի չափ աստիճանի միոյ են երկու
միլիոն հինսուն և երեք բիւր և երկերիւր և յի-

սուն և ինն արտավարաց, հինգ աստիճանք ունին չորեքտասան միլիոն՝ վեց հարիւր յիսուն և մի հազար երկերիւր քսան և հինգ արտավար քառակուսի։ Այսպէս ուրեմն է զի Հեկատոս զսուղ ինչ տարածութիւն աշխարհին՝ի համար արկեալ՝ի բաց յայսահեղ զգաւառսն որ առ իւրովք ժամանակօք Յամարացւոց էին, գլիձս, զանապատս, զվայրս անբերս, զայգիս, զծառատունկս, զմարգագետինս. քանզի և բազում արօտից պէտք էին վասն անհամար հօտից անգէայցն իւրեանց, և որոց յայլոց յաշխարհս բերէին նոցա. զի արքայն Մովաբայ հարկս տայր Ախաբայ արքային Իսրայէլի հարիւր հազար գառանց և հարիւր հազար խոյս յոլխարաց. և Ախաբայիք ածէին Յովսափատայ խոյս յոլխարաց եօթն հազար և եօթն հարիւր, և նոխազս եօթն հազար և եօթն հարիւր[1]։

Ախաբէն այսքան բազմութիւն անդէից մեծապէս ընուին զնուազուելի իւն կերակրոյ, ջամբելով մարդկանն ոչ միայն զմիս, այլ և զկաթն. Թող զի անպաճոյճ էին կեանք Իսրայէլացւոց, և զի ամենայն անդաստանք նոցա քաջ մշակեալ էին։ Այս զի անտառ սակաւ էր նոցա. ոչ գոյին նոցա արգելոցք երկոց յորսորդութիւն, և ոչ ձեմելիք ծառատունկք և ոչ բակք. այլ որպէս յերգան Յովհաննէ ասի, լի էին բուրա-

[1] ի Մնաց. ժէ. 11։

ստանք նոցա մրգաբեր ծառովք, և տաշխիք և կինամոնովք։ Իսկ վասն բնակութեան սակաւ ևս իմանալի է քան վասն կերակրոց. զի և չորրորդ մասին արտալարի շատ է յընդարձակ բնակութիւն ազգատոհմի միոյ, թողլ թէ առն միւսի։

ՅՕԴՈՒԲՆ ԶՈՐՐՈՐԴ

Սոացուածք Իսրայէլացւոց։

Յառջ ուրեմն յասացելոցս է եթէ իւրաքանչիւր ումեք Իսրայէլացւոց էին անդք առանձին՝ ի գործել, անդատին՝ ի ժամանակացն Յեսուայ տուեալ՝ ի բաժին հարց իւրոց։ Զմարթէր նոցա տեղւ՝ ի տեղւոջէ փոխել, և դժուարին տնանկանալ և կամ հարստանալ յոյժ։ Զի օրէնք թողութեան ամին նախահոգ զգուշութեամբ հրամայէին՝ զամենայն յիսներորդ ամին՝ ի տեառն իւրեանց դարձուցանել զստացուածս, և չպահանջել զպարտսն ոչ միայն՝ ի քառասներորդի յիսներորդի ամին և եթ, այլ և յամենայն շաբաթական ամի[1]. զի որպէս յամին յայնոսիկ չժողովէին բնաւ, արգարացի իսկ էր և յապաղումին. և զի չմարթեին պահանջել զպարտս խոչ մեծ էր փոխա-

[1] Ղեւ. ԻԵ. 10, 11, եւ։ Յուս. Հնախաս. Գ. Ժ։

տուրեթեան, այսու ինքնին խափանեին պատ-
ճառք տնանկանալոյ, յոր և օրէնքն դիտէին[1]:
Այսպ նմին չկարել նոցա դարձեալ անդս նորս
ստանալ՝ հատաներ զպատճառս ամբարտա-
ւանութեան և անանդորրութեան. զի այր
իւրաքանչիւր սահման իւր եդեալ զժառան-
գութիւն հայրենի՝ ընդոյն փութայր բարգա-
ւաձել, գիտելով չափ զի ոչ ոք հանցէ զայն ի
նմանէ և ի զաւակէ իւրմէ[2]:

Եւ պարտք ինն կրօնից էր՝ յօրինացն հրա-
մայեալ, սիրել զհայրենի վիճակն. յայն սակս
իսկ արիաբար հակառակ կայր Աթովմ Աքա-
ւօ ի խնդրել նորա գնել զայն[3]: Վճանգն և
ըստ օրինաց ի վայելուչն ևեթ տուեալ էր նո-
ցա երկիրն, և մանաւանդ Թէ ի վարձու, բնիկ
տէր երկրին Աստուած ինքն գոլով[4]. որ և ոչ
այլ ինչ հասս պահանջէր ի նոցանէ, բայց
զտասանորդս և զառաջնապտուղս. քանզի
զՀարկս ի հնձոց և ի կթոց այգեաց ընդ ի-
րաւունս Թագաւորաց Թուէ Սամուէլ[5] ի վե-
բայ ժողովրդեան, որովք և հնարի ահ արկա-
նել ի նոսա: Այսպ ուրեմն ոչ ոք գոգցես յա-
րակայացիսն առաւելայր քան զընկեր իւր մե-
ծութեամբ կամ աղնուականութեամբ. և ե-
թէ բռնադատեր ոք ի նոսա առ բազմութեան
ազգատոհմին ի մասունս բաժանել զերկիրն,

[1] Բ Օրինք. ԻԵ. 4:
[2] Գ Թագ. ԻԱ. 3:
[3] Ղևտ. ԻԱ. 23:
[4] Ա Թագ. Ը. 15:

յայնժամ՝ի գարման ՚ի նմանէն և քան զևս պարտ էր յաձախել զջանսն և զվաստակս, անխոնջ և գործելով զերկիր, և՝ի լերինս և յարօտս անտերունչս արածելով զարջառս իւր։ Այլ ՚ի մէնջ իրի առաւելութիւն նոցա քան զմիմեանս կամ նուաղութիւն՝ ՚ի շատութենէ կամ՝ի սակաւութենէ անդեայցն էր, և՝ի տոյնէն սակի իրաց։ Պարմանէին նոքա զնոյն ազգ անասնոց՝ զոր և նահապետքն, և զկա մանաւանդ քան զարուս. քանզի արգելով օրինաց սպանանել զարուսն՝, դոյզն օգուտ էր՝ի նոցանէ։ Ընդէնն նոցա երամակը ձիոց, և սակաւ իսկ պէտք էին՝ի լեռնավայրս. վասն որոյ՝ի կամել Թագաւորացն երիվարօք զնալ յԱիգիպտոսէ ետուն ածել զնոսա. զի բազում այն էր զի և մեծատունք յէշ հեծանէին։ Որպէս առ՝ի ցուցանել զմեծութիւն Յայիրայ, որ մի էր՝ի դատաւորացն որ դատեցին զԻսրայէլ, ասէ Թէ եղեն նորա որդիք երեսուն և երկու, որ հեծանէին յերեսուն և երկու յուլանակս, և երեսուն և երկու քաղաք նոցա[1]. նմանպէս և զԱբդոնայ դատաւորէ պատմեն Թէ եղեն նորա որդիք քառասուն, և երեսուն որդիք որդւոց նորա, որ հեծանէին յէօԹանասուն յաւանակս[2]. և Ադեքովբա յօրհնութիւնն երգէ զզօրաւորս Իսրայէլի

1 Դատ. ԺԲ. 24։
2 Դատ. Ը. 4։
3 Նոր. ԺԲ. 14։

հեծեալը յովանակս ՚ի միջօրէի, և սպիտակաց[1]։

Ելին նոցա ծառայք բազումք, և չկարօ-տանային իսկ՝ ինքնին աշխատասէրք գոլով, և յոքնանձիւ ՚ի փոքու աշխարհի։ Ալաւագոյն համարէին աշխատ առնել զօրգիս իւրեանց, զօրս առանց իսկ այնր պարտ էր նոցա կերա-կրել, և որք լաւ ևս վասն հարցն աշխատէին։ Ցար եղև Հռովմայեցւոց անհամար բազմու-թիւն ստրկաց՝ զօրս ժողովելինն յամենայն ազգաց առ փառասիրութեան և դիւրութեան անձանց. զի սոքա ընդ գլխաւոր պատճառս կործանման տէրութեան նոցա գտան։

Ականատես ոմանց յԱսորայելացւոց էին առ-ձեռն պատրաստ զրամք. քանզի և սակաւ պէտք էին զրամոյ յաշխարհի ուր չէր ումեք օրէն վաճառել զանգս իւր, կամ պարտական լինել, կամ վաճառաշահ[2]։ Ալաչխ և տոկոսիս առնուլ ՚ի միմեանց արգելեալ էր[3]. և թէպէտ յօտարաց մարթէին առնուլ բայց և զհաղորդ դէպ ընդ օտարս գժուարին գործէին օրէնք[4]։ Ամին իրի որպէս ՚ի վեր անդր ասացաք, յան-պատուն էր մանաւանդ մեծութիւն նոցա և յանգս։

Վճանզի և այսպիսիս իսկ առաջի եղ նոցա Աստուած մեծութիւնս՝ բնականագոյն և հաս-

[1] Դատ. Ե. 10. --ր Խրփ-ման--ի-ն զէ --ն յերիվարս։
[2] Ղևտ. ԻԵ. 8։ ե Օրէնք. ԺԵ. 7։
[3] Ղևտ. ԻԵ. 36, ևն։ ե Օրէնք. ԻԳ. 19։
[4] ե Մնաց. Բ. 17։
ԺԵ. 1, 3։

տատուն : Ձառնէ նոցա բան զոսկւոյ կամ զարծաթոյ կամ զականց կամ զմեծագին անօթոց , և առաւել չխօսի ընդ նոսա զՅիսուս թեանց՝ որ ՚ի հնարից և ՚ի կամաց մարդոյ այնպիսիք համարին . այլ խոստանայ և եթէ զի անձրևեսցեն երկինք ՚ի ժամանակի իւրում, առատս բուսուսցեն անդք ցորեան , ծառք տացեն պտուղս բազմաբեղունս , և զի հունձք և կութք և սերմանիք մի դադարեսցեն : Խոստանայ նոցա հաց ցյաւգ , քուն առանց զարհուրանաց , աներկևանութիւն , խաղաղութիւն, և յաղթութիւն իսկ ՚ի վերայ թշնամեաց [1] : Ձաւետ՝ զի հայել իւր հաշտ ՚ի նոսա՝ աձեցուսցէ զնոսա և բազմացուսցէ , և թէ օրհնութիւն իւր բազմածնութիւնդ առասցէ զկանայս նոցա , և թէ օրհնեսցէ զանդեայս արջառոց նոցա , զՀօտս ոչխարաց , զընտեմարանս և զՀամբարս և զձեռագործս նոցա [2] : Ցյսպիսեաց առաժամանակեայ հարստութեանց հրամայէ Աստուած ակն ունել ՚ի նմանէ :

1 Ղևտ . ԻՉ . 3 . եև : 2 Բ Օրէնք . ԻՐ . 4 :

ՅՕԳՈՒԸՆ ՀԻՆԳՆԵՐՈՐԴ

Արուեստաք և ձեռագործք։

Ղագիտեմ զայլ ոք յազգաց բոլորանուէր լի-
նել զՅսրայելացիս յերկրագործութիւն։ Ոչ ի
նգիպտացիք և Ասորիք զոգ նմին պարապէին
և՛ի ձեռագործս, և՛ի նաւարկութիւն, և՛ի վա-
ճառաշահ։ Նոյս առաւել փիւնիկեցիք՝ ի
հալածական առնել զնոսա Յսրայելացւոցյեր-
կրէ իւրեանց՝ ամիսփեալք՝ ի ծովեզերեայ
քաղաքս, բռնադատեցան Ճարտարութեամբ
հայթայթել զկեանն, և ոստիկանք լինի և
գործակալք լինել վաճառականութեանն ամենայն
ազգաց։ Ոչ հետ նոցա չոգան և Ղեմիք, և
յաջողեցան յոյժ յարուեստս. իսկ Հռոմք
ընդ հակառակն անգոմնեալ զարհեստիւք, և՛ի
տուրևառս թևակոխեցին[1]։ Այլ Յսրայե-
լացւոց բաւական էր՝ի կերակուր աշխարհն
իւրեանց. զի զծովեզերս փղշտացիք ունէին
մեծաւ մասամբ, և Քանանացիք՝ որ են փիւ-
նիկեցիք։ Ցեղն Ոաբուղոնի ևեթ որոյ քան
զի ծովահայեաց էր վիճակ, և՛ի վաճառաշա-
հութիւն հրաւիրեր զնա. յոր ակնարկիցեն

1 Յովսեպ. ընդդէմ Ապիոն։

արդեօք և օրհնութիւնքն Յակոբու և Ի՞նչ սիսի՝ ։

Այլ չընթեռնումք ուրեք այլուր՝ Թէ՝ ի ձեռագործս պարապեին նոքա . և չէ օրէն ասել Եթէ դեռ ևս չգոյին արուեստք , զի յոլովագոյնք յարուեստից երիցագոյնք են քան զջրհեղեղ ջուրցն . և զի ոչ պակասեին ձեռագէտք Ճարտարք առ Իսրայէլացիս , վկայ հաւատարիմ մերձ կան Ներսէսիկ և Նղիսաբէ՝ Ճարտարապետք խորանին և ամենայն սպասուց և հանդերձանաց տանն տեառն [1] ։ Օ արմանք են՝ զիարդ էր գիտել նոցա արուեստս այնչափ զանազանեալս ի միմեանց և դժուարինս . զի գիտեին նոքա ձուլել և կոփել զՀրաշալս , հատանել և քանդակել ականս պատուականս , հիւսանել , ոստայնանկել , ասղնագործել , և եփել իւղս անուշունս ։

Յայսոսիկ առաւել ինն հիանալիք Թուին ինձ քանդակքն և ձուլածոյք , որպիսի քերովբէքն էին տապանակին , և որթն ոսկի՝ Ճարտարեալք զայնու ժամանակօք [2] ։ Օ՛ի և Թերահմուտք արուեստից ոչ անգիտանան՝ քանի Ճարտարութեան պէտք են յայսոսիկ և որչափ գործեաց ։ Նթէ անդստին յայնց ժամանակաց ի գիւտ ածան արուեստք , ապա քաջ ի կատարումն ածեալ էին և արուեստք որ ի

1 Ծննս . Խթ . 13 ։ ե Օրինք . ԼԳ . 19 ։

2 Ելք . ԼԱ . 4, 6, 36 , 37 ։ 3 Նդ . ԼԱ . 4 ։

զարդ միայն էն։ Իսկ եթէ էին նոցա հնարք հեշտեաւ առնելոյ զայնս և առանց գործեաց, այն զմեծ ևս համուեթիւն նոցա յայտ առնէ։ Ոչ այս՝ի հարևանցի ասացաք առ ցուցանելոյ զի մարդիկ և՝ի վաղ ժամանակս անդ ոչ թանձրաբարոյք էին և տգէտք՝ զոր օրինակ համարին բազումք. քանզի և առ ժամանակօք [1]՝ովսիսի՝ ամաց էր աշխարհս աւելի քան երկու հազար և հինգհարիւրոց։

Ի՛ւրեթէպետ Ա[ղիպտացւոց անտի երևելի ճարտարաց ուսեալ էին, և թէ առ՝ի Ա[ղտուծոյ աքանչելապէս՝ որպէս թուի ակնարկել սուրբ գրոց, չթողին իւրեանց աշակերտս, և մինչև յաւուրս Թագաւորաց չէկաց Ա[սրայելացիս ձեռագէտ ոք՝ի գործ հասարակաց։ Իւ վկայեն գիրք՝ զի՝ի սկսանել Թագաւորութեանն Ա[ւուղայ չգտանէր գաղբին երկաթոյ յամենայն Ա[սրայել. որպէս զի և՝ի թեքել իւրաքանչիւր զգործի իւր՝ի մշակութիւն՝ յերկիրն փղշտացւոց իջանէին։ Իւ Թէպետ բուռն հնարք էին այս փղշտացւոց՝ զի մի առնիցեն նոքա անձանց զէնս, բայց սա և զնի բազում ամաց առնոյր Ա[ւաւիթ՝ի փախչել իւրում յերեսաց Ա[ւուղայ՝ զսուրն Ա[ղիաթու զգժաւարակիրն արդեօք իւր, և առնոյր զայն՝ի խորանէն վկայութեան՝ ուր կախեալ կայր յարձան յաւերժական յաղթու-

[1] ա թագ. ի՚գ. 19։

թեան իւրոյ · յորմէ յայտնի երևի թէ չգտա-
ներ նա այլուր զէն զի գնեսցէ ։

Այնպէս թուի թէ չվաճառէր առ նոսա
հաց, զի անդ դարձեալ զհացն առաքաւորութէ-
ետ նմա Քրիստոս · յորմէ երևի զի և ի
տունս առ ջերմութեան արդեօք աշխարհին
հաց ոչ պահէին՝ այլ միշ իրի և կիներն վհուկ առ
որ չոգաս Սաուղ՝ ի նմին ժամու առեալ
թրիքը հաց ի կազդուրումն նորա [2] ։ Ի տունս
իւրաքանչիւր էր փուռն, քանզի իբր պատու-
հաս սպառնան օրինաց առաքել ինոսա սով այն
պիսի՝ զի տասն կին ի միում թոնրի եփեսցեն
զհաց իւրեանց [3] ։ Սպաքէն և ի Հռովմ մին-
չև ի հինգ հարիւրերորդ ութմներորդ ամ շի-
նուածեան քաղաքին չգոյին հացավաճառք [4] ։

Իսկ ի ձառս ձեռակերտից իւրաքանչիւր
մատուցեալ շատք յայնցանէ և չէին իսկ պի-
տանացու Իսրայէլացւոց · քանզի առ անպա-
տչիճ կենացն և առ բարեխառնութեան օդոց
աշխարհին՝ անկարօտ էին ազգի ազգի կահուց
և կարասեաց , յորոց զրկիլ անհնարին թուի
մեզ , և առ ունայնասիրութեան մերոյ և փափ-
կութեան առաւել հոգամք զայնցանէ քան
զտոյգ կարևորացն ։ Իսկ ի տիրապետ կարևո-
րացն գրեթէ ոչ ինչ էր՝ յոր ոչ ձեռնհասք
էին իւրովին ։ Օ՛ր որ ինչ ի կերակուր էին՝

1 ա թագ · իԹ · 9 ։
2 Ընդ · իԸ · 24 ։
3 Ղևտ · իԶ · 16 ։
4 Պլին · ժ · ժա ։

զայն՝ի տունս Հանդերձեին կանայք. նոցա էր գործ հաց թրել, խոհարարել, մանել, ոսաւայնանկել, և գործել Հանդերձս. իսկ յայլն ամենայն արք պարապէին։

Հոմեր՝ի գիրս իւր ածէ զԱնդրոմաքա զայր լաւ՝ որ ինքնին առնէր իւր սանդալս. և պատմէ անդէն՝ զի և զհոյակապ գոմն անդէոց զորս դարմանէրն, իւր իսկ կառուցեալ էր[1]։ Այսպէս Աղիսեայ իւրովի շինեալ էր զտուն իւր, և յարմարեալ զբազմարուեստ մահիճսն, յորոց ասա՝ի կերտուածոյն Ծանեաւ զնա ամուսինն. և՝ի մէկնելն՝ի Կալիփսովայ՝ ինքնին միայնակ շինէր իւր նաւ և սպառազինէր զայն[2]։ Յայսմ ամենայնէ է՝ի միտ առնուլ զկեղտնակ խորհելոյ նախնեաց, որք փառս համարէին զկարևորսն զամենայն՝ի կեանս՝ գիտել անձամբ առնել, և այլոյմ ուժք ոչ կարօտանալ. և զայս յաչախ կոչէ Հոմերոս գիտութիւն և իմաստութիւն։ Արդ վկայութիւն Հոմերի, հարկ համարեալ գամ մի ասել, մեծապէս է յայսոսիկ. քանզի եկաց նա առ ժամանակ[3] Ազիայի մարգարէի զկողմամբք փոքուն Ասիոյ[3]. և զոր միանգամ գրեաց յաղագս բարուց և սովորութեանց Յունաց և Տրովացւոց՝ աքանչելի իմն նմանութիւն է՝ի նոսա ընդ բարս և ընդ սովորութիւնս Արեւելեցւոց և այլոց ազ-

[1] Ոդիս. ժԳ. ԻԳ։ [3] Վէմ Աբուդեղեան։
[2] Ընդ. Ե։

գաց արևելից. այսու միայն զանազանեալք, զի Յոյնք որպէս կրսերք ժամանակաւ՝ կրսերք և՛ի քաղաքավարութեան էին։

Իցէ որպէս և է յաղագս առաջին դարուցս. այլ ընդ այն չէք յերկուանալ, զի Դաւիթ քաջութեամբ ձեռագէտս արուեստից պատրաստեաց[1] ՚ի թագաւորութեան իւրում, և շինողս քարանց, և հիւսուն փայտից, և ոսկերիչս, և դարբինս արծաթոյ և պղնձոյ և երկաթոյ, այս ինքն զամենայն գործաւորս որ վաստակեն ՚ի քար, ՚ի փայտ և ՚ի հրահաղս։ Այլ զի մի կարծիցի թէ յայլոց ազգաց էին սոքա, յաւելուն գիրք՝ թէ արկ արքայ Սողոմոն մարդահարկս յամենայն Իսրայէլ երեսուն հազար արանց ՚ի ձեռագիտաց արուեստին, և թէ էին նորա ութսուն հազար քարահատաց ՚ի լերինն[2]։ Այսաքէն խնդրեաց նա Հարտարս և ՚ի Վիրամայ արքայէ, զի և վկայեաց իսկ թէ չէր նորա այր որ գիտէր հարկանել փայտ իբրև զՍիդոնացիս. ՚ի նմանէ առ նոյնպէս և զերևելի Հարտարապետն պղնձոյ զՎիրամ՝ գործել զաւազանն Ճուլածոյս[3]։

Հետ պատառելոյ թագաւորութեանն և՛ի յաձախել զեղխութեան՝ աձեցին անշուշտ և ձեռագէտք արուեստից։ Ցեսանեմք յաղգս համարին Յուդայ զվայրն՝ որ կոչէր Հովիտ ձե-

1 ա Մնաց. Իբ. 15։ գ թագ. 2 գ թագ. Ջ։
ե. 13։ 3 Նկր. Ի. 13։

ռագիտաց արուեստին, զի հիւսուածք էին անդէն՝ ասէն գիրք [1]. և գարձեալ զագաւոհմի ոստայնանկաց և զբրտաց, որք վասն թաչառուքին գործէին, և ի բուրաստանս նորա քնաքէին։ Որովք յայտ է թէ պատուէին առնոսա արուեստք, և զանուանս արանցն որոց պարապէին ի նոյն՝ պահէին խնամով առ յապա յիշատակս։ Յժամարգարէն Յսայիա՝ի սպառնալիսն ի վերայ Յերուսաղէմի մարգարէանայ և զբաբառումն խմաստուն Ձարտարապետաց [2]. և բազում անգամ վկայէն գիրք [3] զի յառնուլ քաղաքին բարձան անտի և հիւսուածք։ Ասյլ թէ՝ ի ձեռագործս կաձախեցին նոքա երբեք՝ յայտ անտի է, զի ի ստորագրել Յեզեկիէլի զազգի ազգի վաճառս զոր բերէին ի Տիւրոս յամենայն աշխարհաց, յորեան և եթ առաքէր Հրէաստան, և իւղ և խունկ և ռետին, որք ապաքէն բերք աշխարհին էին [4]։

Ասանիկ առաջի արարի յոր ինչ պարապէին Իսրայէլացիք, և որով իւրք պաճարէին զկեանս իւրեանց. առցուք արդ մանր ևս քննել, և ցուցանել ըստ կարի զձև և զտարազ հանդերձից նոցա, զենակուռէ, զկահուց, զկերակրոց, և զկենաց նոցա։ Յառնէին նոքա կանուխ ընդ առաւօտն, ըստ որում զայս յայտ առնէն գիրք

1 ա Մնաց. Գ. 14, 22, 23։ Ռեան. զի գերն ռանի վերբայական անուանան գոյն ինայայլութեամբ խմասքը։
2 Եսայ. Գ. 3։
3 գ Թագ. Ի՛Թ. 14. Խմ ըստ լաք. Բարգմանութ.
4 Եզեկ. Իկ. 19։

յաւետեան տեղիս՝ ուր և զդոյզն ինչ կարեւոր գործոց բանք լինիցին. մինչ զի ըստ բարբառոյ գրոց կանխեցին ցուցանել հասարակաբար զինաւ մոլ և զկամակարն գործել՝։ Եւ մին իրի բա- զուստ ուրեք և զ՚յառուծոյ ասացաւ՝ Թէ խո- սեցաւ ընդ առաւօտս, և կանխեաց առաքեաց առ ժողովուրդ իւր մարգարէս՝ դարձուցանել զնա ՚ի Հանապարհէ իւրմէ չարէ՚։ Եւ յորիկ պատճառք էին պարապուքն նոցա յերկրա- գործութիւն. ըստ որում և Յոյնք և Հո- ռոմք զնոյն սովորութիւն կալան անխափան. զի և նոքա յառնէին այգուն, և վաստա- կէին ցերեկոյ. ասպա լուացեալ՝ բազմէին լըն- Թրիս, և փութային անդէն ՚ի մահիճս։

ՅՕԴՈՒԱՆ ՎԱՆՑԵՐՈՒԻ

Յաղագս զգեստուց նոցա։

Ընդ մարթ զգեստուցն Իսրայէլացւոց Հըշ- գրեաւ տալ գձև, զի չառնէին երբէք պատկերս նկարագործս մարդկան. այն զի և սակաւ ինչ է ուսանել և ՚ի պատկերաց՝ երբ չկայ տեսեալ ոք զկենդանիան. բայց որչափ գուշակել ինչ օրէն իցէ ՚ի նկարուց Յունաց և այլոց հին աղ- գաց, չդանդաղիմք առաջի առնել։ Վակայն

1 ե Մնաց. Լ. 15։ 2 Երեմ. Ի. 13, 11. 7։ Լե. 14։

գիտել արժան է զի բազումք յարդի նկարուց կերպարանս մտացածինս տան մեզ զերացն. և զայս ոչ զգոնացի պատկերաց ևեթ ասեմ, յորս նկարեալքն ամենեքին, թէպէտ և զանազանեալք աչխարհաւ և ժամանակօք, զգենուն զնոյն հանդերձս՝ զորս տեսեալ էր նկարչին զգենուլ Պաղղեհացւոց և Լամանաց ժամանակին իւրոյ երկերիւր ամաք յառաջ, այլ և զնկարուց առ հասարակ Ճարտարնկարչաց. զի բաց ի Լափայելէ և ի Վուսենեայ և յայլոց սակաւուց ոմանց, որք արդարև քաջ հետամուտ եղեն ուսանել զբարս, կամ որպէս նոքա կոչեն՝ զսովորութիւնս որ յառաջին ժամանակս և ի դարս իւրաքանչիւր, այլք ամենեքին ի նկարչաց մեծ ինչ վարկան նկարել զարևելեայս որպէս ի Էնետիկ տեսեալ էին, կամ յայլ ծովափունս տալիոյ. իսկ զպատկերս արանց նոր կտակարանաց արարին որպէս ղԵրեից աչխարհին իւրեանց: Եւ քանզի յօղով ի պատկերաց աստուածաշունչ գրոց առ ի նոցանէ գազափարեցան, ըստ նմին և ի միտս մեր գրոշմեցան ի մանկութենէ, և մօրուօք մինչև ցմէջս՝ և փակեղամբ ուսաք յանդիման առնել մեզ զնահապետս, և հնգղովք և մախաղովք զվարիսեցիս աւետարանին: Պաքէն ոչ մեծ ինչ է ինձս պատրել յայսոսիկ, բայց չպատրել ըստ կարի՝ լաւ եմ:

Հանդերձս երկոցս զգենուին հասարակա-

բար 'ի հին ժամանակս, որպէս և զգենուն արդ բազումք յաղգաց, որպէս և մեք իսկ երբեմն ամօք յառաջ զգենուաք 'ի Պաղղիա։ Այլ ձահողագոյն և է ծածկել զմերկութիւնն միանգամայն, քան եթէ ըստ մասին. և հանդերձանի արձակ վսեմ և, և հաճոյ աչաց։ Ի ջերմ աշխարհս զգենուին հանդերձս լայնս, և սակաւ փոյթ էր նոցա ծածկել զբազուկն և զսրունս, և ընդ մուգիլ յոտս ագանէին կօշիկս խրացիւք պնդեալ անման մերոյն։ Որբեթէ ոչ ինչ աշխատութիւն էր հանդերձիլ նոցա, զի էին հատորք դիպակայ՝ զոր այր իւրաքանչիւր յարմարէր ըստ սահմանեալ չափու և ձևոյ հանդերձից։ Ոչին ինչ նոցա պէտք հատանելոյ, և սակաւ ինչ՝ կարելոյ։ Այր նոցա և արուեստ հէնելոյ 'ի գործարանի հանդերձս թէ զանաւորս փորանկեալս առանց կարանի, որպիսի պատմուճանն էր Քրիստոսի [1]։

Ոչ փոխէին զտարազ ձևոց զգեստուցն, ըստ որում անփոփոխ պահէն և արդ ընդ ամենայն աշխարհս արևելից. զի զգեստք 'ի ծածկոյթ մարմնոյ են. որ զի յամենայն ժամանակի նոյն է՝ վասն պատճառաց այսքան նորաձևութեանց հանդերձից, և օր ըստ օրէ այլակերպելոյ զնոսին որպէս 'ի մերում աշխարհիս։ Արդարացի է խնդրել զհեշտն և զգիւրին 'ի պահպանել ըզմարմինն 'ի տօթոյ և 'ի ցրտոյ ըստ քաղաքաց և

[1] Յովհան. ԺԹ. 23։

ըստ յեղանակաց, և յաղատ շարժուն անդամոցն՝ կատելի և զվայելչութիւն ըստ տիոց, ըստ պայմանի առն և կնոջ, և ըստ հանգամանաց իւրաքանչիւր բախտին։ Զանգոնեմք և զգեղեցկութիւն՝ի հանդերձս, միայն եթէ վասն այսորիկ զարդս անձահս չարկանիցէ ոք զանձամբ, և շատ համարիցի ըստ նմանութեան նախնեաց զգուշոյն պայծառութիւն, և զընտրկան հանդերձանս։ Իսկ յորժամ զդիւրինն և զգեղեցիկ եգիտ ոք, ՚ի զուր է այնուհետև այլ ևս փոփոխել զնոսին։

Այլ ահա ոչ իմաստնագոյնքն իցեն՚ի մարդկանէ՝ որ զնորանորսն հնաբուխեն, այլ կանայք ոմանք և դեռահասակք՝ օգնականեալք՚ի վաճառականաց ոմանց և՚ի տխմարաց ձեռագիւտաց, որք զշահս ևեթ անձանց խնդրեն։ Այսկայն որ՚ի հնչենոց աստի զեանք զհետ գան՝ կարի մեծք են. զի ծախք որ յաւելորդ զարդս լինին, և առ փոփոխութեան տարազուց հանդերձից, անհնարին տագնապս հասուցանեն քաղմաց՚ի միջակայնոց. որ և այս դարձեալ յաձախել զդժուարութիւն ամուսնաւորութեանէ։ Այստի հանապազորդ գժտութիւնք ընդ ծերս և ընդ մանկունս, և սա այսնուազեցոյց զշուք և զպատիւ նախնեացն։ Ոչ տեսանելով մանկանց՝ յորս սաստիկ է երևակայութիւն՝ զպատկերս հաւուց իւրեանց՚ի հանդերձս որ զծաղը նոցա շարժէ առ չտեսանելոյ

արդ յայլս, չհաւանին 'ի միտս թէ իմաստունք էին նոքա, և անսալ պարտ իցէ ասացուածոց նոցա: Համայն ասել բազումն էր զի որ սպրկիչն սիրեն երևել գործ և պարապումն իւրեանց առնեն զհանդերձիս յարդարանս, պարապումն որ արդարև ոչ 'ի վեր զմիտս ամբառնայ, և ոչ մեծամեծաց առնէ զնա բաւական:

Այլ քանզի 'ի հնուին չիփոխեին ձորձք, արկեզք մեծատանց լի էին զգեստուք, և վեր երկիւղ խափանելոյ այսոցիկ, կամ այլ նորս հապձեպ 'ի վերայ նոցա առնելոյ, Լուսն հանդերձիցն զուկուղղոսի գտան հինգ հազարքղամիդք, որ էր ազգ իմն պատերազմական վարկուի՝. ըստ նմին իմա և զթուոյ այլոց հանդերձիցն: Յընծայ սովոր էին պատմուճանս պարգևել և տալին կրկին՝ զի մարթասցի տանել փոխանակաւ, և 'ի լուանալն զմին՝ արկանել զմիւսն, զի էին որպէս զմեր շապիկս:

Ոմիպակաք նոցա յոլովակի ասուեալք էին. այլ և Ալեքսիոս և Յովհաննէս յաղխու կտաւոյ առնէին զհանդերձս, և 'ի բամբակէ, և 'ի բեհեզոյ՝ որպատուականագոյն էր քան զամենայնս: Լեհեզն զորմէ յաճախ խօսին գիրք՝ ազգ իմն է մետաքսի 'ի գոյն դեղին ոսկւոյ, որ 'ի մեծամեծ խղունջս գոյանայ[1]: Ոմի որ առ մեզ մետաքս շերամոյ՝ անճանօթ էր առ ժամանակս

1 Ովիտա. գիրք Դ. Թուղթ ՀԶ:

2 Գեան. Պատմ. կենդ. գիրք Դ. յղ. պին:

կօք Իսրայէլացւոց, և ամք հինգհարիւր և աւելի անցեալ էին զկնի Քրիստոսի յորժամ յաձախեաց այն յայսկոյս Հնդկաց։

Յանօսրութենէ և ի գունոյն դատեալ լինէր գեղ հանդերձից. և սպիտակն, և ծիրանին կարմիր կամ մանուշակագոյն արգոյ և էին. և Թուի Թէ Իբրայեցիք յոլովակի սպիտակս ըզգենուին, որպէս Յոյնք և Հռոմք. զի ասէ Իմաստունն ի Ժողովողին.[1] «Յամենայն ժամ եղիցին ձորձք քո սպիտակ»,. որպէս Թէ ասէր, հանապազ զգոյշ լինիր սրբութեան։ Կանգուն և չիք ինչ պարզ քան զձորձս ասուիս և կտաւիս՝ ըստ բնական գունոյն որպէս և երկիրն բերէ՝ առանց ներկելոյ զնոսա։ Իսկ մանկտին և աղջկունք զգենուին հանդերձս կոշկին և ծաղկեայ, որպիսի պատմուճանն էր Յովսեփու՝ զոր մեր կացին ի նմանէ եղեալքն ի վաճառէն զնա, և որպիսի պատմուճանքն էին դստերաց Թագաւորաց առ Դաւթիւ[2]։

Ոտսք կամ վերջաւորք ի ծիրանւոյ կամասզանւոյ՝ էին զարդք հանդերձիցն, Ճարմանդս ունելով ուրեք ուրեք ըստ պիտոյից յոսկւոյ կամ յականց պատուականաց։ Կեծուքիւն ինն էր փոխեըն ստէպ զՀանդերձս, և զգենուըն ջինջ և անկարկատ։ Իսայ ընդ պարզուքիւն հանդերձից Իբրայեցւոց ոչ ըզբերկուասցկայ ծէլ զմտաւ զի և հանդերձք Յունաց և Հռո-

[1] Ժող. Թ. 8։ [2] Յշն. ԻԴ. 37։ ¶ Թագ. ԺԴ. 18։

ռոմից անպատմելիք էին յոյժ նա և ՚ի կարի զեղխուելեան ժամանակին, որպէս է տեսա-նել՚ի հին անդրիս, ՚ի պատկերն Տրայիանոսի, և յայլ բարձր քանդակս։

Իբրու ազգ հանդերձից յիւրոց սովորաբար ՚ի սուրբ գիրս, պատմուչան և պարեգօտ յորս բովանդակէին և Յունացն և Հռոմից զգեստք։ Պատմուչանն լայն էր, որպէս զի համարձակ շարժել զգեցողին՚ի գործս։ Իսկ զնչէրն թողու-ին զնա արձակ. իսկ յորժամ գործոյ ժամ էր կամ գնալոյ, պնդեին զնա գօտւով. յորմէ և ասացուածն այն յաձախ՚ի սուրբ գիրս. «Իբրև և պնդեա զմէջ քո,,, և արա զայս։ Հրամանք էին առ Իսրայէլացիս ասղանի կապուտակ տա-նել՚ի տուընս հանդերձից իւրեանց՝. զի ստէպ կացցեն օրինացն տեառն։ Իբրէին՚ի գլուխ իւ-րեանց խոյր լինն հանգոյն Պարսիցն և Վաղ-դեացւոց. զի բացաւ գլխով գնալ՝ սգոյ նշա-նակ էր։ Պխսաւորք էին, զի և գերծուլգը-լուխ՝ զսուգ յայտ առնէր։ Իսկ զի երկայնա-մօրուք էին, յայտ է ՚ի ծառայիցն Պաւելի զորս յղեաց առ արքայն Իմնացւոց, և նորա անսացեալ չար խրատուացն՝ եգերծ զկէս մօ-րուաց նոցա առ ՚ի նախատել զնոսա [2]. որով բռնագատեցան նստել Իերիքով մինչև ՚ի վե-րըստին աճումն մօրուացն, զի անծանակ կա-րող լինին շրջել. և զգրատս նոցա եհատ ՚ի

1 Թիւք. ԺԵ. 38։ 2 Ը Թագ. Ժ. 44։

միջոց ցեղը, յորմէ յայտ է, զի երկայն հանդերձս զգենուին։

Լուանային ստէպ, որպէս առնեն ցայսօր՝ի ջերմահանգս։ Յաձախագոյն ևս լուանային զոտս, զի սանդալս ևեթ ագանելով ընուին փոշւով՝ի փողոցս ոտք նոցա. վասն որոյ և յաձախ բանք լինին՝ի գիրս զոտիցն լուանալոյ՝ի մտանելն՝ի տուն, ՝ի բազմելն՝ի ձաշ, և՝ի գնալն՝ի մահիճս։ Լու զի ջուր ցամաքեցուցանէ զմորթ և զհեր, նմին իրի և օծանելին՝ էր զի իւղով լկով և էր զի խառնելով ընդ խունկս անուշունս, զոր և միրապէս կոչէին օծանելիս, որով և օծանին ցայսօր՝ի Հնդիկս։

Խաղումուրեք աւանդեն գիրք զզգեստուց կանանց և զզարդուցնոցա։ Լկշտամբելտեառն զԱրբասաղէմ վասն անհաւատարմութեանց նորա՝ի դէմն փեսայի որ՝ի յետին թշուառութենէ զհարսն իւր զերծուցեալ ընուցու զինա ամենայն բարութեամբք, պատմէ նմա՝ի ձեռն Յեզեկիելի մարգարէին[1], զիարդ զգեցոյց նմա պեսպեսս, և ագոյնս զերկնագոյնն, ած ընդ մէջ նորա բեհեզ, և արկ զնովսւս մնդուս. եդ ապարանջանս՝ի ձեռս նորա, և քառամանեակ՝ի պարանոց, գինդև գրշապահանգոյականջս, և պսակ՝ի գլուխ նորա, կամ ապարօշ[2] զոր դեռ ևս յետ բազում ժամանակաց տանէին՝ի

[1] Եզեկ. ԺԶ. 9։ lupæ barbara mitrâ.
[2] Յոբն. Երգիծ. Գ. Pictâ

գլուխ կանայք Իսրայ, և զարդարեաց զնա
'ի զարդ ոսկւոյ և արծաթոյ և 'ի քահեզս, 'ի
զառնաւոսիտա և 'ի Համանչաւոսիտա: Եւ զՅու-
դիթայ Հաւի Թէ 'ի գնալն առ Հողոփեռնէս
լուսաց զմարմին իւր ջրով, և օծաւ իւղով անու-
շիւ, և եհիւս զՀեր գլխոյ իւրոյ, և կապեաց
զապարօշն 'ի Հակատ իւր, և զգեցաւ զՀան-
դերձս ուրախութեան իւրոյ, և ագաներ կօ-
շիկս ոսկեզօծս, և արկաներ ապարանջանս 'ի
ձեռս իւր, և քայոս յահանց պատուականաց
ընդելուզեալս մարգարտով 'ի պարանոց իւր[1]:
Համառօտ ասել, անմարթ է առաւելագունի
ևս փափաքել ստորագրութեան զարդու կա-
նանց քան զոր Իսայիաս[2] ակն արկանեմք 'ի
յանդիմանել նորա զԱիհոնի դստերսն վասն
զեղխութեանն նոցա և մտափառութեան: Ի յս-
պէս ապականութեանն 'ի ծայր հասեալ էր
առ նոսա:

ՅՕԴՈՒԱՆ ՆՕԹՆԵՐՈՐԴ

Յաղագս աղեխց նոցա, և տանց:

Սկսաւ յոյժ աղեխց պիտք էն 'ի ջեր աշ-
խարհս քան 'ի մերումն. իսկ անարդ կենցաղ
Իսրայելացւոց ապաքէն դոյզն ևս կահուց կա-

[1] Յուդիթ. ժ. 3, ԻԵ: [2] Եսայ. Գ. 16:

բօտեր : Յօրինս յաձախ բանք լինին զիայտեայ և զխեղեղչին անօթոց. և առ Յոյնս և առ Հռոմս հասարակաց էին խեցեղէնն անօթք՝ վասն զեղխութեանն նուաձեալ զնոսա : Յընծայսն զոր բերին առ Պաւլէ[1] ի կազդուրուին նորա առ պատերազմաւ Քրիստոսեայ, բրտի էին անօթքն : Ի խօսիլ Սոմնացւոյն որ ի տան իւրում ընկալաւ զԱղեսէ Յայտնի լինին որ կարևոր կարասիք համարեին առնոսա. "Բռասցուք, ասէ ցայր իւր, վասն առնս Քրիստուծոյ վերնատուն մի փոքրիկ, և դնցուք ի նմա մահիճն, և սեղան, և աթոռ և աշտանակ..."[2] Մահիճքնոցա էին անկողնեակք եւեթ. ոչ պաղպաջունք էին նոցա և ոչ առագաստք, այլ վարկպարապի վարագոյրս եւեթ ունելով ի վերայ ի պահպանութիւն ի մժեղից, զոր կոնոպէոն* անուանեն Յոյնք : Իսկ կարի ձոխ էին փղոսկրեայ էին գահոյք՝ ըստ որում յանդիմանէ Քրիստոս[3] զՄաթծատունս ժամանակին իւրոյ, և փետրալից անկողինք կարի փափկասիրացն՝ պատառաձիրս զնոսին յարդարելով և քրքմացանս : Յեղ յորմն գնեին զմահիճն, ըստ որում գրեալ կայ զԱզեկիայ՝ թէ իբրև լուաւ զդոյժ մօտալուտ մահուն՝ դարձոյց զերեսս իւր յորմն և ելաց[4] :

1 Բ Թագ. ԺԱ. 28 :
2 Բ Թագ. Դ. 10 :
* Κωνωπεῖον, այն է մժախաւարած :
3 Աստուա. Ջ. 4 :
4 Ագաք. Ի. 16 :
Բ Թագ. Ի. 2 :

Ա՛չտանակն որ յաղեաս սենեկին Եղիսեի՝ թուի՝ ի մեծամեծ աշտանակաց անտի որ դնին՝ ի վերայ գետնոյ միաստեղն և կամ բազմաջահ։ Մինչև ցայնժամ և առ յասպ առ Հոռոմովք իւրով յարդարեին զլասպետըս՝ ի պէտս լուսոյ. յորմէ և գիրք սուրբք Հրագ կոչեցին զամենայն որ լուսաւորեն զմարմին կամ զվիտս, և առաջնորդեն և զուարճացուցանեն։ Ընդայայտ թէ էին նոցա գործք կամ օձոցք՝ ի տունս. և ինք իսկ պիտառուքիւն գործոց՝ ի ջերմ նահանգս, զի որմք առանց պաստառաց քաջ և պահպանեն՝ ի տօթոյ. իսկ զօձոցս՝ ի գործ աձեին՝ ի գետնի՝ ի պէտս բազմելոյ և ննջելոյ։ Ի վաճառս զոր բերեին Հրաբացիք՝ ի Տիւրոս՝՝ի թիւ արկանէ Եզեկիէլ և զօձոցս՝. բանք լինին զօձոցաց և՝ ի համար անդ ուտելացն զոր ածին առ Դաւիթ. որով թուի թէ՝ ի բացի ննեթ՝ ի պէտս վարեին Իսրայելացիք զօձոցս, աթոռս ունելով՝ ի տան։

Տունք նոցա անմահանք էին մերոյն, ըստ տանց զոր՝ ի ջերմնահանգս է տեսանել յայսօր։ Ո՛չ տամալիք անդ իբրու հովանոցք էն, և պատուհանք վանդակօք ննեթ փակին, կամ վարագուրօք. չէն նոցա վառարանք. և բնակարանք՝ ի նոսա էն՝ ի գաւիթս կամ՝ ի վայրս յարկս նոցա։

Իսկ զի տամալիք տանցն տափարակ էին

[1] Եզեկ. ԻԷ. 20։

յերկրին Հրէաստանի՝ այն բաղում ուրեք յայտ է՝ի սուրբ գիրս. զի Աստուած՝ի տա-
նիս տանին Թագաւորացեր զլըտեան Յեսուայ[1]. ՝ի տանիսն ետ Յամուել անկողնիս արկանել
Սաւուղայ[2] յորժամ յայտնեաց նմա զի Թա-
գաւորը ընտրեաց զնա տէր: Ի վերայ տանեաց
պալատանն զգնայր Դաւիթ[3] ՝ի տեսանելն
զԱերսաբէէ լուացեալ: Ի տանիս անդ գար-
ձեալ վրան հարաւ Աքիսողոմայ՝ի մտանելսնո-
րա առ հարձս հօր իւրոյ[4], որով որպէս Թէ՝ի
ժառանգութիւն մտանէր Թագաւորութեանն.
և յանդիման ամենեցուն արար զայն՝ի ցուցա-
նել Թէ անդարձ վտարանջէր: Ի տանիսն և-
լանէին՝ յորժամ արհաւիրք մեծամեծք ունէին
զնոսա, որպէս յայտ է՝ի կրկին տեղեաց Դասա-
եայ[5]: Սոքիմք՝ի միտ առնումք Թէ ընդէր
հրամայեցաւ յորիշնան որմն շուրջանակի առ-
նել տանեացն, զի մի՛ ոք անկեալ մեռանիցի[6].
և դարձեալ զասացեալսն յաւետարանին Թէ
"Ոչ ասացաւ ձեզ յոյնկանէ, քարոզեցէք՝ի
վերայ տանեաց,, զի բեմբաձև իմն էին տունքն
կառուցեալ, ուստի մարթ էր որոց կամիցին
լսելի առնել զբարբառ միոյն՝ի բացարձակ
վայրս:

Վանդակապատք պատուհանիցն ցուցեալ

1 Յեսու. Բ. 6:
2 ա Թագ. Դ. 25:
3 բ Թագ. ԺԱ. 2:
4 բ Թագ. ԺԶ. 22:
5 Եսայ. ԽԶ. 3: ԽՒ. 1:
6 բ Օրէնք. ԽՒ. 8:

էն յառաջան և յերգս Սողոմոնի, և ի չառս պատմութեան մահուն Քրիստոսի Թագաւորին Իսրայելի [1]։ Ի հրճիւգ առնել Հովակիմայ զքարտէսն զոր գրեալ էր Յրեմիայ բանիւ տեառն, նստեր ի ձմերոցին և կրակարան հրոյ առաջի նորա [2]. յորմէ խնամատարել օրէն և թէ չգոյին առ նոսա ծխնելոյզք որ ի ցուրտ աշխարհս հրս հնարեցան. զի ի ջերմնահանգս թոնիրք եւեթ էն առ ի խաչարանս։ Պարակերտք էինն նոցա տունք, մանաւանդ Յրուսաղէմ ուր բազում էն քարինք, և ուր Ճարտար էին ի հատանել զնոսին ի մեծամեծ հատորս։ Պատճէն գիրք ի շինութիւնն Սողոմոնի զքարանց ոչթ և կամ տանկանզնելից, որ առնեն երկոտասան և հնգետասան ոտնաչափս։ Իսկ քարինս պատուականս ասել անդէն [3], զգուշնակ գունակ մարմարիոնան յայտ առնէ։

Օգնեցկութիւն տանց ոչ ի զարդուցն դատէին, այլ ի բանդակ ձևոյն, ի կոփածոյին, և յառ միմեանս շարայարութենէ քանցն, յոր և մեծապէս ջանային՝ զի միապաղաղ լիցէ, և ուղիղ ըստ ամբարձմանն և ըստ անկեանց և ըստ հարթութեան։ Ըստ այսոցիկ մասանց գովէ և Հոմերոս զշինուածսն, և հիանամբ ցայսօր ընդ նմանակ գեղեցկութիւն շինուածոց հնոյն Յգիպտոսի։ Օգիայս

1 Առակ. Խ. 6։ Երգ երգ. գող. Խ. 6։ Է թագ. Ա. 2։
2 Երեմ. Լ.Զ. 12։
3 Է թագ. Խ. 9, 10։

հոտաւէտս՝ զեղևին և զմայր ՚ի կիր առնուին Իսրայելացիք ՚ի դրուագել ՚ի ներքուստ զորմըն հոյակապ տանց, և ՚ի յօրինել զձեղունն և զսիւնս, որպէս յայտ է ՚ի տաձարէն և յապարանից Սողոմոնի։ Եւ Դաւիթ ասէր զանձնէ՝ ՚ի տան եղևնափայտից բնակեալ՝, այս ինքն ՚ի մեծահարուստ տան։

ՅՕԳՈՒԱԾՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Յաղագս կերակրոց նոցա։

ԽՕՍԵԼ առեալ յաղագս սեղանոյ Իսրայէլացւոց, ուտէին բազմեալ՝ որպէս Յոյնք առ ժամանակօքն Հոմերի։ Օ այս պարտ է ՚ի միտ առնուլ առ ՚ի խոհիր ժամանակաց։ Վասնզի յայսպա ժամանակս առ Թագաւորութեամբն Պարսից ուտէին ընկողմանեալ ՚ի վերայ գահոյից[2], զոր օրինակ և Պարսիկք և այլք յազգաց արևելից, որոց զհետ չոգան ապա և Յոյնք և Հռոմք։ Իր բարեկարգ վարէին կեանս, աշխատեալ՝ ապա առնուին կերակուր, և անդադան յոյժ։ վասն որոյ ՚ի բարբառ գրոց ուտէին և ըմպել ընդ առաւօտս՝ զզեղխիլն յայտ առնէ, և զորկորուստ[3]։ Ընպաձոյչ էր կերա-

[1] ՚ի Թագ։ Ջ։ 18։ Ի։ 2, 3։ Եզր։ Գ։ 6։
[2] Եսթեր։ Ա։ 6, 7, 8։
[3] Նայ։ Ե։ 11։

կուր նոցա. և սովորաբար այլ ինչ աւելի չքեր առ նոսա, բայց զհաց ուտելոյ, և զջուր ըմպելոյ. յորմէ հաց ի սուրբ գիրս զամենայն ազգ կերակրոց նշանակէ [1]: Եւ Տատմամբ՝ այլ քեզ կանելով ուտելիս զհաց. զի փոքրիկ եր հաց նոցա, երկայն և տափարակ, ըստ որում և ի քաղաքս այլ գաւառս նոյնպէս առնեն յայսօր: Պարգևս իմն արար Նոոս Հռովմայեցւոյ նախ առաջնին՝ տալով նմա ըմպել ջուր ի նմին ամանոյ ուստի ըմպէր մանկտին իւր [2], և Տաշել ի միասին ընդ նոսա, և թանալ զպատառ իւր ի քացախ. և յայտ է ի շնորհակալութեանցն Հռոմայեցւոյ՝ զի ոչ գոչնաքեայ ինչ մեծարանք էին այն:

Ոմն որպիսի ինչ էին օրըստօրեայ կերակուրք նոցա՝ մարթ է իմաստասիրել յուտելեաց անտի զոր ի դէպս դէպս ընկալաւ Նաւիթ, ի Աիբայէ, և ի Ներզելեայ, որպէս և ի հանդերձանացն զոր բերին նմա ի Ռեբեքեն. արդ ահա այսոքիկ նշանակին անդ. հաց, գինի, գարի, ալիւր ցորենոյ և գաւազ, բակլայ, ոսպն, չամիչ, պաղատիտք, մեղր, իւղ, ձէթ, ոչխար, եզն, և զուարակ. յորս քան զամենայն առատ էին ցորեան և ունդք [3]: Յայսիսեաք կերակրէին ի հնուճն և Նգիպտացիք. այսո-

[1] Եսայ. Ե. 11, 16:
[2] Հռութ. Բ. 14:
[3] ա Թագ. Իե. 18:
ԺԶ. 1: բ Թագ. ԺԹ: ա Մնաց. ԺԱ: կղեմ. ազեքս. Հրա. հանգ. Բ. ա:

քիկ էին և կերակուրք Հոռոմոց՝ի բարգաւաճ աւուրս նոցա, և՝ի ժամանակին յորում երկրագործութեան պատկառ կային։ Իսկ յայտ իսկ աստի սկիզբն առին երևելի անուանքն Փաբիոս, Պիսոն, Կիկերոն, Ենտուլոս։ Օ կաթին կերառութիւն առ Իսրայելացիս՝ ուստա նիմք՝ի բանից աստի խմաստնոյն որ ասէ. "Ճաշ իցեն քեզ՝ի կերակուր կաթն այծեացդ, և՝ի պէտս տան քո ..."[1]։

Ծնկպէտ և էր նոցա հրամանն ճոխն ուտելոյ, բայց՝ի յետին ժամանակս ևեթ բան լինի զձկանց, և ոչ յառաջ. որով ևս թէ արհամարհէր այն առ նոսա որպէս կերակուր փափուկ յոյժ և ոչ ստածիչ զօրաւոր մարդկան. նմին իրի և ոչ՝ի Հոմերի գիրսն և յայլոց Յունաց որ զդիւցազանց դարուն պատմագրեցին՝ յիշատակին ուրեք ձկունք[2]։ Զգոյշն առ Աբրայեցիս ազգի ազգի խորտիկք և համեմունք, զի հաստատուն և պարարտ կերակուրք յօրինէին զկոչունս նոցա, և կաթն և մեղր զնարխունս նոցա։ Ուստի չև ածեալ զշաբաթ՝ի Հնդկաց՝ չգոյր առաւել ինչ քաղցր՝ի քիմս քան զմեղր. նովին եփէին զպտուղս, և այնու յօրինէին և զկարի համեղ կարկանդակս։ Փոխանակ կաթին իւղ ստէպ լսի՝ի գիրս, որ է սեր և պատուականագոյն մասն կաթին։ Ի հրամայեալ պատարագացն յօրէնսն յայտնի է զի

1 Ուսակ. Ին. Դեն. այլազգ առնէ։ 2 Պղատ. Հասար. Գ։

անդստին յաւուրց անտի Սոմխիի ազգ ազգ քաքարաց եկին առ նոսա, կեաք իւղով զանգեալ, և կեաք առանց իւղոյ [1]։

Ի գեղ համարիմ յաւելուլ ինչ աստ և վասն խորութեան կերակրոց։ Պատաքէն ոչ Հրեայք միայն առ կրօնս ունէին զժուժկալութիւն յանաս նոյ ինչ, այլ և որ շուրջ զնոքօք ազգք։ Պորիք և Եգիպտացիք չուտէին բնաւ ձուկն. և զՅունաց իսկ ժուժկալել ի ձկանէ յինքնակամ կրօնս նոցա համարեցան ոչ սակաւք [2]։ Ասուտէին զնոյն՝ որ ի Սիրէն բնակեալ Եգիպտացիք, զի պաշտօն տանէին նոխազակերպն Ամնի, բայց զայծս սպանանէին. իսկ ի քաղաքս ինչ հրաժարէին յայծեաց, և զնոյս զհնուն [3]։ Վասն եգիպտացիք հրաժարէին յամենայն կերակրոց և յըմպելեաց զորս ածէին յօտար աշխարհաց. և ի բերոց բնիկ աշխարհին գաբշելի էին նոցա ոչ միայն ձկունք, այլ և ամենայն անասուն միասմբակ և որոց բազմահերձ են թաթք, և կամ չիք նոցա եղջիւր, և ամենայն թռչունն գիշակեր։ Յոլովք հրաժարէին և յամենայն մսոյ կենդանւոյ. իսկ ի ժամանակի սրբութեանցն՝ նա և ի ձուոյ և յամենայն բանջարոց և յընդոց [4]։ Ընդ բնաւ Եգիպտոս չուտէին բակլայ. ապիղ էր համարեալ նոցա խոզն, և որ հպէր ի նա՝ և անգամ

1 Ղևտ. Ե. 4, 5։
2 Երոդ. Ա։
3 Պորփիւր. յղ. ժուժկ. Դ։
4 Երոդ. Բ։

յանցանէին՝ լուանայր անդէն հանդերձ զգեստուքն ։ Պղատոն ՚ի հասարակապետութեան դիրան զգարման խոշիցն գասէ ընդ աւելորդս զորս զեղխութիւն եմայծ յաշխարհ ՚։ Վանզի և ոչ մի օգուտ քաղի ՚ի նոցանէ, և ՚ի սեղանս ևեթ դնին։ Այլ ոք անպիտանայ զի Աստուածքն Հնդկաց և ոչ մի ՚ի կենդանեաց ուտեն ցայսօր կամ սպանանեն. սակայն յերկու հազար և աւելի ևս ամաց հետէ տակաւին կեան ։

Այսպա օրէնքն Մովսիսի ոչ օտար լինէին կամ նոր յայսոսիկ ամենայնի, այլ կարևորք առ զժողովուրդն ՚ի չափու ունելոյ՝ յերթալ զհետ մնապաշտութեանն շրջակայ ազգացն, և մի դարձեալ ՚ի սպառ ազատութեամբն զեղծանել. զի ժուժկալել ՚ի կերակրոց լինէ և յառողջութիւն օգտակար է, և ՚ի վարս ։ Այլ ինչ իրի ոչ ՚ի նուաճել և եթե զհաստապարանոցութենէ նոցա եդ Աստուած ՚ի վերայ նոցին զլուծս զայս, այլ և առ ՚ի զգուշացուցանել զնոսա ՚ի ինասակարացն ։ Պատուիրէր նոցա չուտել զարիւն և զձարպ, զի և երկոքեան գժուարահալք են. և թէպէտ Խորայէլացիք ազգ հզօր և աշխատասէր՝ նուազ քան զայլս յայսպիսեաց աստի նեղէին, սակայն յընտրութեան անդ ապաքէն լաւ էր զբարեգոյնն մատուցանել ՚ի կերակուր ։ Ըստ սմին և խոշէնի ծանրացուցանէ զորովայն. զնոյն է ասել և զձկանց՝ որոց չիցեն թեփք, զի ձար

1 Պղատ. Հասարակ. Բ ։

պալիը էն և պարարտ, թէպէտ և փափուկ ի-
ցեն որպէս զօձաձուկն, կամ կարծր որպէս ըզ-
թոն, զբաղենայս և զկէտս։ Իսկ այսմ և ըզ-
բազումս այլ իրացս որք հրամայեցանն յօրինաց
չուտել՝ մարթի զբնական պատճառս մեր-
ձենալ որպէս յայտ առնէ սուրբն Կղեմէս ա-
ղեքսանդրացի[1]։

Իսկ ըստ բարոյականին ամենեքին որ հո-
գւոյն խօսեցան՝ զորկորաժետութիւն մայր ամե-
նայն ախտից ասացին, որում պարտ է նախ առա-
ջին ի դիմի հարկանել։ Այլ և աշակերտեալքն
Սոկրատայ՝ զպարկեշտութիւն կերակրոյ ա-
ւանդեցին. որպէս զի անհնարին համարել
Պղատոնի զուղղութիւն բարուց բնակչացն
Սիկելիոյ՝ այնու զի երկիցս յաւուրն բազմա-
խահ ուտեին ձաշ[2]։ Եւ պիւթագորական
ժուժկալութեանն դիտաւորութիւն թուի թէ
էր վարժել զմարդիկ սակաւապիտութեամբ
յարդարութիւն և յանզօշաքաղութիւն։

Ախորժակ համադամից ծնունդ է որկորըս-
տեան. քանակ մեծ կերակրոց յափրացուցանէ
անդէն. այլ անհամար ազգ համադամից ան-
յագ գործեն զախորժակս։ Ոչ այս աւենայն
այսպէս ի բանս յայսոսիկ բովանդակէ Ցերս-
տուղիանոս. «Աւր ի կերակրոց ինչ հրաժա-
..րեցուցանեն օրէնք, կամ պիղծս անուանեն

1 Հրահ. Ա. կասիան. Սահմ. Ե։ 2 Պղատ. Թուղթ Է։

„զկենդանիսն որք երբեմն օրհնեցան, ՚ի միա-
„առ զխորհուրդն ՚ի ժուժկալութիւն կրթե-
„լոյ զմարդիկ, և ծանիր զանձն որով ՀՄՀ
„զորիսք՝ որ յոգւոց հանէր զՀետ սոսկեցոյն և սե-
„խից Աղիսպտոսի ՚ի Ճաշակելն զՀաց հրեշ-
„տակաց։ Ոչ անիր զի այնու գարձեալ և զա-
„ռաջս առնու զզովղաց որկորոյն՝ զգեղեցու-
„թեան ասեմ և զպղծութեան։ . . . Նովին
„և զարծաթսիրութեանն չնջուցանել ըստ մա-
„սին զբոց, բառնալով զպատճառանս կարօտու-
„թեան կերակրոց։ . . . Համառօտ ասել.
„նովին և՚ի պահս աստուածահաճոյս կրթեալ
„ընդելուցանել զմարդ, ՚ի խուն ինչ և ՚ի գիւ-
„բագիւտ կերակուրս վարժելով զնա „՝։

ՅՕԳՈՒՆՕ ԻՆՆԵՐՈՒԻ

Յաղագս մկրտութեանն Խրայէլացւոց։

Որ ինչ խորութեան կերակրոյ՝ նոյն պատ-
ճառք են և մկրտութեանց նոցա. զի Հանգոյն
նոցին մկրտութիւնք եին և ազգացն որ զնոքօք.
որպէս Աղիսպտացոյ՝ որոց քուրմք ՚յերիր ա-
ւուր գերծուէին զՀերս, և երկիցս ՚ի գիշերի
լուանային զմարմին իւրեանց, և դարձեալ եր-

1 Ի Մարկ. Բ. ԺԶ։ 2 Երդ. Բ. Պորփ. յառաջ. Բ։

կիցս կամ երիցս ՚ի տուընջեան ։ ( )ըհնական
մկրտութիւնքն Իսրայէլացւոց օգտակար էին
յառողջութիւն մարմնոյ՝ և ՚ի վարս . զի մաք-
րութիւնն մարմնոյ հոգւոյն մաքրութեան է
նշանակ , որպէս զի ոմանց ՚ի սրբոց ՚ի նշա-
նակ ապաշխարութեան ազտեղիս զգենուլ
զի խոտան ևս համարեսցին յաչս մարդկան ,
և ցուցանիցեն քաջ զսոսկումն ընդ յանցան-
սըն ։ Իւ վասն այնորիկ զմկրտութիւնս
մարմնոյ՝ սրբութիւնս անուանեցին գիրք , զի
սոքա զգալի ևս գործեն զներքինն մաքրու-
թիւնն՝ որով օրէն է մերձենալ ՚ի սրբու-
թիւնն ։ Իւ երկրորդ անգամ , զի մաքրու-
թիւնն արդիւնք են առաքինութեան . զի
հասարակաբար ՚ի ծուլութենէ և յանարգու-
թենէ հոգւոյն յառաջ գայ մարմնոյն ազտե-
ղութիւն ։

Դարձեալ , կարևոր է մաքրութիւն վասն
առողջութեան , և վասն խափանելոյ զհիւան-
դութիւնս . մանաւանդ ՚ի ջերմ աշխարհս
ուր բնութեամբ առաւել մաքուր են մար-
դիկն . զի տօթն խթան լինի է մերկանալոյ
զհանդերձս , լուանալոյ զմարմին , և ստէպ
զզգեստսն փոփոխելոյ . ուր ՚ի ցուրտ գաւառս
երկիւղ է ՚ի ջրոյ և յօդոց , և առաւել ընդար-
մացեալ են մարդիկն և հեղգք ։ Իպաքէն ոչ
սակաւք ՚ի հիւանդութեանց որ ՚ի մէզ և ՚ի
քաղաքս , յաղտեղութենէ անտի յառաջ գան՝

յորում կեան բաղումք ի ռամկէն, և մանաւանդ աղքատապոյնքն ի նոցանէ. իսկ քանի՛ և առաւել մարթ էր այնոցիկ յաձախել ի տօթ ակն աչխարհս, ուր դիւրաւ և ապականին օգք, և ջուրք սակաւ են։ Յաւել և զայն ղի ի հնուն ուր ուրեմն կատաս զգենուն, իսկ ասսւի դժուարաջնջելի է։

Քանչանալ արժան է աստանօր ընդ իմաստութիւն և ընդ բարութիւնն Աստուծոյ, որ այնպէս աղքի աղքի կարևոր օրինօք զօգուտ ժողովրդեան իւրոյ անօրինել, ի հնազանդութիւն այնպիսեաքն վարժելով զնոսա, ի խոտորումն ի մնապաշտութեանց, յարդարութիւն վարուց, և ի պահպանութիւն առողջութե։ Օ՛ և և ի կալմութեան մարմնոյ կենդանեաց և անկոց մանն իւրաքանչիւր ի բաղում պէտս արբանեակ։ Ընդ կարևոր էր ի կրօնս համարել և օրինական մաքրութեանց. զի յորս ի նեքքս ի տունս գործին, և յանտես գործս մարդոյն, անհնար էր պահպանութեան նոցա յաջողել առանց երկիւղին Աստուծոյ. բայց զգալեօքս այսոքիւք զմիտս նոցա յարդարէր Աստուած, և ուսուցանէր՝ զի ոչ ինչ է նմա ծածուկ, և չէ բաւական սուրբ լինել յաչս մարդկան։ Յայսկս իմանայ և Տէրտուղիանոս յասելն. «Այս որ ի կենաց կցորդութեան ... և ի կեանս մարդկան իւրաքանչիւր գործին ... ի նեքքս կամ արտաքոյ, զամենայն օրինա-

„ դրեաց , մինչև զկարասւոյն անգամ փոյթ
„ տանելով , զի շուրջ տեսանելով նոցա յամե-
„ նայնի զպատուիրանս օրինացն՝ յամենեսեան
„ ի նոսա զԱստուած յիշեսցեն անխափան „[1] :
Եւ զնի . " Յօժանդակութիւն օրինացս որ
„ դիւրիչք են մանաւանդ և ոչ ծանունք՝ յա-
„ րոյց ամենագութն Աստուած և մարգարէս,
„ ուսուցանել զլարդապետութիւնս արժա-
„ նիս իւր . "Ընկեցէք զչարիս ձեր յանձանց
„ ձերոց „[2] , և որ ի կարգին : Որովք ըստ
բաւականին ի միտ առեալ էր ժողովուրդն
զիմաստս արարողութեանցս այսոցիկ և զդալն
կարգաց :

Այս է աւասիկ զօրութիւն օրինացն որ հրա-
մայէն լուանալ զանձն և զձորձս ի մերձենալ
ի դի ոք , կամ յանասուն պիղծ , և յայլբա-
զում դէպս : Ի սոյն սահմանեցան և
մկրտութիւնքն ստոմանաց ջրով կամ հրով , և
տանց յորժամ պղծիցին , և կանանց յորժամ
ծնանիցին , և որոշումն բորոտից , Թէ և արած
բորոտութեան զորմէ ասէ Թօսէն գիրք՝ տգե-
ղութիւն իմն է մանաւանդ քան հիւանդու-
թիւն[3] :

Վահանայք էին որ զբորոտս որոշէին , և
զայլ օրինական պղծութիւնս նոքա դատէին

1 Ցեր. ի Մարկ . գիրք Բ . ժԹ :
2 Եսայ . Ա . 16 :
3 Ղեւ . ԺԱ . 3 , 23 , եև :
Թիւք . ԼԱ . 23 : Ղեւ.ՁՓ . 34 : ԺԲ : ԻԳ : Օգոստ. Խնդ. Աբեր . Բ . իս :

և նոքա զլեզանակ սրբելոյն ցուցանէին, որով և զբժշկի գործ յեզանակաւ ինն կատարէին։ Օ՛ի Թէպէտ և՛ ի գիրս[1] յիշին բժիշկք, այլ Թուի Թէ՛ ի վիրաբոյժս հային բանքն, ըստ որում առ հինսն չզանազանէին՛ ի միմեանց[2]։ Օ՛նոսա դարձեալ ակնարկէն օրէնք՛ ի կապելն զպատուհաս՛ ի վերայ հարկանողի ընկերին տուժել զբժշկութեանն։ Նմ այլուր դարձեալ զպատանւոյ խօսին, զնիթոյ և զըսպեղանւոյ, այլ չիշեմ Թէ խօսիցին ուրեք զըսրբադեղոյ, կամ զայս ինչ և կամ զայն՛ ի կերակուր առնելոյ[3]։ Պարսաւի արքայն Խոսրով զի յահատանալ ոտիցն յուսացաւ յոյժ՛ ի բժիշկս՛։ Ծվերևս յայսոսիկ միաբան էին տակաւին Խոսրայէլացիք ընդ Յոյնս որ առ ժամանակօք դիւցազանց, առ որովք բժիշկք՝ որպէս պատմէ Պղատոն[5] զվէրս և եթ դարմանէին առանց այլ ինչ զգուշութիւնս սահմանելոյ, դիւրինս համարեալ զնախանձուն կամ զապաքինուն այլոց հիւանդութեանց՝ սատարելով բնութեանն և զպատ կենաց հիւանդացելոցն. ուր վերքք անհնար է Թէ ոչ դիպիցին՝ ոչ միայն յայլ և այլ դէպս, այլ և՛ ի սովորական աշխատութիւնս։

Օ՛գուշանային Խոսրայէլացիք հաղորդել

1 Սամ. ԻԹ. 11։ Եսայ. Գ. 7։
2 Եզեք. ԺԱ. 19։
3 Եսայ. Ա. 6։ Երեմ. Ը. 21։ Խ. 2։
4 ՚ի Մինաց. ԺԶ. 12։
5 Պղատ. Հասարակ. Գ։

ընդ այլազգիս վասն օրինական սրբութեանց իւրեանց և խորութեան կերակրոց. զի Թէպէտ յոլովից մերձակայ ազգացն նման էին սովորութիւնքն, այլ ոչ նոյն. վասն որոյ յիերաւի էր առն իսրայէլացւոյ՝ ի հանդիպել օտարի ուրուք՝ կասկածել եթէ խոզենի կերեալ իցէ նորա, կամ զոհս կռոց մատուցեալ, կամ մերձեցեալ՝ ի պիղծ ինչ կենդանի։ Իսկ վասն այնորիկ չէր օրէն նմա ուտել ընդ նոսա հաց, կամ մտանել՝ ի տունս նոցա. և այս խորշումն՝ ի նոցանէ օգտակար էր և յուղղութիւն քարոզց, խափանելով զաշխատել նոցա ընդ օտարս, որ հանապազ ձեռնասկար է խուժանին, և առաւել՝ ի կռապաշտութեան ժամանակին յայնոսիկ։ Իսկ օրինաց և Աւգիպատացիք զգուշագոյնս պատկառ կային, զորոց գիրք ասեն՝ Թէ չուտեին երբեք հաց ընդ Իբրայեցիան[1]. և վկայէ Իրոդոտոս՝ Թէ և համբոյր ունէք՝ ի Յունաց ոչ տային, և չառնուին՝ ի կիր ղպատնակ նոցա և զանօթ[2]։ Իսկ զարգիս իսկ բազում նման սովորութիւնք են և՝ ի՝ահմետականաց, այլ և առաւել ազգացն Հնդկաց՝ որ քան զամենայն ազգս նանրահաւատ են յայսոսիկ։

Աղեպտ և զամենայն ազգս այլազգիս կամ հեթանոսս անուանէին Իսրայէլացիք, այլ ոչ յիմ ազգաց միօրինակ խորշէին։ Պիղծ էին

[1] Ծնն. խգ. 32։ [2] Երոդ. Բ։

նոցա ամենայն կռապարիշտք, և մանաւանդ անթլփատքն. զի ոչ միայն Հրեայք թլփատեին, այլ ամենայն զաւակքն Աբրահամու՝ Իսմայելացիք, և՝ադիանացիք և Իդովմայիք, և որդիքն Ոռվայ՝ Ամմնացիք և Մովաբացիք[1]: Եւ Եգիպտացիք անգամ՝ որոց և ոչ մի կցորդ դաւթիւն ըստ նախնեացն էր ընդ նոսա՝ ի կարևոր սրբութիւնս համարէին զթլփատութիւն, և անսուրբ զանթլփատս[2]: Ընդ անթլփատիցն որք ի ձշմարիտ աստուածպաշտութեան կէին՝ զնջանէին Իսրայէլացիք, որպէս զի թոյլ տալ բնակել նոցա և՝ի սուրբ երկրին՝ յորժամ յանձն առնուին զգուշանալ օրինաց բնութեան և հրաժարել յարեւդ: Ոմանք ոաբբիքն "Իկամուտս արդարութեան"[3] առնուանեն, իսկ զՀաւատացեալս յանթլփատից՝ "Իկամուտս բնակութե"[4], զորս և Իոյաքիս կամ Իոյեանս կոչեն, համարելով զնոսա ընդ օրինօք ևեթ պատուիրանացն Աստուծոյ՝ զոր ետ Իսրայէլ յեղանել անդ նորա ի տապանէն: Ի սոցանէ գտան առ Սողոմոնիւ աւելի քան զՀարիւր և յիսուն հազար պանդխտացեալս յերկրին Իսրայէլի[5]:

Զաւելի քան յամենայն ազգաց պարտ էր Իսրայէլացւոց խորշել յանիծեալ ազգէն Քանանու, զորս և ջնջել յերկրէ հրաման

1 Երեմ. Ե. 2:
2 Եզեկ. Փիլն:
3 Սեղբեն. յղ. բնակ. իրաւ:
4 ի Մնաց. Բ. 17:

առեալ էին Աստուծոյ. և որպէս յառաջ ասացի՝ ընդ սոսա ևեթ գտանեմ արգելեալ նոցա խնամութիւնս առնել[1]: Ոչ ի Մովսէս ասէ զմադիանացին արար իւր կին, և Խոռս գովեցաւ վասն առնելոյ կին զՀուդէթ՝ զմովաբացին[2]: Այլ՝ Ազիսողոմայ դուստր էր արքային Ռեհաբեայ. Ամասիա որդի էր խմայէլացւոյ ուրուն, և Ազիգեայ՝ քեռ Ռաւթի: Ողորմն անդստին՝ ի սկզբան թագաւորութեան իւրոյ՝ մինչդեռ առաւել քան յամենայն ժամանակս սիրելին էր Աստուծոյ, Հարմնացոյց իւր զդուստր արքային Ադիպտոսի[3]. վասն ոլոր զկշտամբանան՝ ի նա ի սուրբ գրոց վասն կանայս առնելոյ յայլազգեաց՝ խմանալ պարտ է վասն՝ի Կանանացւոցն առնելոյ իւր հնութեան. և դարձեալ զի փոխանակ զայլս՝ի հաւատս ածելոյ՝ ի բանս նոցա զառածեցաւ, և երկիր եպագ կռոց նոցա:

Յայտնապէս ևս՝ի կամն իւրաքանչիւր թողեալ էր առ Իսրայէլացիս խնամութիւնս ընդ միմեանս առնել և ոչ միայն՝ ի ցեղի իւրեանց, որպէս բազումք կարծեցին՝ ևս և՝ի հարց անտի՝: Ոչ հրամանն այն վասն ժառանգութեան գտեերաց էր, որպէս զի մի փոխեսցին վիճակք ցեղ՝ի ցեղ: Ազիասիկ Ռաւթի ա-

[1] Եզր. Լ. 16:
[2] Օրէնք. Ի. 3.
[3] Թագ. Գ. 3: ա Մնաց. Բ. 17: [4] Թագ. Գ. 1: ԺԱ. 2:
[4] Թիւք. Լ. 7, 8, ԽՆ:

բար կին զՍեղբաղ զդուստր Սաւուղայ ի ցեղէ Բենիամինի. և զարձեալ Ահիտոմ՝ մի ի կանանց նորա՝ եզրայելացի եր ի վիճակէն Յեզրեմայ[1]։

ՅՕԴՈՒԹՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Յաղագս ամուսնութեանց նոցա, և կանանց։

Ըստ տարազու կենցաղավարութեան Իսրայէլացւոց ոչ ինչ բեռն էր ամուսնութիւն, այլ մանաւանդ սփոփումն, յոր և սահմանեցաւ։ Ել ինչ ընդհատ յարանց աշխատասէրք էին և կանայք, և վաստակէին նոքա առանին՝ ի պարապել արանցն ի հոգս անդաստանաց։ Կանայք խահարարէին, և նոքա սպասաւորէին սեղանոյ. որպէս բազում ուրեք առ Հոմերի, և ի գիրս սուրբս տեսանեմք զայս։ Օ՛ի ի ցուցանել Սամուէլի ժողովրդեանն զիրաւունս թագաւորի ասէ. "Օ՛դստերս ձեր առցէ իւղագործս և ի խորտկարարս և ի հացեփեացս"[2]։ Եւ Իմն որդի Դաւթի՝ առ յինքն ձգելոյ զվճամար զքոյր իւր ընդ որում ննջեաց՝ պատճառանս հնարեցաւ բլթել ուտել ի ձեռանէ նորա, զոր և պատրաստեաց

1 ա Թագ. Գ. 2։ 2 ա Թագ. Գ. 1, 2։

նա ինքնին[1] Թէպետ և դուստր Թագաւորի էր։

Այնպէս գործէին զՀանգերձս, և սովորա-
կան պարապուն նոցա էր կերպասս հէնուել,
զոր օրինակ արդ զկտաւ և զդրդ . որպէս և
՚ի Հռոմէի գիրսն է տեսանել՚ի Պենելոպէ, ՚ի
Կալիփսով, և ՚ի Կիրկէ ։ Ըստ այսոցիկ ըն-
Թեռնումք և ՚ի Լաւոկրիտեայ մատեանն, և
՚ի Տերենտեայ, և յայլ ամենայն մատենագիրս։
Այլ որ ևս զարմանալին ինձ Թուի, և ՚ի Հռո-
մովմտիկնայք վերհազունք դեռ ևս պարապէին
յայսոսիկ և ՚ի կարի զերծուԹեան ժամա-
նակն . զի Դիոստոս զգենոյր սովորաբար
զդրծածս կնոջն և քեռ իւրոյ, և դստերացն[2]։
ԱյԹէ այսոցիկ հաւաստիս և ՚ի սուրբ գրոցն
կամիցիս, ահա մայրն Աամուէլի կրկնոցս փոք-
րիկս առնէր և տանէր նմա յաւուրս տօնից։
Այլ սողոմոնեան կինն ժրագլուխ՝ գտեալ ասր
և կտաւ, անօԹս պիտանիս առնէ, և տայ զմա-
տունս իւր անձանձրոյԹ իլոյ, և պատմու-
Հանս կրկին պատրաստէ սպասաւորացն[3]։

Այլաքէն այս ամենայն առանձին գործէին, և
չկարօտին բազում ինչ կորովոյ մարմնոյ . նմին
իսկ և նախնեաց ոչ արժանի արանց դատեալ
զնոսին՝ կանանց ազգի Թողուին, որք ՚ի բնէ
առաւել ընդասունք են, և դիպողագոյնք և

1 ը Թագ . ԺԳ . 8 ։ ՀԳ ։
2 Թէոկր. Հովէրգ. ԺԵ ։ 3 ը Թագ . Բ . 19 ։ Ա-
Տերենտ ։ Յուէնաղ. յՕգոստ . ռակք . ԼԱ . 13 , 19 , ևն ։

մտադիւրք ՚ի գործս Թեթևս։ Այլ վասն այն արդեօք կանայք էին և պահապանք դրանց և քերդից՝՚ի պալատս իսկ Թագաւորաց։ Դուռն ապարանից Յեբուսեթեայ չգոյր այլ ոք՝ բայց կին մի բարապան, որ և ցորեան սրբէր։ Այլ Դաւիթ ՚ի փախչել անդ յերեսաց Աբիսողոմայ՝ զհարճն եթող պահապանս պալատանն՝։ Ոչ ատուցեալ կային կանայք յարանց, և առանձին, մանաւանդ այրիք. վասն որոյ և Յուդիթ կայր մեկուսացեալ՚ի տանիսն հանդերձնաժըշտօք իւրովք՝ հանգոյն հովերականին Պենելոպեայ։

Խնջոյիւք և խրախութեամբ կատարէին Հրեայք զՀարսանիս. յորում և այնպէս մեծաւայելուչ զարդարէին զանձինս, զի Դաւիթ առ ՚ի յայտ առնել զգեղ արևու՝ փեսայիանման նեցոյց զնա։ Յերկարէին զխրախութիւնն մինչև ցեօթն աւուրս. և պաշտէին այս օրէնք անդստին ՚ի ժամանակաց նահապետացն, առորովք ՚ի գանգատել Յակոբայ առ Լաբան՝ զի փոխանակ Ռաքելի զԼիա ետ նմա, ասէ. «Կատարեա զեօթն աւուրս Հարսանեացս.»։ Այլ յառնուլ Սամիսոնի զիշտացին իւր հնուԹեան, «Քար Հարսանիս եօթն օր.». և յաւուրն եօթներորդի զրաւ լինէր տօնիցն[3]։ Այլ

1 ՚ի Թագ. Դ. 5։ Ժե. 17։ ԺԴ. 12, 15, 17. Վերջին հա-
2 Յուդիթ. Ե. 8։ պատճէն է ըստ լատին բարգմ։
3 Ծնն. ԻԹ. 27։ Դատ.

ըև մեհենել կամէր Տուբիա, երդմնեցոյց զնա Հառաջուել անել իւր կալ առ նմա մինչև կատարեսցին աւուրքն չորեքտասան հարսանեացն [1], կրկին եօթնեակս ընդ միոյ խնդրեալ զի ոչ ևս տեսանելոց էին զմիմեանս։ Զայս այսպէս հաստատուն ունէին Հրեայք ի տըւեալ եօթնեակ, հաւաստեալ և գործով։ Կրնեթէ որ քաջ ընթերցցի զերդս Սողոմոնի, և անդ աւուրս եօթն գտանիցէ նշանակեալ ի ցոյց եօթնօրեայ հարսանեաց իւրոց [2]։

Յերդս անդ դարձեալ տեսանեմք զբարեկամն փեսային, և զՀարսնաւէրս, որ խրախուճեանն էնյատարար։ Իւր փեսայի կային մնըն դակիցք իւր ուրախ լինել ընդ նմա, և առ հարսին՝ օրիորդք։ Տուան և Սամիսոնի երեսուն ընկերք։ Յիշէն և աւետարանք բարեկամն փեսայի, և օրիորդս՝ որք ընդ առաջ գան փեսայի և հարսին։ Մատ ի գլուխ տաներ փեսայն ի նշանակ ուրախութեան, և Հրեայք յաւանդութենէ պսակ ի գլուխ դնեն և հարսին։ Երգովք և նուագարանօք ածէին զնոսա, բարձեալ ի ձեռն ոստս մրտենւոյ և արմաւենեաց [3]։

Այլ պաշտամունք ինչ կրօնից չտեսանեմք

[1] Տոբ. Ը. 22։
[2] Թալմ. Պիրկէ Ռաբու ԺԲ. Սէզ. առ. Երբ. Բ. ԺԳ։
[3] Ռուքատ. Ժողովրդ. Հրէից. ԻՐ։ Դատ. ԺԴ. 11։ Յովհ. Գ. 9։ Մատթ. Թ. 15։ Իե։ Երգ երգոց. Գ. 11։ Նեայ. ԽԱ. 10։ Պիրկէ Ռաբու. ԺԹ։ Սէզ. ԺԲ։

ուրեք թէ զՀարսանիսնոցա պայծառացուցա-
նէին, բայց միայն օրհնութիւնք էինչ զոր տա-
նուտէրն և հրաւիրեալք մաղթէին[1] Աստուծոյ
՝ի վերայ հարսին և փեսային, որպէս ՝ի Հարսա-
նիս անդ Աբեթեկայ ընդ Իսահակայ, Հռու-
թայ ընդ Բոոսայ, և Մարայի ընդ Յուդիթայ ՝։
Եւ չէ յայտ թէ պատարագս էինչ վասն այսր
մատուցանէին, կամ թէ ՝ի տաճարն երթային,
կամ կոչէին զքահանայս. այլ ընդ ազգականս
և ընդ բարեկամս կատարէր հանդէսն, զի դեռ
ևս քաղաքական իմն դաշն էր ամուսնութիւն։

Իսկ թէ լիատեղ զմանկունսն՝ թէպէտ և ստու-
գապէս գործ կրօնից էր, և կարևոր յոյժ առ
՝ի մտանել յուխտ Աբրահամու, այլ և զայն՝ ի
տան պաշտէին առանց քահանայի և զևտա-
ցեայ։ Եւ զոր կոչէինն զՀասարակաց պաշտօնեայ,
և այն իբր վերահաս ոք էր հմուտ ՝ի գործն,
որպիսիք կան ցայսօր առ Հրեայս՝ Մոլէտք ա-
նուանեալ։ Յայսոսիկ ամենայն զգուշանալ
արժան է չպատրել ՝ի նկարագործ պատկերաց,
զորմէ և ՝ի խօսելն յաղագս զգեստուց յուշ ա-
րարաք։

Խազմութիւն զաւակաց չարկանէր նոցա
ահ, մանաւանդ թէ և փափաքելի էր նոցա.
զի Թող զընդաբոյս յօժարութիւնն, այլ և
օրէնք յորդոր լինէին ՝ի նոյն։ Վիտէին զոր

[1] Ծննդ. ԻԴ. 60։ Հռութ. Դ. 11։ Պրկիկ Աբրա. Յով.
բիթ. Ի. 15։

Ա՛ստուած՝ի սահմանեն զաշխարհ, և՝ի նո-
րոգել զայն յետ ջրհեղեղին հրամայեաց՝ թէ
"Ա՛ճեցէք և բազմացարուք, և լցէք զերկիր.,:
Յիշեին զխոստումն առ Ա՛բրահամ՝ ասե-
թէ ան համար զաւակաց. և զի՝ինոցանէ ծնա-
նելոց է փրկիչն աշխարհի: Ել եր տիրեալ՝ի
վերայ նոցա ապիրատ զօրաքաղաքութեան, որով
օրհնութիւն ամենայնի թշուառութիւն
իւն համարի արդ: Ա՛ռ անպատ՛ոյտ կենաց նոցա
խուն ինչ իրաց պէտք էին՝ի կերակրել զոր-
դիս՝ի տղայութեան, և նուազպոյն ևս ի-
րիք՝ի զգեցուցանել զի՝ի ջերմնահանգստ չզգե-
ցուցանեն իսկ զնոսա. իսկ յորժամ ձեղին հա-
սակաւ, ձեռնտու հարցն լինէին յաշխատու-
թիւնս, և տային խնայել զարծաթ՝ի գերեաց
և՝ի ծառայից, որով և նուազպոյն էին գե-
րիք նոցա քան զայլոց ազգաց: Իբա ծառայ
Աւրահամայ՝ դործէր զերկիր Ա՛եմիբոսթեայ
՝ի միասին ընդ հնգետասան որդիս իւր, և ընդ
քսան ծառայս՝: Յոտաշնապէին նոքա առ՝ի
զետեղել զորդիս իւրեանց, զի և չզոյին իսկ
առ նոսա բախտք ցանկալիք. մեծ համարէին
բարգաւաճ ևս աւանդել որդւոց զառ՝ի հարց
ընկալեալ զվիճակ երկրին, և բազմանալ ևս
զՀօտ ոչխարացն: Իսկ զդստերս՝քանզի չմնա-
նէին՝ի ժառանգութիւն՝ բայց միայն յորժամ
չզոյին նոցա եղբարք՝, տային՝ի հարսնութիւն

1 ի Թագ. Թ. 11: 2 Թիւք. Ի՛. 8:

առաւել քան զաղգակցութիւնէ, քան զտէր ընչից։

Ա՛յսմ որոյ դիւր ինն էր նոցա բազում որդիս ունել, և պարծանք ևս. երանելի ոմն հայմարեր հայր յոքնաթիւ ազգատոհմի[1], և զոյով երամովին շուրջ կացեալ որդիք և թոռունք ունկնդիր լինէին բանից նորա, և կատարէին զհրամանսն։ Ողջունէր այսպիսին թէ մեռեալ եւ անուն իւր ի կենդանութեան զաւակաց։ "Պատկ ծերոյ որդիք որդւոց,, ասաց գիբն[2]. որ և յաձախակի ի գովութիւն հարց զորդւոցն բազմութիւնէ իւրէ, որպես զերկոցուն դատաւորացն Իսրայէլի, որոց միւսոյն երեսուն և երկու որդիք էին, և միւսոյն քառասուն, և երեսուն որդիք որդւոց. զԱւաղթի՝ որ ինն հատան որդիք յիշատակին, թող զորս ի հարձինն ծնան նմա. զՈրբովամայ՝ որ և քսան և ութ որդիք էին, և վաթսուն դստերք. և զԱբիայ՝ որ ծնաւ քսան և երկու ուստերս և վեշտասան դստերս[3]։ Յայսկս և քերթողք զՊրիամայ զյիսուն որդիսն պանծացուցին, զի և առ Հայոս արգոյ էր բազմածնութիւն։ Ահա՛ և անծանօթ էր ի նոցանէ կուսութեան աստիճանաբերութիւն։ Ոչ ոք զամբութիւն և թշշուառս կոչէին զդստերս՝ որք մինչև հարսնացեալ՝ էլին յաչխարհ։ Այլ և զերեկոյս աւաղէ զանձն առ Աստուած. և զայս իսկ ողբայ

[1] Սաղմ. ՃԻԵ։
[2] Ածակ. ժԵ. Ջ։
[3] Դատ. ը. 4, 12, 14։
[ա] Մնաց. ժԱ. 2։ [բ] Մնաց. ժԳ. 2։

դուստրն Յեփթայեայ. վասն այսորիկ և նա-
խատինք էին առնակնոջ ամբոխութիւն, ըստ ո-
րում յայտնի է և՛ի մօրէն Սամուէլի և յայլոց
բազմաց՝ որք անէծս համարէին զերկուքեանս
զայս[1]:

Ի հոգոց սատի սերնդեան աղգին պատճառս
առին օրէնք որ հրամայէին առն առնուլ զկին
եղբօր իւրոյ՝ որոյ անորդի մեռեալ իցէ. և պաշ-
տեր այս հրաման անդստին յաւուրց անտինա-
հապետաց, որպէս՝ի Սամարայ անցիցն է ու-
սանել. քանզի պարտս իմն բարեպաշտութեան
համարէին զայն առ՝ի պահելոյ անջինջ զյի-
շատակ վախճանելոյն[2]. զինմա համարէին ծը-
նեալքն՝ որդեգրութեան իմն օրինօք: Ոչ ման
այսորիկ երկու ազգաբանութիւք են Քրիստո-
սի, ըստ Մատթէի և ըստ Ղուկայ[3], զի կըր-
կին հարք էին սրբոյն Յովսեփայ. որ ըստ ծնընդ
դեանն, և որ ըստ որդեգրութեան օրինաց:
Այլ առնուլ զկին եղբօրն չհակառակէր օրի-
նաց բնութեան, որ և զընդ քեռն ամուսնա-
ւորութիւն չհափանէր՝ մինչև էր արգելեալ
զայն Մովսէսէ:

Յղձանացն բազում որդիս ունելոյ՝ և բա-
զում կանայս առնուին. ընդ որ և պարծէին
իսկ, և՛ի պատիւ զայն համարէին: Ոչ առ

1 Դատ. ԺԱ. 38:
2 ը Օրէնք. ԻԵ. 6:
3 Մատթ. Ա: Ղուկ. Գ. 6:
Օգոստ. յղ. Խրատ. Աբեռ:

այս յայտ առնել կամեցեալ Յսայեայ զմեծու-
թիւն համբաւոյ արանցն զորս պահիցէ Աս-
տուած ի մէջ ժողովրդեան իւրոյ, ասէ. «Այր
բուռն հարկանիցէն եօթն կին զառնէ միո-
ջէ.» յանձն առեալ զհայ իւրեանց ուտել, և
հանդերձ զիւրեանցն զգենուլ, բայց միայն զի
անուն նորա կոչեսցի՝ի վերայ իւրեանց[1]։ Այսո-
րիկ ասացաւ և վասն Յովսաւմայ՝Թէ կա-
նայս ունէր ուխտատեաց և հարձս վաթսուն.
և Թէ բազում կանայս ետ և Աբիայ որդւոյ
իւրում, վասն զի թագաւորեցուցանել խոր-
հէր զնա յետ իւր[2]։

Այլոց զգուշանալին յոյժ՝ի գործ ամուսնու-
Թեանն, հրաժարեալք յայնմանէ ոչ միայն զա-
մենայն ժամանակս յղութեան կանանց իւ-
րեանց և այլոց հիւանդութեանց, այլ և ցոր-
չափ դիեցուցանէին նոքա զորդիսն՝ իբր ընդ
երկուս կամ ընդ երիս ամս. քանզի և ոչ այն-
պէս դիւրաւ՝ի բաց կային մարք՝ի սահմանու-
Թենէ. և երիս ևեթ դայեակս յիշէին գիրք,
զԱբեկակայն, զԱեմիիբոսթեայ, և զՅովա-
սու ազգային Յորայելի[3]։

Այսուամենայնիւ չէ պարտ զարմանալ
զի համբեր Աստուած բազմակնութեան, որ
յառաջքան զքրհեղէղ ջրոյն մեծեալ երկայն
խարհ, Թէպէտ և հակառակ նախկին կարգաց

[1] Եսայ. Դ. 1։ [3] Նմին. ԻԳ. 59։ [2] Թագ. Գ. 4։ [3] Թագ. ԺԱ. 2։
[2] Մնաց. ԺԱ. 21, 23։

ամուսնութեան. քանզի 'ի դրախտի անդ ուր սահմանեցաւն՝ ցանկութիւն չէր 'ի միջի. և յորմէ հետէ 'ի նոր օրէնս 'ի խորհուրդ սրբեցաւ՝ զեղան ընորհք զնովաւ. այլ 'ի ժամանակսըն յորում խուն էին ընորհք, և մեղքն թագաւորէր, 'ի չահ էր խնամոցն Աստուծոյ հանդէս առնել մեծի ևս երկայնմտութեանն: Վանզի բազմակնութիւն, և ապահարզանին օրէնք մի էն, զորմէ ասաց Վրիստոս Հրեից թէ վասն խստասրտութեան նոցա հրամայեցաւ այն[1]: Հրաման էր նոցա 'ի վերայ կանանց առնուլ և հարձս՝ որք յոլովակի յաղախնայց անտի էին: Վէ մինչ աւելի էր հարազատ կանանց քան զնոսա, բայց 'ի պատուոյն որով որդիքն ժառանգ լինէին. վասն որոյ հարձս ունել՝ ոչ զեղխութեան ինչ կենաց էր նշանակ՝ որպէս առ մեզ, այլ ամուսնութիւն էր և այն՝ նուազ հռչակաւ:

Վայլ Թող զայն զի Թոյլտուութիւնս այս չառներ դիւր ամուսնութեան, այլ և ծանրացուցաներ զլուծ նորա: Վպաքէն անհնար էր առն հասարակել զսէրն ընդ ամենեսին, և հաձել զամենեցուն կամն. Հարկ էրնմա տիրաբար գնալ ընդ նոսա՝ որպէս յայսօրյարևելս, որով բառնայր այնուհետև ամուսնութեանն հաւասարութիւն, բարեկամութիւն, և ընկերութիւն: Վսկ 'ի նախանձորդս դժուարին

[1] Մատթ. ԺԹ. 8:

և այս էր միաբանութիւնն, և հանապազ էին կագք և նեղք և ընտանի մարտք՝ի միջի նոցա։ Որդւոց միոյ հինոջ ըստ Թուոյ կանանց հօրն էին մօրուք. որդի իւրաքանչիւր՝ի Թիկունս կայր մօր իւրոյ, և իբրև յօտարս և՝ի Թշնամիս հայէր՝ի ծնեալս յայլոց կանանց հօր իւրոյ։ Յաղագս այսորիկ ստէպ լսի բանն այն՝ի սուրբ գիրս, Թէ եղբայր իմ է սա, և որդի մօր իմոյ։ Օրինակս երկպառակութեանցս տեսանեմք՝ի տանն Դաւթի, և վատթարագոյն և՝ի տան Հերովդի։

Այսպէս և յաղատութենէ անտի արձակեցոյ զկանայս՝ բազում անտեղութիւնք գՀետ գային։ Հարևանցի և լինէր ընտրութիւն առնանց, և նուազագոյն լինէր նոցա փոյթ համբերելոյ միմեանց. և մարթ էր յաձախ ապահարզանիցն ցայն վայր զառաջանել, մինչև փոխել ամուսնութեան յանառակութի պատրուակեալ։ Ոչ զանխուլ ինչ են որ՝ի Հռովմի գործեցան նշաւակութիւնք յետ հաստարակապետութեանն անկանելոյ. ուր ցորչափ հաստատուն եկաց բարեկրօնութիւն զամն հինգհարիւր քսան և երիս, ոչ ոք արձակեաց զկին իւր, Թէպէտ և օրինք չարգելուին զայն[1]։ Այլ բազում վիշտ էր անտի և որդւոց՝ որ առ կենդանեաւ ծնողաց ոչ ըմբռնային. և դժուարին էր չլինել նոցա խոտանչաչս հօրն կամ մօրն, և չլինել կուսակից միոյն կամ միւսումն։

1 Դեւ. Ա. ա, ՚ի։

ՅՕԴՈՒԱԾՕ ՄԵՏՄԱՄԵՆԻՐՈՐԴ

Դասախարակութիւն մանկանց, կրթութիւնք, և ուսումն։

ԿԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ մանկանց Իսրայէլացւոց ոչ ինչ ընդհատ թուի ՚ի գերեվարութեան և ՚ի Յունաց[1]։ Աշխատութեամբ և հրահանգօք զմարմինս նոցա կրթէին, գիտութեամբ և երաժշտութեամբ զհոգիս։ Մեծ համարէին զկորով մարմնոյ, և սովաւ բազում ուրեք գովէն գիրք զարս պատերազմողս որպէս զզօրաւորսն Դաւթի[2]։ Ընդ գլխաւոր հրահանգս Թուի թէ համարէին առ նոսա և հետի ընթացք, այնու զի ՚ի տեսիլ ընթանալոյ ոտիցն ՚ի հեռաստանէ խմացեալ Ձանաչէին զոք ոմանք իցեն, որպէս զՀաբաւաբերս պարտութեան բանակին Ասիսողոմայ[3]. զորս չէր մարթ նոցա Ձանաչել եթէ չէր բազում ամ տեսեալ զընթացս նոցա յառաջագոյն։ Այս զՍայէլ վեղբօրէն Յովաբայ ասեն՝ զի "Լուեալ էր ոտիւք իբրև զմի յայծեմանց ՚ի դաշտի.,,[4]։ Օչխ շատակերաքն ՚ի մարգարէութիւնս Օշաբրիայ զքարն ծանր[5], առնու մեծն Հերոնիմոս

1 Պղատ. Հասարակ. Բ, և Գ։
2 ՚ի Թագ. ԻԳ։
3 ՚ի Թագ. ԻԼ. 17։
4 ՚ի Թագ. Բ. 18. ուր և
պինն յայգեվազոյն և ոչն ոչնի այս. պէս. "Եւ էր Սայէլ քաջ ընթացական՝ որպէս զմի յայծեմանց,,։
5 Օշաբ. ԺԲ։

'ի վերայ քարանցն յորոց վերայ փորձ փորձէին զգօրութիւն անձանց թէ ո՛ առաւել քան զընկերն 'ի վեր ամբառնայցէ զայն. յորմէ խմաստասիրել մարթ է թէ 'ի կրթութիւնս նոցա էր և այս։ Իսկ օրինակն Յոյնաթանու հաւաստէ մեզ՝ թէ և 'ի նետաձգութիւն վարժէին նոքա[1]։

Ետայց ոչ երբէք կարևոր պարապուն համարեցան զկրթանս մարմնոյ հանգոյն Յունաց, որք յարուեստ իմն կարգեալ զայն՝ ամենասիւն հնարեցան բարգաւաճել զնոյն։ Վերակրթական անուն կոչեցին արուեստիս, զի մերկ 'ի հանդէս յայն մտանէին, և զվայրսն մերկակրթարանս. և էին վայրքն այնոքիկ ընդարձակք և հոյակապք, և բազում դանձիւք կառուցեալք[2]։ Ընդ մարտուսոյցք քաջք, և օգնականք բազումք ընդ նոսա սկզբնէին զմարմինս մանկտւոյն խիստ ժուժկալութեամբ կերակրոց և սաստիկ կրթութեամբք. յորս ոմանք այնպէս իմն մտադիւրութեամբ բերեալք, զի զամենայն աւուրս կենաց իւրեանց հանապազ զորգեալ 'ի նոյն՝ ըմբիշք էին արուեստիս։ Վրօվ օր քան զօր աճեցեալ նոցա 'ի կորով՝ այնպիսիք ոմանք լինէին մարմնով, որպիսիք եղէն նախատիպքն գեղեցկագոյն անդրեաց։ Վանկայն և վայրենացեալք՝ ոչ էս կարող էին յայնմ հետէ լիով ինչ պարապել մտօք։ Ընպիտանք

1 ՚ի Թագ. Ի։ 2 Հերոն. Հերմիական. յղ. ըմբիշ. արուեստ։

էին և 'ի գործ պատերազմի, և յամենայն ինչ որով մարթ էր սխալ լինել կերակրոց նոցա և հանգստեան, և կամ խանգարել զսովորական գնացս։ Ընդհնար էր իմաստութեան Հրեից ընդունել յընդվայրաքնինս յայսոսիկ. և օտար ինն թուեցաւ նոցա և գարշ կրկէն կանգնեալ յԱրուսաղէմ առ Արևեալն Նտիոքաւ[1]. շատ համարէին նոքա զաշխատութիւն երկրագործութեան, և զհրահանգս ինչ զինուորականս, որպէս երբեմն Հոռոմք։

Ել կարօտանային մեծամեծ գիտութեանց 'ի հրահանգս մտաց, եթե գիտութեամբ պարտ իցէ իմանալ զազգ ազգ լեզուացն հմտութիւն, և զվերծանութիւն բազում մատենից, որպէս առ մեզս. զի արհամարհ էր առ նոսա ուսուցին օտար լեզուաց, որ ոչխտրեր ընդ գերին և ընդ ազատն[2]։ Շատ էր նոցա երբայականն բնիկ իւրեանց բարբառ, այն՝ որով աստուածեղէնն գրեցան մատեանք։ Ցիսք կերպարանաց բառ բառոյս նման են սովորութեանց նոցին. պարզ են բառքն՝ ածանցեալք 'ի խուն ինչ արմատականաց առանց բարդութեան։ Աքանչելի ինն Հնոտութիւն է նորա 'ի բայս, և բազում յայնցանէ իմաստս կատարեալս ընծայեցուցանէն. որպէս մեծանալ, մեծացուցանել, մեծացուցանիլ, ամենևին պարզ բառք են 'ի նոսա, զորոց անմարթ է տալ ողջիկ զթարգմա-

1 ի Մակաբ. ժԲ։ 2 Յովսեպ. Հնախօս. Ի։

նուԹիւնն : Պաւելագոյնք ՚ի նախագրու-
Թեանց նոցա և ՚ի դերանուանց տառք են լոկ
յաւելեալք ՚ի սկիզբն կամ ՚ի վերջ բառից :
Համառօտագոյն է բարբառս այս քան զամե-
նայն բարբառս որ ծանօԹ մեզ իցեն, որով և
Հպաւորագոյն իմանալեացն գտանի լեզուաց
որ վարօքին բարբառոյ առ ՚ի յօդել միմեանց
զբանս : Յստակք են և զգօրաւոր ասացուածքն,
և տան լուսաւոր և յայտնի իմաստս, քաջ ՚ի
բացեայ ՚ի խրԹնաբանուԹենէ :

Յատուկ է լեզուիս կուռ զՀետ միմեանց
շարայարել զբանս առանց Թերի Թողլոյ զի-
մաստն, կամ երկայնելոյ զարդհմունս, որով
և գիւրիմաց ընծայիլ յոյժ մատենագրուԹիւնն :
Պ՚ան որոյ և ՚ի Հառս պատմուԹեանց՝ զգեմն
իւրաքանչիւր ածեն ՚ի բարբառ, և ոչ ինչ խըզ-
Հեն կրկնել զբանսն . նա ասպաքէն և նովին բա-
ռիւք Հանապազ զնոյնս յառաջ մատուցեալ
պատմեն . որովք զառաջինն նուազստ և ան-
ՀարԹ Թուի մեզ մատենագրուԹիւն սուրբ
գրոց, բայց տպաւորագոյն և այսոքիկ զողջ-
մտուԹիւն, զստուգուԹիւն և զպարզուԹիւն
պրելեացն յայտ առնեն : Ճշդիպտ և մատե-
նագրուԹիւն սուրբ գրոց ՚ի տիպս կերպարա-
նաց բանիցն զանազանի յոյժ, բայց ՚ի Պովսի-
սէ մինչև ցգերուԹիւնն Յաբելոնէի զնոյն լե-
զու անփոփոխ ՚ի նմա տեսանեմք :

Պ՚ան որոյ քերականուԹիւն նոցա՝ որպէս

և Յունայն՝ բովանդակեր յուղղախօսել և յան-
սխալ առոգանել և ի գրել. այսու և եթե զա-
նազանեալ՝ զի ոչ արդեօք արուեստ իմն կար-
գեալ էր նոցա զայն, կամ սահմանեալ կանո-
նովք։ Տառք նոցա նոյն էին որ և Շամրտա-
ցւոյն ցայսօր, զի սոքա անխափան պահեցին
զայն։ Այլ քանզի ոչ երագ կամ գիւրաւ դրոշ-
մել մարթի էր զնոսին, թուի թէ առ Խորայե-
լացիսն ոչ ամենեքին գրել գիտէին. որ և
յայտ անտի է զի գիրք սուրբք զնմաստունս
սոփերս առաձայնեն, որ ըստ հինն թարգմանու-
թեանց գալիր լսի։ Այլ ապաքէն սակաւ յոյժ
դպրութեան պէտք իցեն երկրագործաց քան
զվաճառականս և զգործակալս։ Այայց ի դէպ
է կարծել՝ թէ ընթեռնուլ բաղումք յոյժ գի-
տէին. զի ամենեցուն պատուիրեալ էր ուսա-
նել զօրէնսն Աստուծոյ, և խորհել ի նոսա ի
տուէ և ի գիշերի. յոր և զամենայն աւուրս
շաբաթուց ի նոյն միայն պարապէին[1]։

Այս եթե մատեան շատ էր ի հրահանգել
զմիտս նոցա լի բովանդակ. զի ի նմա ուսա-
նէին զձառս լինելութեան աշխարհի մինչև ի
ժառանգել իւրեանց զերկիրն խոստացեալ.
անդ տեսանէին զսկիզբն ամենայն ազգաց զո-
րոց լուեալ էին, և առանձինն զորոց ըղձալի
էր գիտել նոցա, զորդւոցն Յակովբայ, զԱբ-

1 ։ Օրէնք. Ջ. 6, 7 ։ Յեսուէ. ընդդէմ Ապի. Ջ. ։ Որոգ. ընդդէմ կելս. Գ։

բահամու, զ\Սամայելի և զ\Գոսայ։ Ցեսա-
նեին ՚ի նմա զկրօնս, զվարդապետութիւնս,
զարարողութիւնս, զկանոնս վարուց. նա և
զքաղաքական օրէնս իւրեանց ՚ի նմա գտա-
նեին. որով այս գիրք միայն՝ այն է Հնգամա-
տեանն կամ Հինգ գիրք Մովսիսի, բովան-
դակեր զամենայնկարևոր պիտութիւն առնոսա։

Իբր ոչ եթէ էին նոցա այլ գիրք. քանզի
Թողչ\Եսուայն, զ\Գատաւորացն, զՍամուէ-
լի, և զայլսոսիք գիրս առ հասարակ որք յայնմ
հետէ գրեցան, այլ և անդստին ՚ի ժամանա-
կս Մովսիսի գիրք ինն պատերազմաց տեառն
յիշին, և այլսոսիք գարձեալ գիրք ուղղութեան.
և \Գատաւորացն գիրք յաձախ յղեն ՚ի գիրս
բանից աւուրց Թագաւորացն Հուդայ և Իս-
րայելի ՚։ Իսկ Սողոմոն գրեաց երիս հազար
առակս, և հինգ հազար օրհնութիւնս, և խօ-
սեցաւ զամենայն մնկոց, և գիհենդանեաց. որ
և ողբայ իսկ զի ոչ գոյ վախճան գրոց ՚։ Ա\Մե-
նայն գիրքս այսոքիկ, Թերևս և բազում այլք
որոց անուանքն իսկ չէն յայտ, կորեան ՚ի մի-
ջոց. որպէս զ\Գիպատացոցն, զ\Սորուցն, և
զայլոց ազգաց արևելից։ Իսկ այն մատեանք
ևեթ ՚ի հնոյն պահեցան՝ որք \Պատուիրակ ազ-
գեալ էին ՚ի մարգարէս, և առանձին ինն տես-
չութեամբ առ մեզ հասեալք։

1 Յեսու. ք. 13։ բ Թագ. 2 Ի Թագ. Գ. 32։ Ժողով Ա. 18։ Ա. 12։

Ել՝ի դէպ է կարծելՔԵ ընԹեռնուին Իսրայելացիք զարտաքնոցն գիրս, զաղգայորոց խորշել պարտ էր նոցա. այն զի ինքնակար էր ընԹերցուին այն նոցա՝ զառաստպելացն զամբարիշտ և զանձոռնի ձառս ուսուցանելով, որովքդիւցաբանուԹիւն կռապաշտիցն կազմէր։ Իսկ նախ իմն սոսկային նոքա յայնմանէ, գէԹ ընտիրքն՝ի նոսա, զի և առնուլ՝ի բերան զանուանս սուտ աստուածոցն չառնուին յանձն. որպէս զի եԹէ յանուանս ուրեք հանդիպէր ինչ յանուանց անտի խառնեալ, փոխէին յայլ անուն. վասն այսր զԱսպատաղ և զԱեմիփիփատաղ՝ կոչեցին ՅեբուսէԹ և ԱեմիբոսէԹ, զԱեԹէլ՝ի ԱեԹաւան փոխեցին, և զԱեզեկիէլն՝ի Աեզեզեբուղ՝։ Իբաստիչքս այսոքիկ որ բովանդակէին զկիշտ պատիր աղանդոցն, կուտակք իմն էին ստայօդ բազմաժամանակեայ աւանդից, յեղեալք՝ի հինաւանդ ՀնմարտուԹիւնս պաՀուՀեալս մանուածովք բանից քերԹողաց։ Ո՛չ այսոսիկ մարք և դայեակք ուսուցանէին որդւոց՝ի խանձարրոց, և զայսոսիկ երգէին՝ի տօնս և՝ի հանդէսս։ Յեսանէին իմաստունքն հեԹանոսաց՝ զի առաստպէլք նոցա յարհամարհանս կրԹին ԻստուածուԹեան, և յապականուԹիւն վարուց, այլ անբուժելի էր ախտն՝։

1 Սազմ. ԺԵ. 4։ Խնս. ԻԴ. 27։ ՚ի Մնաց. Ը. 33, 34։ 2 Պղատ. Հասարակ. Բ. և Գ։

Ո՛ր Իսրայէլացիս միայն յամենայն աղգաց՝ լսեր մանկտին զձառս Աստուծոյ, որք յերկիւղ և յաստուածասիրութիւն խրախուսեալ զնա՝ զնախանձ առաքինութեան ի նմա վառէին։

Վեհք և օգտակարք էին ամենայն աւանդութիւնք նոցա. իբր ոչ էթէ զպատմութիւն իրացն լեր ցուցեալ՝ չյաւելուին առակս և օրինակս ի խրատ կարևոր Աստուածպետութեանցն, և առաւել արդարութեան վարուց. մանաւանդ զի ուսումն ինն էր առ Հանճարեղս առեղծուածս արկանել իբերաց. որպէս յայտ է ի Սամիսոն և ի դշխոյն Սաբայ[1]։ Այլ և Հունաց աղգ զսոյն զայս պատմին զնմաստնոց իւրեանց[2]. զի և նոքա առակօք խօսէին հանդոյն Իսոպեայ, որոյ կեղծիք ամենեցուն յայտնի էն, և ոչ օգուտս պատերի։ Զորոց նման օրինակս երկու առաջի առնեն մեզ սուրբ գիրքս, զՅովաթամու որդւոյ Յերդուռնի, և զՅովաթամայ արքային Իսրայէլի[3]։ Խայտ յայլաբանութիւնն և ի փոխաբերական ձևս Ինդն նոցա էր ի սուղ բանսն և յախորժելի նմանութիւնս խրատս ուղղութեան չեմարանել, զի դիւրաւ ի մտի կալցին զայն մանկունքն։ Այսպիսի են գիրք իմաստութեան լի առաքինութեամբք։

1 Դատ. ԺԴ. 14։ Է թագ. Խ. 1։
2 Պլուտարքոս. Պատմ. Եօթն Իմաստ։
3 Դատ. Թ. 8։ Բ թագ. ԺԲ. 19։

Տաղաչափութեամբ յոլովակիւ յօրինեցին զա-
ռական, իսկ զտաղաչափութիւնս առ՝ ի նը-
ւաղս յօրինեցին. որով թուի ինձ զի յոլոմունս
Խորայեցւոց էր և երաժշտութիւն։ Ա՛յս
ընդ Յոյնս հայեցեալ ասեմ, որք զամենայն
գիտութիւն իւրեանց և զքաղաքականու-
թիւն յարևելեայց ընկալան։ Ա՛րդ այն յայտ է
զի Յոյնք կրթեցին զմանկտին յերգս և՛ ի քը-
նարս։ Ա՛ռաջին ամենայն գիտութեանց և-
րաժշտութիւն է. որպէս զի չև հնարեալ
գրոց՝ յերգս աւանդէին զնիշատակութիւնս և-
նևեւելի անցից. և դեռ ևս նոյնպէս առնեին՝ ի
Պաղղևս և՛ ի Պերմանիա առ Հոռոմովք, և
նոյն սովորութիւն պահի ցայսօր և առ ազինս
Ա՛մերիկայ։

Այլ թէպէտ էր Հրեից գպրութիւն, բայց
գիտեին նոքա՝ զի բառք՝ ի չափս և յերգս լաւ
ևս՝ ի մտի դանձին. նմին իրի՛ ի մեծ ինչ իրս
օրհնութիւնս յօրինեցին Ջանիւ, որպէս Պօվ-
սէս յանցան կարմիր ծովուն, և դարձեալ՝ ի
վախճանին, ի յորդոր պահպանութեան օրհ-
նաց տեառն[1]։ Ա՛յսպիսի են և օրհնու-
թիւնքն Պեբովղայ, և աղօթք մերն Սամու-
էլի և այլք բազումք, և մանաւանդ օրհնու-
թիւնք սաղմոսացն Պաւթի[2]։ Ազքանչելի իմն
հրահանգիչք են քերթուածիւնքս այսոքիկ.
ամենայն ուրեք զգուշութիւնն Աստուծոյ

[1] Եք. ժե։ ի Օրինք. Լբ։ [2] Դատ. ե։ ա Թագ. ի։

պատմեն, զնիշատակս բարեգործութեանց նո-
րա, զհրամանսն սրբութեան վարուց, և զա-
մենայն ուղղութիւն որ վայել է առն բարւոյ
յայլ և այլ հասակս կենաց։ Այսպէս քաղցրու-
թեամբ ՚ի միտ առնուին մանկունք զոյգ ընդ
բառիցն և ընդ եղանակաց զկարևորագոյն ձըշ
մարտութիւնս և զանստեբիւրն վարդապե-
տութիւնս։

Այն իսկ էր սահման քերթուածեան և երա-
ժշտութեան. Այսուամբ որ ետն զհանճար
և զձայն գեղեցիկ՝ կամէր ապաքէն ՚ի վայե-
լումն բարութեանց վարել նուաւս մարդկան, և
ոչ ՚ի հրապոյրս անօրէն ցանկութեանց։ Այլ
Յոյնք անգամ առաջինն և գերազանց ՚ի քեր-
թուածիս զքնարերգականն կալան, այս ինքն է
զօրհնութիւնս և զտաղս ՚ի գովեստ Այսուա-
ծութեան, և ՚ի յորդոր առաքինութեանց[1]։
Իսկ թատերերգականն որ ՚ի նմանողութիւն
նկրտի և ՚ի զուարճացուցանել ևեթ՝ զկիրսն
յուզելով, յետոյ ուրեմն հնարեցաւ. վասն ո-
րոյ և չգտանեմք զայն առ Հբրայեցիս. և Ա-
զոմն թէպէտ և յերգսն այլ և այլ դէմս ՚ի
ներքս ածեալ՝ տայ նոցա խօսել ցանգ, բայց
զայն հնարի առ ազդողագոյնս զբանին ձևա-
ցուցանելոյ, և ոչ վասն արարուած իմն ա-
ռաջի նկարելոյ որպէս ՚ի քերթածս թատերց։

Ձիք ինչ մեզ յերաժշտութենէ ՀՀելից, և

[1] Պղատ. Օրին. Ի։

ոչ 'ի կանոնաց կազմուԹեան տաղաչափուԹեանց նոցա. այլ եԹէ 'ի վայելչուԹենէ բառիցն զերգոյն գեղեցկուԹիւն 'ի միտ առնուլ իցէ, չքնաղ իմն պարտ էր նոցա գոլ ևՀաճալայեաւ և անսեԹևեԹ, ընդ նմին և Հոգեշարժ, և բաղմայեղանակ. իսկ եԹէ և յարդեանցն զնոյն կամիցիմք խմաստասիրել գերագոյն իմն զօրուԹիւնս տան նոցա գիրք[1] 'ի երաժշտուԹիւն նոցա նկուն առնէր և զայսս չարուԹեան, որպէս 'ի Աւուղայ իբացն յայտ է՝ որ Հանգչէր 'ի նուագելն ՎաւաԹի: Վարձեալ ձայն նուագարանաց նոցա սատար լինէր Հոգւոյն Աստուծոյ որ զմարգարէսն շարժէր, որպէս յայտ է 'ի նոցանէ որք ընդ առաջ եղեն Աւուղայ ըստ յառաջասուԹեանն Աամուէլի[2]. յորս յարեցաւ և ինքն Աւուղ, շարժեալ ընդ նոսա յուրախուԹիւն սուրբ. որպէս և յՀզեկիէ[3] որ խնդրեաց սաղմոսասաց գի մարգարէասցի. իբրև զի նովաւ Հանդարտէր յուզումն ոգւոցն 'ի դիւէն՝ որ խռովէրն զորս Թոյլ տայր Աստուած: Աա և առաւել զմիտս սուրբս և անվրդովս առ Աստուած համբառնայր, և յեռանդն արծարծանէր, դիպողագոյն և այսդարեալ զնոսա յընդունելուԹիւն զօրուԹեան Հոգւոյն սրբոյ: Աստ այսոցիկ և Հոյնք հրաշալիս վիպեն զերաժշտուԹենէ իւրեանց 'ի

1 ա Թագ. ԺԶ. 23: 1 գ Թագ. Գ. 15:
2 ա Աթգ. ժ:

յուզել և՛ի ցածուցանել զկիրս հոգւոյն. վասն որոյ պարտ իցէ սուտ համարել զամենայն պատմութիւնս, և կամ խոստովանել թէ այլ ազգ յոյժ էր ազգումն երաժշտութեան հնոց քան զմեզն։

Իբր ոչ եթէ նուազ էր առ նոսա երաժըշտութիւն, զի ամենեքին իսկ նոքա երաժիշտք էին. և կամեցեալ զՀերէից միայն խօսել, և զնոցանէ ևեթ որք արուեստիւ երաժիշտք էին՝ ըստ հազարք՛ի Ղևտացւոց յայն կալգեալ էին յաւուրս Դաւթի, և երկերիւր և ութսուն և ութ ուղղիչք նոցա. և նոցա ամենեցուն պարագլուխք՝ Ասափ, Եդիթան և Հեմման, յաձախ յիշատակեալք՛ի վերնագիրս սաղմոսաց[1]։ Դաւիթ հինգնին քաջ քերթող էր և քաջ երաժիշտ. և թէ զիարդ յօժարութիւն թագաւորաց՛ի զարգացումն է արուեստից՝ այն քաջայայտ է։ Հաղուստ ազգիչողական նուագարանաց էր նոցա, որպէս փողք և սրինգք բազմազանք, և թմբուկք, և աղէյարմարք պէսպէս. յորս յաձախեալք երկոքին սոքա էն, քնար և տաւիղ՝ զոր Յունք կինիւրա և նաբլա* կոչեցին. վասն որոյ գուշակութիւն ևեթ է այն՝ սաղմոսարան՛ի ձեռս տալ Դաւթի Իր նոցա և նուագ ութաղի և տասնաղի։

Ընդ երգոց և պարս յօրինէին. քանզի ցայս

[1] ա Մնաց. ԻԳ. 5։ ԻԵ. 7։ * Κύνυρα, νάβλη.

նշանակէ յոյն բառն քորոս *, ուստի առին և Լատինք. և յայտ առնեն զխոտմբս պարաւորաց զարդարեալս և զգեցեալս միօրինակ։ Յրգեին միաբան, և պարեին 'ի կայթս իմն ոտից դաս դաս ըստ հասակի և ըստ ազգի, ուստերք ընդ ուստերս, օրիորդք ընդ օրիորդս, կանայք ընդ կանայս և ծերք ընդ ծերս առանց 'ի միանանց խոտմբս խառնելոյ։ Յե անմարթ է այլազգ ինչ կարծիս բերել զհամեստութենէ պարուց Հրէից։ Զպարուց նոցա յիշատակեն գիրք 'ի պատմել անդ զհանդիսիս ածել Դաւթի 'ի Սիոն զտապանակն, և 'ի նկարագրել զայլ և այլ յաղթութիւնս, յորս ասեն "Յղանել զտեառնէ 'ի քաղաքաց քաղաքաց երգովք և պարուք ,,'։

Եւ ուրեք ասեն գիրք՝ թէ հասարակաց գրոց էին առ Իսրայէլացիս, և կամ թողուլ որդւոց զնոսա և գնալ տարագիմ յաւսումն։ Զներքս այդմ աշխատասիրագոյն կեանք նոցա. և կարօտեին հարք օգնականութեան որդւոց 'ի վաստակն՝ յոր և անդստին 'ի մանկուենէ կրթեին զնոսա։ Յե յայս սակս արդեօք Յունք զդպրոց պարապուն կոչեցին, իբր տեղի՝ ուր պարապեալքն 'ի գործոց ժողովեին զգ բօանուլ վայելչապէս։ Յե Լատինացւոցն և խաղ ** կոչել զայն՝ 'ի նոյն հայի։ Եւ մինչ իրի ես այնպէս համարիմ՝ զի ուսումն նոցա բազում

* Χορός. ։ ա թադ. Պ։ ** Ludus.

մասամբք առանց վերծանութեան և դաս ա-
սելոյ վճարեր զուսցատրութեամբ հարց և
ծերոց։

Պարտ էր ծնողաց խելամուտ առնել զոր-
դիս մեծամեծացն Ի՛ստուծոյ՝ զոր արար վասն
նոցա և վասն հարցն. նմին իրի և յաձախ հրա-
մայէին նոցա օրէնք պատմել որդւոց իւրեանց՝
վասն որոյ իրաց կարգեցան տունք, և այլ պէս-
պէս արարողութիւնք կրօնից՝ որով հրահանգ-
քըս այսոքիկ՝ յարակցեալք ընդ զգալի արդիւնս
իրաց, և առեալ նորոգեալք, հարկաւ յարա-
տևք լինէին։ Ոյզ ընդ այսոցիկ ուսուցա-
նէին նոցա և զհրահանգս երկրագործութեան,
յաւելեալ՝ի խրատն զհանապազորդ օրինակ
իւրեանց. և ոչ ոք ընդ քաջ համուտութիւն նոցա
յարուեստն յայն յերկուանայեցէ, ածեալ ըզ-
մտաւ՝ զի ընդ այնչափ դասս յայն միայն պարա-
պէին։ Ի՛ թէպէտ զարդիս թանձրամտաց
պահի և տխմարաց այս արուեստ, սակայն բա-
զում գիտութիւնս պարունակէ յինքեան կեն-
ցաղատակարագոյնս քան զպարապեցոյն՝ի տե-
սութիւնս՝ որ խմաստունքն համարին։ Ի՛ և
թէ որ ինչ՝ի գիրս գրին՝ զայն միայն գիտու-
թիւն վերաձայնել օրէն իցէ, և հինք և ար-
դիք բազում յոյժ վասն երկրագործութեան
գրեցին՝ որ բաւական են զպատշաճ կարծիսն
տալ մեզ զայնմանէ։

[1] ՟Բ Օրէնք. Ջ. 7, 20։

Ա՝ման որոյ Իսրայէլացի ոք որ յաւանդու-
թենէ հարց և՛ի փորձոյ անձին և ընթերց-
մամբ գրոց ինչ՛ի միտ առեալ էր զկարգս աս-
տուածպաշտութեան, և զօրէնս կարևորս՛ի
անօրինել զկեանս, և տեղեակ էր Ճառից պատ-
մութեան ազգի իւրոյ, և գիտէր հայհոյել
անձամբ զպէտս անձին, և խելամուտ էր լիով
այլ և այլ որակաց երկրի և տնկոց, որ յատուկ
նոցին բերքն էին, և թէ որպէս պարտ էր մը-
շակել զնոսա և յորժամ ժամանակի, և զիարդ
զգուշանալ յարկածից որ ապականեն զար-
դիւնս երկրի, և որպէս ժողովել զնոսա կամ
պահպանել, և Ճանաչէր զբնութիւնս անաս-
նոց, զկերակուրս նոցա, զհիւանդութիւնս,
զդեղ դարմանոյ, և այլ բազում ինչ սոցին սա-
կի իրս անյայտս արդ յոլովից արանց աշխար-
հին մերոյ՝ որ ազնուագոյնքն և գրագէտք կո-
չին, Իսրայէլացին ասեմ այնպիսի վերհագոյն
է ինձ քան զվարժեալսն արդ յատեանս դա-
տաստանաց մերոց, և՛ի յանձնանձնաս եղի և
մտի գանձուց աշխարհիս և՛ի հակառառու-
թիւնս գպղոցաց մերոց։ Պէտք է ա-
սել, զի՛ի դարս յայսոսիկ կարի իմն անջրպետ
՛ի մէջ արկաւ ընդ վայրաքնին՝ և արդարև կա-
րևոր գիտութեանց, և կարի իմն անջատեցան
՛ի միմեանց խնամք հանձարոյ և բարուց՛ի պա-
րապմանէ գործոյ և պահպանութեան առող-
ջութեան։ Ոչ՛ի բազմագոյնք յայնցանէ որ ըզ-

միտս և գլխողութիւն հարստացուցանել զանձնան՝ առ կարի իմն անտես առնելոյ զմարմինն անպիտանք լինին ՚ի գործոց զօրութեան և ՚ի դժուարին վաստակոց. և յոլովք ևս այնպէս մեղկացեալ թուլանան յերաժշտութիւնս, ՚ի քերթութիւնս, և յայլ ընդունայնս, զի ՚ի փքանալն ընդ աշխոյժ միտն և ընդ կարծեցեալ վաստակին՝ պղերգութեան կեանս վարեն և վատութեան։

Ականջ էին ոմանք և Լսողայիս հետամուտք գիտութեանց, զորս մարթ է և ըստ մեծութեան տեսութեան՝ կոչել գիտունս։ Զայսոսիկ ՚ի գլխոյ [1] Թէ էին առ Պաւլիւ յորդւոցն Լսաքարայ արք հանճարեղք՝ տեղեակք ժամուց իւրաքանչիւր յուսուցանել Լսրայէլի որ ինչ պարտ էր առնել նոցա. և զոր ասէն՝ այսպիսի ինչ է ըստ մեկնչաց. զննելին զաստեղս առ ՚ի սահմանել զտօնս, և բովանդակ իսկ զկարգ տարւոյ։ Եւ Ա՝աղաքիաս ասէ զքահանայից ամենեցուն, “Օ՚ի շրթունք նոցա զգուշասցեն գիտութեան, և օրէնս խնդրեսցեն ՚ի բերանոյ նոցա.,,[2]։ Զրդ ի և այս ՚ի գլխաւոր պաշտամանց նոցա էր, ուսուցանել զօրէնս Զ՚աստուծոյ ՚ի ժողովս զոր գումարէին յամենայն քաղաքս զօրն շաբաթուց, զոր Յ՚այնք ժողովարան *, կամ որ գրեթէ նոյն է՝ եկեղեցի **

1 ա Մնաց. ԺԲ. 32. Եզր ա. Էսդր. ա. 32.
2 Մաղաք. Բ. 7։

* Συναγωγή.
** Ἐκκλησία.

յորջորջեցին[1]։ Ընդ հրաւիրէին խօսել և զայլ գիտունս օրինաց, և զորս մանաւանդ մարգա-րէս կոչէին աստուածազգեցիկս։ Ի յասկիսի եին համալսարանքն Սոպայելացւոց՝ յորս ոչ զընդ-վայրաքննս ուսուցանէին, այլ զաստուածաշ-պաշտութիւն և զընտիր վարս. և ոչ զմանկունս եւեթ կամ զպարապօրդս ոմանս վարժէին՝ ի նոսին, այլ զամենայն ժողովուրդն։

Վ ահանայք և եթ և մարգարէք համար-ձակէին յօրինել գիրս, և առաւել զպատմու-թիւնս[2]։ Ի յասկս և առ Ի գիպտացիս. զի քուրմք նոցա հրաժարեալ յամենայն աշխար-հական իրաց, անզբօս վարէին կեանս, մենա-կեացք, պարապեալք՝ ի պաշտամունս գից և յուսումն իմաստութեան։ Ո չ երեկ անցուցա-նէին՝ ի գործս կրօնից, և զգիշեր՝ ի խոկմունս ուսումնականութեան, զի այսպէս կոչէին նո-քա զերկնայնոցն իրաց մակացութիւնս։ Ի նո-քա միայն և զվէպս պատմութեանց՝ ի գիր ար-ձանացուցանէին։ Հանգոյն սոցա և Հոռո-մոյն հնագոյնք՝ ենթիշատակարանք քրմա-պետաց նոցա։

Ի պատմութիւնս աստուածեղէն գրոց հայ-եցեալ տեսանէմք զմատենագրաց նոցին ընթ-կարագիրս. զի էին նոքա գրեթէ առ հա-սարակ արք զգօնք և հանճարեղք, ծաղկեալ

1 Որոգ. ընդդէմ Կելս. գիրք Դ։ 2 Յովսեպ. ընդդէմ Ապիոն. Ա, ը։

ալէօք, ընդ բազում փորձս անցեալք, աշնուա-
կանք, և ձմուռք անցից ։ Ի մատեանս նոցա
չիք ընդունայնութիւն բանից, չիք մարդահա-
ճութիւն, և ոչ արուեստականութիւն ի ցոյցս
հանճարոյ ։ ուր զամենայն թերութիւնս զայ-
սոսիկ ի Յունաց գիրս տեսանեմք, առ որս
ամենայն ոք ազատ եր ի գրել։ և բազումք ոչ
այլ ինչ խնդրեին ի գիրսն, բայց զփառս ան-
ձանց և կամ զազգին իւրեանց ։ Ի՝ատենա-
գիրք Աթենայեցւոց չյայտնեն զանուանս իւ-
րեանց, և չթագուցանեն որ ինչ յանարգանս
նոցին իցէ, կամ թագաւորաց իւրեանց և գըշ-
խոյից ։ Որ զձառս պատմութեանց Դաւթի
գրեցին՝ այսպէս զյանցանս նորա յայտնաբա-
նեցին, որպէս զայլ գործս հանդիսից նորա ։
Ձառնեն յառաջաբան մատենիցն և ոչ անց-
մանձևս, այլ զարգիւնս իրացն ևեթ ստուգու-
թեամբ յառաջ մատուցեալ պատմեն, ոչ ինչ
խօսս կամ մտածութիւնս ի նոսա յաւելեալ։
Այլ իբրև ի գրեալսն անդր յառիւցիս, տես-
ցես զաքանչելի խմաստութիւն նոցա ի պատ-
միլ ընտրանաւ զայնս ևեթ ի գործոց որ կա-
րևոր իցեն յառաջարկութիւն խորհրդոյն ։ Կը-
միճն իրի և համառօտապատումք են յոյժ, թէ
պէտ և ի կարևորսն մանրապատում, կենդա-
նատիպ առաջի առնելով ընթերցանելեաց զգ-
դեսս իրացն ։ Յայտնապէս ի բաց թողուն զմե-
տածութիւնս և զընդարձակութիւն բանից,

գիտելով դարձեալ ընդարձակել՝ յորժամ կա-
միցին ազգել յոգիսն։ Այսպէս Պօղոս ՚ի
գիրս երկրորդ օրինաց մեծացուցանէ և ընդ-
լայնէ ամենայն զօրութեամբ և պերճութեամբ
հռետորական ձևոց՝ զոր հասարակաց խօսիւք
ցուցեալ էր յառաջին գիրսն։ Այսպէս նմին և յ-
այլսիս յառաջ անցեալ պատմէ պարզաբար ըզ-
խորհուրդսն Աստուածայնեղ ՚ի վերոյ ՚ի մարգարէանսն ահաւոր իմն ստո-
րագրեալ էր զայնքերթողաբար ձևով բանից՝։

Եւ ինչ ընդհատ քաջ կէին Հրեայք և յայլ
ազգս մատենագրութեանց . շարագրած օ-
րինաց նոցա յստակ են և հասառօտ . բարբոյա-
խօսութիւնք նոցա ՚ի սուղ վէհուս բովանդ-
ակեալ՝ յերիւրեալք ընտիր ձևովք բանից, և
բացատրեալք զուգաչափ տրոհմամբ, որովք
հեշտեաւ գրոչմին ՚ի մտի։ Պարզաբար ասել-
քերթութիւն նոցա վսեմ է, նկարագիրք ՚ի
նմա կենդանատիպք, այլաբանութիւքն յանդ-
գուցնք, վեհ ասացուածք, և ձևք բազմօրի-
նակ այլակերպութեամբն զարմանալիք։ Այլ
առ արժանապէս խօսել զձարտարասացութենէ
նոցա, և զքերթութենէն՝ ուրոյն ձառից պէտք
իցեն։

Այլ թէպէտ և մատենագիրք Աստուածոյ
ազգեալ գրեցին, այլ ոչ Հարկ թուի ինձ զձար-
տարխօսութիւն նոցա բովանդակ այսմ ընծայ-

1 Եսայ. Լ։

ել: Առաջնորդեաց նոցա Հոգին զՀմարիսան խօսել, և չառնուլ'ի կիր և ոչ բառ մի որ չիցէ պատշաճագոյն յառաջարկութիւն անքնին մեծի խորհրդոյն, բայց յիւրաքանչիւրսն 'ի նոսա զսեպհական տարազ խօսիցն պահեաց. և զայս յայտ առնէ զանազանութիւն կերպարանաց բանից մարգարէիցն, և առաւելնմանութիւն ձևոյ բանից նոցա ընդ արտաքնոցն օրինակաւ գրոց: Օի ոչ այլ ազգ պատմագրեն Հոմեր և Հեղոդոտ և Պղոկրատ'. և Հեսիոդոս գրեթէ նոյնպէս հրաշանգէ, և եղերերգութիւնք Յեհոգնեայ և Յողնի նմանք են յորդորակաց Մովսիսի և այլոց մարգարէից: Ի Պինդար և 'ի պարս ողբերգութեանց զերգոց երգոյն գրոց զՀամարձակ Թուիչս և զզաւմահերս դէմս բանից ակնարկեալ տեսանեմք: Հրեայգոյնք 'ի մատենագրացն Յունաց ըստ նմին համեմատութեանն նմանագոյնք երբայականացն գըտանին, եթէ ընտիր ոճով բանիցն՝ ըստ հանգամանաց գրոցն, և եթէ համառօտութեամբն և յատկաբանութեամբ:

Այլցի ոք թէ ախորժէ՝ լսկով զօրութեամբ մտաց այնպէս գեղեցիկս գրել Հրեիցն, և ուղղութեամբ դատողականին 'ի բաց թողեալ որ ինչ աւելորդ էր յառաջարկութիւն գրոցն, 'ի կիր առնուլ զՀամառօտագոյնսն և եթէ յուսումն և 'ի զարթուցանել զոգիս: Այլ ես տեսեալ

1 Լա. Դեմոսթ. յղ. պատիր օրին. և այլուր:

զի այնպէս հաստատուն ունէին զքաղմակերպ տարազ մատենագրութեանն, և այնպէս ձա-հողակի՝ ի կիր առնուն զընաւ զարդս ձչմա-րիտ պերճախօսութեան, հաւանագոյն և կար-ծեմ ասել՝ թէ էին նոցա կանոնք ինչ՝ ի տըւ-չութենէ հմտագունից հարցն՝ գրով կամ ան-գիր զրուցիւք աւանդեալք առ իմաստունս: Այ՝ի համարեսցուք Յունաց ինչ գիւտս զպեր-ձախօսութիւն և զքերթողութիւն. ոչ ինչ աւելի քան զանուանս ձևոցն գիտացին նոքա հնարել, և կամ քան զլեզուս արուեստին որ զքերականացն և զհռետորաց յարդարէ զգի-տութիւնս, այլ չառնէ զոք հռետոր կամ քեր-թող: Այսպէս քան զնոսա՝ ի լոյս ածեալ էին գի-տութիւնքս այսոքիկ. քանզի անդստին իսկ ծեր էր աշխարհս: Յառաջքան զՅողոմն՝ ե-րեք հազար ամք էին նորա. իսկ յայնմհետէ պիտին դեռ և ամք աւելի քան զերեքբարիւր՝ ի լրումն այլոց երից հազարացն: Այն զի և մին-չև ցայնժամ երկայնակեացք էին մարդիկ. և չև էր ծածկեալ խուժադուժ ազգաց զաշ-խարհն՝ յորս սկիզբն առին արուեստք և գի-տութիւնք:

ՅՕԴՈՒԱՆ ԵՐԿՈՏՏՈՒԱՆԵՐՈՒՐԴ

Քաղաքական կարգք Խորհրդարանաց։

Ընդհէն յամբոխն Հրեից զկարգ բանից դարձուցեալ, անմարթ էր նուաղել ի քաղաքական կարգաց՝ որոց այնպիսի հրահանգք էին, և յայնպիսւոյ ճնեալ յաշխարհի ուր ի բնէ հանճարեղ էին մարդիկ. քանզի և չէ պարտ կարծել թէ երկրագործութիւն և քաղաքականութիւն չկարիցեն կալ ի միասին. զի ահա և Յոսիք քաջ յուցին օրինակաւ իւրեանց զհակառակն։ Օ քաղաքականութիւն առնում աստ հասարակաբար վասն ամենայնի որ ի խաւժագուժ ազգաց զմէջ ի բաց որոշէ. և իմանամնուաւ ոչ միայն զհամբոյր բարս, զբարեձևութիւն, զբարեկամութիւն և զմեծատանաց ցոյցս առ միմեանս ի կենակցութեան, այլև զնոհականութիւն ի գործս, զխորագիտութիւն, և զղգուշութիւն յուղղութեան կենաց, և համայն ասացեալ որ ինչ քաղաքավարութիւնն կոչեմք։

Ասա բարեձևութեան մասին, քանզի բազումք ի Յունաց յերկնկերհաշտութեան կային, նախանձաւոր յոյժ էին ազատութէ իւրեանց, որպէս զի ամենեցուն հաւասարապէս ընդ մի-

մեանս գնալ. որով և պատուասիրութիւնք նո-
ցա առ միմեանս չանցանէին ըստ սահմանի բա-
րեկամութեան և յարգի. յորում զհետ չոգան
նոցա և Հռոմայեցիք։ Իսկ արևելեայց բա-
րեձևութիւն՝ մերում առաւել նմանէր, մեծ
ևս պատիւ և պատկառանս բերելով. զի ո-
րում շուք դնել կամէին՝ իբրև ընդ տեառս գը-
նային, ծառայս խոստովանելով նոցա զանձինս,
և խոնարհելով առաջի նոցա մինչև յերկիր,
զոր երկրպագութիւն անուանեն կիրք։

Այսր սովորութիւն էր և առ Հրեայս յաւուրց
անտի նահապետաց յորժամ տակաւին չգոյր
նոցա թագաւոր. և թէպէ ընկալեալ նոցա զայս
՚ի շրջակայ ազգացն որք ՚ի բազում ժամանա-
կաց հետէ ընդ հնազանդութեամբ տեառց
կային։ Այր առ նոսա անբարեձևութիւն՝ խօ-
սել եզակի. զի այնպէս խօսէին ամենայն ազգք
՚ի սկզբանէ, և զարդիս ևս յոլովք յազգաց։
Յետ անկանելոյ ինքնակալութեան Հռոմոյ
սկիզբն եղև յոգնակի ձևոյ բանից։ Հասարա-
կաց էր՝ համբուրիլ ողջոյն տալ միմեանց, և
ուր մեք՚ի պատիւ զգլուխս բանամք՝ նոքա ըզ-
կօշիկս լուծանէին ՚ի մտանելն առ ոք, որպէս
և արդ ոչ սակաւք յարևելեայց։ Այլ զար-
ձեալ, ծածկել զգլուխս սպոյ առ նոսա նշանակ
էր։

Զ տարազ պատուասիրական բանիւք ինչ նո-

։ Հռոմ. ԺԳ. 11, 13։

ցա՛ք տեսանել՝ ի բանսն Հռուբէայ, Լբիդեայ և Կնոջն Թեկուացւոյ, զոր առ՛ի ձեռն Յովաբ՛ի դարձուցանել զԼբիսդոմ, և՛ ի բանսն Յուդիթայ [1]։ Լյս այս ամենայն օրինակք՝ ի կանանց՝ որ ողբիլք քան զարս քնաւորեալ ևն։ Յօժարագոյնս խօսէին նմանութեամբք և առակօք. քանզ նոցա համեստ էին և պարկեշտք, բայց այլ ազգ՝ ի մերոցս։ Ջուր ոտից՝ կոչէին զմէզ, ծածկել զոտս՝ փոխանակ յապարահէ զանց առնելոյ. զի վերարկուաւն ծածկէին անդ զանձինս՝ փորեալ զերկիր։ Լզգեր զմերձակայ նմին մասունս կոչէին, զոր վասն պարկեշտութեան անուանել օրէն ոչ է [3]։ Լայց դարձեալ ևն նոցա ձևք ինչ բանից՝ խիստ ականջաց մերոց. որպէս յորժամ զյղանալոյ խօսիցին և զծննանելոյ որդւոց և կամ զբեղնաւորութենէ և զամլութենէ կանանց. զի համարձակ լիշատակեն զչիւանդութիւնս ինչ անյայտս զարանց և զկանանց ազգի, որ արդ բազում՝ զջնաբանութեամբք պատրուակին՝ ի մէնջ։

Լյս աննմանութեանցս այսոցիկ պատճառաք՝ հեռաւորութիւն տեղեաց և ժամանակաց։ Լաղտութիւն՝ ի բաւից անտի որք արդ՝ ի մեր լեզուս անպարկեշտք թուին՝ պարկեշտք համարեին առ նոսա, զի այլ իմաստս տային։ Լյս զարդիս իսկ արևելեայք, և մանաւանդ Հա-

1 ՚ Թագ. Ի՛. 41։ ՚ Թագ. ԺԱ. 9, 17։
2 Յուդիթ. ԺԱ. 3, 6։
3 ՚ Օրէնք. ԻԳ. 12։

գարացիք, ծաղրալից լին երկիւղածութեամբ նոցին ընդ բառս լինչ աղտեղիս՝ որոց չիք լինչ ընդ սրբութեան բարուց, անարգել յամենայն ազգս պղծութեանց թաւալեալք։ Յայտնա- գոյս քան զմեզ խօսին գիրք յաղագս ամուս- նութեանց. զի ոչ զբ յարայելացիս հրաժա- րեր յամուսնանալոյ. և գարձեալ զրք գրէին ՚ի նոսա՝ արք զգօնք էին, և գոգցես ամենե- քեան ծերացեալք հասակաւ։

Ընտ խոհականութեան մասին, և բարի կամ չար քաղաքավարութեան, ձարտարու- թեան, մարդահաճութեան, նենգութեան, և չարարուեստ հնարից արքունեաց, չիք լինչ ըստ իմումն բանի որ չէգրատգոյն օրինակս ա- ռաջի առնիցեն մեզ զվէպս պատմութեանց Սաուղայ և Դաւթի։

ՅՕԳՈՒԵՆ ԵՐԵՒՏԱՇՄԱՆԵՐՈՑ

Զբօսանք նոցա։

Ընդորր և անխուսով կեանք նոցա և զուար- ճալի վայրք աշխարհին յորդորէին զնոսա ՚ի զբօսանս. բայց զգալի և դիւրին էին զբօսանք նոցա, սահմանեալ ՚ի ինջոյս և յերգս նուա- գարանաց։ Կոչունք նոցա, որպէս ՚ի վեր անդր ասացաք, ՚ի պարզ կերակրոց յարգարէին՝ պատ-

բաստեալք ՚ի տան իւրեանց. և խուն և ա ծա-
խուց էր երաժշտութիւնն ոցա, զկոլովագոյնք
՚ի նոցանէ գիտեին երգել և նուագել։ Ոչ այ-
սոսիկ երկուս զբօսանս և եթե ՚ի համար արկ ծե-
րունին Ներզելի [1] յորժամ առ ծերութեան
ոչ և ս կարողացան համարեր վայելել ՚ի կեանս.
և Աիրաք զզուշաւորութիւն սոցա նմանեցու-
ցանէ ՚ի զմրուխտ յեռեալ ՚ի կազմած ոսկւոյ [2]։
Ա յսպէս և Ոգիսեւս առ վիշակացիս համ-
արձակ վկայէր չգիտել բարեբաստութիւն
այլ քան զընթրիս նուագարանօք հանդերձ։
Ա՛ր մարգարէք զոսոին զայսոսիկ յիշատակէն
՚ի կշտամբանս առ որս զեղծանէին նոքօք [3].
զի ՚ի վերայ այնր և գինւով զեղխէին, և պսա-
կէին ծաղկօք, և իւղովք օծանէին, զոր օրի-
նակ և Յոյնք և Հռոմք։

Ոչ ազգի ազգի իւղս անուշոնոյացընթեռ-
նում և Ա՛ղբգան և յայլ բազում տեղիս, և մա-
նաւանդ յօրէնսն՝ որ զնաւսն երկատեսակ իւ-
ղոց անուշից սահմանեն նուիրել Ա՛ստուծոյ,
զձորն և զՀոսանուտ [4]։ Որ անդ նշանակին ազ-
գի ազգի խունկք՝ անուշահոտք էին քան զա-
մենայն խունկս որ նախ քան զգիւտ մկոյն և
սաթի։

Յօժարագոյնս ՚ի պարտեզս Ձաչէին ընդ

1 ի Թագ. ժԹ։
2 Սիրաք. լԲ. 8։
3 Ամովս. Զ։ Եսայ. Ե.
11, 12։ ԻԼ։
4 Եզք. լ։

ծառովք և ընդ տաղաւարօք · քանզի ըստ նմանէ եմք ի տօթագին աշխարհս զսիւգ և զզով խնդրեն ամենեքին · վասն որոյ ի կամէ դրոց զբարեբաստութեան ամն յայտ առնել, ասէ · իւրաքանչիւր որ ընդ որթով և ընդ թզենեաւ իւրով ուտիցին և ըմպիցին, որոցքան զամենայն մրգաբեր ծառս լայն են տերևք։

Պարապուշին նոցա յերկրագործութիւն՝ չընդերք զամենայն աւուրս ընթերս տալ և հանապազ ի զբօսանս պարապել՝ իբրև զգաղամն արդ ի ձոխից · բայց այս իսկ քաղցրագոյն յօրիներ զնոցա ուրախութիւն։ Աւուրք ուրախութեց նոցա էին աւուրք շաբաթուց, և ծանից հրամայէլոց յօրինաց, հարսանեաց, բաժանելոց աւարին գնի, յաղթութեան, կարոց խաչանց, հնձոց, և այլ եկեղոց վճակաց առն իւրքանչիւր, յորում ժողովէին մեբձաւորք օգնել միմեանց[1]։ Այսպէս էր և առ Յոյնս յայսպիսեաց աստի խրախութեանց սկիզբն առին տօնք Դիոնիսեայ և Դեմետրեայ, որոց հետք եբևին ցայսօր ի շինականս։ Ընդոյն առ Ասքլեպիոս թատերք աշխարհականք, և շատ համարէին զՀանդէսս կրօնից և զՀանդերձանս ղոհից, որոց պարտ իսկ էր լինել շքեղս յոյժ, զի ըստ ընդ բնաւ աշխարհն շինուած հոյակապ հանգոյն տաճարին յորում երեսուն և երկու հազարք ի Դատաւորաց կային ի սպաս։

[1] Նայ. Թ. 3։ ԺԴ. 10։

Ձտեսանեմ առ նոսա խաղս և որսորդու-
թիւնս որք ընդ երևելի զբօսանս Համարին
արդ ՚ի մէնջ. նա թուի թէ անգէտ իսկ էին
խաղոցդ, այնու զի ՚ի բովանդակ աստուածե-
ղէն գիրս ՚ի միում տեղւոջ ևեթ զայնմանէ
բանք լինին. իբր ոչ եթէ գտիչք նոցա չեղեն
կանխաւ | լուացիք՝ եթէ ստոյգ իցեն աւան-
դեալքն զայսմանէ՝, այլ զի և արդ Ա՛բաբա-
յիք և Համօրէն արևելեայք չխաղան բնաւ ըզ
բախտի խաղս, գոնեա օրինապահքն ՚ի նոցանէ:
Ւսկ որք երէոց և հաւուց թէպէտ և ան
ծանօթ ոչ էր Ւսրայէլացւոց, այլ կարծեմ ա-
ռաւել ՚ի պէտս զարդարելոյ զսեղանն զայնու
գայնէն, և առ պահելոյ զցորեան իւրեանց և
զայգիս՝ քան առ զբօսանաց. քանզի թէպէտ
և յօրովակի խօսին գիրք զվարմից և զթռչուն-
թից, այլ ոչ և զբարակաց և զծառայից, և ոչ
յորս արքունի: Ա՛պաքէն ամենեցուն առեալ
լինէր որ իշխէր արշաւել ընդ արտորայս, կամ
բռնծանել զանասունս՝ զապականիչս դաշտաց:
Որք մեծամեծք յընդարձակ անտառս և յան-
ապատ դաշտս ցուրտ աշխարհաց նախ հաս
տատեցան:

1 Երոդ. Բ:

ՅՕԻՒՒԱՆ ՔՈՐԵՒՏՄՊԵՒՐԻ

Սուգ նոցա։

Իսօսեցեալ զերախտիսն՝ խօսեսցուք արդ և զսգոյ նոցա, և զնշանակաց ցաւոցն։ Պատճէն ՚ի հնումն ոչ ՚ի մահ ազգականաց լեալ սուգ առնուին, այլ յամենայն արկածս աղետից, և ոչ միայն ՚ի հանդերձս էր սուգ նոցա։ Այլ ինայն նեղութիւն հասարակաց, սքանծութիւն, անպտղութիւն, և թշնամեաց յարձակումն, այլ և իւրաքանչիւր վիշտք, մահ ազգականաց կամ սիրելեաց, հիւանդութիւն նոցա սաստիկ կամ գերութիւն, և կամ ծանր ծանր ամբաստանութիւնքն զնոցանէ, սգոյ էին առիթք։

Ընդանակ սգոյ առ Իսրայելացիս էին ՚ի լսել անդ գոյժ ինչ, կամ ՚ի տեսանել զչարիս ինչ և զմեղս ընդդէմ Աստուծոյ և ՚ի լսել զՀայհոյութիւնս պատառել վաղվաղակի զհանդերձս, բախել զկուրծս և զձակատ, ձեռս զգլխով ածել բանալ զգլուխ, հող և մոխիր ցանել զգլուխ խով փոխանակ խնկոյն ՚ի ժամանակի ուրախութեան, և գերծուլ զմորուս և զվեր։ Իսկ Հոռոմք ընդ հակառակն թողուին առնել հե-

բայց 'ի ժամանակի սգոյ, զի սովորութիւն էր նոցա գերծուլ զայս ։

Յորչափ 'ի սուգ կային՝ չէր օրէն նոցա օ ծանեբ զանձինս կամ լուանալ. այլ զգենուլ աղտեղիս և պատառատունս և քուրձս, իմա հանդերձս անձուկս առանց խորշխորշանի՝ տը գեղս 'ի տեսանել ։ Ուչիւն զայն և խորգ կամ խաբազն, զի յայծէից կամ 'ի նմանոցին խիստ և խոշոր կտաւոյ յօրինեին զայն ։ Խոկոտն և բացաւ գլխով կային, այլ ծածկեալ զերեսս. նա երբեմն և զանձամբ և զերեսօք ածկին վերարկու առ չտեսանել զոյս, և 'ի թափուցանել զարտասուսն [2] ։ Յաւելուին 'ի սուգ և պահս. զի զամենայն ժամանակս սգոյ խրբեանց կամ քնաւ չառնուին կերակուր, կամ յեա մըն տանելոյ արեւուն, և կամ անպաճոյճ յայժ հաց և ունգ, և ըմպելին ջուր լոկ ։

Ի տան արգելեալ կային՝ նստեալք 'ի վերայ գետնոյ, կամ ընկողմանեալք 'ի վերայ մախրոյ, լուռ եղեն, և չբանային զբերան՝ այլ 'ի լալ միայն, կամ երգել երգս զղջականս [3] ։ Սուգ մեռելոյ ձգեր սովորաբար ընդ աւուրս եօթն. այլ երբեմն և ընդ ամիս մի, որպէս 'ի մահն Սովսէսի և Ահարոնի. է զի և յերկարելին մինչև ցաւուրս եօթ անասուն, որպէս վասն նահաւ

1 ը թագ. ԺԹ. 19։ Երեմ. Բ. 37։
2 Եզեկ. ԽԻ. 17։
3 Ողբ Երեմ. Բ. 10։

պետին Յակոբու[1]։ Այլ այրիք ամանք զամենայն աւուրս իւրեանց ի սուգ կացին, որպէս Յուդիթ և Աննա մարգարէ։

Այսմ որոյ ոչ որպէս հանդէս ինն էր սուգ նոցա իբրև զմերն՝ զոր մեծատունք ևեթ կատարել են կատարել ըստ պատշաճի. այլ նոցայն սուգ բովանդակեր զամենայն որ ինչ ձեմարիտ տրտմութիւն բնաւորեալ է ներգործել. քանզի ձեմարտիւ վշտացեալումն ոչինչ փոյթ է յաբդարել զանձն կամ սրբել. բազում աշխատութեամբ հաւանի այնպիսին առնուլ կերակուր. ցօգէ բարբառ, կամ թէ բարբառի առ ողբալոյ ևեթ. չերևի ումեք, խոյս տայ յամենայն զերկրութեանց։ Այսպիսի սուգ ոչ առ Խոբայելացիս միայն էր տեսանել այլ և առ ամենայն ազգս արևելից, առ Յոյնս իսկ և առ Հռոմն յետ բազում իսկ ժամանակաց. զի ոչ ինչ ընդհատ և զկոծ իւրոյ ժամանակին սուրբազգեր սուրբն Յովհան ոսկեբերան[2]։ Այլ թէպէտ էին ամանք որ և ի վերին երեսս այնպէս կեղծաւորէին առանց կասկի ինն վշտանալոյ, բայց գէթ որ տիրապէս տրտմէրն՝ կարող էր սփոփել զսուգ իւր։

Այսպէսն Խոբայելացիք և համօրէն ազգ մարդկան ի հնումն ըստ բնութեան առաւել

1 ՚ի Թագ. գ. վերջին։ Սիրաք. ԻԱ. 13։ Թիւք. Ժ. 30։ ՚ի Օրէնք. Գ. 4, 8։ Նահ. Ն. 3։

2 Ոսկեբ. առ Դեմետր. յղ. Նպաստ. Ջ։

գործէին քան այժմ. և նուազ բռնադատեին զանձինս ի ցոյցս կրելոյ։ Եւ ինչ ամաչէին երբէք և կայթել ի ինդուլեան ժամանակին, և դարձեալ լալ և հառաչել բարձրաձայն ի ժամանակի վշտաց։ Որժամ երկիւղ էր նոցա, համարձակ զայն ցուցանէին. ի սրտմտութիւն բարկութեան բրգեալք՝ ահագինս լուտային։ Հոմեր և ողբերգուացն պարք քերթողաց ամենայն ուրեք առաջի առնեն մեզ զայսոցիկ օրինակս. Հայեաց յողբս Աքիլլեայ ի մահուն Պատրոկղի, և դարձեալ ի կոծս ցաւոց Նդիպեայ և Փիլոկտետեայ առ Սոփոկղէ։ Օ կնի ապա իմաստասիրութիւն և քրիստոնէութիւն ուղղեցին զարտաքինս զայս ի բարեկիրթ և ի բարգաւաճեալ աղինս, և ուսուցին մանկտւոյ իրրև զդիւցազունս խօսել և արպէս զօսրբս։ Այլ բազմագոյնք ի նոցանէ յօգուտ ոչ արկին զայն, չատ համարեալ ծածկել զկիրս՝ առանց յաղթելոյ նոցա կամ ի դիմի իսկ հարկանելոյ։

ՅՕԳՈՒՏՆ ՀՆԴԵՑՄՆՆԵՐՈՑ

Յուղարկաւորութիւն մեռելոց։

Ընդ սգոյ քալ ի չահ գայ յուղարկաւորութիւն մեռելոց։ Մինեցուն ինչ նախնեաց փոյթ մեծ էր այսմ, և յահագին անէծս էր համա-

րեալ՝ գէշ գազանաց և Թագաւոց մատնել մարմնոցն իւրեանց և սիրելեացն, և կամ նեխել, և ժանտ ախտ՝ ի կենդանիս գործել. և ընդ հակառակն դիւր իմն էր վշտաց նոցա հանդուրժանել զնոսին՝ ի չերմին Հարցն: Բայց Յոյնք այրեին զմեռեալս առ՝ ի պահել զաճիւն նոցա. իսկ Աբբայեցիք ընդ Հողով ծածկեին զՀասարակաց մեռելոց մարմինս, և զմեծամեծացն պատեալ խնկովք դնէին՝ ի տապանի. և զի և խունկս անուշից բուրեին՝ ի վերայ մարմնոյ նոցա: Ի հանդէս Թաղման Աբբայի արքային Յուդայ՝ ընկողմանեցուցին զնա, ասեն գիրք, ՝ի գահոյսն, և լցին խնկովք և ազդի ազդի իւղովք իւղեփեցաց, հուր մեծ վառեալ՝ ի տեղւոջն՝: Նմ յայսց վկայութեանց ևս սովորութիւն իմն Թուի այս այսր ժամանակին: Օգիաղարդութեան՞ առնէին որպէս գոգես առ Աբդիսպասիս, պատեալ զմարմինս բազում յոյժ ազացիկ խնկովք. և զկնի ասպ դնէին՝ ի դամբարանս, որ էին ծերսք կամ այրք փոքեալք՝ ի վիմ այնպէս Չարտարութեամբ, զի և ոմանց գրունք էին առ՝ ի փակել, Հոլովականք՝ ի վերայ ծխնեաց՝ անդստին՝ ի նմին վիմ. յորոց բազումք կան ցայսօր: Ինչ միայ՝ ի

1 Ձվերքին հապառաժն հուր մեծ վառեալ՝ ի տեղւոջն խնաւի ե ըսք. Խարխանուկ. զի ներն ոտի Եւ արարին յուզարկաւորութեան մեծ յոյժ: 2 Մնաց. ժ.Զ. 14: 3 Երեմ. ԼԴ. 5. խմ գոյ ինչ ասքնասանին:

նոցանէ էին և տախտակք քարեղէնք՝ հատեալք դարձեալ ի վիմէ անտի, յոյր վերայ հանգուցանէին զմարմինս։

Յուշարկաւորք մեռելոց սգային և լային ի ձայն բարձր. որպէս է տեսանել ի հանդէս Թաղման Լեւններայ[1]։ Ընդ և կանայք լալականք ընդ տխրագգած սրնգացն ձայնից կական բառնային։ Ոչ կին ապա յօրինէին երգս՝ որպէս արձանական իմն երևելի արանց որք թշուառութեամբ ելին յաշխարհէ. որպէս ողբքն Դաւթի ի վերայ Աւուղայ, և Երեմիայն ի վերայ Յովսիայ[2]։

Անհպատ և պարտք իմն բարեպաշտութեան էին թաղել զմեռեալս, սակայն և ոչ մի ինչ ի պաշտամանց կրօնից ի հանդիսի անդ գոյր. զի օտար էր այն ի կրօնից, և պիղծք էին մեռեալքն յոյն միանչեւ վերստին սրբեալք. վասն զի մարմինք մեռելոց կամ լուծանէին և կամ մեռձէն ի լուծանել յատկականութիւն։ Այլ ոչ միայն չափեցին քահանայք ի յուշարկաւորութիւն, այլ և արգելեալ իսկ էր նոցա գտանել անդ, բայ ի մերձաւորաց մեռելոյն[3]։ Ի կամէն Յովսիայ ջնջել զհաւապաշտութիւն՝ այրեաց զոսկերս քրմաց ի վերայ սեղանոց կռոցն ի մեծ ևս սոսկումն ժողովրդեան։ Ոչ ոք

1 ի Թագ. Գ. 31։ Երեմ. Թ. 17։ Մատթ. Թ. 23։
2 ի Թագ. ԺԵ. 17։ Մնաց. Լ. 25։
3 Ղևտ. ԻԱ. 2, 3։

և պատարագս մատուցանէին վասն մեռելոց, այս է՝ վասն քաւութեան մեղաց նոցա, որպէս եւ մատուցանէր Յուդա Մակաբէ. իսկ միըմեանս վասն մեռելոց. զոր յիշատակէ Պօղոս, էր լուացումն ինն օրինական և սրբութիւն, որով հաւատային օժանդակել ննջեցելոց՝ որպէս 'ի ձեռն աղօթից[1]։

ՅՕԳՈՒԱՆ ՎԻՇՏԱՊՆԵՐՈՒՐԻ

կրօնք նոցա։

Ասացաք որ ինչ յաղագս առանին կենաց խոստացեալ էր. ժամ է արդ խօսել զկրօնից և զկենցաղական կարգաց նոցա։ Նայց ոչ ըզհաւատոյ նոցա զվարդապետութիւն առաջի կայ մեզ ցուցանել, որ յայտնի իսկ է ամենեցուն, և 'ի մերումն բովանդակեալ կայ համօրէն. այլ նշանակեցից ևս թէ որ ինչ 'ի չէմարտութենէ անտի քաջայայտ էր նոցա, և որ ընդ աղօտ ևս թէ, թէպէտ և այնուհետև կայտնեալք յաստուածոյ[2]։

Պիտի էր բացայայտակի զի մի է Աստուած և չիք այլ ոք բաց 'ի նմանէ, և զի նա արար

1 ք Մնաց. Լդ. 6։ ք Մակաբ. ժԲ. 43։ ա կորնթ. Ը։ք Օրէնք. Դ. 39։ Զ. 4։ ժե. 29։

2 Յովսեպ. ընդդէմ Ապիոն. Բ։ք Օրէնք. Դ. 39։ Զ. 4։

զերկինս և զերկիր, և վարէ տեսչութիւն զամենայն արարածս, և զի՝ ինա միայն պարտ է յուսալ և՝ ի նմանէ առն ունել ամենայնի, և թէ մերկապարանոց կայ նմա ամենայն, և խորհուրդք երկիմանց մերոց. և թէ՝ ի ձեռին նորա է սիրտ մարդոյ, և շրջէ յոր կոյս և կամի. և թէ ամենեքեան՝ ի մեղս ծնանին, և միաք նոցա՝ ի խնամս չարին հաստատեալ են, սակայն մարթին բարիս գործել՝ ի ձեռն չնորհացն Աստուծոյ. և թէ ազատ են, և՝ ի ձեռս նոցա է առնել զբարին կամ զչար. և թէ արդար է Աստուած, և պատժէ կամ պսակէ ըստ գործոց իւրաքանչիւր. և թէ ամենողորմ է, և ներէ անոցիկ որ զղջանան՝ ի սրտէ՝ ի վերայ մեղաց իւրեանց. և թէ դատի զամենեսին յետ մահու. յորմէ և անմահութիւն հոգւոյ, և անտի կեանքն յայտնի կէին նոցա՝ [1]։

Վիտէին գարձեալ՝ զի զնոսա ընտրեաց Աստուած ողորմութեամբ իւրով յամենայն ազգաց իւր ժողովուրդ սեպհական. և թէ՝ ի նոցանէ՝ ի ցեղէն Յուդայ և՝ ի զաւակէ Դաւթի ծնանելոց է փրկիչն որ ազատեսցէ զնոսա յամենայն չարեաց իւրեանց, և ձգեսցէ զամենայն ազգս՝ ի գիտութիւն Աստ-

[1] Սաղմ. ՃԳ. 126։ ԿԱ. ռակ. ԻԱ. 1։ Սաղմ. Ծ. 7։ 70։ Եսայ. Լ.Ջ. Երեմ. ԻԿ. Ծ.ՆՆ. Զ. 5։ Սաղմ. ԾԲ. 4։ Սաղմ. ՂԳ. 138։ [2] Թագ. [3] Օրինք. Լ. 6։ Եզեկ. Լ.Ջ. Ը. 39։ [4] Թագ. Ժ. 20։ Ա. 27։ [5] Օրինք. Լ. 19, 20։

տուածոյ ։ Յանիկ այսոցիկ ամենայնի խելա-
մուտ էին բովանդակ, և այսոքիկ էին ընդե-
լական մտածութիւնք նոցա, և ի վերայ սոցին
յօրինէին զաղօթան ։ Հաւասիկ բարձր իմաս-
տութիւնն որ երևելի առնէր զնոսա ի մէջ
ազգաց. զի ուր առ այլս իմաստունք ոմանք
ևեթ տեղեակ էին մեծի խորհրդոցս, և այն
թերի տեսութեամբ և բազմապատիկ տա-
րաձայնութեամբ վարդապետութեանց, Ա-
րարչելոցիք ամենեքին ի նոյն իմաստս մնեալ
էին, և կանայք անգամ և տարուկք զնոյն
դաւանէին ։

Ոսկ որ ինչ ի ՃՀմարտութեանց ընդ աղօտ
ևեթ յայտնի էր նոցա, այսոքիկ են. այս ինքն
թէ երեք անձինք են յԱստուած, Հայր և Որ-
դի և Հոգի սուրբ. և թէ փրկիչն որում սպա-
սէին՝ Աստուած էր և որդի Աստուծոյ. և
թէ Աստուած էր և մարդ կատարեալ, և թէ
ամենայն պարգեւք ընդհակառակ Աստուծոյ առ մար-
դիկ և կարևոր օգնութիւնք նորա ի պահպա-
նութիւն պատուիրանացն ի ձեռն փրկչին և
վասն նորա ընդհակառակ մարդկան. և թէ ի մահ
մատնելոց էր զի քաւեսցէ զմեղս մարդկան, և
թէ թագաւորութիւն նորա հոգևոր էր. և
թէ ամենեցուն յարութիւն լինելոց է, և թէ

1 Սաղմ. ԺԵ. 90։ ԿԱ. 13։ Ը. 12, 20։ Ռ. 11։ Թ. 2, 14։ Եսայ. Գ. 46։ Ե Օրինք. Լ. 1, 2։ Սաղմ. ՀՌ. 17։ Ժող. Խոսա. Ռ. 23։

միրապէս հատուցումն արդարոց և պատուհաս մեղաւորաց յանտի կեանս պահի՝։

Ա՛պաքէն զայս ամենայն ուսուցանէն հին կտակարանք. բայց ոչ այնպէս յայտնի՝ մինչև իմանալ զայնոսիկ ամենայն ժողովրդեան. քանզի և ոչ դեռ ևս տանել բաւական էին մարդիկ զգերապանծ Աստուածութիւնն։

Ա՛ւրինձ ըստ իմում առաջարկութեանս անկ է ցուցանել միայն որ ինչ արտաքին արարողութիւնք են կրօնից նոցա՝ առաւելագոյն զանազանեալք ի միմեանց։ Ա՛ի միայն տաճար էր նոցա, և ի սեղան յորոյ վերայ հրամայեր մատուցանել զողջակէզս տեառն՝ ի զգալի նշանակ միութեան Աստուածոյ. որ և ի յանդիման մանութիւն գերագոյն իշխանութեանն նորա չքնաղ իմն կառուցեալ էր քան զամենայն շինուածս աշխարհին։ Ոչ միակ շինուած էր այն իրրև զազգութիւն յերկեղեցեաց միոյ. այլ շերջապատ մեծ, յորում բաց ի տաճարէն՝ էին բակք, և շուրջ զնոքօք գաւիթք կամարակապք, և բնակարանք բազմութեայլ և այլ պետս քահանայից և Ղևտացւոց։ Հանգոյն իմն և առ

1 ք Օրէնք. Ե. 6, 7, 8։ Ածաք. Լ. 4։ Եսայ. ԽԸ. 16։ Թ. 5, 6։ Ծնն. Ի. 10։ ք Թագ. Ա. 5, 6։ Սաղմ. ԺԱ. 7։ ՃԹ. 3։ Ե. 11։ Սաղմ. ԻԱ. 28։ Հաւ. Ա. 1։ Եսայ. ԺԱ. 1, 10։ Եզեկ. Ա. 4։ Եսայ. ՆԳ. 11։ Ե. 6. ևն։ 4. Գ. 23։ ք Օրէնք. Դ. 6։ Ա. 19։ ԿԴ. 4։ Տուբ. ԺԳ. Որոգ. ընդդէմ Կելս։ Յով. 21, ևն։ Յոբ. Ժ. 26։ Դան. սեպ. ընդդէմ Ապոլ. Բ. ՟Ը։ Ա. 23։ Խոսա. Գ. 1. ևն։ Ծնն. 1, 26։ Սաղմ. ԼՔ. 6։ Տուբ. Բ. 18։ Դ. 2, 3։

մեհենեաք այլոց ազգաց, որպէս Քաղդեացւոց և Յգիպտացւոց, կային մեծամեծ շինուածք և տեղի ընդարձակ, այլ նոքա անտառս ի նոսա մնակէին. ուր Իսրայէլացիք և ոչ ծառ մի յամենայն չըջապատ տաճարին, զի ի սպառ հեռագոյնս դիցեն զանձինս ի հեթանոսաց կանացն անոտիապաշտութենէ անտառաց որ դիցանուէրք առ հեթանոսս համարէին։

Իրկայնութիւն տաճարին էր տասն ձողաչափ, և լայնութիւն հինգ. Թող զսրբութիւն սրբութեանցն՝ որ կցորդէր նմին առանց աստիճանաց, և էր երկայն՝ լայն և բարձր հինգ ձողաչափ. իսկ բարձրութիւն տաճարին էր եօթն ձողաչափ և կէս։ Իմուտս անդ էր անդաստակ, և ի նմա աշտարակ բարձր տասն ձողաչափ, և լայն հինգ։ Իմաստնոց Թողուք քննել զչափուցս այսոցիկ համեմատութիւնս. իսկ որոց անձուկ Թուիցի տաճարս՝ գիտասցեն զի ժողովուրդն չմտանէր անդր, այլ քահանայք միայն, և ի նոցանէ որոց հասանէր քահանայանալ, և կամ մտանել ի կարգեալ ժամսն երեկոյին և առաւօտուն առ ի լուացանել զձիրագունսն, և նուիրել զկացն և զխունկ։ Իսկ ի սրբութիւն սրբութեանցն՝ ուր կայր տապանակ ուխտին՝ մտանէր քահանայապետն Հեթ միանգամ ի տարւոջ[1]։

1 Ճ Թագ. Ը. 23. Եզեկ. ԺԳ. Ը Մնաց. Գ. 4։ Հնախոս. Ա. յղ. Պատերազմ.

Յղևնափայտիւք պատեալ էր տաճարն համ օրէն և սրբութիւն սրբութեանցն, և քանդակօքզարդ արեալև դրուագեալ թիթղամբք ոսկւոյ։ Արտաքս ըստ տաճարն ամբառնային շուրջանակի յարկք կրկին յեղևնեաց, որ բովանդակէին երիս կարգս սենեկաց յայլ և այլ պետս՝։ Հանդէպ տաճարին՝ի լսնարձակ գաւթի միւմ կայր սեղան ողջակիզացն որ էր հղաբլուր չորեքկուսի, հինգ ձողաչափ երկայնութիւն կողմանցն իւրաքանչիւր, և բարձր հնգետասան ռանաչափ. յոր ելանէին քահանայք ընդ զառ՝ի վեր առանց սանդղոց՝ հանդերձել զնայսն և զղոհ։ Նմին գաւթի էին և տանեաքին մեծամեծ աւազանքն պղնձիք՝ի վերայ անուոց, և աւազանն՝ բարձեալ յերկոտասան եզանց, զոր ծով ձուլածոյ կոչէն գիրք։

Յայսմ գաւթի, և մանաւանդ ընդ մէջ սեղանոյն և անդաստակի՝ կային զոհագործքն. զի մինչև՝ի սեղանն թողէր մատչել և աշխատհակառակաց՝ի ժամանակի զոհիւ՝ առ ընծայեցոյ զպատարագն և զնոյց։ Նվերայ ասեմՀանաց անդաստակին որ՝ի տաճարն ածէր՝ կային Վ և տասնեքն յերգել և՝ի հարկանել ըզնուագարանս՝։ Վասիլի քահանայիցն սահմաներ՝ի Ձեմելիսն, և զսովաւ այլ գաւթի մեծ յոյժ քան զքահանայիցն՝ որ էր վանն ժո-

1 Վերնատուն։ զեկ. խ. և խԲ։ Յովսեպ. 2 ա Պնաց. Բ. 9, 80։ Ե. Հնախոս. ժԵ։

ղովրդեան։ Ի զատ կային անդ կանայք յարանց, և չկարէին անդր մտանել հեթանոսք՝ բայց մինչև ՚ի ներքս ՚ի Ներմելիան, որ ընդ արեւելեան գաւթաւն։ Այլ Ներմելեայն երկոցուն գաւթաց էին բաղում սրահք, սենեակք և շտեմարանք յայլ և այլ պետս իրաց ՚։

Ընդ պահէին սպասք սուրբք ոսկեղինք և արծաթեղինք, որոց այնչափ էր թիւ՝ զի ՚ի դարձի գերեցին ածան ՚ի միասին և յանօթոց սրբոց հինգ հազար և չորեքարիւր ։ Ընդ էին և տուն քահանայական հանդերձից, և տեղիք ՚ի պահեստ պատարագաց վանն կերակրոյ զոհաբարացն և Հատուցուց, այրեաց և որբոց և աւանդից սոսկականաց. քանզի առ նախնիս հասարակաց տեղի աւանդից տաճարք էին ։ Ընդունօր գարձեալ յուրոյն տեղւոջ պահէին գիւնի և իւղ վասն քաւութեան, և աղն որով զպատարագն յաղէօրէն էր, և ընտիր ընտիրք գառանց յանխափան զոհ երեկորէին և առաւօտուն ՚։ Ընդ զնուիմբ վայրօքն պատրաստէին և զհացն առաջաւորութեան, և զպէսպէս կարկանդակս նուիրանաց ՚։ Ընդունօր էին և խահարանք վասն մտոց զոհից, և սրահքն ՚ի Ներմատուն քահանայից ։ Ընդ և գունդ թիկնապահաց Հատուցուց բարապանաց, որք պա-

1 Տուն. վարագոյրաձիգ։ ԼՂ. 11։ ֊ Մակաբ. Գ. 10։
2 Եզեկ. Լե. 4։ ֊ Եզր. Ը. թաքմուզ։
11։ Եզեկ. խԴ. 19։ ֊ Մնաց. 5 Եզեկ. խ. 20։

հեին զտաճարն զտիւ և զգիշեր. անդ և սե-
նեակք սաղմոսերգուացն ՚Ա և ետացւոց. և սե-
նեակ միաբանիցն՝ յորում մուխտադիրն նաղվե-
ցիքն տային գերծել զգլուխս [1]. և այլ միւս ևս
յորում զբորոտս քննէին, և սրահ՝ յորում ժողո-
վեր ատեանն մեծ եօթանասուն ծերոցն [2]. և
այլ հանգոյն սոցին սենեակք զորս անմարթ է
մեզ զանազանել մի ըստ միոջէ։ Պատքէն այս-
չափ բազմութիւն գեղեցիկ շինուածոց պատ-
շաձեալ վայելչապէս առ միմեանս՝ ահեղ իմն
զմեծավայելչութիւն թագաւորին յանդիման
առնէին որ պաշտէրն ՚ի սուրբ ապարանսն։

( )որ ըստ օրէ մատուցանէին յողջակէզ գա-
ռինս չորս, երկու ընդ առաւօտն և երկու յե-
րեկոյն. որ և կոչէին հանապազորդ պատա-
րագք [3]։ Յոկ զաւուրս շաբաթուց և զտօնից
առաւելուին զթիւն ըստ աւուրն պատշաձի,
Թող և զիւրաքանչիւրոց ոմանց զընծայս՝ որ
յաձախէին հանապազ։

Պժպհի իմն Թուին մեզ արիւնահեղ պա-
տարագքն որովք ՚ի սպանդանոց իմն փոխէր
տաճարն սուրբ. բայց զնոյն և առ այլ ազգս
էր տեսանել. ուր Իսրայէլացւոց զաճեայն
զգուշութիւն ՚ի կիր արկեալ էր առ մաքրա-
պէս ըստ կարի և վայելչաբար կատարել զայնս։

1 Եզեկ. խբ։
2 Եզե կ.խ. 44, 45։ Թալ. 5։
մուտ։
3 ա Մնաց. լ.զ. 15։ Տա-
միդ Երեսելքեամս, գաստ-
ւոր ղոհից։

Կանզի և վայր տաճարին յայնժղեր նոցա զայս-
զի ի վերայ բլրոյ կառուցեալ էր, և առուք
բացեալ էին ի ներքոյ՝ ընդ որս հոսէր ի բաց
արիւն և ժահ։ Օրհարարայ գործ պաշտա-
մանն էր զարիւնն ցանել, վառել զխունկն, և
դնել ի վերայ սեղանոյն զմանն ընծայելի. իսկ
զենուլն և պատրաստեղն և յօշելն և եփելն՝
այն այլոց էր [1]. որպէս յայտնի է յօրինաց, և
ի պատմութենէ որգւոյն Հեղեայ. զի ի հա-
սարակաց ղոհս ևեթ վասն ամենայն ժողովրդ-
դեան զոհարարք զնոսին առնէին։

Այսոսիկ գիտելով, ոչ օտար ինչ թուես-
ցի մեզ նմանութիւն կաթսային որով Յերե-
միաս և Յեզեկիել առաջի առնեն զկրուսա-
ղէմ [2]։ Օր և երկոքին մարգարէքս ի քահա-
նայից էին՝ սովորեալք տեսանել զերազումն
մոգ զոհիցն. այն զի վեհ և մեծ համարէին զ-
գործս ամենայն որ ի պաշտօն Աստուծոյ էր և
ի պահպանութիւն օրինաց նորա։ Այլ երկ-
րորդ անգամ, որպէս ի վեր անդր յուցաք՝ ազ
նուականաց ամենեցուն էր յայնժամ անձամբ
վաստակել, և ինքնին գործել զկարևորսն ա-
մենայն ի կեանս։ Այնպ առ Յովելի [3] արքայն
մեծ Աքաաբեան իւրովի փողոտ զգառինն՝
որոց արիւնն հաստատութիւն լինելոց էր ուխ-

1 Ղևտ. Ա. 11, եւ։ ա թագ. Բ. 13։

2 Երեմ. Ա. 13։ Եզեկ. ԻԴ. 3, 4. եւ։

3 Եղիսկ. Գ։

տին ընդ Տրովադիս. և Թագաւորին Լեստրի կամելով զոհս մատուցանել Պետրոսայ, որդիքն զհնուն զպատարագն, և նոքա յօշեալ խորովէն զայն [1]։ Իսկ ինն գիրք Հոմերականք օրինակօքս, ոչ միայն պաշտամանց կրօնից, այլ և՝ ի բազում այլ դէպս, որպէս յընդունել Աքիլլեայ զհրեշտակն զորս յղեալ էին առնա գլխաւորք Յունաց [2]։

Այլոր ինչ միանգամ պատուիրեալ էր օրէնսն յաղագս հանգամանաց զոհից և յաղագս ընտակի պատարագաց, սահմանեալ էին առ՝ ի բաց դարձուցանել զ՝սրայելացիս՝ ի մնա պաշտօնէութենց, ՚ի սուղ արարողութիւնս ամ փոփելով զնոսին՝ քան թէ նորս՝ ի վերայ յաւելով։ Պատքէն բազում յոյժ էին արարողութիւնք պաշտամանց զոհից հեթանոսաց, և բազում աղգս կենդանեաց զոհէին, և՝ ի բազում յոյժ տեղիս. քանզի ընդ ամենայն տեղիս տաճար էր նոցա և սեղան, և՝ ի տունս իւրաքանչիւր էին թերափք և պաշտամունք առանձինն [3]։ Այսին իրի անդուստ՝ ի հեռուստ յարդարեր Աստուած զժողովուրդ իւր՝ ի բառնալ զարիւնահեղ պատարագս, ազդելով նոցա յաՀամ՝ ի ձեռն մարգարէից թէ չէ կարօտ զոհից նոցա, և զի այնորիկ ոչ զկարեւոր մասն կազմէին կրօնիցն, և թէ պաշտօն հաճոյագոյն

[1] Ոգիս. Բ։ Ա. ԺՇ։
[2] Տէրտուղ. ՚ի Մարկ. [3] Երոդ. Բ. ՃԱ։

նմա աղօթքն էին և զարձ սրտի [1]։

Պարտ էր քահանային ամուսնանալ, զի քահանայութիւն անկ էր ցեղին Ղեւարոնի. բայց զամենայն ժամանակս պաշտամանն կային մեկուսի՝ ի կանանց իւրեանց, և ոչ ըմպէին գինի և զամենայն ըմպելի արբեցուցիչ [2]։

Հանգոյն էին ժուժկալութիւնս և առ կուսապարիշտս էր տեսանել մանաւանդ առ Դիպտացիան. և քուրմք նոցա առ չարկանելոց զանձամբք հանդերձս մեռելոտիս և ապականացուս՝ կտաւ զգեստուին, և ագանէին կօշիկս պղտուեայ։ Իսրայէլացւոցն քահանայք բոկոտն՝ ի պաշտաման կային, բայց և նոքա կտաւիս զգեստուին [3], զի արգելեալ իսկ էր նոցա զգեստուլ ասուիս. և յերանելն իւրեանց ընդ դուռն սրահին ներքնոյ յարտաքին սրահն կամ՝ ի գաւթի անդր առ ժողովուրդն՝ մերկանային վաղ վաղակի զպատմուճանս իւրեանց։ Քահանայք և Ղեւտացիք հովուական վարիչն կեանս զսիբելին նահապետաց, և ոչ գոյին նոցա այլստացուածք բաց՝ ի խաշանց. զի ոչ՝ ի թիւս մտին նոքա՝ ի բաժանել զվիճակս երկրին, որպէս զի զատուցեալք՝ ի սպառ՝ ի ժամանակեայ հոգոց՝ ժամառուցն առաւել և պարապել յիրս կրօնից։ Վակայն ոչ ինչ նուազ էին նոցա մեծու-

1 ա Թագ. ԻԿ. 22։ Սաղմ. դանօր։
Խթ. 8. ԱՆ։ Եսայ. ԽՉ. 3։
Երեմ. Ի. 12. և Հերոն. ան

2 Ղեւտ. Ի. 3։
3 Եզեկ. ԽԴ. 17։

Թիւնք ՚ի տալ ժողովրդեանն անխափան առնոսա զՀրամայեալն յօրինաց. զի Թէպէտ և սակաւաւոր էր ցեղնոցա, այլ յամենայն պըտղոց երկրի զոր ժողովէին երկոտասան ցեղքն՝ առնուին տասանորդս, որով առաւելոյր բազին նոցա քան զամենեցունն։ Այլ և ամենայն անդրանիկք անասնոց՝ նոցա էին, Թող զսեպհական անդեայտնոցա և զոր ըստ օրէնսուէրան, ուստի կերակրէին քահանայք յաւուրս յորս պաշտէին զսեղանն։

Այս ոչ միայն ՚ի քաղաքական գործառնութեանց գտանեմ արգելեալ նոցա. զի զնուիրեալսն որպէս զայլս, և քահանայք ՚ի բանակին և արտաքոյ զիողն Հարկանէին ՚. քանզի արծաթի փողովք ազգ առնէին զտունս, և խմբէին զժողովուրդն յաղօթս հաստարակաց. զի և առնուէն իսկ յոբելենի ածանցի յեղջերէ խոյոյ՝ զոր Հարկանէին ազգ առնել զսկիղբն։ Այս ամենայն ազգք ՚ի հնուէն բաց Հայգիպտացւոց՝ փողով ազգ առնէին զժամն աղօթից ՚, զի զանգակք յետոյ մուծան։

Տօնք Իսրայէլացւոց էին աւուրք շաբաթուց, և առաջնին աւուրք ամսոյ՝ ամնագլուխ կամ ամնամուտ կոչեցեալ ՚ի մերումն Թարգմանութեան, և կաղանդ ՚ի լատինացւոցն, և այլ երեքին աշխարհախոսմբ տօնք՝ պասեքին,

[1] ՚ի Օրէնք. Ի: ՚ի Մինաց. ՀՂ. Պատերազմ. Ե: ԺԳ. 12: Թիւ. Ա: Յովսեպ. [2] ՚ի Թագ. Ը. Պաք. Ա. Ջ, Թ:

պենտեկոստէի և տաղաւարահարաց, սահմանեալք 'ի յիշատակ երից մեծամեծ բարեբարուվեանցն Աստուծոյ առ նոսա. զելսն ածեմ յԱգիպտոսէ, զՀրատարակուվին օրինաց, և զմտանել յերկիրն աւետեաց՝ յետ Ճանապարհորդելոց նոցա ընդ անապատն, ուր ընդ այնչափ երկար ժամանակս'ի տաղաւարս բնակեցան։ Ո՛չ հանդիսից տօնս կատարէին աւուրս եօթն, 'ի յիշատակ՝ որպես կարծելի է՝ եօթն օրեայ արարչութեան[1]։

Այլ բոլորեր յերկոտասան ամսոց, և ամիսք յերեսուն աւուրց՝ գրեթէ որպէս զմերն, զոր նոյնպէս գտանեմք սահմանեալ անդստին 'ի ժամանակաց Նոյի, որպէս յայտ է 'ի թուականութենէ ջրհեղեղի ջուրցն. բայց թուի թէ 'ի հասարակածէ աշնայնոյն սկսանէր յայն ժամ տարին։ Իսկ Մովսէսի հրամայեցաւ սկսանել 'ի գարնան[2] Ա՛բիբ ամսոյ յորում զպասեքն առնէին. և ըստ սմանէ ապա կարգեցան այլ ամիսքն, որք և ըստ թուոյ աւուրց ևեթ նշանակին առանց անուանց։ Համեմատին իմն նոքին Հռովմայեցւոցն ամսոց ըստ նախնի ոճոյ հաշուելոց զամսն՝ սկսանելով 'ի մարտէ. որով ուղերորդ ամիսն հանդիպէր ընդ հոկտեմբերի գրեթ ըստ մասնէ, և իններորդն ընդ նոյեմբերի. ըստ այսմ և զայլոցն իմս։ Ո՛չ ամիս հաշուէին ըստ լուսնոյ՝ մանաւանդ 'ի

[1] Ղևտ. ԻԳ։ թիւք. ԻՐ. 29։ [2] Եզք ժԲ. 2։

յետին ժամանակս, ոչ ըստ աստղաբաշխութեան օրինաց, այլ ըստ երևմանն յօրէն յոյժ պաշտօնեայք սահմանեալք ի նոյն հրատարակէին զնուագդ լսանել, որ էր օրն զհետ եկեալ երևմանն։

Ա՛ւուրք տօնիցն Խորայելացւոց արդեամբք իսկ տօնք խնդութեան էին և ուրախութեան։ Ա՛նենեցուն պարտ էր յայրուսաղէմ գտանել յերիս մեծահանդէս տօնսն՝ պասեքին, պենտեկոստէի, և տաղաւարահարաց, յորս օրէն էր և կանանց ելանել անդր. վասն որոյ և կարի մեծախոսեմք էր ժողովն այն, զգեցեալ իւրաքանչիւր զփառաւորագոյն զիւր հանդերձս և զզարդս։ Խնդայր ամենայն ոք ի տեսանել զաղգականս իւր և զբարեկամս։ Ա՛նդ առաջի ամենեցուն մատչէին աղօթք և զոհք երգովք նուագարանաց. զկնի ապա սկիզբն լինէր խնջոյից ի մեծի տաճարին՝ ուտելով ամենեցուն ի խաղաղական զոհիցն։ Ա՛յս օրինաց իսկ պատուիրեալ էր ուրախ լինել և զսգ ընդ հովւորականին խնդալ և մարինաւորապէս։

Ա՛յսան որոյ ընդ այն չէ պարտ զարմանալ՝ զի այնպէս քաղցր էր նոցա լսել զմերձենալ աւուրց տօնիցն, և զի այնպէս վաղվաղէին ի տուն տեառն և երանիս կարդային որոյ ի գաւիթս տան տեառն բնակեալ իցեն զամենայն աւուրս իւրեանց. և կամ զի զՀանապարհն խուժք կազմեալ երթային ցնծու-

Թեամբ երդուիլ և նուագարանօք. և կամ դարձեալ զի եղուկս կարդային անձանց յորժամ չէր նոցա Թոյլ երթալ անդր. որպէս և լաց իսկ Պաւիլի բազում անգամ՝ի վտարանդուԹեան իւրում՝ ։

****

ՅՕԳՈՒՄՆ ՆՕԹՆԵՒՏՄՆԵՐՈՐԴ

Պահք նոցա և ուխտադրուԹիւնք ։

Ի ՅՈՒՐՔ պահոց նոցա՝ի սպառ հակառակք էին տօնական աւուրցն. զի զսգոյ աւուրց զաղէտս զոր՝ի վեր անդր յուցաք՝ զանձամբ բեբեին առ հասարակ, որպէս զի ոչ ինչ խոտոր եր ընդ պահս նոցա և ընդ սուգ ։ Ի պայմանիք պահոց ոչ անագանեին և ևԹէ եր ժամ կերակրոցն, այլ և ապգի ապգի վշտօք նեղել զանձինս ։ Ո՛չ տիւն ողջոյն չըմպէին ջուր և չառնուին կերակուր, որպէս նովիմբ կարգօք գնան ցայսօր ոչ Հրեայք միայն՝ այլ և մահմետականք՝ նմանող նոցին լինելով, և նախնի քրիստոնէից ։ Ի տեին՝ի լուսաԹեան՝ քուրձ և մոխիր՝ի ներքոյ տարածեալ և զայլ ամենայն հաւաստիս ցաւոց յուցանէին յանձինս[1] ։ Որ-

1 Սաղմ. ՃԻԱ։ ՁԳ։ Ե. 2 Նայ. ԾՐ. 5։ Ֆ Թագ. այ. ԻԹ. 30։ Սաղմ. ԽԱ. ԻԱ. 12։ Յովէլ. Ռ. 15, 16։ 5։ խՌ։

պէս զտօնիցն ասացաք , փողովք ազդ առնէին և զաւուրս պահոց . յայնժամ առնային ժողովուրդն ի տաճարն ժողովեր Յերուսաղէմ, իսկ յայլ քաղաքս ի հրապարակս ընթանային : Ընդ յընթերցումն մատուցեալ զգիրս օրինացն, որ ի նոսա ծերք էին ևարգոյք յորդորէին զժողովուրդն ի միտ առնուլ զմեղս իւրեանց և ապաշաւել ի չարեացն : Ելէին հարսանիքս յաւուրն յայնոսիկ , և հրաժարէին աղք ի կանանց իւրեանց :

Օ մի օր ևեթ հրամայեալ էր օրինացն պահել, զտօնն քաւութեան յամենայնն եօթնեւորդի ի տան ամսոյն [1] . այլ յաւուրց անտի Օաքարիայ մարգարէի և այլ կրկին պահք յիշատակին, ի հինգերորդում ամենեան և ի տասներորդում [2] : Յաւ արտաքոյ օրինացն սըրբ էին պահս յորժամ հասարակաց ինչ վիշտ հասանէր նոցա , որպէս վասն սովոյն տառապանաց՝ զորմէ խօսի Յովել. և կամ դարձեալ յաւանդին նեղութենէն , որպէս Պաւթի պահքն վասն մանկանն ի մեղս ծնեալոյ, և վասն մահուն Աբենների [3] , և յայլ դէպս ի սաղմոսն յիշատակեալ [4] . Թող և զկամաւոր պահս ըստ եռանդան առ ի ընծայ զուխտս :

Վանգն յոյժ երկիւղածք էին Իսրայելա-

1 Ղևտ. ԻԶ: ԻԸ : 4 Սաղմ. ԼԴ. 12 , 13: ԿԸ. 11, 12:
2 Զաքար. Ը. 19 :
3 Բ Թագ. ԻԲ. 16: Գ. 35:

ցիք ՚ի կատարումն ուխտից իւրեանց և երդմանցն։ Պլակէն կարի իսկ խիստ է օրինակն Ցեփթայեայ ՚ի պահել զուխտն. և Ցեսու զերդումն իւր առ Գաբաւնացիս, թէպէտ և ըստ խաբէութեան նոցա արարեալ՝ այլ զի ՚ի տեր Պատուած Իսրայէլի երդուեալ էր՝ պահեաց [1]։ Իսկ Սաւուղ կամեցաւ սպանանել զՅովնաթան զորդի իւր վասն ստունգանելոյ նորա հրամանին զոր երդմամբ տուեալ էր [2], թէպէտ և Յովնաթան անգիտութեամբ յանցեաւ։ Օ՛ սոցին նման օրինակս տեսանեմք և այլսըւր, զի զգուշանային յոյժ ՚ի կատարումն յայտնի խոստմանցն՝ չիշխեալ երբեք մեկնել զայնոսիկ։ Հանգէս իմն կրօնից էր երդնուլ յանուն Պատուծոյ [3], և այն իսկ որշէր գՒսրայէլացիս ՚ի հեթանոսաց որք երդնուին յանուն աստուածոց սոց. զոր և զկարևոր և զբինաւոր երդմանցն է իմանալ, որպէս որք ՚ի դատաստանի առնին։

Պայմանք ուխտից նոցա էին մատուցանել Պատուծոյ յընչից իւրեանց յողջակէզ կամ ՚ի պահեստ [4]. որով և կուռեցան իսկ այն ամենայն մեծութիւնք գանձուց սողոմոնեան տաճարին, յորում բաց յընծայիցն Վաւրէթ էին և նուէրք Սամուէլի, Բենեհադայ և

1 Դատ. ԺԱ. 35։ Ցեսու. Թ. 19։
2 ա թագ. ԺԴ. 17։
3 ե Օրէնք. Զ. 13։ Ժ. 20։ Սաղմ. ԿԲ. 12։
4 Ղեւտ. ԺԷ։

Յովաբու[1]։ Օ այս ամենայն ընծայիւքն մա-
նաւանդ յաւարէ թշնամեացն։ Այլ հեթա-
նոսք ևս զկնի յաղթութեանցն, և ի բազում
յայլ դէպս ընծայս առնէին մեհենաց իւրեանց. յորոյ հաստատութիւն շատ է յի-
շատակել ինձ զԱզիզեան տաճարն, և զգանձս
զոր ետ տանել անդր Աբեսոս առ ընդունելոյն
զՀաճոյն ի նմանէ զԵրաման պատասխանւոյ[2]։

Երևելագոյն յուխտս նոցա նաղովրացւոցն
էր, որ զպարտս յանձն առնուին հրաժարել ի
գինւոյ առ ժամանակ մի, և յամենայն արբե-
ցուցիչ ըմպելեաց. չգերծուլ գՏէրս, և զգու-
շանալ խնամով յամենայն օրինական պղծու-
թեանց, մանաւանդ ի մերձենալոյ ի դի մե-
ռեալ[3]։ Ոմանք թէ և գլխաւոր ուխտք կար-
գի Ռեքաբեանց այսոքիկ էին։ Հայր կարգի
սոցա եհաց Յովնադաբ որդի Ռեքաբայ՝ յա-
ւուրս Եհուայ արքային Իսրայէլի, և Յղնսէի
մարգարէի։ Ըրգել նա որդւոց իւրոց մի ըմ-
պել գինի, և մի շինել տունս, մի սերմանս սեր-
մանել, և մի գնել անդս, և չունկել այգիս[4]։
Ոչ ան որոյ վրանօք բնակէին, խաչնադար-
մանք լինելով՝ որպէս է կարծել, ըստ նմա-
նութեան Կաւատացւոց, գնախանձ բերեալ յա-
մենայնի զՀովուական կենաց նահապետացն։

1 ա Մնաց. ժ. 28։
2 Երոդ. Ա։
3 Թիւք. ջ։
4 ի Թագ. ժ. 15։ Երեմ. Լե. 6։

Ամանաքի էին, և անդրժելի կալան զուխան յաղգատոհմի իւրեանց ընդ ամն հարիւր և ութսուն. զի ոչ էյայտ եթէ զինի գերւոյն զի՛ եղև նոցա։

ՅՕԴՈՒՔՆ ՈՒԹԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Մարգարէք Իսրայէլի։

Յայ, ինն ազգ ուխտաւորաց և հրաշափառագոյն՝ մարգարէքն էին։ Խազուա յոյժ էր թէ նոցա անդստին՝ի ժամանակաց Ամուէլի, և վկայ այսմ խոսմբ պարուց նոցա որոց դիպաւ Աւուղ զի մարգարէանային՝ի ձայն Թմբկաց և քնարից՝ յափշտակեալք՝ի Հոգւոյն Աստուծոյ. և դարձեալ, դաս եկեղեցւոյն մարգարէից մարգարէացելոց առաջի Ամուէլի, որոյ արդեօք աշակերտք իսկ էին՝։ Նայց ոչ երբէք այնպէս յամ՛ախեաց թէ նոցա որպէս՝ի ժամանակին որ Յղիայէ և Յղիսէէ մինչև՝ի գերութիւնն Բաբելացւոց։ Հեռացեալք յաչխարհէ, և ծանուցեալք տարազու զգեստուցն և քաղաքավարութեան, ՚ի լերինս բնակիչն, որպէս Յղիա և Յղիսէէ՝ի գլուխ լերինն Կարմելոյ՝ և՝ի Գաղգաղա[2]։ Կինն մեծատուն առ որում

[1] ՚ի Թագ. ժ. 5։ ժթ. 20։ [2] Ջ Թագ. Գ. 10։

ագաւ Յղիսկէ յանցանէըն ՚ի Սոփիա, ա-
բար նմա վերնատուն մի հանդերձ կարևոր
կահիւքն, որպէս այլուր ասացի, յորում այսպէս
առանձնացեալ կեայր, զի և ընդ հիւրընկալ
տիկնոջն ՚ի ձեռն պատանեկին Աւետեայ խօ-
սէր. և ՚ի գալ կնոջն ազատել զնա յարուցա-
նել զորդի իւր՝ զթողոյր նմա Աւետի մեռե-
նալ յոտս մարգարէին. և յորժամ Աւետ-
ման սպարապետ զօրուն Ասորւոց ելին առ նա
սրբել ՚ի բորոտութենէն՝ յղեաց Յղիսկէ հրեշ-
տակս առանց երևելոյ նմա[1]։

Յերկու այլ աբանէլիք մարգարէիս յայտ առ-
նեն զի միաբան ՚ի միասին կային աշակերտք
նորա. այն որ ՚ի սան եփոցին զորոյ բուժեաց
զգառնութիւն, և այն որ ՚ի գարեղէն նկա-
նական զորս ածեցոյց[2]։ Առքին յայտ առնեն
գարձեալ և զսակաւապիտութիւն նոցա ՚ի կե-
րակուրս։ Ասի մարգարէիցն որ բնակէին միա-
բան ՚ի միասին՝ հասանէր մինչև ՚ի Յարիւր։
Ասատակէին ձեռօք իւրեանց. և զի նեղ էր
տեղին բնակութեան նոցա՝ չոգան ինքեանք
Յարկանել փայտ և շինել այլ տեղի. և այսպէս
աղքատք էին, զի ուրուն ՚ի նոցանէ յանօթ
առեալ էր զտապարն։ Ամբակումայ յափշտա-
կութիւնն ՚ի հրեշտակէն՝ ածել Աւանիելի
զՀաշն զոր պատրաստեալ էր նորա տանել

1 Ջ Թագ. Ի.Ի։ 2 Ասդ. Ե. 9։ ա Թագ. ԼԲ. 43։

յանդ մշակաց իւրոց՝ ցուցանէ դարձեալ զանպատճառ և զաշխատասէր կեանս մարգարէից[1]։

Հանդերձ նոցա խարազն էր կամ քուրձ, հանդերձ սգոյ և ցաւոց. յայտ իմն այնու առնելով զհեծել և զողալ իւրեանց ցանգ՝ի վերայ մեղաց համարէն ժողովրդեան։ Ըստ այսմ նկարագրի Եղիա՝ այր թաւարծի, գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր ածեալ[2]։ Եղիսէս՝ի պատուիրել տեառն Յասայեայ մերկանալ զհանդերձան, ասէ ցնա. "Ի բաց հան զքուրձդ՝ի միջոյ քումմէ"[3]։ Եւ մարգարէքն մեծք երկոքին վկայքն՝ի Յայտնութեան քուրձ զանձամբ յանդիման լինին[4]։

Կանամբի էին գեղեմ ոմանք՝ի մարգարէից. և այրեն այն զորոյ աձեցոյց Եղիսէե զիւրն՝ մի եր յայրիացեալ կանանց մարգարէից[5]։ Թոբիթ Թէ և որդիք նոցա նոցին հետեւէին պաշտամանն. այնու զի բազում անգամ զմարգարէսն որդիս մարգարէից կոչեն գիրք. յորմէ և ասեն Եվսեբիոս, "Ես ոչ մարգարէ էի և ոչ որդի մարգարէի, այլ հովիւ էի"[6], յայտ առնէ զի ոչ՝ի պաշտամանէ մարգարէանայր, այլ աստուածահրաւէր կոչմամբ. զի Թէպէտ և որոց զմարգարէի կեանս յանձն առեալ էր՝ նոքօք յոլովակի յայտներ Աստուած զկամս իւր, այլ

1 Դան. ԺԴ. 32։
2 Ի Թագ. Ա. 8։
3 Եսայ. Ի. 2։
4 Յայտ. ԺԱ. 3։
5 Ի Թագ. Գ. 1։
6 Ամովս. Է. 14։

ոչ էր սահմանեալ կայանել այլոց։

Սակայն սովորաբար զայնոսիկ ևեթ ի մարգարէս ունէին՝ որք զվարս մարգարէից քեռիին յանձինս. վասն որոյ գիրք Դաւթի, Սողոմոնի և Դանիէլի ոչ ի մի դումարեցան ընդ այլոց մարգարէական գրոց. քանզի Դաւիթ և Սողոմոն թագաւորք էին՝ ի փափկութեան և ի փառս կեցեալք. իսկ Դանիէլ նախարար էր և նա յարքունիս կալով և յաղմուկս աշխարհի[1]։

Սոքա են աւագորեացն սուրբ որ պահեցին զառ ի նահապետաց ընկալեալ զանապակ աւանդութիւն Հնմարիտ կրօնիցն։ Պարապէին հանապազ ի խոկումն օրինաց տեառն, և յաղաչել զնա զայդ և զերեկ վասն անձանց և վասն այլոց, նահատակեալք յամենայն տեսակս առաքինութեանց։ Կրթէին աշակերտս, ուսուցանէին նոցա զգօրութիւն օրինացն, մեկնէին զբարձրապատում քարոզութիւնսն որ յաղագս հանդերձեալ եկեղեցւոյն Քրիստոսի՝ երկրաւորիս և երկնաւորիս, զծածկեալսն յայնժամ զգալի և նուաստ օրինակօք։ Խրատէին նոյնպէս զժողովուրդն որ գայր առ նոսա զաւուրս շաբաթուց և զտօնից[2]. յանդիմանէին զնոսա վասն մեղաց և յորդորէին յապաշխարութիւն, և պատմէին նոցա յաստուածակոյս կողմանէ որ ինչ անցանելոց

[1] Սիրաք. խթ. 11, 12։ [2] Ի Թագ. Դ. 23։

եր ընդ նոսա։ Ընդերկիւղ համարձակութիւն նոցա ի բարբառել առ Թագաւորս զդժպհի Աշմարտութիւնս՝ առեալ առնէր զնոսա, մինչև բազմաց զրաւել և ի կենաց։

Սակայն էին և բազում սուտ մարգարէք ի կերպարանս նոցա, որ խարազնազգեացք իբրև զնոսա լինելով և հանգոյն նոցա բարբառելով՝ աստուածազգացիկս քարոզէին զանձինս[1], այլ ջանային զըղձալիս ժողովրդեան և իշխանաց մարգարէանալ միշտ։ Այն աստուածոց ստոց մարգարէք, որպէս ուղի հարիւր և յիսունքն զորս ետ սպանանել Յեղիա[2]։ Այսպիսիք ոմանք էին և իղձք Յունաց Անտիոս առաջնեալք ի նոցանէ. որպէս Կաղքաս և Տիբեսիաս յաւուրս դիւցազանց։ Այսպիսիք էին և որք զպատգամն տային ի դից, կամ վաչառէին. և զարձեալ քերթողք իբր աստուածարեալք ոմանք բանաստեղծելով։ Ոչ ի ոչ առ քերթողաբանել ինչ զայնպիսիս բարբառէին, այլ առ ի հաւատացուցանել զայնոսիկ այլոց։ Այս արդարև սոքա մարգարէք ստուածեան՝ կամ դիւաց զօրութեամբ և կամ մարդկեղէն արուեստիւ յաւիւն մոլեգնութեան վառեալք՝ նորանշան ինչ յօդէին զնաօսն ի նմանութիւն զգալի կրիցն, զոր Հոգին Աստուծոյ ներգործէր ի Աշմարիտ մարգարէս։ Արդ փորձութիւն սաստիկ էր Իսրայէլացւոց՝

[1] Զաք. ԺԳ. 4։ [2] Ի Թագ. ԻԸ. 40։

որ գայթ 'ի գայթի կային յառաքինութեան՝ 'ի հարցանել զիղձս զայսոսիկ և զՀմայս . որ և այս մի էր 'ի մասանց կառապաշտութեան յոր զառածան զամենայն ժամանակս զորմէ բուռն հարեալ էր մեր պատմել :

ՅՕԳՈՒԻՆ ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՒՊ

Կառապաշտութիւն նոցա :

'Լ ՈՐԱՆՉԱՆ իմն թուի մեզ և յոյժ անտեղի՝ յօժարութիւն բարուցն Իսրայէլացւոց 'ի գէպ ցապաշտութիւն . որով և առաւել իմն հաւանիմք ընդ թանձրամտութիւն նոցա և ընդ անբանութիւն : Ոչ զոր արդ տեսանեմք կռապարիչս . 'ի լոյ ևեթ գիտեմք թէ գեռ ևս գուցեն 'ի Հնգիկս և յայլ հեռաւոր աշխարհս : Այլ ամենայն ազգք և ազինք որ զմեօք, և հերեսիովտք և Հրեայք և մահմետականք ոչ այլ ինչ քարոզեն՝ բայց զմի Աստուած ամենակալ, և կանայք անգամ խօթամիտք, և գեղջուկք տգէտք զՀմարտութիւնս զայս գաւանեն . նմին իրի 'ի վերայ ածեմք, զի որ զբազմաստուածութիւն քարոզէին՝ զիայտ և զբաւ 'ի պաշտօն առեալ, այսպիսիքն հարկ է թէ բրտագոյնք էին քան զամենայն ազգս , և խժդժագոյնք : Վակայն անմարթ է խուժս և

տգէտս կոչել զՀոռոմն, զՅոյնս, զԵգիպտացիս, զՍորիս, և զամենայն ազգս նախնիս որ գաստիարակ եղեն մեզ ամենայն արուեստից և մարդկեղէն գիտութեանց և քաղաքականութեան. և չէ մարթ զլանալ՝ զի՛ վերայ նոցա ամենեցուն բռնացաւ առհասարակ կռապաշտութիւն՛ի ժամանակի՝ յորում յայլ ամենայն իրս ձարտարք էին և բարգաւաճեալք։ Ոչ ասն որոյ արժան է զտեղի առնուլ առ վայր մի, և քննել և իմանալ զպատճառս աղետիցն։

Ի մեղանչել մարդոյն՝ այնպէս խաւարեցան միտք նորա, զի՛ ի սահման ապականեալ բնութեն զկայ առեալ՝ ոչ ինչ՛ի հոգևորացն նկատել կարող է. զմարմնաւորեալսն ևեթ յածին խորհուրդք նորա և գնիւթականսք, և զամենայն որ չանկանի ընդ զգայութեամբ՝ ոչ ինչ համարի. այն ևեթ հաստատուն թուի նմա՝ որ ընդ կարի թանձր զգայութիւնն հարկանի, ընդ ձաշակելին և ընդ շօշափելիս։ Յայսմանէ զայս յայն արկանեմք՛ի տղայս, և՛ի մոլեալս զհետ ցանկութեանց. զի զերևելեացն ևեթ և զզգալեացն փոյթ է նոցա, և այլն ամենայն ցնորք թուին նոցա, թէպէտ և՛ի չնմանիսն կրօնս մնեալք լցեն և յաստուածգիտութեան և՛ի հաւատս յարութեան մեռելոց և հանդերձեալ յաւիտենից։ Իսկ զի՞նչ խորհել մարթէին հեթանոսք որոց և ոչ՛ի լուր ան-

գամ Հասեալ էր այսպիսի ինչ. առ որս և կալ
ըի իմաստունքն ղզգալեաց ևեթ և զնիւթա-
կանաց Ճառս արկանէին նոցա ։ Իսնեթերիը
որչափ և կամք իցեն զՀոմերոս զքաջ աս-
տուածաբանն և զհրաշալի մարգարէն Յու-
նաց. չգտանիցես և բառ մի գուշնաքեայ առ
գուշակելոյ թէ զհոգևորս ինչ զմտաւ ածէր
և զիմանալիս ։

Լ՚Այսպէս ամենայն իմաստութիւն նոցա
ձգէր ՚ի մարմին և ՚ի զգայութիւնս ։ Հրա-
հանգք մարմնոյ և ամենայն մերկակաիւ կըր-
թութիւնք նոցա՝ այնպէս մեծ և կարևոր հա-
մարեալ առ նոսա՝ կարգեալ էին ՚ի պահել և
յառաւելուլ զառողջութիւն, զկորով, զջո-
ղակութիւն և զգեղ, որք և ՚ի ծայրն հասին
արուեստիցս այսոցիկ ։ Վարձեալ և ՚ի նկար-
չութիւն, ՚ի քանդակ և ՚ի Ճարտարապետու-
թիւն որ զայս պարարէն՝ այնպէս յաջողեցան
նոքա, զի տունք նոցա և քաղաքք և հանդերձն
աշխարհն լի էր գեղեցիկ ձեռակերտօք, որ-
պէս ՚ի ստորագրութեանցն Պաւսանիայ է
ուսանել ։ Այսպէս երևելի կացին և յերա-
ժըշտութեան. և թէպէտ քերթուածքն ՚ի
վերոյ քան զզգայութիւնքս գոգցես զմիտս
առեալ տանիցի, այլ ոչ անդր քան զերևակայ-
ութիւն ասպարէզ է նմա. որում՝ գարձեալ
նոյն պատկերք իրաց առաջի կան և նոյն գործք։
Ընդհանուր նոցա և կանոնք վարուց և կալի իսկ

հինաւանդք՝ի զգալիս առ հասարակ բերին. որպէս այն՝ զի քաջ մշակեալ իցեն անդք, և զի առն իւրաքանչիւր գուցեն ստացուածք առ բարեկենդանութիւն, և զքաջառողջս և զբազմածինս հարսն աճել՝ և բարեօք զորդիսն դաստիարակել, որպէս զի պնդակազմք իցեն մարմնով և քաջք՝ի պատերազմ. և զի ամենայն ոք անընդոստ յապահովի իցէ՝ի թշնամեաց, և՝ի չարաց քաղաքացոց։

Իսկ զառաքինութենէ հոգւոյ չխորհէին իսկ. այլ և ընտրակաքք նմա լինէին առ կատարելոց զմարմինն։ Պաքէն յայտնի ընդդէմ պարկեշտութեան էր մերկանդամ երևել մանկտւոյն՝ի հրահանգս խաղուցն՝ի տեսիլ ամենեցուն. սակայն առ ոչինչ գրեին զայս, և՝ի Լակեդեմոն աղջկունք անգամ՝ի նոյն կրթէին։ Ի նաւակատիս էր զանդրիս և զնկարս հոլանեալս անվերարկուս յամենայն տեսակս մերկութեանց և՝ի կարի ամօթալիսն յանդիմանել՝ի փողոցս և ամենայն ուրեք. ահագին էր վտանգն, մանաւանդ նկարչաց և քանդակագործաց որ՝ի նախատիպս իրացն ձեռնակերտէին. այլ ոչինչ փոյթ էր՝ առ՝ի յագուրդ բերկրութեան աչաց. վասն որոյ և յայտ ամենեցուն էյոր անամօթութիւն հասին Յոյնք սովիմբք գեղեցիկ կարգօք։ Ի կարի գարշանառակութիւնք ոչ միայն անարգել գործէին առ նոսա, այլ և՝ի պատուի էին։ Իսկ ե-

բաժշտութիւն և քերթութիւն ոչ միայն զնո-
սին զախտն արծարծանէին, այլ և հուր ան-
շէջ նախանձու և թշնամութեան վառէին ՚ի
մէջ նոցին քերթողաց, դերասանից և հանդի-
սականաց. և անհնարին երգիծանութեամբ
և ծաղրու նշաւակէին անդ յաձախ բազումք ՚ի
մարդկանէ։ Այլ ընդ այս ամենայն ոչ ուրեք
փոյթ էր, զբաղցրութիւն երգոյն և եղե խօս-
դրելով, և զզուարճութիւն տեսարանաց։

Այսպէս այսոցիկ էին և կրօնք նոցա. զի ՚ի
զգալիս առ հասարակ սահմանեալ՝ ապակա-
նէին մանաւանդ զբարս՝ քան թէ ուղղութեան
պատճառք լինէին։ Այլ այս ամենայն չարիք
՚ի ներքս մտին ՚ի մոռանալոյ մարդոյն զանձն
իւր և զընութիւնն հոգեղէն. զի թէպէտ և
յամենայն ազգս աւանդութիւն էր անյեղլի
թէ գոյ էակ իմն գերագոյն քան զմարդ՝ կա-
րող բարերարել նմա և առնել չար, այլ նիւ-
թականացս և եղե տեսութեամբ՝ և զգերագոյն
աստուածեղէն բնութիւնն մարմնաւոր հա-
մարէին. նմին իրի և բազում աստուածս գը-
նէին, զի յամենայն տեղիս իցեն, և չիցէ ազգ
կամ քաղաք կամ տուն անմասն ՚ի նոցանէ։

Երբև անմահս ՚ի մարդկանէ վարկուցեալ
զնոսա, յամենայն ազգի ազգի հեշտութիւնս՝
մինչև ՚ի կարի իսկ ամօթալիսն համարէին յօ-
րանալ նոցա առ երանութիւն, զոր առանց այ-
նոցիկ անհնար կարծէին. որով և համարձա-

կելլի էր Նոցա ըստ օրինակի աստուածոյն օրէն Համարել զախտս իւրեանց ։ Այլ ոչ էր բաւական սահմանել զնոսա յերկինս կամ՝ի վերայ երկրի, այլ Հարկ էր և տեսանել զնոսա և չափել. նմին իրի պաշտելին զկուռս՝ որպէս Թէ՝ի նոսա էին աստուածքն և միաւորեալք ընդ նոսա. և այնչափ յօժարագոյնս ևս մեծարէին զանդրիսն զայնոսիկ՝ որչափ առաւել գեղեցիկ էին և հինք կամ արգոյք իւիք քան զայլս ։

Պաշտօն Նոցա ըստ Հաւատոյն էր՝ սահմանեալ յերկուս կիրս, ՚ի սէր Հաճոյից, և յերկիւղ զգալի չարեաց ։ Օրհնք Նոցա ընդ երգս և ընդ կաքաւս կցորդեալ ՚ի ինջոյս յանդիէն Պատակերգութիւն Նոցա և ողբերգութիւն ՚ի իրախունս կՁոց այգեաց ՚ի պատիւ Պխոնեսեայ սկիզբն կալան ։ Պղիմպիական խաղքն և մեծահամբաւ գուսպարդիւր մրցութիւնք Նոցա կատարէին դարձեալ՚ի պաշտօն դից. Նա աւանիկ և Համօրէն տեսարանք Յլլադայ պաշտամունք իմն կրօնից էին, և ՚ի բարեպաշտութիւն առ Նոսա Համարէր ՚ի զնին կալ և կարի իսկ սիրձ կատակերգութեանցն Քրիստոփանեայ ։ Պան որոյ պարապումն Նոցա մեծ ՚ի ժամանակի խաղաղութեան՝ նոքին դիցանըւեր մրցութիւնքն էին և քերթուածք. և բազում այն էր զի և ՚ի ժամանակի պատերազմաց՝ այսոցիկ առաւել սիէպ կային, և վասն

1 Խնաս. ԺԳ. 10։ 2 Նդ. ԺԹ. 27։

սոցին առաւել ինչս ծախեին քան վանն պա-
տերազմաց [1]։

Ա՛յսն որոյ ոչ յուղղուԹիւն վարուց էին
կրօնք նոցա իբրև զՀնմարիտ կրօնս։ Ա՛ուրբ
կոչէր [2] որ չէր մարդասպան կամ գաւաձան
կամ երդմնազանց, և որ խորչէրն յորոց զայն-
պիսին գործէին, և պահպանէր զօրէնս ասպրն-
ջականուԹեան և ապաստանի, և կատարէր
զուխտս իւր, և տայր ինչս վանն զոհից և Թա-
տերց։ Ե՛ահավաճառ իմն համարեալ էին
կրօնք [3]· պատարագս մատուցանէին դից առ
'ի ջՀայցուածոն ընդունելոյ, և պղծուԹիւն
ոչ ինչ խափան էր այնմ։ Ա՛պուլէոս [4] յետ անա-
մնԹ նշաւակուԹեանցն որովք ելից զայլակեր-
պուԹեան գիրս իւր, իբրև հնիք բանիցն զե-
ռանդն իւր նկարագրէ և զիոյԹ 'ի նուիրուճն
աղգի աղգի պաշտամանցն, և յերկիւղած պահ-
պանուԹիւն ամենայն արարողուԹեանց։ Ա՛յ
միայն չգատապարտէին կրօնք նոցա զգեղեցու-
Թիւն, այլ և զնի և հրամայէին։ Պարտ էր ար-
բենալ 'ի քաջ կատարումն սպանդարամատա-
կան տօնիցն· և ոչ սակաւք 'ի կանանց 'ի պըղ-
ծուԹիւնս մատնէին զանձինս 'ի պատիւ մե-
ծարանաց Ա՛ստղկանն, մանաւանդ 'ի Ա՛որնԹոս։
Հայտնի է ամենայն ումեք ո՛ր էր աստուածն

1 Ցերտուղ· յղ· Ցեսար։ Օգոստ· յղ· Քաղ· Բ։ Դե-
մոսթ· փիլիպ· Ե։

2 Օգոստ· յղ· Ձշմ· կրօն։

3 Պղատ· Ըստիւփրոն։

4 Ապուլ· Ա։

բուրաստանաց, և որպիսի ինչ էին խորհուրդքն Գեմատրեայ, և Կիւբեղեայ [1]։

Ասպէս պաշտէին առ նոսա դիք՝ օգնիչք և բարերարք կարդացեալք ի նոցանէ։ Ոսկ առ ի հաշտ առնել զդիս սանդարամետականս զԱկատ, զՅամենեանս, զՊարկայս այլովքն հանդերձ, որոց վէպք առասպելապատումք աբ հաւիրս արկանէին ի նոսա, գիշերային զոհից պէտք էին և սոսկալի և խժական պաշտամանց [2], մերթ կենդանւոյն զմարդիկ թաղել և մերթ զենուլ զմանկունս՝ և երբեմն և զոր դիս իւրեանց, հանգոյն երկրպագուացն Մողոքայ՝ զոր յաձախ դատապարտեն գիրք, որ և մինչև յաւուրս Տերտուղիանոսի տակաւին նոյն պղծութիւնք գործէին Քրիստոնէից [3]։

Նոյն երկիւղ և արհաւիրք էին պատճառք և ամենայն արիւնաուշտ և գժնդակ սնոտի պաշտամանցն՝ ցտեղոյ զանձինս սրով և գեղարդեամբ մինչև ցհեղուճն արեան [4] իբրև զմարգարէսն Նահաղոս և զքուրմն Կիւբեղեայ, պահելոյ պահս, և լուանալոյ ի ջուր ցուրտ [5], և որ այլ ևս սոցին սակի իրք։ Ոմիմբք կարծէին հեռի առնել յանձանց իւրաքանչիւր զարհածս, և զտառապանս յաշխարհէն՝ սպառնացեալս նոցա ի պատգամաց, յերազոց կամ

1 Սորաբ. Ե։ կղեմ. ալ։
2 Խմաստ. ԺԴ. 23։
3 Տերտուղ. Պատասխ։
4 Ջ Թագ. ԺԸ. 28։
5 « Եւ զայգ պահոց զոր քարոզես
Նա մերկ կացցէ ի Տիբեր».
Ովս. Ե. երգիծ. Գ։

'ի նշանագործութեանց որպէս և կամք էին մեկնել կիւսից։ Ա.յսոքիկ ըստ կարծելոյ նոցա էին դեղ դարմանոյ ընդդէմ հիւանդութեանց, սրածութեան, կարկտի և անպտղութեան։ Օ'ի և լաւ իսկ թուէր յայնպիսի դէպս առնել և զաւելորդս՝ առ'ի չքաղցել ինչ'ի կարևորաց։ Ա.յհնայն սկզբանէ ինքն նոցա և սրբութիւնք 'ի յանցանաց՝ ըստ այսոցիկ դժնդակ սնապաշտութեանց էին, հաստատեալք 'ի լուացումն մարմնոյ 'ի ջուր և 'ի հուր, և 'ի մատուցումն զոհից. իսկ զապաշաւանաց կամ զդառնալոյ 'ի չարեաց, և ոչ քանիք լինին։

Ա.յերևս զարմացի ոք զի ազգ իբրև զՀոյս իմաստուն յայսպիսի թանձր անմտութիւնս հատաւ, և այնպէս դիւրաբար զառածաւ 'ի բանս ախտարաց, հմայից, կիւսից, և կամ հանդոյն սոցին ազգի ազգի կախարդաց. բայց մինչև 'ի ժամանակս Ա.ղեքսանդրի և Թագաւորութեան Ա.ակեդոնացւոց չէ երևնոցա զարգացեալ յոյժ 'ի գիտութիւնս՝ որ բժշկել կարէին զնոսա 'ի խօթամտութեանց աստի։ Ա.յլևս եւս ելին չարաչեստս, իմաստունք օրինաց նոցա, և յամենայնի որ հեշտին և քաղցր գործել ըզկենցաղս՝ կատարեալք. այլ գեղ ևս անձաշակք էին տեսական գիտութեանց, երկրաչափութեան ասեմ, և աստղաբաշխութեան և բնաբանութեան։ Գիտութիւն հանգամանաց հերձելոյ զմարմնիս, տնկաբանութիւն, խոշ

և ինդիր հրահալից, և արփայոց երևութեանց, ձև երկրի, ընթացք աստեղաց, և կարգաւորութիւն տիեզերացս առ հասարակ, խորհուրդք ծածկեալք էին առ նոսա: Այլ որ սակաւիկ մի՝ ի վերայ հասեալ էին իբացա՝ Քաղդեացիք և Եգիպտացիք, իբրև գաղտնիս իմն պահէին զայն, առակաւ և ակն զնոցանէ խօսելով, բազում բաջաղանս և առասպել՝ի նոսին խառնեալ:

Այլ քանզի գիտութիւնքս այսոքիկ առ՝ի փորձոյ ունին զյառաջադիմութիւն, դարուց՝ի դարս բարգաւաճեն. որով և՝ի մեծ զարգացումն հասին զարդիս քան զամենայն ժամանակս: Հրապարակաւ արդ ուսուցանեն զայսոսիկ որոց կամին. որք և գեղեցիկ յոյժ միաբանին սրբութեան կրօնից մերոց որ հերքէ զամենայն մնասակըտութիւնս, զմայութիւնս, և զամենայն մոգութիւն: Սակայն գեռ ևս բազումք են որ ունին մատուցանեն սխտաբաց և ազգի ազգի մոլորեցուցչաց, ոչ միայն չինականք և տգէտք՝ի խառնաղանձամբոխն, այլ և՝ի կանանց պանծացեալք՝ի հանճար իբեանց և՝ի քաղաքականութիւն և՝ի գիտութիւն. սիրա և յարանց իսկ մնեալք՝ի գիտութիւնս բարգաւաճագոյն մասին աշխարհի՝ որ հպարտացեալ ծիծաղին զայլովք, և չանսան և վկայութեան ձշմարիտ կրօնից:

Այլ զինչ ապա պարտ իցէ ասել յորժամ այս

ամենայն աղամարութիւնք զկրօնս սահմանեին, յորժամ կիւսք որպէս արդարև աստուածածարեալս ոմանս համարէին, և աստեղաբանութիւն, հրահմայութիւն, մեռելահարցութիւն հանդերձ այլովքն՝ աստուածային գիտութիւնք համբաւէին։ Որպէս մարթէր հաւկառակ կալ վկայութեան քրմաց և մարգարէիցն գաղչելեաց, որ անժպիտք բազում հաւաստիս տային վարդապետութեան իւրեանց, և որոց ազգք և ազինք զհետ երթային առանց ինչ ընդ բանս ածելոյ։ Հարկ լինի երկնոցա բանիցն հաւատալ, ցորչափ անգիտելի էր նոցա թէ զինարդ բնութեամբ իրքն գործէին, և ցորչափ գիտողացն իսկ արիութեան մեծի պէտք էին առ՝ի զհակառակն խօսել։

Այսպա ուրեմն ոչ Իսրայէլացիք ևեթ յօժարագոյնք էին՝ի հաւապաշտութիւն, այլ հասարակաց էր ջարն. և ոչ յայն սակս ամենայն ուրեք խստասիրտս կոչէն զնոսա գիրք՝ զի առաջել քան զայլ ազգս մոլեալ էին՝ի զգալիս, այլ զի ոչ ինչ խտիր էր ընդ նոսա և ընդ սոսա յետ այնչափ ընդունելութեան չնորհաց, և տեսանելոյ զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ։ Վասնզի և հզօր զօրութեան պէտք էին առ՝ի կարող լինել ընդդէմ կալ օրինակի ամենայն ազգաց։ Յորժամ Իսրայէլացի ոք տարագիր՝ի հայրենեաց՝ի մէջ անհաւատիցն գտանէր, տեսեալ նոցա զնա՝ զի ոչ զհոս մնատուցանէր,

և կոց երկիր ոչ պագանէր, ամբաստանէին զնա անդէն յանկրծութիւն. իսկ իբրև զ'ա-տուծոյ իւրմէ պատմէր սա՝ զարարչէն երկնի և երկրի, ծաղր առնէին զնա, հարցանելով Թէ ո՞ւր է աստուածն քո: Վ'ժուարին էր յաղթել Թէնամանացն. որպէս զի և Վ'ասւիէն ինքնին վկայէ զիարդ'ի վտարանդութեան իւրումն տասուքն լինէին նմա կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի, այն զի ասէին ցնա զօրհնասպաղ Թէ ո՞ւր է Վ'աստուած քո': Հալածուածս այս Ձգնէր զառաքինութիւն տկարաց, և բազում անգամ սասանեցուցեալ ընկձէր:

Վ'ա և ընդաբոյս զբօսասիրութիւն զօրաւոր առնէր զմարտն: Վ'պաքէն շքեղ էին տունք հեԹանոսաց և յատակ. և ընդվայրաքնին ցանկութիւն դիւրաաճեալ ձգէր զմանկտին՝ մանաւանդ զաղջկունս, տեսանել զՀանդէսս կամ զԹափօրս, զկարգ Հանդերձանաց զոհիցն, զկաքաւս, զպարս երաժշտաց և զզարդս մեհենաց: Վ'ր զի դիպեալ 'ի տեղւոջն հիւրասէր ոք՝ բռնադատէր զնոսա 'ի ինջոյսն, և ուտել 'ի զոհից կոչէն և օթևանել 'ի տան իւրում. անդ բարեկամութիւն խառնեալ ընդ միմեանս և սէր, վախճանէր 'ի զեղխութիւն և կամայամատնութիւն ընդդէմ օրինացն: Վ'յսպիսի կռապաշտութիւն տակաւ'ի ներքս մտանէր, այր սովորական հրապոյրք համադամք

1 Սաղմ. ԽՂ. 3:

կերակրոց էին և կանայք։ Ընդստին յաւուրց Մովսիսի դատերքն Մովաբու ձգեցին զԽաբայելացիս՝ նուիրել ի գաղէլիսն Ելփեդաւ բայ[1]. և կանայք օտարազգիք մոլորեցուցին զՍողոմոն։

Եւ գարձեալ, մարթ էր ծանր թուել օրինացն Աստուծոյ. զի ոչ էր նոցա հրաման զոհս մատուցանել, բայց միայն ի միում տեղւոջ, և ի ձեռն քահանայից յազգէ Ահարոնի, և ըստ խիստ սահմանեալ կարգաց. և երբեք ևեթ ոմանք մեծամեծք էին նոցա ընդ ամն ողջոյն, պատեքին, պենտեկոստէից և տաղաւարաց Տարաց. որ ասպաքէն սակաւ էին վասն ժողովրդեանն բնակելոյ ի բաբելից աշխարհին որ յորդորէրն ի բերկրանս։ Եւ այլ անդադար յանդս՝ պարապեալք ի վաստակս իւրեանց, ի ոմանս ևեթ դիւրաբար կարէին համախմբել. որով Տարկ իմն էր նոցա զՀեթանոսակացն ոմանս ի կիր առնուլ և կամ նորս սահմանել։ Ոչ ասպաքէն և մեք որ Տոգևորս առնուանեալ եմք, և պարտ իսկ է մեզ լինել այնպիսիս, եթէ արդարև քրիստոնեայ լեցեմք, բազում անգամ մեծ ինչ գրեմք զժառանգութիւն զգալեացս քան զյոյս յաւիտենական բաղեաց, և գոն գործեմք միաբանել ընդ աւետարանին զբազումս ի բերկրութեանց՝ զոր Տակառակս այնմ դատեցին Տարք մեր առ Տա-

[1] Թիւք. ԻԵ։

սարակ, և չգադարեն 'ի բողոքելոյ զնոցանէ ու-
սուցիչք մեր։ Արդարև գարշելիք 'ի կռապաշ-
տութենէ, այլ զի ոչ ևս տեսանեմք զայն, քան-
զի հազարամբ են և աւելիս յորմէ հեռի սպառ-
սպուռն խայտառակեցաւ այն։ Վասն որոյ չէ
արժան խօթամիտս քան զայլ ազգս համարել
զԻսրայելացիս, իբրև զի չհաւանեին նոքա
'ի կռապաշտութենէ 'ի վերայ այնչափ ընդ-
հայն Աստուծոյ. այլ մանաւանդ 'ի միտ առ՝
քանի՞ կարեվէր էին հարուածք առաջինն յան-
ցանացն զի այնչափ ուսուցին և խրատք հան-
դերձ մեծամեծ նշանաւքն չզօրեին 'ի վեր ձգել
զմարդիկ 'ի զգայութենացս։ Արդ անիկ և այլ
ազգք՝ յայլոմ մասին իմաստնագոյնք՝ որպէս
Յոյնք և Եգիպտացիք, առանց հաւատալ
թեան առաւել կոյրք քան զնոսա գտան։

ՅՕԴՈՒԱՆ ՔԱՀԱՆԱՊԱՏ

Քաղաքական պետութիւն նոցա, և ազատութիւն, և տանու-
տէրական իշխանութիւն։

Վ ԱԽՃԱՆԵԱԼ, որ յաղագս կրօնից զբանս՝
ասասցուք սակաւ ինչ և յաղագս քաղաքական
պետութեան Իսրայելացւոց։ Կատարեալ ա-
զատք էին նոքա, մանաւանդ նախ քան զա-
ւուրս Թագաւորաց, զի չգոյին առնոսա Հարկք

կամ հասք և կամ բաժք որսոց երկոց և ձկանց, և այլ ազգի ազգի հարկատուութիւնք՝ յորոց չէն զերծք արդ առ մեզ և իշխանք. նա զի և զթագաւորս տեսանեմք արդ ծառայս և սպասաւորս հարկուս այլոց թագաւորաց, որպէս՝ ի Վերմանիա և ի Յունաստան։ Ապա Խոսրայեւլացիք եթէ վայելէին յազատութիւնն ցանկացեալ՝ ի Յունաց և՝ ի Հռոմոց, և՝ ի նոցա իշխանութեան էր վայելել յայն՝ ի սպառ. զի այն էին կամք Աստուծոյ՝ որպէս է ուսանել՝ ի յանդիմանութենէն Սամուէլի առ նոսա՝ ի խնդրելն նոցա թագաւոր՝ ի նմանէ։ Այսմ յառաջագոյն խեղճանալ էր Վեդէոն. և յորժամ խնդրեցին թագաւորեցուցանել զնա և զորդիս նորա՝ ի վերայ իւրեանց, քաջութեամբ էտ պատասխանի. «Ոչ իշխեցիք ես ձեզ, և ոչ իշխեսցէ ձեզ որդի իմ, այլ տէր իշխեսցէ ձեզ»[1]։

Այսոքան որոյ տէրութիւն նոցա ոչ էր միահեծան, և ոչ դարձեալ ազնուաց կամ ռամկին պետութիւն, այլ Աստուածպետութիւն՝ որպէս կոչէ Յովսեպոս[2]. իբրև զի Աստուած ինքնին առաջնորդէր նոցա օրինօքն զոր ետ նոցա։ Յորչափ հաւատարիմ կային՝ ի նոսին և զգուշանային, և ոչ մի ինչ երկիւղ էր նոցա, և յաղատութեան կային. իսկ յորժամ ստունգանեալ այնոցիկ՝ առնէին զկամս իւրեանց, անդէն վաղվաղակի խռովութիւն հասանէր

1 Դատ. Ը. 23։ 2 Յովսեպ. ընդդէմ Ապիոն։

նոցա և անիշխանութիւն։ Զայս յայտ առնեն գիրք ի նշանակել զպատճառս մեծամեծ ապիրատութեանց նոցա յասելն. «Յաւուրսն յայնոսիկ ոչ գոյր թագաւոր Իսրայելի, և այր իւրաքանչիւր զՀամայոյս առաջի աչաց իւրոց առնէր»։ Անիշխանութիւն քակտէր զնոսա ի միաբանութենէն. որով անկեալ նոցա ի զօրութենէն՝ յաւար մատնէին թշնամեաց, մինչև ի միտս եղեալ՝ աղաղակէին առ Աստուած որ յարուցանէր նոցա փրկիչս։ Այսպէս կեցին նոքա զամենայն աւուրս դատաւորաց. դառնային ընդ ժամանակս ժամանակս ի կուռս և հեստէին օրինացն Աստուծոյ, և ի չփոթս անկեալ և ի ծառայութիւն՝ անդրէն միւսանգամ յառնէին։ Զկնի ապա լաւ համարեցան քան զազատութիւնն՝ առնել իւրեանց թագաւոր, հաւատարիմ կալով յօրէնս Աստուծոյ։

Ի նոցա ազատութիւն ամիփոփեալ յարդար սահմանս իւր, առնել զամենայն՝ որ ինչ ոչ էր արգելեալ յաստուածային օրինացս. և ոչ մի ինչ պարտ էր նոցա առնել քան ի հրամանացն Աստուծոյ, առանց ծառայելոյ կամաց ուրուք ի մարդկանէ։ Նայց իշխանութիւն մեծ էր հարց առնելին ի վերայ ստրկաց և ի վերայ որդւոց իւրեանց։ Զօրէն յայբրայեցւոց ստրուկք ի ծառայութիւն եղբարց իւրեանց. և երկու ինչ իրք յայս պայման հա-

1 Դատ. ԻԱ. 24։ ՌԹ. 1։ 2 Ընդ. Գ. 9. 15, եև։

սուրանէին զնոսա՝ . անանկութիւն՝ որով բըռ-
նադատէին վաճառել զանձինս , և աւազակու-
թիւն՝ յորժամ չգոյր նոցա տուժել զկրկինն [1]:
Ասուի թէ 'ի նմին պատժի կային և այլ պար-
տապանք . որպէս այրին զորոյ առնեցոյց Էլիսէ
զիւղն՝ հատուցանել փոխատուաց զգինան , և
պահել զորդիսն 'ի սարկութենէ [2]: Այլ մարթ
էր Էբրայեցւոց սարկայ 'ի լրանալ վեցերորդ
ամի ծառայութեանն ազատանալ անդրէն յա-
մին եօթներորդի . զոր եթէ յանձն ոչ առնուր-
էն , գարձեալ յիշխանութեան նոցա էր՝ գնել
զինի յիսուն ամաց 'ի թողութեան ամին ա-
զատ լինել , և թափել զորդիսն ևս 'ի սարկու-
թենէ [3]: Պատուիրէին օրէնք քաղցրութեամբ
գնալ ընդ սորուկս , և զօտարազգիսն մանա-
ւանդ ծառայեցուցանել : Յորմէ սաղմոսեր-
գուն 'ի միտ առնումք զնարդ Հնազանդ էին
տեարց սորուկք իւրեանց . "Որպէս աչք ծա-
ռայի 'ի ձեռն տեառն իւրոյ , և որպէս աչք ա-
ղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ , այնպէս են աչք
մեր առ քեզ տէր Աստուած մեր ,, [5]. իբրև զի
բազում անգամ նշանայի հրամայէին տեարքն,
և պարտ էր ծառայից կազմ կալ առ ակնար-
կութիւնս նոցա :

Յիշխանութիւն էր Իսրայէլացւոց 'ի վերայ

1 Ղևտ . Իէ . 39 :
2 Եզք . ԻԲ . 43 :
3 Ջ Թագ . Դ . 1 , 6 :
4 Եզք . ԻԱ . 2 : Ղևտ Իէ . 40 :
5 Սաղմ . ՃԻԲ . 2 :

կենաց և մահու ստրկաց իւրեանց, որպէս և առ Համբրէն ազգս ժամանակին [1]. զի գերել օրէնք պատերազմի էին, լաւ համարեալ ծառայեցուցանել զԹշնամիքան սպանանել։ Եւ մին իրի յիշխանութեան յաղթականին համարէր միշտ՝ բառնալ զկեանս նոցա երբ նոքա անարժան զանձինս առնէին կենաց. և զնոյն իշխանութիւն ունէր նա և ի վերայ կենաց որդւոց նոցա. զի չծնանէին նոքա՝ եթէ ոչ ընդհէր նա հօր նոցա զկեանն. իսկ ի վաճառէն զնոսա յայտ է Թէ և զիշխանութիւնն զայն այլոց տայր։ Եւ հասեալ պատճառք մեծի իշխանութեանն տեարց ի վերայ ստրկաց. բայց ուր ուրեմն զերծանէին նոքա, քանզի և ցանկութիւն շահու տայր խնայել նոցա ի ստրուկսն որ յաճախէին զմեծութիւնն նոցա։ Եւ ինչ իրի պատուէր էր յօրէնսն յայտնել զայր որ հարկանէր զծառայ իւր, Թէպէտ և մեռանէր նմա անտի հասանէր յետ աւուրց մի. վասն զի "Ինչ արծաԹով նորա էն," ասէն նոքին օրէնքն, առ ի յայտ առնել զի և մահ նորա պատուհաս մեծ էր նմա, և արդեօք առ խրատելոյ ևեթ զնա հարկանէր գաւազանաւ։ Եւ յել եթէ ի գանն անդ մեռանէր ծառայն, գոյր խիԹալ Թէ զայն կամէր և տէրն. վասն որոյ և յանցաւոր դատէին զնա օրէնքն,

1 Յուսուէ. Իդ. 20։ 2 Ելք. ԻԱ. 20։ Պարս. Գ.։

մարդասիրագոյն արդարև քան զօրէնս այլոց ազգաց, որ ոչ ինչ խարէին յայսոսիկ։ Ոչ ի ահա ընդ ամն հինգ հարիւր և աւելի իշխանութիւն էր Հռովմայեցւոց մեռուցանել զստրուկս իւրեանց, արկանել՝ի շղթայս զպարտապանս՝ յորժամ չհատուցանէին զպարտսն, և զորդիս և իւրեանց վաճառել երկիցս և երիցս ցորչափ ընդ ձեռամբ իւրեանց կային։ Այլ զայս ամենայն առեալ էր նոցա յիմաստուն օրինացդ երկոտասան տախտակացն զորս ածին Մովսէսդայ յաւուրս դարձին Հրեից՝ի գերութենէ և վերստին կազմելոյ յազգ, իբր հազար ամաք զկնի Սողոմոնի[1]։

Այր իշխանութիւն և Հեբրայեցւոց ըստ հայրական իշխանութեան նոցա՝ի վերայ որդւոց՝ վաճառել զդստերս իւրեանց[2]. բայց ամուսնացուցանել իմն էր այն զդուստրն. զոր և առ Հռովմայեցիս էր տեսանել։ Հանդերձ այսու ամենայնիւ՝ի բանից ինչ Այսայեայ՝ի միտ առնումք՝ զի վաճառէին փոխատուաց զորդիսն. վասն որոյ և յաւուրս Նեեմիայ աղքատացեալքն յընչից վաճառել կամէին զորդիսն առ՝ի հայթայթել զկերանս. և կէսք դարձեալ ողբային զի չգոյր նոցա դրամ առ՝ի գրաւս թափ առնել զորդիս իւրեանց՝ի ծառայութենէ[3]։ Իշխանութիւն էր նոցա՝ի վերայ կե-

1 Սահմ. յղ. որ զևբր կամ զսաար. յօդ. բ։ Սահմ. յղ. Թէ զևարդ դաս. հալբ. յօդ. ջ։
2 Եգք. ԻԱ. 7։
3 Նեեմ. Ե. 5։ Եսայ. Ա։

նաց և մահու որդւոց · զի ասէ իմաստունն · "Խրատեա զորդի քո , զի այնպէս եղիցի քեզ յոյս բարի · բայց մի խորհիցիս 'ի սպանումն նորա ,, [1]: Այլ ոչ էր նոցա հրաման՝ որպէս Հռոբոամ՝ վարել խիստ իշխանութեամբն , և ցուցեալ գանցանսն գատաւորին [2]: Զի յայնժամ եւթեր ներկին այսմ օրէնք՝ յորժամ 'ի կիր արկեալ էր ծնողաց զամենայն խրատս և զկըշտամբանս , և անսասան գտեալ զորդիսն · զի յայնժամ հրաման էր ցուցանել ծերակուտի քաղաքին զնեռութիւն նոցա և զարբշռութիւն , որ և ըստ բանից ծնողացն գատեալ քարկոծէին քարամբք [3]: Այն օրէնք և յիշեցեալ կային [4] , և պատճառք այսմ զի 'ի հարց ունէին որդիք զնեանս . և գարձեալ , զի ոչ էր կարծելի այնչափ անգթանալ հօր՝ մինչև մահու ցանկալ որդւոյն , եթէ ոչ անկղնեսա նայր նա յանհնարին մեծեղեռն ամբարշտութիւն : Սակայն կարևոր էր յայժ երկիւղ այս առ 'ի ցածութեան ունելոյ զորդիսն :

Կարի յայժ զիտոյ առնուսք զարբեացն որ յառաջ եկին , 'ի նուազելոյ իշխանութեան հարց , և մանաւանդ թէ 'ի սպառ բառնալոյ նորին : Որդիք դեռ ևս մանկահասակք , այն ինչ ամուսնացեալք կամ անկարօտք հարց իւ-

[1] Ածաիք · ԻԹ · 18 · որ այլ. ոգի ոմն մեր գիջուին հապուածն :
[2] Լե · Բ :
[3] Ը Օրէնք · ԻԱ · 19 :
[4] Հեղինակը · Ա :

բեանց առ՝ի պահպարել զկեանսն, ընդվզեալ անդէն ոչ ինչ իւիք պարտապան զանձինս համարին ծնողացն, և հաղիւ թէ սակաւիկ մի ակն ածիցեն յերեսաց նոցա։ Այլ վասն այնորիկ անթիւք յաճախեն աղգատոհմք փոքրիկք կամ մարդիկ մենակեացք և կամ տեարք բազումք զուգապատիւք՝ ի միում տան։ Ինքնիշխանք՝ ի մանկութենէ եթէ ընչաւէտք իցեն՝ ի վեղխուվիններս հատեալ կործանին. իսկ եթէ տըղնանկ՝ չըջողք լինին, փառքուսք և ձեռնեբեցք յամենայն ոձիրս ամպարշտութեանց։ Ինքնիշխանութիւն այսպիսի ոչ միայն եղծիչ է բարուց, այլ և մեծամեծ աղէտս՝ ի վերայ ածէ քաղաքաց։ Պատճէն դժուարին յոյժ իցէ առաջնորդել բազմութեան անմիաբանասէր անհամբոյր մարդկան, քան սակաւուց ոմանց տանուտէրց՝ յորոց իւրաքանչիւր ոք երաշխաւորէր բազմութեան ընտանեաց իւրոց, որք և գրեթէ առհասարակ էին ծերք հմուտք օրինաց։

ՅՕԳՈՒՄՆՕ ՔԱՇՆԵՐՈՐԴ ԸՈՒՆՉՆԵՐՈՐԴ

Իշխանութիւն ծերոց։

Ոչ հարց և եթէ, այլ և ծերոց առ հասարակ մեծ էր իշխանութիւն առ Իսրայէլացիս և առ

ամենայն ազգս ի հնումն : Նզդստին ի սկզբանէ յամենայն տեղիս ի ծերունեաց ընտրեին դատաւորք երայ իւրաքանչիւր , և ի նոցանէ խորհրդականք հասարակաց առնէին : Նյս ասի ի Հռովմ սերեցան անուանքն ծերակոյտ և հարք , և ասի մեծարանք ալեաց՝ զոր ի Սպարտացւոցն ուսան : Նյս ոչ ինչ առաւել Հայողագոյն բնութես . զի մանկտին դիպողագոյն է ի շարժել և ի գործել . իսկ ուսուցանել , խորհուրդ տալ , հրամայել , այն ծերութեան է գործ : " Ջարդ երիտասարդաց զօրութիւն , ասաց իմաստունն , և փառք ծերոց ալիք ,, [1] : Դժուարին է զի երիտասարդ ուսումն և հանճար զծերին լցցէ զփորձոյ . իսկ ծեր եթէ ողջամիտ իցէ՝ փորձով լոկով իմաստուն է : Մ կայ են համարձակ Հառաջ պատմութեանց , զի ի պետութիւնս նոքին գտան ընտիրք՝ որոց ծերք կացին առաջնորդք . և չուառացան թագաւորութիւնք վարեալք ի մանկտոյն . վասն որոյ " Մ այ քեզ քաղաք , ասաց իմաստունն , որոյ թագաւոր քո մանուկ է ,, [2] . և զսոյն զայս սպառնայ Նստուած Հրեից յասելն Նսայեայ , " Նյս կացուցից ի վերայ նոցա մանկտիս իշխանս ,, [3] . քանզի և չիք մանկան համբերութիւն և ոչ նախատե-

1 Առակ . Ի . 29 . ԽԲ . ի Ջէր . Ա , " Ջարդ երիտասարդաց իմաստութիւն " :
2 Ժող . Ժ . 16 :
3 Եսայ . Գ . 4 :

սուքիւն. Թշնամի է կարգաց, զբօսանուլ ևեթ խնդրէ, և փոփոխութեանց է ցանկացող։

Ա՛յն ինչ սկսան Իսրայէլացիք կազմել յազգ և՛ի ժողովուրդ, ծերք կացին նոցա առաջ նորգ։ Յակեալ Մովսիսի Յեդիպտոս՝ ազատուքիւն խոստանալ նոցա յաստուածակոչս կոչմանէ, զծերակոյտն ժողովէ, և առաջի նոցա նշանս առնէ՛ի հաւատարմութիւն առաքելութեան իւրոյ[1]։ Ծերքն Իսրայէլի զբնայինն յընթերսին զոր տայր Մովսէս Յեթորայ աներոջ իւրոյ[2]։ Իբրև կամեցաւ Յստուած խորհրդականս տալ նմա՛ի նպաստ մեծի ազաջնորդութեանն, պատուէր ետ և ասէ. "Ժողովեա դու ինձ եօթանասուն այր՛ի ծերոցն Իսրայէլի, զոր դու գիտես եթէ նոքա իցեն ծերագոյնք ժողովրդեանն՝ և ընտիրք նոցա"[3]։ Ա՛յս ուրեմն և նախ քան զօրինացն տուչութիւն, և զկարգել պետութեանն՝ եր նոցա իշխանութիւն։ Ա՛ւ յայլ ամենայն տեղիս գրոց յորժամ ժողովոյ բանք լինիցին, և կամ գիրք աշխարհին, ծերք նախ յիշատակին. մանաւանդ թէ բազում ուրեք նոքա միայն անուանին։

Յայս առեալ ինձ և զսաղմոսացն ասել. "Խարձր արարէք զՅստուած՛ի ժողովս ժողովրդոց, և յաթոռս ծերոց"[4]. կամ որ նոյն

[1] Ելք. Դ. 29։
[2] Ած. ԺԸ. 12։
[3] Թիւք. ԺԱ. 16։
[4] Սաղմ. ՃԺ. 32։

*է, յատեանս խորհրդոց։ Ի սոցանէ յերկո-
ցունց կազմէին ՚ի հնումն համօրէն հասարա-
կապետութիւնք. ՚ի ժողովոյ՝ որ եկեղեցի
կամ ἐκκλησία յորջորջի ՚ի Յունաց, և concio
՚ի Լատինացւոց, և ՚ի ծերակուտէն։ Յետ
ժամանակաց ծերոյ անուն ընդ մեծարանաց
անուանս համարեցաւ. զոր յոյնն πρέσβυς ասէ,
որ է երէց, և լատինն senior որ Թարգմանի
ծերագոյն կամ ծերունի։ Ի մանկաի կոչելոյ
գրոց զիարատուս որոց անսացն Ասորւոցմ՝ ՚ի
միտ առնուլ է, Թէ որ հասակ խնդրէր առ
Հրեայս առ ՚ի համարել ընդ ծերս[1]։ Օ՛ի
ասի անդ զնոցանէ Թէ մինդակիցք Ասորւոց-
մու էին, որով և հասակակիցք արդեօք նմին.
արդ Ասորւոցմ յայնժամ զքառասնամեայսիւք
ուրեմն էր։*

ՅՕԴՈՒՄՆ ՎՈՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

*Ազեան դատաստանաց նոցա։ — Դուռն, և նշանակութիւն
բառիս ՚ի սուրբ գիրս։*

*Երկուս ազգ պաշտօնէիցն էին ՚ի գատել
զգատաստանս նոցա, սոփեռիմ և սոտե-
բիմ. և ՚ի սոցանէ կարգեալ էին յամենայն
քաղաքս ըստ հրամանացն Աստուծոյ առ Մովսէ

[1] Ա Թագ. ԺԲ. 8։ Բ Մնաց. ԺԲ. 13։

սէս։ Յայտնի է՝ զի սովէտիճն դատաւոր լսի. բայց զսոտերիճն պլ ազգ իմանայ լատին թարգմանութիւն աստուածաշունչ գրոց. սակայն Հրէայք ի տուչութենէ առեալ մեզ նեն զայն՝ պաշտօնեայ արգարութեան, որպէս սի են դահիճք, զինուորք, վաղակաւորք և պլ հրամանակատարք դատաւորին. և իխանութիւնքս այսոքիկ՝ի Վ լատացիս յանձն էին՝ որոց թիւ համարոյ առ Վ՝աւթիւ հասաներ ցվեց հազար։ Ի սոցանէ դատաւորս կացոյց Յովսափատ յամենայն քաղաքս Յուդայ, և ասէ դեաց նոցա զգեղեցիկ խրատս՝։ Յաւելու գիրն՝ եթէ և յերուսաղէմ կացոյց՝ի քահանայից և՝ի Վ լատացւոց և՝ի հայրապետաց Իսրայէլի դատել զդատն մեծամեծս. և սա այս էր ատեան եօթանասնուն ծերոցն՝ կարգեալ՝ի Մովսիսէ, յորում գահագլուխ բազմէր քահանայապետն մեծ, և յայս ատեան անձին ամենայն դատաստանք ղորս դժուարին էր վճռել դատաւորաց փոքրիկ քաղաքացն[2]։ Ասանդութիւն է առ Հրէայս՝ թէ քսան և երեք դատաւորք էին իւրաքանչիւր քաղաքի, և պարտ էր նոցա ամենեցունն՝ի միասին խմբել՝ յորժամ զգատաստան մահու դատէին. իսկ՝ի լսել զգրամոց վէձն և կամ զայլ թեթև ինչ իրաց դատս՝ երեք՝ի նոցանէ չատ էին[3]։

[1] ՚ Օրէնք · ԺԲ · 8։ ՅԷս · Մնաց · ԻԹ · 5, 11։ Գ · 2։ ՚ Օրէնք · ԼԹ · 10։ ա 2 ՚ Օրէնք · ԻԷ · 8։ Մնաց · ԻԲ · 29։ ԻԹ · 4։ ՚ 3 Մատեան Անհեդ. գլ. ա։

Ա՛ռաջին ամենայն դատաւորաց էր Թագաւորն, ըստ ասելոյ Ժողովրդեան առ Սամուէլ, «Կացո՛ ի վերայ մեր Թագաւոր դատել զմեզ»[1]։

Ի դուռն քաղաքին Ժողովէին դատաւորք լսել զդատս. քանզի Հողագործ գոլով Իսրայէլացւոց, որ վաղայարոյց ընդ այգն էր Թալին յագարակս՝ ի գործ իւրեանց և դառնային ընդ երեկս, ՚ի դուռն քաղաքին առաւելագոյնս հանդիպէին միմեանց քան այլուր։ Ա՛յլ դու մի զարմանար ընդ այն՝ Թէ զնարդ յանդս վաստակելով ՚ի քաղաքի բնակէին. զի ոչ իբրև զքաղաքամայրս մեր էին քաղաքք նոցա, յորոց ՚ի հայթայթանս կարևորաց՝ հազիւ բաւէն քան և երեսուն փարսախաց դաշտք լայնածաւալք շուրջ զաշխարհաւն. այլ բնակութիք էին երկրագործաց ըստ պիտոյից ընդարձակութեան մեծաւոր անդոյն. նմին իրի մարդաշատ յոյժ գոլով աշխարհն՝ յոքնաթիւ էին և քաղաք։ Ի սահմանս ցեղին Յուդայ ևեթ յորժամ եմուտ նա անդր բնակել՝ հարիւր և հնգետասան քաղաք էին[2]. Թող զանոս իւրաքանչիւր քաղաքաց, և դարձեալ զքաղաքն որ զկնի շինեցան։ Յորմէ յայտ է Թէ անձուկ էին և մօտաւորք միմեանց՝ որպէս աւանք մեծամեծք պարսպապատք և ամուրք, բերելով զամենայն հանգամանս շինից։

[1] ա Թագ. Ը. 8։ [2] Յես. ԺԵ. 21, ԼԶ։

Հանգոյն ինն և առ Յոյնս և առ Հռոմն, քանզի վաճառականք էին առհասարակ, շուկայն և հրապարակն էր ժամադիր տեղի նոցա: Ու նախնեաք մերովք ժողովէին ստրուկք ի գաւթիս բերդից տերանց իւրեանց. և վասն այն առ արևմտեան պղինս արքունիքն գաւիթ* կոչին: Յարևելս քանզի թագաւորք գժուարամատոյց ևս էն՝ ի դուռն ապարանից նոցա վճարին իրք ամենայն. և որպէս ե տեսանել քաղաքում ուրեք ի գիրս Հայթերայ, անդրըստին ի ժամանակաց թագաւորացն Պարսից՝ արքունիքն առ դրան ապարանիցն էին[1]:

Յաւուրց անտի Ներքահամու ամենայն իրք հասարակաց և իւրաքանչիւր՝ ի դուռն քաղաքին կատարէին: Ու ի լու ամենեցուն որ մտանէին ընդ դուռն Երբռնի գնեաց Ներքահամ զչերիմն[2]: Համովը և Աիւքեմ որդի նորա, որոց յաճախտակեալ եր զՀինոմ, ի դուռն քաղաքին եկին խօսել առ ժողովուրդն գնել ուխտս ընդ Իսրայելացիս[3]: Ի Հռութայ գիրս մանրապատում յայն արկանեմք զօրինակ հանդիպի ուխտի դաշանցս[4]: Ի կամել Նոոսայ առնուլ կին զՀռութ, հնարս հնարեցաւ զի որում ուժք վասն առաւել ազգակցութեանն անկ եր նա հնուիեան՝ հրաժարեալ նմա թո-

* Ջի այն խոչ է cour փոշ. դէաբեն, և corte իտալերէն:

1 Եսթ. Բ. 19, 21: Գ. 2, 3:

2 Ծնն. ԻԳ. 10, 18:

3 Ընդ. Լ. 20:

4 Հռութ. Դ:

ղուցու զկարգն. վասն այսր անց նստաւ 'ի դուռն Ղեղհէմի. և իբրև ետես անցանել ընդ այն զմերձաւորն, նստոյց և զնա անդէն. զկնի ապա էառ տասն այր 'ի ծերոց քաղաքին, և իբրև բազմեցան և նոքա՝ առաջի արար նոցա զիրսն, և կալաւ զՀաւատնուէիւն մերձաւորին՝ զոր խնդրէրն՝ ըստ պայմանաց նշանակելոց յօրէնսն, որ էր բռնկանալ զկօշիկս։ Վ կայ կուէաց նա եղելոցն ոչ միայն զծերսն, այլ և զժողովուրդն ամենայն. որով յայտնի լինի՝ զի բազում այլ ամբոխ մարդկան անդր ժողովեալ էին, զկայ առեալ 'ի զնին իրացն զտեղեաւն՝ որպէս բերէ բանիս կարգ ասել՝ յանցանելն ընդ այն։ Վասն զի և մեծ ինչ իրք տագնապեցուցիչք ոչ գոյին նոցա. այն զի և առնելոյն ծանօթ միմեանց էին և աղգակիցք, և 'ի դէպ իսկ էր նոցա զգուշ իրերաց խնդրել։

Թերևս զգաշինս զայսոսիկ և 'ի գիր արձանացուցանէին. բայց աստուածեղէն մատեանք 'ի Տովբիթայ գիրս ևեթ և 'ի Մարգարէութիւնս Յրեմիայ՝ սուղ ինչ կանխագոյն քան զաւերն Յրուսաղէմի՝ յիշէն խոստումն հաստատեալ մուրհակօք վասն փոխատուութեան արձանագրի[1], վասն ամուսնութեան և վասն պաշտատականի, և դարձեալ մուրհակ իմն վասն գնելոյ զագարակն Ղնաթովթայ[2]։

[1] Տոբ. Ա. 19։ Ժ. 16։ Ը. 44։ [2] Երեմ. ԼԲ. 10։

Ի Մովսիսի օրէնսն և այլ պատուէր վասն մուրհակաց կամ յետկարի քան զ'ի գրոյ ապա հարզանի '. այլ թէպէտ և գիր ոչ առնէին յառաջին ժամանակս յայնոսիկ , անլուծանելի էին դաշինք նոցա՝ յայտնի գոլով ամենեցուն : Պաքէն առ Համօրէն քնահիչս Ներքինէմի յանդիմանելի լիներ մերձաւորն Յոսեպ իբրև ուխտադրուժ ոք , եթէ իշխեր երբեք ժխտել կամ յետս դարձուցանել զխոստումն իւր . զի կէաք 'ի նոցանէ առընթեր իսկ գտան յորժամ խոստացաւն , և այլք իսկ և իսկ լուան զայն :

Այս Հռովմայեցիք ընդ բազում ժամանակս անգիր վճարէին զմանաւոր դաշինս , որպէս երևի այս յանուանել անգիր դաշանցն՝ որ Stipulatio կոչեր առ նոսա : Ոչ զանգիտէին թէ թերի իցէ 'ի հաստատութենէ խոստումն՝ հռչակաւ 'ի քաղաքամիջի առաջի ժողովրդեան արարեալ ըստ սահմանելոց բառիցն , վկայ կոչելով զբարեհամբաւեալսն և զընտիր ընտիրս 'ի քաղաքացոց իւրեանց : Պաքէն հաստատագոյն և էին այսմիսի դաշինք քան զգրս արդ առնին 'ի տունս իւրաքանչիւր առաջի նօտարի , որ և բազում անգամ չէանայ զդաշնագիրս . և կամ դարձեալ առաջի միոյ ուրուք 'ի նօտարաց գիւղիցն՝ հայթայթեալ վկայս երկուս անծանօթս իրացն :

1 ի Օրէնք . ԻԲ . 1 :

Պուռն առ Հրեայս Հանդոյն իմն հրապա-
րակաց և շուկայից Հռոմոյն էր։ Ընդ լինելին
վաճառք մրգաց. ի վաղիւն ասաց Աղխսկէ [1],
անարգագոյն գնով վաճառեսցին ուտեստք ի
դուռն Սամարիայ։ Պոյր հրապարակ առ դը-
րանն ընդարձակ. զի անդր ժողովեաց Աքաաբ
զչորեքարիւր մարգարէսն ամօթոյ [2]։ Զոր
ինձ զի և յայլ ամենայն քաղաքադրունս նոյն-
պէս հրապարակք գոյին. և դարձեալ ապա-
րանք իմն մերձ ի դուռն՝ ուր աթոռք դատա-
ւորաց և ծերոցն էին. զի գրեալ կայ՝ Թէ
Ելոս ի դուռնն էլ և նստաւ անդ. և Թէ
իբրև լուաւ Պաւխէ զմահ Քիսողոմայ, ի
վերնատունն դրանն էլ լալ անդ [3]։ Զհերևս ի
վերնատանս յայսմիկ լինելին և խորհուրդք։
Ի տաճարին իսկ Հրուսաղէմ ի միում ի դը-
րանցն զվէիւս տային, և անդ խմբէին դա-
տաւորք [4]։ Ընդ այսքան օրինակս առաջի ու-
նելով, ոչ ևս զարմանալ պարտ է Թէ ընդէր
յաձախ գիրք փոխանակ անուանցս ատեան
կամ տուն խորհրդոյ, կամ քաղաք իսկ և պե-
տութիւն, դուռն ասիցին. և կամ վասն էր
յաւետարանն դրունք դժոխոց զթագաւո-
րութիւն և զտէրութիւն սատանայի յայտ
առնիցին։

Ասացք Թէպետ և պարզք Թուին դատաս-

1 Գ Թագ. Ի. 1։
2 Գ Թագ. ԻԲ. 10։
3 Բ Թագ. ԺԸ. 33։
4 Երեմ. ԻԶ. 10։

տանք Իսրայելացւոց, մի՛ ոք կարծեսցէ թէ չը-
լինէին և՛ի նոսա նենգութիւնք, խորամանկ-
կութիւնք, հարցփորձք տարապարտք և զըր-
պարտութիւնք։ Ինանջպէտք են այս ամե-
նայն աղէտք յապականեալ բնութենէն. և ոչ
չափ առաւել է՛ի մարդն հանճար և զօրու-
թիւն, նոյնչափ և առաւել յայսոսիկ ածեալ
ձգի. բայց սեպհական և են անօրէնութիւնքս
մեծամեծ քաղաքաց։ Դաւիթ՛ի փախչել անդ
իւրում Աբեսաղէմէ յերեսաց Աբիսողմայ՝
առաջի առնէ որպէս անօրէնութիւն և հա-
կառակութիւն չարչ գայր զպարսպօք նորա՛ի
տուէ և՛ի գիշերի՛. և որպէս չարիք և մեղք
՛ի մէջ նորա, և վաշխ և նենգութիւն՛ի հրա-
պարակս նորա։ Ի՛ն և այլովք նոյնպիսի
պարսաւանօք բանք մարգարէից. սակայն չա-
հողագոյն է կարծել թէ ոչ այնպէս յաձախեալ
էին՛ի նոսա անօրէնութիւնքս որպէս առ մեզ-
քանզի և սակաւք էին՛ի դատս և յատենական
իրս պարապեալք։

Այլ քանզի պետք և առաջնորդ ժամանա-
կեայ իրաց և կրճնից աստուածատուր օրէնքն
էին, չգոյին առ նոսա այլ և այլ ատեանք։ Դա-
տաւորք յիրս խղճի մտաց՝ նոքին վճիռս տայ-
ին և յաշխարհական ատեանս կենաց և մա-
հու. վանն որոյ և ոչ ազգի ազգի իշխանու-
թեանց և պաշտօնէից պետք էին առ նոսա,

1 Սաղմ. ԾԺ. 10։

Հնուաղ երկոյժ Թիւնոցա առ Մերովքեա՝ Վանզի արդ ամօթ ինն համարի ի միջի մերում սոսկական ոմն լինել, և չունել այլ տեսչութիւն կամ գործ քան զվերակացութիւն իւրաքանչիւր ընտից և տան։ Մեռնելոյն պետութեան ցանկան և պատուոյ և յառաջամանութեան և ազատութեան։ Որպէս արուեստ ինն որ զպետս կենաց մատակարարիցէ՝ այնպէս համարեալ են արդ իշխանութիւնք, կամ որպէս զքոյ անուանս՝ որք երևելի առնեն զմարդիկ։ Վասն եթէ որ քաջ քննիցէ՝ զինչ իցեն իշխանութիւնք և տեսչութիւնք, և ոչ այն տիրապէս կամ կարևոր գործ նոցա, տեսցէ զի սակաւք ոմանք բաւական են այնոցիկ, պարապ ևս գտեալ միտ դնել առանձին գործոց իւրեանց։

Եւ այսպէս առնելոյն յամենայն ազգն առաջինս, մանաւանդ Հրեայսդ։ Զի Յեսուայ քահանայի աւագութիւնս անուանեալ գտանեմ[1], Ծեքենիմ՝ այս ինքն է ծերս կամ աստենականս, ռասիմ՝ իշխանս, սոփետիմ՝ դատաւորս, և սոտերիմ հրամանակատարս[2]։ Զի Դաւթիւ ի պերճ աւուրս թագաւորութեանն՝ ահա այսպիսի ինչ էին իշխանութիւնքն

1 Յես. Խդ։

2 Ըստ Թարգմանութեան Հրեայական բառիցն Եղած պնդանութիւնս. զի ի մերոնս ասի. ուշադրութիւն կոչեաց Յեսուս զամենայն ծերսն Իսրայէլի և զիշխանս նոցա, և զդատաւորս նոցա։ Ցես Ն ղոր ի վեր անդր ասաց մաքենաթիրս յաղագս սոսկ բիմ բառին, որ նոյնպէս այլազգի Թարգմանել կոյ ի լաթինն։

յիշատակեալք ՚ի գիրս ՚. Պ Լատացիք վեց հազարք, դատաւորք և հրամանակատարք, ցեղապետք, տանուտեարք (որ մեծարանաց անուանք են քան թէ իշխանութիւն), հազարապետք և հարիւրապետք, իշխանք օրամտիցն կամ գործաւորացն արքունի անգոց և անգեայց [2]։ Պետ և իշխան իմանամ աստ զոր եբրայականն սատիմ կոչէ. բայց և զայս պարտ և պատշաճ է յուշ առնել միանգամ՝ թէ անհնար է զչքոյ և զիշխանութեանց անուանս յեղուլ յայլ լեզու. վասն որոյ ոչ Յունացին և ոչ Լատինացւոց թարգմանութիւնք ձշգրիտ ինչ կերպարանս առաջի առնեն մեզ զիշխանութեանցն Վաղդեացւոց՝ որ յիշին ՚ի Դանիէլ մարգարէ և յայլ գիրս [3]։

Յիշեանս Դաւթի ՚ի համար արկանիմ և ներքինիք [4], կամ թէ ասելներքին պաշտօնեայք. զի ՚ի գիրս ներքինին յաձախ զանհնեկապանն ակնարկէ և կամ զորս զթագաւորաւն կան պաշտել զնա առանց ինչ խեղութեան յանդամանս։ Կանք լինին այլուր և զիմնապետաց ոմանց, բայց զտանձապետի անուն յօրինսն միայն ընթեռնումք [5]։ Պաքէն յոլովագոյնք յիշեանս թեանցս յայսցանէ զինուորականք են, և խուն

1 ա Մնաց. Ի Գ. 4։ 4 Ք Թագ. Է. 9։ Եսայ. Բ. 3։
2 Ընդ. ԻԼ. 1։ 5 ԵՀԷ. ԺԼ. 25։
3 Դան. Գ. 3։ Եզեկ. ԻԳ. 23։

ինչ են քաղաքականք առ բազմութեամբ ժողովրդեանն և առ ընդարձակութեամբ թագաւորութեանն Դաւթի։

ՅՕԴՈՒԱՆՕ ՔԱՀԱՆԱՊԵՏԻՈՒ ԵՐԻՒՐԻ

Յաղագս պատերազմին Նոցա։

Յետ դատաստանաց անկ է և յաղագս պատերազմաց անցանել բանիւ։ Յիմնային այր Իսրայէլացի, և Ի Հատացիք իսկ և քահանայք ղԼնուորէին։ Իսանիաս քահանայ որդի Յովիադայեայ՝ մի յերևելագունից անտի էր ի զօրաւորսն Դաւթի, որպէս ղի զօրավար կարգել զնա Սողոմոնի փոխանակ Յովաբայ[1]։ Սայսն որոյ որք միանգամ ի չափ հասեալ էին զԷն առնելոյ ի քսանամենից և ի վեր՝ ի հանդէս զօրաց մտանէին[2]. որպէս որ արդ իսկ ուրեք ուրեք յաշխարհս ի զինուորութիւն գրեալ կան, և ի պատերազմ գումարին ի ձայն հրամանի։ Սայլ այս ինչ խոիր էր, զի առ մեզ՝ որոց նուիրեալ են Աստուծոյ՝ արգելեալ է զԷն առնուլ. և երկրորդ անգամ, բազումք են առ մեզ անպիտանք ի պատերազմ. որպէս օրինագետք, շհասակք, տեարք գիւղից, վաճառա-

[1] Ի Թագ. Բ. 35։ [2] Թիւք. Ա. 3, 18, ԼԵ։

կանք, և Ճարտարք արուեստից. ուր նոքա ա-
մենեքեան երկրագործ էին և հովիւք, վարժք
'ի ջանս 'ի մանուկ սիոց և յաշխատութիւն:
Ի գեպ է կարծել զի և կրթէին 'ի հրահանգս
զինուց, մանաւանդ յետ աւուրց Վաւեթի և
Սողոմանի 1: Այլ 'ի Հռովմ նոյնպէս հարկ էր
ամենեցուն ըստ սահմանեալ սիոց 'ի պատե-
րազմ մտանել այսչափ ինչ նուագս՝ յորժամ
հասանէր նոցա կոչ: Այլ վասն այսորիկ ար-
դեօք փոխանակ զօրաժողով լինելոյ զօրընտիր
լինել 2 ասէին. զի միայն նոցա միշտ զօրք բա-
զումք 'ի քաղաքի: Պարբերն ոչ գժուարին ինչ
էր Իսրայէլացւոց կերակրել զանակս զօրաց
իւրեանց. ոչ ընդարձակ էր աշխարհ նոցա, և
թշնամիք այնպէս մօտ կային՝ զի բազում ան-
գամ 'ի տունս իւրեանց դառնային երեկօթել
աւուր միոյ կամ երկաւուր Ճանապարհ գոլով
'ի միջի:

Օձինք նոցա նման էին Յունաց և Հռո-
մոց. սուր, աղեղն, սլաք, նետ, և գեղարդն՝
որ է կարճաբուն տեգ. զի ոչ է 'ի գեպ կար-
ծել եթէ և նախնեացն երկայնաբուն էին նի-
զակք որպէս զմերոյ վաղեմի հեծելազօրուն:
Սուսերք նոցա իբրև զդաշոյնս էին լայն և
կարճ՝ զոր ածէին յազդեր: Վահէին և պար-
սիք, զոր օրինակ բնակիչքն Վաթաայ յերկ-
րին Ղենիամինի՝ որք 'ի մազէ ոչ վրիպէին, յեր-

1 ա Մնաց. ի. 2, 3, 11, ևն: 2 Delectum habere.

կոցունց ձեռաց աջողակք [1]։ Աւուրդ գեղարդն սովոր եր կրել ի ձեռին, որով և Հոմերոս զինէ զձեռս դիւցազանց իւրոց, և Հռովմայեցիք զԱուխերինեայ և զայլոց դից իւրեանց։ Նայց զնոս յայնժամ կրեին յորժամ պիտոյն եր. ի հրամայել Պաւեթի արանցն խաղալ ընդդէմ Նաբաղու, պատուեր ետ յառաջագոյն ածել ընդ մէջ առն իւրաքանչիւր զսուր իւր, որոց ապաքէն անդուլ արժան եր յերկիւղ և ի զգուշութեան կալ [2]։ Հանապազ սուր յաղդեր ունել՝ սովորութիւն եր այս Պաղեստացւոց և Պերմանացւոց։

Նակ պահպանակ զինք նոցա էին վահան բռ լորաձև, և այսպէս պարաճաճուկ բոլոր անձին, սաղաւարտ, զրահ, է զի և սրնապանք ի վերոյ բարձից։ Օ կատարեալ սպառազինութեանս օրինակ՝ համակ ի պղընձոյ տեսանես ի Պողիաթ [3], և ի մարտիկսն Հոմերի յոյնս։ Նայց սակաւք արդեօք գտանէին յայնժամ առ Նսրայէլացիս սպառազինութիւնք. զի Պաւուղ զիւր վարպետական տայր զգեցուցանել Պաւեթի [4]։ Օ կնի ասպ յառնախեցին. և պատրաստեաց անտի Պզիաս ամենայն զօրուն՝ առանց երեքարիւր Հաղարաց։ Նա զինքն Պզիաս արար և եդ մեքենայս ի վերոյ պարսպաց և

[1] Եզք. ԼՓ. 27։ Սաղմ. ԽԻ. 4։ Երգ. Գ. 8։ Դատ. Ի. 16։ ա Թագ. ԺԲ. 11։ ԻԱ. 16։

[2] ա Թագ. ԻԵ. 13։

[3] Աղդ. ԺԼ. 5, 6։

[4] Աղդ. ԺԼ. 18։ ԺԲ. 4։

անկեանց Յերուսաղէմի՝ ձգել նետս և քարինս մեծամեծս. ամենայն և զբազում քաղաքս, որպէս և յոլովագոյնք ի թագաւորացն արարին։ Այլ ահա անդստին ի ժամանակաց անտի միջինակ էր գոգցես տարազ պատերազմաց մինչև ցյետին ժամանակս, և մինչև ի գիւտս հրազինուց։

Ոչ ըրք Իսրայէլացւոց յառաջին ժամանակս հետևակք միայն էին. որպէս և Ցունացն և Հռոմայ զօրութիւն մեծ ի հետևակազօրսն էր։ Ոչ ինչ պէտք երիվարաց՝ ի ջերմաշխարհս՝ ուր անշաղախ են գնացք. իսկ ի լերինս անպէտ ան իսկ է ձիանն, քայց ի ցրտագին վայրս օգուտ մեծ է նոցա առ ի խուսել ի տղմուտ փողոցաց, և հատանել անցանել զերկայնուղիս ընդ անբեր և ընդ անբնակ դաշտս, որպէս ի Պողնիա և ի Սկիւթս։

Ի թագաւորաց կազմեցին և գունդս հեծելազօրաց. և Ադիսողոմայ սկիզբն վտարանց Ջաբեանն եղև յառնելոյ իւր կառս և երիվարս[1]. թէպէտ և ի բեհանել զօրաց նորա ի մարտին՝ յորում մեռաւ իսկ՝ ի ջրի աշտանակեր առ ի փախչել։ Պողոմն մեծահարուստն Ա[2]գիպտոսէ ետ ածել բազում երամակս ձիոց. և էին նորա չորք բիւրք մատակ ձիք ի կառս, և երկոտասան հազար երիվարք[3]։ Ասուի Թէ

[1] ։ Թագ. ա. 1։ ա. Ր. 9։ [2] ։ Թագ. ա. 26։ ։ Մնաց. Թ. 25։

կառքս այսոքիկ պատերազմիկք իբրև զՅու-նայն էին փոքրիկք և երկանիւք, տանելով այր մի կամ երկուս՝ որ կային յոտս յեցք յառաջա-կողմն։ Որք յաջորդեցին զՈղոմոն՝ ի թագա-ւորութիւն՝ չեղև ձեռննոցա բաւական՝ինոյն ճախս, այլ ընդ ժամանակս ժամանակս առա-քեալ օգնութիւնս խնդրեին յԱզգիպտոսէ, և՝ի հրեշտակութիւնս յայսոսիկ բանք լինին միշտ զերիվարաց։ Ոչ Ասղեկիաւ չգոյր արդեօք նո-ցա բնաւ հեծեալ, զի այնպէս ժպիրս խօսէր առ նոսա Ռափսակ. "Ընդ խառնեցարուք՝ ի ,, տեր իմ՝արքայ Ասորեստանեայց. և տացքեզ ,, երկուս հազարս երիվարաց, եթէ կարասցես ,, տալ դու քեզ հեծեալս՝ի վերայ նոցա՝ ,,։

Ոչ ինչ մանրապատում առնեն գիրք զերք-Քանս զօրաց նոցա, կամ զձև գնդիցն, կամ զպայման Ճակատուց, թէպէտ և յաճախ ուրեք զկարգեալ և զկազմեալ զօրաց առնիցեն յի-շատակ։ Այլ Ճանապարհորդութիւն նոցա ընդ անապատն առ Ովսիսիս՝ բերէ զքանակ օրինակ հրահանգաց բանակելոյ նոցա և չու առնելոյ զօրաց։ Ընդ որ կամարագրով յայտ էր նոցա ահագին թիւ մեծի բանակին[1]։ Այլ իւրաքանչիւր՝ի հանդէս մտեալ էր՝ի ցեղի իւրում, և ցեղ իւրաքանչիւր՝ի գնդի իւրում՝ ընդ միով՝ի չորից գլխաւոր տանցն ըստ կարգի ճննդոց նահապետաց և ըստ պատուոյ մարցն։

[1] Ի Թագ. ԻՐ. 23։ [2] Թիւք. Ա. 1, 2, եւն։

Հանդերձեալ նոցա այսպէս՝ ի չու անկանէին զօրհնասացք ի ձայն փողոց, և անդրէն դարձեալ զտեղի առնուին զխորանաւն վկայութեան՝ որ ի միջակիտի բանակին կայր։ Ապա շարեալ էր նոցա և իջևանացն մաքրութեան՝ որ կարևորն էր յոյժ ի տօթագին աշխարհին, թէ և կարի դժուարին ի յոքնաթիւ բազմութեան ժողովրդեանն։ Պարզաբար ասել. և կարգ իսկ բանակացն Յունաց և Հռոմոց, ընդ որս յիրաւի է զարմանալ, յազգացն աւրևելից առեալ էին, որպէս և այլ ամենայն ըստ օրինակի նոցա յարմարեալ։ Հեբրայեցիք և ամենայն ազգք առաջինք մեծ ինն համարէին զկապուտ և զկողպուտ պատերազմաց, նշանակ զայն կալեալ քաջութեան իւրեանց։

Յետ վախճանելոյն Յեսուայ մինչև ի ժամանակս Թագաւորաց ունէին զզօրավարութիւնն, ընտրեալք ի ժողովրդենէ, կամ զորս Աստուած յարուցանէր աջանչելօք, որպէս զԱթնիէլ զԱարակ և զԱեհուդ։ Այլ զոք ընտրէին զնոսա, կամ առ որս առաքէրն զնոսա Աստուած փրկիչ՝ նոքա միայն հնազանդէին նոցա. իսկ ճեպաւորք ժողովրդեանն զեղծեալ ազատութեամբք իւրեանց՝ մատնէին յանարգութիւն և ի լկանս թշնամեաց իւրեանց։ Այլ վասն այնորիկ ինդրեցին Թագաւոր՝ զի ոչ միայն իրաւունս արասցէ նոցա, այլ և զհամ

1 Թիւք. Ե. 1, 2, եւն։

օրէն սպարապետութիւն զօրուն առեալ պատերազմեսցի վասն նոցա [1]. և արդարևյետ այնորիկ աներկևան ևս կացին։ Յորժամ՝ի՞ջահ Թուէը Թագաւորին, ժողովէը զնոսա, և հանապազ կայմ յոտին ունէը խումբս խումբս զբաց վասն պահպանութեն աշխարհին։ Սկսին ինչ սկսեալ Թագաւորել Սաուղայ, որպէս գրեալ կայ [2], ընտրեաց իւր երիս հազար զօրականս. և Դաւթի էին երկոտասան գունդք զօրաց, և Թիւ իւրաքանչիւր գնդի զօրուն քսան և չորք հազարք, որք ամեայ ամեայ փոխանակաւ կային նմա ՚ի սպասու։ Իսկ հասանէր Թագաւորութիւն Յովսափատու յերրորդ մասն բաժնին Դաւթի, և իշխան էր մետասան բիւր և վաթսուն հազար զօրաց զօրաւորաց, Թող զպահապան զօրս բերդիցն [3]։

ՅՕԴՈՒՄՆ ՎԱՇՆԵՐՈՐԴ ՀՈՐՈՐԴ

Թագաւորք նոցա։

Իշխան էր Թագաւորն կենաց և մահու, և կարող սպանանել զմահապարտս առանց հարցափորձի դատաստանաց։ Սկսաւ իշխանութեամբ վարեցաւ Դաւիթ ընդդէմ առնն որ

1 Ճ Թագ. Ը. 20։ 3 ա Պնաց. Իե. ։ բ Պնաց. ժԻ. ։ գ Պնաց. ԼՀ. ։
2 ա Թագ. ԺԴ. 2։

պարծէը սպանեալ զԱւուդ և դարձեալ ընդ-
դէմ այնոցիկ որ Հարին սպանին զՅեբուսէթէ ։
Լր այս իշխանութիւն և կայսերաց Հռոմոց։
Ծագաւորք Իսրայէլի Հարկս Հանէին և Լե-
բայէլացւոց իսկ . զի խոստանայր Ադուդ
ազատ առնել զերկրն և զտուն նորա որ սպա-
նանիցէ զԵողիաթ[1] . և Թուի իմն զի առ կա-
րի ծանրացուցանելոյ զերկն Աղոմանի տարընջ-
ջեաց ժողովուրդն առ Աոբովամ[2] ։ Եայց ՚ի
սահմանի կայր յայժ իշխանութիւն նոցա . զի
պարտ էր նոցա զգուշանալ օրինաց ոչ ինչ ընդ-
հատ ՚ի ժողովրդենէ . ոչ քաւնալ ինչ անտի
կարող էին և ոչ յաւելուլ . և չիք որ ուրեք որ
իշխեալ իցէ օրէնս նորս հաստատել ։ Ընպա-
Հոյժ կեանս վարէին ՚ի տան . որ և տեսանի ՚ի
նկարագիր վարուց Թագաւորացն զոր առնէ
Սամուէլ[3] առ ՚ի տաղտկացուցանել զժողո-
վուրդն ՚ի խնդրելոյ զԹագաւոր, ուր կանայս
ումանս ևէթ տայ յառտնին ծառայութիւնս նո-
ցա ։ Եւլ առ ժողովուրդն բազմութեամբ ե-
լանէին . քանզի ՚ի ցոյցս ապստամբութեանն
Աբիսողոմայ նշանակէն գերբ և զայս՝ զի արար
նա յիսուն սուրհանդակս գնալ առաջի իւր . և
զԱդոնիայ զեղջորն նորա զնոյն յաւելուն ։

Աբքայքս այսոքիկ ՚ի ստացուածոց իւրեանց
կէին որպէս զմի ՚ի բազմաց, այսու ևէթ զա-

1 ա Թագ. ԺԷ. 25։ 3 ա Թագ. Ը. 11։
2 ի Թագ. ԺԲ. 4։

նազանեալք՝ զի բազում էին անդք և անդեայք նոցա։ Ի թիւս համարոյ մեծաւթեանց Յաւթի ընդ գանձս ոսկւոյ և արծաթոյ յիշին և անդաստանք գիւղից նորա, և այգիք, և շտեմարանք գինւոյ և իւղոյ, և ծառք ձիթենեաց և մոլաթզենեաց, և արջառք արօտակիք, և ուղտք և էշք [1]։ Իստ այսոցիկ առնու պատմել Յովհաննու զՅոսուէթիւնս Դիսեայ [2], և ասէ ունել նմա 'ի ցամաքի Հօտս երկոտասան ըստ իւրաքանչիւր ազգս անասնոց, բաց յայնցանէ որ էին նմա 'ի կղզւոջ իւրում։ Ի բազմապատիկ արարոց աստի Հայաստանեայցն նոքա զանհնայն պէտս իւրեանց և զընտանեացն [3]։ Յաւուրս Յողոմինի երկոտասան գործակալք կարգեալ էին 'ի վերայ ամենայն սահմանաց Իսրայէլի՝ տալ նմա ռոճիկ մէն մի ամիս 'ի տարւոջ. և էին ռոճիկքն 'ի միում աւուր երեսուն քոռ նաշհոյ, և քառասուն քոռ ալեր գերմանոյ, և տասն եզն ընտիր, և քսան կով արօտական, և հարիւր ոչխար՝ այլովքն հանդերձ, յորս մէ կերակրել մարթ էր արանց հինգ հազարաց [4]։ Այս զի 'ի բերոց երկրի զռոճիկն մատուցանէին, ոչ ինչ պէտք էին գնոց ինչ գնել, և չգոյր կարօտութիւն հազարապետաց, գանձապետաց, համարակալաց և այլոց ազգի ազգի բազմութեան պաշտօնէից որ ուտեն

1 ա Մնաց. ԻՐ. 25, ևն։ 3 ֊ Թագ. Դ. 7։
2 Ոգիս. ԺԴ։ 4 Նդ. 22, 26։

զմեծութիւնս տեառդ. նմին իրի ոսկի և արծաթի 'ի պահեստի ննայելն, և կամ վաթսին 'ի բնիկ պէտս իւրեանց 'ի կազմած անօթոց և զարդուց [1]։

Իսկ յաձախեցին անբաւ մեծութիւք գանձուցն Դաւթի և Սողոմոնի։ Պատրաստեաց Դաւիթ որ ինչ կարևորք էին 'ի կառուցումն տաճարին [2], այր վասն ծախեցան տաղանդք ոսկւոյ հարիւր և ութ հազար, և արծաթոյ հարիւր և մի բիւր տաղանդք, որ առնեն հազար հարիւր վաթսուն և վեց միլիոն՝ ինն հարիւր վաթսուն և վեց հազար և ութ հարիւր բիւր բիւր լիրայ գաղղիական, և աւելի. Թող և զմեծութիւնն զորս թաղել ետ 'ի գերեզմանի իւրում։ Ո՞ւնեաց Սողոմոն և բազում պալատս, ամրացոյց բազում քաղաքս, և արար բազում այլ կենցաղոգուտ գործս։ Այլ էին ամենայն անօթք սպասուց և ամենայն կահ տան անտառին Լիբանանու ոսկի գործեալ. Թող զերեքարիւր ոսկի նիզակն կռած ծոյս *, յորոց իւրաքանչիւր արժէր երեքհարիւր հազար լիրայ Դաղղիոյ, և զերեքարիւր կուռ ոսկի վահանն՝ յորոց միոյ միոյ գինք ա-ռաւել էին քան զվեց հազար լիրայ գաղղիական։

1 ա Մնաց. ԻՒ։
2 Աշգ. ԻԲ. 14։
* Լատինն ասպար ընդ հանու-. և ի յոյնսն երեքարիւրեան ոչ երկերիւր։

Ա՛յլ ըստ նմին և եկամուտքն առատ էին։ Ա՛ստուածականութիւն ևեթ բերէր նմա ամի ամի վեց հարիւր և վաթսուն և վեց տալանդս ոսկւոյ, աւելի քան զչորս միլիոն և երեք հարիւր հազար բիւր լիրայ Կաղղիոյ։ Ա՛յլ նոյր նա հարկս Հրայելացւոց և յամենայն ազգաց որ էին ընդ իւրև, ՚ի Խեւացւոցն և Ա՛մովհացւոց և ՚ի նախնի բնակչաց քաղաքացն Իսրայելի, Հնդումայեցւոց և ՚ի հարուստ ինչ մասանց Ա՛թաթիոյ, և ՚ի բնաւ Ա՛սորւոց։ զի նա էր իշխան ՚ի սահմանացն Դիպատացւոց մինչև ցգետն Եփրատ։ Այս բերէին նմա ամի ամի ՚ի բազմահարուստ աշխարհացս այսոցիկ անօթս արծաթեղինս և անօթս ոսկեղինս, և հանդերձս և զէնս և ըստաշխն, և ձիս և ջորիս։ Ա՛յսպէս և մեզ ՚ի միտ առնուլ և զպատճառս Հոխութեանցն Լրեսոսի, որոյ սահմանք ընդարձակութեան աշխարհին հաւասարէին գոգաթս ընդ սահմանս տէրութեան Ասղոմոնի։ Ձև էր սիրեալ ոսկւոյ և արծաթոյ ընդ բոլոր աշխարհս։ խուն ինչ էր ոսկի և արծաթ որ Հրէլադ։ Հոտալիա չգտանէր բնաւ, և ոչ ՚ի վիճակս Լրօպայ համօրէն՝ բայց ՚ի Ասպանիացւոց աշխարհին ուր բովքն էին։

Ա՛յլ աստանօր վայրիկ մի զկայ աւգուտ ՚ի քննին բարեբաստութեանցն Ասղոմոնի. քանզի և գեղեցիկ իսկ է տեսարանս։ Ընթերցող

ոք զամենայն վէպս պատմութեանց, այլ չըգոցէ հանգոյն իմն միահամուռ պարառութեի ամենայն բարօրութեանց՝ յոր մարթի իցէ վայելել՝ի վերայ երեսաց երկրի։ Մեծագործ՝ի մանկութեան՝ի ծաղկի հասակին, գեղեցկանձն, լայնահանճար, մեծիմաստ և աչքաղակ, հռչակաւոր առ ամենեսին, որպէս զի ամենայն թագաւորք երկրի խնդրէին լսել զձայնս նորա իբրև զնորահրաշ իմն աքանչելիս իմաստութեան, և դէմսդ՝ի հեռաստանէ Ճանապարհ հատեալ գայր առ նա։ Իշխէրնա պետութեանմեծի՝ի բազմախաղաղութեան՝ բնակեալ՝ի գեղեցկագոյն կողման աշխարհի, ՝ի մեծակառոյց ապարանս, սպասահարկեալ յամենեցուն, պատարուն ամենայն բարութեամբք, ընկղմեալ՝ի ծով փափկութեանց, և ոչ յիմեաք՝ի զուարճալեաց զրկեալ զանձն, որպէս վկայէ ինքնին։ Նա մանաւանդ մտախոհ լինէր մեծաւ հանճարոմն՝ի կշտապինդ յաւուրդ ցանկութեանց՝։ Իսպաքէն երանելի զայնպիսին սովոր եմք կոչել. սակայն ոչ էր երանելի, զի և գոհ իսկ չէր. որպէս ինքնին իսկ զայն յայտ առնէ. "Օ՜ամենայն զոր ինչ ,, ինդրեցին աչք իմ, ոչ զրկեցի՝ի նոցանէն, ,, և ոչ արգելի զսիրտ իմ յամենայն ուրախու- ,, թենէ. և հայեցայ ես յամենայն արարս ,, իմ զոր արարին ձեռք իմ, և՝ի վաստակս

՝ Ե Թագ. Թ. 34։

„ զոր վաստակեցայ առնել, և ահա ամենայն
„ ընդունայնութիւն է և յօժարութիւն ո-
„ գւոյ „ [1] ։

Երկուս կարևոր իրատես ետ Աստուած մարդկան յաջողութեամբն Սողոմոնի և ժողովրդեան նորա ։ Նոցայ նախ զհաւատարմութիւն իւր ՚ի ընուել զբանս իւր, պարգևելով առատապէս զամենայն բարութիւնս զոր խոստացեալ էր հարց նոցա ՚ի ժառանգել զերկիրն. որպէս զի մի՛ ոք յերկուասցի այնուհետև ընդվարձս մեծամեծ փոխարինացն հանդերձեալս որոց զհետ երթան նորա, և լսեն պատուիրանաց նորա ։ Օ՛ի ՚ի զգալիս առ հասարակ ըմբռնեալ մարդկութեանս, կարօտ էր առհաւատչէի այսմ առ հաւատալ ասպա անհնարելոյն բարեաց և վարձուց անտի կենացն ։ Երկրորդ անգամ, տալով Աստուած Իսրայելացւոց զժառանգութիւն երկրաւոր բարեացս, և ընդով զնոսա առաւատապէս ամենայնիւ որ զբարեկենդանութիւն ՚ի կենցաղումս յարդարէն, յաւել պատճառս ձանձրելոյ զընդունայնութիւն նոցա, և ՚ի բարձրագոյն յոյսս խարսխելոյ զմիտս ։ Օ՛ի ո՛ ոք ընդ արեգակամբ համարիցի երանելի լինել. եթէ Սողոմոն այսմ ոչ եհաս, ո՛ տարակուսեսցի այնուհետև ընդ ունայնութիւն ամենայնի որ գործին ՚ի ներքոյ երկնից, յետ միան-

[1] ժող. Բ. 4, 11։

գամ խոստովանելոյ զայն Աղոմմինի ։ Ո՛չ ա-
պաքէն օրինակ նորա ուսուցանէ ամենեցուն
լինով՝ զի երկրաւորքս ամենայն ոչ միայն զաղ-
փաղփունք են, այլ և ինասակարք . ոչ միայն
ընուլ ոչ ունին զսիրտ մարդկան, այլ մանա-
ւանդ զեղծուցանեն զնա ։ Այս զո՛ր պատճառս
ունիցիմք կարծելոյ յօգուտ՝ ի կիր արկանել
զնոյնս, զոր ոչ արկ Ժողովուրդն գգուեալ
Ա՛ստուծոյ և բազմապատիկ խրատեալն, ո-
րում առաւել՝ ի գէպ էլանէին երկրաւոր բա-
րութիւնք՝ իբր վարձք խոստացեալքնմա ։ Այս
չիցէ յանդգնութիւն արիապոյնս և համա-
րել զմեզ ընդդէմ հեշտութեանց քան զիմաս-
տունն Աղոմմին, որ այնպէս անձնատուրն եղև
՝ի սէր կանանց՝ զի արհամարհեալ զաստ օրի-
նացն, հազարս՝ի նոցանէ ած իւր կնութեան՝ ,
և առ անհնարին մոլեգնութեանն զկնի նո-
ցա՝ խոնարհեցաւ և՝ի կռապաշտութիւն ։
Օ՛ամբարշտութեան չաւղաց նորա զՀետ զբ-
նացին և ծառայք նորա . և յետ վախճանի նո-
րա գամ քան զգամ ապականեցան գնացք
Իսրայէլացւոց ։

Պատառումն թագաւորութեանն յերկուս՝
Ա՛սրայէլ և՝ի Յուդա՝ յաւել և ևս զա-
ղէտն ։ Իսրայէլ առաւել ևս զառածաւ յա-
պականութիւն , եղ ջիւր ածելով՝ի նմա հա-
նապազ կռապաշտութեանն, սկզբնապատճառ

1 Գ Թագ . ԺԱ . 3 , ևն ։

ամենայն ազգի ազգի անօրէնութեանց[1]։ Եւ պահասեցին ի նմա և ապստամբութիւնք և դաւաճանութիւնք։ Յաղագս որոյ թիւնն ի Յուդա հաստատուն եկաց ի տան Դաւթի. Յարեան ի նմա և թագաւորք բարեպարիշտք. և քահանայք և Ղևտացիք որ ի կողմն Յուդայ անցին համօրէն՝ քաջ և զգուշացան պահպանելոյ ի նմա զօրէնս և զաւանդութիւնս Աշմարիտ կրօնիդ։

Ի յետին ժամանակս յայնոսիկ ոտնհար լինելով օրինաց՝ յաձախ և հաղորդութիւն կալան Իսրայելացիք ընդ օտարս, մանաւանդ առ ի գտանել օգնականութիւն ի նոցանէ ի պատերազմունս. և վասն այսորիկ առաւել կշտամբեն զնոսա մարգարէքն, զի անյուսացան ի տէր Աստուած իւրեանց։ Առաւել քան զամենեցուն զԱսորեստանեայսն և զԳիպտացւոց խնդրելն զօգնութիւն, զազգացն հզօրագունից ի ժամանակին։ Ուր ի զմիտս հաձել նոցա՝ նմանող լինէին վարուց նոցին, և զկուռս նոցա պաշտէին. նմին իրի և համակործան ընդ նոսա անկան՝ յորժամ անկաւն Տգլպաթոս, և յաղթեաց Ասորեստանեայն։

[1] Խնամս. ԺԴ. ԻԲ։

ՄԱՆ ԵՐՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ՀՐԵՒՑ

ՅՕԳՈՒԸՆ ԸՈՒՆԼԻՆ

Գերուեթիւն նոցա։

Կարգեցաւ աւանիկ որ ինչ միանգամ արժանի յիշատակաց թուեցաւ մեզ ի սովորութիւնս Խորայելացւոց՝ մինչդեռ տակաւին յաջատութեան կեին յաշխարհի անդ իւրեանց, զատուցեալ յայլոց ազգաց, և ոչ ընդ իշխանութեամբ ուրուք ի հեթանոսաց անկեալ։ Ընդ առաջի կայ մեզ տեսանել զիրս վերջին ժամանակաց նոցա ի գերութենէ Խաբելոնի մինչև ի սպառսպուռս ցրուման նոցա. զի թէպէտ և նոյն ազգ էր, և նոյն սովորութիւնք նորա ըստ կարեւոր մասին, բայց և ոչ դոյզն փոփոխութիւնք էին ի նոսա։

Այլ նախ ի յետին ժամանակին յայնոսիկ

Հրեայք և եթէ կամ Յունդայեանք կոչէին, այսու զի Յունդայի թագաւորութիւնն և եթէ յոտին կայր · զի հարիւրովք և աւելի և ասմօք յառաջ քան զաւերն Երուսաղէմի կործանեալ էր Սամարիա, և ի բաց վտարեալ էր անտի Ասղմանասարայ զաման ցեղն որ Իսրայելացիքն յորջորջէին : Եւ թէպէտ ի թագաւորութիւնն Յունդայ յարեցաւ և ցեղն Բենիամինի առ հասարակ, և Ղևեայ, և այլք ոչ սակաւք ի ցեղից իւրաքանչիւր՝ վասն նախանձելոյ նոցա զնախանձ կրօնիցն յաղագս անօրինելոյն Երոբոամայ, սակայն ամենեքին խառն ի խուռն Յունդայեանք և Հրեայք անուանակոչէին որպէս անդստին ի սկզբանէ գերութեանն սովորութիւն էր կոչել զնոսա [1] :

Եւ քանզի յետ վախճանելոյն Յովսիայ և թագաւորութիւնն Յունդայ երթայր և կործանէր, բազումք ի Հրեից ցրուեցան ընդ սահմանս երկրի որդւոցն Ասորեայ և Ասորացոյց և Քաղդէացոց և ի միջ այլ և այլ մարտաւոր աղգացն [2] : Իսկ որք ի մեծամեծաց Երուսաղէմ գտան բնակեալք ի ժամանակի կործանմանն՝ գերի վարեցան ի Բաղդէացոց, և աղքատք եթէ մնացին անդ ի միջև կել զերկիրն, որք սուղ ինչ զկին և նոքա հատուած գնացին Եգիպտոս [3] :

[1] Ջ Թագ · ԻԴ · 6 :
[2] Երեմ. խ · 11 :
[3] Ասք · խԳ · 3, 6:

Որք ՚ի Հաբէլոյն ածան՝ ծառայք եղեն Թագաւորին և որդւոց նորա, ըստ որում ասէ գիր[1]. քանզի այս օրինք էին պատերազմի ՚ի ժամանակին յայնմիկ, զի որք միանգամ զէն ՚ի ձեռին գերի՝ անկանէին, և որք ՚ի քաղաքաց պատերազմաւ առնուին, կամ պարտեալք անձնատուր լինէին, բնակիչք նոցա և աւանացն շուրջանակի՝ ստրուկք էին յաղթականին, եթէ Թագաւոր էր յաղթողն և եթէ այր սոսկական, որպէս և զիարդ սահմանէին օրինք աշխարհայ իւրաքանչիւր վասն առնլոյ և բաշխելոյ զաւարն։ Վասն իւրմէ յորժամ առաւ Տրովադա՝ ամենեքեան որք կենդանի ՚ի ստրկութիւն անկան հանդերձ Լկուբաս դշխոյին և դստերօքն նորա։

Վնքաւ են առ այս օրինակք ՚ի վէպս պատմութեց Յունաց և Հռովմայեցւոց։ Վերի ա ծէին Հռովմայեցիք զԹագաւորս յամառեալս ՚ի դիմամարտ, և յետ յաղթանակաւ առաջի իւրեանց տանելոյ զնոսա սպանանէին։ Իսկ զժողովուրդսնոցա վաճառէին ՚ի ձայն քարոզի, և զերկիր նոցա բաժանէին ՚ի քաղաքացիս իւրեանց, յորոց և գաղթականս առաքէին փոխանակ գերելոց բնակչացն, ապահովագոյն այսպէս զաշխարհակալութիւնս իւրեանց առնելով։ Վյսպէս խստութեամբ զնացին Լսորեստանեայք ընդ Հրեայս և ընդ Խորայե-

[1] ՚ի Վնաց · Լ. · 20։

լացիս . զի ոմանք ՚ի նոցանէ և ՚ի մեծի ազա-
տութեան վայելէին , որպէս Յովքիմ . և ո-
մանք մեծատունք ևս էին , որպէս նա ինքն
Յովքիմ և ազգական նորա Հռագուէլ , և
Վաթայել բարեկամ իւր , և Յովակիմ այրն
Շուշանայ ՚ի Բաթիլիա[1] : Ամանուանդ թէ
անդք իրացն Շուշանայ յայտ իմն առնեն զի
Հրեայք և ՚ի գերութեան օրինաց իւրեանց
վարէին , մինչև կարգել իւրեանց և դատա-
ւորս՝ առնել զդատաստան մահու :

Հանդերձ այսու ամենայնիւ անմարթ էր
թէ բնակակցութիւն նոցա ընդ օտարս չածէր
՚ի նոսա փոփոխումն բարուց մեծապէս , զի և
այս պատուէրք էին նոցա յօրինաց , որոշեալ
կալ յամենայն ազգաց : Այ սակաւք խոնար-
հէին ՚ի պաշտօն կռոց , ուտել զմիս արգե-
լեալ , խնամութիւն առնել ընդ օտար ազգս .
իսկ յանզանազանս ամենեքին նմանողք լինէին
տեառըց իւրեանց , որպէս ՚ի խօսել զբարբառ
նոցա . մինչ զկնի աստուածաշունչ գրոցն մեր
իւրեանց մատուցան զբերայականն , և իմաս-
տունքն ևեթ ՚ի նոսա գիտէին զայն այնու-
հետև , որպէս ՚ի մեզ զլատինն : Հասարա-
կաց լեզու նոցա եղև Ասորւոցն կամ Վաղ-
դէացւոց , որով գրեցան գիրք Դանիէլի , և
մեհնութիւնք աստուածաշունչ գրոցն յարա-
սականք ՚ի խեղաթիւրութիւն Ժողովրդեանն :

[1] Դան . ԺԳ . 1 , 4 :

փոխեցին նոյնպէս և զտաւս . զի թողեալ զնիկ աթուեթայս իւրեանց՝ զոր անփոխ կալան Շ ամրտացիք, առին զԱաղգեացւոցն՝ զանուանեալն արդ ՚ի մէնջ եբրայական :

ՅՕԴՈՒԵՆ ԵՐԿՐՈՐԴ

Դարձ Հրէից , և իրք նոցա ընդ սերուեթեամբ Պաբսից :

Յորժամ Կիւրոս ազատուեթիւն արար նոցա և հրաման ետ գնալ ՚ի Հրէաստան և շինել զտաճար իւրեանց , ոչ ամենեքեան յանձին կալան գնալ, կամ գնալ միանգամայն . քանզումք ՚ի նոցանէ նստան ՚ի Բաբիլոնի և ՚ի քաղաքսն ուր բնակէին : Լ.ևւ և որք դարձանն՝ ոչ ամենեքին Հրեայք էին , այլ յայլ ցեղս էին ՚ի նոսա և ոմանք ՚ի տան ցեղին . սակայն միահամուռ իսկ ամենեքին ոչ ըստուար ինչ խումբ կազմէին : Լ.ուաջինքն զորս ած Օ.օրաբաբէլ՝ սակաւք էին քան զիւրս հինգ հանգերձ գերեօքն ՝ . և ՚ի սակաւ թուոյ ստրկաց նոցա և անասնոց է ՚ի միտ առնուլ զաղքատուեթիւն նոցա : Ո՛ր համեմատուեթիւն իցէ յիսուն հազար մարդկան ընդ մեծի բազմութեան աւուրց ժամանակաց Յովսափատ, առ ՚ի ընուլ զթիւ հարիւր և քսան հազար

՚ի Եզր . Բ . 3, 4, եև :

բիւրուց արանց պատերազմողաց։ Եւ հազար մի և հինգ հարիւր եկին ընդ Եղբասայ՝։ և ՚ի դեպ է կարծել թէ և այլ ամբոխ մարդկան յաւելան զնոսի ։

Որչափ ինչ մարթի երկնոցա՝ զհետ եղեն գըտանել զիւրաքանչիւր զհայրենի ժառանգութիւնն, և պահել ազգատոհմից զիւրաքաչիւր վիճակ ։ Յայն սակս ՚ի մի գումարեաց Եզրաս զամենայն ազգաբանութիւնս որ ՚ի սկիզբն ծնացորդաց գրոցն են. յորում եդ մանաւանդ զերից ցեղիցն՝ զՅուդայի, զԼևեայ և զԵնիամինի, յայտ արարեալ անվրէպ և զճշմարտութիւն տեղւոյ նոցա ։ Եւ ամենեցեալ բազմամարդ առնել զԵրուսաղէմ, ընկալաւ զամենեսին ՚ի ներքս որք միանգամ յօժարեցին բնակել անդէն. Թէպէտ և շփոթեր այնու կարգ վիճակացն. քանզի և յիրաւի իսկ էր՝ եկելոցն ժառանգել զվիճակ այնոցիկ որ չկամեցան դառնալ և կամ որ ոչ էս էին ՚ի միջի ։ Եւ մին իրի ՚ի յետին ժամանակս Յուստաճահայրն Յովսեփ ՚ի Եզաղարեթ բնակեր ՚ի Գալիլեա, այն որ բնիկ բեթզեհեմացին էր. և Երկնա մարգարէ ՚ի ցեղէն Ասերայ՝ Երուսաղէմ կայր բնակեալ ։ Եւ ակայն գիտէին ամենեքին յորմէ ՚ի ցեղէն էին, և սկիզբն ազգահամարոյ իւրեանց. որպէս յայտ է ՚ի ծննդաբանութենէ անտի նորին Յուստուաճահօրն Յովսեփու, որ

՚ի Նեղ. Ը։

ապաքէն հիւան ոք էր։ Եւ զգուշանային խըզնամով ընտրել՝ ընդ Հիմարիա Խորայելացիս և ընդ եկս յեցեալս առ նոսա, կուբեցեալ՝ի լեզու նոցա գոր կամ կէր, և՝ի յոյնն προσήλυτος կամ եկամուտ։

Այսն որոյ իբրև գերեդարձ եղև նոցա, ընդ կարևոր Ջանս իւրեանց մեծապէս փոյթ կալան և յորոշումն ազգի իւրեանց յազգաց օտարաց, և՝ի զգուշութիւն օրինացն յամուսնանալոյ ընդ հեթանոսս[2]։ Այնաւանդ թէ զպատուէրն զայն առին և՝ի վերայ ազգացն զորս օրինացն չէր հրամայեալ, որպիսի Ազովտացիքն էին՝ մանն Ժողովրդեան Փղշտացւոց, և Եգիպտացիք և Ամմնացիք և Մովաբացիք։ Ազեաք չարեացն զորոց զգուշեալ էին վանն իմամութեանցն զհետ ամբարիշտ օրինակին Յովսմանի՝ յորդորեաց զիմաստունս այսպէս մեկնել զօրէնսն, և անդր քան զնշանակութիւն բառիցն ընդարձակել զիմաստսն, զի լաւագոյն ևս հպատակիցեն կամաց օրինադրին։ Ընտերիւր պահեցին քահանայք զհրամանսն, և՝ի ցեղէն իւրեանց ևեթ առնէին կանայս. և յուցանէ Յովսեպոս[3] զզգուշութիւնն զամենայն զոր վանն այսորիկ առնէին առ իւրովք իսկ ժամանակօք։ Կրեթէ ոչ երբեք այնպէս հաւատարիմ կացին

1 Ակրիկ. առ Նեա. պատ. Ա. է։
2 Ե եզր. Թ։
3 Ընդդէմ Ապիոն Ա, Բ։

Հրեայք Յստուծոյ՝ որպէս զկնի գերու-
թեանն. ոչ ևս լսելի եղեն առ նոսա բանք
կռապաշտութեան. այնչափ ահաբեկեալ էին
ընդ խիստ պատուհասն, և ընդ կատարուա-
մարգարէութեանցն որ սպառնացեալ էին նո-
ցա զայնս։ Ոչ և ուրացողացն սպատութիւն
ամենայն համարձակութեամբ կալոյ ի մէջ
անհաւատից՝ յայտնի և առնէր զայնոսիկ որք
Հնմարիտ Հրեայքն էին։

Յաւուրս առաջին թագաւորացն Պարսից
անկեալ էին յամենայն զօրութենէ, մատն
լեալ նախանձու շրջակայ ազգացն՝ մանաւանդ
Համրտացւոց, և նշաւակ նախատանաց նոցա
և զրպարտութեանց. և մեծալուտ իսկ էր վը-
տանգ կոտորելոյ նոցա առ հասարակ ի թշնա-
մեաց յակնարկել հրամանի մեծի արքային,
որպէս յայտ է ի հրովարտակէն զոր ընկալաւ
Համան վասն նոցա, և յորմէ փրկեացն զնոսա
Աստեր [1]։ Հազիւ ընդ քան ամս զկնի առաջ-
նոյ դարձին իւրեանց կատարեցին զշինութիւն
տաճարին, և այլ ևս վաթսուն ամաց պէտք
եղեն ի բարձրացուցանել զպարիսպս Երու-
սաղէմի. որով անցին ուրեմն ամք մինչև ի
սկսանել նոցա բնակել ի քաղաքին։ Յայտ է
թէ աղքատ էր յոյժ յայնժամ աշխարհն. զի
Երոդոս [2] որ զնովիմիք ժամանակօք կեայր՝
զՅորիս, զփիւնիկէ, զՊաղեստին և զԱիպ-

1 Եսթ. գ. 12։ 2 Երոդ. Գ։

րոս կղզին առ Հասարակ ի մի կուսակալու-
Թիւն կարգէ, և զսակ Հարկին նոցա առ Պա-
բեհ՝ գնէ երեքարիւր և յիսուն քանքար ԱԵԹ՝
իբրև զմիոյ ի փոքրիկ գաւառացն. ուր Պա-
բիլոնի ԱԵԹ առաքէր քանքարս Հազար։ Այլ
առ Հռոմովք կրկնապատիկ ի վերայ եդաւ
Հարկ Պաղեստինացւոց ԱԵԹ աչխարհին, զի
տայր Հերովդէ և որդւոցն եօթն Հարիւր և
վաթսուն քանքարս, որ առնեն աւելի քան
զՀարիւր յիսուն և մի Հազար բիւր լիբրայ
Պաղղիոյ՝ Հաշուեալ ըստ փոքր քանքարոյն[1]։

Այս սակաւ սակաւ զօրացան Հրեայք, և
առ յայնժամովք նախնի Թագաւորացն Պար-
սից կէին ինքնօրէնք որպէս Հասարակապե-
տութիւն իմն՝ առաջնորդեալք ի մեծէքահա-
նայապետէն, և ի ժողովոյն եօթանասուն և
երկու ծերոցն։ Այնուհետև աչխարհն բնակիչք,
չինեցան անդրէն քաղաքք, և միակեցան անդք
առաւել քան զառաջինն. դարձաւ առատու-
Թիւն ամենայն առաջնոց, և այնպէս արմատա-
ցաւ խաղաղութիւն՝ զի ընդ ամն երեքարիւր
և ոչ չնուազ մարտի լսելի եղև ի նոսա, կամ
դէպք ինչ պատահանաւոր ի յօրինուած Ճառից
պատմութեանց։ Այս վասն այնորիկ յաւուրց
Ալեքսանդր մինչև ի ժամանակս Մակաբայե-
ցւոցն լռեն վէպք։ Այս այլազգիք անգամ պա-
տուէրն և մեծարէին զտաճարն սուրբ, և յայլ

[1] Յովս. յղ. Պատերազմ. Բ. ԺԶ։

եւեալ մատուցանէին ընծայս ։ Համայն ասել այնպէս լինի յաջողեաց Հրէից զկնի դարձի գերեզման՝ զի մարգարէքն ի նախապատմէին զայն յանդիման նկարեն զգերապանծ աւուրս Թագաւորութեան Եսիայի ։

Յայնժամ սկսան Յոյնք՝ առ յաձախ Հանապարհորդութեան իւրեանց Հ(գիպտոս և Հ(սորիս՝ ի ծանօթութիւն գալ Հրէից, յորմէ և մեծապէս օգտեցան՝ եթէ հաւատալ արժան իցէ նախնի մատենագրացն քրիստոնէից, որքոյն Յուստինոսի, և որքոյն Կղեմայ աղեքսանդրացւոյ այլոցքն Հանդերձ. քանզի հաստատեն սոքա՝ զի քերթողք և օրէնսգիրք և իմաստասէրք Յունաց ի Հրէից առին որ ինչ աւանդեցին օգտակարս ։ Հ(ւ ստոյգ է բանս, զի Սողոն Հանապարհ եհատ Հ(գիպտոս. և օրինաց նորա զոր ետ Հ(թենացւոց՝ բազում ինչ նմանութիւն է ընդ մովսիսական օրէնսն։ Պիւթագոր Հարուստ մի եկաց Հ(գիպտոս, և չոգաւ ի Հաբիլոնիա առ Կամբիւսեա. վասն որոյ տեսեալ էր նորա զՀրեայս և խօսեցեալ ընդ նոսա ։ Պղատոն զամն բազում աշակերտեցաւ Հ(գիպտոս, և այնչափ բանս գեղեցիկս տայ բարբառել Սոկրատայ ըստ իմաստիցն աւանդելոց ի Մովսիսէ, զի յիրաւի է կարծել ընթերցեալ նորա զՄովսէս ։

Հ(րդեամբք զայն ինչ առնէին Հրեայք՝ որ

1 Փխրեն . օրէն ։

ինչ յօդտակարացն առաջի առնէ նա ՚ի հա-
սարակապետութեան իւրում և յօրէնսկեալ
իւրաքանչիւր ումեք ՚ի վաստակոց իւրոց, ա-
ռանց զեղխութեան, անփառասիրաց, անվատնգ
յերկուց ծայրայեղ անչափութեանց՝ աղքա-
տութեան և մեծութեան. ամենայն ընչից և
ստացուածոց վէհագոյն համարել զարդարու-
թիւն, խորշել՚ի նորաձեւութենէ և յամենայն փո-
փոխութենէ ի Սովսէս և ՚ի Դաւիթ և ՚ի Սողո-
մոն ձշդրտի իմաստունն այն՝ զոր ինդրէ նա՚ի
վարչութիւն աշխարհի և՚ի բարեբաստութիւն
նորին, և վարանեալ տարակուսի թէ մարթի-
ցի՞ ուրեք երբեք այնպիսւոյ ումեք կալ[1]: Նա-
զուամ ուրեք պատմէ նա յաղագս դատաստանի
որ զնի մահուն, և յաղագս անտի կենացն, որ
յայսմանէ մասունք են ձշմարիտ կրօնից. և
թէպէտ ցուցակութիւնս ինչ ոչ ածէ ՚ի հա-
տատութիւն նոցին, այլ մեծարէ զնոսա որ-
պէս վաղնջուց աւանդութիւնս[2]: Այլ թէ ոչ
՚ի Հրէից անտի Պղատոն և այլք ՚ի Յունաց
առին զգերազանց ձշմարտութիւնքս, զթէ
յայլոց արևելեայց ուսան, որք մօտ ևս գոլով
ծայրի մարդկութեանս, և հնագոյն յոյժ մա-
տեանս ունելով՚ի ձեռին քան զՅունացն, քա-
զուամ ևս աւանդութիւնք առաջին մարդկանն
պահէին առ նոսա, թէպէտ և թանձր առաս-
պելեօք մածեալ:

[1] Պղատ. Համառակ. Ջ: [2] Ընդ. ժ:

ՅՕԹՈՒՆԸՆ ԵՐԲՈՐԴ

Իջք Հրեից ընդ ձեռամբ Մակեդոնացւոց։

ՀԸՆԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲՆ Աղեքսանդրի և քան զևս ծանօթացան Հրեայք Յունաց՝ ան կեալք ընդ իշխանութեամբ նոցա, որպէս ցուցանէ Յովսեպոս բանիւ Աղեաքեայ աշակերտին Ալիստոտելի, և Կատեայ Ալեգերացւոյ։ ԱՅԼ զոր օրինակ ընդ Թագաւորաք Պարսից՝ նոյնպէս և ընդ Մակեդոնացւովքն կեցին նոքա ինքնօրէնք պատուականեալք ի նոցանէ։ Եւ զի բնակէին ի միջերկրայս Ասորւոց և Եգիպտոսի, մերթ նոցա հպատակէին և մերթ սմա՝ ըստ զօրանալոյ միոյն կամ միւսոյն։ Եւ դարձեալ, էր զի ընդ Հռոմ գտանէին առաջի նոցա և էր զի ոչ, որպէս և զիարդ էր բոյս բարւոյ Թագաւորացն և զօրաքաղաքութիւն, և կամ ըստ համեմատ զօրութեան թշնամեաց նոցա։ Ցեսեալ մեծին Աղեքսանդրի զսէր նոցա և զմտերմութիւն՝ ընդ իշխանութեամբ նոցին արար զՄամռիա, և զերծոյց զնոսա ի հարկաց. և ի կառուցանելն զԱղեքսանդրիա՝ աճ բնակեցոյց անդ և ի Հրէից ազատութեամբքն յոր վայելէին այլք, մինչ զի Մակեդոնացիս կոչել և նոցա։ Եւ թէպէտ առաջինն

1 Յովսեպ. ընդդէմ Ապիոն. Ա. ԺԲ։ 2 Անդ. Բ. Բ։

'ի Պաղեստինացս իբրև առ Հռոմայեցսն գալ՝ զբազումն 'ի Հրեից գերի ած Ադրիպտոս, և ցրուեալ ցանեաց զնոսա մինչև 'ի Կիլիկեան կողմն[1], այլ ապա զջուխ առեալ բարեպաշտութեանն նոցա և զերկիւղածութեան յերդմունս՝ ընտրեաց 'ի նոցանէ պահակապանս իւր, և մեծապէս գուէթ արարեալ ընդ նոսա, և զայլս բազումս ձգեաց յերկիր իւր։ Իսկ Փիղադելփոս որդի նորա՝ ազատութիւն չնորհեաց առնեցուն նոցա որ 'ի սահմանս իւր էին, և բազում օժիտս ընծայից ետ տանել Ադրիսաղէմ 'ի տրիտուր Թարգմանութեան Աստուածաշունչ գրոցն արարեալ 'ի հրամանաց իւրոց[2]։

Ել ինչ ընդհատ ձեռն օգնականութեան գտին և 'ի թագաւորաց բազմաց Աստուց[3]։ Ելեւկոս Կիկանովը ընդ քաղաքացիս դաստակերտից իւրոց խառնեաց զնոսա 'ի փոքրն Ասիա և 'ի ստորին Ասորիս, այլ և Անտիոք 'ի թագաւորեալ քաղաքին, չնորհեալ նոցա և այլ ազգի ազգի ազատութիւնս, յորս դեռ ևս վայելէին և առ Հռոմայեսն։ Մեծն Անտիոքոս ընդ բազում վաստակոց նոցա ապահարկ կացոյց զԱդրիսաղէմ, և ազատութիւնս մեծամեծս չնորհեաց նմա. և դարձեալ, առ անկասկած լինել 'ի Լուգացւոց և 'ի Վռիւգացւոց

1 Յովսեպ. Հնախօս. ժԲ. ա։ 2 Յովսեպ. Հնախօս. ժԲ. բ։
ա։ Ընդդէմ Ապիոն. Բ. բ։ 3 Նոյն. ե։

որք ոչ անխափան բերկրինն ի Հարկ հնազան-
դութեան, հատուածի աղագաւ առաքեաց
անդր՝ ի Հրեից, և քաշխեաց նոցա տեղիս և
ագարակս՝ ի չինուած պիտոյից և միաւորեան։

Ի յաջողութիւնս յայսոսիկ առաջին՝ ի խըն-
դրուածս Հրեից ամենայն ուրեք այս էր, պաշ-
տել աղատութեամբ զկրօնս իւրեանց և պահ-
հել զօրէնսն. սակայն և այնպէս կարի դժուա-
բին էր նոցա հաւնուլ՝ ի կիր քաղում ինչ՝ ի սո-
վորութեանց Յունաց, որպէս առեալ էին՝ ի
Վաղդեացւոց և յայլոց. իսկ խօսել՝ ի յոյն լե-
զու հարկ իսկ էր նոցա, զի հասարակաց էր
այն յայնժամ արևելից աղգին, և եկաց՝ ցոր-
չափ յիշխանութեան կային Հռոմք։ Իբ աս-
տի սկիզբն առին՝ ի նոսա յունական անուանք,
որպէս Ալբիստոբուղոս, Պրիստողոն, Ալնդրեաս,
Փիլիպպոս. կամ հնչումն եբրայական անուանց
ըստ յունին՝ զՅեսու՝ ի Յասոն փոխեալ, զԱի-
մէոն՝ ի Ալիմոն, զԵրուսաղէմ Երբսողիմա,
այլոցքն հանդերձ։

Ո այսու ժամանակաւ երևի անցեալ Հրեից
ընդ ծով և եկեալ Երբոպէ. քանզի որք տե-
ղեակք եին յունականին և սովորեալք կեալ՝ ի
միասին ընդ Յոյնս Ալբիս, Ալսորիս և Երդիպ-
տոս, ոչ ինչ դժուարին էր քնակել նոցա և ընդ
բնաւ աշխարհս Յունաց, և՝ ի Ալեքսանդրիա
իսկ և Ալքայիա, ուր և առաւել գիւր էր նո-
ցա և ազատութիւն։ Ալմին իսկ Պօղոս՝ ի շըր-

*ջեն քարոզութեամբ աւետարանին երկերիւր և յիսուն ամաք զինի Ստեփանոսի Յրևելից՝ յամենայն քաղաքս Յլադայ գտաներ բազմութիւն Հրէից։ Ազգս են կիսայինքն՝ զորս Հրեայք արևելեայք հելլենացեալս կոչէին, զի և զնաւ հեթանոսս Հելլէն անուանէին, որ ըստ բուն ձայնին զյոյնն ցուցանէ. վասն որոյ և 'ի Թուղթս Պօղոսի հեթանոս և յոյն զնոյն նշանակէ *։*

Պատաքէն անմարթ եր այսչափ եւ մուտս ունել Հրէից ընդ Յունաց, և Յունաց որ այսպէս ընդվայրաքնինք էին 'ի ժամանակս յայնոսիկ՝ չլինել խելամուտ կրօնից նոցա և օրինաց, մանաւանդ յետ թարգմանելոյ աստուածաշունչ մատենիցն։ Այսն որոյ որք իմաստունքն էին և Հնմարիտ իմաստասէրք՝ մեծարգէին զնոսա, զոր և 'ի բանից Պօղոսի [1] է 'ի միտ առնուլ, որ յետ բազում ժամանակաց գրեաց զայսցանէ։ Քանզի անայինն ամենեքեան ընդ մեծագործութեն տաճարին և ընդ արարողութեանցն գեղեցիկ կարգաւորութիւն. և Պետրոսիպաս ինքնին՝ վեսայացեալն (Գոստոմի՝ զարմանայր ընդ այն [2]։ Այցյոլովգունից 'ի Յունաց այնր ժամանակի, առ Թագաւորութեամբ ասեմ Պահեդոնացւոց, դժուարին եր

* Որ 'ի գէպ դէմ նախ հրէի, և ապա հեթանոսի, լսին ընդ ընդ ընդ, նախ հրէի, և ապա յունի. Հռ. Ա. 16։ Բ. 10, ևն։

1 Տարաբ. ժԴ։

2 Փիլոն։

ախորժել ընդ վարդապետութիւն և ընդ իմաստս Հրէից. քանզի ծանրանային այնոքիկ մեղկելոցն ՚ի զեղխութիւնս Ասիացւոց, և ըզբազելոցն ՚ի մնոտիս և ՚ի նանրութիւնս։ Այլ թէպէտ բազում իմաստասէրք էին ՚ի նոսա, այլ բազմագոյնք ՚ի նոցանէ չատ համարէին Ճառել և վիճել զառաքինութեանց. իսկ այլք ամենեքին ՚ի Յունաց ընդ վայրաքինութեան զՀետ զակատեալ և գեղարուեստից, ոմն ըզհռետորութիւն պատուէր, այլ ոմն զքերթուածութիւն, և դարձեալ միւս ոմն զերաժշտութիւն. մեծարոյ էին առ ամենեսին նկարիչք, քանդակագործք և Ճարտարապետք։ Այլ այլք դարձեալ ՚ի կրթական հանդէսս էին անձնանուէրք, որպէս զի հրահանգեալ մարմնով ըմբիշք առաքինիք երևեսցին։ Այնք երկրաչափութեան զՀետ պնդեալ էին, աստղաբաշխութեան և քնաբանութեան։ Որպէս զի չէին իսկ այլ ինչ բայց գիտունք, մտաւարժք, ընդվայրաբնինք և դատարկակեաց չիմ ազգս անգործութե[1]։

Հռովմայեցւոցն բարձ օգտակարագոյնք էին չափաժամ Կրկրագործութիւն երպարապուճն նոցա, և իրաւագիտութիւն և պատերազմ[2]. կամակար Թողին Յունաց զպարծանս գեղարուեստից և ընդվայրաքնին գիտութեանց,

1 «Ան ինչ ըզդէնս ՚ի բաց եդեալ
Յոյնք ՚ի բարբանջ զառածան»։ Ովր. Ի. Թուղթ ։
2 Ովրատ. անգ։

զի աշխարհակալութեան միտ դնիցեն և վար-
չութեձ ժողովրդոց, վերհագոյն ամենայնի զքա-
զաքականութեձ համարեալ, որպէս ասէ Ա իր-
գիլիոս[1]: Բայց բարձրահայեաց և եր խոսա-
տութիւն Հրէից, որոց առաջին ուսումն եր
բարոյականն, և ծառայութիւն Աստուծոյ.
զայսր գերապանծ օրինակ է տեսանել՝ի գիրս
Աիրաքայ, որ՝ի նմին ժամանակի գրեալ: Ա-
կայն վասն այսորիկ մանաւանդ ագէտս հա-
մարեին զնոսա Յոյնք, տեսեալ զի բաց յօրի-
նայն չկամէին այլ ինչ գիտել: Խուժդուժս
կոչէին զնոսա, որպէս և զամենայն ազգս որ
չէին յոյնք. այլ Հրեայք քան զբնաւս արհա-
մարհ էին յաչս նոցա զի գժտեալ իմն թուէին
կրօնք նոցա և անտեղի[2]: Հայեցեալ տեսանէին՝
զի ժուժկալ լինէին յանապատս՝ չուայտելոյ ոչ
առ անտեսութեան իմն կամ քաղաքականու-
թեան, այլ վասն խղձի մտաց, որ ապաքէն խիտ
էր նոցա. իսկ ընդ հանգիստ չաբաթուց նո-
ցա, ընդ պահս և ընդ խորութիւն կերակրոց
ուժգին և զայրանային. վասն այսորիկ թշնա-
միս մարդկութեան համարեին զնոսա: Այսեր
իսկ յոյն ոմն խմաստասէր զնոցանէ՝ թէ օտա-
րացեալ զատեալ կան յամենայն մարդկանէ,
և չիք ինչ նոցա ընդ մեզ, ոչ կերակուր, ոչ նը-
ւէրք, ոչ աղօթք և ոչ զոհ. քան զ՝ չաչիս,

1 Ենեակ. Ե: Յովսեպ. Որոգ. ընդդէմ Կեր. Ե:
Ընդդէմ Ապիոն. Ա. գ: Բ. ջ: 2 Տակիտ. Պատմ. Ե:

քան զԱկարբիացիս և քան զՀնդիկս առա-
ւել հեռի են նոքա ի միմեանց[1]։

Յաւել և զայն ի Հրեայք առ ահի կռա-
պաշտութեան խոտեին զքանդակս և զնկար-
չութիւն՝ զսիրելիսն յարուեստս առ Յոյնս[2]։
Ընարգեին զանդրիս իբր ումպէտ ինչ աշխա-
տութիւնս, և ծաղուս արժանիս, և ծնունդս
դատարկութեան յորմէ յաձախ և գիրք սուրբք
ընդունայնութիւն կոչեն զկուռս, առ ի յայտ
առնել թէ արդարև ոչինչ են նոքա, և զաչս
ևեթ գիտեն պատրել, և առ ոչ ինչ են պետա-
նացու։ Պղծութիւնս ևս անուանեն զնոսա
գիրք. քանզի և ոչ իսկ է մարթ ըստ արժան
բաւականին գարշել ի նոցանէ, Հայեցեալ ի
կուրութիւն այնոցիկ որք զանհաղորդական
անունն Աստուծոյ՝ նոցա ընծայեին[3]։ Այլ ինչ իբր
անմարթ եր Հրէից չզայրանալ ի լսել զամ
բարշտութեան առասպելս, որով յօրինեալ
էին յոյն քերթածք[4]. այլ զայրացուն նոցա
գրդեալ զգրգռեր զքերականս որոց գործ եր
մեկնել զնոսա, զհագներգուս՝ որոց արուեստ
եր երգել զդիւցազնական բանաստեղծու-
թիւնս ի լուր ամենեցուն. զգուսանս ողբեր-
գութեանց և կատակերգութեանց և զամե-
նեսին զնոսա որոց շահ և համբաւ ի քերթու-
թենէ եր և ի գիւցաբանութենէ։

1 Փիլոսոփատ. վերք Նպղ. Ա. ը։
2 Որոգ. ընդդէմ կռս. Դ։
3 Եսայ. ԽԱ. 10։ Երեմ. Ծ. 15։ Խաստ. ԺԳ. 13։
4 Պղատ. Յոն։

Եւ թէպէտ խրատեալ էին Հրեայք չեպե-
բել զայլ ազգս, և ոչ չարախօսել զդից նոցա՝,
բայց դժուարին էր յոյժ քամահանաց ինչ բանս
կամ խօսս չհանել՝ի բերանոյ։ Ոչ միտաւ ած
արդ որպէս սրտմտեալ կատաղէր քերականն ոք
յոյն եթէ հասանէր ուրեք երբեք յունկնդրոյ՝
զի կշտամբէր Հրեայն զկուռս բանիւք մար-
գարէից, և նենգաւոր և ամօթոյ մարգարէ
կոչէր զՀոմերոս, և խայտառակէր զանմիտ
ազգաբանութիւնն դիցն, զտռփանսն և զեղե-
բունս նոցա։ Ոչ խնդր էր համբերել նմա ընդ
գարշանս նոցա՝ի նշաւակութեանց թատերց,
և՝ի զազրագործ պաշտամանց սպանդարամե-
տին, և Վեներտոյ, և համայն ասացեալ՝ ընդ
համարել նոցա զԱստուածն իւրեանց միայն
Ճշմարիտ Աստուած, և ինքեանց միայն՝ի մէջ ժո-
ղովրդոց Ճանաչել զՃշմարիտ կրօնս և զուղղու-
թիւ վարուց։ Եւ այնչափ առաւել քամահելին
բանք նոցա, որչափ տգէտ էին նոքա բեմբա-
սագութիւ օրինաց, և կանոնաց փաստաբանու-
թեան, որք՝ի ցոյց հրաշալի Ճշմարտութեանցն
զգործս՝ի մէջ բերէին, զմեծամեծ սքանչե-
լիսն ասեմ զոր արարեալ էր Աստուծոյ առ
հարս նոցա։ Ապաքէն խաժամուժն Հունաց
չգիտէր խորել զսքանչելիսն զայնոսիկ՝ի սուտ
նշանաց՝ որ յառասպելս նոցա պատմէին. իսկ
իմաստասէրքն նոցա անհնարին կարծէին զիրսն,

1 Յովսեպ. ընդդէմ Ապիո.

ըստ օրինաց բնութեան դատելով զամենայն, զորս անլուծանելիս ամենևին համարիկն[1]։

Ասպիսիս զնոսա համարելով Յունաց, կամակար ունկն մատուցին այնու հետև չարախօսիցն նոցա Փիւնիկեցւոց, Եգիպտացւոց և այլոց ոսոխացն[2]։ Ըստ պատճառս առին դըժպատեհ առասպելքն Տակիտոսի՝ զորս փութով սնդութեամբ պատմէ՛ի կամէն ընախօսել ըզՀրեից[3], և հանդէս առնել հանճարոյ իւրոյ՛ի քաջ պատմագրութիւն. որպէս և Յուստինոս[4], որ՛ի նմին ակամբ առնու զբանսն։ Ընաւաել իմաստութեամբ, այլ ոչ ինչ տեղեկագոյնս քան զնոսա ձառեայ Աստուածն։

Ի վերայ զպարտութեանցս այսոցիկ զորովք գիւրին եր արհամարհել՝ ձեռն արկին Յոյնք՛ի հարստահարութիւն իսկ և՛ի հալածանս։ Զի Պաղամիոս փիլոսոփոսը նկուն եղեալ՛ի մարտին որ՛ի Հռափիա՝ թափեաց զյաղթութիւն իւր՛ի վերայ Հրէից. և Ապիփան որդի նորա սրտմտեալ ընդ այն զի արգելաւ մանել՛ի տաճարն՝ կուռ փղոյ խոշհեցաւ արկանել զնոսա, զոր երբորդ գիրք Մակաբայեցւոցն պատմէն։ Յաւուրս Աղեւկեայ փիլոսոփոսի արքայի Ասորւոց եկն Հեղիոդորոս կապտել զտաճարն՛ի նուիրեալ գանձուց անտի, և ձեռն ա-

1 Գաղէն. յղ. սովոր. Յովսեպ. ընդդէմ Ապիոնի։ Պարթ։
2 Ցես և զերկոսին ողջ գիրս
3 Պատմ. Ե։
4 Յուստին. ԻԶ։

մեռանիլն արգել զնա[1]։ Օ, կնի ապա առ Ն-
տիոքաւ Պրևելոսակիզբն առնոյր Հալածումն
մեծ՝ որպիսի ոչ էր նոցա բնաւ տեսեալ յա-
ռաջ, հանդոյն իմն հալածանացն զոր կրեաց
զկնի եկեղեցի Երուսաղեմի, վասն որոյ ընդ
վկայս իւր գասակարգեաց[2] զորս յայնժամ՝ ի
վերայ աստուածային օրինացն նահատակեցան։

Առաջ յառաջամարտիկք գտան յամենեսին
յորս յայտնի էն մեզ՝ ի յանձն առնուլ զմահ
ի վերայ կրօնից։ Օ, ի Թէպէտ և որք ի հուր
ընկեցան երեք մանկունքն[3], և Եզեկիէլ առ
կեաղն ի գուբ առիւծուց, զմարտիրոսական
յանձն առին նահատակութիւն, այլ եցոյց
Աստուած զաջ իւր ի փրկել զնոսա. իսկ Ե-
զիազար[4], և Շամունեանք եղբարք եօթն հան
դերձ ամենեքումբք յիշատակելովք ի գիրս
Մակաբայեցւոց, ետուն իսկապէս զկեանս ի-
բեանց վասն տեառն և վասն հայրենատուր
օրինացն։ Առաջ գարձեալ նախընծայ օրինակք
այգպիսեամ նահատակութեան յամենայն
պատմութիւնս ազգաց. զի ոչ որ ի հեթանո-
սաց յառաջ քան զայս ժամանակս, այլ և ոչ
ոք յիսմատասիրաց ընտրեաց զմահ և զփորձ
դժնդակ տանջանաց՝ քան յետս կալ ի կրօնից
իւրոց և յօրինաց աշխարհին։

1 ի Մակաբ. Գ. 7, ևն։
2 Վկայաբ. Հռոմ. յօ-
գոստ. իե։
3 Դան. Գ. 16։ ԺԳ. 30։
4 ի Մակաբ. Զ. 18, 2։

Համարձակ զայս յանդիման առնէ Յովսեպոս հեթանոսաց. "Խազումք, ասէ, 'ի գերեզաց ազգին մերոյ 'ի զանազան դէպս և 'ի թատերս չարչարեցան ազգի ազգի տանջանօք և կտտանօք մահու, և ոչ կալան յանձին հակառակ ինչ խօսել օրինացս կամ աստուածեղէն մատենից. այլ աղէ որ այն Յոյն իցէ որ ոչ յանձն առնուցու հրոյ Ճարակ տալ զանձինայն գրեանն՝ քան մատնել զանձն 'ի դոյզն անգամ տանջանս.." ։

Եւ թէպէտ գտան 'ի Հրէից որք գայթակղեցան 'ի հալածանսն, բայց այնպիսիքն ուրացան եղեն 'ի սպառ 'ի կրօնիչ իւրեանց և յօրինաց, մինչ զի խորամանկել անգամ ծածկել զթլփատութիւն իւնան, վասն որոյ և ոչ ընդ Հրեայս հաշուէին ։ Իսկ որք կացինն հաւատարիմ՝ այնպէս նախանձաւոր եղեն օրինաց իւրեանց և ազատութեան ետն, մինչև զնոս առնուլ 'ի պաշտպանութիւն նմին ընդդէմ Թագաւորացն Յունաց ։ Օ՛ի գրժէին նոքա յայնանապէս ուխտի ազատութենէն որ շնորհեցան նոցա 'ի Թագաւորացն Պարսից, և հաստատեցան Սղեքսանդրէ և 'ի յաջորդաց նորա յարքայից Սելեկեդոնացւոց, և ընդել կամէին զձիմարիտ կրօնսըն որ և յայնժամ՝ 'ի միում ժողովրդեան կայր, և 'ի միում աշխարհի ։

1 Ընդդէմ Ապիոն։ 2 ա Մակաբ. Ա. 16։

ՅՕԳՈՒԸՆ ԶՈՐՐՈՐԴ

Թագաւորութիւն Ամենեցուն։

Յամենեցունց աւասիկ յաւուրս Մակաբեանց, յորս դարձեալ ամբառնայ ազգն հրեայ կան և նորանշոյլ պայծառանայ։ Ալ ևս աղքատին այն ազգ է որ շատ համարէր ի խաղաղութեան կեալ ընդ առաջնորդութեամբ ծերոց և քահանայապետաց. երանելի արդարև վասն ազատութեանն ի գոծել զանգս իւր, և ի պաշտել ըստ օրինաց վկայեաց երկնից։ Պետութիւն իմն արդ ինքնիշխան ամենևին՝ իրախուսէ ի քաջընտիր զօրս իւր, յամուր ամուր քաղաքս, ի նիզակակցութիւնս ոչ մեծաւորս թագաւորութեանց ևեթ, այլ և հեռաւորաց, և Հռովմայեցւոց իսկ։ Մեծաւորք Եգիպտոսի և Ասորւոց որք այնպէս անագորոյն գտան առ նա՝ բռնադատին արդ աղերսել զբարեկամութիւնն նորա։

Յաշխարհակալութիւնս ևս ձեռն արկին նոքա. Յովհաննէս Հիւրկանոս էառ զՄիւքեմ և զՄարիզին[1], և կործանեաց զտաճարն Սամարացւոց, համարձակ յայս և յայնկոյս արշաւելով ընդ բնաւ երկիրն Իսրայելի։ Այս արտաքոյ ընդարձակեալ Ասորիս զսահմանս իւր՝

1 Յովսեպ. Հնախօս. ԺԳ. ԺԷ։

տիրապետեաց անդ քաղաքաց բազմաց յետ մահ-
ուանելոյ Պետիքոսի Միքեացւոյ՝ Նուաձեաց
և զԱդոմայեցւոց աշխարհն ողջոյն, և ամի
պեաց զնոսա առնուլ զթլփատութիւն, և պա-
հել զօրէնսն Մովսիսի, քանզի ընդ Հրեայս
խառնեալ էին։ Ուր Աբիտաբուղոս որդի նո-
րա յաւել ի վերայ իշխանութեանն կրել և
զօրէնս արքունի՝ Թագ եգեալ ի գլուխ. և
Աղեքսանդր Յոհիաս ևս քան զևս ընդարձա-
կեաց զտերութիւնն[1]։

Բայց ոչ յերկարեցին պարծանքս այս Հր-
էից. զի Թեպետ և վտանգաւորին Թագաւո-
րութեց Անտիոքոսի և Պտղոմեայ զնոսա, այլ սպառազինու-
թեամբ հորդակուռն երկո-
ցունց Թագաւորութեանցն ի զօրանալոյ յոյժ
Հռոմայեցւոց՝ զհետ ձգեաց և զնոցայն։ Այլ
ինքնին իսկ սկսեալ էր կործանել վասն երկ-
պառակութեանցն որ ի նոսա, և վասն ընդ
հակառակս լինելոյ միմեանց երկուց որդւոցն
Աղեքսանդրի Յոհեայ՝ Հիւրկանոսի և Արիս-
տաբուղեայ։ Համառօտ ասել. ոչ վայելեցին
ի գեղեցիկ ազատութեանն աւելի քան զամ
ութսուն. զի այսչափ անցին ամք ի Թօթափել
Շմաւոնի զլուծ Յունաց, և իշխան քա-
հանայապետ[2] կացուցանելոյ զնա ժողովրդեան
ի վերայ ազգին մինչև յաւուրս Պոմպէի, որ
կոչեցաւ՝ ի Հիւրկանոսէ՝ էին էառ զԱրու-

1 Յովս. Հնախօս. ԺԳ. ե, իա, լը։ 2 ա Մակաբ. ԺԴ. 41։

սաղէմ՝ և եմուտ ի տաճարն, և հարկատու արար զՀրեայս։

Ո՛կնի ապա զամս քսան և աւելի ի տառապանս կեցին և ի վիշտս[1], երկպառակութեամբ կուսակցաց երկոցունց եղբարց, և յափշտակութեամբ Հռոմոց՝ որք կողոպտեցին առին ի նոցանէ յայլ և այլ նուաճս առաւելքան զչորս հազար քանքարաց, որ առնեն աւելի քան զքառասուն միլիոն լիրայս Ոսկւոյ։ Ոկ իբրև Արուտոս և Կասսիոս անկան խորտակեցան, ժամ պատեհ առեալ Պարթեւաց զվատութիւն Մարկոսի Անտոնինոսի որ իշխանն էր արևելից՝ յարձակեալ տիրեցին Պաղեստիկ նացւոց աշխարհին և Ասորւոց, և գերի ընդ իւրեանս տարան զԻւրկանոս։ Ասպէս զանցեալ ժամանակս խռովութեանց Հռոմոց և զօրանալոյ Պարթեւաց՝ ի վերայնոցա, յաւերև ի կողոպուտ կայր Պաղեստին բազմութեան զօրաց այլ և այլ ազգաց յորոց կոխան լինէր, և յասպատակութիւն մօտաւոր ազգաց՝ մանաւանդ Արաբացւոց։

Այս թէպէտ սակաւիկ մի հանդարտեաց ընդ իշխանութեամբ Հերովդի, որ արար նմա խաղաղութիւն և լիացոյց զնա. զի զօրացաւ նա և էր ձոխ և առատ, այլ չմարթի ասել թէ ազատ էին յայնժամ Հրեայք, ուր և ինքն Հերովդէս ընդ կայսերօք Հռովմայեցւոցն

2 Յովսեպ. Հնախօս. ԺԴ. Ը, Ժբ.

նուաճեալ կայր։ Եւ էր ինքն այլազգի, զա-
ւակ Եդոմայ, օտար յաւետնային կրօնից, կամ
իբրև հանդերձ ինն զգեցեալ զկրօնս, ՚ի պէտս
քաղաքականութեան վարեալով նովաւ։ Եղծ
զկարգ քահանայապետաց, ՚ի Նաբեղոնէ կոչե-
ցեալ զոմն Ընանիէլ անուն [1], այր վատ, թէ-
պէտ և ՚ի զարմէ քահանայից. և յայնմ հետէ
ոչ ոք այլ եկաց քահանայապետ, բայց զորս
Թագաւորք կամեցան կացուցանել, և ցոր-
չափ ժամանակս Թողին նոցա քահանայա-
պետել։

Յետ մեռանելոյ Հերովդէի ոչ ևս տէրու-
թիւն ՚ի ձեռս էառ որդւոցն Հերովդի, այլ
որդիք նորա զմասն ինչ Թագաւորութե նորա
ևեթ ունէին, և զայն ոչ բազում ժամանակս.
իսկ Հրէաստանի իշխէին ոստիկանք հռով-
մայեցիք ընդ փոխանակաւ բդեշխին Ասորւոց։
Յուսկ յետոյ և յաշխարհէն ՚ի բաց վտարեցան
Հրեայք, և յայն պայման հասին՝ յոր կանն ցայս-
օր։ Որդ զվերջին զայս իրս նոցա առաջի կայ
մեզ տեսանել, սկսեալ յազատութենէն նոցա
առ Ը մասնիւ և առ Ասմոնացւովք մինչև ՚ի
համայնաջինջ եղծուածն նոցա յաւուրս Վես-
պասիանոսի, որ ունի չափ ժամանակի երկե-
րիւր ամաց. ՚ի սմա բովանդակի առաւելագոյն
մասն պատմութեան Յակաբայեցւոց, և հա-
րէն իրք նորոց կտակարանաց, յորս կարի ինն

1 Յովսեպ. Հնախօս. ԺԴ. ը։

անհնմանք են սովորութիւնք Հրէից առաջնոց ժամանակացն սովորութեանց։

ՅՕԹՈՒՆՅ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Սովորութիւնք Հրէից ի յետին ժամանակս։

Հրեայքն ի յետին ժամանակս կային խառն ընդ բազում այլ ազգս։ Որպէս գիտեմ ես յայրուսաղէմ՝ որպէս գիրն ասէ՝ յամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից։ զի յորովք չուէին գալ բնակել ի Հրէաստան, և կամ Ճանապարհառնել անդր պանդխտութիւն առ ի պատարագս մատուցանել ի տաճարին, ուր և էր օրէն երթող և զորս ի հեթանոսաց դառնային ընդ ժամանակս ժամանակս յարել ի նոսա իբրև եկս. որպէս զի ոչ ևս տիրապէս մի ազգ էին Հրեայք կամ ժողովուրդ մի համաբարբառ և համաբարոյ, այլ անդստին յայնց ժամանակաց սկսեալ էին ազգք բազումք գալ տուաղել ի մի կրօնս։ Ի նոսին իսկ ի բնակիչս սրբոյ երկրին դասանէին յայլ և այլազգացն Ադոմացւոց և յայլոց Արաբացւոց, Ամպիստացւոց, ի Փիւնհիկեցւոց, Ասորւոց և ի Յունաց։

Յամենայն կողմանս աշխարհի իբրև եղբարք այնպէս ընդ միմեանս վարէին Հրեայք,

և ձեռն տային իրերաց։ Քահանայական լինելին Հանապարհորդելոց Հրկից, և զօրավիգն աղքատաց ամենայն գաւառաց, և առաւել Հըրեստանեայց։ Այլ քանզի որ՝ի Հեռաւոր աշխարհս պանդխտացեալ եկին՝ չմարթեին տալ տասանորդս և երախայրիս ըստ ազգի ազգի բերոցն, և կամ գալ՝ի տաճարն յամենայն աւուրս տոնից և առաջի առնել զընծայսն, նըմին իրի զոր պարտէին տեառն՝ ընդ արծաթոյ փոխանակէին, և մեծերեալ Հարկ բազմագունմար ամի ամի առաքէին Երուսաղէմ յամենայն գաւառաց՝ի ծախս զոհից և՝ի պէտս կարօտելոց՝։ Այս է հրեական ոսկին, զոր մէ խօսի Աիկերոն[1]։

Այլեւս կործանման իսկ տաճարին հանապազորդեցին ընդ բազում դարս Հանգանակութիւնքս այսոքիկ. զի որ գլուխ ազգին էր՝ի նոսա՝ զոր նահապետն կոչէին՝ յղէր՝ի ժամանակին յատենակալացն, որ սովորաբար առընթեր նմա կային՝ և կոչէին առաքեալք կամ նուիրակք[2]. և երթեալ նոցա՝ի գաւառս գաւառս այց ելանէին ժողովրդանոցաց իշխանութեամբն որ տուեալ էր նոցա՝ի վերայ ժողովրդապետին և ծերոցն և քահանայից. և առեալ զկարգեալ Հարկն բերէին առ նահապետն։ Այլ ասա՝ի կայսերաց քրիստոնէից արգե-

1 Յովսեպ. Հնախօս. ԺԴ. ԺԲ։ 2 Վասն Փղակոսի։ 3 Նոսիփ. յղ Հերձուած. Լ։

լաւ նոցա առնել զդրամաժողովս գայս [1]։ Որ-
դի՛ ի հօրէ առնուին զնահապետութիւնն,
որպէս զի և մանկանց բազմաց հասանել յայն
աւագութիւն։ Յանդրէն՛ ի կարգ բանիս
՛ի վեր ելեալ, յաւուրսն յորում ատակաւին կան-
գուն կայր Յրուսաղէմ՝ յիւրաքանչիւր գա-
ւառս ազգապետք կային Հրէից ելենար-
քոսք յորջորջեալք ՛ի յոյնն, և նոքա դատէին
զնոսա ըստ օրինաց իւրեանց։ Այ եհք ՛ի նո-
սա հանդիսացան որք Աղեքսոս կացինն ազ-
գապետք [2]։

Ի Հրէաստան իշխանութիւնն ՛ի ձեռս էր
Եօթանասնից և մի ծերոց՝ որպէս յառաջին
ժամանակն, զորս եղծմամբ յոյն բառին սա-
նեդրիմ կոչէին. և զնոսա իմանան աւետա-
բանիչք յասելն ծերս Ժողովրդեան [3]։ Այնոցիկ
Ժողովրդանոցաց իշխանք էին՝ որ և Ժողովրդա-
պետք, ըստ որում և յաւետարանն կ տեսա-
նել։ Պօղին և երիցունք, և սարկաւագունք
կամ պաշտօնեայք՝ հաղանիմառձայնեալք ըստ
նոցին բարբառոյ, որոց գործ էր հսկել ժո-
ղովրդանոցաց, և բերել զգիրս առ վարդա-
պետն ուսուցիչ։ Յաղաքաց իւրաքանչիւր էին
քսան և երեք դատաւորք, որպէս ՛ի վեր անդր
ասացաք. քանզի ՛ի ժամանակս յայսոսիկ ա-

1 Գիրք Դ. յղ. Հրէից։ 3 Եսիփ. յղ. Հրէա. Լ. ա։
2 Հերոն. յԵսայ. ԺԹ. Ղուկ. Դ. 20։
դ. Մարաբ։

ռաւելապէս պատկանին որ ինչ իրք պատմեալք
'ի Յովսեփեան յաղագս տարազոյ դատաս-
տանաց նոցա և առնելոյ զիրաւունս[1]:

Հրեայք բնակեալք 'ի Հրէաստան՝ ոչ կա-
տեցան 'ի մշակութենէ, 'ի հովուութենէ և
յամենայն ագարակային վաստակոց: Կան
դեռ և 'ի դրամոյ հատելոց յաւուրս Ա՝ա-
կաբեանց՝ հասկս ցորենոյ դրոշմեալս բերելով
և գրիւս[2], առ 'ի յայտ առնել զարգաւաճու-
թիւն աշխարհին, և զպարծանս իւրեանց 'ի
ջանս հերկագործութեան[3]: Այսպիսի որ ինչ
նկարագրեն մեզ աստուածեղէն գիրք զբաղե-
բաստ աւուրց առաջնորդութեանն Ե՛մաւո-
նի. "Պործէին ասէ, զերկիր իւրեանց խա-
" ղաղութեամբ, և երկիր տայր զպտուղ
" իւր, և ամենայն փայտ ծառատունկ տայր
" զպեր իւր առատութեամբ: Ծերք 'ի հրա-
" պարակս նստէին, ձառս արկեալ զբանից
" բարութենէն ընդ միմեանս խորհէին. երի-
" տասարդք զինառս զգեցեալ՝ զարդարեալ 'ի
" զարդ պատերազմի... առնէր խաղաղու-
" թիւն, և ցնծայր Իսրայէլ յուրախութիւն
" մեծ, և նստէին իւրաքանչիւր ընդ այգւով
" իւրեանց և ընդ թզենեաւ իւրեանց, և ոչ
" ոք զարհուրեցուցանէր զնոսա"[4]: Որչ ա-
ռակայն Աիրաքայ՝ որ զնովին ժամանակօք ե-

[1] Մատեան Մանեդ. Մաքքոբ. 3 Պալե. 'ի վարս Ոսկեբ.
[2] Վէլես. տես. Ի. [4] ա Մակ. ժԴ. 8, ևն.

կաց, ինամով զսոյն զայս ազգ առնել յասելն. «Մի ատիցես զգործս վաստակոյ, և զմշակութիւն՝ որ ի բարձրելոյն հաստեցաւ»[1]:

Ալ և մարթի փոխել բուսոյ բարուց ազգաց իւրաքանչիւր: Մինչև ցայնժամ ոչ պակասեին հողագործք յայնոսականս Միկիլիոյ և Իտալիոյ, և որսորդք ոչ պակասեցին բնաւ յազինս Վերմանիոյ:

Զգալիք աւետարանին ըստ առաւելագոյն մասին ի շինական կենաց առեալ են. որպէս սերմանահանին, բարւոյ սերմանն, որոմանն, այգւոյն, բարւոյ ծառին և չարի, մոլորեալ ոչխարին, և քաջի հովուին. և այսոքիկ յաՀաս ի քաղաքս, և անդ յԱյրուսաղէմ խօսեցեալք: Մաւ շատք ևս յառակացս յայտ առնեն՝ զի տուր և առիւք շահաւետութիւն հասարակաց էր յայնժամ առ Հրեայս. և գտանեին ի նոսա սեղանաւորք և վաչխառուք. մանաւանդ զի և ոչ սակաւք զմաքսաւորութեամբ գային և զհարկահանութեամբ, թէ պէտ և այնու առելի լինել հասանէր նոցա անհնեցուն: Արդարեւ որ Յովսէփն եղև հրեչակաւոր՝ որպի Ծաղեայ ուրումն, որ յաւուրս Պտղոմէոս Էպիփանու ըստանձնեալ զհարկահանութիւն աշխարհին Ասորւոց առ հասարակ և զինիկիացւոց, կուտեաց մեծութիւն անչափ[2]:

1 Սիրաք. ե. 16: 2 Յովսեպ. Հնախոս. ժԲ. ը:

Արդ ուր գոյին սեղանաւորք և գանձապետք՝ հարկ էր անդ բազմագունից և վաճառականաց գոլ, ոմանց ի մեծամեծ առևտուրս պարապեալ, և կիսոց ի փոքունս. զոր ոյց և ուրոյն յիշատակութիւն առնէ Սիրաք յասելն. Երկաքանչիւրն ինձ բազմավաստակ թուի. "Հազիւ եթէ ապրեցի վաճառական ի յանցանաց, և ոչ արդարասցի թանգար ի մեղայ.,"։ Եւ զնովիմբ ածեալ զպատճառն մերձ դնէ, զի ցանկութեամբ շահու կուբացուցանէ զանձն և գնէ ի յանցանս. և թէ "Ի մէջ վաճառելոյ և գնելոյ խզեսցին մեղք.,"։ Սովին բանիւք կոչէր Աստուած զժողովուրդ իւր անդրէն ի նախնեացն սովորութիւն, և ազգ առնէր նոցա զի ոչ վայրապար քամահեցին հարք նոցա զտուրհատս։

Աւրոչ յօգուտ ի կիր արկին զխրատս զայսոսիկ. իսկ յետ մերժելոյ նոցա ի սպառ, և սոքա ևս քան զևս հեռացան ի պարզ և ի բնական կենացն որով կեին Իսրայելացիք։ Օ՛ի ի բազմայ հետէ ոչ ևս կալուածք են Հրեից, և ոչ ևս գործեն զերկիր։ Ի տուրհատից են կեանք նոցա, և յամենավաճառն չարաշահութենէ։ Փերեզակք են նոքա, միջնորդք, և վաչխատուք. համարէն մեծութիւնք նոցա արծաթ են և կարասիք, և ուր ուրեմն տեարք են տանց ի քաղաքս։

1 Սիրաք. Ի՚. 28։ 2 Աիդ. Իե. 1, 2։

Յոլովք ՚ի բժշկութիւն եւս պարապին, յոր հետամուտք եղեն յաւուրց անտի ըզրոց աստա-նօր մեր բանքս են։ Այրաք իսկ Ճառէ զայնմանէ [1], յուշ առնելով զկենցաղոգտութիւն արուեստին և զկազմութեան դեղոց։ Եւ յա-ւետարանն բանք լինին զկնոջէ ումեմէ [2], որ յոյժ վշտացեալ էր ՚ի բազում բժշկաց և ծա-խեալ զինչս իւր զամենայն։ Իսկ զոր զկնի ըզ-նովիմբ ածէ Այրաք [3] Թէ բազում աշխատու-թեամբ պէտք են յուսումն իմաստութեան, Թուի ՚ի գալիս և ՚ի վարդապետս օրինացն ակնարկել՝ որ զայսու ևեթ գային։ Նայց անդ առնմին և զկարեւորութիւն արուեստից ցուց-ցանէ [4], որով ՚ի միտ առնումք զի բազում ա-րուեստաւորք էին յայնժամ ՚ի Հրեայս. և առաքեալք, և աստուածահայրն Յովսէփ, և Նիքոդեմոս ինքնին չքնաղ օրինակ են այսո-ցիկ։ Եւս առաւել զարմանալ պարտ է ընդ աս-տուածայինն Պօղոս, որ Թէպետ ՚ի գիրս վար-ժեալ՝ հմուտ էր և արուեստի։ Զսոյն պատմեն Հրեայք և վերևելի երևելի բարու-նեաց իւրեանց [5]։

1 Սիրաք · ԼԸ · 1, 4։
2 Մարկ · Ե · 26։ Ղուկ · Ը · 43։
3 Սիր · ԼԸ · 15։
4 Մնդ · ԼԴ, և որ զկնի։
5 Թալմ։

ՅՕԻՒՒԸՆ ՎՂՅՆԵՐՈՐԴ

Աղանդք և անապաշտութիւնք։

Ի ԱՅՆՈՒ ժամանակաւ՝ի վեր երևէին աղ-
գի աղգի աղանդք։ Յաւուրց անտի Յովնա-
թանու որդւոյ Ա՛ատաթիայ՝ յայտնի եր հեր-
ձուած փարիսեցւոց, Սադուկեցւոց և Յե-
սեանց։ Փարիսեցիք յաւելուին յօրէնսն և
անգիր աւանդութիւնս ինչ՝ի հարց ընկա-
լեալ, և՝ի պահել անդ զկարևոր մասունս
ուղիղ վարդապետութեանն՝ կցկէին՝ի նոյն և
բազում ինքնակամ կրօնս՝։ և դնէին Ձա-
կատագիր խաչն ընդ անձնիշխանութեան,
կամ մանաւանդ զինամակալութիւն. վարիչ
անձնիշխանութեան։ Իսկ Սադուկեցիք զա-
մենայն ընդ անձնիշխանութեամբ արկանէին.
զի ըստ գրոյն իմացեալ՝ որ ինչ յաստուածա-
շունչ մատեանս, պնդէին՝ թէ չէրամայիցեն
նոցա գիրք հաւատալ՝ի յարութիւն և ոչ
յանմահութիւն հոգւոց. վասն որոյ և չխոս-
տովանէին ոչ հրեշտակ և ոչ հոգի՝։ Պա-
տուաճպաշտութիւն նոցա առ՝ի վայելս ժա-
մանակիցս էր, և զակատեալք էին՝ի մարմնոյ
յանկութիւնս։ Ընդհանրապէս էին յիւրեանս,

1 Յովսեպ. Հնախօս. ԺԳ. 2 Գործ. ԻԳ. 8։
Թ, ԺԹ, Ի։ Պատերազմ. Ց. Բ։

և խուն էր զօրութիւն նոցա ՚ի Ժողովրդեան։ Յակաւուր իսկ էին Թուով, Թէպէտ և մեծամեծք Ժողովրդեանն ընդ նոսա, այլ և ոչ սակաւք յերիցանց։ Նայց ձեռն ոամկին էր ընդ Փարիսեցւոց, որք Ճարտար էին ՚ի բարեպաշտել ՚ի վերին երեսս. և մեծապէս զօրացուցեալ էր զնոսա դէմ Յիսուսի Քրիստոսդրա՝ մինչև ՚ի չափ Թագաւորութեն Հասեալ որդւոցն[1]։

Օ արմանալի իմն էր առ սոքօք Յեսեանցն աղանդ։ Ի եհնէին ելանէին նոքա ՚ի բազմամեծս քաղաքաց. ամենայն ինչ Հասարակաց էր նոցա, և կերակուր նոցա անպաճոյճ[2]։ Օ քաղցր ժամս աւուրն ծախէին յաղօթս և ՚ի խոհուն օրինաց. և նմանութիւն յոյժ էր վարուց նոցա ընդ մարգարէից և ընդ Առաքելոցն։ Նաղուամբ ՚ի նոցանէ և կուսակրօն կեանս բերէին յանձինս, այնպէս իմն յաստուածային տեսութիւնս պարապեալք և ՚ի սրբութեան վարս՝ մինչև յոլովից ՚ի Հարց ընդ քրիստոնեայս Հաշուել զնոսա։

Նակ Փարիսեցիք ՚ի մէջ մարդկան կային, և միաբան յոյժ ընդ միմեանս. և խոշորս և խըստակեացս երևեալ յաչս աշխարհի՝ զանձանց իւրեանց խնդրէին զօգուտ, վեսք և արծաթասերք[3]։ Ջանային պարծանօք իմն օրինա-

1 Յովսեպ. Պատմ. Ա. ՟ը։ 3 Մատթ. ԻԳ.՝23։ Մարկ. Ժ.՝23։
2 Յովսեպ. Յղ. Պատե- Ի. 2։
բազմ. ԺԱ. ՟ժբ։

պահս ցուցանել զանձինս արտաքոյ. տասա-
նորդս տալին ոչ միայն ՚ի ստուար բերոյ եր-
կրի՝ այլ և ՚ի փանաքեաց, որպիսի անանուխն
է և սամիթ և չաման։ Վայթ մեծ էր նոցա
մկրտութիւնն ձեռաց և բաժակաց և ստամնոցաց
և այլ ամենայն կահից։ Ոչնպես տարապայ-
ման երկիւղածութիւն էր նոցա ՚ի պահպա-
նութիւն շաբաթուց, մինչև յանցանս գրել
Վրիստոսի զնեփել խուն ինչ կաւոյն մա-
տամբ, և աշակերտացն՝ զկորզել հասկի ընդ
արտորայս վասն զգօրեանն ուտելոյ։ Պահս
յաճախաւորս պահէին, և յոլովք ՚ի նոցանէ
երկիցս ՚ի շաբաթու, յերկուշաբաթի և ՚ի
հինգշաբաթի աւուրս։ Սիրէին իմն լսանել
զգրապանակս և երկայնել զքաղցս. գրա-
պանակաւն իմանալ է զբանս ինչ սուրբ գր-
ոց գրեալս ՚ի վերայ մագաղաթի՝ զոր կրէին
՚ի ձախատս իւրեանց կամ ՚ի վերայ ձախոյ
ձեռին, առ անչարժ առաջի աչաց ունել և
՚ի ձեռս զպատգամսն Աստուծոյ ըստ պա-
տուիրելոյ յօրէնսն[1]։ Իսկ քղանցքն ծոպք
իմն էն երփնագոյն՝ զոր նոյնպէս հրամայէին
օրէնք տանել նոցա ՚ի տունս հանդերձից,
առ ՚ի յուշ ածել զարձեալ զգալեաւս զպա-
տուիրանս տէառն։ Եւ արդ իսկ Հրեայք ՚ի
ժողովրդանոցս՝ տանին ՚ի վերայ իւրեանց
զնշանս զայսոսիկ, այլ յաւուրս գործոյ աւեթ.

[1] Մարկ. ԻԲ։ Ղուկ. Ջ. 1։ [2] Օրէնք. Ջ. 8։

զի յաւուրս չաթաթուց և ոճիից չկարօտա-
նալ ասեն աղգարար յիշատակի [1]։

Ողորմութիւնս առնէին վարիսեցիք ՚ի
ցոյցս մարդկան, և այլագունէին զերեսս
իւրեանց զի պահեցողք երևեսցին խիստք [2]։
Ա՛նշնամանս իմն առնէր նոցա անսուրբ ոգի ե-
թէ մերձենայր առ նոսա և պիղծ համարեալ
էր առ նոսա ոչ միայն հեթանոսն և յայտնի
մեղաւորն, այլ և որ միանգամ վարեր ա-
րուեստս դժպհիս։ Համառօտ ասել. յերկա-
րէին յաղօթս առ փառս որոյալոյ՚ի մարդկանէ։
Ա՛պստաւրութեամբ բանից մոլորեցուցանէին
զազէտ ռամիկն և զկանայս՝ որք մերկանային
յընչից իւրեանց առ՚ի մեծացուցանելոյ զնո-
սա. և պատճառանօք զի էին ժողովուրդ Աս-
տուծոյ և աւանդապահք օրինացն, խոտէին
զՅոյնս, զՀռովմայեցիս, և զամենայն ազգս
երկրի։

Ա՛ տեսանել ցայսօր՚ի գիրս Հրէից զաւան-
դութիւնն զայնոսիկ, զորս խորհրդաբար իմն
ձեռվ պաշտէին վարիսեցիք ՚ի ժամանակաց
անտի. և որք ՚ի գիր արձանացան իբր հարիւր
ամօք յետոյ քան զյարութիւնն Քրիստոսի։
Որ միանգամ յայլ ուսումն իցէն վարժեալք՝
չմարթի նոցա ընդ միտ ածել այնպիսի խըն-
դիրս մնոտեաց՝ որովք լի էն մատեանք նոցա.
օրինակ իմն, արդեօք օրէն իցէ յաւուր շա-

[1] Պուքմորփ. ժող. հր։ [2] Մատթ. Զ. 2, 16։

բաթու հեծանել յինչ առ՝ի տանել զնա յարքունութիւն, կամ ունել զերասանակի նորա։ Արդեօք օրէն իցէ գնալ ընդ անդս՝ որ այն ինչ վարեալ իցեն. զի գուցէ կռուեալ յոտն հատք ինչ ցորենոյ, սերմանիցէ զայն ուրեք յաւուր չաբաթու։ Արդեօք օրէն իցէ ումեք յաւուր չաբաթու գրել այնչափ տառս մինչև կազմել նովիմբք իմաստս ինչ բանից։ Այլ հրաման ունել զմա՝ զոր՝ի նմին աւուր առնել իցէ հաւուս։ Այս յաղագս սրբելոյ զհին խմորն որ նախ քան զաւուրս պասեքին, իբրև առնի՝ի գիրս անդ՝ եթէ պարտ իցէ սկրսանել կրկին սրբել զտունն ընդ որ անցանիցէ մուկն՝ փշրանս հացի ունելով՝ի բերանի։ Կամ թէ օրէն իցէ պահել թուղթս յղկեալս ալերբ, կամ սպեղանիս ինչ յորում նոյնպէս գուցէ ալիւր։ Եւ արդեօք յետ այրելոյ զհին խմորն օրէն իցէ՝ի կերակուր առնուլ զեփեաչն՝ի նոյն հուր առաջնոյ խմորոյն. և այլ սոցին նման բիւրս խնդրոց, զորս վեր՝ի վայր յեղեղէ Աստուածատ նոցա, և մեկնիչք նորին։

Այսպէս մուտացեալ նոցա զվեծուքիւն և զաղնուականութիւն օրինացն Աստուծոյ, ՝ի խոտանս և՝ի նուաստս զիջանէին, Թանձր և տգիտագոյն ցուցեալ քան զՀոյնս, որ՝ի գըպրոցս իւրեանց զկենցաղագուտս և զվսեմագոյն ևս խնդրոց Հառս արկանէին քննաբանու-

թեան և բարոյականին. և որք թէպէտ և վերջացեալք էին յառաքինութենէ, այլ գէթ քաղաքականութիւն էր նոցա, և պատշաճիցն վայելչութիւն։

Այլ ոչ երբէք առ հասարակ յետնեցան յայսցանէ Հրեայք. զի եղեն և ոմանք ի նոցանէ որք թէև ակոխեցին քաջութեամբ յուսումն հեթէ լեն բարբառոյ, և յընթերցանութիւն նոցին մատենից, և ի մակացութիւն դպրութեանց նոցա, ի քերթողութիւն, ի պերճախօսութիւն և յիմաստասիրութիւն, որպիսի որ Քրիստոբուղոն էր՝ իմաստասէր Ձեմսական, և վարդապետ Փիլոմետորն Պետղուեայ. Լաւոդեմոն, Պեմետր, և Փիլոնեանքն երկոքին։ Նա աւանիկ ոմանք ի նոցանէ և ի յոյն լեզու քաջացան պատմագրել և ըստ յունական վայելչաբանութեան, զոր օրինակ Յասոն կիւրենացի[1], և Ձարտար ծաղկաքաղ նորին՝ յօրինիչ Մակաբայեցւոց երկրորդ գրոցն, և որպէս դարձեալ բազմահամբաւն Յովսեպոս պատմիչ։

Ինակիչք Ղեքսանդրիոյ ի վեր քան զայլս գՀետ եղեն հելլենական դպրութեան. զի որ յայլ աշխարհս սփռեալք էին՝ բաւական վարկան յայտ առնել զիմաստս իւրեանց խաղտալոյր յունականաւ, զընդիկ բարբառոյն իւրեանց պահելով զգաղձուածս բանից. և ի

[1] Պուքսեմ. ժողով. Հր. ժա։

սոյն աղաւաղ լեզու գրեցան և Թարգմանու-
Թիւնք հին կտակարանաց, և բնագիրքն նո-
ցոյն։ Վասնզի լաւագոյն համարեալ առաքելոց
և աւետարանչաց զյստակութիւն բանիւ և զհա-
մառօտութիւն, քամահեցին զսեթևեթիւք
բարբառոյն, և գրեցին ՚ի լեզու որ գիւրիմաց
էր նոցա ամենեցուն. որպէս զի և արդ առ
քաջ խելամտութիւն յոյն շարագրածոյն նո-
ցա, գիտել արժան է զբերբայականն և զասորին։

Ընդեպք որ զայսու ժամանակաւք՝ կարի ինն
կրթեալ և թեթեւ էին յուսումն օրինաց և
համօրէն աստուածեղէն մատենից։ Ել շատ
ինչ համարեալ ըստ նկարագրին մեկնել զնո-
սա, քաղում խորհրդական և այլաբանական
և յարմարական իմաստս ՚ի նոսա գտանէին
ծածկեալ։ Ոչ զայս հաւաստեն մեզ ոչ միայն
նորոց կտակարանացն գիրք, և առաջնոցն
Հարց՝ որք գիմամարտ եղեն նոցա բանիւք,
այլ և ՚ի Փիլոնի գրոյն է յայտ, և ՚ի Յովսէպոսէ
և ՚ի վաղնջուց մեկնութեանց Հրեայեցւոց օ-
րինաց գրոցն՝ որ ծնունդք մեծ, և էլք մեծ ՚ի
նոցանէ առձայնին, այլովքն Հանգերձ։ Ո՛չ խոր-
հրդական իմաստս զայսոսիկ ՚ի նախնեացն
տուչութենէ ընկալեալ ունէին։

Ո՛չ առ ՚ի բովանդակել զամենայն՝ յաւե-
լուս, զի կարի ինն խաթարեալ էին միտք Հրե-
ղինց ՚ի յետին ժամանակս յայսոսիկ։ Ալ եր
՚ի վայր պանծացեալ պարծէին զաւակք Հրե-

բահամու գոլ յաւակնեալք մեծամտեալք ընդ
խոստումն թագաւորութեան Ա՛եսիային, ո-
րոյ գալստեանն մերձաւորութիւն յայտնի
էր նոցա, թագաւորութիւն իմն կարծելով
զայն՝ ի զօրութիւն զինուց հաստատեալ
և ի ժամանակեայ փառս։ Ձարաշահք էին,
արծաթասէրք և զօշաքաղք, և առաւել վա-
րիսեցիքն ի նոսա, որոց յոլովագոյնք և ձար-
տարք էին ի կեղծաւորել։ Անգամիտք էին և
յողդողդք, պատրաստք յամենայն ժամ յաղ-
մուկս և ի վտարանջութիւն՝ պատճառանօք
զլուծն ընկենլոյ զհեթանոսաց։ Վշտաց բա-
նից, բռունք էին և անգութք, որպէս յայտ-
նի է ի տանջանացն զոր ետուն տեառն մերում
և առաքելոց. և դարձեալ յանլուր և ի
խժդժական չարեացն զոր անցուցին ընդ մի-
մեանս ընդ ամենայն ժամանակս առանձին
պատերազմին իւրեանց, և ի յետին պաշար-
ման Երուսաղէմի։

ՅՕԴՈՒԸՆ ԼՕՓՆԵՐՈՒԴ

Ճշմարիտ խոստովանիք։

Ամպած և այնպէս պահեցաւ անեղծ ի ժողովրդեանս յայսմիկ ընդ քաջափայլ առաքինութեանցն հանդիսից և աւանդ սրբոյ վարդապետութեանն և կրօնից։ Այլ զայնու իսկ յետին ժամանակաւք կացին ի նոսա չքնաղ օրինակք սրբութեան՝ Օ՛աքարիա, և կին նորա Այլիսաբեթ, աստուածահայրն Յովսէփ, ծերունին Սիմէոն, Աննա մարգարէ, Նաթանայէլ և Գամաղիէլ օրէնսուսոյց, և այլք բազումք՝ զորս յիշատակէն գիրք նորոց կատարանաց։ Ահա ամենեքեան սուրբք և աստուածարեալք, և որք ընդ նոսա առ հասարակ հոգւով Հրեայք՝ թլփատեալք սրտիւք առաւել քան մարմնով, էին որդիք Աբրահամու ըստ նմանութեան հաւատոյ նորա՝ քան թէ ծննդեամբ։ Հաւատային նոքա անսասան և սուրբ հաւատովք մարգարէից և քարեացն խոստացելոց Այ՛ստուծոյ. ակն ունէին համբերութեամբ փրկութեանն Իսրայէլի և արքայութեան օծելոյն՝ յոգւոց հանեալ ջհետ նորա. բայց տեսեալ առ նմին՝ զի ոչ էր օրէն վախճանել յուսոյ նոցա ընդ կեանս աշխարհիս, հաւատային ի յարութիւն և ի թա-

գաւորութիւն երկնից ։ Ո՞ման որոյ և յիշա-
նել չնորհաց աւետարանին ՚ի վերայ արիա-
ցելոցն առաքինութեամբ՝ դիւրաբար սրբեալ
ընծայեաց զնոսա արժանի քրիստոնեայս և
Հմարիա Իսրայէլացիս ։

ԿԵՆՑԱՂ

ՔՐԻՍՏՈՆԵՒՑ

ԿԵՆՑԱՂ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

ԲԱՀԱՆՈՒՄՆ ԳՐՈՑՄ

ԻՆՉՈՒ մասունս Հատանեմ զդիրս զայս՝ յառաջնում յանդիման առնել զվարս քրիստոնէից երուսաղէմացւոց մինչև՝ ի կործանումն քաղաքին. զի թէպէտ և առաջին գարս այս քրիստոնէութեան ընդ սակաւ ամս ձգեցաւ, այլ գերապանծ առաքինութիւնքն՝ ինձամ արժանի են ուրոյն գլխոյ բանից։ Յերկրորդում մասին բովանդակել զամենայն ժամանակս հալածանացն որ յառաջին դարս քրիստոնէութեան, զորոյ ջհաւաստիան որք միանգամ կամիցին՝ անցցեն ընդ առաջին երկուս հատորս Եկեղեցական պատմութեանն զոր

արարեալ է իմ։ Ընդդորդուն գծագրեցիկ զազատութեան դարս եկեղեցւոյ յետ մեծին Կոստանդիանոսի. իսկ ի ջրդորդուն քննեցիկ զպատճառս առ յապա յեղափոխութեցն ի նմա։



ՄԱՆ ԱՌԱՋԻՆ

ՅՈԳՈՒԱՆՈՅ ԱՒԵՏԱՐԱՆ

Կեանք Քրիստոսի տեառն մերոյ։

ՎԱՆՁԻ հաւատք քրիստոնէից ոչ են գիւտք մարդկան՝ այլ գործք Աստուծոյ, նմին իրի անդստին ՚ի սկզբանէ լի անթերի ցուցաւ նա որպէս զաշխարհս։ Պարտ է ՚ի մտաց իսկ անկանել, ասէ Տէրտուղիանոս՝, առ ՚ի կարծել եթէ ինչ ՚ի Հնմարտութեանց կարևորաց առ ՚ի փրկութիւն՝ զանխուսափ լեալ իցէ յառաքելոց. և ՚ի գարս որ զկնի՝ բարձրագոյն ինչ և լուսաւոր յայտնեալ յուղղութիւն բարուց և կենաց քան զվարդապետեալն ՚ի Քրիստոսէ։ Այլ արգաւսիք գերապանծ վարդապետութեանն այսորիկ պէսպէս եղեն ըստ ժամանակաց լսելեաց, և ըստ այլ և այլ չափու հնորհաց որք

1 Տերտուղ. Պատուիր. իե։

տուան նոցա Յ[ստուծոյ : Օ՛ի որք ստուգա-
պէս Իսրայելացիք էին՝ կիրթ գոլով յաւան-
դութիւնս հարց իւրեանց և յընթերցուին
սուրբ գրոց, և մնեալք՝ի տղայ ախոյ՝ի չէմա-
րիտ աստուածգիտութիւն և՝ի պահպանու-
թիւն օրինաց նորա, ոչ ինչ երկմտեցան ան-
դէն վաղվաղակի բերել յանձինս զկատարեալ
վարս՝ յորժամ յայտնեցաւ նոցա կատարելու-
թիւնն, և ծանուցաւ՝ որ այն էր տիրապէս
փրկութիւնն պատրաստեալնոցա՛ի Ա[եսիայէ,
և կամ՛ր այն արքայութիւն նորա : Ա[յլ դը-
ժուարին էր յոյժ զգօնացուցանել զՀեթա-
նոսս, որ մինչև ցայնժամ յանաստուածուքեան
կեցեալ էին և յանօրէնութեան, սովորեալք
որպէս զանասունս երթևեկել առ կուռս ան-
մռունչս[1], և անկղտանալ յամենայն ոչխրս
չարեաց : Ա[յսն որոյ յառաջին հաւատա-
ցեալը եկեղեցւոյն Ք[րիստոսի օրէն է
դարձուցանել զաչս, և անդ իմդրել զկատա-
րեալ օրինակ կենաց, որով և վերանագոյնն
ըստ ներել պայմանի բնութեանս՝ ՛ի վերայ
երկրի :

Ա[յժմ իրի պարտ և պատշաճ է սկիզբն առ-
նել՛ի կենացն Ք[րիստոսի, որ նախասկիզբն
է և լրումն ամենայն կատարելութեանց : Օ՛ի
նա ինքն օրինակ եկաց մեզ առնել որպէս ինքն
արար[2] . և է այս ա՛ի՛ ի վերագոյն պարգևաց

[1] ա՛ Կորնթ . ժԲ . 2 : [2] Յովհ . ժԳ . 15 :

մարդեղութեանն, եղանիլ Խանին զգալի՝ առ ի լինել ոչ միայն հայելի աչաց մերոց, այլ և կանոն վարուց մերոց։ Այլպաքէն զՀանդէս աստուածական վարուց նորա նոցա միայն օրէն և մարթ եղև արժանապէս գծագրել՝ որք ականատես և ականջալուր եղեն բանին կենաց, և ձեռք նոցա չօշափեցին զնա, և առին՝ի հոգւոյ նորա[1]։ Այլ ոչ ինչ արգելուցու արգեօք համարձակել ամենայն ումեք ըստ զօրութեան իւրում՝ որ ինչ պատշաճագոյն թուիցի նմա՝ առաջի առնել մարդկան՝ ի նմանութիւն, զառաւելն և զանբաւն սրատեսից թողեալ և զարգացելոցն՝ի ձառս և յուշ ղութիւն քրիստոնէական առաքինութեանց։

Ո՛ առաջինն անդ հայեցեալ տեսանելիք զառաքինութիւնս մանկութեան նորա։ Հնազանդ էր նա ծնողաց իւրոց, և սիրելի ամենայնեցուն ընծայեր զանձն. քանզի ասացաւ իսկ զնմանէ թէ ըստ առեալ հասակին՝ առեր և ի մաստութեամբ և ընդհօք յԱստուծոյ և՝ի մարդկանէ[2]։ Այելի ինչ ոչ է գիտել մեզ ըզմանկութենէ նորա մինչև յերեսներորդ ամ հասակին, բայց զի բնակեր՝ի փոքրիկ քաղաքն՝ի Նազարեթ իբրև որդի հիւսան[3], հիւսն և ինքն համարեալ։ Այսպիսի ինն ըզութիւն աւետարանչացն գնմանէ՝ ձոռոմա-

1 Ղուկ. Ա. 3։
2 Ղուկ. Բ. 40։
3 Մատթ. ԺԳ. 55։

գոյն ևս քան զբազում ձառս յայտ առնէ զանշուք և զՀեռի ՚ի մարդկանէ զկեանսն յոր եկեաց զբազում ամն հաստակին իւրոյ, որ եկաւն էր լոյս լինել աշխարհի։ Զ՚ամն երեսուն սոսկական վարեաց կեանս, և երիս կամ չորս ամս ևեթ ՚ի քարոզութեան կամ՚ի հասարակաց պաշտամանն, առ ՚ի յայտ առնել՝ զի առաջին պարտք մարդկան է ՚ի լուսաւորեան վաստակել, և սակաւուց ոմանց ևեթ արժան է ըստանձնել զգործս հասարակաց պաշտամանն, և յայնժամ՝ յորժամ կամ որչափ ժամանակս յայն բանադատիցեն հրամանք Աստուծոյ և սէր ընկերին։

Այս արուեստն ևս զոր ընտրեաց՝ միտս մեզ յաւելու, զի կեալ՚ի վաստակոց ձեռացն աղքատին ևս է քան գործել զսեպհական անդս, և դարմանել զանասունս։ Ել ինչ է փոյթ թէ ՚ի կազմած տանց և կամ արօրոյ և պէսպէս կահուց մշակութեան՝ աշխատեր, որպէս ունի նախնի իմն աւանդութիւն՝. այլ այն աներկբայելի է՝ զի խիստ էր արուեստ նորա և դժբնդակ, բայց կենցաղագուտ, մանաւանդ թէ և կարևոր, վասն որոյ և պատշաճագոյն յոյժ քան զորս ՚ի զեղխութիւն և ՚ի զբօսանս էն պիտանացուք։ Ի սմին արուեստի անցոյց նա զամենայն աւուրս առօդ հաստակին մերձ առ ընտանիս, և ուր մեեալն էր, յաղատու-

1 Յուսամ. ՚ի Տրփոն։

թեան և ի պատշաճեալ կեանս, բայց մտադիր ի նոյն և աչխատասէր, տանելով զհասարակաց մարդկութեանս պատիժ յանիծիցն Ադամայ, անխափան բերելով յանձին զկրկին առաքինութեանց զօրինակ՝ զպատուիրեալսն ի վեր քան զանենայն՝ զհեզութեան և զխոնարհութեան [1]:

Ձև սկիզբն առաքելութեանն արարեալ՝ պատրաստի յայն մկրտութեամբ, աղօթիւք և պահովք [2]: Աչաքէն անկարօտ էր նա այսոցիկ, այլ առնէր՝ որպէս ինքն ասէ [3], առ ի լնուլ զամենայն արդարութիւն և առ ի տալ մեզ օրինակ: Պահել նորա զքառասունն տիւ և զքառասունն գիշեր անսուաղ ամենևիւրն ըստքանչելիք իմն համարին, որպէս և Մովսիսին և Եղիայի. այլ թէ իցէ մեր զփորձ առեալ զզօրութիւն բնութեանս՝ զայն ոչ գիտեմ: Պատմէ ևծայինն Ոգոստինոս [4] լուեալ յարժանահաւատ արանց՝ զի զօրացան ոմանք կեալ անկերակուր մինչև ցաւուրս քառասունն. և զսրբոյն Ամմոնի Ալեքսանդրեցի վկայէ Թէոդորետոս [5], զի անձաշակ եկաց քսան քառասնեակս՝ կրթեալ զանձն տակաւ յայն հրաշալի ժուժկալութիւն: Եւ զօրդիս իսկ ի Հնդիկս ոմանք ի կռապաշտից զաւուրս քսան և աւելի անսուաղ անցուցանեն:

1 Մատթ. ԺԱ. 29:
2 Ղուկ. Գ. 21: Դ. 2:
3 Մատթ. Գ. 15:
4 Օգոստ. Թուղթ առ Կասուլ:
5 Թէոդոր. Պատմ. կրօն:

Յաւուրս անդ պահոց և յամայի միայնու-
թեանն յինչ այլ պարագայս Քրիստոս՝ բայց
յաղօթս. այլ ո՞ իչխեսցէ ձառել զաղօթից
նորա։ Օմնաւ ածցուք խոնարհութեամբ՝
զոր յառաջ բերեն աւետարանիչք, և մանա-
ւանդ զՀրաշալի աղօթսն զոր Յովհաննէս
պատմէ, և ոչ մի ինչ անտես արասցուք ի քա-
նիցն ասացելոց զհանգամանաց աղօթելոյ նո-
րա։ Աղօթեր նա զգիչերն[1], և երբեմն զգի-
շերն ի գլուխ. աղօթեր ի բացեայ, ի պար-
տիզի, ի լերինս, յանապատս, առանձինն և
մեկուսի. ամբառնայր զաչս և զձեռս յեր-
կինս, ծունր դնէր, և յերկիր զանձն տարա-
ծանէր. յամենայնի յայտ արարեալ զխոնարհ
մեծարանսն առ Հայր։

Յանձն առնու փորձիլ՝ զի զօրացուսցէ զմեզ
մարտ դնել ընդդէմ սատանայի[2]. և վկայու-
թեամբք սուրբ գրոց ևեթ զդէմ ունի յար-
ձակմանց նորա, առ ուսուցանելոյ մեզ այլովքն
հանդերձ և զայն՝ զի ի նոսա անխափան պարտ
է մեզ խոկալ, և նոքօք առաջնորդել մեզ, և
անօրինել զկեանս յամենայն գէպս[3]։

Ակսանի ապա յայտնել զանձն աշխարհի՝
տալով ի վարս իւր օրինակ երիցանց, եպիս-
կոպոսաց և առաջնորդաց։ Արևմտագոյն
իւր գործ համարի ուսուցանել զայլս, և դար-

1 Յովհ. ժէ։ 3 Ա՛ղդ. ժթ. 15։
2 Ղուկ. Զ. 12։

ձուցանել։ Այն նա՝ որպէս ինքն ասէ՝ խնդրել և կեցուցանել զկորուսեալն ։ Օ ամենեցունն աչս և զսիրտս յինքն ձգէ բժշկելով զախտաժէտս, և այլ ազգի ազգի սքանչելագործութեամբք՝ որ կարևորք էին ի ժամուն ի հանդէս առաքելութեան իւրոյ ։ Յորում նը մանող եղեն նմա և առանց սքանչելագործութեանցնորհաց հայրապետքնսուրբք՝պատկառելիք ցուցեալ և սիրելիք ժողովրդեան առատ ողորմութեամբքն,և ձեռն տալով հարըստահարելոց, և խաղաղարար լինելով գժտելոց, և այլովք երևելի բարերարութեամբք ։ Այլ և նոքին սքանչելագործութիւնքն փայլեցուցին ի Քրիստոս բազում այլ առաքինութիւնս նախանձելիս մեզ , զմիամտութիւն, սուրբ, զիմնարհութիւն և զհամբերութիւն։ Այնեք սքանչելիս առանց շտապոյ իրիք, կամ անձին ինչ պարծանս տալոյ, կամ զփառս անձին խնդրելոյ . դուն ուրեք սպասեալ զի աղաչեսցի, բայց առ հանդէս առնել հաւատոյ աղաչաւորացն , և առ ի նոյն կրթել զնոսա ։ Այսպէս իմն հնարեր ծանկել զքանչելիսն՝ որպէս այլք ի մարդկանէ ծանկեն զյանցանս իւրեանց ։ Հաւատոյ ախտացելոցն քան զորութեան իւրոյ ցուցաներ արդիւնս զբժշկութիւնն . որով և սակաւս յոյժ սքանչելագործեաց ի Նազարէթ վասն անհաւատութեան ժողովրդեանն ։ Այս զփառս ամենայնի այսո-

ցիկ Հօր իւրում գրէ. "Ահա կարեմ ես, ասէ, առնել յանձնէ և ոչ ինչ. այլ Հայրն որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն ,,[1]:

Ահեղի երկայնմտութեան պէտք էին առ՝ի բառնալ զՀոգ այնքան անհնարին բազմութեան հիւանդաց՝ որք զհետ երթային նորա, և ձեպէին մերձիլ՝ի նա, և խոհէին զնովաւ, յորոց և առաւելագոյնք աղքատք էին և տառապեալք. որպէս յայտ է՝ի բժշկել նորա ըզկինն վշտացեալ՝ի տեառնտեսութենէ[2], և յասել աշակերտացն զի նաւակ մի պատրաստական կացցէ նմա վասն ամբոխին[3] զի մի նեղեսցեն զնա: Իբրև՝ի տունն մտանէր՝ ամենայն քաղաքն ժողովէր առ դրան. պաշարէին ինձն զնա, մինչ զի և հաց ևս չժամանել ուտել նմա[4]: Այլ ոչ ևս կարող լինէր մտանել՝ի քաղաք՝ բայց՝ի ծածուկ. և յաձախ արտաքոյ յանապատ տեղիս ագանէր: Այլ և անդ չառնէր նմա թայլ ժողովուրդն, խուռն զհետ ընթանալով և խմբելով առ նմա, որպէս յայտնի է՝ի հինգ հազարացն զորս կերակրեաց: Այլ վասն այնորիկ՝ի լերինս երթայր աղօթել, և անդ հանէր զգիշերս, և զհանապարհայն՝ի քուն լինէր ըստ մարթելոյ, որպէս՝ի նաւին մինչ յուզէր ծովն[5]:

1 Մարկ. Ջ. 6: Յովհ. ԺԴ. 10:
2 Մարկ. Ե:
3 Ղկ. Գ. 9:
4 Ղկ. Գ. 20:
5 Մատթ. Ի. 24:

Ա՛զաւել տառապագին եղեն յայնժամ կեանք նորա՝ քան յորժամ վաստակեցին ձեռօք իւրովք, զի չգտանեը այնու հետեւ դոյզն ինչ ժամ պարապոյ. նմին իրի և յանձն առնոյր՝ զի և կանայք ամանք զհետ երթեալնմա պաշտեին զնա յընչից իւրեանց[1], և դրամս ինչ ունեը ի պահեստի՝ Յուդայի յանձն արարեալ զայն. այնչափ արհամարհ էր արծաթ յաչս նորա։ Այլ ի խուն ինչ ստացուածոց անտի տայր ողորմութիւն[2], քայց և այն պակասեաց նմա. որպէս յորժամ բռնադատեցաւն[3] հրաշագործել զի կարասցէ Պետրոս հատուցանել զհարկ անդրանկաց, որ էր երկդրամեան մի, այս ինքն է կէս սիկղ, կամ իբր վեշտասան փող Ոսաղղոյ։

Ա՛րդարև ի գժնդակ աղքատութեան եկաց հանապազ. մինչև ասել իսկ զանձնէ, թէ որդւոյ մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգլուխս իւր[4]. զի առ օտարս ապանէր՝ որք ընդունէին զնա։ Ա՛յլ ինչ գտաւ առնմա՝ ի մահուն քան ի հանդերձիցն։ Ա՛սաց իսկ ինքնին՝ թէ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել։ Հետի ձանապարհ առնէր, և նոր ինն էր և անսովոր՝ մտանելնորա յովանակաւ յերուսաղէմ[5]։ Ընթանայր ի տօնի ապին ժամն աւուրն. ի դիպել Յամա-

1 Ղուկ. Ը. 1։
2 Յովհ. ԺԲ. 6։ ԺԳ. 29։
3 Մատթ. ԺԷ. 26։
4 Ա՛նդ. Ը. 20։
5 Մարկ. Ժ. 45։

բացել հնոջն [1] հասարակեալ եր օրն, և նըս-
տեր ի վերայ աղբերն վաստակեալ ի ճանա-
պարհէ. զի թեպետ և տեր եր արարածոց,
այլ չընթեռնումք ուրեք թէ նշանս ինչ արա-
րեալ իցէ նորա առ դիւրի անձին, կամ նուա-
զեցուցանելոյ զվիշտն։ Ո՛ միում ևեթ ուրեք
պատմի թէ հրեշտակք եկին պաշտել զնա [2], առ
յայտ առնելոյ զվայելչականն նմա՝ եթէ կա-
մէր։

Ո՛ դեպս անդ Սամարացւոյն փայլէ աքան-
չելահրաշ պարկեշտութիւն նորա անզուգա-
կան. մինչև զարմանալ աշակերտացն զի ընդ
հնոջ խօսէր. նմին իսկ և թէ նմանք նորա չիշ-
խեցին բնաւ զրպարտել զնա ըստ մասին հա-
մաստութեան։ Ո՛ ոչ բարեպաշտեալ ինն պար-
կեշտութիւն էր նորայն. զի ոչ ինչ վեր ի վե-
րոյ կամ կեղծ գտանէր ի նմա՝ որ սիերիմք ըզ-
նամին էր կեղծաւորութեան, և ինքն իսկ ճըշ-
մարտութիւն էր։ Պարզ էին գնացք նորա,
ընդելոյ բնական և զուարթ։ Հայէր յերեսս
մարդկան, որպէս պատանւոյն՝ զոր սիրեացն [3]
վասն զբարեյօժար կամին տեսանելոյ ի նմա։
Յաճախ պատմի զնմանէ ձգել ձեռին, և կամ
այլ ինչ այսպիսի շարժուածս առնել։ Ո՛ զի և
հայեցուածովքն և բանիւք յայտ առնէր ըզ-
զարմացումն իւր, զցասումն, զբարմունքն

[1] Յովհ. Դ. 6։
[2] Մատթ. Դ. 11։
[3] Մարկ. Ժ. 21։

և զմորմոք ընդ անհաւատութիւն մարդկան. և է զի ցուցանէր գորով, որպէս յորժամ առ ինքն մատոյց զմանկտին, և ձեռս եդ ի վերայ նոցա, և ի գիրկս իւր զնոսա ընկալաւ, զի յանմեղութիւն և ի խոնարհութիւն յորդորեսցէ զմեզ[1]։

Եւ ինչ անսովոր յանձին բերեր արտաքոյ. և ոչ ինչ իւիք ի վերին երեսս զանազաներ յայլոց Հրէից, և ի սոսկական կամ ի հասարակաց մարդկանէ. ըստ որում և ինքն վկայէ ի կոչելն զանձն որդի մարդոյ։ Վայրաւարին էին կեանք նորա և տաժանաւոր, այլ առանց երևելի ինչ խստակրօնութեան։ Ուտէր որպէս զայլս, Հաշակեր գինի, և չերաժարէր ի գնալոյ և ի մեծահաց սեղանս, որպէս ի հարսնիս Կանայ Գալիլեացւոց, և ի կոչնս սըրբոյն Մատթէի[2]։ Սակայն ոչ ինչ փոյթ էր նորա զկերակրոց, որպէս զի ի հրաւիրելն էր բեմն աշակերտաց՝ յորժամ կարևոր պէտք իսկ էին նորա կազդուրելոյ զանձն՝ ուտել հաց, ետ պատասխանի. «Կայ կերակուր ունիմ ուտել զոր դուքն ոչ գիտէք. իմ կերակուր այն է զի զկամն Հօր իմոյ արարից»[3]։

Ընդ այսպիսւոյ անպատճոյտ կերպարանաց կցորդեր վեհ ինն ազնուականութիւն և հանդարտութիւն յոյժ. երկիցս երեղ արտասուս,

[1] Մարկ. Թ. 35։ Ժ. 13։ [3] Յովհ. Դ. 32, 34։
[2] Ղուկ. Ե. 29։

բայց ծիծաղել ոչ երբեք ծիծաղեցաւ, և ոչ մանր և մեղմիվ ժպտեալ, որպէս ասէ Ներսիսն ոսկի [1]։ Խնդրեր և ոչ ինչ յուսիքէ. որպէս զի լաւ համարեցաւ սքանչելիս առնել քան [1] ի փոխ առնուլ զերկրաւորսն [1] ի հատուցանել. բայց սակայն յորժամ առաքեաց խնդրել զյովհաննէս առ [1] ի մտանել յԱրուսաղէմ, և դարձեալ ըզվերնատունն առ [1] ի կատարել անդ զպասեքն [2], տիրաբար բարբառի, իբրև զի չէր մարթ զլանալ ինչ նմա։ Լուեալ զոր ուսուցանէրն՝ թէ "Արանելի է մանաւանդ տալն քան զառնուլ,,[3]. զի առատութեամբ սիրեալ զոր Հանապազ ըզբարեգործութիւնն՝ ուր ուրեմն ընդունէր ինչ յուսիքէ։ Լմենեքեան զնա խնդրեին և ըզհետ նորա ընթանային, և նա խնդրեր և ոչ զոք առանձինն, այլ զբոլեալ քաղաքն [1] ի քաղաք՝ յապաշխարութիւն յորդորեր զամենեսեան։ Որ[1]բամատոյց էր հիւանդաց և մեղաւորաց՝ որք կամէին դառնալ. խոնարհեցուցանէր զանձն առ նոսա, մինչև սեղանակից լինել նոցա և ադանել առ նոսա, և յանձն առնուլ՝ զի և կին որ մերձեսցի յոտն, և օծցէ զնա իւղով [4], որ փարիսեցիսն ինն թուէր, և հակառակ աղքատին և վշտամբեր կենաց նորա։

Այս քանզի եկեալ էր ուսուցանել զամենայն

1 Ոսկեբ. մեկն. Մատթ. Ճառ Ջ։
2 Ղուկ. ի. 30։ ԻԲ. 8, 12։
3 Գործ. Ի. 35։
4 Ղուկ. Է. 37, 38։

մարդիկ, քարոզէր անխափան՝ հրապարակաւ և առանձին. իսկ զաւուրս շաբաթուց սովոր էր գնալ՝ի ժողովարանն և մեկնել զգիրս [1], որպէս առնէին բաբունիքն Հրէից. վասն որոյ և զնա կոչեցին բաբունի կամ վարդապետ: Ա.ՀԼ ԶՕ-ՐՈՒԹԻՒՆ ԻՒՆ ԷՐ՝Ի ԲԱՆՍ ՆՈՐԱ՝ ՈՐ ԵՐԵՒԵԼՒ ԱՌՆԷՐ ԶՆԱ ՅԱՄԵՆԵՍԻՆ. զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր, և զարմանային ամենեքին ընդ բանս շնորհացն որ ելանէին՝ի բերանոյ նորա [2]:

Վարոզութիւնք նորա պարզ են և յստակ՝ առանց այլոց զարդուց բերելոյ ձևս ազդուս և քնարական, որ ոչ պակասեն երբէք խօսողացն՝ի վկայութենէ մտաց, և որ հզօրագոյնք են՝ի հաւանեցուցանել զայլս: "Վարոզութիւնք նորա, ասէ սուրբն Յուստինոս, սուղ էին և համառօտք, զի ոչ յիմաստակացն ոք էր, այլ զօրութիւն և բան Աստուծոյ,,[3]: Երբեմն զի գործովք մանաւանդ տայ պատասխանի քան բանիւք. որպէս յասելն ցաշակերտս Յովհաննու մկրտչի, "Գնացէք պատմեցէք Յովհաննու զոր լուայք և տեսէք,,[4]: Զդ օրէնս մեծաց մեծս առանց հաստատութեան ածելոյ նոցին, և առանց յառաջ բերելոյ ինչ յայնցանէ որ նոցին են յարակից. այլ այնպէս իւրքնին լուսաւոր են և Աշխարհիք, որպէս զի ոչ ումեք

1 Ղուկ. Դ. 16, 17:
2 Մատթ. է. 29: Ղուկ. Դ. 22:
3 Յուստին. Պատասխ. ի:
4 Մատթ. ԺԱ. 4:

մարթ է հակառակ կալ այնոցիկ, բայց որոց կամաւն կուրանան. վասն որոյ և 'ի կշռաւմ բանս այնպիսեացն չարասրտութեան, է գի և առակօք և սրինակօք խօսի։ Այլ 'ի բերելն իսկ փաստս 'ի մէջ՝ ոչ ինչ աւելի քան զպայտնի հաւաստիս և քան զընդհանրական նմանութիւնս ածէ։ Այսպէս գործութիւնք նորա և առաքինութիւնք հզօրագոյն և էին և դիւրահաս ամենայն մտաց քան զընաւ պատճառաբանութիւնս իմաստասիրաց։ Իմաստունք առ հասարակ՝ որպէս ցՀիւդեմոս, և տգէտք՝ որպէս զկոյրն 'ի ծնէ, աքանչանային միօրինակ ընդ բանս նորա։ Ուազգամ անգամ հաստատէ զասացեալսն յօրինաց և 'ի մարգարէից, յայտ արարեալ՝ գի և վարդապետութիւնք իւր 'ի նմին ականէ իմաստութեան բղխեն, և սքանչելիքն 'ի նմին զօրութենէ, և կտակարանք հին և նոր օրինաց զնոսին զաստուածեղն վկայութիւնս ունին հիմն հաստատութեան։ Այսմ իրի և բազում անգամ բանիւք աստուածատուր պատգամացն վարի, յայտնապէս 'ի վկայութիւն ածելով զնոսին, և կամ յաձախագոյն և 'ի նոսա ակնարկելով, որպէս յայտնի է պարապելոցն 'ի վերծանութիւն նոցին։

Ընդդէմ հպատակութիւն աստուածային բանից մարզէ զաշակերտսն, անմման յոյժ իմաս-

1 Մատթ. ԺԶ. 40։ 2 Յովհ. Գ. 1, 2։ Թ. 1, 41

տասիրաց որք պատճառանօք զՀիմարտու-
թիւն ինդրելոյ՝ ի կագ և ի կռիւ հրաման-
գեին զՀետևողս իւրեանց։ Ղյուզիա նա խըն-
դիրս, Հերկմամի որպէս զՈակրատ, խօսի աներ-
կևան, և տեր գոլով Հիմարտութեան՝ յայտնի
առնէ զայն ումեք կամի։ Ասէայր՝ ի միասին ընդ
աշակերտս իւր՝ որպէս տանուտէր ընդ ընտա-
նիս, զի՝ ի նմանութիւն իւր յամենայնի կըր-
թեսցին. քանզի Հանապազ զՀետ նորա գնա-
լով, սեղանակից գոլով ընդ նմա և բնակակից՝
կարող էին նկատել զնա յարաժամ՝ ։ Նմանողս
առնէր զնոսա աղքատութեան իւրում՝ անար-
ծաթս առաքելով զնոսա քարոզել և առանց
կարևոր պիտոյից. նա զի և՝ ի միասին ընդ
նմա կալով ստիպէին երբեմն առ քաղցի առ-
նուլ՝ ի կերակուր որ ինչ գտանէին յարտորայս,
որպէս՝ ի կորզել զՀասկն յաւուր շաբաթու ։

Ասէ՝ եծապէս ջանայր ուսուցանել զնոսա. որ
ինչ չառնուին՝ ի միտ՝ ի քարոզութիւնս իւր
առ ժողովուրդն՝ դարձեալ առանձինն մեկնէր
նոցա, որպէս ընդ բարեկամն գնալով ընդ նո-
սա, և յուցանելով ըստ տանելոյ լսելեաց նո-
ցա զոր միանգամ ուսեալ էր՝ ի Հօրէ իւրմէ[2] ։
Ասակայն ոչ Հաձէ զընդվայրաբանութիւն նո-
ցա. է զի յայտնապէս արգելու նոցա զայն, որ-
պէս՝ ի Հարցանել նոցա զկատարածէ աշխար-

1 Տէրտուղ. յղ. Պատուիր. Դ. իբ։ 2 Մատթ. ԺԳ. 11։ ԺԵ. 13։ Յովհ. ԺԵ. 16։

հիս նախ քան զյարութիւն նորա և զկնի. և որպէս դարձեալ՝ի կամէն գիտել Պետրոսի զկատարած Յովհաննու [1]։ Այ զի և չյատաս-խանէ իսկ հարցման նոցա, որպէս՝ի հարցա-նէն Յուդայի՝ ոչ իսկարիովատացւոյն՝ Թէ ընդ-էր չյայտնէը զանձն աշխարհի [2]։ Այրկայնա-մտէր համբերութեամբ բազմաւ աղաչարու-թեան նոցա և տգիտութեան և մնափառու-թեան, և այլ ամենայն թերութեանց նոցա, և հնարէր անդուլ յուղղութիւն ածել զնոսա։

Այ՚ակերտօքն զերկոտասանեան իմանամ, զորս ընտրեաց զի իցեն ընդ իւր. բայց աւետարանք աշակերտս անուանեն զամենեսեան զնոսա որք զհետ երթային վարդապետութեան նորա, և ուրեմն էին՝ի նորա ուրուութիւնն։ Այս ոչ սակաւ էր թիւ նոցա. զի որք ընդ առաքեալսն ևէթ ժողովեցան յընտրութիւն սրբոյն Մա-տաթիայ էին հարիւր և քսան [3]. և աւելի էին քան զհինգ հարիւր. որոց երևեցաւ Քրիս-տոս յարուցեալ՝ի մեռելոց։ Այ՚ան որոյ անդրա-տին՝ի նմին ժամանակայ երկու խումբք էին յերկեղեցւոջ. հաւատացելոց՝ զորս աշակերտս լոկ կամ եղբարս անուանէին, և պաշտօնէից՝ ընտրելոց՝ի Քրիստոսէ՝ի սպասաւորութիւն, որ էին առաքեալքն և եօթանասունն և երկուքն՝ զորս երկուս երկուս առաքեր առաջի

1 Մատթ. ԻԴ. 36։ Գործ. Ա. 7.
2 Յովհ. ԺԴ. 12։
3 Գործ. Ա. 15։

իւր յամենայն քաղաքս ուր ինքն երթ ալոց էր[1]։

Ի խոր զանազանութեան յայսմիկ այլ և այլ կարգս սիրոյ տեսանեմք արժանիս խելամուտ եան։ Ասացանէ մեզ Քրիստոս՝ զի ամենեքին ընկերք մեր են, զորս և պարտիմք սիրել որպէս զանձինս մեր[2]. քանզի ետնա զանձն իւր վասն ամենայն մարդկան. բայց ի նոսա յամենեսին առաւել սիրեր զաշակերտս իւր, և ի նոսա զառաքեալսն, և ի նոցանէ զՊետրոս և զերկուս եղբարսն զորդիս Ովբեդեայ, և ի վեր քան զամենեսին զՅովհաննէս։ Ել է տեղւոյս հետազօտել զընտրութեանցս այսոցիկ զպատճառսն՝ զորս մարթի երյաղագս բերել. և զպէսպէս հաւաստիս սիրոյն զոր ետ Պետրոսի և Յովհաննու շատ է ի միտ առնուլ. զի օրինակաւ իւրով կարգեաց և սրբեաց զընակաւոր խղճս, և զկարևորագոյն բարեկամութեան զօդս, և զդէխաւնութեան որ չըշնասիցեն հասարակաց սիրոյն։ Ասաց յառաքելոց էին նորա և այլ բարեկամք. զի սիրէր նա զՊ ազար և զերկոսին քորս նորա, և բարեկամ գնա իւր անուանէր[3], և յայտնեաց իսկ զգութիւն իւր յարտասուել անդ զմահ նորա մինչ գնայրն յարուցանել գնա։

Այս ո՞յերկուասցի զնանդակաթ սիրոյ նորա առ մայր իւր սուրբ, մանաւանդ ի տես-

1 Դուկ. ի. 1։
2 Ածդ. ի. 27։
3 Յով. ԺԱ. 5, 11, 35։

նել զինամն զոր եղոյց նմա ՚ի մեռանել իւրում. սակայն և այնպէս խստութեամբ ինն թուի խօսել ընդ նմա ՚ի գալ նորա առ ինքն յորժամ բազմէր ընդ վարդապետսն, և դարձեալ յաղդ առնելն որա ՚ի հարսանիսն՝ զի գինի ոչ ունէին։ Յանդիմանէ և զկինն զայն որ վասն մայրութեանն ևեթ զնա ՚ի գովութիւն առնոյր. և վկայէ՝ թէ չէք նորա մայր կամ աղգական, բայց որք առնեն զկամս Հօր իւրոյ։ Ո՞րպիսի քաջ գիտեր թէ որպէս արժան էր գնալ ընդ այրասիրտ մօրն. և կամէր յայտ առնել՝ զի մարմին և արիւն ոչ ունէր մասն ՚ի սիրտ նորա՝։

Յո՛ւ ամենեսեան տարածանէր զգուշութ սիրոյն իւրոյ. "Դիակաք, ասէ, առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ.,։ Զթայր ՚ի ժողովուրդն որ զՀետ նորա երթային. զի էին աշխատեալք և ցրուեալք որպէս զոչխարս որոց ոչիցէ հովիւ[1]։ Յո՛ւ աղէտ սիրոյն աձեցուցանէր երկիցս զՀացն. և ախտակ ցաբար դարձեալ յարուցանէր զորդի այրւոյն որ ՚ի Նային[2]։ Որպէս ընտիր քաղաքացի սիրէր զՀայրենիսն, զժողովուրդն զխորայել, և զքաղաքն Երուսաղէմ. վասն որոյ և ՚ի փառս անդ յաղթանակի իւրոյ արտասուէր ՚ի վերայ նո-

1 Ղուկ. Բ. 48։ Մատթ. 36։ ԺԴ. 14։ ԺԲ. 48։
2 Մատթ. ԺԱ. 28։ Թ.
3 Ղուկ. Ի. 14։ ԺԹ. 41։

րա, տեսեալ զՅիշատառութիւնն՝ զորս ձգէր յինքն մեղօք իւրովք։ Խրատէր հնազանդել Թագաւորաց, և մեծարել զերիցունս և զվարդապետս Եկեղեցւոյ և չարաբարոյս։ Այլ ինքն և որ եկեալն էր խափանել զօրէնս, և տէր էր շաբաթոյ և օրինաց, ասէպ կայր օրինաց և կարգաց կրօնից[1]։ Ընդառ յանձն և ոչ գոյզն իշխանութիւն՝ի վերայ ժամանակիցս, և՝ի դատաւոր՝ի վերայ երկուց եղբարց իսկ կալոյ Հրաժարէր[2]։ Հարցեալ օրինօք՝ տայր պատասխանի դատաւորաց՝ որ ինչ իւրաքանչիւր նոցա պատկանէր. առ քահանայապետն՝ ըստ այնմ զի օծեալ և որդի Աստուծոյ էր, և առ Պիղատոս՝ ըստ հանգամանաց Թագաւորութեան իւրոյ. վկայեաց Թէ Թագաւորութիւն իւր չէր յայսմ աշխարհէ, վասն որոյ և վարդապետութիւն իւր չածէր խանգարուածն կարգաց մարդկան։ Յանգգնութիւն մեծ է կամել զամենայն հանդէսս առաքինութեանց նորա յերևան ածել։ Ել հասանէն միաք՝ի քննութիւն նոցա. և որք խորագնին՝ի տեսութիւն բանից աւետարանին պարապեն աստուածաբերցն ոգիք, նորս և աքանչելիս հանապազ՝ի նոսին տեսանեն։ Ասացուք խուն ինչ և զչարչարանացն ասել, յորում հրաշափառագոյն աւանդեաց օրինակս քան այլ ամենայն ուրեք, և օգտաւէտս, քանզի և ոչ ինչ այնպէս մնկա-

1 Մատթ. ԺԲ. 8։ 2 Ղուկ. ԺԲ. 14։

կից է կենացս որպէս զվիշտս և զտառապանս։

Իդառնատագնապէ անտիյորում կայը Կրիս-
տոս՝ի պարտիզին Գեթսեմանեաց՝ քաջ՝ի միտ առ-
նումք, զի Հանգոյն այլոց զգայր նա զերկիւղ
և զտրտմութիւն. որով և մեծամեծ չարիքն
զոր կրեաց զկնի՝ հանդէպ էին բազմաձիգն
առաքինութեանց նորա։ Այլ քանզի աւետայ-
նիւ նման էր մեզ քաց՝ի մեղայ, էանց ընդ ա-
մենայն վիշտս կենցաղոյս, ընդ քաղց, ընդ ծա-
րաւ, ընդ վաստակ և ընդ ցաւս։ Պատաքէն չըն-
թեռնումք զի հիւանդացաւ. քանզի հիւան-
դութիւնն բազում այն է զի անչափութեան
է ծնունդ և կամ անձկութեանց ոգւոյ. և ոչ
մի ինչ աւելացանց մարթ էր լինել՝ի մարմնի՝
որ՝ի նոյն ինքն իմաստութենէ էր առաջնոր-
դեալ։

Համբերէ՝ի չարչարանսն աննկուն արիու-
թեամբ, չպաշտպանեալ անձին, չկացեալ հա-
կառակ, և չդարձուցեալ թիկունս հարկանե-
լեաց. որպէս զվէմ ամբարձեալ՝ի մէջ ալեաց՝
կայ անսասան յամենայն հարուածս։ Այլ՝ի
վեր քան զամենայն՝ մեծի հիացման էր արժա-
նի լուութիւն նորա. ոչ քանզի զբերան իւր՝ որ
միով բանիւ բարբառոյ կարող էր յամօթ առ-
նել զզրպարտիչսն, զսուտվկայսն, և զդատաւորս
ինքնին. քանզի պիտէր՝ զի և ոչ մի ինչ բառական
էր շարժել զնոսա յարձակել զանձն իւր ան-
պարտ։ Դարձեալ և՝ի խաչն անդ և յարհա-

ւիրս տանջանացն պահէ զմիտսն ազատ բոլո-
րովին, և և անխռով. աղօթս առնէ վասն ըս-
պանողաց իւրոց, տայ զվարձս հաւատոց զղջա-
ցեալ աւազակին, հոգայ սփոփել զմայրն վըշ-
տացեալ, ընու զաւենայն մարգարէութիւնս,
և աւանդէ զՀոգի իւր 'ի ձեռս Աստուծոյ:

Ընկալեալ առաքելոց զՀոգին սուրբ՝ լի-
նին պատկերք կենդանիք Քրիստոսի, յոր կեր-
պարանելոց էին ամենայն հաւատացեալք:
Եւ ինչ յերկուանան նոքա բարբառել զուգա-
բան Պօղոսի, "Ոչ ես ինձ եղերուք, որ-
պէս և ես Քրիստոսի.." [1]. և թէ "Ոչ ես ինձ
ինձ եղիջիք եղբարք, և գիտասջիք զայնպի-
սին՝ որ այնպէսն գնայցէ, որպէս ունիքդ
զմեզ ձեզ օրինակ.." [2]: Ոչ միայն իրի թէպէտ և
անխափան 'ի քարոզութիւնս պարապեալ, այլ
օրինակաւ մանաւանդ քան բանիւ ուսուցա-
նէին: Ի հաւատացելոց անտի ընտրէին զո-
մանս յաշակերտութիւն, զորս և առանձինն
խրատեալ կրթէին, որպէս արար Քրիստոս
ընդ նոսա: Այնքա առընթեր կային նոցա հա-
նապազ, ընդ նոսա բնակէին, սեղանակից լի-
նէին և ննջէին 'ի նմին սենեկի, որպէս մա-
տենագիր հետազօտութեանց գրոցն պատմէ
յաղագս աստուածայնոյն Պետրոսի՝ թէ 'ի
միասին ընդ աշակերտեալս բնակէր. և թէ-
պէտ չէ վաւերական գիրս այս, այլ վաղեմի է

1 ա Կորնթ. ի՚Ա. 1: 2 Փիլիպ. Գ. 17:

յոյժ ։ Այլ ի Հանապարհորդել առաքելոցն՝ ուղեկից նոցա լինէին, և ինքեան յառաջնորդութիւն եկեղեցեացն կանգնելոց տակաւ ի քաղաքս քաղաքս ։

Որպէս ահա ընդ աստուածայնոյն Պետրոսի տեսանելիք զսուրբն Մարկոս ուղեկից՝ զոր և որդի իւր անուանէ, զսուրբն Կղեմէս՝ զհռչակաւորն ընդ բնաւ եկեղեցիս, զսուրբն Հոդիոս որ յաջորդեաց զնա Հնտիոք, զսուրբն Լինոս և զսուրբն Կղետոս՝ որք յաջորդեցին զնա ի Հռոմ[1] ։ Ընդ աստուածայնոյն Պօղոսի տեսանելիք զսուրբն Ղուկաս, զՏիտոս, զՏիմոթէոս, և դարձեալ զնա ինքն զՊետրոս ։ Ընդ աստուածայնոյն Յովհաննու զսուրբն Պողիկարպոս և զսուրբն Պապիաս ։ Որք ամենեքին առաւել քանային ի միտս իւրեանց գրոչմել զվարդապետութիւնս առաքելոցն զան ի մտաղաթի, և ուսուցանէին այլոց գործովք մանաւանդ քան քարոզութիւ[2]. որով և ի նմանել անդ վարդապետաց իւրեանց՝ և ինքեանք զանձինս ամենեցուն օրինակ կացուցանէին գործոց բարութեան որպէս ասէ Պօղոս[3], ողջմտութեամբ, սիրով, սրբութեամբ պարկեշտութեամբ, և յամենայն հանգամանս կենաց ։ Այս աւանիկ և նոքա աշակերտս առնէին կարողս և զայլս ուսուցանել, և յարու-

1 ա Պետր. Ե. 13 ։ ա Տիմ. Դ. 13 ։
2 Եւսեբ. Պամֆ. Գ. ը ։ 3 Տիտ. Բ. 9, 10 ։

ցանել իւրեանց յաջորդս։ Զոր և պատուիրէ Պօղոս Տիմոթէոսի յասելն, «Զոր լուար յիս նէն բազում վկայիւք՝ զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց, որք բաւական լինիցեն և զայլս ուսուցանել»[1]։ Որ այս իսկ է աւանդութիւն, այն որ առաւել քան զդիրս յաւերժացուցանէ զվարդապետութիւն. վկայելով իմաստասիրաց իսկ՝ որք բազում դիրս գրեցին[2]։

ՅՕԱՒՒԱՆ ԵՐԿԲՈՐԻ

Եկեղեցին Երուսաղէմացւոց։

Ո՛յւ՝ի նոսա անդրէն դարձուացուք զբանս՝ որոց ուսուցիչք և վարիչք եղեն հնգեանք իսկ առաքեալք. մանաւանդ յեկեղեցի անդր Երուսաղէմացւոց զոր նա ինքն Քրիստոս սկըսաւ կանգնել՝ի վերայ հիման Ժողովարանին Հրեից, որ ոչ միայն նախատիպ եկաց ամենայն եկեղեցեաց, այլ և ծայր և արմատ։ Զի յայնմ արկցուք միանգամ՝ որպէս յանդիման առնեն մեզ դիրք զառաջին հաւատացեալսն զայնոսիկ։

Ո՛ւր եթէ հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն, և հաղորդութեան

[1] Բ Տիմոթ. Բ. 2։ [2] Պղատ. փեդ։

„ և բեհանելոյ հացին և աղօթից „[1] : Այլ
զկնի . “ Յլենայն հաւատացեալքն էին ՚ի
„ միասին , և ունէին զամենայն ինչ հասարա-
„ կաց և զտայուածս և զինչս վաճառէին , և
„ բաշխէին զայն ամենեցուն ումմ գիարդ պի-
„ տոյ ինչ լինէր : Հանապազօր կանխեալ միա-
„ բանութեամբ ՚ի տաճարն և առնուին քե-
„ կանէին զհացն , և առնուին կերակուր ու-
„ րախութեամբ , և միամտութեամբ սրտի
„ օրհնէին զ[2]ստուած , և ունէին շնորհս առ
„ ամենայն ժողովուրդն „[3] : Այլ այլուր . “ Այլ
„ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ և
„ անձն մի , և ոչ ոք ՚ի նոցանէ ասէր զընչից
„ իւրոց թէ իւր իցէ , այլ էր նոցա ամենայն
„ ինչ հասարակաց ... Այլ ոչ ոք կարօտէր ՚ի
„ նոսա . զի որք միանգամ տեարք էին գետոյն
„ կամ ագարանից՝ վաճառէին , և բերէին ըզ-
„ գինս վաճառելոցն՝ դնէին առ ոտս առա-
„ քելոցն , և բաշխէին իւրաքանչիւր որպէս
„ ումեք պիտոյ ինչ լինէր „[5] : Այլ դարձեալ .
“ Այլ ՚ի ձեռս առաքելոցն լինէին նշանք և
„ արուեստք բազումք ՚ի ժողովրդեանն . և
„ էին միաբան ամենեքեան ՚ի սրահին Սողո-
„ մոնի . և յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձե-
„ նալ առ նոսա , այլ յարգէին զնոսա ժողո-
„ վուրդն : Այլ առաւել ևս յաւելուին հա-

[1] Գործ . Բ . 42 :
[2] Աստ . 44 , ևն :
[3] Աստ . Դ . 32 , ևն :

„ հատացեալքն 'ի տէր, բազմութիւն արանց
„ և կանանց „[1]:

Ի նկարագրիս յայսմիկ բովանդակի հանապազորդութիւն վարդապետութեանն և աղօթից, հաղորդութիւն բեկանելոյ հացին, միաբանութիւն, ունել զինչս հասարակաց[2], և խընդութիւն յիւրեանս. իսկ արտաքոյ մեծաբանք, յարգ և ընդհարձ առ ժողովուրդն: Ի յամենայն կարգէ և յամենայն տիոց ժողովեր եկեղեցին, և 'ի սակաւ ժամանակի աձեաց յոյժ թիւ բազմութեանն: Յառաջնումն անդ քարոզութեան Պետրոսի դարձան ոգիք երեք հազարք, և յերկրորդումն այլ ևս հինգ հազարք, և ուրեք ուրեք դարձեալ վերըս տին վկայեն գիրք թէ օր քան զօր աձեր և բազմանայր թիւ հաւատացելոց: Ի Յակոբոս յամին երեսներորդի ուրեմն 'ի խօսելն առ Պօղոս՝ յայտնապէս ասէ ըստ յոյն և ըստ մերում թարգմանութեան՝ թէ բազում բիւրք հաւատացելոց էին[3]: Յոլովագոյնք 'ի նոցանէ կամաբեր էին. քանզի կուսակրօն կատարելութիւն սակաւ ուրեք դեռ ևս փայլեր. և զնակեին ուրոյն, զի ասէ՝ կանխեալ առ մնին բեկանելին զՀոյն, որպէս թէ ասէր՝ քահանայագործելին և բաշխելին զՀաղորդութիւնն սուրբ. բայց հասարակաց էին

1 Գործ. Գ. 12, 14:
2 Ագ. 34, 35:
3 Ագ. ԻԱ. 20:

կեանք նոցա, և զամենայն ինչս իւրեանց վաճառեալ փոխանակէին ընդ արծաթոյ, զոր առաքեալքն, և ըստ նոցանէ սարկաւագունքն եօթանիք տային ումմ զիարդ պիտոյ ինչ լինէր, այնպիսի իմն հաւատարմութեամբ և իմաստութեամբ՝ որպէս զի ոչ ոք կարօտեր ի նոսա։

Ընդ այսմանէ և իսկապէս օրինակ հաւատացելոցն ընչից և հասարակաց կենացն, զոր նախնի օրէնսդիրքն և իմաստասէրքն վերագոյն ամենայն հնարիւ համարեցան ի տնօրինել նոսաւ զերանութիւն մարդկան, թէպէտ և այնմ ոչ հասին։ Ընդ հինոսվ անգստին յառաջին ժամանակաց Ելլադայ սեղան հասարակաց սահմանեաց ի Կրետէ, և ի Լիկուրգոս զգուշացաւ ամենևին զի զեղխութիւն և ձոխութիւն մի մուտս գտանիցեն ի Սպարտա[1]։ Ընդհակերակ Պիւթագորայ հասարակաց ունէին զինչս, անլոյծ իմն միաբանութիւն ընդ միմեանս հաստատեալ, զոր յոյն ձայնիւ κοινόβιον անուանէին, յորմէ ել ի լատինն բառս cœnobita, այն է միաբանակեաց[2]։ Իսկ Պղատոն զհասարակաց կենացս այսորիկ զսահմանն անդր քան զչափ անցոյց՝ կամելով բառնալ ի միջոյ և ընդհանրութիւն տոհմից։ Պիտէին զի առ կատարեալ միաբանութիւն կենաց հարկ էր բառնալ ի միջոյ զքո և զիմ, և զամենայն զիւրահոգ շահասիրութիւն. այլ նոցա առ այս

[1] Արիստ. Քաղաք. Բ։ [2] Գել. Ա. Թ։

պատուհասաք ևեթ առձեռն կային ՚ի բռնա-
դատել զմարդիկ, կամ փաստք ՚ի հաւանե-
ցուցանել. զնորհացն Աբրիատոսի պէտք էին
փոխել զսիրտս, և ՚ի բուժել զևաթարուսին բը-
նութեան։

Հրեայքն՝ քաջագոյն ևս կրթեալ յաստուա-
ծային օրէնս, գերազանց ևս օրինակ եռուն
աշխարհի հասարակաց կենաց. զՅեսեանցին
ասեմ և զՄովսէսեանց՝։ Յեսեանք ՚ի Պա-
ղեստին ևեթ գտանէին, և թէ նոցա էր
իբրև չորից հազարաց. բնակէին ՚ի դաշտս
պարապեալք յերկրագործութիւն և յայլա-
դար վաստակս, կերակրելով ՚ի միասին և աղ-
քատաբար։ Խազումք ՚ի նոցանէ հրաժարէին
և յամուսնանալոյ։ Ակնէն աղօթից և ըն-
թերցման օրինաց, մանաւանդ յաւուրս շա-
բաթուց. բայց հաւատային բաշխից և հմայ-
ից, և նանրահաւատք էին քան զամենայն
Հրեայս։ Իսկ Մովսէսեանք սփռեալք էին
յայլևայլ կողմանս երկրի. բայց յոլովագոյնք
՚ի նոցանէ բնակէին Յունգիպտոս մերձ Ալ-
ղեք-
սանդրիա։ Դաւեալ և մեծակեացք էին և ՚ի
տեսութիւնս պարապեալք քան զՅեսեանս,
հանապազորդելով յաղօթս, յընթերցուածս
և ՚ի խոկումն օրինաց։ Սովորական կերակուր
նոցա հաց էր անպատճոյճ զոր ընդ երեկս առ-

1 Փիլն. յղ. Տեսական թ։ Ընդ. ժԸ. ը։ և յղ. Պա-
կեն։ Յովսեպ. Հնախօս. ժԳ. տեղագր. ԺԱ. ժը։

նուին։ Յաւուրս չաբաթուց և՛ի պենտեկոս-
տէին՝ ի մի վայր եկեալ Ժողովէին միաբան
կալ յաղօթս, և ուտել՛ի միասին։ Ա՛յլ որ
կամիցին զընդարձակ վարս երկաքանչիւրոյն
գացեն՝ ի գիւս փիլոսի և Յակոբեպոսի։ Ա՛րդ
եթէ նոքա այնպէս արիացան կեալ ընդ օրի-
նօք՝ որ ոչն նպաստեր՝ ի կատարելութիւն, ոչ
ինչ զարմացիս այսուհետև ընդ նոսա որք
պայծառ և ս վարուք վնոյն առաքինութիւնն
առաքինացան ընդ շնորհօք, որպէս ահա տե-
սանեմք Հ՛յրուսաղէմացւոց եկեղեցին, և
սուղ ինչ յետոյ յամենայն եկեղեցիս և՛ի
մենաստանս և՛ի վանս միաբանակեացս։

Ա՛յլ որ զամենայն ինչ այնպէս հասարակաց
առներ՝ ի մէջ քրիստոնէից Հ՛յրուսաղէմա-
ցւոց՝ սէրն էր, որ զօդեր զամենեսին իբրև
զեղբարս, և միաբաներ որպէս միոյ հօր որդիս
որ ընդ միով յարկաւ բնակիցեն, կերակրե-
լով և զգենլով ամենեցուն՝ ի նմին տան՝ ի
փութաջան խնամոյ հօր՝ որ հաւասար տա-
րածիցէ զգուէթ սիրոյն առ ամենեսին, և ջա-
նայցէ զի և ոչ մի ինչ պակասեսցի նոցա։
Ընդհանուր՝ ի մտի ունէին զհրամանն սիրելոյ
վիճակին՝ զոր բազում անգամ պատուիրեաց
նոցա Քրիստոս, և ս առաւել մեծ՝ ի չարչա-
րանսն, մինչև ասել՝ եթէ "Յայսմ ճանիցեն ըզ-
ձեզ եթէ իմ աշակերտք եք.,՝։ Խոկայն զի վաճա-

՝ Յովհ. ԺԳ. 35։

ռէին զստացուածս իւրեանց, և փոխանակէին ընդ արծաթոյ, վասն պաշտելոյ էր զՀրաժանման փրկչին՝ որ յաղագս Հրաժարելոյ յամենայն ընչից։ Օ՛ի Քանայիկ կատարել զայն ոչ միայն 'ի սրտէ, յոր և եթե պատասխան առնէ Հրաժանման, այլ և գործով. ըստ խորհրդակից լինելոց նորին տեառն. "Եթէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զամենայն ինչս քո, և եկ զկնի իմ,,[1]. քանզի հաւանագոյն և յարիլ յայն ինչ յորմէ արգեամբք Հրաժարիլ ոք, քան զոր տակաւին առ իւր ունիցի[2]։ Իբրև յորդ անգամ, յայտնի էր նոցա զի կործանելոց է Երուսաղէմ ըստ կանխասաց բանից տեառն, որ և զժամանակն ցուցեալ էր յասելն Թէ "Ոչ անցցէ ազգս այս մինչև այս ամենայն եղիցի,,[3]. նմին իրի ոչ ինչ կամէին ունել՝ առ 'ի չգորովելոյ 'ի վերայ Թշուառական քաղաքին այնորիկ և երկրին որ ամայանալոց էր։

Վ՛ասն որոյ հասարակաց կեանք հաւատացելոց առաքինութիւն իմն էր սեպհական նախնի եկեղեցւոյն Երուսաղէմացւոց՝ պատշաճեալ մարդկանն և ժամանակին այնմիկ։ Վ՛անզի մարդկօքն դժուարին իմն է այնչափ բազմութեան ժողովոյ կեալ անստացուած և առանց անխափան հասից ընդ երկար ժամա-

1 Մատթ. ԺԹ. 21։ 3 Մատթ. ԻԴ. 34։
2 Գործոց. Ե. կամ. ԻԴ։

նակ. և ընթեռնումք՝ի Պօրծան, և՝ի Թուղթս Պօղոսի՝ զի կարօտանայրնա օգնականութեան այլոց եկեղեցեաց, և յղէին՝ի գաւառաց գաւառաց գումարս բազումս արծաթոյ վասն սրբոցն որ Յերուսաղէմ[1]: Հանդերձ այսու ամենայնիւ ոչ ինչ յերկուանայ Պօղոս զինի այնչափ ժամանակաց զնոցա քաղաքավարութիւն կենացն օրինակ առաջի առնել մեզ՝ի նմանութիւն, և՝ի հնարս դարձուցանելոյ այնու զամենայն անհաւատս[2]: Այլ ոչ ինչ արգելուլ ասել՝ զի սուրբքն որ Յերուսաղէմ՝ վաստակէին և ձեռօք իւրեանց ըստ նմանութեան Քրիստոսի և առաքելոց. քանզի ոչ ինչ՝ի կատարելութեանց՝ի վեր քան զարժանն ընծայի նոցա. այն զի յաջողէր նոցա այսու ընուլ և զպակասութիւն հասից:

Յինն՝ ասէ զիր՝ հանապազորդեալք վարդապետութեան առաքելոց, և յաձախս զնոսա աշակերտս անուանէ. յայտ ինն արարեալ՝ եթէ փոյթ մեծ էր ուսանել նոցա զբանն կենաց ունկնդրութեամբ քարոզութեան առաքելոց, որք անդուլ պատմէին հրապարակաւ և առանձինն, և ուսուցանէին զաւանդեալսն՝ի տեառնէ, և՝ վերծանութեամբ գրոց սրբոց, և զրուցատրութեամբ ընդ միմեանս: Յաւելու թէ էին հանապազորդեալք և աղօթից,

1 Գործ. ԻԴ. 17: ա Կորնթ. 2 Մեկն. Գործոց. Ճառ Բ. ի. Ջ. 3:

և հանապազօր կանխէին 'ի տաճարն աղօթել միաբան և համաշունչ 'ի սրահին Սողոմոնի։ Նչանել Պետրոսի և Յովհաննու 'ի տաճարն յիններորդ ժամու աղօթիցն՝ , յայտ առնէ զի ժամք աղօթիցն անդստին յայսմ ժամանակէ նոյն էին, և յետոյ անխափան կալաւ եկեղեցի ։ Վաղաքաւարութիւն նոցա արտաքոյ ոչ ինչ ընդհատ էր 'ի Հրեից . զգուշանալով օրինաց , և զոհս ևս մատուցանելով, և հանապազորդելով յամենայն պաշտամունս՝ ցորչափ եկաց տաճարն , կամեցեալ ինն այսու ըստ ասելոյ Հարց՝ շքով թաղել զժողովրանն՝ ։

Օ՛ղնի աղօթիցն յարէ գիր անդէն զբեկանել հայելն , որ նշանակէ զհաղորդութիւնն սուրբ , որպէս և 'ի բազում այլ տեղիս նորոց կտակարանաց . այլ զսուրբ խորհուրդն զայս չկատարէին 'ի տաճարին՝ խառն կալով ընդ Հրեայս , այլ 'ի տունս 'ի մէջ հաւատացելոց ևեթ ։ Յետ պաշտելոյ զխորհուրդն առնուին կերակուր՝ որպէս զինի խաղաղական զոհից , և կոչէին զկերակուրն զայն ագապ կամ սեր . և պաշտեցաւ այս սովորութիւն նաև զինի բազում ժամանակս ։ Նչնուին , ասէ գիր , զկերակուրն զայն ուրախութեամբ և միամտութեամբ սրտի . և կարի իսկ քաջ . քանզի

1 Գործ . Գ . 1 : Բարձ . յաճ 34։ 2 Գործ . ԻԱ . 20 : Օգոստ . թուղթ ժԹ ։

ամենայն հաւատացեալքն այնոքիկ զմահ կանոյ բերէին զնմանութիւն՝ խոնարհութեամբ իւրեանց և սրբութեամբ, և չխնդրելով զանձին։ Հրաժարելով նոցա 'ի մեծութեանց և 'ի յուսոյ կենցաղոյս, հատեալ և ցամաքեցուցեալ էին զարմատս ցանկութեանց և դառնութեանց կենացս, և պարարէին յուսով երկնից և արքայութեանն Քրիստոսի՝ որում որպէս 'ի մեծոյ վերակենալ ինային։ Օ՜ի և թէ հիացումն ածէն մեզ արդ և սուղ ինչ ասացեալքն զնախկին եկեղեցւոյն, միթէ զարմանալ ինչ պարտ իցէ ընդ սեր և ընդ մեծարանս նոցա՝ որ տեսողք եղեն յայնժամ հանդիսից նորա։ Օ՜քառասուն ամ եկաց նա յԱրուսաղէմ ընդ հովութեամբ առաքելոց սրբոց, և մեծին Յակոբու՝ որ եպիսկոպոս եր քաղաքին. մինչև 'ի ժամանակն ասեմ՝ յորում տեսանելով հաւատացելոց զմօտալուտ պատիժ պատուհասի 'ի վերայ թշուառական քաղաքին ըստ կանխասաց բանից տեառն և կեա՛ց հասեալ՝, որոշեցին զանձինս 'ի Հրեից անհաւատից, և վերծան 'ի փոքրիկ քաղաքն Պելլա՝ կացեալք անդ յապահովի զամենայն ժամանակս պաշարմանն[1]։

Արդ իսկ է զժամանակ սրբոյ աւանդութեանս անդր ևս յառաջ տանել միւսև 'ի յե-

1. Մատթ. ԻԴ. 15։ Եւսեբ. Պատմ. Գ. ե։ 2 Եպիփան. յղ. Հերձ. Ը. և Թ։

տին կոչմանուն Հրուսաղէմի առ Աբիաթա-
սիւ [1]. այնու զի մինչև ցայնժամ հայրապետք
եկեղեցւոյս այսօրիկ որ մայրն է ամենայն եկե-
ղեցեաց՝ ի Թլփատելոց անտի էին, և յապգէն
Հրէից [2]: Որով և ոչ ինչ անտեղի է ասել՝ զի և
ի ժողովրդենէն յոլովագոյնք Հրեայք էին, և
պահէին ցայնժամ զիտարանս օրինաց: Այլ ան-
տի և այսր ոչ ինչ այլ զանազանութիւն տե-
սանեմք ի հաւատացեալս. քանզի և չէր իսկ
Թոյլ այնուհետեւ քնակել Հրէից Հռոմ[3] ի-
րակերտ քաղաքն զոր շինեաց Աբիանոս փո-
խանակ Հրուսաղէմի:

1 Եպիփ. յղ. ջափ. և կգ. Ը: 2 Եւսեբ. Պատմ. Դ. Է:
Սեւեր. Սուլպ. Բ:

Մ Ա Ն Ր Ա Կ Ր Ո Ն Ք

ՅՕԳՈՒԲՆ ԱՒԳՍՏԻՆ

Թէ որպիսի ինչ էին հեթանոսք նախ քան զդառնալ իւրեանց ի Քրիստոս։

Բազում տակաւ ընդ ամենայն տեղիս կանգնէին եկեղեցիք խառն ի Հրէից և ի հեթանոսաց, որք թէպէտ և խոնարհապոյն էին ի կատարեալ պարծանաց առաքինոյն, սակայն հայեցեալ ի վարս գնացից հեթանոսաց նախ քան զդառնալ նոցա ի Քրիստոս՝ աքանչելիք ինչ են հանդիսից առաքինութեանն և սրբութեան։

Որք անտեղեակք են ձառից պատմութեանց, լուեալ զի աշխարհս երթայ և գեղծանի, և դարձեալ՝ տեսեալ տակաւին զհետս միամտութեն և անկեղծութեն ծերունեաց հարցն մերոց, կարծեն թէ յառաջ քան զուսեւտան դարս արդարք ևս էին մարդիկ և համբոյրք քան որ

այժմն են. այլ որք միանգամ իմաստութիւն յահն արկանիցեն զմատեանս Յունայի Հոռոմոյ՝ որ առ մեզ հասին, զհակառակն իմասցին։ Ա-բաղութիւն աւետարանին սկիզբն առ յաւուրս կայսերութեան Աւերոնի և Կղոդեայ։ Ընդ յայտնի է՝ի Տակիտեայ գրոցն որպիսի՛ ինչ էին արքունիք կայսերացն այսոցիկ, և որպիսի՛ սիրտք թագաւորէին՝ի նոսա։ Ոչ գարուն այնորիկ զնկարագիրս տեսցես՝ի գիրս Վերատեայ և Յոզնաղու և Արտիաղեայ և Պետրոնիոսի։ Ո՛չ խոհերական բանսն որովք լի են մատեանքդ՝ յայտնապէս խօսէին և գրէին. քանզի և ոչ՝ի ծածուկ ինչ գործեր ոք զայնս. և վերին տեսչութեանն Թուի պահել զգիրսն զայնոսիկ զինասակարս՝ առ՝ի յայտ առնել յո՛ր ժահիլ անդնդոց՝ի վեր առ Քրիստոս զազգմարդկան։ Ո՛չ սոցին սակի զամենայնիս տեսանես և՝ի Աւետարիոս, և՝ի մատենագիրս վաղուց պատմութեան Գոստեայ՝ որ գծագրեցին զերկոսին դարս զկնի, ՝ի Լուկիանոս, Ա՛պուլէոս, Ա՛թենէոս, և համայն ասել՝ յամենայն պատմագիրս որ սուղ ինչ մանրապատում կամեցան առնել զգնացս այնր ժամանակի մարդկանն։ Այս աւանիկ և հարք եկեղեցւոյ յայտնագոյնս խօսեցան, ընդ որս և Գոստիկնոս, Տերտուղիանոս, և Կղեմէս աղեքսանդրացի։ Ա՛յսն որոյ և չէ ինչ զարմանալ ընդ ա-

1 Ոսկեբ. ՝ի Թուղթն առ Ջիս. Ջառ. Ե։

հագին թէւ համարոյ ախտից ժամանակին, զոր կարգէ Պօղոս ՚ի սկզբան թղթոյն առ Տուռվմայեցիս[1]:

Օ՚ղջունեքդ բարուց յանլսատայ և յանգիտասէ և յարևելից էանց՚ի Տուռվմ: Ե՚ատ է անցանել ընդ գիրն Ա՚բրահամեայ առ՚ի միտ առնուլ յո՛ր վայր հասեալ էր զեղևուԹի Յուդնաց յաւուրս նորա: Ո՚վ և աչեալ նոցա ի մատուԹեամբ, և ահա զոյգ նմին յետ աշխարհակալուԹեանն Ա՚զեքսանդրի եղջևուր առԹռչեր ցոփուԹիւն և անառակուԹիւն: Ա՚յս ըստ պատմուԹեանց Յոսեպոսի Ա՚ռակեդոնացւոց, Ա՚գիպտոսի և Ա՚սորւոց խիտ առ խիտ առաջի առնեն բիւր ազգի ազգի տեսակս սոսկալի և այլանդակ ախտից և պղծուԹեանց: Յայտնի է ամենեցուն համբաւատեղին Ա՚զեքսանդրիա, Ա՚նտիոք և ԿորնԹոս: Գ՚իտեն առաւելն եԹէ զիարդ անուանի էին՚ի փափկուԹեան և՚ի զեղխուԹեան քաղաքք Յունից և փոքուն Ա՚սիոյ. և ահա անդ՚ի մէջ ապականուԹեան բարձրանայր քրիստոնէուԹիւն, և՚ի քաղաքս անդ հիմնէին եկեղեցիք պայծառապոյնք քան զայլս:

ՅափուԹիւն ոչ միայն զօրացեալ ընդ ամենայն աշխարհն Յաւունոց, այլ և յայտնի առնէր անաւրէն անամօԹանայր, ընկալեալ և արբշռեալ

[1] Օգոստ. յղ. Քաղաք. Բ. ՟է: Կնոյր. Թուղթ ա: Կղեմ. աղեքս. Դատախ. Բ:

նեալ ՚ի կրօնից ։ Ել ինչ զանխուել էն ՚ի գիտնոց՝ որպիսի ինչ սպանդարարութեան պաշտամունքն էին, և ոճնք Միւբելեայ ։ Ամենայն ուրեք ընդ առաջ ելանէին Կիբովիտէ, Գոնեա, Կանիմեդէս, և ամենակերպարանն Բաքոս ։ Յամենայն ծաղկոցս բուրաստանաց նախիշխան բազմէին դրօշեալք ծաղրալից առտուածոցն ։ Սովորական երգք կանանց տըփանք դիցն էին, որպէս և տեսանել առ Իրդիլիոսի և առ Վիրգիլեայ. և բազմագոյնք ՚ի տեսարանսց նոցա կամ սիղծք էին և կամ խիստք և անագորոյնք ։

Պանուքիւնք մարդկան ՚ի միմեանց կամ յօշոյշ պատառումն ՚ի գազանաց՝ էին զբօսանք Հռովմայեցւոց. զոր հանապազ վասն դոյզն յանցանաց ՚ի կռնէղս մատուցանէին զատրուկսըն չարալուկս. կուսակալք նոցա անողորմք բռնանային ՚ի վերայ օտարաց. կայսերքն նոցա ՚ի մահ մատնէին առանց դատաստանաց զորս և կամէին, յորմէ անօրինագոյնքն ՚ի նոսա բազում Ճապաղիս արեան գործեցին և յաղատրեարն Հռովմայ ։ Ընդ և ագահութիւնն ոչ ինչ նուազ քան զնժականութիւն տանջէր զոգիս. ամենայն ուրեք բռնացեալ ունէին նենգութիւն, երդմնահարութիւն, գաւաճանութիւն, զրպարտութիւն, բռնութիւն և հարբուտահարութիւն ։ Ի կայեն այսմ ամենայնի բա-

՚ Վիրգիլ. Աշակ. Դ։ Ովիդ. Ալլահերպ. Դ։

ւսկանապէս Կիւկերոնի Ձառքն. զի եթէ յաւուրս ընկերհաշտութեան՝ ի միումնահանգի եւեթ յերեսին ամս՝ այնչափ ոձիրս գործեաց Վերրէս, զինչ է ասել զկուսակալացյաւուրս Կլէոպատրայ եւ Կերոնի որ աներկիւղ էին յամբաստանութենէ, եւ զորս օրինակ ինքնակալացն առաւել ևս՝ ի չարիսն պնդէին։ Յաւարտ զօրս՝ ի չարեաց թագչին անգործ Կլէոնոս և Փլորոս՝ ի Հրէաստան, և փղակկոսՎ՝ զեբռանդրիա։ Կայր՝ ի յայտնեացն Ձառս խիզճ է ինձ յամել։

Կայսիսիք ոմանք էին որք գառնային լինէին քրիստոնեայք, զորոց առաջի կայ ինձ ասել այժմ։ Կուացեալ նոցա գամ ի և սքեսել, ոչ ևս մարթ էր նշմարել՝ ի նոսա որ ինչ յառաջն լեալ էին՝. բայց և ոչ արժան է լռել զգազմանց՝ ի Նաւնաց և՝ ի Հռովմայեցւոց զառ՝ ի գարձն պատրաստութիւնս։

Կպաքէն կրթեալ յոյժ էին նոքա. և կրքաւութիւնն ինքնին բազում բարիս՝ ի ներքս ածէ՝ զորս և մարթ է՝ ի վերին երեսս առաքինութիւնս կոչել, օրպէս զզգածութիւն, ըզհամբերութիւն, զհեզութիւն՝ ի բանս, ըզքաղցրութիւն, զգուշաբանութիւն, զեռանդն՝ ի ցոյց մեծարանաց և սիրոյ, և զանոթածախս պատշաճէից յաւետեայսն՝ յոր յոյժ գերազանց գտան Նոյնք։ Հնար է թէ խցեն ուրուք այս

1 Յովնաղ. Եպիծ. Ը։ 2 ա Կորնթ. Ջ. 11։

ամենայն բարեմասնութիւնք առանց հաստատուն առաքինութեան, և դարձեալ մարթի ումեք վերջանալ յայսցանէ՝ թէպէտ և չիցէ ախտամոլ և յոռի. բայց առաքինութիւն ոչ է կատարեալ առանց արտաքին բարեմասնութեանցս որք սիրելի ևս յոյժ ընծայէն զնա և յանկուցիչ։ Այլ ի Յոյնս և ոչ սակաւք չէմարիտ իմաստասէրք, որք միամտութեամբ և ամենայն ձգամբք մտաց խնդրէին գտանել զօձան երանութեան, պարապեալք անքուն ի խելամտութիւն չէմարտութեան և ի գործել զառաքինութիւն, կամակոր վանն այն հրաժարելով յաւգութեանց և ի բարձից, և առ ոչինչ գրելով առ ի հասանել այմ զծախս, զվաստակս և զհատանել անցանել ընդ ծով և ընդ ւերինս[1]։ Այսպէս և Հռովմայեցիք ոչ առ հասարակ ապականեալ էին, այլ դեռ ևս գոյր ի նոսա նախնի կայծակն վեհանձնութեան և անյողդողդութեան, և առաքինութեանցն՝ որովք նախնիք նոցա պայծառ փայլէին։

Ընդ հնոցհաց աւետարանին իջանելով ի վերայ բարեյօժար բուսոյ բարուց նոցա՝ անմարթ էր չառնել բազում և մեծամեծ պտղակայծութիւնս առաքինութեանց։ Այսուքն կուռնեղիոս՝ նախընծայ ի հեթանոսաց ի հնոցհս աւետարանին՝ հարիւրապետ էր Հռովմայեցի։

[1] Յոյսին։ առ Տրխ։

Հռովմէական մեծախորհուրդն նշոյղ ի բազում մարտիրոսս, ի սուրբն Լաւրենտիոս, ի սուրբն Վիկենտիոս, ի սուրբն Վերա-տիանոս. և ի բազում երևելի հայրապետս, ի սուրբն Կիպրիանոս, ի սուրբն Ամբրոսիոս և ի սուրբն Պաւղոս։ Օգնութիւն և զհանճար իմաստասիրացն Յունաց ակն յանդիման տեսանելով ի վկայաբանութիւնէ սրբոյն Պողիկարպոսի, Պիոնի քահանայի վկա-նացելոյ, և ի գիրս Յուստինոսի մեծի, և Կղեմայ աղեքսանդրացւոյ։ Ընդ ի գիրս նո-ցա ի միտ առնումք և զհրաշալի հմտութիւն նոցա, և զծայրագոյն քաղաքականութիւն։ Վասն քրիստոնէական խոնարհութեան ի զգօնու-թիւն ածեալ զվայրագութիւն Հռովմայե-ցւոց և զամբարշտաձութիւն իմաստասի-րաց, զիմարիս իմաստուիս յարդարեաց եգ զնոսա, զի միանգամ խելամտեալ նոցա հա-ւատով եթէ ընդ ո՛ր ընթանային պարտ էր ին-քեանց, ոչ այլ ինչ՝ ի մոխ եգին։ Արդիկ այնչ պիսիք ձարտարք և կորովամիտք՝ բուռն հա-րեալ զժուժկալ կենաց և զանընդունելիսն, և զեղն հլուք և պարզք այնու ազնուական պար-զութեամբն՝ որ առ ոտն հարկանէ զնորատանու-թիւն։

Այս օրինակ բարձրացան քրիստոսական կրօնք ի հռովմէական աշխարհին, և ի քա-ղաքամիջն անդ ի Հռոմ, միչդեռ ծաղ-

կաւէտ բարգաւաճէրն, յաւուրս առաւելապոյն պիտուէեան նորա և առաւելագոյն քան զամենայն ժամանակս ապականուէեան։ Ընմարթի էը հրաշափառագոյն և յայտնել աստուածայնուէեան աւետարանին՝ որպէս յաղթանակելոյն կրկին բնաւորեալ կրէից ՚ի մորդիկ՝ անհնարինս դիմամարտից նման։ Կիւտուէիւն և բարձրամտուէիւն հակառակ կային պարզմտուէեան աւետարանին, և խոնարհուէեան հաւատոց։ Յոռուէիւն սրտից և խաթարումն բարուց թշնամի համբառնային սրբուէեան նորա, և անպատուաստուէեան վարդապետուէեան վարուց։ Ընժան ի քաջ խելամտել այսմ, որպէս զի մի որ համարեսցի թէ առ շինականագոյնս հեթ և առ գիւղական առաջի կայր քարոզել առաքելոյն։ Վասն ազգասէնի զայս Տերտուղիանոս հեթանոսաց. „Վրիստոս, ասէ, ջարդ որպէս գնումա „որ զդժնեայս և զվայրագս ՚ի մարդկանէ „զգօնացուցանէր, ահագուցանէլով գնոսա „բազմուէեամբ գիշ՝ զորս պատուիրէր նո„ա կարդալ յօգնականուէիւն. այլ գտեալ „զազգ մարդկան կիրթս, և բազում քաղաք„ք ականուէեամբն մոլորեալս, եթող զայս „նոցա Ճանաչել զՀնարաւորուէիւն ,, ՚։

1 Օգոստ. Թուղթ ՃԼՂ.առ. կոչ. Հեթան. Բ. ԺԸ։ Տեր. Մարկէդ։ յղ. Քաղաք. և յղ. առաղ. Պատասխ. Ը։

ՅՕԳՈՒԱԾՕ ԵՐԿՐՈՐԴ

Հրաւանդք։ — Մկրտութիւն։

Լ՚ըս այլ և այլ պատրաստութեան սրտից և զանազան յեղանակ էր քարոզութեան աւետարանին։ Օ՚Հրեայս յաղթահարել՚ի դէպ էր մարգարէիւք և վկայութիւք գրոց սրբոց, և աւանդութեամբ հարց նոցա[1]. և զհեթանոսս՚ի հաւանութիւն ածել պարզ և կամ խօրին բանիւք՝ որպէս կարող էին լսել և վերկայութեամբք քերթողաց նոցին և իմաստասիրաց. իսկ հրաշագործութիւնք զերկաբանչիւրոցն էս ընդոստուգանէին գուշ. որպէս զայսոցիկ ամենայնի օրինակս տեսանեմք՚ի Գործս առաքելոց[2]։ Լ՚ը մտադիւր և զգօն ունկնդիրս խօսէին զբանս Լ՚ստուծոյ. իսկ իբրև տեսանէին զանհաւատս տաղտկացեալ՚ի բանից անտի կամ՚ի ծաղր ժպրհեալ, որպէս յաճախ պատահէրն, անդէն վաղվաղակի լռէին՚ի քարոզելոյ՝ զի մի անարգեսցի վարդապետութիւնն սուրբ, կամ հայհոյութիւնք՚ի նա ձգեսցին։ Օ՚ղնի ապա և գիրս հանին տակաւ առ՚ի ցուցանել հեթանոսաց զանհաստատութիւն դէնիւն նոցա, և առ՚ի զեր-

[1] Ա՚ձիրտ. ՚ի Ղուկ. Թ. իե։ ԻԳ. 16։ ՀԴ. 14։ ՀԻ. 22։
[2] Գործ. Բ. 15։ Գ. 12։ Յուսաին. ՚ի Տրիփ։

ծուցանել զնոսա ՚ի մոլորութենէ . որպէս խրատան Կղեմայ աղեքսանդրացւոյ առ Հեթանոսս , և Երեքին Թուղթք Թէոփիլոսի առ Աւտոլիկոս , և Յառն Յատիանու ընդդէմ Յունաց : Եւ առաւել քան զամենայն ինչ ձգէին որսային զնոսա սքանչելիքն՝ որ դեռ ևս յառաջ գործէին , և ամբոխութի վարուց քրիստոնէից , և վկայիցն արիականահատակութեն։

Ի խնդրել ուրուք դառնալ ՚ի քրիստոնէութիւն՝ ածէին զնա առ եպիսկոպոսն կամ առ երէց , որք նախ քան զամենայն քննէին զայն՝ թէ իցէ հաստատուն և անկեղծ կոչումն նորա , զի երկնչէին անարգել զխորհուրդս ՚ի հաւատացեալ զնոսա ոգւոյ անարժանից , և կամ ընուլ զեկեղեցին յողդողդ և յեղամիտ մարդկամբ որոց հնար էր անպատիւ առնել զնա կործանելովք ՚ի հաւատոյ յառաջին անպ հաւածանսն : Ա՛ման որոյ քննէին զեկեալն , և հարցանէին զպատճառս դառնալոյ նորա , և թէ որպիսի ոք էր , ազատ եթէ ստրուկ կամ ազատացեալ , և թէ որպիսի էին զնացք նորա , և կամ ջոր կեանս վարեալ յառաջագոյն : Որք ՚ի մեղանչական արուեստ ինչ էին կամ ՚ի մեղս ինչ սովորեալ , չընդունէին զնոսա մինչև հրաժարեալ նոցա ՚ի մեղաց անտի : Վասն իրի մերժէին զկանայս պոռնիկս [1] , և զոր չհա-

1 Կանոնք Առաք . Ը . խբ : Տե՛ս ՚ի լերինն : Ժողով Օգոստ . ԽԱ . յԼ . քարող . Եղիսեր . կան . կբ :

վաՀառ առնէին նոքօք, զգուանս, զսուտ բամարտս, զմարտիկս կրկնսաց, զվարձակս և զկաքաւիչս հրապարակականս, և զամենայն խաղալիկս և զպարապեալս 'ի թատերս, զա ռասպելապատումս, զկախարդս, զիղձս, և զգրաբարս առ 'ի բժշկել կամ 'ի խափանել զչարիս ինչ, և որ յայլ ինչ յայսպիսի նահրա Հաւատս արուեստս պարապէին։ Եւ զոք յայս պիսի մարդկանէ ընդունէին մինչեւ Թողեալ նոցա զչար սովորութիւնսն. և 'ի Թողուլն՝ չՀաւատային նոցա եւ զփորձ առեալ առ ժա մանակ մի զմնացս նոցա Հաստատութեան, զի նախանձ գարձուցանելոյ զՀոգիս՝ ոչ գիւրա Հաւանս առնէր զքրիստոնէայս որոց խըն դրելին յարել 'ի նոսա։

Ո Կարողն 'ի քրիստոնէութիւն երախայս յուցանէին ձեռնադրութեամբ եպիսկոպոսի կամ երիցու՝ կարգեալ յեպիսկոպոսէն, որ դրոշմէր զՀաւատս նոցա նշանաւ խաչի, ա զօթս առնելով՝ զի լեցին նոցա 'ի փրկութիւն բանքն զոր լսելոց էին, և արժանի լինել սրբոյ մկրտութեան։ Եւնէին զնէին հասարակաց քարոզութեան, ուր հրաման էր գալ և անՀա ւատից. բայց էին և վերակացուք առանձինն որ Հսկէին գնացից երախայացէլոցն, և ուսու ցանէին մի առ մի զմնասունս Հաւատոց՝ առանց մատչելոյ 'ի խորս խորհրդոյն՝ զորս տակաւին իմանալ ոչ ունէին։ Ո՛յլ առաւել փոյթ էր

նոցա՝ վարժել զերախայս ՚ի կարգս բարեյա-
կանին, առ ՚ի գիտել օրպէս արժան իցէ կեալ
նոցա յետ մկրտութեանն ։ Ա՛ր արժքս այսոքիկ
բարեյականին՝ են պատճառք մանկավարժու-
թեան գրոցն Կղեմայ՝ որ յաջորդեաց յետ
Պանտենեայ խոստատսիրի ՚ի վարժարանն [1]
զերքսանդրիոյ, այս ինքն է ՚ի վարժապետու-
թիւն եկելոց ՚ի քրիստոնէութիւն ։ Ա՛մա յա-
ջորդեաց Կղոգինէս, օրուամ օգնական եղև
զկնի սուրբն Հերակլ որ նախակրթեալ էր ՚ի
նմանէ [2] ։

Ժամանակ երախայրութեանն ձգէր սովո-
րաբար մինչև ցերիկուս ամս. բայց էր զի յեր-
կարէր և ևս, և էր զի կարճէր ըստ առաւել
կամ նուազ զարգանալոյ երախայացելոյն [3] ։
Օ՛ր ոչ յայն ևեթ հայէին՝ զի ուսանէր նա
զգնոյն հաւատոյ, այլ թէ ուղիղ ըստ նմին և
զգնացան. վասն որոյ թողուին զնա յերախայ-
րութեան մինչև զգաստանայցէ բոլորովին.
յորմէ և բազում անգամ հայտագրէին զմկրը-
տութիւնն իբրև զի որք խնդրէին՝ զնոսա
միայն մկրտէին, թէպէտ և ոչ վերջնոյին ՚ի
յորդորելոյ և զայլս ՚ի խնդրել զայն ։ Ւսկ որք
խնդրէին և արժանի այնմ համարէին, տային
զանուանն ՚ի սիրելն քառասնորդաց առ ՚ի
գրել ՚ի կարգս արժանաւորաց մկրտութեան

1 Եւս. Պամֆ. Ջ. ԺԶ ։ 2 Ժող. Եղիբեր. գլ. խբ ։
Որոգ. ՚ի Դուկ. Հատ. Ե ։

կամ ուսելոց. նմին իրի և կրկին դասք էին եւ բախտից, ունկնդրաց՝ և արժանաւորաց՝ : Ա՛ո քայետինք պահէին զքառասնորդական պահս հանգոյն հաւատացելոց, կանխելով յաձախ յաղօթս, ՚ի հսկմունս, և ՚ի խոստովանութիւն մեղաց: Ա՛յլ յայնժամ՚ի բարձրագոյն եւս ուս մունս հաւատոց վարժէին զնոսա՝ մեհնելով նոցա զհանգանակն, և մանաւանդ զխորհուրդ սրբոյ Հրորդութեան և զմարդեղութեան, և յաձախագոյն եւս ածելով զնոսա յեկեղեցի առ ՚ի քննել, և ՚ի հրաժարեցուցանել զնոսա ՚ի սատանայէ, և աղօթել ՚ի վերայ նոցա յանդիման ամենեցուն : Ո՛չյաս ամենայն անուսանելին հարցմունս. որ և անխափան պահեցաւ յեկեղեցւոջ ընդ յորել դարս՝ եւս և ՚ի մկրտութեան տղայոց. և զհետս կարգաց այսոցիկ տեսանեմք յայսօր ՚ի պաշտամունս եկեղեցւոյ, և մանաւանդ ՚ի պատարագի չորեքշաբաթու աւուր քառասնորդական պահոյ՝ որ ՚ի չորրորդ դիմ շաբաթու, յորում ընթերցուածն է աւետարանն կուրին ՚ի Ծնէ *:

Ի վախճան անդր մեծի պահոյն ուսուցանէին նոցա զերբուններան աղօթսն, խնկամուտ արարեալ ՚ի կարճոյ և խորհրդոց զոր ընդունելոց էին ընդ հուպ, և զորոյ ընդարձակագոյն մեհնութիւնս առաջի կայր նոցա ուսա-

1 Որոգ. ընդդեմ Կեղ. Գ: * Իմա ըստ արարողութեան լատ. Տէրտուղ. յղ. Մկրտ. ԺԲ. ն: գին նկնղեցոյ:

նել յետոյ։ Ո՛չ այս ամենայն վարժս ըստ ասացելոցս տեսանելիք կարգաւ ՚ի գիրսն Կիւրղի երուսաղէմացւոյ մակագրեալ Կոչումն ընծայութեան, և ՚ի Թուղթն Փերրանդեայ սարկաւագի առ Փուղգենտիոս յաղագս մկրտութեան Լիթովպացւոյն։ Ոչք ընդ այս ամենայն փորձս անցեալ՝ արժանի գտանէին մկրտութեանն, ընտրեալս այնու հետև կոչէին զնոսա, և մկրտէին հոգևակաւ յաւուր մեծի շաբաթու սրբոյ զատկին, զի յարիցեն ընդ Յարիստոսի. և կամ ՚ի շաբաթու աւուր պենտեկոստէի, ընդունել ՚ի միասին ընդ առաքելոց զՀոգին սուրբ, քանզի զայդ ընդ մկրտութեան տային և զդրոշմն։ Յայսոսիկ յերկուս տօնս և՛ եթէ օրէն էր մկրտել. նմին իրի սուրբ քահանայապետն Լևոնդիոս դատապարտէ զսովորութիւն եպիսկոպոսացն Սիկիլեայ՝ որ մկրտէին և ՚ի տօնի Յարութեան. և այս կարգ պահէր տակաւին և ՚ի տասներորդ դարու. բայց զրոս ՚ի վերոյ տանգի էին՝ յամենայն ժամանակի օրէն էր մկրտել, որպէս և ՚ի համարձակել հալածանաց[1]։

Յորում հասանէր օր մկրտութեան՝ ածէին զերեխայն յաւազանն սուրբ. և հրաժարեցուցեալ զնա անդէն ՚ի սատանայէ և ՚ի խաբէութենէ նորա՝ հարցանէին նմա զհորհուրդս

[1] Առ Փուղգ. Թուղթ ԺԱ. յամի 895։ Տերտուղ. յղ. Դ։ Ամբ. Տրիբուր. գլ. Ժբ, Մկրա. գլ. ԺԹ, ի։

սուրբք հաւատոյ. և նա պատասխանի տայր ա-
սելով զառաքելական հանգանակն։ Խազուամ
այն էր ղի ընկղմամբ պաշտէին զմկրտութիւնն,
երիցս յաւազանն ընկղմելով զերախայն, և առ-
մի մի նուագ անուանելով կարգաւ զմի յան-
ձանց սրբոց Երրորդութեան՝ զՀայր և զՈր-
դի և զսուրբ Հոգին։ Ա.յր՝ի դեպս կարևորս
շատ համարեր և սրսկմամբ մկրտէին՝ որպէս
զհիւանդս, զորս ժողովուրդն՝ զմկրտեալն՝ի
մահիճն՝ի հիւանդութեան՝ մահճականս *
անուանէր։ Օրդիս հաւատացելոց ածեալս
՝ի մկրտութիւն՝ փութապէս մկրտէին, չսպա-
սեալ և լրանալոյ աւուրց ութից. և պատաս-
խանի տային ընդ նոցա հնքահարքն և հնքա-
մարք. բայց զհամօրէն նորոգ մկրտեալն՝յա-
ճախոյն հասակի՝ մանկունս անուանէին։ Ի զ-
հետ մկրտութեան պաշտէին և զօծումն իւղով
օրհնեցեալ՝ի վերայ սրբոյ սեղանոյ. և կատա-
րեալ զամենայն՝ ածէին զմկրտեալն առ եպիս-
կոպոսն, որ աղօթիւք և ձեռնադրութեամբ
տայր նոցա զՀոգին սուրբ, այս է զդրոշմն։
Խայց և որք անդրշմ մեռանէին՝ համարէին
ընդ ձշմարիտ հաւատացեալս։ Կաճեն և մեր
ջամբէին՝ի կերակուր առ նորածնեալսն յա-

* Κλινικός.

1 Տերտուղ. յղ Մկրտ. գլ ժե՛, ի։ յղ Պատ. Ր. ։ Ֆ։ Կիպր. Թուղթ Հ, առ Նուաթ. և Թուղթ ԿԹ, առ Մագն. և Թուղթ ԿԴ, առ Փիդոս. և Թուղթ ՀԳ, առ Յուբայան։ Տերտուղ. յղ. Յաթ. մարմ։

աղանէն՝ առ ի յայտ առնել զմտանել նոցա ի Հնմարիտ երկիրն աւետեաց, և զհոգևորա-
կան մանկութիւնն. քանզի այս իսկ էր յայն-
ժամ կերակուր տղայոցն հատուցոյ ի ստենէ[1]:
Որահաւատք զեօթն աւուրս կրէին զսպի-
տակ հանդերձսն՝ զգեցեալս յերանել անդ իւ-
րեանց ի սրբոյ աւազանէն, առ ի յանդիմա-
նութիւն անմեղութեանն զոր պարտ էր պա-
հել նոցա մինչև յօր մահուն. և զեօթն ա-
ւուրսն զայնոսիկ հրաժարէին և ի բաղանեաց՝
յոր զօր հանապազ սովորութիւն էր լուանալ
ի ջերմ նահանգս: Ոմանք թէ մկրտեալքն կա-
տարեալհասակք չիոխէին զանուն իւրեանց.
քանզի ահա բազումք ի սրբոց գրիցն անուանս
բերեն, որպէս Պետրոսի և Պաւղոսի
և Պետրոսի: Այլ մկրտելոցն ի տղայութեան
կոչէին գիւրաքար զանուանս առաքելոցն,
կամ զարեպաշտութեան անուանս՝ յայտ-
արարս առաքինութեանց և զհաւատոց, որպի-
սի են յունական անուանքն Անսեբիոս, Աս-
տաքէոս, Խաիւքիոս, Պրիգորիոս, Ղաթանաս.
և առ Լատինս՝ Պիոս, Վիկտորիոս, Փիդոս,
Սպերատիոս հանդերձ այլովքն, որ ապա յետ
ծաւալելոյ քրիստոնէութեան յաճախեցին:
Որահնձնելոցն յաւազանէն օգնական լինէին
որք աճէին զնոսա ի մկրտութիւն, և երի-

1 Յղ. Մկրտ. Հերես. առ կնոք: Տերտուղ. յղ. Պատկ. գլ. ԺԲ: և ի Մարկ. ձառ. ԻՂ:

յունք, որք ոչ Թուլանային հակել՝ի վերայ նոցա ընդ բազում ժամանակս՝ առաջնորդելով նոցա՝ի քրիստոնէական վարս [1]։

ՅՕԳՈՒՆՔ ԵՐԻՈՒԴ

Յաղագս աղօթից։

Ականջիւն նորա այնուհետեւ նոր ինն քաղաքավարութիւն՝ բոլորովին ներքին և գերբնական, և գիւրանայր նոցա ամենայն որ ինչ յառաջն անհնար Թուէր։ Լ՚աւթին և գլխաւոր պարապուժին նոցա աղօթք եին [2], զոր նոյնպէս նախ քան զամենայն յուշ առնէ Յօզոս. և որպէս յորդորէ նա՝ աղօթից ստէպ կալ ըստ հրամանաց փրկչին, զամենայն հնարս հնարելն չկասել բնաւ ըստ կարի՝ի խոկալոյ ա՚ստուած և յաստուածայինս [3]։ Ջ՚անային աղօթեքն՝ի միասին, գիտելով չափ ալ ըստ Թուոյ բազմութեան միաբան աղօթականաց է զօրութիւն աղօթից յընդունելութիւն Հայցուածոց, ըստ տեառն բանին, «Եթէ երկու՝ի ձէնջ .. միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, .. զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա՝ի Հօրէ իմ

[1] Գիտե. աղէքս. առ Եւս. Ցիմոթ. Բ. 8։ ա Թեսաղ. Ե. 17։ Ոսկ. ի Ցովն. Հատ. ԻԱ։
[2] Կիպր. առ Դոնատ։ ա
[3] Իգնատ. առ Եփես։

„ մէ որ յերկինսն է. զի ուր իցէ երկու կամ ե„ րեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես՝ի մէջ „ նոցա „ ։ Այուրեն Թգնատիոս աստուածա„ ղնեացն յանձն առնէ սրբոյն Պաղկարպոսի է„ կեղեցուցանել ստէպ զժողովուրդն, և խնդրել „ անդ զՀաւատացեալս իւրաքանչիւրյանուանէ։ Յմի զի և առաջնորդացն առընթերակայու„ թիւն յաճախէ զզօրութիւն աղօթից, և յե„ ռանդն զարթնուն ամենեքին օրինակաւ խո„ նարհութեան իւրեարց և աստուածպաշտու„ թեան։

Ուամ Հաստատակաց աղօթից յոր յաճախէին Հաւատացեալքն՝ էր առաւօտուն և երեկոյին, կոչեցեալ արդ՝ի մէնջ ժամերգութիւն առա„ ւօտեան և երեկոյեան ։ Վաջալերեին սըր„ բել Նոքօք զսկիզբն և զաւարտ աւուրն, և մի զանց առնել զնոքօք պատճառելով զկենցաղա„ կան գործս որ երկրորդ դասելի են Հոգևորա„ կանացն։ Յառաւօտեանն ժամերգութիւնն օրՀ„ նութիւնք կոչեցեալ՝ի Լատինաց վասն սաղ„ մոսերգութեանցն որ՝ի նմա՝ կարգեալ թուին փոխանակ վաղորդայն զոհիցն Հին օրինաց. և է ցայսօր Հանդիսաւորագոյն ժամն ժամերգու„ թեան, որպէս յայտ է՝ի յիշատակութեանց սրբոցն որ՝ի նմա, ՝ի Հրաշալուցիցն, և՝ի խըն„ կարկութեանց ։ Ըստ նմին և երեկոյեան ժամ

1 Տէրտուղ. Պատասխ. լիթ։ 2 Կանոնք Ընդհ. ժե, ծթ։ Մատթ. ԺԸ. 19, 20։

երգոութիւնն զերեկոյի զոհից ունի զտեղի.
և սահմանեցաւ վասն սուրբ առնելոյ զակիզքն
պիշերոյ: Այլ զի և օրհնութիւն Հրապաց կո-
չէր, զի յայնմ պահու լուցանէին զՀրապան:
Այս ցայսօր՝ի նմին ժամու ասեմք զմաղթանան,
յորում բանք լինին զլուսոյ Հրապի, և զընթ-
րեաց յոր երթային ակմբեալքն՝ի մաղթանացն:
Ասէին յետ հատարակաց աղօթից տալմի-
ռեանց համբոյր խաղաղութեան: Ապք միան-
գամ խափանէինն գալ՝ի ժառերգութիւն, որ-
պէս հիւանդք, բանտարգեալք, Հանապարհորդք,
ջանային և նոքա ըստ կարի՝ի մի վայր ժողո-
վիլ. իսկ եթէ միայնակ էին, ոչ հեղգային դար-
ձեալ փութալ յաղօթս զկարգեալ ժամանն:

Ընդ յառաւօտին և յերեկոյեան ժառեր-
գութեանց՝ յաղօթս կային և յերկրորդ և՝ի
վեցերորդ և յիններորդ ժամու, որպէս դար-
ձեալ և՝ի պիշերի: Ի ցուցեալ ժամն աղո-
թից նշանակեն յայտնապէս Աղեմէս աղեք-
սանդրացի, Տերտուղիանոս և սուրբն Կիպրիա-
նոս, Հաստատեալ զայն օրինակօք Հին և նոր
կտակարանաց, առ որ բերեն և խորհրդական
պատՀառս: Որոգինէս գոնեայ երիցս յաւուրն
ասէ յաղօթս կալ. յառաւօտուն, զմիջաւուրըն
և յերեկոյ. Թող զգիշերայինն: Ի ժամ աղո-

O lux beata Trinitas Ով որ միով.
Ով ըսք մեզ Լոյս զուարթուն համ

էս՝ի բարձունս, ով որ՝ի հաւ-
գին:

թէից պատնայինն յարևելս՝ համբառնալով յերկինս զՁեռս և զգլուխ։ Ո կարպեալ ժամս աղօթից թուէին ըստ Դաւիթայ, որ զբոլոր օրն՝ յելից արևու մինչև ՚ի մուտն՝ յերկոտասան հաւասար ժամս բաժանէին, թէպէտ և անհաւասար ըստ աւուրցն, որ է զի երկայն էն և է զի կարճ[1]։ Ասպէս և զգիշերն յերկոտասան ժամս հատանէին և կամ՚ի չորս պահս. իբրու զի ՚ի ժամանակս պատերազմի չորից փոփոխէին պահակաւք։ ԵՒան որոյ ըստ աւուրց հասարակաւորութեան հաշիւ արարեալ առաջին ժամ աղօթից հանդիպեր՚ի վեցերորդ աստղաբաշխական ժամն մինչև ցեօթներորդն, երրորդ ժամ՝ յիններորդն, վեցերորդ՝՚ի միջօրեայ, իններորդ՝ յերրորդն յետ միջօրէի, երկոտասաներորդ՝ կամ ժամերգութիւն երեկոյին՝՚ի վեցերորդ կամ յետ միջօրէին, որպէս զի յերիս ժամս միանգամ մատչէին աղօթք ՚ի տունջեան։

Յառնէին յաղօթս և ՚ի գիշերի ըստ բանի սաղմոսերգուին[2], և որպէս Պօղոս արար ՚ի բանտին՝ յետ գանաճեճ լինելոյ ընդ Ե իղայի[3]։ Ո գիշերային աղօթից յիշատակեն Կղեմէս աղեքսանդրացի, Տերտուղիանոս և Որոգինէս[4]։

1 Տերտուլ. յղ. Աղօթ. գլ. ԺԳ։ Բարոն. յամն 251, ևն։ կանոնք Առաք. Ը. ԼԳ, ԼԵ, ևն։ կղեմ. աղեքս. Յաճախապ. Է. Է։ Տերտուղ։ կիպր. յղ. տէրտուն. աղօթ։ Որոգ. յղ. Աղօթ։ Մարտիալ. վերտաւ. Դ. Ը։

2 Սաղմ. ճԺԹ. 62։

3 Գործ. ԺԶ. 25։

4 Բարոն. յամն 51։ կղեմ. աղեքս. Յաճախ. Է։

Ասկ սուրբն Աթիլիանոս պատուիրէ զայն. և հարք ամենեքին գովեն զդիւերապաշտօնն՝ օգտակարագոյն յոյժ համարեալ զայն ի մեռեալ մարմնոյ, և ի համբառնալ զիւրս առ Աստուած ի խոր խաղաղութեանն, և ոչ այսչափ միայն, այլ և խրատ տան՝ ի զարթնուլն երբեք երբեք ի քնոյ, պարապ առեալ սաղմոս ինչ կամ զերուներան աղօթն զմտաւ ածել։ Եւ առաւօտուց և յամենայն ի վտանգս պատուիրեն ասել զՀանգանակն։

Դարձեալ և առ ստէպ ստէպ զարթուցանելոյ զիւրս առ Աստուած, և առ անհատ առնելոյ ըստ կարի զձայնս փառատրութեանն՝ ոչ զագարելէն և յայլ ամենայն գործս մատուցանել աղօթս և առանձինն ըստ պատուիրելոյն Պօղոսի, «Ամենայն ղոր և առնիցեք բանիւք և արդեամբք, զամենայն յանուն տեառն Յիսուսի արասջիք, գոհացողք Աստուծոյ և Հօրէ նովաւ»։ Այսմ իսկ զամենայն աշխատութիւնս, զերկնանելն, զհնձելն, զժողովելն զարդիւնս, աղօթիւք սկսանիլն և աղօթիւք կատարելին։ Աղօթս առնելին ի հինգ արկել զտունս, ի սկսանելն քնանիլ ի նոսա, ի պատրաստելն հանդերձս կամ զդեստս նորս, ի զգեստուլն զայն, որպէս և յայլ ամենայն իրս՝

1 Տե՛ր տուր. առ կին. Դ. Կղեմ. ազ. Մանկավ. Ե՛ Ոսկեբ. ի Գործս, Ճառ. Իմ. և ի Թուղթն առ Հռոմ. ԺԴ։ Օգոստ. Ճառ. Խ՚Ե։ Աթբոս. յղ. կուս. Գ։

2 Ա՛ր. Կողոս. Գ. 17։

և ս 'ի փոքունս ։ Ա յսոքիկ ամենայն յայտնի են 'ի զանազան օրհնութեանց աղօթիցն՝ զոր տեսանել է 'ի մաշտոցս ։ Այլ ողջոյն իսկ 'ի սկիզբն նամակացն տալ կամ 'ի տեսանելն զմիմեանս՝ ոչ բարեկամութեան ինչ ցույց էր միայն, այլ մաղթանք աղօթից ։ Այլ 'ի գործս կարի իսկ գուշնաքեաց առնէին զնշան խաչին՝ զհամառօտագոյնն յօրհնութիւնս՝ Այովաւ կնքէին զձակատս իւրեանց, և նովաւ պնդէին զանձինս յամենայնի 'ի մտանելն, յելանելն, 'ի գընալն, 'ի նստիլն, 'ի յառնելն, 'ի զգենուլն յագանելն զկօշիկս, յըմպելն, յուտելն, և որ ստոյգն սակի են ։ Ասկ 'ի փորձութիւնս՝ յաւելուին յայն և զիչումն 'ի հալածել զդեւս [2] ։

ՅՕԳՈՒԸՆ ԶՕՐՐՈՐԴ

Պարապումն 'ի գիրս սուրբս ։

Ա ԱՂՄՈՍՔ էին միշտ աղօթք նոցա, որ յըստակ և հանդարտ արտասանեալ՝ խրատ մեծ են, զի համառօտութիւն են ամենայն գրոց սրբոց, և ազդեն զիղձս՝ զորս առն բարւոյ պարտ է բերել յամենայն ազգի ազգի դէպս կենաց ։

1 Ոսկեբ · 'ի Թուղթն առ Թեսալ · Ճառ Ե ։
2 Տէրտուղ · յղ · Պսակ · ի, Ա ։ Ա · և առ կինն ։ Կիւրեղ Երուս · կոչ · ընծ · Դ, և ԻԳ ։

Յարէին՝ինչո՞ւն և ընթերցուածս՝ի գրոց սրբոց՝, ուստի կազմեցան որ՝ի Ճաշու ժամս համառօտ գլուխք ընթերցուածոցն * : Իսկ գիշերային ժամերգութիւնք Ոխ և Նէից ընթերցուածովք, զի և քան զայլոց ժամուց աղօթից երկարագոյն էին. և որովհետև խորհուրդ պատարագին մեծահանդէս էքան զամենայն պաշտամունս, նմին իրի Ոխագոյն և Նէին՝ի նմա հրահանգք : Ոչք միանգամ՝ի գրոց ընդունելի էին իբրև աստուածայինք՝ վկայեալք յանյեղլի աւանդութեանց եկեղեցեաց, զնոսին և էթ ընթեռնուին, ՝ի բաց թողեալ իբրև անյայտս և երկբայականս՝ զորս սոսկականք ոմանք յաւելուլ կամէին : Որպէս զի մ՚ յանդգնէք ոմանք յօրինակագրաց այլայլութիւս կամ փոփոխութիւնս ինչ արասցեն յեկեղեցականս գիրս, է զի յաւելուին յայտարարութիւնս՝ երդմնեցուցանելով զգաղափարողս յանուն Աստուծոյ ահաւոր դատաւորին՝ հաւատարմութեամբ ընդօրինակել զգիրսն [2] : Ո սոյն ձև երդման հանգուցանէ սուրբն Ոքրանոս ըզթուղթ իւր առ Վլըրինոս. և հանգոյն նմին են սպառնալիքն՝ի վախճան գրոցն Յայտնութեան [3] :

1 Ամենայն. թուղթ առ Մարկեղ :

* Իմ գրեալ շուք Լաթինաց ոչ ինամեցօղութեան. ՝ի մէջ ՝ի տառապարգութիւն գոյ :

2 Որոգ. առ Ափրիկ. և ՝ի Մատթ. ԻԳ. Ճառ. Ի՞ : Լեւս. Պատմ. ժ. :

3 Յայտն. ԻՒ. 18 :

Լ՝կեղեցի ոչ տուն աղօթից միայն էր, այլ և դպրոց վրկութեան, քանզի եպիսկոպոսն որպէս վարժապետ էրկայնամիտ, այլ գերագոյն ևս իշխանութեամբն՝ մ՝կնէր զաւետարանն և զայլ գիրս աստուածատուռ պատգամաց. վասն որոյ՝ի հնուէն գրեթէ եպիսկոպոսունք միայն վարդապետք կոչէին։ Ոչ ինչ զանգիտէին ուսուցանել հրապարակաւ և յեկեղեցւոջ, և առանին՝ որպէս ասէ զանձնէ Պօղոս, և պատշաճել զբանն իւրաքանչիւր լսելեաց, որպէս է տեսանել՝ի Թուղթս նորա առ Տիտոս և առ Տիմոթէոս՝։ Պարտ համարէին չասել ինչ՝ի մտաց իւրեանց. մի ընդ վայրաքնինս լինել և մի աւելի ինչքան զբանս աւետարանին հետատզտել. այլ պատմել հաւաստեաւ զուսեալն՝ի հարց իւրեանց, այս ինքն յերկուցանց և յեպիսկոպոսաց առաջնոց, և յաւանդութէ որ անդստին յառաքելոցն իջանէր առ նոսա անբնդհատ։ Ո՝վ և խորշուն ազգէն՝ի միտս հաւատացեալոց յամենայն նորաձևութենէ, ևս առաւել՝ի վարդապետութեան. որպէս զի՝ի լսել ժողովրդեանն խօսս ինչ հակառակ հաւատոց՝ ոչ ինչ ժամավաճառ լինէին վիճել ընդ նոսա, յառաջնորդս ապաստան արարեալ զայն. այլ խոցեալ զականջս՝ փախչէին՝ի տեղւոջէն՝։ Վասն ո-

1 Գործ. Ի. 20։ Իշնայս. առ Պողիկարպ։ Ցերտուղ. յղ. Իրաւ. ՃԲ։ Երան. առ վկըբին. առ Եւս. Պատմ. Ե. ԺԲ։

2 Կղեմ. ապէքս. Յաճախ։ Պապ. առ Եւս. Պատմ. Գ, ԼՃ։ Երան. Գ. ՃԲ, ՃԲ. և առ Եւս. Պատմ. Ե. ԺԲ։

բոյ անհամար աղանդք հերեսիովտաց դարուցն առաջնոց բազումացն էր զի հերքեին առանց ժողովոյ և առեղից ։ Այլ թաբան էր ուխտ ուղղափառ եպիսկոպոսաց ՚ի վերայ աւանդութեան, և անխոտոր ղՀետ երթայր ժողովուրդն բանից նոցա ։

Այլ ոչ ինչ նուազ պարապէին հաւատոյ գեալք յուսումն աստուածային օրինաց, և խոկային ՚ի նոսա ՚ի տուէ և ՚ի գիշերի ։ Զլուեալ գիրսն յեկեղեցւոջ՝ վերստին ընթեռնուին ՚ի տան, և զրուցատրութիք միմեանց սերտեին ՚ի մեկնութիւնս բանից Հովուացն իւրեանց ։ Այս առաւել Հարք խնամով ևս կըրկնեին զայն որգւոց ՚ի տունս իւրեանց, զի Հայր իւրաքանչիւր Տովիւ էր գոգոյս իւրոյն, և ինքն նախ առաջին բազմերյաղօթս և յառտնին ընթերցուածս ուսուցանէր զկին իւր և զորդիս և զծառայս ։ յորդորէր զնոսա ընտանի Համարձակութեամբն, և այնդէր ՚ի միաբանութիւն ընդ եկեղեցւոյն՝ անթերի Հպատակութեամբ իւրով առ Տովիւն իւր ՚։ Այր ինչ զՀարց ասացի՝ զնոյն ե իմանալ և զմարց ։ Այ՝ եծն Նարսեղ և եղբայր նորա Նիւսացին՝ պարծին ընդ պահել զՀաւատն զոր ուսեալ էին ՚ի Հանոյ իւրեանց ՚ի սրբուհւոյն Մակրինեայ՝ աշակերտելոյ սրբոյն Կղրիպոսի սքանչելագործի ։ և յայս Հայի արդեօք և գովութիւն աստուածայնոյն Պօ-

1 Կանոնք Նրաք. Գ. Ժ։

զոսի զՀաւատոց մեր և Հանդէս Յիմնեցեալ ։ Ո՛վ աստակ Հարց և մարդ ի Հոգևոր դաստիարակութիւն որդւոց և այն յայտ առնէ միտ ածպէս՝ զի ընդ բնաւ ժամանակս առաջինն դաւրուց ոչ երևեին Հետք գրոց քրիստոնէական վարդապետութեան վասն մանկանց, և ոչ քանք ինչ ՀրաՀանգաց վասն մկրտելոց ի տղայութեան. զի յայնմ ժամանակի տուն իւրաքանչիւր եկեղեցի էր ասէ Սոկրատես [1]։

Խազումք ի քրիստոնէից և յաշխարհականացս իսկ ի բերան գիտեին զաստուածաշունչ գիրս. այնչափ անդուլ էր պարապուժինացս յընթերցուժինացն. ընդ իւրեանս սովոր էին կրել զայն, և բազում մարմինք սրբոց գան Թաղեալ՝ աւետարան ի վերայ լանջից [2]։ Ո կայ Սոկրատես՝ զի և յաւուրս իւր ոչ սակաւք ի կանանց զպարանոցաց իւրեանց կախեալ տանէին զայն։ Ընդ բացեալ գլխոյն՝ լուանային զձեռս, և ամենայն ոք յարդարէր զանձն. արք բանային զգլուխս, և կանայք ծածկէին առ պատկառանաց. քանզի ոչ ինչ ընդ Հատ յարանց ընթեռնուին և կանայք ։ Խազմայ ի վկայից սրբոց յաւուրս Հալածանացն Դիոկղետիանոսի՝ ի բռնագատէն Թողուլ զամենայն և դիմել ի խորշս և ի փապարս լերանց՝ այն ևեթ

1 Բարս. Թուղթ ԿԴ. ՀԳ։ Գրիգ. վարք Մակրին։ ք Ցիմ. Ա. 5։

2 Ոսկեր. Հատ. Ղ. ի Թուղթն առ Կորնթ։

3 Ի Մատթ. Հատ. ՀԲ։

ցաւէր, զի ոչ ևս կարէին ընթեռնուլ զնոսին զտիւ և զգիշեր և մխիթարիլ[1]։

Ընթեռնուին հաւատացեալք և զՀայրապետացն գիրս և զեկեղեցական մատենագրաց. քանզի անդստին յայնց ժամանակաց բազում երևելի մատեանք՝ի լոյս ածան. յորոց քառասնիւ չափ՝ի մէջ բերէ Եւսեբիոս յականէ յանուանէ, առանց՝ի համար արկանելոյ որոց զանուանսն իւրեանց չէր մակագրեալ՝ի գիրսն, կամ զորս Եւսեբիոս՝ի հարևանցի ևեթ յիշատակէ[2]։ Ողջ և զքազում այլ մատեանս որ կորեան՝ի միջոց. զի թէպետ և բազում այնք էին որք առ խոնարհութեան և կամ առ երկիւղի հրատարակելոյ զնորդս՝ չկամեցան թողուլ գիրս, և կամ արգելան՝ի բազմապատիկ հոգոց և՝ի հալածանաց՝ որով հասանէր նոցա արագավախճան իսկ ելանել յաշխարհէս[3], սակայն պարտ էր նոցա հանապազ նամակագիր լինել վասն բազում ինչ երից, և պաշտպան կալ հաւատոյ ընդդէմ հերձուածոց և հերձանոսաց։ Ողջ զի այնչափ էր թիւ իմաստնոց և իմաստասիրաց և հռետորաց յաստիճան սահմանս թագաւորութեանն, մանաւանդ յԱլեքսադրիա և յարևելս, զի և՝ի քրիստոնէից գտանէին բազում՝ճարտար գրիչք։

1 Ի Յովհ. Ճառ ԾԳ։
2 Եւս. Պատմ. Դ, ե։
3 Ի գրուած. ընտր. յետ Կղեմ. աղէքս. Իէ։

Պատուիրեին հաւատացեալոց չընթեռնուլ զհեթանոսաց գիրս՝ որք կարող էին կործանել ի հաւատոց զտկարս, այն զի չկարօտանայիցեն նոցա։ «Ո՞վ ինչ քեզ պակաս իցէ յաստուածա-
„նունց գիրս՝ ասեր ոմն ի հնոց. եթէ պատ-
„մութեան ըղձանայցես, ահա քեզ Թագաւո-
„բաց գիրք. եթէ իմաստասիրութեան և
„քերթողութեան, ահա մարգարէքն, ահա
„Յոբ, ահա Դաւիթ, յորս բազմապատիկ ա-
„ռաւել հանճար գտանիցես քան ի բնաւ քեր-
„թողս և յիմաստասէրս, զի Աստուծոյ են
„խօսք՝ որ միայն է իմաստուն. եթէ երգս
„ինդրես, ահա ունիս զսաղմոս. եթէ զվր-
„նոցն վէպս, աւանիկ քեզ ծննդոցն գիրք։ Այլ
„պարզաբար ասել. օրէնք տեառն զբնաւ
„փրկաւէտ պատուէրս և զխրատս ուսուցա-
„նեն քեզ»։ Հայրապետք և երիցունք ոչ կա-
սէին ի վերծանելոյ և զարտաքնոց մատեանս, և ի կիր արկանելոյ ի դէպ ժամանակի ընդդէմ հեթանոսաց զբանս քերթողաց նոցա և իմաստասիրաց։ Ընդունելի համարէին զա-
մենայն ճշմարտութիւն յումմէ և իցէ ասացեալ և անկասելոր իւրեանց որպէս աշակերտաց Քրիստոսի, որ է բանն՝ գերաբուն իմաստութիւն։ Որոգինեայ վամենայն մարգկեղէն գիտութիւնս յօգուտ արկ՝ առ ի հաւատս որսալ զգիտունս[2]։

1 Կանոնք Առաք. Ա. Ճ։ 2 Կղեմ. ոգեբս. Յաճախապ. Ա։ Գրիգ. աբանէ. Յորդ։

ՅՕԻՒԻՆՅ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գործ նոցա և արուեստ։

Ա ենեսան՝ խստագոյն պատուէր՝ ի վերայ կայր հանապազորդելոյ՝ ի վերծանութե՛ սուրբ գրոց, զի մի գատարկակեացք լինիցին և ընդ-վայրաքնինք։ Իսկ այլք գործէին առ՝ ի պաշա-րել զկեանս իւրեանց, հատուցանել զպարտսն, և առնել ողորմութիւն[1]. բայց պարապէին յարդար գործս ևեթ կամ յարուեստս, և որ քաջ միաբանին ընդ անզբաղութեան և խա-նարհութեան։ Ել սակաւք և՝ ի մեծատանց կամակար մերկանային յընչից իւրեանց՝ յաղ-քատս բաշխելով զնոսին, մանաւանդ՝ ի ժա-մանակս հալածանաց, առ՝ ի մահ պատրաստել զանձինս վասն հաւատոյ։ Ի քաջին աշակերտք առաքելոց որ վաստակեցան զհետ նոցա՝ ի ծաւալումն աւետարանին, զնոյն առաքինու-թեան հանդէս յանձինս բերին բարձրագոյն և ս իմաստասիրելով[2]։ Ա՝ ածառեցին զինչս իւ-րեանց և ետուն աղքատաց զգինին, զի ազատ համարձակ գնասցեն ընդ ծագս աշխարհի քա-րոզել զաւետարանն։ Ի տգիտութենէ վաստակէին ձեռօք իւրեանց՝ երկուցեալ յան-գործութենէ, յորմէ և պատուէր սաստիկ եր

1 Կանոնք Առաք. Ա. Ե։ 2 Նւս. Պատմ. Գ. լէ։

զգուշանալ՝ի վեր քան զամենայն ախտս, և յորոց կիցք են նմին՝ յանհանդարտութենէ, յընդվայրաբանութենէ, ի բամբասանաց, յաւելորդ այցելութեանց, ի դատարկաշրջիկն լինելոյ, և՝ի հետազօտելոյ զգնացս այլոց[1]։ Եւ խրատ տային ի խաղաղութեան կալ և ի լռութեան, և պարապել անդուլ՝ի կարևոր ինչ գործ, և առաւել փութալ՝ի ձեռնտուութիւն հիւանդաց և աղքատաց և ամենայն կարօտելոց։

Այսոքան որոյ կեանք քրիստոնէից էր հանապազորդութիւն իմն աղօթից և ընթերցուածոց և աշխատութեանց, որ զմիմեանս յաջորդէին ըստ ժամուց՝ առ՝ի պէտս կարևորացն և՝ի թ առ կեանս դադար առեալ սակաւիկ մի, զոր և զոմն համառօտիւ վճարէին ըստ կարի։ Այլ և զամենայն գործս երկրորդ առնէին կրօնից՝ զոր միայն համարէին առաքինի, և միակ պարապումն՝ յոր պարտ էր միտ դնել նոցա զամենայն աւուրս կենաց իւրեանց[2]։ Արուեստ նոցա էր պարզաբար և սոսկապէս քրիստոնեայ լինել. զայլոց մեծարանաց անուանցն չէր ինչ նոցա փոյթ. վասն որոյ և՝ի չարացանել դատաւորաց զանուն նոցա կամ զաշխարհ կամ զկարգ պատուոյ, նոքա այլ ինչ ոչ պատասխանէին՝ բայց զի Քրիստոնեայ եմ։

1 ։ Թեսալ. Գ. 6, 11։ ։ Տիմոթ. Ա. 5։ ։ Տիտոս. Գ. 8։ ։ Կանոնք Առաք. Ա. 3։ ։ Կղեմ. 2 Կանոնք Առաք. Բ. 47, 49։

Որք միանգամ կարի ինն գրաւեն զմիտս և զաղէկցուցանեն արուեստք, որպէս վաչառաշահութիւն, վէճք դատաստանաց և իշխանութիւնք, չէին նոցա հաճոյ։ Հանդերձ այսու ամենայնիւ որ ինչ գործ կամ արուեստ էր նոցա նախ քան զմկրտութիւնն՝ ի նմին կային, միայն եթէ չհակառակէր այն աստուածպաշտութեան[1]։ Զայն որոյ և ոչ ոք ստիպէր զգինուորս Թողուլ զգինուորութիւն՝ ի լինելն քրիստոնեայ։ Յուշ առնէին նոցա զպատուիրեալն Աւետարանին, չառանալ Թոշակօք իւրեանց, և ոչ զոք խուել կամ հարստահարել։ Այս բազում իսկ գինուորք գոյին քրիստոնեայք, որպէս յայտ է՝ ի չանթ ընկեցիկ գնդէն առ Արկոսիս Ա՛րքեղեոսիս, և՝ ի Թեբաականն՝ որ խմբովին նահատակեցան, ընդ նոսա և Հաղարապետ իւրեանց սուրբն Աւրիկիոս յաւուրս Աքսիմիանոսի Հերակլեայ[3]։ Զինուորական հրահանգաց Հռովմայեցւոց՝ որ գեռ ևս յոտին կայր, կարևորագոյն մասն էր սակաւապիտութիւն, աշխատութիւն, հնազանդութիւն և համբերութիւն. և այս ամենայն առաքինութիւնք հասարակաց էին յայնժամ քրիստոնէից։ Վասն է զի և չառնուին յանձն գրել՝ ի զինուորութիւն, մանաւանդ Թէ ելանէին իսկ՝ ի ծառայութենէն՝ զի մի յանգիստս հաղորդ

[1] Որպ. ընդդէմ կնբ. Ը։ [3] Ղուկ. Գ. 1։ Տերտուղ.
[2] Տերտուղ. յղ. Պասկ. ք։ Պատասխ. Չ. ը։

գտանիցին նանրահաւատ կրօնից հեթանոսաց՝ ուսեալով զզոհեաըն, պատուելով զերջոյ յոյսն պատկերք կռոց նկարեալ կային, երդնելով ՚ի գլուխ կամ ՚ի բախտ կայսեր, և պատկելով ծաղկամեջ ՚ի գիցական կացուրդանոցա՝։

ՅՕԳՈՒՍՏՈՍ ՎԱՅՑԵՐՈՐԴ

Պահք Քրիստոնէից։

Յաձախ ևս պահէին քրիստոնեայք քան զՀրեայս, այլ ոչ ինչ խոխիր էր գոգցես ընդ խստութիւն պահոց նոցա և սոցա, երկոքեան ևս զնոյն ընդելական նշանակս սգոյ բերելով։ Եւ սահմանեին պահքն ՚ի մի անգամ ևեթ ուտել ընդ երեկս, և ՚ի ժուժկալել ՚ի գինւոյ և ՚ի կարի լինն փափուկ և ՚ի ստածող կերակրոց, և յանցուցանել զօրն զայն յանդբաղութեե և յաղօթս։ Վասն որոյ Հովուին՝ պատուեաքն յոյժ առնախնիս՝ասէ. "Յաւուր յայնմիկ մե.. կուսանալ պարտ է վաղ քան ընդ առաւօտն .. առ՚ի կալ յաղօթս, և հաց և ջուր լոկ առ.. նուլ՚ի կերակուր, և զայլոց կերակրոցն զգուշ.. նալ տալ աղքատաց ..՚։ Վասնզի կցորդեին հանապազ ընդ պահս զողորմութիս. և պահքն

1 Վ կայաբ. սրբոյն Աթանաս. Տէրտուղ. յղ. Պահկ։
միւս Վ կայաբ. սրբոյն Աթանէոս։ 2 Գ.մատ. Ե. Ջ։

ինքնին բաւական առնէին զձեռս նոցա յողոր-
մութիւն, նուազելով ըստ մասին զհանապա-
զորդ ծախսն։ Այլ զքուր իսկ ըմպել յաւել-
քան զհասանել Հաշտաժամուն՝ համարէին լու-
ծումն պահոցն։ Այսոր որոյ սուրբն Փրուկ-
տոս եպիսկոպոս Ցարագոնայ՝ ի գնալն ի մար-
տիրոսութիւն չէառ յանձն Հաշակել զըմպե-
լին զոր մատուցանէին նմա հաւատացեալք
առ ի զօրացուցանել զնա, և ասէր Թէ չէ է
հասեալ ժամ լուծանելոյ պահոց. զի օրն էր
ուրբաթ, և ժամք երկու միայն ցօր հասա-
րակ[1]։

Յառաջին դարս նոր օրինաց աւուրք քա-
ռասնորդաց պահոցն ևեթ՝ որ նախ քան զզա-
տիկն սուրբ՝ էին հրամայեալ պահք։ Պահէր
եկեղեցի զաւուրսն զայնոսիկ՝ ի յիշատակ չար-
չարանաց Քրիստոսի, յինքն պատշաճեալ
զասացեալսն՝ Թէ "Հնոր ժամ բարձցի ի նո-
ցանէ փեսայն՝ ապա պահեսցեն"[2]։ Այլ ևայլ պահք՝ ի բարեպաշտութենէ կարգեալք՝ չա-
րեքչաբաթն և ուրբաթն յամենայն եօթ-
նեակս, և զորս հրամայէին եպիսկոպոսունք
յանակնկալ դէպս պիտոյից եկեղեցեաց, և
զոր դարձեալ այլ իւրաքանչիւր անձին իւրում
դնէր պահս առ կրօնասիրութեան[3]։ Պահք

1 Վարք սրբոյն Փրուկտոս։ Պատմ. Եկեղ. Ը. խ։
2 Մատթ. Թ. 15։
3 Տէրտուղ. յվ. Պահ. ք։ Կանոնք Աղաք. Ե. ժը։

չորեքշաբաթու և ուրբաթու, կամ չորրորդ և վեցերորդ աւուրն կոչէին կայք, որ 'ի կայից պահապանացն 'ի կիր առեալ՝ նշանակէր բազում ուրեք և զպահս կրօնից։ Այս պահքս իսկ այսօրիկ առ 'ի յիշատակէ չարչարանացն Ա՛յրիստոսի եղան, զի յաւուր չորեքշաբաթու 'ի խորհուրդ ժողովեցան 'ի մահ նորա, և յուրբաթու աւուր աւանդեաց զոգին[1]։

Ա՛յ նման միմեանց էին պահքս, այլ յերիս ազգս զանազանեալ[2]։ Պահք կայիցն, զոր կիսապահս անուանէին, զի ձգէր մինչև չինհերորդ ժամ աւուրն. և իբրև երեք ժամք անցանէին զկնի միջօրէի՝ լուծանէին զայն։ Պահք քառասնորդականք, զոր երկայնէին մինչև 'ի ժամ երեկոյեան ժամերգութե՛ն, այս է մինչև 'ի ժամ վեցերորդ զկնի միջօրէի, կամ մինչ 'ի մուտս արեւու։ Այս երրորդն՝ կրկնապատիկ կամ յաւելուածով պահք անուանեալ[3], զի զօրն ողջոյն անձաշակ անցուցանէին։ Ա՛յսպիսի էին պահք մեծի շաբաթու աւուրն, յոր ամանք յաւելուին և զօր մեծի ուրբաթուն. այլք և զերիս և զչորս աւուրս, կէսք զաւուրս իսկ վեց մեծի շաբաթուն 'ի պահս հանէին ըստ իւրաքանչիւր կարի։ Ո՛չ կրկնապատիկ պահս պահէին 'ի Այանիա զամենայն աւուրս շա-

1 Թուղթ կանոն. Պետր. աղէքս. ժէ։

2 Վաղես. յԵւսեբ. Պատմ. Գ. իդ։

3 Տիւքանժ, 'ի բառարանին։

բաթուց, և մի անգամ դարձեալ յամենեան, բայ յամսոցն՝ յուլիս և օգոստոս։ Իսկ պատճառաք պահելոյ մինչև յիննեբորդ ժամին էր ի պատիւ ժամուն մահուն Քրիստոսի, և մինչև յերեկոյն առ ի պատիւ թաղմանն նորա[1]։

Դարձեալ և ժուժկալութեան այլ և այլ ազգք էին. ոմանք համակեր ևէթ լինէին՝ ոչ ինչ առնլով եփեալ կերակուր, և ոմանք չորաքեր՝ հրաժարեալք ոչ ի մսոյ միայն և ի գինւոյ, այլ և ի պտղոց՝ որոց զօրութիւն է գինւոյ և պարարտութիւն, ընկոյզս ևէթ և նուշս և այլնման նոցին միրգս ընդ հացի ճաշակելով. իսկ ոմանք շատ համարեին զհաց և զջուր լոկ։ Պատուէր էր մանաւանդ ի ժամանակս հալածանաց չորակեր լինել առ ի պատրաստել զանձինս ի վկայութիւն։ Դարձեալ էին ոմանք որք ոչ միայն զողջոյն իսկ զչաբաթն մեծ անսուաղ անցուցանէին, այլ և աւելի ևս աւուրս, մինչև արիանալ ոմանց անճաշակ կալ արեգունս տամն, որպէս ասէ Պ ունկիանոս՝ վկայ ստուգապատում. զի յամսոցմէնջ պահս յայսոսիկ չխոտրէին և զկիւրակէս՝ յորս ի կանոնաց արգելեալ էր պահել[5]։

Իտեմ ապաքէն զի ոչ ինչ ազգէն արդ օրինակաբ այսոքիկ, և անհնարին իմն համարի

1 Թուղթ կանոն. Դիոնէս. աղէքս։ ժող. Եղիբ. գլ. իէ, իվ։ Տէրտուղ. յղ. պահ. ժ։
2 Տէրտուղ. յղ. պահ. ժգ։
3 Տէրտուղ. յղ. պահ. իէ։ Երան. առ. Եւսեբ. Պաամ. Եղիէ։ Ղունկ. Փիլոպ. Պետր. աղէքս. ժե։

արդ նախնեացն խստակրօնութիւն . յանցանել դարուց տկարացեալ է , ասեն , բնութիւնս . և կեանք իսկ մարդկան կարճեալ են , և մարմինն ոչ ևս այնպէս զօրաւոր : Այլ աղէ ցուցցեն միանգամ որք այնպէսն խօսին՝ զհաւասիս փոփոխութեան բնութեանս . զի ոչ ևս են բանքս զդիւցազանց աւուրց Նփեղեայ , և ոչ զկենաց նահապետաց , կամ զմարդկանն որ յառաջ քան զջրհեղեղ ջուրց . զժամանակաց խօսիմք զնախնի կայսերացն և զմատենագրաց Յունաց և յատկացուց , որ յայտնի են ամենեցուն : Ոտ՛ի ձեռս առեալ քննեցեն որչափ և կամք իցեն նոցա , այլ ոչ ևս գտանիցեն համառօտեալ զկեանս մարդկան՝ի վերստասան դարուց և այսր : Ընդհատին՝ի նմին ժամանակաց և հարուստ ի յառաջ ոչ աւելի ինչ սահմանեցաւ մարդոյ քան զեօթանասունն և զութսունն ամ՝ : Այն էին դեռ ևս ոմանք և յառաջին դարս քրիստոնէութեան՝ի Յունաց և՝ի Հռոմայ՝ որք՝ի մերկակուիս հանդէս վարժէին զանձինս առ՝ի պնդել զմարմինս իւրեանց . այլ բազում ևս այնքիկ էին որ՝ի մեղկութիւն կրթէին՝ յօրանալով՝ի զեղխութիւնս , և մանաւանդ՝ի գործս որ բառնան՝ի սպառ զառողջութիւն . վասն որոյ և արդ բազումք՝ի կողմանս արևելից ծերանան տարաժամ՝ Ոսկայն՝ի զեղխ

[1] Սաղմ. ՁԹ. 10։

մարդկանէ ասաի Լ՝գիպտացւոց և Լ՝յորեաց
՝ի վեր երևեցան պահեցողքն խստակրօնք, և
նոքա առաւել յոյժ երկարակեացք եղեն քան
զայլս ՝ի մարդկանէ։ Լ՝պաքէն ՝ի ջեր աշխարհս
ոչ կարի յոյժ ձգնէ զմարմին պահեցողութեն.
սակայն ՝ի Վաղգիա և ՝ի ցրտագին ևս նա-
հանգս հրաշալի օրինակք կացին աշխարհի՝ ևս
և հաղար ամաք յետոյ քան զառաքեալս։ Ոմն-
գի միևնէ ՝ի ժամանակս սրբոյն Լ՝ներնարդոսի՝
որպես յայտ լինի յընթացս գրոցս՝ գեռ ևս
յոտին կայր սահման նախնեացն պահոց։

Լ՝ի ինչ ընդհատ ՝ի Հրէից աւուրքն վճտաց
և նեղութեան համարէին պահք և առ քրիս-
տոնեայս։ Լ՝յլ յաձախ այնու վարէին Հրեայք
՝ի սիրել զընակաւոր տրտմութիւնն ընդ
մահ սիրելեաց, կամ ընդ արկածս կենցաղոյս.
նոյն սովորութիւն էր և այլոց ազգաց, և
հանգոյն ինն ցոյցս սգոյ տեսանեմք և առ
Յոյնս և առ Հռովմայեցիս։ Սակայն քրիս-
տոնեայք զամենայնն ՝ի հոգևորս պատշաճե-
լով, և զարտաքին նշանակս սգոյ ՝ի կիր առ-
նուին առ ՝ի զարթուցանել զանձինս ՝ի ցաւ և
՝ի տրտմութիւն՝ որ զնիրկութիւն գործէ[1],
զապաշխարութիւն ասեմ ՝ի մեղաց։ Լ՝ւս աւե-
լի ինն խնդրէ սուրբն Կիպրիանոս ՝ի մեղա-
սորէ, այլ զի լացեալ զմահ հոգւոյ իւրոյ՝ որպես
զարձուածն սիրելւոյն[2]. զուգաբան բարբառի

1 ա Կոր. է. 10։ 2 Կիպր. յղ. Անկ։

և մեծն Յովհան Սակեբերան[1]։ Համարէին զպահս և զօրաւիգն ընդդէմ փորձութեանց՝ ձնչելով զմարմինն և հնազանդելով հոգւոյն։ Այս ուրեմն պարտ էր պահեցողին հրաժարել յամենայն հաճոյից, նա և յայնցանէ յորս օրինօք մարթ է վայելել։ Կին իբր և որք ի կարգ աշխարհի մտեալ էին՝ ի ժուժկալութեան կէին. և առաւել յարգեալ զառանձնութիւն և զլռութիւն՝ հանապազորդէին կեղեցիս, և անդադար էին յաղօթս և յընթերցուածս սուրբ գրոց։

ՅՕԳՈՒԱԾՆ ՆՕՐՆԵՐՈՒՄ

կերակուրքն։

Այլ հանգուցեալ զբանս որ յաղագս պահոց, նորա և ի կերակուրս չափաւորք էին յոյժ և պարկեշտք. ուսեալք՝ ոչ թէ կեալ առ ուտելոյ, այլ ուտել առ ի կեալ։ Յայս հայեին բանք սրբոյն Կղեմայ աղեքսանդրացւոյ[2], այնչափ ևեթ առնուլ կերակուր՝ որչափ կարևոր է ի պահեստ քաջողջութեան և ուժոյ յաշխատութիւն. հրաժարելով ի համադամ կերակրոց և ի բազմախորտիկ սեղանոց, և յամենայնէ՝ յորս Աստուած խաղարութեան

1 Սակեբ. յղ. Ղազարի։ 2 Կղեմ. աղեքս. Մանկավ. Ր. գ.

պէտք իցէ։ Իստ գրոյն՝ և որպէս օրինադրու-
թիւն ինն առնուէին զասացեալսն ՚ի Պօղոսէ,
՚Ալ է ոչ ուտել միս, և ոչ ըմպել գինի ,, ՚։
Իսկ զկանայս և զերիտասարդս առաւել ևս
խրատէին զգուշանալ ՚ի գինւոյ. և որք ըմ-
պէինն՝ բազում ջուր անդր խառնէին. նոյն-
պէս և մսակեր եթէ լինէր որ ՚ի նոցանէ, ա-
ռաւել զմիս ձկան ուտէր և զՀաւուց Թըռչ-
նոց, և ուր ուրեմն զմեծաւմեծ չորքոտանեաց,
որ պարարտ յոյժ և ստածող համարէին առ
նոսա։ Ի՚ յարեւնէ և ՚ի հեղձուցելոյ ՚ի սպառ
՚ի բաց կային, որպէս զՀնահաւ իսկ եր ՚ի ժա-
մուն առաքելոց ՚ի ժողովի՚, որ և հաստա-
տուն եկաց ընդ բազում դարս։ Վ՚ասն որոյ
բազումք կթովք և ընդովք և մրգօք կերա-
կրէին. նա՛ և ունդք՝ ոլոռն՝ բակլայ և ոսպն՝
համադամք պարարտք Թուէին ՚ի քիմս նոցա,
ցանկացելոյն Հնչել զմարմինս իւրեանց։ Ա՚յմին
իրի բազում այն եր զի բանջար լոկ և հաց
անպատճառ և ջուր ցուրտ կազմէր զսեղան նո-
ցա, ըստ գրոյն գարձեալ խմանալով զբանն
Պօղոսի Թէ ՚՚Հիւանդն է՝ բանջար կե-
րիցէ ,, ։ Կերեալ կայ զրբոյն Հ՚ատԹէոս ա-
ռաքելոյ՝ զի կերակուր նորա եր բանջար, ծիլ,
և ազգի ազգի սերմանք [3]։

1 Հռոմ. ԺԴ. 21։ կեր։ Գործ. ԺԵ. 2։ Մի-
2 Հերան. առ. փուբլա։ նուկ. փել։
Կղեմ. աղաբա. Մանկ. Բ. ը։ 3 Կղեմ. աղաբա. Մանկավ.
Պրուգենա. երգնախ քան ըղ- Բ. ւա։ Հռոմ. ԺԴ. 2։

Ի պաքէն ոչ որպէս այժմն անսովոր ինչ էր յայնժամ այս ժուժկալութիւն . զի Թէկլէ և շուայտութիւն կերակրոց անչափ էր՝ որպէս և տեսանել ի յոյն և ի լատին մատենագիրս այնր ժամանակի , մանաւանդ յԱթենէոս , այլ և և հասեալ էր ի չափ մերոյ ժամանակիս : Վասն և Նպիսպացիք և բազումք յազգաց արևելից պատկառ կային նմանապահասատ պահոց իւրեանց : Ժուժկալութիւն Պիւթագորեանցն մեծարէր յոյժ . որում Ի պողոնիոս Տիանեցի վկայէ արդեամբք , և Պորփիւր գրովքն : Ապուլոնիոս՝ Թէկլէ և զայլ կուրեան աղանդոյն զհետ երթեալ , այլ օրըստ օրեայ կերակուր նորա էր ունդ և բանջար , որպէս ինքն իսկ ասէ , և ոչ աւելի ինչ խոստանայ բարեկամին իւրում՝ զոր հրաւիրէ առ իւր յընթրիս [1] : Ինքնակալն Գոստոս բազումն էր զի հայ թուխ զայն ևթէ ուտէր , և Թացան ընդ նմա պանիր կամ թուզ կամ արմաւ կամ խաղող , և կամ ձկունս փոքրիկս [2] : Խազում և այլ օրինակս հանդոյն սոցին մարթէ ի մէջ բերել :

Սովորութիւն էր մի անգամ ևթէ յաւուրն առնուլ հաստատուն կերակուր ընդ երեկս՝ յորժամ այր իւրաքանչիւր վճարեալ զգործս իւր գառնայր ի տուն , և այն էին ընթրիք . իսկ զոր ճաշ անուանէին , ոչ ինչ աւելի քան

[1] Ագեան . երգիծ . ա : [2] Սուետոն . յՕգոստ . ՀՉ :

զնախահաճ մեր էր. զի Թէթև ինչ առնուին կերակուր առ՝ի կարող լինելոյ անցուցանել զերկայնութիւն աւուրն[1], և բազումք յայնմանէ իսկ հրաժարեին։ Ի զեղութիւնս Ա՛ի տեղեայ համարի և երիցս ձաշել նորա հանապազորդ, և յորիցս իսկ՝ի բազում աւուրս[2]։

ԵՒայլ ազգ յիմաստնոցն հեթանոսաց կեին քրիստոնեաք. որով անպահանջ էր յոյժ կերակուր նոցա, առնելով յաձախակի որ ինչ ընդ հուր ոչ անցանէր, և չկարօտեր հանդերձանաց. և զայն Թէ շատ՝ երկիցս յաւուրն. իսկ մանկընթերակ՝ և անուաներ իսկ ոչ առ նոսա. տարագրեալ նոցա բոլորովին ըստ առաքելականն խրատուց զնրեչէն՝ի շուայտութիւնս անցուցանել սովոր էին հեթանոսք։ Ո՛չ կերակուրս իւրեանց՝ Թէպէտ և պարզ և անպահանջ՝ աղօթեալ յերկար՝ այնպէս առնուին, և աղօթիւք աւարտեին զձաշ. զոր և տեսանեմք իսկ ցայսօր յեկեղեցական կարգաւորութիւնս զձև աղօթից նոցա, զորմէ և Պրուդենտեայ կրկին տաղս յօրինեալ է, յորմէ քաջ՝ի միտ առնումք զկրօնասիրութիւն դարուցն առաջնոց[3]։

Հասարակաց էր յայնժամ վերծանութիւն գրոց՝ի ժամ սեղանոյ. և Պլինիոս ասնցա-

1 Ովրատ. Երգիծ. Ա. ջ։ Ամ. ա։ Գաղատ. ե. 21։
2 Մատեռ. ի վխտեղ. ժդ։ Հռոմմ. ԺԴ. 13։ ա Պետր.
3 Կղեմ. ալեքս. Մանկավ. Գ. 3։

նէր երբէք զայնու[1]. և Յովնաղ՝ի հրաւիրէին զմի ոմն՝ի բարեկամաց իւրոց՝ զի կերիցէ առ նմա, խոստանայ զՔրոմերի գիրսն և զԱյբդիլեայ յընթերցումն տալ՝ի ժամ ընթերեայն[2]։ Ոսկ քրիստոնեայք զսուրբ գիրս տային ընթեռնուլ, և փոխանակ պիղծ նուագացն և խեղկատակութեանց որովք զկուշտսն յօրինէին հեթանոսք[3], երգէին երգս հոգևորս, և նուագս զգօնականս։ Ո՛չ մերժէին զերաժշտութիւն և ոչ զուրախութիւնս, եթէ միայն սուրբք էին, և առ Ք[4]ստուած բերուին նոցա[4]։ Ընդունէին հայցակից ընդ հերետիկոսս և ոչ ընդ նզովեալս, նա և ոչ ընդ երախայս. բայց էր զի ուտէին միաբան ընդ անհատս առ չխզելոյ՝ի սպաս զգօդ կենակցութեան[5]։

ՅՕԴՈՒՄՆՕ ՈՒԹԵՐՈՐԴ

Պարկեշտութիւն քրիստոնէից։

Ի[6]ՍՏ կերակրոյն և համբոյն ընթացք քրիստոնէից հայելի էր պարկեշտութեան։ Ո՛նէր քին ազնուականութիւն և զուարճութիւն խրնդրէին նոքա յամենայնի, զհոգևորական չո-

1 Պլին. Գ. թուղթ Ե։ Գ. և Յաձախ. Զ։
2 Երգիծ. ԺԱ։ 4 ա կորնթ. Ե. 6, ԼՃ։
3 Կղեմ. ազէքս. Մանկ. 5 Ածդ. ԺԵ։

խուճիւնն ևեթ կատարեալ մեծուճիւն հա-
մարեալ։ Նմին իրի մերժելին անարգելին որ
ինչ զեղխուճեանն ընդ բազմափարթամ ձո-
խուճիւնս ինքնակալուճեանն Յովսէմոյ ի
ներքս ածեալ էր. զշռայլուճիւնս ասեմ ի
մեծակառոյց շինուածս, ի կահս բազմագինս,
ի փղոսկրեայ սեղանս, յարծաթի մահիճս
զարդարեալս ոսկեթել բեհեզովք և ծիրա-
նեօք, յականակուռ և ի քանդակեալ անօթս
ոսկւոյ և արծաթոյ[1]։ Յակ կահք զոր հալա-
ծիչքն գտին ի սենեկին յորում Ճգներ բազ-
մահարուստ կուսանն Նոննիա նիկոմիդացի
ընդ սրբոյն Կնդոսի ներքինւոյ, այսոքիկ էին.
խաչ մի և Պօրծք առաքելոց, և փսխաթք երկու
ի վերայ տախտակամած յատակին, բուրվառ
մի խեցեղէն և կանթեղ մի, և արկղիկ փայ-
տեայ՝ յորում պահէին զսուրբ խորհուրդն առ
ի հաղորդել[2]։

Խորշէին ի բազմագունակ հանդերձից.
բայց պատուէր էր սրբոյն Կղեմայ աղեքսան-
դրացւոյ ագանել սպիտակս ի նշանակ սրբու-
ճեան, որ և սովորական գոյն հանդերձից էր
Յունաց և Յովսէմոյ[3]։ Խոտեին նոյնպէս ըզ-
բարակաման բեհեզս, մանաւանդ զմետաքս՝
որ գեռ ևս յայժ ցանկալի էր, և ի հիւս ոս-
կւոյ վաճառէր։ Նշարգ և անպիտան համա-

1 Կղեմ. աղեքս. Մանկ. Ա. Ա. Ա. Ա։

2 Վկայաբ. Նիկոմ. վկ. առ Բարոն. տոմն. 229։

3 Մանկ. Բ. Ա. Ա։

բեալ Եփեն յաչս նոցա մատանիք ոսկի, զարդք ականակապք, գանգուրք հերաց, ծխանելիք, և ստէպ ստէպ լուանալ՝ի բաղանիս, և կոկ կազմիկ գնալ. և պարզաբար ասացեալ, այն ամենայն որ լուցկիք եին գրգռանաց մարմնոյ և ցանկութեան: Առաջին նշան գարձի սրբոյն Կիպրիանոսի համարի Պողոսէնտիոս զփոփոխումն հանգերձից նորա և զարհամարհանս զարգուց[1]: Եւ Պողոնիոս նախնի եկեղեցական պատմիչ՝ այսպէս կըտամբէ՝ զՈ՛նտանեանս՝ ի խօսելն զկարծեցեալ մարգարէէ նոցա. "Զի ասացիք ինձ, ասէ, միթէ մարդ գարէ ոք զԵրման ներկանիցէ, զիերեւերտս սիրիցէ, խաղայցէ՞ի նարտ, տայցէ զարծաթ՝ի վաշխ: Ոչ տացեն պատասխանի. օրէն իցէ առնել զայսոսիկ Թէ ոչ. այլ ես ցուցից Թէ նոքա ոչ ինչ խղճեն առնել զայս ամենայն"[2]: Ո՛ի ոմն՝ի վկայից առ՝ի յայտ առնել զխաբէութիւնս կեղծաւորի ուրումն քրիստոնէի[3] եցոյց դատաւորաց՝ զի նենգաւորն այն գանգրաձև յօրինէր զԵրման, յաՀախէր առ վարսավիրայս, պշուցեալ հայէր ընդ կանայս, բազումս ուտէր, և բուրէր՝ի նմանէ հոտ գինւոյ: Վանզի քրիստոնեայք համակ խիստ և անյարդար երևէին արտա-

1 Կղեմ. աղեքս. Մանկավ. Ա. Ժ: Կանոնք Առաք. Ա. Ֆ, և իթ:

2 Աղ. Եւս. Պատմ. Ե. Ժբ:

3 Վկայաբ. սրբոյն Ցովաննու առ Բարսն. յամին 289:

քոյ, և կամ անպատճոյնք և եթե և պարկեշտք։ Լդէն ոմանք 'ի նոցանէ որ և զսովորական հանդերձեմն 'ի բաց թողին՝ զիմաստասիրացն զգեցեալ զձև, որպէս Տերտուղիանոս, և սքն Հերակլաս աշակերտ Ղրոգինեայ[1]։

Խուն էին զբօսանք նոցա. խոտէին զՀրաշարակախումբ տեսարանս, զթատերս ասեմ, զշուրջ տեսանելեաց տեղիս և վկրկէսս։ Օ՛ի 'ի թատերս ողբերգութիւնք և կատակերգութիւնք յանդիման առնէին, և 'ի շուրջ տեսարանս սուսերամարտք և գազանամարտք, իսկ 'ի կրկէսս՝ կառարշաւք. և այս ամենայն էին մասունք պաշտամանց դիւց, և հանդէսք պատարանաց սատանայի, վասն որոյ խորշելիք էին քրիստոնէից. ոչ վասն այնորիկ միայն, այլև զի պատճառս ապականութեան բարուց համարէին նոքա զայնս. "Օ՛ի պարտ սիրել, ասէր Տերտուղիանոս, զպատկերս իւրաց՝ զորս առնել օրէն ոչ է „։ Պատերն թատերք՝ դերոց անամօթութեան էին. սուսերամարտք և գազանամարտք՝ անգթութեան, յորմէ այնպէս հեռի էին քրիստոնեայք՝ զի և զարժանահաս պատուհաս մահապարտից չկամէին տեսանել։ Տեսարանքս այսոքիկ հրապոյրք բնաւից էին ախտից. զի և որ 'ի կրկէսս լինէին՝ անմեղանչականագոյնքն կարծեցեալք 'ի հանդէսս՝ դատապարտին 'ի հարց վասն

[1] Տերտուղ. յղ. Պաղ. Նւս. Պատմ. Ձ. Ե։

երկպառակ կուսակցութեանց ՚ի հանդիսա-
կանն, որ անհնարին վէձս յարուցանէին զօր
հանապազ և գրգռութիւնս կատաղիս, բա-
զում անգամ և անագորոյն մարտս։ Վասր-
ձեալ խոտէին նոքա զտեսարանս զայսոսիկ և
վասն մեծածախ պատրաստութեանցն, վասն
յանգործութիւն հատանելոյ նովիմբք մարդ-
կանն, վասն խաղն համախումբ պատահելոյ
անդէն միմեանց արանց և կանանց, և վասն
վտանգին համարձակագոյնս ձգելոյ աչաց և
հեռագօտութեամբ ՚ի դէմս իրերաց ՚։

Վատապարտելի էր առ քրիստոնեայս և
նարտն և այլ խաղք ակմբից, որոց փոքրագոյն
՚ի ինասակարութեանցն է տածել զգատար-
կապորտութիւն։ Վսրովչին և զքրքիջ բառ-
նալ և որ ինչ ՚ի նոյն գրգիչեն, զծաղրածու-
թեան բանս և գործս, զառասպելս մարմա-
ջեցուցիչս լսելեաց, զխեղկատակութիւնս,
զկատականս, արգելլով մեծաւ ևս իրաւամբք
զամենայն շարժուածս և զբանս աղտեղիս ՚։
Վյա և որ ինչ խոտանն է և անարժան և ան-
վայել առն ազատի, գժպատեհ համարեին ՚ի
քրիստոնեայս, զխօսս յիմարականս, և զազ-
մաբանել որ ռամկին է սիսթ, և մանաւանդ

1 Կանոնք Առաք. Բ. կբ։ Ցերտուղ. յղ. Ցեսաբ։ Կիպր. Թուղթ Ս։Աթենագ։ Օգոստ. Խոսոսով. Ջ. է։ Կղեմ. առ. Մանկավ. Բ։ Կիպր. յղ. գործ. և ողորմ։ Ովիդ. յղ. արուեստ. սիր. Ա։
2 Կղեմ. Մանկավ. Գ. ժե։ Ագաղոն. առ Եւս. Պատմ. Ե. ժբ։ Երան. Գ. խէ։

կանանց ազգի , զոր Հերքէրն Պօղոս՝ յասել անդ Թէ "Լանջն ձեր յամենայն ժամ լի Հնոր- Հօք տեառն՝ իբրև աղիւ Համեմատ լինցի ,, ։ Նմին իրի ի խափանումն այս ամենայն չա- րեաց զլուծեաւանն առաքինութիւն ամենայն ուրեք պատուիրեն ։

Պաքէն ծանր արդ Թուի այսպիսի Հրա- ման . բայց նուազեսցեն զարմանք եթէ զմտաւ ածցուք զիշատամբանս զրոց առ խեղկատակ , և դարձեալ՝ զանծաղր կեանս տեառն մերոյ և զաշակերտացն յուշ առ նմին ածեալ , զի զոր Քրիստոսել ընդ առաքինութիւնս կամեցաւ դասել զզուարթութիւն՝ զոր յոյնն εὐτραπελία ա- սէ, զայն Պօղոս յանուանէ դատապարտէ՝ խեղ- կատակութիւն կոչելով՝ որպես լսեմինն և մերքս Թարգմանեն, որով իմաստքն անտես լինին յար- դի ընթերցողաց ։ Քանզի քրիստոնէի պարտ է յամենայն կեանս իւր պարապել յապաշխա- րութիւն անցելոց մեզացն , և ի սմոքել զանձն ընդդէմ փորձութեանց մեռելութեամբ սխ- տից ։ Զրդ անձին ապաշխարողի պարտ է ի պատիժ զառանցանացն և զեղծանելոյն աս- տեաքս՝ զրկել զանձն և յօրինաւորսն , և ի պատշաճին իսկ դուն ուրեք ունկն մատուցա- նել նմա՝ առ ի կարող լինելոյ շիջուցանել զըզ- հուր ցանկութեն , և կամ գէթ տկար առնել

1 Աթերտս. յղ. Պաղչ. Ա. 2 Եփես. Ե. 4։ Ոսկեբ. անդ. իջ ։ Կողոս. Դ. 6։ Յառ. ժԸ։

զզօրութիւն նորա։ Այսպէս որոյ Ջնմարիտ քրիստոնէի չէ արժան զՀետ լինել զգալի հաՋոյից, այլ պարտ է հարևանցի վայելել յայնոսիկ իսկ որ կից են աղցաւոր բնութեանս, որպէս ուտել և ննջել. նմին իրի և զքաւանաց նորա պարտ է տիրապէս զքաւանս գոլ, այս է սիտիուն և հանգիստ տկարութեան բնութեան, որ նկուն լինի ի վաստակել միշտ մարմնոյն, և ի մտացն հանապազ ի հայեցողութիւնս պարապել։ Այլ խնդրել զՀաՋոյս վասըն Հաձելոյ ևեթ զմարմինն, և զայն իբր կէտ հաստատել, ահա ոչ ինչ առաւել քան զայս պատերազմող աւետարանական պարտուց ուբանալոյ զանձինս, որ կենդանութիւնն է քրիստոնէական առաքինութեանց ։ Ճշմարտութիւն և չափաւոր հրահանգք մարմնոյ դիւրին մտաց. հանգիստ միայն, և կերակուր և քուն շատ են ի հաստատել անդրէն զմարմինն. ոչ ինչ կարևոր են խաղք ։ Օ՜այս և յայլքատաց է ուսանել և ի ռամկէն՝ որ մշտաջան են յաշխատութիւնս։ Վեճատունք ևեթ և բարեկեցիկք ի մարդկանէ ի խնդիր են զքաւանաց առ ի նուաղել զտաղտուկ անգործութեան իւրեանց ։

Օ՜անճաղը և զվեռևաւ աշխարհի գնացս Ջնմարիտ քրիստոնէից ուսանիմք և ի հանգամանաց աղանդոց առաջին դարուց, յորոց բազումք յանՋատի խստութենէ և յատելութենէ

ընդ մարմինն յառաջ եկին ։ Ի՝անգի վիճեալ
պնդէին Արկիմոնեանք, և ըստ նոցանէ Ա՝ա-
նիքեցիք, եթէ չար իցէ միս, և չարի արարած.
և՛ի վերայ բերէին եթէ չէ օրէն ուտել միս,
և ոչ բազմացուցանել ծննդեամբ, և չուա-
սալ՛ի յարութիւն մարմնոց ։ Ի՝պաքէն եր
ինչ զարմանալի յայնքան թշնամութեան նո-
ցա ընդ մարմինն, և՛ի հրաժեշտն և՛ի ժուժ-
կալութիւն ։ Ա՝ռնտանեանք՛ի հրամայեալ
պահպանկեղեցւոյ յաւելուին և այլ բազումս.
գատապարտեին զերկրորդ ամուսնութիւն,
և չընդունէին զապաշխարութիւն, անհաւա-
տացեալ զի իցէ իշխանութիւն եկեղեցւոյ
յարուցանել զանկեալսն՛ի մեծամեծ մեղս
զկնի մկրտութեան ։ Եթէ զարդիս ոք պաշտ-
պան կայր այսպիսի մոլորութեանց, ոչ զոք
գտանէր իւր հետևողս ։

Ի՝սկ թէպէտ և խիստ թուիցին մեզ կեանք
քրիստոնէիցն, մի տխրական ինչ կարծեսցուք
լեալ զայն ։ Ա՝յ զանհնարաւորս խնդրէր՛ի նո-
ցանէ Պօղոս՛ի յորդորելն զնոսա ուրախ լի-
նել՝ ։ Օ՝ անային նոքա անձանց զղուշն հեշ-
տութիւնս, որում բազմադոյնք՛ի մարդկանէ
զհետ լինին. այլ զերծ էին՛ի ցաւոց և յայ-
լոց ախտից որովք տանջինն նոքա, զի կէին
անփառասէրք և առանց ագահութեան ։ Ա՝յ
կապիալք ընդ մեծութիւնս կենցաղոյս, չը-

1 Գրիգ. Ընծաբ. Ճառ. Զ։ 2 Փիլիպ. Գ. 3։ Դ, 4։

տաճնապէին յալեաց սորա[1]։ Ալ այեւլէին ՚ի խաղաղութեան խղճի մնայ, և ցնծային ընդ առաքինի վաստակս որովք ջանային հաճոյ լինել Աստուծոյ. և էին յուսով անտի կենաց զոր մերձ առնուլ իւրեանց տեսանէին, զի գիտէին եթէ վաղ անցանէ աշխարհս, և չալածուին իւրեանց թուէը նոցա կարապետ հրապարակական մեծի ատենին։

Այլ իրի և ոչ հոգ զաւակաց տաճնապէը զնոսա. զի զնոյն երանութիւն ցանկային և որդւոցն՝ զոր և անձանց իւրեանց, ելանել պատրաստ յաշխարհէ աստի[2]։ Այթէ հասանէր նոցա թողուլ զնոսա որքս, որպէս բազմաց ՚ի մարտիրոսաց, ոչ ինչ յերկուանային զի եկեղեցին կացցէ նոցա մայր, և ոչ մի ինչ պակասեսցէ նոցա։ Ալ ամն որոյ յոլովագոյնք ՚ի նոցանէ առօրեայ վաստակքն հայթայթէին զկեանս իւրեանց, ձեռագործօքն կամ հասիւք, յորոց և բաժինս աղքատաց հանէին. անխռովք, անզբաղք, հեռի ոչ միայն յամենայն զբաղութենէ և յերկևանաց անիրաւութենէ, այլ և յամենայն ըղձանաց ժողովելոյ դրամս կամ մեծանալոյ։ Նկարգութեն զրմէ առաւել բողոք բառնային առաջնորդք ՚ի միջոցս հալածանաց այս էր՝ զի քրիստոնեաք կալուածս դնէին, և ինդրէին բնակութիւնս ՚ի վե-

1 Կիպր. առ Դեմետ։ 2 Ցերտուղ. առ կինն. Ա. ք։

բայ երկրի[1]։ Որոց այսպէս զատեալք և որո-
չեալք էին յերկրաւորացս՝ անմարթ էր ձա-
շակել նոցա զզգալի հեշտութիւնքս. և մեք
ոչ եմք քրիստոնեայ եթէ չերեմք յանձինս
նախանձ նմանող նոցա լինելոյ։ "Օ՛ինչ այլ
„ առաւել քերկրալի՝ ասէ Տէրտուղիանոս՝
„ քան զքաւմահուսին աշխարհիս, քան զՀշմա-
„ րիտ ազատութիւն, քան զամբծութի խըղ-
„ ճի մտաց, քան զսակաւապիտութիւն, քան
„ զանէրկեղութիւն՝ի մահուանէ։ Զաթուր
„ կոխես զկուռս հեթանոսաց, զգևս հալա-
„ ծես, զհիւանդս բժշկես, յայտնութիւնս
„ խնդրես, կեաս յՔրստած. ահա քեր-
„ կրութիւնք, ահա սեսարանք քրիստո-
„ նէից „[2]։

ՅՕԳՈՒԸՆ ԻԳՆԵՐՈՐԴ

Ընտանութիւնք։

Թէպէտ և յամենայն իրաց կենցաղոյս զա-
տեալ որոշեալ, այլ յոլովագոյնք՝ի նոցանէ ա-
մուսնացեալ էին։ Զմուրի կենաց հեթանոսաց
ցոփութեամբն և անառակութեամբն ատելի
էր. նմին իրի քաղաքական օրէնք նոցա՝ի խա-

1 Կիսր. յղ. Ըչկ։ 2 Տէրտուղ. յղ. Տեսր. կթ։

փանուշն այնր պէսպէս պատիժս սպառնային, և պարգև խոստանային որոց օրինաւոր ամուսնութեամբ առնեցուցանէին զթիւ քաղաքացեաց[1]։

Իսկ որ բազմաճնունդքն էին՝ չիղձէին ընկեցիկ զորդիսն առնել զճնեալս յիւրեանց։ Սոսկային քրիստոնեայք ի խժականութենէ աստի. «Ո՞եր ամուսնութիւն, ասէր սուրբն Յուստինոս, և առ ի մնունդ զաւակաց. իսկ հրաժարումն՝ կատարեալ կուսութիւն»[2]։ Նա սուրբն կղեմէս աղէքսանդրացին. «Պարտ է ամուսնանալ, ասէ, կամ ի սպառ ժուժ կալել»[3]։ Այսպ անճանաչ էր նոցա այլ կարգ կենաց բաց յերկոցունց աստի, և քան զառաջինն նախամեծար առնէին զկենսին՝ առ ի յաստուածաստ գիտելով զպատուականութիւն նորա։ Այսն որոյ բազումք փութապէս զկնի մկրտութեանն ի կուսութիւն անդէն նուիրէին զանձինս. յորս ոչ սակաւք յարանց և ի կանանց՝ անդստին ի մանուկ տիոց քրիստոնեայ գոլով առաքինացան ի սրբութիւն զամս վաթսուն և եօթանասուն ողջոյն։ Այլ ինչ հարկ է ասել թէ ձախողակի նախանձ Հրոգինեայ յաղագս կուսութեան ցոր վայր զառածեալ էհաս. և սովորութեանս այսորիկ նեբքինացուցանելոյ զանձն այնչափ

1 Տակիտ. տարեգր. Գ. Ե։ Բարոն. յամն 58։
2 Յուստին. Պատասխ. Ա։
3 Մանկավ. Ժ։

յաձախեաւ, մինչև կանանուկք հարկ եղև ար-
գելուլ զայն [1]։

Յայսմ յանչափն ձգտեցան խստակրօնքն ի հերեսիովտս, ումանց գատապարտելով վերկրոյդ ամուսնութիւնն, և կիսոց զամուսնութիւն առ հասարակ, յեղեռն համարեալ զամենայն զուգաւորութիւն առն ընդ կնոջ։ Ի սոսա ձգէ սուրբն Կղեմէս աղեքսանդրացի ըզկանխասաց բանն Պօղոսի՝ Թէ լեցին ի յետին ժամանակս որ իշխեսցեն արգելուլ զմարդիկ յամուսնանալոյ [2]։ Կ՚ասէ իբր ստիպի Հայրն սուրբ ընդ այլ՝ի հարց ներբողել զսրբութիւն ամուսնութեան, և հաւաստել օրինակօք առաքելոցն Պետրոսի և Փիլիպպոսի, որք ամուսնացեալ էին և որդիս ունէին [3]։ Հարք վեհ իմն խորհէին զամուսնութենէ, նկատելով զայն սահմանեալ՝ի ծնունդս բանական արարածոց որ յաւիտեան կալոց են, որով գտանի մարդ նոր իմն օրինակաւ պատկեր Աստուծոյ արարչագործելով՝ի միասին զմարդ։ Կ՚ասէ իբր և պատուիրեն մի հաձոյիցն և եւթ՝ի խնգիր լինել՝ի տուրեւառս ամուսնութեան, որ և յօրինաւորսն է բազմավտանգ, այլ զի բանն և պարկեշտութիւն ուղղիչ լինիցի

1 Մանկավ. ՚ք։ Յաձախ. Գ։ Ա։ Տերտուղ. յղ. Միասին։
Աթենագ. Պատասխ։ Տերտուղ. առ կին. Ա՚ե։ Յաւասին. Պատասխ. Ա։ Կանոնք կիսկ. Բ. Ձ։
2 Յաձախ. Ը։ ա Տիմ. Դ։
3 կղեմ. աղեքս. Մանկավ.

այնմ՝ միշտ առաջի աչաց ունելով զՅստուած որում մերկապարանոց կան ամենայն ծածուկք խաւարին խորհրդոց, և շուք և մեծարանս դնելով մարմնոց մերոց որ կենդանի տաճարք են նորա։

Ի պատուէրս դաստիարակութեան որդւոց էր և այս, փութալ ամուսնացուցանել զնոսա առ ի չտալ մուտս չարին[1]։ Օչնոյն խրատ տային և որոց յանձն առեալ էր մնուցանել զթով զօրբս. զի իբրև ի չափ հասանիցեն՝ ամուսնացուսցեն վաղվաղակի, և առաւել ընդ որդիս իւրեանց քան ընդ այլս[2]։ Յորմէ յայտնի երևի քանի՛ հեռի էր զօշաքաղութիւն ի խնամութեանց քրիստոնէից։ Որպէս յամենայն մեծամեծ իրս՝ նոյնպէս յամուսնացուցանելն հարցանէին զեպիսկոպոսն, զի "Յստ Յստուծոյ արասցեն զայն, ասէ Յստուածաշունչն, և մի՛ ի ցանկութիւնէ ձգեալք.,,[3]։ Իսկ յորժամ հաւանէր կողմն երկաքանչիւր, հրաւիրակաւ և առաջի ամենեցուն կատարէին զայն յեկեղեցւոջ, և պսակէր զնոսա առաջնորդն օրհնութեամբ, և մատչէր պատարագ ի հաս տատութիւն պսակին[4]։ Զեռն տային միմեանց հարսն և փեսայն, և հարսն առնոյր ի ձեռաս նէ առնն մատանի՝ յորոյ վերայ քանդակեալ կայր խաչ, կամ առաքինութեանց ինչ դրուագք,

1 Կանոնք Ածաք. Դ. Ժ։ 3 Ղևտ. առ Պողկարպ։
2 Կանոնք Ածաք. Դ. ա։ 4 Տերտուղ. առ կին. ծն։

աղաւնի, կամ խարիսխ և կամ ձուկն. քանզի այսոքիկ էին նիշք քրիստոնէից[1], և մատաղ նեաւ սովորութիւն էր նկքել առ նախնիս։

Քրիստոնեայք հեռի կային յամենայն իրեանց յաւուրս տոնից և պահոց, որոյ երեւին ցարդ հետք՝ի կանոնն չգտաբերելոյ հարսանիս՝ի ժամանակս ինչ տարւոյ։ Բազում այն էր զի և վասն համարձակագոյն ուխտիցն պարապելոյ ժուժկալելին ըստ պատուիրելոյ առաքելոյն[2]։ Այս ուրեք սուրբն Կղեմէս աղեքսանդրացի[3], զի որ Պետոսի էր կամ կատարեալ քրիստոնեայ, յետ ծննդելոյ որդիս՝ որպէս քոյր իւր համարի զամուսինն. քանզի և այնպէս իսկ հասանէ նոցա լինել յաւուր միում յորժամ լուծանիցին մահուամբ։ Այս վկայէ Տերտուղիանոս[4], զի բազումք յամուսնութիւն առաքինացան զսրբութիւն հաւանութիւն միմեանց։ Ոչ նախանձելի կեանս քրիստոնէական ամուսնութեան այսպէս գծագրէ նա. "Մոյք հաւատացելոյ երկուց՝ի միասին տանին զլուծն. մի մարմին և մի հոգի, միաբան ազօթեն, միաբան յերկիր խոնարհին, ՚ի միասին պահեն, զիրեարս խրատեն, և յորդորեն զմիմեանս։ Ի միասին են յեկեղեցւոջ և՚ի սեղանի տեառն, ՚ի հա-

1 Կղեմ. ազեքս. Մանկավ. Գ. ա։
2 ա Կորնթ. է. 5, 6։
3 Յառնախ. ջ։
4 Առ կինն. Ա. ե, և բ։ և յղ. Յար. մարմ. բ։

„ լածանս և 'ի հանգստեան . ոչ ինչ թագու-
„ ցանեն յիրերաց , և չծանրանան միմեանց ,
„ տեսանեն զՀիւանդս աներկիւղ , կամակար
„ տան ողորմութիւն . անխռով առաջի կան
„ սրբոյ պատարագին , միաբան երգեն երգս
„ և սաղմոս , 'ի խրախոյս միմեանց են 'ի գո-
„ վել զԱստուած „ :

Ոչ էր հրաման հաւատացելոց ամուսնա-
նալ ընդ անհաւատս , բայց և ոչ մերկնել 'ի նո-
ցանէ՝ եթէ յառաջագոյն էին ամուսնացեալ : Այրկեակ ամուսնանալ՝ թեպէտ և թոյլ տը-
ւեալ էր , այլ ներելով տկարութեան , և յեկե-
ղեցիս ինչ ապաշխարանս 'ի վերայ գնելին :

ՅՕԴՈՒԱԾՈ ՏԸՄՆԵՐՈՐԴ

Մխաքանութիւն քրիստոնէից :

Ա ՅՍՊԻՍԻ երջանկալսրութիւն իւրաքանչիւր քրիստոնէի առանձինն . ժամ է արդ տեսանել որպիսի՞ ինչ էին համախմբութիւնքնոցա : Այկեղեցեաւ , որ ժողով լսի , Հայնք իմանային զհամախմբութիւնս իւրեանց 'ի թէատրոնս առ յանձանձելոց զիրս աշխարհին , ըստ որում ընթեռնուին ուրեք և 'ի Պօղոսեան՝ յանցս

1 ա Կորնթ . Ի . 39 : ա : Հերոն . առ Սաղուին :
2 Տերտուղ . առ կինն . Բ .

որ ընդ Պօղոս յԱփեսոս [1]. այլ առ ՚ի զանա-
զանել զաչխարհօրէն եկեղեցանալնոցա ՚ի հա-
ւատացեալսդն՝ եկեղեցի Աստուծոյ կոչէր սո-
ցայն։ Որոգինեա՚ի պատասխանատուԹիւնն
առ Կելսոս [2] ընդ միաբանս համեմատեալ զեր
կուս ազգս եկեղեցեաց, ցուցանէ որպէս յայտ-
նի իմն զի սակաւ իսկ նախանձաւորքն ՚ի քրիս-
տոնեայս՝ որ նուազ էին յոյժ առ այլովք՝ այս-
պէս գեր ՚ի վերոյ էին քան զայլս ՚ի մարդկա-
նէ, զի եկեղեցիք քրիստոնէից փայլէին որպէս
զաստեղս յերկրի։ Աստ քրիստոնեայք իւրա-
քանչիւր քաղաքի էին միաբանք. և այս ի ՚ի
գլխաւոր պատճառաց էր կրեալց նոցա հալա-
ծանս. զի ոչ օրինաւոր համարէին ժողովք նո-
ցա՝ չհաստատեալք յօրինաց պետութեանն.
և ՚ի յանցանս գրէր միաբանութիւն նոցա սի-
րոյն կցորդեալ, և համարէր նոցա այն ՚ի դա-
տակցութիւն [3]։

Աչ արդարև քրիստոնեայք բնակեալք ՚ի
միում քաղաքի ծանօթ էին միմեանց, եթէ
ոչ այլով իւիք՝ սակայն ժողովելոյն միաբան յա-
ղօթս և յայլ հրահանգս կրօնից, և գրեթէ
զօր հանապազ տեսանելով զմիմեանս։ Յաճախ
՚ի միասին կային, և նմանապէս լինէին միմեանց
յիրս իսկ անզանազանս։ Հասարակաց էին
ինդութիւնք նոցա և վիշտք։ Աթէ եր ուրուք

1 Գործ. ԺԹ. 22։
2 Ընդդէմ Կելս. Ե։
3 Տերտուղ. Պատասխ. Լ.Թ։

առանձինն պարգև յ[1]ստուծոյ, ամենայն ոք ինդայր իբրև ընդ իւր ինչ. և եթէ ոք յասպաշխարութեան կայր, ամենեքին ողբմութիւն մաղթէին նմա։ Որպէս աղգատոհմի ի միասին կային, հարս և որդիս և եղբարս և քոյրս կարդալով զիմաստնոյն ըստ հասակին և ըստ քրնութեանն պատշաճի։

Իշխանութիւն հարց ի տունս իւրեանց, և հնազանդութիւն առ երիցունս և առ առաջնորդն՝ անքակ պահեր զիաբանութիւնն. իսկ միաբանութիւն եպիսկոպոսաց աքանչելի ևս էր. ոչ ձեռնարկէին ի կարևոր ինչ, մինչ չև հարցեալ զիմաստնոյն։ Ոտիպ ըստ մարթելոյ գաւառաց գաւառաց եպիսկոպոսունք ի մի վայր եկեալ ժողովէին. և կարի իսկ հեռաւորք ի նոցանէ՝ յանուանէ և ի համբաւոյ ձանաչէին զիմաստնոյն, և թղթէին հանապազ առ միմեանս, որ հեշտեաւ իսկ յաջողէր նոցա առ միմեանս տարածութեան պետութեանն Հռովմայեցւոց. զոր սովին իսկ գոգցես խորհրդով ընդարձակեալ էր զայն յ[1]ստուծոյ, ասէ Որոգինէս՝, առ դիւրին և գործել զքարոզութիւն աւետարանին։ Յ[1]ռանձին իմն ձև էր նամականւոյ նոցա՝ առ ի չկարելոյ ումեք կեղծել զնոսին, կամ՝ ի վեր հանել զպարունակեալ ի նոսա բանսն, որոց թագնութիւն կարևոր էր յոյժ յիրսն ծանուսնս մնանաւանդ ի ժամանակս հալածանաց։ Յր-

1 Ընդդէմ կելս. Բ։

մեծ ևս զգուշութեան յղկին զթուղթս՝ի ձեռն ժառանգաւորաց, և եթէ չգոյին՝նորս անդէն ձեռնադրելին վասն սոցին[1]։ *Այլքանզի անդր քան զսահմանս պետութեանն ընդարձակը եկեղեցի ընդ քնաւ կողմանս աշխարհի, միաբանութիւն հաւատոց և վարուց համօրէն քրիստոնէից վեհ ևս երևեր յայնչափ զանազան ազգս և՝ի լեզուս, յորս ձգմարիտ աստուածպաշտութենէ կրօնք հարթեալ ուղղէին զամենեցուն զխուժադուժ և զանբան գնացս։ Պարզաբար ասացեալ, մի մարմին էր ընդհանուրս եկեղեցի՝ միաբան ունելով զանդամն առհասարակ, ոչ առ միութեան հաւատոցն եւթե, այլ և անբաժ սիրոյն առ միմեանս*[2]։

ՅՕԳՈՒՆՔ ՄԵՏԱՍԱՆՆԵՐՈՒՆ

Ժողովք։ — Պատարագ։

Այսենաւքն եկեղեցիք հաւաքէին յաւուրս կիւրակէից, որ օր արեգական կոչէր՝ի հեթանոսաց, այլ՝ի քրիստոնէից մեծարեր անդստին՝ի սկզբանէ՝ի յիշատակ արարչութեան լուսոյ, և յարութեանն Քրիստոսի[3]։ *Հաւաքէին նոյն*

1 Կնայ. Թուղթ Թ. առ Պատրաստ. աւետ. Ջ. Ը։ ժառանգ. Հռոմ. Ա. Ը։
2 Բարդած. առ Եւս. 3 Յուստին. Պատասխ. Բ։

պէս յուրբաթու աւուրն, զոր և քրիստոնեայք Պարասգեւի կոչէին, այս ինքն է պատրաստու-թիւն։ Յողովարանն էր տուն առանձին, յո-րում ընտրեին զմի՛ի սրահից պատշաճեալ չըն-թրիս՝ զոր վերնատունն կոչէին վասն քարձ-րութեան տեղւոյն՝ ի նմին տան[1]։ Ասպիսի էր տեղին ուստի անկաւ երիտասարդն Նա-տիքիոս անուն զոր յարոյց Պօղոս[2]. և երբե-րորդ գտնիկանի տան, և էին լապտերք բա-զում՝ ի վերնատանն՝ ուր ժողովեալ էին յերե-կոյի չաբաթու յորում լուսանայր կիւրակին բեկանել ՀՑացն, կամ կատարել զխորհուրդն սուրբ, առնլովապա զկերակուր։ Ասլ քաղում անգամ առ ահի հալածանաց թաքչէին՝ի խո-ռոչս և՝ի քարանձաւս երկրի՝ արտաքոյ քա-ղաքաց, զոր օրինակ է տեսանել յարդ զգետ-նափոր դամբարանս Հռովմայ, զորոց զնկա-րագիրն գտցեն ինդբողք՝ ի գիրսն մանա-գրեալ Պատրեկրեայ Հռովմ[3]։ Յորժամ լինէր նոցա ազատութիւն, ժողովէին՝ի հրապարա-կան տեղիս՝ յայնի ամենեցունց՝ զի էին և կեղեցիք քրիստոնէից, որպէս յաւուրս կայսե-րացն Գղեքսանդրի և Վորդիանոսի[4]։ Վազիւ-նոս կայսր վախճան արարեալ հալածանաց, հրաման ետ անդրէն՝ի քրիստոնեայս դարձու-

1 Որոգ. յեղան. Գառ. Ե։ Յեսայ. Գառ. Ե։
2 Գործ. Ի. 7, ևն։
3 Բարոն. տամն 57, 99։
4 Ագաթան. 224, 245։

ցանել զգերեզմանատունս նոցա, որոց կից էին սովորաբար եկեղեցիք։ Յորժամ ընկեցաւ սա մատաղին Պօղոս[1], հրամայեն եհան կայսրն Լ. բերդիանոս սալ զեկեղեցատունն՝ որոց միաբան էին ի հաւատս ընդ հայրապետին Հռոմայ, Ամենք յեկեղեցեաց աստի էին յառաջագոյն տունք սոսկականաց, որպես աւանդէն զտանէ սրբոյն Պուդենտիոսի, որ էր մի յաւագանուոյն և հայր սրբոյն Նովատոսի և սրբոյն Տիմոթեայ երիցու և սրբոց կուսանացն Պուդենտիանեայ և Պրաքսիդեայ[2]։ Այլ բազումք յայնցանէ չինուածք էին նորակերտք՝ առ ի նոյն կառուցեալք։ Ապա ինչ յառաջքան զաւուրս Հալածանացն Դիոկղետիանոսի այնչափ աձեցեալ էր թիւ հաւատացելոց, զի ընդ ամենայն քաղաքս չինեալ էին եկեղեցիք. և ի կործանմանէ եկեղեցեաց սկսաւ Հալածումն[3]։

Ի ժողովս յայսոսիկ բաց ի պաշտամանց աղօթից զոր կատարէին ըստ կարգեալ ժամուց տուընջեան և գիշերոյ՝ որպէս յառաջագոյն պատմեցաք, մատչէին և պատարագք, զոր ոչ էր հնար մատուցանել առանց քահանայից։ Պատարագն կոչէին մերթ ըստ բարբառոյ գրոց ընթերց, բեկումն հացին, և նուէր. և մերթ անուամբքն զոր ընկալաւ ապա եկեղեցի, որ են ժողով, գոհութիւն և օրհնու-

[1] Եւսեբ. Պամ. Ի. ԺԳ։ յաւնախ է։
[2] Վկայաբան. Հռոմ. ի 3 Նոյն. Պամ. Ը. Ք։

Թիւն : Լը ուրեք զի ի ժամանակս Հալածա-
նաց նախ քան զլուսանալ աւուրն մատուցա-
նէին զպատարագ, զի մի աղմուկ ի վերայ հաս-
ցէ յանհաւատից[1] : Եկեղեցիս իւրաքանչիւր
կամ ի թեմս մի մատչէր պատարագ, և մա-
տուցողն եպիսկոպոսն էր. իսկ երիցունք մերձ
նմա կային և մատուցանէին ի միասին ընդ
նմա. բայց յորժամ եպիսկոպոսն հեռի էր ի
տեղւոջէն կամ հիւանդ, ինքեանք մատուցա-
նէին : Պատ ժամանակաց և ըստ տեղեաց փո-
փոխեցան կարգք օրհնութեան պատարագի,
յաւելլով և նուազելով յարակից արարողու-
թեանց, այլ կարևորագունին կալով միշտ ան-
փոփոխ և միօրինակ: Յացուք ասա որ ինչ զայս
մանէ ի վաղ ժամանակաց հասին մեզ գրով:

Ըզօթս ինչ արարեալ, ընթեռնուին ասա
զսուրբ գիրս, նախ ի հին կտակարանաց և ա-
պա ի նորոց[2], և վախճան առնէին ընթերցուա-
ծոցն աւետարանաւ զոր մեկներ ասա առաջ-
նորդն, ի վերայ ածելով և զպատշաճ յորդո-
րական ըստ կարօտութեան հօտի իւրոյ : Պատ
ամենեցուն յոտս կացեալ դառնային յարևելս,
և համբարձեալ զձեռս յերկինս՝ ազօթս առ-
նէին վասն ամենայն մարդկան առ Հասարակ,
քրիստոնէից և անհաւատից, ծերոց և տղայ-
ոց, և մանաւանդ որոց ի նեղութեան էին

[1] Կնպրեան. Թուղթ առ կեսրէ:
[2] Յունարէն. Պատասխ. ը:

և ՚ի հիւանդութեան և ՚ի չարչարանս։ Արկաւաղն քարոզէր աղօթել, և քահանային մատուցանէր զաղօթսն, որում ձայնակից եղեալ ժողովուրդն կոչէր զամէնն[1]։ Վերջին ապա զընծայն, զՀայն և զգինի հանդերձ ջրով որ էին նիւթք պատարագին։ Ստանօր ժողովուրդն ողջոյն տայր միմեանց ՚ի համբոյր խաղաղութեան՝ արք ընդ արս և կանայք ընդ կանայս՝՚ի նշան կատարեալ հաշտութեան. և ապա իւրաքանչիւր ոք յանդիման առնէր զընծայս իւր, զորս առեալ քահանային մատուցանէր Աստուծոյ յանուն ամենեցուն[2]։ Եւ աստ սկիզբն առնէր մատուցման սրբոյ պատարագին՝ ազդ առնէր ժողովրդեան համբառնալ զմիտս առ Աստուած և գոհանալ զնմանէ, և երկրպագել նմին ահիւ և դողութեամբ ընդ հրեշտակս և ընդ ամենայն երկնային զօրութիւնս։ Եւ այսպէս յառաջ մատուցեալ զահաւոր գործն, և պատմեալ զսահմանադրութիւն խորհրդոյն, արտասանէր զանուն Քրիստոսի, և սրբագործէր նովին բանիւք զընծայսն[3]։ Եւ յետ այսորիկ միաբան ընդ ժողովրդեան զտէրունեան աղօթսն մատուցեալ, և ձաշակեալ ՚ի սրբոյ խորհրդոյն, բաշխէր անտի և ամենեցուն ՚ի ձեռն սարկաւագաց[4], քանզի

1 Կիպրիան. Թուղթ ԿԳ։ Կիպր. յղ. Աղօթ։
2 Կղեմ. ազ. Պանկալ. Բ. 3 Յուստին։
Բ։ Որոգ. ՚ի Հռոմ. ժ.Ջ. ժ։ 4 Կանոնք Առաք. Թ. Ժ։

այս օրէնք էին յայնժամ, հաղորդել առնեցուն որոց էին յեկեղեցւոջն, և մանաւանդ պաշտօնէից սեղանոյն։ Այլ հաղորդեալքն ընդունէին զտերունեան մարմինն ամենայնիւ մով և զգուշութեամբ, զի մի և դոյզն մասն անտի յերկիր անկանիցի [1]։

Իսկ որ չկարէին առընթեր կալ սրբոյ պատարագին՝ յղէին առնոսա'ի ձեռն սարկաւագաց կամ սպասաւորաց սեղանոյն։ Պահէին և մասն 'ի թոշակ հոգեվարաց՝ պաշար ահաւոր այնր առաջնկայ ճանապարհին։ Որքն էր հաւատացելոց տանել զսուրբ խորհուրդն և 'ի տունս իւրեանց, զի առաւօտուց զօր հանապազ միանչ և ինչ առեալ կերակուր՝ հաղորդեսցին, և զօրասցին նովաւ ընդդէմ վտանգաց և արկածից. որպէս յորժամ հասանէր նոցա երթալ 'ի մարտիրոսութիւն. զի ոչ 'ի կամս նոցա էր ժողովել զօր հանապազ և կատարել զսուրբ պատարագն [2]։ Այլ ամն հիւանդաց 'ի սուրբ մարճինն էր ևեթ պահէին. այլ հաղորդելոցն անդէն յեկեղեցւոջ՝ բազում այն էր զի 'ի կրկին տեսակացն ևս բաշխէին, բայ 'ի տղայոց՝ որոց տային 'ի սուրբ արեանն միայն [3]։ Վասն որ պաշտէր յառաջին ժամանակս զկնի սրբոյ հաղորդութեան՝ ձաշ լինն էր սովորական կերակրոց զօր 'ի նմին տեղւոջ առնուին. զկնի ապա

1 Որոգ. յերեմ. ձառ ԺԴ., կղեմ. յաճախ. Ա։
2 Տերտուղ առ կինն. Ա. բ։ 3 Կիպրիան. յղ. Ա՛ակ։

պրեաց և աղքատաց բաշխեին զայն։ Այսոսն հանեին անտի հանապազ և առաջնորդեին, Թէպէտ և չգտանէր անդէն. իսկ երիցանց և սարկաւագաց կրկին էր մասն։ Տային և վերծանողաց և երգեցողաց և փակաւոլաց եկեղեցւոյն իւրաքանչիւր մասն[1]։

ՅՕԻՒՒԱՆ ԵՐԿՈՏՄԱՍՆԵՐՈՐԴ

Թաքնուելիւն խորհրդոյն։

ԵԿԵՂԵՑԻՈՑ կատարելին և զամենայն խորհուրդս ըստ կարի. նմին իրի մեծաւ պըն-դումեամբ ջանայնար լինելին զի մի ոք յան-հաւատից գոյի անդէն. զի զգուշանային յոյժ չլուծանել զբան հրամանաց փրկչին, չար-կանել զսրբութիւնս շանց, և ոչ զմարգարիտս առաջի խոզաց[2]։ Այսոսն այնորիկ և խորհուրդս ասուանէին, այս ինքն գաղտնիս, զորս չգայտ-նէին ոչ անհաւատից միայն, այլև ոչ երախայ-ից. ոչ միայն չգատարէին զայնս առաջի նոցա, այլև ոչ իշխէին ձառել նոցա որ ինչ անդ լի-նէր, կամ արտասանել առաջի նոցա զաւետա-սրբագործութեանն, կամ խօսել բնաւ զիս-կութենէ խորհրդոյն[3]։ Այս առաւել զգու-

1 Կանոնք Ածաք. Բ. իբ։ 3 Որոգ. ի Յովհ. ձառ Գ։
2 Մատթ. է. 6։

չանային չգրել ինչ վասն այսոցիկ. զի և՛ի ըս-
տիպեն իսկ՝ ի հրապարակախօսութիւնս իւ-
րեանց կամ՛ի գրուածս՝ որ մարթէը յօտար
ձեռս անկանել՝ ձառել ինչ յաղագս սրբոյ հա-
ղորդութեան և այլոց խորհրդոց, խրթին և
առակաւոր զբանս յօրինէին։ Այլ զի իբր
կանել զՀայն՛ի նոր կտակարանս՝ զսրբագոր-
ծութիւն և զաշխատութիւն սրբոյ հաղորդութեան
նշանակէ, զոր ոչ էր իմանալ անհաւատից։ Իբ
այս սովորութիւն եկաց ընդ բազում դարս նա
և զկնի խաղաղութեան եկեղեցւոյ։ Այլ ոչ
այսմ կանոնի զՀետ գնացին հարք՛ի պատաս-
խանատուութիւնս իւրեանց յորս պարտ վար-
կան մեկնել զսուրբ խորհուրդս՛ի հերձուա-
ծարախօսութեանց զքրիստոնէից։

Սակայն ոչ նոր ինչ և օտար պարտ էր Թը-
ւել հեթանոսաց այս գաղտնութիւն յիրս կրօ-
նից, որում և ինքեանք զգուշանային յանսուրբ
պաշտամունս իւրեանց։ Զի նուիրեալքն Ի-
սեայ, Սիրեայ, Վեմեսրեայ, Լեւսեայ, Փիւ-
քեղեայ, և դիցն Սամթրակեայ և նմանեացն,
Թագուցանէին զնորհուրդս պաշտամանցն, եր-
կուցեալք յանկանելոյ ընդ մեծաւոծ անծիւք.
և ամբարիշտս և անօրէնս համարէին՝ զորս
միանգամ՛ի վեր հանէին զնոսին։ Իբ այս յայտ-
նի յոյժ օրինակս՛ի մէջ մատուցանէ Պօղոս[1]:
Որին վասն և Յորդանոս՛ի խօսէին զկար-

[1] Գործ. Բ. 42, 46։ Ի. 7, 11։ [2] Ագուշ. յիշն. Ա. Թ։

գաց կրօնից Աղիպատացւոյն և այլոց ազգաց՝ վեր՛ի վայր յեղյեղէ թէ «Պիտեմքաջ զպատ-
ձառս այսոցիկ, այլ ասել ոչ իշխեմ»։

ՅՕԴՈՒԱԾՈ ԵՐԻՒՐՏԱՍԱՆԵՐՈՒՆ

Ձարախօսութիւնք զքրիստոնէից։

Հանդերձ այսու ամենայնիւ գաղտնու-
թիւն խորհրդոց պատճառս տայր չարախօսե-
լոց զքրիստոնէից. իբրև զի ծածկութիւն յա-
ձախ ևս նշանակ է չարաց գործոց քան բարեաց.
այն զի պիտէին եթէ բազմագոյնք՛ի խորհր-
դոց այլոց կրօնից փութայ սնդուքեամբ թա-
գուցեալք՝ պղծութիւնք էին, որպէս՛ի պաշ-
տամունս Վեներտեայ և Կիբեղեայ և՛ի
զոհս Վիճնիսեայ, որ արգելան ասպա վճռով
ծերակուտին յամի հինգհարիւրերորդի վաթ-
սըներորդի ութերորդի շինուածէն Հռովմայ։
Իսկ ելութիւն և խեթ ընդդէմ քրիստոնէից
այնպիսի ինչ և զպաղտնիս նոցա կարծեցուցա-
նէին դիւրաւ ամենեցուն։ Իսկ յաձախէին ըզ-
կասկածանսն ոձիրք զազրագործութեանց՝ որ
՛ի ժողովս Վնասատիկեանց, Կարպոկրատեանց
և այլոց հերետիկոսաց գործէին. որ թէպէտ և
՛ի հարց անտի վկայեալ սակայն դժուարա-
ւատալի թուէին, զի և նոքա քրիստոնեայք յոր-

ջորջէին։ Ապարձեալ քահանայ յուղղափառաց անտի էին ստուգիք հեթանոսք, որք առ ահի տանջանաց զամենայն զոր միանգամ կամէին թշնամիք՝ չարախօսէին զաբեանց իւրեանց։

Ոչայս օրինակ էլ համբաւն առաստպելեալ զքրիստոնէից՝ թէ մանուկ մատաղ սպանանեն ի գիշերային ժողովս իւրեանց, և խոթովեալ զնա և պատեալ ալերքք, և թացեալ յարիւն նորա զՀաց՝ ուտիցեն. այսպէս ինն լեզուապարելով նոցա զահաւոր խորհրդոյ սուրբ հաղորդութեան։ Յաւելուին և զայն, իբր թէ ըզկնի հասարակաց կերակրոյն՝ յոր ասէին շուայտել նոցա որկորստութեամբ և արբեցութիւն, ընկենուցուն պատառ առաջի շան կապելոյ զաշտանակէ, և թէ յընդոստ ընդոստ խաղալ շանն առ ի հասանել առնուլ զպատառն՝ լապտերն լուսատու ժողովելոցն անդր գլորիցի, և նոցա զխաւար գիշերոյ օգնական առեալ՝ անխիղճ ընդ միմեանս լկտիցին արք և կանայք զօրէն անասնոց որպէս և ի տեղւոջն հանդիպիցին։ Յառաջին գտիչք անօրէնն բաժանացաս եղեն Հրեայք, որ թէպէտ և յայժ անտեղի էին բանքն՝ բայց հաւատայր այնոցիկ ժողովուրդն,

---

1 Որոգ. ընդդէմ կռլս. բան. Ա. ի՛ր. Եւս. Պատմ. կղեմ. ապէքս. Ծթ. թ. Ե. ւս. Յուսեբն. Պատասխ. Ա. Դրիգ. Աճաբ. Ճառ. ԼԹ. Պատմ. Եկեղ. Գ. իւ. Եւսեբ. Կատտոլ. առ Եւսեբ. Պատմ. Պատմ. Դ. է. Ամենագոր. Դ. է. Բարոն. յամին 120. Ե. Մինուճ. Փելիքս. պիփ. յոլ Հերձ. Ի՛Ջ. Ի՛Ե. Ե.

մինչև ստիպել քրիստոնէից փոյթ ՚ի մէջ առ-
նուլ եղծանելոյ զբարուրս ամբաստանութեանցն։
Օ՚ի և օրինակ պարաւորացն Ղևոնդեայ, ո-
րոց ժանտագործութեանցն խոհելոք յայտնի
էին ամենեցուն յերկերիւր ամաց հետէ, հա-
ւանեցուցանէին ինքն զամենեսին՝ թէ չիք և
ոչ մի ինչ ամբարշտութիւն որ պատճառանօք
կրօնից չանկանիցի ՚ի ներքս։

Ամբաստանէին զարձեալ՝ թէնամի լինել նո-
ցա համօրէն ազգի մարդկան, և առաւել պե-
տութեան Հռոմայ. խնդալ ընդ նեղութիւնս
հասարակաց, տրտմել ընդ յաջողութիւնս ի-
րաց աշխարհին, և ըղձալ զաւեր ինքնակալու-
թեանն։ Ամէնայնմիկ պատճառս առնուին
ինքն զբարոզել նոցա զունայնութիւն փառաց
և մեծութեան կենցաղոյս, զվախձան աշխար-
հիս, զահաւորատեանն, և զգուշակութիւն
բանիցն Յայտնութեան յաղագս պատուհասի
կռապաշտիցն Հռովմայ, և հանդերձեալ վրէժ-
խնդրութենն Աստուծոյ զարեան վկայիցն, զոր
թերևս ոմանք անխորհրդաբար կամ չարու թիւ
պատմէին նոցա[3]։ Ամն ևս մեծապես սդեր
զբարախօսութիւնն՝ զի ոչ իւիք կցորդ լինէին
քրիստոնեայք հասարակաց խրախութեանց ՚ի
զոհս, ՚ի կռչունս և ՚ի տեսարանս, լի կռապաշ-
տական իրօք և ցոփութեամբք։ Անաւանդ

1 Տերտուղ. Պատասխ. է, ը, 2 Ղուկ. Փիլոսոփա։
թ։ Որոգ. ընդդէմ Կելս. Ջ։

Թէ ջանային նոքա արտասուօք և ապաշխարութեամբ անցուցանել զաւուրսն զայնոսիկ վասն անչափ գործեցելոց մեզաց ՚ի նոսին. և խնդային առաւել յաւուրս, զորս անապաշխարութիւն հեթանոսաց ընդ խրտնօք արկեալ տիրականս համարէր և օրաչարս։ Այսրէնին և ՚ի տօնից վաճառաց վասն խաղուցն որ ՚ի նոսա, կամ առ հարկի անցանէին ևեթ ընդ այն առ գնելոյ զկարևորս ինչ կենաց կամ ըզգերիս ումանս առ ՚ի հաւատս որսալոյ զնոսա։

Այլշատ էր ատելի առնել զնոսա ժողովրդեանն և ուսուցին վարդապետութեան նոցա ՚ի բաց մերժելոյ զանհնային կրօնս կարգեալս ՚ի մարգկանէ։ Այսրպարոյր էր ասել նոցա զի պաշտելին նոքա հոգւով զԱստուած զարարիչն երկնի և երկրի, և անխափան մնասցանէին նմա զբանաւոր պատարագս զաղօթս իւրեանց. զի ժողովուրդ կռապարիշտ ոչ իմանայր զայս բարբառ նոցա, և հարցանէր թէ ուր է աստուած ձեր, և անաստուածս կոչէր զնոսա վասն չպաշտելոյ նոցա և ոչ զմի ոք ՚ի դից որ ՚ի միհեանս նորա էին, և չունելոյ սեղանս անչէզ ձրագօք և զեհմունս պատարագաց և դիւշեալս ծանօթից դից [1]։ Այս ոչ դադարէին արծարծանել և բորբոքել զթշնամութիւն ժո-

1 Տերտուղ. Պատասխ. լէ։ Աթբոս. Ճառ Ջ. յԱդաք։
Կղեմ. ալէքս. Մանկավ. Բ։ Բարսղ. ի Յանհատաբ։
Օգոստ. ՚ի Սաղմ. ճԻՀ։ 2 Մինուկ. Փելիքս։

ղովրդեանն և քուրմք և հաւատմայք և լերդահմայք և իղձք և համօրէն պաշտօնեայք հեթանոսութեան, ՚ի քրիստոնեայս հանելով զպատճառս արկածից և թշուառութեանց, զերաշտութեան, զմահուընց և զպատերազմաց։ «Եկայք քրիստոնեայքն, ասէին, ձգեն զբարկութիւն դից ՚ի վերայ այսոցիկ՝ որք նեղեն կեալ նոցա»։

Այսպիսի մտաձանձութեամբք և զառաքինութեամբն նոցա անգամ սիտս ապականիչս թուեցուցանէին. զզոյ միաբանութեանն՝ զսէր՝ անհամբոյր դատաձանութիւն համբաւէին։ Ո՛չ կոչէր նոցա միմեանց եղբարս և քոյր՝ չարի մասին վարկանէին. զի ինչպէսք հեթանոսք և ընդ ընտանիսն անառակէին[1]։ Ո՛ղորմածութիւն նոցա իբրև հնարս ինն ցուցանէին առ մոլորեցուցանելոյ զաղքատս, և յապըստամբութիւն իւրեանց արկանելոյ զնոսա, և կամ հնարք զշաքաղութեան առաջնորդաց աղ գանձս ժողովելոյ յեկեղեցիս, և յօբանալոյ նոքօք։ Ապանչելագործութիւնք նոցա, ասէին, կախարդանք էն և մոգութիւն. քանզի և լի էր աշխարհ յայնժամ խաբեբայ մարգկամբ՝ որք պէսպէս դիւթութեամբք խոստանային պատմել զհանդերձեալս, և բժշկել զախտաժախտս բժժանօք և դեղատուութեամբ, և

1 Ցերտուղ. Պատասխ. Ար նոք։ 2 Պրուդենս. Երդ ՚ի սուրբն Լաբրենս։

խաղտալուր բառիւք, և այլանդակ ձեւովք։ Այն զի և ինքեանք արուեստիւք կամ յայլոց ղեկուլով դիւին զարմանալի իրս գործէին՝ի պատրել զաչս, որպէս անուանին այն Ապողոնիոս Տիանեցի։ Այսոցն որոյ ոչ մեծ ինչ Թուէին լուրքկամտեսիլ իսկ սքանչելեաց, ընդ միմեանս աղմկելով զչմարտութիւն ընդ ստութեան, և արհամարհելով անխտիր զամենեսեան որ միանգամ համարէին նշանագործք[1]։ Այս երկիր իսկ ծննդեան առաքելոց և առաջնոյն քրիստոնէից ձեռն տայր հաւանութեան այսոցիկ. զի բազումք՝ի մոլորեցուցչաց աստի յարևելից գային։

Այս հալածումն ինքնին յաճախեր զատելութիւն ընդդէմ քրիստոնէից. զի ձչմարտիւ իսկ յանցաւորք համարէին վասն այնպիսի անցս ամենայն ուրեք կրելոյ, և սաստկութիւն պատուհասիցն համարեր՝ի հաւատս մեծութեան յանցանացնոցա[2]։ Այսմ իրի ամենեքեան իբրև՝ի պատժապարտս մատնու հայէին՝ի նոսա, և յարժանիս հրոյ և կախաղանաց, և այլովք պէսպէս թշնամանաց անուամբք կոչէին զնոսա[3]։ Այս վասն այսր ամենայնի ատելի լինէին քրիստոնեայք ժողովրդեան և տգիտաց. և յայսոսիկ հաստատեալ էն որ ինչ միանգամ

[1] Որոգ. ընդդէմ կէսս. Բ։ [2] Ցերտուղ. Պատասխ. Ծ։ [3] Բարսղ. յամն 385։ Սուետ. ՚ի կղեդիոս, ԼԵ։ Բարսղ. յամն 138։

Պաւետռնիոս և Տակիտոս՝ ըստ հասարակաց կարծեաց ասեն զքրիստոնէից. "Այսպէս Պլո-
դիոս, ասէ Պաւետռնիոս, 'ի բաց վտարեաց 'ի Հռովմէ զՔրեայս, որ 'ի դրդելոյ Քրիստո-
սի ոչ դադարէին աղմուկս յուզել"։ որպես և Թէ տակաւին յաշխարհն աստ էր Քրիստոս, և պառակտէր զՔրեայս։ Այդ ընդ բարեաց գործոց Հերոնի և զայս 'ի համար արկանէ, զի չարչարեաց զքրիստոնեայս, զնոր խին ազգ ասէ նանրահաւատ և չարագործ մարդկան։

Տակիտոս 'ի խօսել զհրկիզութենէն Հռովմ մայ՝ զոր հրամայեաց Հերոն 'ի զբօսանս իւր՝ ասէ. "Այլ զինաս գործոյն կացոյց զայնոքիւք ,, որք առելի ևին ամենեցուն, և զորս ժողո- ,, վուրդն քրիստոնեայս անուանէր ,,։ Յարէ ապա՝ Թէ "Ոչնուէնս այս 'ի Քրիստոսէ իջա- ,, նէր, զոր պմնատային Պիղատոս սպան մահու ,, ատ Տիբերեաւ։ Այլ ընաստակար նանրահա- ,, հատ դենս այս՝ խափանեալ 'ի ժամուն, դար- ,, ձեալ 'ի վերջ յառնէր. ոչ 'ի հրէաստան ևեթ ,, որ ծնող էր դժնդակ կեչտիս այսորիկ, այլ և ,, 'ի Հռովմ իսկ՝ ուր ամենայն ամբարշտու- ,, թիւնք գան ժողովին, և հանդէս առնեն։ ,, Այսպ զայնոսիկ կալան որ խոստովան եղեն, և ,, ապա 'ի բանից բերանոյ նոցա և այլք բա- ,, զումք յայնցաւորք ցուցան, առաւել առ թէ զը- ,, նամուելեան իւրեանց ընդ ազգի մարդկան՝

1 Տուտա. 'ի Ներան. Ժէ։

„քան վասն Երկիզութեան քաղաքին „։ Եւ զկնի դարձեալ՝ վերիմապարտս զնոսա կոչէ, և արժանիս չարաչար տանջանաց[1]։

ՅՕԳՈՒԵՆՈՅ ՀՈՐԵՔՓՏՈՒՄՆԵՐՈՐԴ

Դարձեալ և այլ կա զքրիստոնէից ահաւասնութիւնք։

Եւ որք հանձարեղք, և նոքին իսկ որ զերան՝ ի քննութիւնս առնուին՝ գտանէին պատճառս թէնամանելոյ զքրիստոնեայս. զի յորժք էին կամ հոռոմսովորելոյ կամ Հայոց՝ հել զամենայն ազգս՝ խուժադուժս զնոսա կոչելով, մանաւանդ զՀրեայս՝ որոց անուն նշաւակեալ էր՝ ի բազմաց հետե, և ազգ նանրաբահաւատ և ծանծաղամիտ համբաւեալ առ ամենեսին։ Վերատիսս՝ ի խօսելն զնշանագործութեանէ ուրուք ասէ. „Հրեի ումիք մարթ էր հաւատս այսմ ընծայել, այլ ինձ ոչ„։ Օմոռս աճ ապա քանի՞ քանդագուշանաց քանք թուէին նոցա՝ լսել եթէ էին ոմանք՝ ի Հրեից՝ որք պաշտէին որպէս որդի Աստուծոյ զնաչէալ զմին, և զի վասն այսր վիճեալ հակառակէին այլոց Հրեից՝ կենդանի զնա սպելով զկնի մահուն, և Աչմարիտ թագաւոր իւրեանց զնա կարգալով։ Այն զի տեսանէին՝

1 Տակիտ. Տարեգ. ԺԵ։ 2 Ովատ. Ա. Երգից. Ե։

զի և Հրեայք ինքնին խորչէին և հալածէին ամենայն ուրեք զնորաձայն վարդապետութիւնն, և աղմուկք մեծամեծք յառնէին վասն այնր՝ ի մէջ ժողովրդեան. նմին իսկ՝ ի վերայ բերէին թէ ուրեմն չարագործ քան զամենայն մարդիկ էին քրիստոնեայք [1]։

Այս այն ևս պատմէր նոցա, զի ոչ գիտութեամբ կամ ճարտարութեամբ բանից ջանայր՝ ի հաւանութիւն ածել զայլս, այլ զի յորդորէին ևեթ հաւատալ պատմելոցն՝ ի նոցանէ, զոր նշանօք և արուեստիւք խոստանային հաւատարմացուցանել. և զի բազմագոյնք ևս՝ ինոցանէ արք տգէտք էին՝ հրեկանացն և ևեթ տեղեակք գրոց [2]։ Ոչ ի պարծէին ուսուցանել զգիտս հանդերձս իւրեանց, զկանայս և զրուամիկն, պատրաստադոյն քան զգիտունս գըտեալ զնոսա յաշակերտութիւն վարդապետութեան իւրեանց։ Այլոցանցն թուէին իրքն, զի առ հեթանոսս չգոյին ինչ հրահանգք ռամկին. իմաստասէրք ևեթ՝ ի նոսա խօսէին ըզբարոյից, ոչ ինչ՝ ի վիճաբանութիւնս իւրեանց խառնեալ չառնս զկրօնից։ Այլ զարձեալ քանզի և հերեսիոլատաք ամենեքին քրիստոնեայք անուանէին, եկեղեցւոյ առ հասարակ զրկէին ցնորք ի աղեներսիանոսաց և հանդերձնոցին զանցելոց բանք՝ հերքեալք՝ ի սրբոյն Հրանոս-

1 Գործ. Իե. 19, եև։ 2 Գործ. ԻՀ. 22։ Որոգ. ընդդէմ կելս. Ա., Գ։

սէ։ Օ՛ի ոչ ինչ խոիր առնելով հեթանոսաց ընդ չաղակրատանս նոցա և ընդ վարդապետու-թիւն կաթողիկէ եկեղեցւոյ, համարէին ըզ-քրիստոնէութիւն իբրև յամառութիւն ինն տգէտ և կամակոր մարդկան [1]։

Ո՛ր ինչ իցէ, ասէին, թողուլ զկրօնս որ հաստատեաւն է յերկար ժամանակաց հետ՛ի թագաւորաց և յօրէնսդիտաց դեղեցիկ կար-գօք, և հաւանութեամբ համարէին Յունաց և բարբարոսաց ընկալեալ, և զհետ երթալ օտարոտի սովորութեանց, և ձգնել ձեզ՛ի պաշտպանութիւն առասպելացն Հրէից. լաւ էր ձեզ՛ի հրէութիւն դառնալ միանգամայն. այլ որպիսի՞ անմտութիւն իցէ պաշտել զՄա-տուածն նոցա հակառակ կամաց նոցա նոքօրիւ նակ ինն պաշտամամբք, և հնազանդել օրի-նաց որ ոչ պատկանին ձեզ [2]։

Ո՛պաքէն անարատ էին վարք քրիստոնէից, և համեմատ վարդապետութեան նոցա. բայց և յիմաստասիրաց պարծէին բազումք գործել զառաքինութիւն և ուսուցանել [3]։ Ո՛վ ապա-քէն և ոչ սակաւք՛ի նոցանէ յառաջին դարս եկեղեցւոյ՝ նմանել ինն թերևս կամելով քրիս-տոնէից, ընթացան ընդ տիեզերս՝ ուղղել ըզ-վարս մարդկան, և չարիս ևս կրեցին վասն այսր,

1 Օգոստ. յղ. Ճշմ. կրօն։ Որոգ. ընդդմ Կէս։ Բարոն. յամին 174։

2 Իւսեբ. Պատրաստ. Ա. ը։

3 Տէրտուղ. Պատասխ. ի՛ը։

որպես Ղազոնիոս Տիանեցին, Մոլսոնիոս, Դամիս և Ասկիտեոտոս[1]։ Մեծ էր անուն իմաստասիրաց ի բազում գարուց հետէ. համարէին ասացեալնոցա զամենայն, և անմարթ թուէր թէ բարբարոսք ումանք առաւել գիտասցեն քան զՊիւթագորը, քան զՊղատոն և քան զՕ֊ենոն. և գոլութեան ինչ արժանի եթէ թուէրնոցա, համարէին յիմաստնոց անտի հռչակաւորաց գողացեալ[2]։

Եւ գարձեալ քան զքրիստոնէիցն հեշտէին կալ ևս էին քանք իմաստասիրաց, յորոց բազումք չերժէին զհեշտութիւն, և կէսք ի նմա իսկ հաստատէին զերազոյն բարին։ Ի կամս իւրաքանչիւր թողեալ էր կարծել զոր ախորժէն, և վարել ըստ հաճոյս զկեանս, շատ համարեալ վասն անձանց զբամահելն և զնախատել զորս չպարապէին իմաստութեան[3]։ Աոուաւր էր թիւ Պիւռռոնականաց ազանդոյն, որք վարանէին ընդ ամենայն, և առաւել զաստուածայնոց՝ զորոց յոյժ ի խաւսրի էին իմաստաբերք։ Օրինք իմաստութեան համարէին առ նոսա չահմանել ինչ. և չար թուէր նոցա տգիտացումանց և գռեհկաց՝ ընդ որս զբազում ի քրիստոնէից համարէին՝ իշխել զբարձրագոյն իրացն տալ վճիռ։ Ի ինքեանք պարծէինյարգել զկրօնս սահմանադրեալս, և կէսք

1 Բարձ. յաճն 65։
2 Որոգ. ընդգեմ կելս։
3 Մխոիւկ. փիլիքս։

հաւատս իսկ ընծայեին նոցուն՝ խորհրդական մեկնութիւնս տալով և կարի ծաղրական առասպելացն։ Այլք անձանց պահեալ զդիտութիւն էին զերաբուն էին՝ զհաստչին բնութեանս, զմտոտի պաշտամունս Թողուին այնոցիկ զորս համարէին անբաւականս իմաստութեան։ Այսպիսւբեամբ անգամ՝ որք յայտնի ևս ընդդէմ զինեին կարծեաց ռամկին զդից, ոչ յետս կային 'ի զոհելոյ խաւն ընդ նոսա[1], և կցորդ լինելոյ պաշտամանց կրօնից ըստ տեղեաց՝ ուր և գտանէին. քանզի միաբան էին յայսմ ամենեքին՝ Թէ չէ պարտ հակառակ կալ սովորութեանց զոր օրինք և երկարութիւն ժամանակաց հաստատեցին։

Այս այնքան յաձախեալ էր բազմաստուածութիւն՝ մինչև համարել ազգաց իւրաքանչիւր և քաղաքաց և տոհմից աստուածս սեպհականս և ինամակալս՝ արժանիս առանձին պաշտամանն և պատուոյ. վասն որոյ և ամենայն կրօնք համարէին բարիք՝ առ որս յերկար ժամանակաց հետէ ընկալեալ էին։ Այսպէս և ռամիկն Թեթևամիտք և տգէտք՝ նորս զոր հանապազ ընդունել ըղձանային, որպէս այն Թէ ըստ յաձախելոյ դից նոցա և դիցուհեաց, և ըստ բազմացուցանելոյ զազգս պաշտամանց՝ յաւելուին և ինքեանք 'ի կրօնասիրութիւն։ Այլ իմաստունքն և քաղաքավարք զհետ լի-

[1] Ովտատ։

նէին ամենայն ձգամբ խափանել զերբուն նո-
ցա չայսոսիկ, և չէր նոցա հաձոյ դոյզն իսկ փո-
փոխուն կամ այլայլութիւն ի կրօնս։ Եւս ա-
ռաւել դատապարտէին զկրօնս օտար ազգաց,
կարևորագոյն մասն համարեալ զայն Հռով-
մայեցւոց քաղաքականութեանէ իւրեանց։ Ջա-
նային հաւանեցուցանել ժողովրդեան՝ զի Հռո-
վմ զնեծազօր իշխանութիւնն զայն ի խնա-
մական աստուածոց իւրոց ընկալաւ, որք եթէ
ոչ հզօրագոյնք էին քան զամենայն դիս՝ ոչ էր
մարթ նոցա զամենայն ազգս հնազանդեցու-
ցանել իւրեանց։ Այլն իբրև ոչ սակաւք ի հե-
թանոսաց՝ի հաստատելքրիստոնէութեանըզ-
նա կոչեցին պատճառք կործանման ինքնակա-
լութեանն, որ չյամեաց իսկ յետ այնորիկ։ Այս
աստի չայսմանէ եկն պրել աստուածայինն ()
գոստինոս զմտաբանն իւր մեծ չաղագս Քա-
ղաքին Աստուծոյ՝ առ ի տալ պատասխանի
բարբարոսաց նոցա։

Ընդ այն ոչ չոյժ զարմանալին հեթանոսք՝
զի արհամարհէին քրիստոնեայք զմահ[1]։ Այլ
նոցա սովորեալ էին տեսանել զսուսերամարտս
առ դոյզն չահու, մանաւանդ թէ և վասն և
ոչ ի ինչ չահու դիմապրաւեալս բազում ան-
գամ ընդդէմ սրոյ չանդիման շուրջանակի տե-
սարանին։ Ցեսանէին զօր հանապազ և զբա-
զում լաւ մարդիկ առ սուղ ինչ վճռոց կամ

1 Տիտ. Լիւ. Խթ։ 2 Տերտուղ. Պատասխ. Ծ։

նեղուԹեան անձնասպանս. յոր և իմաստասէրք ոմանք մտաբերեցին վասն պարծանաց՝ որպէս ասեն օրէնսգէտք, զոր Ճգրտեաց յանձին Պերեգրինոս, զորոյ Ղուկիանոս պատմէ զեղերական մահ։ Ոմին իրի ի տեսանել զքրիստոնեայս՝ զի մերկին հեռանային ի հեշտուԹեանց կենցաղոյս, և միայն երանուԹեան անտի կենացն ակն ունէին, զարմանային յոյժ՝ Թէ զինարդ ոչ կարձէին զանձինս ի կենաց։ "Պատաքէն ասիցէք ցմեզ՝ ասէ Յուստինոս վըկայն՝ անձնասպանք լերուք և հասէք վաղագոյն առ Պատուածն ձեր, և մի յապերուք տագնապել զմեզ։" Եւ Պտոնինեայ փոխանակի բդեշխին Պիոյ՝ տեսեալ զի երամովին ընԹանային քրիստոնեայք յատեան իւր զի վկայեցին արեամբ մահու, աղաղակեաց, "Ոչ դկելք դուք, եԹէ արդարև մեռանել ցանկայք՝ գոն ձեզ պարանք և վախք։"[1]

Պհասիճ առնային հակառակ եր ապաքրիստոնէից. ժողովուրդք և իշխանք, տգէտք և իմաստունք։ Կէսք ատէին զնոսա իբր մոլորեցուցիչս, իբրև ամբարիշտս և անօրէնս. այլք որպէս մարդատեացս, երազայոյսս, և խօլս դառնամաղձս ի մոլեգին յամառուԹենէ ձըգեալս ի մահ։ Պհնպէս զօրացեալ ձախողակի կարծեացն զնոցանէ, զի ի լուր ևԹէ քրիս-

1 Յուստին. Պաաս. Բ։ 2 Տերտուղ. առ Սկապ. գլ. վերջին։

տունեայ անուանն դատապարտեին զնոսա։ Օ՛ի սա ևեթ բաւական էր եղծանելոյ զբարեհամ բաւութիւն. մինչև ասել իսկ զբաղմաց. «Խաբի է այն, այլ աւաղ զի քրիստոնեայ է»[1]։

ՅՕԴՈՒԱԾՈ ՀՆԴԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կարգ դատաստանաց։ — Տանջանք։

Լինի չէ պարտ զարմանալ ընդ հալածումն քրիստոնէից՝ որք ատելութեամբ ամենեցուն էին նշաւակք. այլ ընդ այն թերևս ոք զարմանայցի, զի Հռովմայեցիք՝ իմաստունքն կարծեցեալ օրինօք, և արդարք՝ ի գնացս, այսպէս անգթացան ընդ քաղաքակիցս իւրեանց և ընդ մարդիկ, որպէս տեսանեմք՝ ի վարս սրբոց վկայից, տանջելով դատաւորաց նոցա զամբաստանեալսն առաջի աչաց իւրեանց, և՝ ի հրապարակս և յանդիման ժողովրդեան, և այնպիսի բազմահնար և աղի աղի տանջանօք՝ որպէս եթէ ինքնիշխանք էին։ Ոչինչ արդեօք տարադէպ տեսանել աստէն՝ որ էին օրինք նոցա և որպիսի սովորութիւնք, և զնոսա դարձեալ՝ ի վերայ այնոցիկ յաւել ձախողակ նախանձ կրօնից և քաղաքավարութիւն։

Հռովմայեցիք հրապարակաւ առաջի բազ-

[1] Տէրտուղ. Պատասխ. հատ. Գ։

մուԹեան ժողովոյ առնէին զամենայն գործ դատաստանի, զՀարցափորձ յանցանաց և զքաղաքական իրաց, և զՀրամանս և զՀնազանդս, և առեանն դնէր ՚ի հրապարակի [1]։ Այդ դատաւորն անցեալ բազմէր ՚ի յարկածածուկ գաԹի ՚ի վերայ բարձր բեմի՝ շուրջ պատեալ ՚ի սպասից և ՚ի նուիրակաց որք ունէին ՚ի ձեռին տասար և խուրձ, և ՚ի զօրաց որք պատրաստ կայէին ՚ի կատարել զՀրամանս նորա [2]. զի կուսակալք Հռովմայեցւոց ընդ զօրավարուԹեան և զիշխանուԹիւն դատաւորուԹեան ունէին։ Ըստ յանցանաց սահմանէին օրէնք և զպատուհասս, այլ ըստ պայմանի առն զոր նազան էին և պատուհասք, խստագոյնս պատժելով զգերիս քան զազատս, և զօտարազգիս քան զբնիկ քաղաքացիս. վասն որոյ և զՊօղոս գլխատեցին իբր Հռովմայեցի, իսկ զՊետրոս ՚ի խաչ հանին իբրև զՀրեայ։ Ընարգագոյն քան զամենայն տանջանս խաչն էր. և զօրս բևեռէին ՚ի նմա՝ ձաղէին նախ, և կիզուին զկողս նոցա շանԹացեալ երկաԹովք և ջահիւք [3]։ Ի Հարցափորձ ևս ՚ի հրապարակի առնէին, և կարի անողորմ էր օրինակ հարցափորձին, և նոյն իսկ պատճառաք յոլովագունից ՚ի տանջանաց սրբոց վկայիցն [4]. զի օրէնք

1 Կիկ. ՚ի վերջս. Ջ. Ղ։ 2 Գիրք Ջ. յօդ. ը, յղ. Պատժ. և գիրք Թ. յօդ. ը. և գիրք ԺԱ, ԻՀ, ԼՁ։ 3 Կիկ. ՚ի վերջս. Ճառ. վերջին. կէ։ Գիրք ԻԱ. յղ. Ա՛ժբատ։ 4 Տե՛ս առ. Պատասխ. ը։

Հոռոմոց որպէս և մեզս՝ ոչ նեղէին խոչտանգել զամբաստանեալն, բայց միայն ՚ի հարցափորձի. նմին իրի որով տանջանօք պատէին զանցաւորս ՚ի խոստովանեցուցանել զանցանսն՝ նոքին հնարիւք վարէին և ընդ քրիստոնեայս յուրացութիւն հաւատոյ՝ որ ՚ի յանցանս համարեալ էր նոցա։ Այնչափ ՚ի ժամանակս կայսերաց քրիստոնէից տակաւին զնոյն օրինակ հարցափորձի ՚ի կիր առնուին, զձգումն անդամոց, զձաղանս, զսուր և զՀուր. որպէս յայտ է և յանցից սրբոյն Լուտրոպիոսի, և սրբոյն Տիգրիոսի, որք ըստ նմին օրինակի չարչարեցան պէսպէս պատճառանօք ՚ի քէն վըրիժու սրբոյ Սակեբերան Հայրապետին՝։

Յանտոհմն և զանարգս պատուհասէին ՚ի պեղել զբովս, որպէս արդ ՚ի պատերազմիկ նաւս. և կամ ընկենուլն առաջի գազանաց ՚ի շուրջ տեսարանի ՚ի զբօսանս ժողովրդեան՝։ Այլն նոցա արդեօք և այլ ազգի ազգի տանջանք՝ սեպհականք գաւառաց գաւառաց. այն ևս օր ըստ օրէ նորս հնարէին գատաւորք ընդդէմ քրիստոնէից, մանաւանդ ՚ի յետին հալածանս՝ յորում սրտմտութիւն նոցա ըստ աճել օր ըստ օրէ քրիստոնէից ՚ի կատաղութիւն փոխէր, և հնարս սադրէր նոցա դէն առ ՚ի սպանանել զոգիս նոցա քան զմարմինս։ Այս

1 Սոզոմեն. Պատմ. Ի. իզ։ 2 Գիրք Ը. յոդ. ը, ևն. յղ. Պատմ։

ոչ ուրեք մտաբերեաց ոք զնաւ դատապար-
տել զայլս, որպէս յայնժամ զկուսանս քրիստո-
նէից 'ի փորձ պղծութեան։ Այր զգաստու-
թեան փայլեալ 'ի նոսա՝ եւ հնարել զայս ազգ
տանջանաց. որով փորձեցաւ և սուրբք վկայն
զորմէ պատմէ աստուածայինն Հերոնիմոս, զի
կապեցին զնա 'ի վերայ փափուկ մահճաց 'ի
զուարճալից վայրի առ 'ի հրապուրել զնա 'ի
ձեռն վատշուէր կնոջ. այլ նա զլեզուն խա-
ծեալ և հատեալ, արձակեաց թքով 'ի լկտի
դէմս փորձողին[1]։ Այս այլ անհամաքք 'ի վը-
կայից սպանան կամ տանջեցան առանց դա-
տաստանաց, էր որ յամբոխէն յարուցեալ 'ի
վերայ նոցա, և էր որ 'ի թշնամեաց իւրեանց։

ՅՕԳՈՒՍՏՈՍ ՎԱՐՇԱՄՇԱՆԵՐՈՒԻ

Հալածանք։

ՑԵՒ 'ի հալածումն ձեռն արկեալ՝ հրովար-
տակս հանէին, արգելլով զժողովս քրիստո-
նէից, և պատուհաս 'ի վերայ կապելով այնո-
ցիկ որ չառնուին յանձն ըզհել կռոց։ Ոչ այն
լուեալ եպիսկոպոսաց՝ փութապէս ազդ առ-
նէին միմեանց, և յորդորէին զիրեարս յաձա-

[1] Հերոն. Պատմ. վար. սրբոյն Պաւղ։

խել յաղթիս, և քաջալերել զժողովուրդն[1]։ Յայնժամ բազումք ըստ տէրունական իրատուն փախչէին այլուր[2], և հովիւք անգամ և երիցունք մեկնէին ի միմեանց, էր որ մեկուսի ի ժողովրդենէն կալով, և էր որ խառն ընդ ժողովրդեան, զուշացեալք յայժ անձանց. զի նոցա առաւել ի խնդիր էին, իբր թէ ի կորնչել նոցա՝ ցրուէին ոչխարքն[3]։ Ոմանք փոխէին և զանուն իւրեանց, զի մի դիւրաւ ծանիցին[4]։ Կէսք արծաթով փրկէին զանձինս ի հալածանաց, զի մի նեղեալ չարչարիցին. որ և այն չարչարանք էին՝ զրկել յընչից և ի ստացուածոց, և ցայգ հաւատոյ նոցա՝ թէ արդարև առաւել համարէին զՔոգի. իսկ որք միանգամ գնէին տոմսակս նշանակս չհեռանէլոյ թագաւորական հրովարտակին՝ զայնպիսիսն տոմսաւորս անուանէին[5], և յուրացողս վարկանէր զնոսա եկեղեցի՝ լռելեայն իմն խոստովանութիւն դից համարելով զգործն։

Վասն որ հրամանն ի կանոնաց եկեղեցւոյ՝ դիմագրաւ լինել իւրովի ի մարտիրոսութիւն կամ զրգռել իւիք զՔեթանոսս և լինել պատճառք հալածանաց. օրինակ իմն՝ արգելեալ էր խորտակել զկուռս, հուր ի տաճարս հարկանել, թէնամանել զդիս կամ անարգել հրա-

1 Կիպր. Թուղթ ի., ևն։
2 Ատտէ. գ. 23։
3 Վ կայսբ. սրբոյն Պետի։
4 Կան. գ.Ր. Պետր. աղէքս։
5 Կիպր. Թուղթ ծ.Ի, առ Անտոնիան։

պարակաւ զնոսին պաշտամունս նոցա[1]։ Օ՛ի Թէպէտ և ոմանք ՚ի սրբոց վկայից արարին զայսոսիկ, այլ գերագոյն իմն աղդեցութեան չնորհայ գրելի է զչքնաղ օրինակն. իսկ հաւարակաց վարդապետութիւնն այն է, չփորձել զ՚յաւուրս, և մնալ համբերութեամբ, մինչև ծանուցեալ յայտից՝ ձգելն ՚ի հարցփորձ, համարս տալ զհաւատոց իւրեանց։ Կրկին մոլորութիւնք էին ՚ի մանկունս յայսմիկ հակառակ միմեանց. զի Վնոստիկեանք, որպէս և Ա՛ղեհնտեանք, վայրապար և անպէտ գրելին յանձն առնուլ զմարտիրոսութիւն. զի ասելին Թէ վասն կեցուցանելոյ զմեզ մեռաւ Քրիստոս. այլ վասն կեցուցանելոյ յորպիսի՞ մահուանէ, նոքա զայն ոչ իմանային[2]։ Ա՛յնպէս մանկունք իմն համարելին Յ՛յաւուրց զվկայելն մահուամբ. զի որ առեայն՝ ասելին՝ զարիւն նոխազաց և ցլուց, զի՛րդ հաձեսցի ընդ արիւն մարդկան։ Իսկ Ա՛արկիմնեանք իւրովի ընթանային ՚ի նահատակութիւնն առ ատել ըզմարմին իւրեանց և զհաստիչ նորա. զի չսբի արարչի համբաւելին զնա արարած։ Մինն իւրի քններ եկեղեցի ՚ի մասունս յայսոսիկ զմեռեալս վասն հաւատոց՝ առ ՚ի սահմանել ոյք ՚ի նոցանէ պատուոյ և մեծարանաց արժանի

[1] Ժող. Եղիսբէր. կան. Ի։ Ընդդ. ընդդէմ կելը. Ր։ կաՆոնք Ընաք. Ն. Ե։ Երան. Ա. ա։ կղեմ. ալեքս. Յաձախապ. Խ։

[2] Տերտուղ. ա։

էին որպէս վկայք Հնմարտութեան . և աստի արդեօք սկիզբն եղև կանոնական քննութեան սրբոց [1] :

Ձերբակալ արարեալ զքրիստոնեայս առէին առաջի դատաւորին , որ բազմեալ յատեան՝ հարցանէր զնոսա օրինօք [2] : Յուրանալնոցա զլինելն քրիստոնեայ՝ հաւատացեալ բանիցն՝ արձակէին զնոսա անդէն , գիտելով զի որք ստուգապէս քրիստոնեաքն էին՝ չուրանային զքրիստոնէութիւնն , և կամ եթէ ուրանային՝ Թողուին զայն յօրէ անտի : Այլ զի առ ի հաւաստիս հրամայէին առնել պաշտօն ինչ կռոցն , և կամ Հշամանաց ինչ ասել բանս Քրիստոսի : Իսկ ի խոստովանել նոցա զքրիստոնէութիւն՝ զոն գործէին յաղթահարել զարիւնքն նոցա նախ հաւանողական բանիւք և խոստմամբք , ապա սպառնալեօք , և հուսկ յետոյ տանջանօք : Ջանային պատրել զնոսա , և ականայ իսկ տալ ամբարշտել նոցա իւքք առ ի վհատեցուցանել զնոսա որպէս անկեալս ի կռապաշտութիւն : Այս քանզի ի հրապարակսն ուր վարէին զդատս կային հանապազ պատկերք դից և սեղան , զոհս մատուցեալ նոցա առաջի վկայիցն՝ ստիպէին ուտել անտի . մինչև բռնի բանալ զբերանս նոցա ի Հաշակ զոհիցն և կամ յարբուն ի դիւցանուէր գի-

1 Բարոն . յամի 302 : 2 Պլին . ի . ղէ .

նոյն գէթ կաթիլս ինչ[1]։ Այլ թէպէտ խրա-
տեալ էր քրիստոնէից՝ զի "Ալէ որ մտանէ 'ի
բերան, այլ որ ելանէ 'ի բերանոյ՝ այն պղծէ
զմարդ ..."[2]. սակայն մեծապէս չգնեին չտալ
և թեթև ինչ գայթակղութիւն տպարաց։
Այդն ոմանք որ յանձն առին կիզուլ ձեռացն,
կալեալ 'ի նմա զկրակ հանդերձ խնկօք, զի
մի 'ի թօթափել զայն թուիցին խոնկս մա-
տուցանել դից. զոր օրինակ և սուրբ նահա-
տակն Արտաղամ զոր ներքոյեալ մեծն Ասո-
սեզ[3]։

Սովորական տանջանք վկայից այսոքիկ էին. զոմանս տարածանէին 'ի վերայ փայտատան, և կապեալ չուանօք զձեռան և զոտս՝ քար-
չէին յերկոցունց ծայրիցն Ճախարակօք։ Այլ զոր կախէին զձեռացն՝ բեռիս ծանուցնս կա-
պեալ յոտան, և էր զոր գանաճեծ առնէին գաւազանօք կամ ստուար բրօք, կամ խարա-
զանօք՝ յորոց 'ի ծայրն էին կարիճք երկա-
թիք, և կամ փոկովք նորովք, կամ որ կապա-
րեայ գնտակօք էին զինեալ. յորմէ և բազ-
մաց 'ի սրբոց մահ հասանէր յանողորմ հա-
րուածս անդ։ Յոմն զկիսոց տարածեալ զմար-
մինն՝ կիզուին զկողս, և քերէին եղինգամբք
կամ երկաթի տատասկօք, որպէս զի յոլովակի

1 Պետր. ադեքս. Ժ։ Վկայ. ար. սրբոց Տարագ. Պրոբ. և Ալեքսն։
2 Մատթ. ժե. 18։
3 Բառս. Ասո. ԺԸ։

բացեալ կողմին երևելին մինչև ցընդերսն, և ընդմտեալ հրոյն ընդ մարմինսն՝ հեղձուցա- ներ զտանջեալսն։ Այլ երբեմն առ ի կսկծե- ցուցանել և եւս զվերսն՝ չիփեին աղիւ և քացա- խով, և ի սպիանալ վէրացն՝ անդրէն չարաչար եւս պատառէին։

ՅՕԳՈՒՄՆ ԵՕԹՆԵԻՏՄԱՆԵՐՈՒՐՑ

Վկայաբանութիւնք սրբոց։

Ի ՏԱՆՋԱՆՍՆ անդ հարցփորձ առնէին ան- դադար, և զամենայն բանս նոցա և զգա- տաւորին գրէին դպիրք մի ըստ միոջէ. որով փուբսիշք դատաստանականք ստուգագոյն եւս արձանագրէին յայնժամ՝ քան զոր այժմ ար- ձանագրեն պաշտօնեայք առեղից. զի արուեստ իմն էր նախնեաց նշանագրութեան, յորում գիծք իւրաքանչիւր նշանակք էին բառից. որ- պէս զի զոյգ ընդ բարբառոյ գրել նոցա, և Հնգրիա զնոյն բառս զոր խօսէինն՝ ի գիր ար- ձանացուցանել, և ի գեմն խօսողաց իւրա- քանչիւր. ուր արդ յատենական գրուածս մեր ամենայն բանք յերրորդ դէմն արձանագրին ըստ սովորութեան դիւանադպրաց։

Օ արձանագրութիւնս զայսոսիկ դիւանա-

գիրս կոչեին [1]. և փոյթ մեծ էր քրիստոնէից
ի ձեռս բերել զպատճէնս հարցափորձի եղ-
բարց իւրեանց, մինչև բազում կրօնաց արծա-
թոյ գնել զնոսա: Ի դիւանագրոց աստի և
յորոց անձամբ քննեալ տեղեկանային՝ յօրի-
նէին վկայաբանութիւնք, զորս և խնամով
հասարակաց պահէին յեկեղեցիս: Պատմեն
զսրբոյն Կղեմայ քահանայապետէ, զի գը-
պիրս եօթն կարգեալ էր առ այս ի Հռոմ,
յորոց իւրաքանչիւր էին բաժինք կրկին թաղք
քաղաքին. և սուրբն Կիպրիանոս զսոյն զայս
յանձն առնէր ընդ ամենայն ժամանակս հա-
լածանաց՝ նշանակել խնամով զօր վախճանի
իւրաքանչիւրոց ի սրբոց վկայից [2]: Բազումք
ի վկայաբանութեանց աստի կորեան յաւուրս
հալածանաց Դիոկղետիանոսի. և Թէպետ
Եւսեբիոս կեսարացի հաւաքեաց անդրէն զը-
բազումն յայնցանէ, այլ երկասիրութիւն նո-
րա չէ ի միջի: Այլ ի Հռոմ ևս յաւուրց
անտի քահանայապետութեան սրբոյն Կիրի-
գորի չգտանէին ուրեք վկայաբանութիւնք [3].
այլ կային գաւազանագիրք անուանց և երե-
վկայից, և թուակարգութիւն աւուրց և ա-
մաց երջանիկ մահուան նոցա կամ վկայու-
թեան: Հանդերձ այսու ամենայնիւ ուրեք

1 Վկայաբ. սրբոյն Տարաք. Կիպր. Թուղթ Լ.Ջ.:
և որոց ընդ նմա:
2 Գիրք Քահան. ի կղեմ: Ի թ. առ Երլոդ:
3 Գրիգ. գիրք Է. Թուղթ

ուրեք գեռ ևս պահէին անկորուստ. զորս ոչ բազում ժամանակք են՝ զի հաւաքեալ ի լոյս ածին Վենեդիկտեան հարք միանձունք ի լատին բարբառ՝ մակագրեալ զգիրսն «Վկայաբանութիւնք հատընտիրք և հարազատք ...· յորոց յառաջ բերեալ է իմ զգազմագոյնս յեկեղեցական պատմութեան իմում։

Ի հարցափորձս անդ յոլովակի բռնագատէին զսուրբս յայտնել և զհամախոհս իւրեանց, այս ինքն զքրիստոնեայ եղբարս, և մանաւանդ զեպիսկոպոսունս և զերիցունս որք ուսուցանէին զնոսա, և զաթոռակատգունս որ զբացուցանէին զնոսա՝ մերձ կացեալ ի վիշտն։ Վտիպէին զարձեալ տալ ի դուրս զաստուածաշունչ մատեանս. յոր առաւել ևս բռնացան յամն Հալածանաց Վիսկղետիանոսի, զհետ մոեալք անհետ առնել ի միջոյ զդիրս քրիստոնէից, եգեալ ի մոխ հնարել այնու բառնալ յաչխարհէ զկրօնսնոցա։ Վայն որոյ ամենայն ուրեք խոյզ և խնդիր առնէին, մինչև յեկեղեցիս անգամ մտանել և ի տունս գրակարդացից և ժողովրդականաց և որոնել զայնս, և զորս միանգամ գտանէին՝ ի հուր այրէին[1]։ Վյլաքանչելի եր երկիւղածութիւն քրիստոնէից յամենայն խոյզս և ի խնդիրս յայսոսիկ, այնպէս խորհրդապահք գոլով որպէս խորհրդոց հաւատոյ։ Վյ զուրուք ա-

1 Վկայաբ. պրոյն Փեղիկ. Ցիւրաբ։

նուէն ՚ի վեր հանէին. այլ պատասխանէին ինքնին աստուածուսոյցս լեալ, և յերկնից ընկալեալ օգնականութիւն, և զի ՚ի սիրոյ իւրեանց դրոշմեալ տանէին զդիրսն։ Ընդ դաւաճանս և ընդ մատնիչս համարէին որք միանգամ ևս տուեալ տային ՚ի ձեռս հեթանոսաց զաստուածաշունչ մատեանսն, և յայտնէին զտեղի թագստի հովուաց իւրեանց և եղբարց։ Եւ ինչ այլ ՚ի տանջանսն անդ լսելի լինէր ՚ի բերանոյ սրբոցն, բայց գովել զԱստուած, և կարդալ զաղաւթսն Տեառն և զօգնականութիւն։

ՅՕԴՈՒԱԾՆ ԱՕԹՆԵՒՏԱՑՆԵՐՈՒՆ

Բանաք։

Յետ հարցափորձիցն իբրև տակաւին անյողդողդ ՚ի միտս կային ՚ի քրիստոնէութեան՝ ածէին զնոսա ՚ի պատուհաս մահու, բայց բազումք այն էր զի ՚ի բանտ արկանէին առ յերկար և փորձէլոյ զհաստատութիւն մտաց նոցա, և ստէպ ՚ի տանջանս մատուցանէին։ Այն զի և բանտք ինքնին ազգ ինչ տանջանաց էին. ուր ՚ի խոր խաւարչին և ՚ի ժահահոտ վայրս հասանէր կալ խոստովանող վկայիցն Քրիս-

՚ի կայսր. սրբոց Ագաթ։

տոսի. արկանէին անդ շղթայս յոտս և ՚ի ձեռս նոցա, դնէին ՚ի պարանոցս նոցա կոձեղս ստուարս, կամ պրկոցս ՚ի բարձս նոցա առ ՚ի ՚ի վերամբարձ կամ ձգտեալ ունելոյ զնոսա ՚ի կալն նոցա յորսայս։ Ա՚երթ կոտորակս խեղ ցոյց կամ բեկորս սպակւոյ տարածեալ ՚ի յատակ բանտին՝ պարզէին զսուրբսն ՚ի վերայ մերկս մարմնով, կամ կեղեքեալս առ հասա րակ ՚ի հարուածոց գանից։ Ա՚երթ թողուին խղնայթել վիրացն, և սպանանէին զնոսա սո վու և ծարաւով. մերթ ևս խնամով դարմա նեալ կերակրէին առ ՚ի վերստին տանջել զնո սա։ Ա՚րգելեալ էր նոցա խօսել ընդ ումեք, գիտելով՝ զի յայնժամ դիւրաւ ևս զազգումն յանհաւատից ՚ի հաւատս ածէին, մինչև ըզ բանտապետն անգամ և զպահապանսն. բայց երբեմն հրաման տային մուծանել առ նոսա զորս համարէինն թէ կարող էին ընկճել զարուեստիւն նոցա. զՀայր, զմայր, զկին և զորդիս, որոց արտասուք և գորով այլ ինն ազգ չարչարանաց էր, և ինքնակարագոյն ևս յոլովակի քան զանձնջանսն իսկ։ Ա՚թէ ՚ի վը կայս անդ գտանէը կին յղի, հրաման էր յօ բինայ սպասել նախ՝ զի ծնցի զմանուկն, զոր ՚ի մահ վարէին. որպէս արարին ընդ սրբու հին Ա՚րանեակ՝։

1 Պաւլին. ՚ի սրբ. Եղան։ ԻԲ, առ կիպր։ Վ կայաբ. սրբ. Պրուդենտ. ՚ի տէն Վ հինգենտ. բոյն Պերպետ. և Եղան։ և յայլ վկ։ Ղուռնկ. Թուղթ

Քայց եկեղեցին մեծապէս խնամուն[ք] ըզսուրբ բանտարկելոցն։ Այտպէս յայց ելանէին սարկաւագունք 'ի սպասաւորութիւն նոցա [1], 'ի տարուբերս բանից, և առ 'ի տալ նոցա զկարևոր սփոփանս։ Նոյնպէս և բազումք 'ի հաւատացելոց գնային մխիթարել զնոսա և քաջալերել 'ի վիշտն [2]. երանի կարդային չարչարանաց նոցա, և փափաքէին հաղորդ լինել նոցա. համբուրէին զշղթայս նոցա, պատէին զվէրս, և զամենայն պակասութիւն աղքատութեան նոցա լնուին [3] բերեալ նոցա մսհիձս, հանդերձս և ազգի ազգի կերակուրս, մինչև գանգատել Տերտուղիանոսի զի խնջոյս առնէին 'ի բանտս [4]։ Այս ոչ 'ի մի ինչ խնայէին հաւատացեալք 'ի դէպս յայսոսիկ. եթէ արգելուին նոցա մուտք դրամբք ջանային յանձինս յանկուցանել զպահապանն և զբանտապետն։ Զվճատեալք 'ի խոտութենէ նոցա՝ յանձն առնուին զթշնամանս և զգանս, և սպասէին համբերութեամբ առ դրունս բանտին աքնելով զդիշերն ողջոյն, զի թերևս ընդհէսցի նոցա լնուլ զգութ սիրոյ իւրեանց. իսկ իբրև լինէր նոցա մտանել, համարէին եկեղեցի զբանսն՝ սրբեալս բնակութեամբ սրբոցն։ Զօթս առնէին անդ. գային քահա-

1 Կանոնք Ածաք. Ե. ա։ Կիպր. Թուղթ Բ։
2 Ա կայաբ. Պերպետ. ԼՆ։
3 Տերտուղ. առ կինն. Բ. դ։
4 Տերտուղ. յղ. Պահ. ժբ։

նայք պատարագս մատուցանել առ ի միսիթա-
րել զխոստովանողս՝ զի մի ելանիցեն յաչխար-
հէ առանց զօրավիգն ունելոյ զմարմին և զա-
րիւն տեառն Յիսի, որպէս ասէ ՚ի Գիրսն Կիպրիա-
նոս ՚: ՅԹէ եպիսկոպոս կամ քահանայ ոք էր
բանտարկեալն, առ նմա ժողովէին հաւատա-
կեալք՝ զի մի անցցէ զնոքօք բարեպատեհ ժամն
ընդունելոյ ՚ի նոցանէ զՀաղորդութիւնն սուրբ
և տանելոյ զայն ՚ի տունս իւրեանց: Ի կարևոր
դէպսն յայնոսիկ ամենայն ինչ օրէն էր, մինչև
ոմանց յառաջնորդաց՝ առ ՚ի չգոյէ սեղանոյ
պատարագել ՚ի վերայ ձեռաց սարկաւագացն.
և հրաշալի սուրբ վկայն Կիպրիանոս ան-
տիոքացի պատարագեաց ՚ի կուրծս իւր, ան-
շարժ կալկանդեալ ՚ի տեղւոջն ՚: Ել ինչ պարտ
է ասել քանի՞ քաջալերականք էին յորդորակքն
որ կցորդէին անդ ընդ մատուցման պատարա-
գին: Յկնէղեցին համարէն մեծարէր զսուրբ
բանտարկեալսն իբրու արդէն պսակեալս յեր-
կինս: Ոյժ հզօր էին խնդրուածք նոցա ա-
ռաջի առաջնորդաց ՚ի թողութիւն անկելոցն
տկարութեամբ ՚ի հալածանաց ՚ի կռապաշտութիւն. որպէս
զի ստիպել առաջնորդաց չափ գնել ժուժութեան
ոմանց ՚ի նոցանէ՝ որոց առաւել էր նախանձ
քան զխոհականութիւն [3]:

1 Կիպր. Ե, և Ջ:
2 Փիլոստ. Պատմ. Գ. ԺԲ:
3 Կիպր. յղ. Ընկ. ԺԳ. Թուղթ Ժ, ԺԱ, ԺԲ, ևն:

ՅՕԳՈՒՄՆ ԻՆՆԻՏԱՄՆԵՐՈՐԴ

Խնամք Նշխարաց սրբոց։

ՔՐԻՍՏՈՆԵԱՑՔ զկնի երթալոյն վկայից միոչ՝ի հրապարակս և՝ի տեղի տանջանացն, և՝ի վայրս ուր տանէին սպանանել զնոսա։ Հազուագիւտ այն էր զի՝ի բացի արտաքոյ քաղաքաց սպանանէին զնոսա, և բիւրաւորք՝ի վկայից աքանչելեօք կամ բնական զօրութեամբ տակացեալ զնացածն տանջանաց՝ կատարեցին զկեանս իւրեանց գլխատմամբ։ Կոստանդիանոս ընթանայիկ հաւատացեալք տեսող լինել տանջանաց նոցա, և քաջալերել զանձինս օրինակօք նոցա։ Ասէին դնդին յերեսին խօսից նոցա որ յոլովակի աղօթք էին, զոր օրինակ են աղօթք սրբոյն Պողիկարպոսի՝ յառաջ քերեալ՝ի թղթի անդ եկեղեցւոյն Զմիւռնոյ, և երդ սրբոյն Աթանագինեայ նահատի աստուածաբանի, որ՝ի նմին դարու եկաց, երդն զոր երգեաց նա խնդութեամբ՝ի մտանելն՝ի հուր, և աւանդեաց զայն զրով աշակերտաց իւրոց[1]։ Հազուագիւտ այն էր, զի և խրախուսէին հանդիսատեսք զվկայն. և Ասոգինէս բազում անգամ յաղագս այսորիկ

[1] Ան. նաև. Պատմ. Դ. ԺԲ։ Վկայաբ. Հռոմ.՝ի յունուար. ԺԲ։

զվտանգ մահու յանձն էառ, և բազումք իսկ նահատակեցան առ յորդորելոյ զայլս ՚ի մարտիրոսութիւն, որպէս և յիշատակեալքն ՚ի Թղթի սրբոյն Կիւրինեսիոսի աղեքսանդրացւոյ, և ՚ի հռչակաւոր Թղթի վէննական եկեղեցւոյն[1]։

Եչ ինչ զանգիտեալ երկնչէին մերձենալ առ վկայս ՚ի տանջանսն անդ և ժողովել կըտաւովք և սպնգովք զարիւնն որ հոսէր ՚ի վիրաց նոցա, և արկանել ՚ի շիշս զորս դնէին ապա ՚ի տապանս նոցա։ Պատանի կանաչք եօթն՝ որոց ըստ այսմ օրինակի ժողովեալ էր զշիթս արեան սրբոյն Վլասայ. և յորժամ հատանէին զգլուխ սրբոյն Կիւրիանոսի՝ կտաւս շուրջ զնովաւ տարածեցին հաւատացեալք զի առցեն զարիւն նորա։ Վճռապէս ջանային ժողովել և զմարմինս նոցա, կամ զմնացուածս մարմնոց նոցա. զի բազում անգամ ոսկր և աճիւն նոցա ևեթ մնայր. որպէս յորժամ ՚ի հնոյր ընկեցեալ լինէին, կամ առաջի գազանաց. յորմէ և սովորութիւն եղև նշխարս կոչել՝ զմարմինս նոցա։ Եչ ագահէին յարծաթառ ՚ի թափել զմարմինս նոցա ՚ի ձեռաց դահճաց, և ամիսոփել զնոսա պատուով ՚ի գերեզմանի, թէպէտ և բազումք մահ այնու ՚ի վե-

1 Եւս. Պատմ. Ը. ՟ի. Դ. փետր. Է։ Վկայաբ. սրբ. Տաւ. Ը։ Ե. ՟ա։ բագ. և որոց ընդ նմա։
2 Վկայաբան. Հռոմ. ՟ի

*բայ անձանց ածէին . այլ և ոչ սակաւք նահա-
տակեցան վասն Համբուրելոյ զմարմինս վը-
կայից , վասն խնամելոյ ի մի անարգեսցին
դիակունք նոցա , վասն խոյզ և խնդիր առ-
նելոյ ոսկերաց նոցին , և վասն Թաղելոյ զնո-
սա : Այլ կէսք 'ի լուալիս ընկեցան՝ փոխանակ
զի արտաքս հանեալ էր նոցա անտի զմարմինս
սրբոց : Սուրբն Թէոդիտոն պանդոկապետ
սպանաւ վասն Հանելոյ 'ի լճէն զմարմինս եօթն
կուսանաց ջրահեղձոյց կատարելոյ անդ :
Այլ զնշխարս սրբոյն Իգնատիոսի 'ի Հռով-
մայ մինչ Այնտիք ածին աշակերտք նորա ' :*

*Խնամք հաւատացելոյ վասն նշխարացն
գրգռէին և ևս զՀեթանոսս 'ի ցրուել զմար-
մինս վկայիցն սպանելոյ : Այն զի կարծէին
ինն կարձել նուաւա զոյս յարուԹեան նոցա .
'ի զուր յուսայք , ասէին , զի մարմինք ձեր
կայցեն մինչև ցօրն յորում Համարիք զգենուլ
զայն վերստին, ակն ունելով զի կանայք ոմանք
զառանցեալք 'ի բանս ձեր՝ զմտսեալ պահես-
ցեն զնոսին 'ի կերպաս մեծագինս . այժմ տե-
սանիցէք : Այս զայս ասացեալ՝ արկանէին զնո-
սա ժանեաց գազանաց . խառնէին զնոսա ընդ*

1 Վ կայաբ . սրբոյն Թէոդ : Հեր . յղ . գր . Ոսկեբ : Սոսը-
երկր . Հռոմմ . Ա . ը , է , ևն : Թաղել եկեղ . վ Հննայի առ
Նշաեբեայ . Պատմ . Ն . ա : Վ կայաբան . սրբ . Տարագ . ևն :
Պրոկենտ . ի տէն վ Հնկեա : Վ կայաբ . Հռոմմ . ի յուն-
ժէ . և ի փետր . ժէ . և ի
յունուարի իէ : Տէրտուղ .
յղ . Պատկ . է : Կեպր . Թուղթ
Ղ :

դիակունս սուսերամարտից իւրեանց կամ այլոց անօրինաց. ամպին ՚ի ջուր՝ կապել քարինս մեծամեծս ՚ի նոսա. այրելին զնոսա, և տալին հողմոյ զաձիւն նոցա։ Այլ ամենայն ձգանց նոցա ընդունայն լեալ՝ բազմագոյնք ՚ի նշխարաց սրբոց պահեցան անկոր ուստ ջերմեռանդեամբ հաւատացելոց, կամ սքանչելեօք իսկ՝ զոր առնէր Աստուած յայնպիսում ժամանակի։ Պատուէին զչիրիմս յորս դնէին մարմինք նոցա։ Խազումք ՚ի սրբոց կալեալ նահատակեցան ՚ի հսկելն կամ յաղօթել առ տապանօք վկայից, կամ ՚ի կատարել զոմնս նոցա. քանզի որպէս վկայէ Տէրտուղիանոս և սուրբն Կիպրիանոս՝ յամենայն ամ ոճնախմբելին զյիշատակ նոցա. վասն որոյ և խնամով նշանակէին զոր կատարման նոցա ։

ՅՕԴՈՒԱԾՕ ՔԱՀԱՆԱՅԻ ՈՐԴՈՅ

Խոսուովանողք։

ՕՂՈՐՍ ոչն կամէին սպանանել՝ տարագիր առնելին յաշխարհէ իւրեանց, և կամ աքսորելին ՚ի կղզի ինչ անմարդաբնակ, կամ ՚ի քա-

1 Կիպր. Թուղթ ՀԱ։

ղաքս ինչ քարքարոսաց յերլս սահմանաց տէ-
րութեանն ։ Օ տարադրութեանն պատիժ
տային աւագաց, և հասարակապատիւ մարդ-
կան զաքսոր՝ որ մահ ինն քաղաքական համա-
րէր . իսկ գնուաստս և զանանկս դատապար-
տէին ՚ի գործ արքունի, և մանաւանդ ՚ի պե-
ղել զբովս ։ Որք որպէս գերիք աշխարհին՝ տա-
նէին սովորաբար զրոշմն ՚ի ձակատ իւրեանց
խարեալ շանթիւ երկաթիւ, զի ծանիցին ՚ի
փախչելն ։ Մանակապս կրէին հանապազ. և կե-
րակուր նոցա էր խոշոր . ձորձք հնոտի, և գա-
նաձեւ լինէին յաձախ և կոփահարէին յամե-
նեցունց ։ Պարզաբար ասել, ոչ ինչ նուազ
ողբոմ էր պայման կենաց նոցա քան զդատա-
պարտեալսն արդ ՚ի պատերազմիկ նաւս ։ Ին-
ծապէս փութային քրիստոնեայք զօրավիգն
լինել նոցա, և դիւր առնել ըստ կարի վշտաց
նոցա ։

Որմենեքին նոքա որ վանն հաւատոց մեռա-
նէին ՚ի պատուհասսն յայնոսիկ՝ ընդ սուրբ
մարտիրոսս համարէին ՚ . իսկ որոց գարձ ընդ-
հէր աքսորանացն կամ գերութեան, ընդ խոս-
տովանողս դասէին . քանզի այսպէս կոչէին
չարչարեալքն վանն հաւատոց, և ամենեքին
առ հասարակ որ յայնոսիկ առաջի դատա-
ւորաց խոստովանէին զառ ՚ի Քրիստոս զհա-
ւատսն ։ Պատուհասել մեծարէին նոքա զամե-

՚ Կանոնք Ածաք. Ե. ա, ը։

նայն աւուրս կենաց իւրեանց, և բազումք ՚ի նոցանէ յեկեղեցական իշխանութիւնս վանն Մեծի վաստակոյն ամբառնային [1]։

ՅՕԴՈՒԱԾՕՐՄԱՆԵՐՈՐԴ ԸՈՒՆՋՆԵՐՈՐԴ

Նշմ։

Իսկ որք նկուն լեալ ՚ի հալածանս՝ ՚ի բաց կայլին ՚ի հաւատոց առ տկարութենէ իսկ կամ ՚ի բռնութենէ տանջանաց, զնոսա ուրացողս կամ անկեալս ՚ի հաւատոց կոչէին, և նզովէին զայնպիսիսն ՚ի չապաշաւելնոցա յայտ նապէս [2], *հատեալ զնոսա՝ ոչ միայն ՚ի սուրբ խորհրդոց, այլ և ՚ի մնանելոց յեկեղեցի արգելուին զնոսա և յայր հաղորդութենէ ընդ հաւատացեալս* [3]։ *Իսկ որք սեղանակից լինէր նոցա և ոչ խօսակից, այլ փախստական լինէին ՚ի նոցանէ որպէս ՚ի հարեալոց ժանտ ախտիւ։ Այսմ իրի պատուիրեր Պօղոս առաւելագոյն և Յանիւ զգոյշ կալ ՚ի չար քրիստոնէից քան ՚ի հեթանոսաց. յորոց անմարթ իսկ եր որոշել զանձինս բոլորովին առանց ելանելոյ յաշխարհէ կամ ՚ի կենաց իսկ։ Այսպիսի էին գնացք հաւատացելոց ոչ միայն ընդ ուրացողս կամ*

1 Կիսը. Թուղթ ԼՂ։ 3 ա Կոր. Ե. 9։
2 Կանոնք Ասաք. Ե. ք։

ընդ որս ՚ի կռապաշտութիւն դառնային, այլ և ընդ մոլորեալս, ընդ հերձուածողս և ընդ յայտնի մեղուցեալս. քանզի և ՚ի ժամանակս պայծառութեան եկեղեցւոյ կային վատք ՚ի քրիստոնեայս, և գանգատեր Պօղոս առ Կորնթացիս զբազմաց որ դեռ ևս չէին ապաշխարեալ ՚ի վերայ պղծութեանն զոր գործեցին[1]. և զբազմաց ևս առ Փիլիպպեցիս, զորս և թշնամիս կոչէ խաչին Քրիստոսի[2]: Այսպիսիք ամենեքին որոշեալ կային ՚ի հաւատացեալց. և առաքելոյդ ևեթ և երիցանց հրամանն էր խօսեցեալ ընդ նոսա՝ առ ՚ի յորդորել զնոսա ցօրէափ եր ակնկալութիւն դարձի նոցա. այլ աղօթք անդադար լինէին վասն նոցա: Այս օրինակ գնային ընդ առապաշխարս[3]:

ՅՕԴՈՒԱԾՈ ՔԱՀԱՆԱՐՈՒՈ ԵՐԿԱՐՈՒՈ

Ապաշխարութիւն:

Ասկ զեկեալսն յապաշխարութիւն ընդունէին սիրով մեծաւ, բայց խոհականութեամբ յոյժ: Յայտ առնէին նոցա՝ զի ոչ դիւրաշնորհ

1 ԲՇ Կորն. Ժ. 21:
2 Փիլիպպ. Գ. 18:
3 Թուղթ Ժառանգ. Հռովմ:
առ Կիպր: Որոգ. ընդդէմ Կէլս. Ի. և ՚ի Մատթ. Ճառ. Լե:
Յերեմ. Ճառ. Թ:

հելի էր պարգև Թողութեան. վասն որոյ փոր-
ձէին առ ժամանակ մի առ ի զջաւթ առնուլ
զհաստատութեան մտաց նոցա և զանշարժու-
թեան[1]: Այսպիսկոպոսին էր անկ ընդդէմ ծանր
մեղաց կշռել զապաշխարանն. նա գատէր՝ և-
թէ արժանի ընդունելութեան էր մեղաւորն
յապաշխարութիւն, և կամ ցօրչափ ժամա-
նակս պարտ էր նմա ապաշխարել. ի ծածուկ
պարտ էր առնել զապաշխարութիւնն թէ հրա-
պարակաւ. ի դէպ էր ի չինութիւն եկեղե-
ցւոյն և զխոստովանութիւնն մեղաց առաջի ա-
մենեցուն առնել. քանզի քաղցում այն էր զի
առաջի քահանային ի ծածուկ խոստովան
լինէին զմեղս[2]: Ո՛մանկահասակ ոչ վաղվա-
զակի ընդունէին յապաշխարութիւն՝ երկու-
ցեալ յանհաստատ տիոցն և ի մտաց խոհեմա-
յին և զնոցանէ որ ի յետին չունչ կենաց խընդ-
րէին ապաշխարել. այսպիսեաց՝ յորժամ հաս-
տատէին յառողջութիւն՝ հարկ ի վերայ դը-
նէին ընդուլ զկանոնական ապաշխարանսն[3]:

Կաղումք էին որ հրապարակաւ ապաշխա-
րէին, և ոչ ոք գիտէր զանցանացնոցա: Կաղ-
մաց ևս ի ծածուկ էր ապաշխարութիւն՝ նա
և վասն ծանր մեղաց. որպէս վասն չնութեան
արամբեաց գաղտ յարանցն իւրեանց, և այլոց

1 ժող. Նիկիա. լբ. Թուղթ ՃԽԶ:
2 Որոգ. ի Սարմ. Հառ. Բ. 3 Կիպր. առ Ջեռոն: Օ.
Սոկր. Պատմ. Ն. Ժթ: Վանդ. գոտա. Հառ. Նէ. յղ. Ցաճ:

մեղաց՝ որոց յայտնի ապաշխարութիւն գայ-
թակղութիւն մեծ ածէր՝ի վերայ, կամ թեր-
եւս մահ իսկ՝ եթէ հրապարակէին մեղանքն։
Կայր այնպէս յաձախ եր առ քրիստոնեայս սո-
վորութիւն պահելոյ, հսկելոյ, աղօթելոյ, և հնձե-
լոյ՝ի վերայ գետնոյ առ ջերմ սիրոյն նոցա եւթը
յաստուածպաշտութիւն, զի սակաւուց եր կաս-
կածել թէ վասն յանցանաց այնպէս ապաշխա-
րէին։ Ըստ ծանրութեան յանցանաց ձգէին
և ժամանակք ապաշխարութեանն. այլայս ոչ
միօրինակ եր յամենայն եկեղեցիս և յամե-
նայն ժամանակս. զի նախնի կանոնք ապաշխա-
րութեան գրեթէ առ հասարակ խստագոյնք
էին։ Մեծն Կարսեղ վասն գողութեան եր-
կուս ամ ապաշխարութեան կարգէ. վասն
պոռնկութեան եօթն, վասն սուերգծութեան
մետասան, վասն չնութեան հնգետասան,
վասն մարդասպանութեան քսան, իսկ վասն
ուրացութեան՝ զամենայն աւուրս կենաց[1]։

Որոց պատուեր եր ապաշխարել յայտնա-
պէս՝ գալին յանդիման լինէին՝ի գուռն եկե-
ղեցւոյն յառաջնում՝ աւուր քառասնորդական
պահոց՝ի զգեստս գծուծս աղտեղիս և պա-
տառատունս. քանզի և այսպիսի էին հան-
գերձք սգոյ նախնեաց՝ ոչ միայն առ Հրեայս,

1 ժող. Ակաց. Ա. թ։ Թուղթ Հ. և Գր. առ Հրուա.
Օգոստ. Թուղթ ՃԻԲ. առ. տիկ։ Բարս. առ Ամփիլոք.
Յան. Պրոսպեր. Բ. է։ Գևնդ. լը. են։

որպէս յայտնի արարեալ է մեր այլուր՝, այլ և առ Յովնս և առ Հռոմն մինչև՝ ի վախճան իսկ ժողովրդ դարու եկեղեցւոյն՝: Ի մտանել նոցա՝ ի տաճարն՝ մխիթը զգլխով նոցա ցանէր առաջնորդն, և զգեցուցանէր խաբազն: Ընդ՝ ի գուշն անկեալ նոցա խոնարհեալ կայինէրկիր մինչև ցաւարտ աղօթիցն զոր մատուցանէր եպիսկոպոսն հանդերձ երիցամբք իւրովք և ժողովրդովք: Ի վերջ աղօթիցն առնէր նոցա յորդորակ, և ծանուցանէր զի արտաքս հանելոց է զնոսա՝ ի տաճարէն առ ժամանակ մի՝ որպէս եհան Քրստուած զԴաւի՝ ի դրախտէն վասն մեղաց նորա: Ապա քաջալերեալ զնոսա յորդորէր յաչխատութիւն յուսալով յողորմութիւնն Քրստոջ: Այս ապա հանէր զնոսա յեկեղեցւոյն, և անդէն վաղվաղակի փակէին զդրունս ընդդէմ նոցա: Յայնմ օրէ և առ յապա արգելուին զնոսա՝ ի տեղի մի՝ պարապեցուցեալ յայլ և այլ առաքինական վաստակս. զօրհանապազ կամ ստէպ տային պահելնոցա հացիւ և ջրով, և կամ յայլ ինչ ժուժկալութեան կալ ըստ ծանրութեան մեղաց իւրեանց, և ըստ զօրութեան իւրաքանչիւր, և ըստ բորբոքեալ սիրոյ: Յայնի աղօթս առնէր յերկար՝ ի ծունր կամ խոնարհեալ յերկիր, հնկել ննջել գետ-

1 Կենցալ Խրայ. Յոգ. ԺԴ: Նակեր. յղ. Նչաչն:
2 Հերոնիմ. տապանագիր
Փաբիոլայ: Սոզոմ. Պատմ. Եկ. Ժղ: Ցերտուղ. յղ Նչաչն. Ք:

նախշի, և տալ աղօթումն իւն ըստ ձեռին քա-
ւականի։ Յաւուրս ապաշխարութեան իւ-
րեանց հեռանային ոչ միայն յամենայն զբօսա-
նաց, այլ և յակմբից, ՚ի գործոց պաշտամանց,
և յամենայն իսկ հաղորդութենէ հաւատացե-
լոց ուր կարելոր ինչ իրք ոչ ստիպէին զնոսա։
Ի տօնս ևեթ և յաւուրս Կայից՝ կամ պահոց
չորեքշաբաթի աւուրն և ուրբաթու՝ ելանէին
արտաքս, և գայիսյանդիման լինէին ՚ի դուռն
եկեղեցւոյն։ Ջգուշացուցեալ զնոսա առ ժա-
մանակ մի այսոցիկ կարգաց՝ մուծանէին ապա
յեկեղեցի, ունկն դնել ընթերցուածոց և
քարոզութեանց. բայց պարտ էր նոցա նախ
քան զսկսանել աղօթիցն ելանել վերստին։ Ու-
սակաւ սակաւ թոյլ տային նոցա աղօթել ան-
դէն ընդ հաւատացեալս, բայց ՚ի գուշս ան-
կեալ յերկիր, և ապա յոտս կացեալ իբրև
զայլս ՚։ Պարձեալ և այլ ազգ ևս որոշէին զը-
նոսա յայլոց հաւատացելոց, ՚ի ձախակողմն
կոյս կացուցանելով զնոսա յեկեղեցւոջ։ Յա-
սացելոցս յայտ է զի ՚ի չորս խումբս բաժանէին
ապաշխարողք. յաղբականս, յունկնդիրս, ՚ի
գետնամած կամ ՚ի որ յերկիր խոնարհեալ աղօ-
թէին, և յոտնակացս. և ՚ի չորեսին կարգս
յայսոսիկ ամենայն ժամանակ ապաշխարու-
թեանն բովանդակեր. զոր ըստ այսմ ասան-

՚ Ա՛ծբոս. յղ. Ապաշխ. Ա. ժէ։ Ս. եպիփ. ձառ Ը։ Ժողովնկիւս։

դեալ տեսանեմք անդստին յաւուրց անտի սըր-
բոյն Կիրիդորի աքանչելագործի որ եկաց իբր
յամի երկերիւրորդի վաթսներորդի։

Որինակ իմն, որ կամաւ սպանաներ զայր
կամ զկին՝ զամն չորս հասաներ նմա կալ՝ի
մէջ ողբականաց, ՚ի խուժդուժ նոցին ասեմ՝ որ
՚ի դրունս եկեղեցւոյն Աստուծոյ ՚ի ժամ աղօ-
թիցն և կային արտաքոյ, ոչ՚ի գաւիթն՝ այլ
՚ի բակի բայօթեայ. զգենոյր խարազն, և
մխիթ ցաներ զգլուխ և ոչ գերծոյր զմօրուսն։
Այլ՚ի տեսիլեայն ողորմ աղերս արկաներ ո-
րոց մտանելին՚ի տաճարն գթալ՚ի նա, և ա-
ղօթս առնել վասն նորա. քանզի համարէին ուխտ
եկեղեցւոյն յաղօթս կայր վասն ապաշխարո-
ղաց՝ որպէս ցարդ և յաւուրս քառասնորդա-
կան պահոց։ Հինգ այլ ամն ապա կացեալ՚ի
դասս ունկնդրաց՝ մտաներ յեկեղեցի ունկն
դնել ընթերցուածոց. բայց կայր ընդ յարկաւ
անդաստակին՚ի ժողով երախայից, և ելանէր
արտաքս նախ քան զսկսանել աղօթից։ Ապա
անցնեալ երերորդ խուժդն, և կայր յաղօթս
միաբան ընդ հաւատացեալս, բայց առ դրան
դեռնամած՚ի յատակ եկեղեցւոյն, և ելանէր
արտաքս՚ի միասին ընդ երախայից։ Այլ իբրև
ընոյր այսպէս զեօթն ամն՝ գայր մտանէր՚ի
վերջին խուժդն՝ և այլ չորս և ամն անցուցա-
նել անդէն. և աղօթէր յեկեղեցւոջ առընթեր
կալով հաւատացելոց՝ յոտնկայս իբրև զնոսա.

այլ չէր օրէնն նմա մատուցանել ընծայս, կամ հաղորդել։ Իսկ յաւարտել ողջ քան ամի ա- պաշխարութեանն՝ ընդունէին զնա ապա 'ի հաղորդութիւն սրբոյ խորհրդոյն[1]։

Ըստ սմին և զընացելոյն հնգետասան ամս ապաշխարութեանն բաշխեալ սահմանէին. զամն չորս յողբականաց գունդս կացուցեալ զնա, հինգ այլ ամս ընդ ունկնդիրս, չորս ընդ գետնամածս, և երիցս ընդ ոտնակաց. ըստ այսմ իմա և զայլոց աղգի աղգի մեղուցելոց։ Ի ժամանակի ապաշխարութեանն ստեպ յայց ելանէր եպիսկոպոսն անձամբ և 'ի ձեռն երի- ցանց առ 'ի քննել և յանձանձել զնոսա ըստ իւ- րաքանչիւր բնաւորութեանցն՝ որոց ինամով մատակիր լինէր[2]։ Ինչ իրախոյս տայր, զո- մանս զարհուրեցուցանէր, զայլս մխիթարէր, և ըստ անձանց և ըստ հիւանդութեանց ըզ- դեղն մատուցանէր. զի որպէս հոգևորական դեղ իմն համարէին առաքինորդք զսպաշխա- րութիւնն, գիտեալ զի որչափ 'ի մարմնոյ բժըշ- կութիւնն՝ գէթ նոյնչափ և 'ի բժշկութիւն հոգւոց պէտք են գիտութեան, իմաստութեան, երկայնմտութեան և մտադիւր խնամոյ. և զի անմարթ է բուժել զախտաւոր սովորու- թիւնս առանց երկար ժամանակի և խիտ

[1] Բարս. կան. ՃԻԶ։ Ալպ. ԺԷ։ Բ. Է, Ժ։ առ Գրիգ. պաղչ. Զ. ԺԸ։ Ամիրտս. յղ. Ալպաշն. Ա. Է, Ա։

[2] Բարս. գիրք ՁԴ, ՁԷ։ Կանոնք Ալաք. Բ. Ը, Է, ԼՀ։

կարգաց [1]։ Ո՛չ զուշանային յոյժ չվհատեցուցանել զմեղուցեալս կարի խստութեամբ, զի մի յուսահատեալ նոցա դարձ արասցեն անգրկեն յաչխարհ և 'ի հեթանոսական վարս [2]։ Ոչ թոյլ տալ զհաւատացեալսն՝ հնարելին սանձել զկարձմտութիւն նոցա, գիտելով զի քանի ինասակար է վաղվաղել զարձակումն 'ի մեղաց։ Այլ ոչ ումեք տային կատարեալ թողութիւն՝ բայց որոց արժանի լինէին այնմ արտասուօք և փոխոխութեամբ վարուց, և ոչ երբեք որոց ժամին, և առաւել որոց սպառնային. և ոչ դիւրին ինչ էր ածաբեկել զառաջնորդսն՝ որք ուսեալ էին ժուժկալել հալածանաց հեթանոսաց [3], և որոց կէտ անշարժելի առաջի եդեալ էր վաստակել յամենայն զօրութենէ 'ի փրկութիւն հոգւոց, այլ ոչ կորուսանել զանձինս ընդ անուղղայս։ Այլ ոչ էր իրի մարթ ապաշխարողի անհրաման յառաջնորդէն՝ 'ի միջէ յայլ անցանել կարգ։ Այլ էր ապաշխարութեան սահմանեալ ժամանակ անփոփոխելի [4]. զի յիշխանութեան առաջնորդին էր համառօտել զայն ըստ պատշաճի իրաց. որպէս 'ի տեսանել զեղջ անսովոր յապաշխարողին, 'ի հիւանդանալ նորա առ 'ի մահ, 'ի յառնել հալածանաց և կամ յայլ ինչ սոցին սակի իրս.

1 Բարս. գիրք ԽԱ։ Ոսկեր. յղ. Քահան. Ր։ Ամիրտս. 'ի Սաղմ. ԼԶ. և Թուղթ ՃԹ։ Գրիգ. Ասծաբ. Ճառ. Ա։

2 Ճառանգ. Հռ. Թուղթ ԼԱ։

3 Պիսք. Թուղթ առ Կուռն։

4 Ամիրտս. յղ. Ապաշխ. ԻԱ։

զի յայնպիսում ժամանակի աձապարեալ փուճ
թային չթողուլ մեռանել նոցա առանց ընդունելոյ զսուրբ խորհուրդս [1]։ Այս թողուլթիւն
որով համառօտեին զկանոնական ժամանակ
ապաշխարութեանն՝ ներողութիւն կոչեր. և
բազմայ իսկ ընդհակին զայն յամս հալածանաց ըստ աղաչանաց խոստովանող վկայից որ
'ի բանտի կամ յաքսորս կային։ Այնք լինէր
ումեք մեռանել յապաշխարութենէ անդ ամն
յառաջ քան զարձակումն, ոչ անյոյս լինէին
զիրկութենէն նորա, այլ աղօթս և պատարագս մատուցանէին վասն նորա [2]։

Յորժամ'ի Ձահթուէր եպիսկոպոսին վախճան առնել ապաշխարութեան, արկանէր զայն
սովորաբար 'ի վերջ աղուհացին. որպէս զի
լցի ապաշխարողին առնել սկիզբն հաղորդելոյ սուրբ խորհրդոց 'ի ժամն գաւակին [3]։ Այլ
իբր 'ի մեծի հինգշաբաթի աւուրն գային
յանդիման լինէին ապաշխարողք 'ի դուռն եկեղեցւոյն։ Ընդ եպիսկոպոսն յետ երկար աղօթից մնծանէր զնոսա ըստ աղաչանաց սարկաւագապետին, որ յուշ առնէր նմա զի զթութեան էր օրն, և արժան և իրաւ՝ զի տաւա-
ղեսցէ եկեղեցի 'ի ծոց իւր զմոլորեալ ոչխարսն
'ի ժամանակին յորում ձեռնտուեցուցանէր զհօտ իւր
նորածնեալսվքն յաւազանէն։ Յայնժամ եպիս-

[1] Կիպր. Թուղթ Բ։ Ժող. Կարթագ. Դ. ծԹ։
[2] Ժող. Արեւլտ. Բ. իԲ։ [3] Կարգ Հռոմ. ժ։

կոպան Ձառ. արկեալ զողորմութենէն Աստուծոյ և զնորոգութենէ կենաց զոր պարտ էր նոցա երևեցուցանել յանձինս, հրամայէր նոցա ի նշան կատարեալ յանձնառութեանն համբառնալ զձեռս իւրեանց։ Եւ այնորիկ խոնարհեալ ինն յաղաչանս եկեղեցւոյն, և վրստահացեալ ի դարձ նոցին՝ տայր զարձակումն հանդիսիւ[1]։ Եայնմ հետէ փոքրեալ նոցա ըզհերս և ի բաց եղեալ զհանդերձս ապաշխարութեան՝ սկսանէին կեալ որպէս զայլս ի հաւատացելոց։ Աչաքէն ըստ ժամանակաց և ըստ տեղեացն ոչ դոյզն փոփոխութիւնք եղեն յարարողութիւնս յայսոսիկ, այլ ամենեքին առ հասարակ ի մի ինչ ուշ ունէին, ազդողականքն յոյժ առ ի յայտ առնել զգժնդակութիւն մեղաց, և զգժաւարութիւն ի բաց թօթափելոյ զայն, և առ ի յաւելուլ զգաստութիւն այնոցիկ՝ որոց պահեալ էր զանմեղութիւն։ "Աթէ ընդ .. հեր մարգկան, ասէ սուրբն Գրիգորիոս, .. անդէն վաղվաղակի դառնալ յառաջինն երա. .. նութիւն իւր, որպէս խաղ իմն համարէր նա .. զանկումն ի մեղս մահացուս .. "։

Աթէ ապաշխարողն անկանէր վերստին, անդրէն պարտ էր նմա սկսանել զապաշխարութիւնն։ Եորժամ տեսանէին զի ոչ յօգուտ ի կիր արկանէր զայն, և ոչ ի նորոգումն կենաց ընդէր, թողուին զնա ի կարգ ապաշխարողաց՝

[1] Ա. Եզեգ. Ձառ. Ի, Բ, և ԺԱ։ [2] Ձառ. Ի։

և ոչ մի ինչ խորհրդոց հաղորդս արարեալ զնա։ Իսկ իբրև յետ արձակելոյն գործէր նոր ոձիրս յանցանաց, 'ի սպառ փակելին նմա այնու հետև ամենայն խորհուրդք. քանզի մի անգամ և եթ ընդհարել ապաշխարել հրապարակաւ։ Ըստ համարեին աղօթել վասն այնպիսւոյն և յորդորել զնա 'ի գարձ, և յուսալ յողորմութիւնն Աստուծոյ անսպառ։ Օ՛ի անօգուտ գոգցես վարկանելին զապաշխարութիւնն որում յոլովակի 'ի մեղս գարձ առնէր։ Այլ և մեղք ինչ, որոց գործողք՝ թէպէտ և 'ի բոլոր սրտէ ղջայցեալք՝ կային ընդ ապաշխարող զամենայն աւուրս իւրեանց, և միայն 'ի ժամ մահուն շընորհէր նոցա հաղորդութիւնն սուրբ։ Իսկ ուրացողք որք օրհասի մահուն ինային առ 'ի խնդրել զապաշխարութիւն՝ անընկալք լինէին[1]. և այլոց մեղաւորացն իսկ՝ որ ընկալեալ լինէին՝ կէզակարծ համարէր ապաշխարութիւնն, իբր առ ակի յաւիտենական տանջանաց միայն խընդրեալ։ Որք միանգամ 'ի գունդս ապաշխարողաց մտեալ էին, նա և զկնի արձակման և հաշտութեան ընդ եկեղեցւոյ՝ չմարթէին ամբառնալ 'ի քահանայութե կամ յայլ ինչ պատիւ եկեղեցական[2]։ Իսկ իբրև յերիցանէր որ կամ յեկեղեցականաց գործէր ինչ մեղս՝

1 Օգոստ. թուղթ Ծ. առ Մակեդ։ կղեմ. ալեքս. Յաչախ. Ե։

2 Կիպր. թուղթ Ծ. առ Աւտոն։ ժող. Արելատ. Ա. իբ։ 3 ժող. Նիկ. կան. Թ. Ժ. ժող. Կարթագ. Դ. ժը։

այր վասն պարտ էր ապաշխարել յայտնապէս, ոչ միայն ՚ի պատուոյն անկանելոյ, և մերժելոյ յամենայն պաշտամանց, և ընդ աշխարհականս համարելոյ, այլ և այլ ինչ ապաշխարանս չածէին ՚ի վերայ՝ զի մի կրկին լիցի նմա պատուհաս, և կամանարգութիւն սրբութեան պատուոյն՝:

(ՃՀ) Երևեալ հիասցի ոք ընդ նախնեացն կարգաւորութիւն. այլ և զայն չէ օրէն անգիտանալ զի սակաւ յոյժ յայնժամ՝ ՚ի քրիստոնեայս լսելի լինէին մեղք ծանուցեալք՝ արժանիք այնպիսի պատուհասից: Օ՛ի զոր օրինակ աջք աղնուականք բարեկիրթք և բարեհամբաւք գրեթէ ոչ երբեք անկղնտանան յոռիոյս՝ որում կից են պատիժք օրինաց և կեղտ գատապարտութեանն, նոյնպէս ուր ուրեմն դէպ լինէր ումեք ՚ի քրիստոնէից որ այնպէս ընտիրքն էին և ուսեալք՝ համարձակել ՚ի ընութիւն կամ ՚ի մարդասպանութիւն, և կամ յայլ անօրէնութիւնս մահացուս: Հետանոսք անգամ գիտէին զՀրաժեշտ քրիստոնէից յամենայն անօրէն հեշտութեանց աստի. և սովին իսկ կշտամբէր դատաւորն զսրբուհին Վիբրա [2]. և աղաղակէր Որոգինէս թէ ամբարշտութիւնք այնպիսիք չգտանին ՚ի ձեմարիտ քրիստոնեայս [3]: Հաստատ Տերտուղիանոս՝ զի ՚ի վարուց իւրաքանչիւր դիւրին էր ընտրել ընդ ուղղափառն և

1 Կանոնք Ածաք. ԻԴ:
2 Վ կայաբ. սրբուհ. Վիբրայ:
3 Որոգ. ընդդէմ Կելս:

ընդ չարափառ. և յանդիմանել համարձակ ըզ-
հեթանոսս՝ զի զբանաս նոցա ընդունին հեթա-
նոսք նմանիք նոցին, կամ քրիստոնեաք վասն
քրիստոնէութեանն եւեթ դատապարտեալք[1]:
Եւ յաւելու նոյն ինքն.“Ո՛չ եթէ այլով իւիք
„ամբաստանիցին, ասէ, ոչ և իցէն քրիստո-
„նեայք. զի անմեղութեի պարտք են մեզ ան-
„հրաժեշտ, և Ճանապէմք զայն ոչ թերակա-
„տար, զի ինքն Աստուած վարժապետն ամե-
„նակատար ուսոյց մեզ զայն, և ամենայն ըզ-
„գուշութեամբ պահեմք մեք զնոյն. զի պա-
„տուիրան է դատաւորի՝ որում անսասանել ոչ
„է կար„[2]:

ՅՕԳՈՒՍՏՈՍ ՔԱՂՆԵՐՈՒՄ ԵՐԲՈՐԴ

Վասն Ճգնաւորաց և կուսանաց:

Եւ զի բազումք ի քրիստոնէից առանց ու-
րուք բռնադատելոյ ինքեանք կամաւ յանձն առ-
նուն զամենայն գործս ապաշխարութեան,
առ ի նմանել մարգարէից և մեծին Յովհան-
նու Մկրտչի, և առ ի կրթել յաստուածա-
պաշտութիւն, որպէս ասէ Պօղոս[3], Ճնշե-

[1] Տե՛ր տաւղ. յղ. Իրաւ. խա՛, խե՛:
[2] Պատասխ. ի՛, է՛:
[3] ՅԱ՛ Տիմ. Դ. 7: ա՛ Կորնթ. թ. 26:

լով զմարմինս իւրեանց և հնազանդեցուցանելով. և ձգնաւորք այնպիսիքն կոչեին Աքեղբուին զանձինս ի տունս, զատուցեալ և մեկուսացեալ յամենայն իրաց աշխարհիս, և սրբութեան վարուց պատկառ կացեալ, և ոչ շատացեալ ընդ ժուժկալ կեանս քրիստոնէից՝ առաքինանային և յայլ պէսպէս ձգնութիւնս և ի պահս անսովորս։ Ջորակեր լինէին, և զի և անկերակուր բոլորովին անցուցանելով զերկուս և զերիս աւուրս՝ և աւելի։ Ասանէին խաբազնագեացս լինել, և գնալ բոկոտն, ննջել գետնախշոյ, հսկել զմեծ ժամս գիշերոյ, վերծանել անդուլ զգիրս սուրբս, և աղօթս առնել անդադար որչափ էր նոցա կար և զօրութիւն։ Խաղաղարեւելի հայրապետք և վարդապետք անուանէք կային ի ձգնազգեցից սոսին, և Յովհաննէս գնացին վարս առաքինացաւ, և եղեալ զայն բարձրագոյն իմն կարգ կենաց ի մէջ քրիստոնէից։

Ար օրիորդք բազումք նուիրեցին Աստուծոյ զկուսութիւն իւրեանց խրատուք ազգականացն, և կամ յանձանց յորդորելք։ Այսպէս էս ի ձգնութեան վարս նահատակէին առաջինչ համարեալ զկուսութիւն առանց մեռելութեան վարուց և լուսութեան, առանձնութեան, աղքատութեան, վաստակոց, պահե-

1 Նշանաբ. Պատմ. Ջ. գ. և 2 Որպ. ի թիւն, Հատ. իե։ Պատրաստ։

յողուԹեան, տքնուԹեան և անդուլաղօԹից[1]։ Ո՛չ հաշուէին ընդ ստոյգ կուսանս՝ զորս կամէին հաղորդ լինել զբօսանացս աշխարհի՝ և օրինաւորացն անգամ, կամ մտանել յակումբս մեծամեծս, կամ խօսել ախորժելիս, և յուշանել զգեղ մտաց. և ս առաւել որք հանդէս առնէին գեղեցկուԹեան, զարդարէին զանձինս, օծանէին իւղով անուշիւ, զատորոտս հանգերձիցն քարշէին, և Ճոխս Ճեմէին։ Այսքան Ասիպրիանոս գրեԹէ ոչ ինչ աւելի քան զայս խնդրեր 'ի կուսանացդ քրիստոնէից, հրաժարել յընդունայն զարդուց և յամենայն հանդիսից գեղոյ[2]։ Վասն գիտեր քանի՛ զհետ գահատեալ էն օրիորդք սնոտեացս այսոցիկ, և խելամուտ եր չարեացն որ զհետ գային այնոցիկ։ Յառաջինն դարս եկեղեցւոյ յորվագոյնք 'ի կուսանաց նուիրելոց Աստուծոյ՝ առ ազգականսն բնակէին, և կամ առանձինն երկուք ընդ երկուս, և երեք ընդ երիս. և չերևէին արտաքոյ՝ բայց յերԹալն յեկեղեցիս, ուր և տեղի ուրոյն եր նոցա յայլոց կանանց։ Այլ եԹէ ոք 'ի նոցանէ վերջացեալ 'ի սուրբ առաքելոԹենէն՝ ամուսնանայր, ընդ ապաշխարուԹեամբ արկանէին[3]։

1 Հերոն. Թուղթ ԺԵ, առ Լաեղա։

2 Կիպր. յղ. Կուս։

3 Ախրոս. առ անկ. կուսան։

ՅՕԴՈՒՆՅՈ ՔԱՀԱՆԱՅԻ ՉՈՐՐՈՐԴ

Վասն այրեաց, և սարկաւագուհեաց։

ՅՕԴՈՒՆՅՈ ևս որք հրաժարէին յերկրորդ ամուսնութենէն՝ աքսէին ՚ի պահս և յաղօթս և յայլ Աստուածորական վաստակս՝ ոչ ինչ ընդհատ ՚ի կուսանաց, այլ ոչ իբրև զնոսա առանձնակեաց լինէին. զի պարապէին և յայլ գործս արտաքոյ, ՚ի տեսանել և ՚ի մխիթարել զհիւանդս և զբանտարկեալս, ևս առաւել զմարտիրոսս և զխոստովանողս, ՚ի կերակրել զաղքատս, ՚ի ժողովել զօտարս և ՚ի ծառայել նոցա, ՚ի թաղել զմեռեալս, և որ՚ի սոցին սակի էն գործք ողորմածութեան[1]։ Այն զի և հաճօրէն կանայք քրիստոնեայք՝ եթէ այրիք և եթէ ամուսնացեալք՝ յայսոսիկ վաստակէին, և չէլանէին արտաքս ՚ի տանց իւրեանց՝ բայց առ ՚ի գործել զբարիս, և առ ՚ի դնալ յեկեղեցի[2]. իսկ այրիք քանզի ազատ ևս էին՝ հանապազ զնոքիմբք գային. եթէ մեծատունք էին՝ առնէին բազում ողորմութիս, եթէ աղքատք՝ եկեղեցին դարմանէր զնոսա։ Յայրեաց աստի որք զվաթսնամեայսն իւրեանս

1 Հերոն. ՚ի Թուղթն Պաւլոս։ 2 Տե՛ս տուղ. առ կէն. ֆ. և յղ. Պաշա. կան. ԺԲ։

ընտրեին սարկաւագուհիք [1], ապա և զքա-
ռասնամեայս օրէն եղև ընծայեցուցանել. այլ
միշտ վիմասանագոյնն [2] ի նոցանէ և զկիրթս
յամենայն հանդիսս բարեվարուքեանց։ Այր
մի և կին սաստիկ յառաջ մատուցանէին, և այ-
րիս յայնժամ անուանէին և զնոսա։ Զեռնա-
դրէին իսկ զսարկաւագուհիս, և համարէին
զնոսա ընդ վիճակաւորս եկեղեցւոյ. մի մա-
սամբ ինն զգործ սարկաւագի գործէին [3] ի վե-
րայ այլոց կանանց [2]։

Գործ նոցա էր այցելել լինել այլոց կանանց՝
որ առ աղքատութեան կամ հիւանդութեան
և կամ յաղագս այլ ինչ ձախողակ արկածից
արժանի էին գթոյ եկեղեցւոյն։ Սարկաւա-
գուհիք վարժէին զերախայացեալ կանայս.
կամ մանաւանդ զլուեալ վարդապետութիւն
նոցա վասն հաւատոց յիշեցուցանէին վերըս-
տին։ Գործ աճէին զնոսա [3] ի սկզբունքին,
և օգնէին նոցա [3] ի մերկանալ և [3] ի զգենուլ
զհանդերձն, առ [3] ի զգուշութիւն պարկեշ-
տութեան երիցանց. նոցա առ ժամանակ մի
յանձն լինէին նորածնեալ կանայք յաւազա-
նէն, զի առաջնորդեսցին [3] ի քրիստոնէական
վարս [3]։ Գործ յեկեղեցւոջ պահէին զգրուն
որ [3] ի կողին կանանց, և ջանային դարձեալ՝ զի

1 ա Տիմ. Ե։ Կանոնք Ա-
ռաք. Գ։
2 Կանոնք Լաոդ. Ջ. ԺԷ։
Ի. ԺԹ։ Տէրտ. յղ. կուս. Թ։
3 Ժող. Կիկ. ԺԷ։ Ժող.
Քաղկեդ. ԺԷ։ Եպիփ. յղ.
Հերձ. Հթ. Ը։ Կանոնք Ա-
ռաք. Գ։

իւրաքանչիւր որ ի նոցանէ յիւրում տեղւոջ կացցէ և զգուշասցի լուսաբեան և պարկեշտութեան : Համար տային եպիսկոպոսին , և կամ հրամանաւ նորա երիցանց և սարկաւագաց՝ զամենայն գործոց պաշտաման իւրեանց : Ի վեր քան զամենայն ազգ առնէին զպետս կարօտութեան այլոց կանանց , և որ ինչ երիցանէն ոչ էր ի ձահ առնել անձամբ՝ սորա ի գլուխ տանէին խորհրդով նոցա :

Համբերութեամբ մեծաւ և բազում իմաստութեամբ հակէին եպիսկոպոսք յառաջնորդութիւն կանանց , և ի զգաստութիւն սարկաւագութեացն , և ի կարևոր զգուշութիւն նոցա ի պաշտաման իւրեանց՝ գժուարին ամենայն հասակի նոցին . որպէս զի մի կարի ներողք իցեն կամ դիւրահաւանք , մի կարձամիտք , մի ընդվայրաքնինք , մի խորամանկք , մի դիւրագրգիռք և մի գաժանք : Պարտ էր արթուն կալ նոցա , զի մի պատճառանօք ի հաւատս կրթելոց զվկրտեալն՝ հանդէս արասցեն իմաստակութեան և հանճարոյ , և մի համարձակ խօսիցին զխորհրդոց , կամ մոլորութիւնս սերմանիցեն , և յառաստղել կործանեսցին , և կամ շատախօսք լինիցին և պատուհասք մնօք[1] : Պարտ էր նոցա և բազմագութիւն լինել ի ժրջըկել կամ ի բառնալ զվերութիւնս այլոց այրեաց և կանանց , զարմուհի նոցա , զնա-

[1] Կանոնք Նիւսիոյ . գ . ե , ը , ի ,

խանձայուզուԹիւն, զմախանս, զբամբասանս, և զբրԹՒՆՋիւն վնասիկ իսկ զՀովուաց. և համայն ասել, զՀամօրէն գԺնդակ կիրս՝ որ արգասիք են ազգի նոցա և հասակի, և առաւել յորժամ այնոցիկ մերձ կայցեն աղքատուԹիւն, հիւանդուԹիւն, և այլ ևս ԹշուառուԹիւնք [1]։

ՅՕԳՈՒԻՆ ԿՈՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Խնամք զաղքատաց։

ՓոյԹ յանձին ունելը եկեղեցին գարմանել զաղքատս առ հասարակ յամենայն հասակի՝ եԹէ զարս և եԹէ զկանայս։ Կայց ոչ ընդ աղքատս համարեը զկարօղս՝ ի գործ աշխատուԹեան, զի էը նոցա հնար չլինել բեռն այլոյ, մանաւանդ Թէ ձեռնտու իսկ լինել այլոց աղքատաց։ Օ՛ի համարիչն ԹԷ որ ընտիր քրիստոնեայն է՝ ոչ՛ի պէտս անձին և եԹէ պարտի վաստակել, այլ և՛ի գարման այնոցիկ որոց ոչ է կար աշխատ լինելոյ [2]։ *Կ՛ասի զի և քաղաքական օրինաց զգուշացեալ էր՝ զի մի առողջ ոք մուրացիկ շրջիցի. քանզի որովհետև գոյր յայնժամ կարգ ստրկաց, եԹէ ազատք*

1 Ոսկեբ. յղ. Քահան. Գ։ Պ. ա, բ, լԸ։ Որոգ. ի Մատթ.
2 Կանոնք Ղևսաբ. Բ. բ։ Ճառ Ղև։ Բասիլ։

էին աղքատքն այնոքիկ՝ առաքէին յագարակս մշակել զերկիր ընդ ստրուկս հասարակաց. իսկ եթէ ստրուկք էին՝ տային զնոսա տերանց։ Օ՜նոյն առնէին և ընդ տղայս ընկեցիկս. զի որք յանձն առնուին մնուցանել զնոսա՝ նոցա լինէին տղայքն։ [1]Այլ իբրև ոչ ոք ջոջէր մնալոյիկ, քայց միայն ծերք՝ ի ստրկաց, զորս տեառքն անգութք՝ ի տեսանէին զնոսա անպիտանացեալս՝ ի ծառայութիւն՝ արտաքս վանէին, և կոյրք և խեղք և այլ ևս անպիտանք՝ ի գործ՝։

[2]Ի վերայ այսպիսեաց տարածանէին քրիստոնեայք զգութ խնամոյ իւրեանց. զորս և նկարագրէ Պրուդենտիոս՝ ի յանդիման առնել զայնոսիկ զորս սուրբն Լաւրենտիոս եցոյց իշխանին Հռոմայ որպէս զգանձս եկեղեցւոյ՝։ Օ՜նոյն խնամ ունէին և զաղայոց, մանաւանդ զորոց հաւատացեալ ծնողաց, և առաքել վկայելոց։ Պարձեալ և զտղայս ընկեցիկս խնամէին, և զամենեսին որոց մարթ էր նոցա վարժապետել և մնուցանել զնոսա՝ ի ձշմարիտ կրօնս։ [3]Ու զայս ամենայն հոգ յանձին բերէին զաղքատաց՝ առ՝ ի հայթայթել նոցա՝ ի ձեռն առժամանակեից բարեաց զհոգևորականսն։ [4]Զան այնոքիկ յամենայնի վեհ երևէին քրիստոնեայք քան զանհաւատս, և

[1] Գիրք Օրին. Դ. է. յղ. Մա. [2] Պրուդենտ. Ե. բացի. ժԱ. յղ. Ընկեց. ոչ։

'ի քրիստոնեայս նախանձեծայր լինէին առաքինութիք, և անուղղայք լքանէին 'ի բաց։ Ել անխոիր առնուին ողորմութիւն յամենեցունց. մերժէին զտուրս բանադրելոց և զպայմանի մաղաւորաց, զվաշխառուաց ասեմ, զընացողաց, և զգոփ կանանց. լաւ համարեալ Թողուլ զաղքատս 'ի կարօտութեան, կամ մանաւանդ յաստուածայինն խնամակալութիւն ապաստան առնել՝ որ գիտէն ընդ զկնի նոցա[1]։

Եկեղեցեաց իւրաքանչիւր էին ստացուածք ոչ սակաւ 'ի գարմանել զաղքատս, յընդունել զՀիւրս, 'ի Թաղել զմեռեալս, և յայլ պէտս հասարակաց, 'ի մուտս ուխտի եկեղեցւոյն, 'ի ծախս լապտերաց և սպասուց սրբոց[2]. Ու քահայապետութեամբ սրբոյն Կուռնելիոսի, յամի իբր երկերիւրորդի յիսներորդի, գարմանէր եկեղեցի Հռովմայեցւոց Հարիւր և յիսուն կղերիկոսս, և աւելի քան զՀինգ Հարիւր աղքատս. և 'ի հիմնարկութենէ անտի իւրմէ՝ ցոլչափ եկաց Հալածուածն 'ի վերայ եկեղեցւոյն՝ Հոգ յանձին ունէր առաքել 'ի գաւառս գաւառս ողորմութիւն առատ 'ի պէտս եկեղեցեաց կարօտելոց, և խոստովանողաց որ դատապարտեալ էին 'ի մետաղս։ Կոչք եկեղեցեաց ընդ երեսին առաջին դարս այսո-

1 Կանոնք Առաք. Գ. ԽԲ, Ը։ Կայաբ. սրբ. Պերպետ. և Եղան։ Վ Կայաբ. սրբ. Ափրոյ։

2 Թարգման. յամին 44։ Յուստին. Պատասխ. Ա։ Տէրտուղ.

քիկ էին . կահք , համբարք կերակրոց , հանդերձք , և առ ձեռն զրամք , զոր տային հաւատացեալք յամենայն շաբաթս կամ յամիսս և կամ երբ և հաճոյ թուէր նոցա . զի ոչ գոյր հարկ կամ օրէնք ՚ի տուրս յայսոսիկ ՚ :

Վակաւն և այնպէս որպէս պարտ էին կրօնիւ՝ յորդորէին տալ եկեղեցւոյ զերախայրիս և զտասանորդս արմտեաց և արջառոց ՚ի սնունդ կղերիկոսաց և աղքատաց : Պատուէր հին օրինաց , ասէ Իրոգինէս , զօրանայ տակաւին յայսմ՝ հաստատեալ աւետարանաւն քան թէ խափանեալ : Այլ ոչ տեսանելմբ անկեալ ընդ դատապարտութեամբ զվերջայեալսն ՚ի տրոց աստի : Օ ընծայս զայսոսիկ բերէին առ եպիսկոպոսն կամ առ սարկաւագս , զի ՚ի սեղան անդր ոչ էր հրաման այլ ինչ նուիրել բաց ՚ի հացէ և ՚ի գինւոյ որ ընծայք էին պատարագին : Վասն զի էին եկեղեցիք կալուածս և անդստին ՚ի ժամանակաց անտի հալածանաց , որ յայտ անտի է՝ զի ՚ի դադարել հալածանաց հրամայեցաւ անդրէն ՚ի նոսա դարձուցանել գյիսոսիկ , որպէս է տեսանել ՚ի հրովարտակն Կոստանդիանոսի և Լիկիանոսի յամին երեքբիւրորդի երեքտասաներորդի ՚ :

1 Նւսեբ . Պատմ . Ա . խգ : Թուղթ Դիոն . կորնթ . առ Նւսեբեայ , Գ . խէ : Տերտուղ . Պատասխ . ղԹ :

2 Որոգ . Հառ . Բ . ՚ի Թիւսդ . Ե . 17 . և ՚ի Յետ : Կանոնք Ա . ռաք . Գ . ՟ : Ուս . Լակտ : Նւսեբ . Պատմ . Ժ . Է :

Ի յոտքիկ հին գանձք եկեղեցւոյ՝ յոր անյագ ցանկութեամբ այս արձակէին հեթանոսք, մինչև յուզել վասն այսոցիկ Հալածանս, որպէս յայտնի է յանցից սրբոյն Լաւրէնտիոսի[1]։ Պարկաւագաց էր յանձն պահպանութիւն գանձուց, նոցա էր գործ ընդունել զընծայսն՝ի պէտս եկեղեցւոյ, և զգուշանալ նոցին և յամրի ունել, և բաշխել զայնոսիկ ըստ հրամանաց եպիսկոպոսին՝ որ անօրիներ ըստ կարօտութեան իւրաքանչիւր որպէս տեղեկանայր՝ի սարկաւագաց. նմին իրի դարձեալ՝ի տնտեսութիւն սարկաւագաց յանձն էր տեղեկանալ չքաւորութեան իւրաքանչիւր, ունել զանախսիր համար ժառանգաւորաց եկեղեցւոյ, զկուսանաց և զայրեաց և զաղքատաց ամենեցուն՝ զորս դարմաներ եկեղեցի[2]։ Նոցա էր անկ քննել և տեսանել զորս խնդրեին՝ի համար մնանել կարօտելոց, և հակել դարձեալ՝ի վերայ այնոցիկ որ՝ի համարի անդ էին՝ թէ իցէ՞ն արդարև արժանի ողորմութեան։ Նոցա յանձն էր պատրաստել տեղի յընդունելութիւն օտարաց, և քննել թէ ոյց և կամ որպէս արժան էր մատակարարել զպէտս նոցին։ Զնոսա գնային աշխարհականք վասն ամենայն իրաց զոր խնդրել կամ ծանուցանել պարտ էր եպիսկոպոսին, որում առ պատկա-

1 Պրուդենտ. երգ Բ։ Բառբան. յամին 34։

2 Կանոնք Առաք. Գ. ԺԲ։

ւանաց և առ յանհանգստելոյ՝ չիշխեին ստէպ յանդիման լինել՝ ։ Այլ ինքն իրն տարժանելի էր յոյժ գործ սարկաւագութեան . պարտ էր նոցա երթևեկել յաճախ ընդ քաղաքն , և ձանապարհորդել երբեմն և արտաքոյ . և վասն այնորիկ իսկ չարկանէին կրկնոց , և ոչ պղծնաւորս զգեստուին որպէս երիցունքն , այլ պարեգօտ ևեթ , և նափորտուն՝ առ՝ի պատրաստ լինել՝ի վաստակ և փոյթ [2] ։

ՅՕԴՈՒԱՆՆ ՔԱՄԱՆԵՐՈՐԴ ՎԱՅՑԵՐՈՐԴ

Ասկէսականութիւն ։

Ա՛ՍՊՆԱԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ յաճախեալ էր և առ հեթանոսս ։ Ոմն բարեբարոյքն էին առ Յովհս և առ Հոռոմն՝ գուն ուրեք ազանէին՝ի պանդոկի ։ Ի քաղաքս յորս գործ ինչ հասանէր նոցա , էին նոցա բարեկամք որ ժողովէին զնոսա . և սոքա ևս յերթալն՝ի քաղաք նոցա՝ առ նոսա իջևանէին [3] ։ Ըստ այս որպէս իրաւունք իւն ինայր յաղգատոհմի անդ . և մի էր՝ի գլխաւոր զգից բարեկամութեան քաղաքացն Յունաց որ Ալեքսադա և որ Անտաքիա , յորոց ծաւալեցաւ ասպա ընդ բնաւ կայսերու-

1 Կանոնք Ածաք . Բ . իբ ։ 3 Թոմասին . Հրահանգք .
2 Ընդ . ծէ ։ Տէսաեր . Հիւրասիրք ։

*Թիւնն Հոռոմոց : Ընդ մասուընս կրօնիցդ հա-
մարէը առ նոսա ասպնջականութիւն , և զի-
րամազդ իմամակալ իրաւանց ասպնջականու-
թէ վարկանէին . և հիւրն և սեղանն յորում
ուտէին 'ի միասին՝ սուրբ համարէր : Այն
այսմիկ սկէին և Հրեայք , մեծարեալ զսա ընդ
առաքինութիւնս ուղղեալս 'ի սրբոց յամե-
նայն ժամանակի , և յայսօր իսկ վարին սուրբ
առ միմեանս :*

*Այլ ոչ ինչ պարտ է զարմանալ ընդ հիւ-
րասիրութի քրիստոնէից , զի որպէս բարեկամք
և եղբարք՝ այնպէս ընդ միմեանս գնային . որք
գիտէին զի Քրիստոսի իսկ պատուիրեալ էր
զայն ընդ բարեգործութիւնս՝ որ առաւելագոյն
վարձուց են արժանի [1] : Այլ ասն որոյ շատ էր հիւ-
րոյն յայտ առնել զուղիղ դաւանութիւն իւր
'ի Քրիստոս , և զի չէր մերժեալ 'ի հաղոր-
դութենէ եկեղեցւոյ , և անդէն ընդ առաջ ե-
լեալ ժողովէին զնա : Այլ 'ի խորհրդոց իսկ
չընդունելոյ զնա զարհուրեալ տագնապէին ,
իբր թէ զՔրիստոս արտաքսիցեն : Նայց
որպէս ասացաք՝ պարտ էր նախ ծանօթս տալ
զանձնէ [2] : Զի մին իրի որք Ճանապարհորդէին
'ի քրիստոնէից՝ թուղթս առնուին յեպիսկո-
պոսաց իւրեանց , և էին 'ի թուղթն նշանակք
հինչ՝ քրիստոնէից և ոչ ծանօթք : Նայտ առ-
նէին որպիսի ոք էր Ճանապարհորդն . ուղղա-*

[1] Մատթ . ԻԵ . 34 : [2] Բարոն . յամն 142 :

փառ էր արդեօք, կամ թէ յետ անկանելոյն ի մոլորութիւն կամ ի նզովս՝ դարձեալ էր վերստին ի համբոյր հաշտութեան ընդ եկեղեցւոյ. երախայ էր թէ ապաշխարող. կղերիկո՞ս կամ յայլոց աստիճանաւորաց ոք. քանզի ոչ ոք ի կղերիկոսաց ձանապարհ առնէր առանց հրամանագրի եպիսկոպոսին իւրոյ[1]: Տային և թուղթս ընծայականս առ ի ցուցանել զառն առն զվաստակ՝ եթէ խոստովանող էին կամ վարդապետք, և կամ որոց պարտ էր առաւելագոյն խնամ ունել:

Ա՛ռաջին գործ ասպնջականին էր լուանալ զոտս հիւրոյն: Ո՛չ սովորութիւնս զայս բազում ուրեք է տեսանել ի սուրբ գիրս, և կարևոր էր սպասաւորութիւնս այս առ նախնիս վասն տարազու կօշկացն զոր ագանէին. նմին իրի ի թուղթն Պօղոսի ընդ ասպնջականութենէ զոյգ ի միասին կարգի և լուացումն ոտից[2]: Եթէ ամենևին հաղորդակից էր հիւրըն ընդ եկեղեցւոյ, ի միասին ընդ նմա աղօթէին, և զամենայն տանուտէրական պատիւս նմա տային. նա սկսանէր զաղօթս, զնա յառաջին տեղւոջ բազմեցուցանէին ի սեղանի, և նա խրատէր զամենեսին: Երբանի տային անձանց զի ընկալան զնա, և սրբեալ ևս համարէին զկերակուրն յորմէ ձաշակէրն. իսկ զժառանգաւորս եկեղեցւոյ մեծարէին ըստ

[1] Ժող. Եղիբեր. ծգ. [2] ա Տիմոթ. ե. 10:

աշտիճանի նոցա . եթէ եպիսկոպոս էր ուղղաւորն , հրաւիրէին զնա յամենայն տեղիս , և նմա տային կատարել զաստուածային պաշտամունն և քարոզել ի ցոյց միութեան քահանայութեան և եկեղեցւոյ [1] : Ըստ այմ սուրբ քահանայապետն Նիկիետաս մեծարեաց զսուրբն Պողիկարպոս : Ամենք ի սրբոց վանն ասպնջականէին զժառանգաւորս ոմանս եկեղեցւոյ , և զայլս որ գային քարոզել զաւետարանն՝ ընկալան զնահատակութիւն . որպէս գերահռչակ սուրբն Աղբանոս յԱնգղիա , և սուրբն Վենտիանոս յԱղբիանոն քաղաք՝ ըստ աւանդութեան [2] : Ըմպինջականէին քրիստոնեայք և զօտարս . վանն որոյ և սրտի մտօք կատարեցին զՀրայման Թագաւորին որ պատուիրեր նոցա ի քեւանս տալ զինուորաց իւրոց և զօրավարաց և ամենեցուն որ Անտապարշ առնէին ի զգուշութիւն աշխարհին , և մատակարարել զամենայն պէտս նոցա : Սուրբն Պախոմէոս՝ զինուորեալ ի մանկութենէ ի գունդս Հռովմայեցւոց , և նաւարկեալ ընդ գնդին իւրոյ ի քաղաք մի ծովեզերեայ , զարմանայր՝ զի բնակիչք քաղաքին ընդ առաջ եկեալ ժողովէին զնոսա որպէս զվաղեմի բարեկամս իւրեանց . և հարցեալ թէ ոչք իցեն , և լուեալ պատասխանի թէ նոր իմն կրօնից պաշ-

1 Կանոնք Ածաք . Բ . ծը : Նւսեբ . Պամփ . Գ . ԺԴ : 2 Վկայաբ . Հռովմ . ի յու- նիսի իը . և ի գեկտ . ժե :

տճնեայք կին քրիստոնեայք անուանեալ յայմմ ժամանակի սկսաւ տեղեկանալ վարդապետու-
թեան նոցա, և այն եղև սկիզբն դարձի նորա[1]։

ՅՕԴՈՒԱՆ ՎԱՄՆԵՐՈՒՐ ՆՕԹՆԵՐՈՒՐ

Հիւանդք։

Ա՝ՆԴԱՊԻՍ փութային քրիստոնեայք տե-
սանել զհիւանդս, առաւելագոյն խրատեալք
'ի նոյն յաւետարանէն[2]. նմին իւրն պարապ ա-
ռեալ զժանտ մահուն՝ որ Ա՝ղեք-
սանդրիա յաւուրս Ա՝ղերիանոսի կայսեր,
առ նոսին իսկ հալածիչս իւրեանց ցուցին զգ-
գուեթ խնամոյ՝ դարմանելով զնոսա արիաբար.
մինչև քաղմոց 'ի նոցանէ՝ երիցանց և աշխար-
հականաց՝ մեռանել անտի, զոր և ընդ մար-
տիրոսս պատուէ եկեղեցի[3]։ Երիցունք գնային
առ հիւանդս 'ի քաջալերել զնոսա, աղօթել
վասն նոցա, և մատակարարել զսուրբ խոր-
հուրդս։ Օ՝գեին թոշակն տային ընդ տե-
սակաւ հացի և եթէ, զոր մարթ էր 'ի վանդս
ինչ տանել առ հիւանդս և աշխարհականաց,
որպէս յայտ է 'ի պատմուճէ վարուց ծերոյն

1 Պատմ. վարուց սրբ. Պա-
խում. ՟ը։
2 Մատթ. ԻԵ. 36։
3 Դիոնես. աղէքս. առ Եւ-
սեբ. Պատմ. Ե. ԻՀ. Վ կայսեր.
Հռոմմ. 'ի վեսր. ԼՀ։

Արապիոնի [1]։ Նաց յօծմանէ սրբոյ իւղոյն զոր պատուիրէ առաքեալն Յակոբոս՝ յոլովակի բժշկէին զհիւանդս և իւղով օրհնելով, զոր երիցունք կամ աշխարհականք՝ ըստ տուեալնոյա հնարից սքանչելագործութեանն՝ մատուցանէին հաւատացելոց և անհաւատից առ հասարակ։ Որթե՝ի կիր առնուին առ այս և զիւղ լապտերաց՝ որ վառէին՝ի գերեզմանս վկայից [3]։

Հեթանոսք, որոց ոչ գոյր յոյս յետ մահու, ոչ ինչ աւելի չար համարէին զմահ քան զվըրիպուածն՝ի վայելից կենցաղոյս և քան զսպառուածն կենդանութեան՝ որով լինէր նոցա զերծանել յամենայն թշուառութեանց։ Օ՛ի ոչ ևս ոք հաւատայր քերթողացն բանից յաղագս տանջանաց կամ վարձուց հանգերձելոց աշխարհին [4]. նմին իրի ամենայն ոք զբօսանացուցանել ջանայր զկոգեվարս, և ոչ յորդորել. և ինքնին ամենայն ոք գուն գործէր ձգել երկայնել զվայելս բերկրութեանց աստի կենացս։ Այս բարբառ ստէպ ընթանայր առ նոսա, զոր և յիշէ Պօղոս առ Հռոմայեայ. "Կերիցուք, արբցուք, քանզի վաղիւ մեռանիմք [5].,, ։ Յայս վախճան առնուր ամենայն քաղրոյական վարդապետութիւն Ավրատեայ. և

1 Նշաբ. Պատմ. Ջ. խդ։ 4 Կիր. Տուսկ. Ն. Ջ։ Յոբ. Նաղ։
2 Յակ. Ե. 14։ 5 Եսայ. ԻԲ. 13։ ա Կորնթ. ԺԵ. 32։
3 Բարոն. յամն 63։

չգտանեմ Աշգրտագոյն այսմ օրինակ քան զմահ Պետրոնեայ առ Վերոնիս [1] : Յոկ որ ի մասնաւոյնք և ես եկի, իմաստասիրութեամբն միխիթարեցին զինքեանս՝ չանացեալ մեռանել անխոռով :

Այլոց այլ էր ուսուցն քրիստոնէից, և դրուցս իւն յաւէժական կենաց համարէին զմահ. և բարիոք քաղաքավարելով բազումք այնոքիկ էին զի ցանկային նմին քան որք երկնչէին. և ընդ մահ ազգականացն և սիրելեաց թեթև ինչ էր տրամութիւն նոցա առ խընդութեամբն ընդ անվախձան երանութիւն վախճանելոցն, և ընդ յոյս վերստին տեսանելոյ զնոսա անմահս յերկինս [2] : Վասն իւն թուէր յաչս նոցա մահ, ըստ որում և գիրն անուանէ զայն [3], յորմէ և զգերեզմանս քնարան կոչեցին :

ՅՕԳՈՒԻՆՕ ՔՈՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Թաղումն կամ յուղարկաւորութիւն մեռելոց :

ՆԱԽՈՒ մեծամեծս անհամեմատս աղքատն կենաց իւրեանց առնէին ի մեռելոյն,

1 Տակիտ. Տարեգր. ԺԵ. 2 Կիպր. յղ. Մահկան. և ի Դեմետ. 3 «Նշինջեաց Դաւիթ ընդ հարս իւր ,,. ի Թագ. Ր. 10, 11 : ԻԳ. 14, 20, եև :

Հոգ մեծ կալեալ ՚ի յուզարկաւորութիւն հնձից եղելոց, առ ՚ի յայտնագոյն տալ վկայութիւն զհատուցն իւրեանց ՚ի յարութիւն մեռելոց։ Այլ իբրև զՅոյնս կամ զՀռոմն այրէին զմեռեալս. ատելի էին նոցա գարձեալ աւելորդ խնամք և մնապաշտութիւն [1]գիպատացոց, որք զմեռեալ պահէին զդիակունս ՚ի տունս իւրեանց ՚ի վերայ մահճաց ՚ի տեսիլ ամենեցուն։ Ընդդէմ զնոսին եաւ մեծն Ընտն այսմ սովորութեան, որով դեռ և վարեր [1]գիպտոսյաւուրսնորա՝։

Ընդ հողով թաղէին քրիստոնեայք զմեռեալս իւրեանց, որպէս զՀրեայս. այլ լուաեալ նախ զմահէին զնոսին, առաւելագոյն ՚ի կիր արկեալ խունկս ՚ի նոսա, ասէ Տերտուղիա նոս՝ քան հեթանոսք ՚ի զոհս իւրեանց [2]։ Ապա պատեալ բարակ կտաւովք կամ կերպասուք, և զի և պատմուճանս մեծագինս արկեալ վնոքօք՝ պահէին անթաղ զաւուրս երիս, բազում խնամով առընթեր նոցին հսկելով յաղթս։ Ի կատարել երից աւուրցյուզարկաւորէին ըզնոսա ՚ի գերեզման բազում մանեղինօք և ջահիւք, և երգովք սաղմոսաց և տաղից օրհնելով զՅոտուած և դասանելով զհատաս իւրեանց ՚ի յարութիւն մեռելոց [3]։ Ըզթս առնէին վասն նոցա, մատուցանէին պատարագս,

1 Պատմ. Ագաթան. ՂՂ։ 3 Կանոնք Ածաք. Ջ. Է։
2 Պատասխ. խե։ Բարսղ. Պրուգենա։
յաճն 34։

և ընթրիս տային աղքատաց՝ զոր ագապս կո-
չէին, առնելով և այլ տղորմութիւնս։ Ի լրա-
նալ ամին վերստին առնէին զյիշատակ նոցա,
զոր հանապազորդէին նոյնպէս ամ ըստ ամէ-
թող և զմշտնջենաւորս յիշատակութիւն նոցա
՚ի սուրբ պատարագին։

Պաշտօնեայք սահմանեալ էին յեկեղեցւոյ
՚ի թաղումն մեռելոց, որք և մեռելաթաղք ա-
նուանէին, և է զի ընդ կղերիկոսս ՚ի համար ա-
ծին և նոքա. ընդ բազումս ՚ի ննջեցելոց ՚ի պա-
տիւ մեծարանաց նոցա, և կամ վասն յիշատակի
ինչ ինչ ՚ի միասին թաղէին. այս ինքն նշանակք
աստէձանի նոցա, գործիք մարտիրոսութեն,
շերեփ լցեալք յարեւոյ նոցա, կամ արիւնաձանգ
սպունգք, պատմութիւն նահատակութեան
նոցա, տապանագիր կամ անուանք ևթե նո-
ցա, զրամք հատեալք յաւուրս նոցա, տերևք
դափնոյ կամ այլոց անթառամ ծառոց, խոյք
և կամ աւետարան։ Հանդուցանէին զմար-
մինն յորսայս, դէմք յարևելս կոյս ՚։ Հեթա-
նոսք առ ՚ի պահել զձիւնս մեռելոց՝ կանգ-
նէին շերիմս հոյակապս առ ձանապարհօք և
՚ի դաշտս. այլքրիստոնեայք հողով ևթե ծած-
կէին զմարմինս, կամ ղետեղէին զնոսա կար-
գաւ ՚ի նկուղս, որպէս ՚ի գեանաւոր շերիմն
մերձ ՚ի Հռոմ՝։

1 Տե՛ս ուշ. յղ. Պսակ. ՚ը։ 2 Բարձն. յամն 14։ Թա-
Որոգ. ՚ի Յովբ. ճառ Գ։ մասին. Հրահանգ. Գ. Ժ՚ը։
Կիպր. Թուղթ ԿԶ։

Ոչքա էն ստորերկրեայ վայրք Հատեալք ի վէմ դիւրափխրելի կամ յերակս աւազոյ, ուր արարին քրիստոնեայք զգերեզմանս իւրեանց։ Ընդ աստիճանս իջեալ անդր՝ տեսանիցես ուղիս երկայնս, և աստի և անտի երկկարգեան կամ եռակարգեան խորշս խորխորինս՝ յորս հանգուցանէին մարմինք ննջեցելոց. քանզի բազումք յայնցանէ հանան։ Այն անդ ուրեք ուրեք սենեակք մեծամեծք՝ կամարաշէնք և ամուրք, խիտ առ խիտ խորշս ունելով հանգոյն ուղեցոյն։ Ի բազումս ի սենեկաց աստիճանք եւ կան պատմութիւնք հին և նոր կտակարանաց, զոր օրինակ սովորութիւն էր առնել և յեկեղեցիս։ Ուրեք ուրեք ի գերեզմանատունս անդ էն և մատրունք ստորերկրեայք։ Ի բազումս ի խորշից գտան տապանակք կըճեայք զարգարեալք բարձր քանդակօք, զնոյն պատմութիւնս սուրբ գրոց՝ հանգոյն նկարուցն յանդիման առնելով. սոքա էին դամբարանք երևելեաց ոմանց։ Գերեզմանատունս իւրաքանչիւր զստորերկրեայ աւանիկ բերէ զնմանութիւն, յորս էն և բնակարանք կրկնայարկք և եռայարկք։ Այսպէս է զի ի ժամանակս հալածանաց ի բնակարանս յայնոսիկ փախուցեալ անկանէին հաւատացեալք, անդ պահպանէին զնշխարս վկայիցն, և անդ ժողովէին և կատարէին զաստուածային պաշտամունս։ Այլ ծածկեալ հողոյ զմուտս վայրացն՝ բա-

զում ժամանակս Թաբիթայ ՚ի մարդկանէ գյո-
գունս ՚ի քնարանացն այնոցիկ, և հազիւ ՚ի
վախճան վեշտասաներորդի դարուն ՚ի յայտ
եկին [1]։ Այլ և ժողովք վկայից կոչին տեղիքս,
ուր անդր ժողովեցին մարմինք նոցա։ Կոչեցան
և աւազուաք. վասն աւազին գոլոյ երկրին.
իսկ որ յԱփրիկէ գերեզմանատեղիքն՝ կոչեին
դաշտավայրք կամ յատակք [2]։

Յոռանդն մեծ էր աւերեցուն Թաղելոյ մերձ
առ ոսկերս վկայից [3]. և վասն այն յաձախեցին
յետոյ դամբարանք յեկեղեցիս, Թէպէտ և
յերկարեաց յոյժ սովորութիւն Թաղելոյ ՚ի վե-
ռեալս արտաքոյ քաղաքաց։ Յարգուն Թիւն առ
նշխարս սրբոց, և առաւել հաւատք յարու-
Թեան մեռելոց, ՚ի բաց արար ՚ի քրիստոնէից
զերկիւղն որով երկնչէին ոչ հեԹանոսք միայն՝
այլ և Իսրայելացիք ՚ի մարմնոց մեռելոց և ՚ի
գերեզմանաց։

ՅՕԴՈՒԱՆ ՔԱՀԱՆԱՐՈՒՆ ԻՒՆԱՐՈՒՆ

Եպիսկոպոսունք, և ուխտ եկեղեցւոյ։

Ի ԼՐՈՒՄՆ նկարագրի Յառիսնախկի ժամա-
նակացն այնոցիկ խուն լինչ արժան է ասել և

1 Բարսն. ՚ի վկայաբ. ՚ի յուշվ. Ջ. և ՚ի յուշխս. ԽՋ. և ՚ի սեպտ. Ջ։
2 Թոմասին. Ի. ծԵ։
3 Կանոնք Ուռաք. Ջ. գԼ. վերջին։

յաղագս Հովուաց և պաշտօնէից եկեղեցւոյ։ Աղոգինեայ ժողովոյ քաղաքականս Համեմատեալ ընդ եկեղեցիս քրիստոնէից՝ Համարի անկերկբայելի, զի առաջնորդք եկեղեցեաց բերեն յանձինս զառաքինութիւն և զվաստակս՝ զորոց իշխանք քաղաքաց զանունն ևս կրեն։ Այս զայս ասէ նա՝ ի գիրսն ընդդէմ Կելսոսի ընդ հեթանոսս պայքարելով[1], որոց ապաքէն ծիծաղելի իմն ընծայէր զանուն՝ եթէ չէմարտութեամբ և յայտնի ոչ էին։ Կազմութիւն հայրապետաց որք կացին՝ ի Հռովմ և յԱրեւսաղէմ յերիս դարսն յայնոսիկ՝ Հաւատարիմ առնեն զի յոլովագոյնք՝ ի նոցանէ մարտիրոսութեամբ կատարեցան. և ընդ հինհարիւրամն երեք ևեթ՝ ի քահանայապետաց Հռովմայ կացին՝ զորս չպատուէ եկեղեցի ընդ սուրբս։ Կազուսք յեպիսկոպոսաց որ յիշատակին՝ ի պատմութիւնս առաջին դարուց՝ ականատորք էին առաքինութեամբ. նմին իրի կայսրն Ադեքսանդրոս Աեւերոս՝ առ՝ ի զգուշութիւն ընտրութեան պաշտօնէից աշխարհին՝ զքրիստոնեայս յօրինակ ածէ[2]։ Օ՛ի յայնպիսեաց անտի զորոց զվարս գծագրել՝ Ջանացայ՝ զպայծառագոյնն սրբութիւք յառաջ մատուցանէին, և որոց փորձեալ էր առաքինութիւն։ Կազուսք այն էր զի ընտրէին խոստովանողք՝ որ Հզօրագոյնք՝ ի տանջանս անդ Հանդիսացեալ

[1] Ընդդէմ կելս. Գ։ [2] Լամպրիդ. յԱղեքսանդր։

էին. որպիսիք ամենք եղեն Լբրեղիոս և Կելեբրինոս որք ընդ ընթերցող կարգեցան՝ի սրբոյն Կիպրիանոսէ։ Վասնզի Կելերինեայ բազում սպիք էին՝ի մարմնի, և հաւ նորա և երկոքին հօրեղբարք եղեն հռչակաւոր վկայք եկեղեցւոյ։ Որպիսի ոք և երէցն էր Կոմիդևիոս, որ յետ ընծայելոյ զազգուսն խրախուսանօք իւրովք՝ի մարտիրոսութիւն, այլ և զկին իւր, Թողաւ՝ի տանջանս որպէս զմեռեալ՝։

Ո վեհակաւորս ընտրեր եպիսկոպոսն ըստ աղաչանաց ժողովրդեան՝ կամ հաւանութեամբ նորա, բայց միշտ խորհրդեամբ երիցանցն իւրոյ, փորձելով զնոսա անձամբ ընդ իմաստնագոյնս յերիցանցն՝ թէ արդարև արժանի էին այնմ աստիճանի։ Կայց զկամս ձեռնադրելեաց ինչ ոչ հարցանէին. ոչ միայն չքնաւ պասեալ զի խնդրեսցեն, այլ և բազում անգամ ձեռնադրէին զնոսա հակառակ կամաց նոցա բռնի կամ ձարտարութեամբ. մինչև ոմանց՝ի նոցանէ չիչեալ զամենայն աւուրս կենաց իւրեանց վարել պաշտամունքն։ Կսկ զեպիսկոպոսին ընտրութիւն առնէին առաջի ժողովրդեան եպիսկոպոսք գաւառին՝ ժողովեալք յեկեղեցւոջ վախճանեալ եպիսկոպոսին. և ոչ էր օրէն ընտրողացն գոլ նուազ քան զերկուս կամ զերիս. զի բազում եպիսկոպոսաց ժողովս

1 Ցերծուզ. Պատասխ. լիե։ Որոգ. ընդդէմ Կելս. Ը։ Կիպր. Թուղթ ԼԹ։

գումարել դժուարին էր ի ժամանակն յայնոսիկ, բայց միայն ի միջոցս դադարման հալածանաց. նմին իրի երբեմն ոչ սակաւք յեպիսկոպոսանիստ քաղաքաց ինային առանց հովուի յերկար ժամանակս[1]: Այլև որ համարեին առաջի ժողովրդեան առնել զընտրութիւնն, զի միահամուռ վկայելով նոցա արժանաւորութեան ընտրելոյն՝ կամակար ևս հնազանդեսցին նմա. զի սովորութիւն էր ընտրել զոք յայնցանէ որ ի նմին եկեղեցւոջ ակրտեալ էին, և վարժեալ բազում ժամանակաւք յամենայն հանդէս պաշտաման եկեղեցւոյ: Այսքան զձեռնադրութիւնն պահէին պահս և աղօթս առնէին. և բազումն էր զի ի գիշերս կիրակամի կատարէին զայն, հակեալ զգիշերն զամենայն և ապա կատարեալ զօրհնութիւնն, որ կարևորագոյն մասն համարեցաւ յամենայն ժամանակի դրութիւն ձեռաց: Ո՛չ ևս ձեռնադրեցեալ[2] առաւել քան զկնի սպասաւորութեան եկեղեցւոյ ձեռնադրէր եպիսկոպոսն քահանայս կամ սարկաւագունս, վասն որոյ և ոչ քազում յոյժ էր թիւ նոցա. զի առ ժամանակաւք սրբոյն Կուռնելիոսի քահանայապետի յամին

1 Կիպր. Թուղթ ԿԲ: Կաղիա. Ճառ Զ: Կան. Նիկ: Դրիգ. Տուբ. Յ. Ֆ: Նոնք Ընտաք. Ը. Ֆ: Որոգ. Ի

2 Բարսղ. յամին ԱԱ:

երկերիւրորդի յիսներորդի՝ քառասուն և վեց
հեթ երիցունք էին յեկեղեցւոջ Հռոմայ, և
թիւ վիճակաւորացն Համօրէն ոչ ինչ աւելի էր
քան զՀարիւր յիսուն և չորս, թէպէտ և ան-
թիւ և անհամար էր ժողովուրդն [1]։ Յազմա-
գոյնք էին եպիսկոպոսունք առ Համեմատու-
թեամբ երիցանց. զի յամենայն քաղաքս յորս
էին խումբք հաւատացելոց՝ կային եպիսկոպո-
սունք։ Ոչ էր հրաման զվկրտեալս յայլազգա-
ւառի՝ ձեռնադրել յայլ գաւառ ուր անծա-
նօթ էին վարքնոցա [2]. իսկ ժամանակին անցեալ
յառաջ քան զվկրտութիւնն չհամարէր ինչ։
Յետ ձեռնադրութեանն պարտ էր ժառան-
գաւորաց կալ՚ի թեմի անդ եպիսկոպոսին զա-
մենայն աւուրս կենաց իւրեանց, և եպիսկո-
պոսին միայն իշխանութիւն էր առաքել զնո-
սա՚ի թեմ այլոց եպիսկոպոսի. քանզի բնակու-
վին ընդ հնազանդութեամբ նորա էին որպէս
զաշակերտս ոմանս, զորս անձամբ հոգ յանձին
կալեալ էր նորա դաստիարակել՚ի մանկու-
թենէ և հասուցանել՚ի չափ, և տակաւ առ
բառնալ զնոսա ընդ աստիճանս՝ առ՚ի պարա-
պեցուցանել՚ի զանազան պաշտամունս ըստ
զօրութեան նոցա։ Այսպէս թէ մանկտին այն
վկայեալ ընդ սրբոց Հայրապետացն Յաբելայ
և Ղազարայ Հանդերձ այլովք սրբովք [3]՚ի թե-

[1] Ես. Բաում. Ջ. խբ։ խդ. և՚ի փետ. ը. և յապր.
[2] Ժող. Եղիսբ. խը։ Ը. և՚ի մայ. իե։
[3] Վկայաբ. Հռոմ. Ի յունվ.

ւոյ նոցա էին՝ զորս ի վիճակաւորութիւն ե-
կեղեցւոյ մնուցեալ էր սրբոց Հայրապետացն։
Յասացելոցս յայտ է զի ոչ ումեք ի ձեռնա-
դրելոց օրէն եր Թողուլ անհրաման զձեռնա-
դրեալ եպիսկոպոս իւր, և երթալ լինել ընդ իշ-
խանութեամբ այլոյ. և որ ընդունէրն զնա՝
կշտամբեր որպէս զդաղծս ժառանգելով։

Վակայն իշխանութիւնս այս եպիսկոպոսաց
հեռի եր ամենևին ի տիրապետութենէ և ի
բռնաւորութենէ. սիրոյ իմն պետութիւն եր
նոցայն. ամենայն վիճակաւորք եկեղեցւոյն
հաղորդ էին իշխանութեան եպիսկոպոսին, զի
ոչ մեծ ինչ առնէր առանց խորհրդոյ նոցա, մա-
նաւանդ երիցանցն՝որք իբրև ծերակոյտ իմն էին
եկեղեցւոյ։ Նախկին պատկառելի էին նոքա,
և եպիսկոպոսունքն այնպէս հեղք՝ զի հաճիւ ոք
չանաչէր արտաքոյ ուր այն եպիսկոպոսն իցէ և
ուր երէցն։ Այս աւանիկ իշխանութիւն իմն եր
երիցանց ի վերայ եպիսկոպոսին՝ տեսուչք գո-
ւոյն հանապազ վարդապետութեան նորա
և գնացից։ Ընդունէր նմա կային յամենայն
հասարակաց պաշտամունս ոչ ինչ ընդհատ ի
պաշտօնէից իշխանաց, կամ մանաւանդ որպէս
զաշակերտս որ զինի գնայցեն վարդապետին
իւրեանց. քանզի և այնպէս յարեալ էին ի նա՝
որպէս առաքեալքն ի Քրիստոս։ Իսկ յոր-
ժամ եպիսկոպոսն իշխեր առնել ինչ կամ ու-

1 Կանոնք Ածաք. ԽԴ։ Ժող. Նիկ։

սուցանել ընդդէմ առաքելական աւանդից, չըլսէին այնմ աւագագոյնք երիցանց և սարկաւագաց, և ազդ առնէին նմա սիրողաբար. և յանսաստել նորա՝ բողոքէին առ այլ հայրապետս, և ապա ամբաստան լինէին զնմանէ ի ժողով եկեղեցական [1]։

Յոլովագոյնք ի կղերիկոսաց Հռնաւորական վարէին կեանս, ընդակեր և չորակեր լինելով, պահելով ստեպ, և այլ պեսպես Հռնուէի իւնս յանձին բերելով ըստ ներելոյ ծանր և բազմապատիկ աշխատութեան պաշտամանն իւրեանց։ Վասն առաւելքան զի՞մ պատուէր ի վեր քայ կայր եպիսկոպոսաց, քահանայից և սարկաւագաց՝ պատկառ կալ սրբութեան վարուց։ Եթէ ոչ ևթէ ամուսնացեալք չամբառնային ի նոյն աստիճանս, զի զիա՞րդ մարթ էր ի բազմութեան Հրեից և հեթանոսաց որ զօրհնապաղծի հաւատս գային՝ գտանել արս որ պահեալ իցեն զսրբութիւն միոջ ի հասակ կատարեալ. ապաքէն շատ իսկ էր գտանել ի նոսա զմիոյ կնոջ այր, յայտութեան անդ յորում կեին և Հրեայք և արևելեայք՝ բազում կանայս առնելոյ և արձակելոյ [2]։ Վասն յորժամ զամուսնացեալսն յեպիսկոպոսութիւն մատուցանէին, անդստին յայտնի օրէ իբրև զբոյր ունէր նա զկին իւր. և զօրէնս զայս յամենայն ժամանակի

1 ՚ի Պետր. Ե. 3։ Որոգ. Աստաբ. Բ. ժը. և Ը. ժբ։ ՚ի Մատթ. Ի. 25։ Կանոնք 2 ՚ի Տիմ. Գ. 1։

հաստատուն կալաւ եկեղեցի [1] սահմանացոյց և
ի կարգ քահանայութեան և սարկաւագու-
թեան։ Այլ պատուէր էր կարգաւորաց խոր-
նամ ունել կանանց իւրեանց, և չթողուլ զնո-
սա արտաքս որպէս զօտարս [2]. որք և ի մեծա-
բանս պատուոյ արանց իւրեանց կոչէին եր-
բեմն երիցուհիք [3]։

Արգելեալ էր վիճակաւորաց բնակակից լի-
նել ընդ կնոջ։ Յամբաստանութիւնս անդ ընդ-
դէմ Պօղոսի սամոսատացւոյն էր և այս, զի
օրիորդք երկու կայտառք առ նմա կային ի
տան, զորս և ընդ իւր չընչեցուցանէր ամենայն
ուրեք, թոյլ տուեալ և քահանային իւրոց և
սարկաւագաց ըստ նմին ունել առ իւրեանս
կանայս, զորս և տանտիկնայս անուանէին [3]։
Պոմպոնիոս Հայրապետ գանգատի առ սուրբն
Կիպրիանոս՝ զի կուսանք ոմանք վստահէին
պահել անշաղախ զկուսութիւն իւրեանց կա-
լով ընդ արս և ընդ սարկաւագունս իսկ այն-
պիսի գայթակղական բարեկամութեամբ՝ որ
պէս զի ի միմեանցմէ ի քուն լինէր։ Այս դըժ-
պատեհ սովորութիւն՝ եղբայրսիրութեանէ պատ-
ճառանաք ի ներքս եմուտ. զի բնակեալքն
այնոքիկ ընդ կղերիկոսս՝ կուսանք էին աստուա-
ծանուէրք, կամ՝ կանայք ի հոգևորս պարա-

1 Յոյն. Եղիբեր. կան. ԼԹ։ Թուղթ Սիբիկ. առ Հիմեր. է։ Կանոնք Առաք. Ջ։

2 Լատին՝ բարբառ. Presbyteræ, Episcopæ.

3 Յոյն. Աթոռք. Բ։ Եւս. Պատմ. Է. Ժ։

պեալք, և կղերիկոսք փոխանակ հօր կամ եղբօր ասէին լինել նոցա, և տնտեսել զաշխարհն ինչ նոցա՝ զոր կանանց անձամբ գործել չէր ինչ ի ձահ, մանաւանդ յաշխարհն յորս ուր ուրեմն ի փողոց երևին կանայք։ Ուստ նմին և կանայքն բարեպաշտք հարկանէին զայն ամենայն զառանին պետս սպասաւորութեան եղբարց իւրեանց՝ որ ոչ ընդդէմ էր պարկեշտութեան. զի զբնակելն ի միասին ոչ ինչ վնասակար համարէին կուսական ժուժկալութենէ։ Այլ այսմ դժպատեհ սովորութեան ընդդէմ զինեալ սուրբն Յովհան ոսկերբերան, թէպէտ և ոչ վերջացեալս համարի զնոսա ի ժուժկալութենէ, այլ եպերէ վասն զակատելոյն ի զբօսանս կենակցութեան և խօսակցութեան ընդ միմեանս՝ որ ախորժագոյն է այլասեռ բնութեանց, և վասն վարելոյնոցա կեանս անպատեհս և գայթակղականս, և արհանելոյ զանձինս յանդգնաբար ի վտանգ մեղաց։ Զի ի կարձել զանկարգութիւնս զայս արգելաւ ի սպառ վճռակատորայ որ չէին ամուսնացեալ՝ բնակել ի միասին ընդ կանայս օտարոտիս, կամ որ չէին ազգականք իւրեանց. և ժողովէ Նիկիայ սաստկացոյց և ևս զհրամանն, ընդ քեռ և ընդ մօր և ընդ կարևոր ազգականս ևեթ թոյլ տալով բնակել[1]։

Սովորութիւն եկեղեցեաց ոչ յամենայնի

[1] Թոմասին. գ։ մասն. կան. ձ։

միաբան էր յաղագս անամուսին կենացս վճռա-
կաւորաց։ Ըստ վկայելոյ սրբոյն Հերոնիմոսի[1]
արևելեան եկեղեցիք և Եգիպտոս և առա-
քելական սուրբ աթոռն, այս ինքն երեքին
մեծամեծ պատրիարգութիւնք, Հռովմա-
կանն, Աղեքսանդրեանն և Անտիոքայն զա-
մուրիս և զժուժկալս ևեթ մատուցանէին ՚ի
սուրբ աստիճանս. իսկ ամուսնացեալք՚ի նոցա-
նէ անդէն վաղվաղակի դադարէին ՚ի լինելոյ
ընդ կանայսն։ Այսրբոյն Հալիփան ասէ[2], ան-
փոփոխելի կանոն եկեղեցւոյ է չձեռնադրել
զերկկանայս, թէպէտ և յետ մեռանելոյ առաջ-
նոյն առեալ իցէ նոցա զերկրորդն. այն պէս և
զմի անգամ՚իսկ ամուսնացեալսն ոչ է օրէն ընդ-
ունել ՚ի սարկաւագութիւն կամ ՚ի քահա-
նայութիւն կամ ՚ի եպիսկոպոսութիւն և ՚ի կի-
սասարկաւագութիւն իսկ՝ եթէ չառնուցուն
յանձն հրաժարել յամուսնոյ իւրեանց, և
առաւել ՚ի կողմանն յորս անխափան պահ-
պանութիւն է կանոնաց. քանզի խոստովանի
նա՝ զի ՚ի տեղիս տեղիս ումանք ՚ի քահանայից և
՚ի սարկաւագաց և ՚ի կիսասարկաւագաց ու-
նէին կանայս։ "Այսորութիւնս այս, ասէ, ոչ
„ է ՚ի կանոնաց, այլ ՚ի սակարութենէ մարդ-
„ կան, որք թուլանան ըստ հանգամանաց ժա-
„ մանակին, և անտես առնի՝ զի մի քաղմու-
„ թիւ հաւատացելոց զրկեսցի ՚ի պաշտօնեից„։

[1] Հերոն. ՚ի Վիգիլանտ։ [2] Եպիփ. յուլ. հերձ. ծթ։

Օ՛ղնի ժամանակաց՝ ի Յոյնս և յարևելս թուլացան կանոնք ժուժկալութե՛ան. բայց ընդ ամենայն կաթողիկէ եկեղեցի վեր ումեք հրաման առնուլ կինն զկնի ձեռնադրութեան՝. յոր ե՛թէ իշխէր ոք՝ ընկենուին զնա՛ ի պատուոյն և ընդ աշխարհիկս գրեին։ Իսկ աստիճանաւորք՝ որպիսի ընթերցողքն են և դռնապանք՝ ամուսնացեալ էին, և բնակէին ընդ կանայս իւրեանց. յորոց և բազումք՝ ի նոյն կարգ ընպատասաւորութե՛ան կային զամենայն աւուրս իւրեանց, և կամ՝ զմի բազումս. յորոց ոչ սակաւք, իբրև մեռանէին ամուսինք նոցա, և կամ՝ ի կենդանութե՛ան իսկ երկաքանչիւրոցն հրաժարէին՝ ի միմեանց միաբան հաւանութե՛ամբ՝ կատարելագոյն կենաց հպատակեալ։

Ոչ սակաւք համբերէն, և եպիսկոպոսք անգամ աղքատին կեանս վարէին, կամ ոչ ինչ ընդհատ՝ ի սոսկականաց անարգ և անպատշաճ; և ոչ ինչ էր նոցա արտաքոյ յայտարար։ Զոր սուրբն Աբրինոս եպիսկոպոս Ալիսիոնի եհարց դատաւորն յատենի անդ ե՛թէ ազատ էր, ե՛թէ ստրուկ՝։ Այլ քանզի՝ ի ժամանակս հալածանացն զնոսա առաւել խնդրէին քան զայլս, զգոյշ կային չյայտնել զանձինս հանդերձիւքն, կամ այլով նշանաւ իշխանութե՛ան իւրեանց. այլ ե՛թէ առաւել՝ որպէս զիմաստասէրս զգենուին։ Ազատք և զկնի ձեռնադրութե՛անն

1 Կան. Ժող. Կեղեկս. Ա։ 2 Վկայաբ. սրբ. Աբրինոսի։

դարձեալ վաստակօք ձեռաց իւրեանց Հայաթայքէն զկեանս ըստ նմանութեան աստուածային Պօղոսի. Թէպէտ և կարող էին կեալ և յընկից եկեղեցւոյն՝ որ անյապաղ քաշխէր զամենայն կարևոր պէտս նոցա [1]. և վիճակաւոր իւրաքանչիւր տունոյր ամիս յամսոյ կամ յամենայն շաբաթս զկարգեալ ռոճիկ իւր կամ արծաթ՝ ըստ պիտոյից կարօտութեանն և ըստ գաստն պաշտամանն. զի աւագագունիցն 'ի նոսա՝ որոց ծանրագոյն էր աշխատութիւն, բազում ևս էին հասոյթք ըստ պատուիրելոյն Պօղոսի [2]: Էին 'ի նոցանէ որք չհրաժարէին և 'ի հայրենի կալուածոցն. որբոյն Լիսպրիանոսի մինչև յաւուրս մարտիրոսութեն էին բուրաստանք և տունք: Որբէն էր նոցա և վաճառաշահ լինել 'ի սուղ ինչ իրս, այլ չէր նոցա հրաման ձանապարհ առնել վանս այնր արտաքոյ քան զգաւառն [3]:

Որչափ զթովք իւրեանց և անձանձրոյթ վաստակօք սիրելի էին հովիւք և պաշտօնեայք առ հասարակ, նոյնչափ և պատկառելիք այլովք առաքինութիք իւրեանց: Ինխափան փութայր եպիսկոպոսն առաջին բազմել 'ի հասարակաց աղօթս, 'ի մեկնել զսուրբ գիրս, և 'ի մատուցանել զսուրբ պատարագն յամենայն կիւրակէս, և 'ի պահս անուանեալս կայից, կամ յորեք

1 Կնար. Թուղթ Ա՝: 3 Ժող. Եղիբեր. ժը:
2 ա Տիմ. Ե. 17:

շաբաթու և ուրբաթու աւուրն։ Պարապեին հանապազ ինքն և երիցունք իւր յուսուցանել զերախայս, ի միթիթարել զհիւանդս, ի զօրացուցանել զապաշխարողս, և ի հաշտեցուցանել զձշնամիս. նոքա էին խաղաղարարքն յամենայն վէձս, և ոչ հանդուրժէին զի քրիստոնեայք ընդդէմ հրամանաց Պօղոսի առաջի անհաւատից դատեսցին[1]։ Այսու որոյ որք միանգամ չանապային դատաստանի եպիսկոպոսի՝ նզովեալ լինէին որպէս զանզեղջ և ստահակ մեղաւորս։ Այլոց դուն ուրեք յառնէին վէձք ի քրիստոնէական յարմսոիկ՝ որ ոչ զանձանցն խնդրէին, և հեզք էին և համբերողք։ Այսպէսքարար յերկուշաբաթի աւուր լսէին եպիսկոպոսք զդատս. զի ի չհնազանդել դատաւորացն՝ լցեալ ժամանակ հնարս հայթայթէլ ի զգօնութիւն ածել զնոսա և յարդար իրաւունս մինչև ցկիւրակէն, յորում պարտ էր ամենեցուն միաբան յաղօթս կալ և հաղորդել սուրբ խորհրդոյն։ Յատէր յատեանի եպիսկոպոսն երիցամբք իւրովք՝ առ իւր ունելով զսարկաւագունս իւր, և դատախազք յոտս կային ի միջի նոցա։ Լուեալ զբանս երիցանցիւրոցն՝ ջանահնար լինէր ըստ կարի զի չև արարեալ զվճիռն՝ ի սէր միաբանութեան եկեսցեն և ի հաշտութիւն։ Այնպ դարձեալ ունկն դնէր

1 Կանոնք Առաք. Բ. խէ, բան. յամն. ՅՂ։ Տէրտուղ. Պահ. կն։ ա Կորնթ. Ջ։ Բաասախ. լԹ։ Կանոնք Առաք.

և բողոքանաց զնոցանէ որք ոչ քրիստոնեա-
բար կեին ։ Այլ եպիսկոպոսն ոչ ինքնին միայ-
նակ դատէր, այլ միաբան ընդ երիցունս իւր[1] ։
Այս էր տէր և իշխան ամենայն գանձուց և
կեղեցւոյ, և ոչ ոք երկնչէր զի զեղծանիցի նո-
վաւ. զի եթէ կասկածէին զբարեշաւութենէ
նորա, ապաքէն չհաւատային նմա զանփոխա-
նակելին ընդ ամենայն գանձուց զիշխանու-
թիւն հոգւոց ։ Ալ[2] ման այնորիկ առնա ընթա-
նային ամենեքեան որոց զիարդ պիտոյ ինչ լի-
նէր. նա էր հայր ամենայն աղքատաց, և ա-
պաստան ամենայն տառապելոց[3] ։

Ա՛ զարմացայ ապա այսուհետև ընդ սէր և
ընդ մեծարանս հաւատացելոց առ հովիւս իւ-
րեանց ։ Կրեալ կայ[4] ի վարս սրբոյն Պողի-
կարպոսի զի զմիմեամբք ելանէին աշակերտքն
ի լուծանել զկաշիկսն նորա[5] ։ Այսորութիւն էր
ամենեցուն ի մատչել առ քահանայս՝ յեր-
կիր տարածանել զանձինս և համբուրել զոտս
նոցա՝ ճաւալով սրտնուէրեան աջոյ նոցա ։ Էրանի
յոյժ տային անձանց յորժամ յաջողէր նոցա
ասպնջականել ի տան իւրեանց և զսարկաւագ-
զոք, և կամ սեղանակից իւրեանց առնել զնա ։
Այլ ձեռնամուխ լինէին յիրս ինչ մեծամեծս,
մինչեւ հարցեալ էր նոցա զհովիւն որ միայն
էր առաջնորդ համօրէն հօտին[6] ։ Այս Այ-

1 Կիպր. Թուղթ ԻՐ։
2 Կանոնք Ագաթ. Բ. իե, իե։ ԽԱ։
3 Թուղթ եկեղ. Զմիւռն։
4 Խղնատ. ի Թուղթան։

տուծոյ համարեին զնա և փոխանորդ Քրիս-
տոսի. որպէս զի անձնյարգութեան մանա-
ւանդ և արհամարհելոյ զայլս վտանգ առաջի
կայր եպիսկոպոսաց և քահանայից։ Այլ վը-
տանգ էր գարձեալ և որոյ ընդհակ էին մար-
գարէութեան և աքանչելագործութեան՝ որք
դեռ ևս յառաջ էին յերեզեցւոջ։ Պաքէն
ի մեծարանս յայս և յորդիական սէր հաս-
տատեալ էր ամենայն զօրութիւն հալուած՝.
զի ոչ էր նոցա այլ զէն հնազանդելոյ զժողո-
վուրդն, բայց յորդորանք և պատիժք հո-
գևորք. ոչ էր մարթ բռնանալ նոցա այլով ի-
ւիք, բայց բախելով զմտաց նոցա զխիղճ. վասն
որոյ որք առ մեծի ամբարշտութեան իչխէին
զնզովիւք ևս նոցա քամահել՝ ոչ ինչ վրէժս
լուծանէին ըստ աշխարհի։

ՅՕԳՈՒՍՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Համբերութիւն քրիստոնէից։

Ցոգուս ինն էր կենցաղ քրիստոնէից ցօր-
չափ թագաւորեաց հեթանոսութիւն, և զօ-
բացաւ հալածումն. զի պարտ իսկ էր նոցա
յայնժամ մեծապէս հսկել, և անդուլ առ
Աստուած զմիտս ունել և ի վերայ անձանց.

՝ Ոսկեբ. յղ. Վահան. Բ։

զի ոչ այլ ինչ ինայր նոցա 'ի սկսանել հալա-
ծանաց, բայց մատանել յաճուռնոյ իւրեանց
կամ յայլոց մերձաւոր ազգականաց որ ցանկայ-
ին ընդէց նոցա, կամ զչէտ մոլեալ էին կռա-
պաշտութեան։ Պարձեալ և պարտապանաց
մարթ էր զերծանել յայնու 'ի պարտուց, և զե-
րեաց յազատութիւն հասանել։ Յայնժամ և
հեթանոսք՝ որոց աչս արկեալ էր յօրիորդս
քրիստոնեայս, պարապ առնուին ածել 'ի վե-
բայ նոցա զանողորմ հարկն հաւանելոյ 'ի կամ
տափելոցն և կամ յանձն առնելոյ զյարբչարանս։
Պատմէ սուրբն Յուստինոս, զի այր ոմն
յատեան ձգեաց զկին իւր առ չկամելոյ նորա
այլ և կցորդ լինել մեղաց նորա. և այլ ոմն
'ի մահ դատապարտեցաւ 'ի հարցանել զդա-
տաւորն թէ ընդէր յաղագս քրիստոնեայ ա-
նուանն և եթէ սպանաներ զայն՝ որոյ 'ի հաւատս
ածեալ էր զկինն։ Այս թէպէտ առ ժամանակ
մի դուլ և դադար լինէր մարտի, հանապազ
երկիւղ էր վերստին սկսանելոյ, և ոչ քնաւ
խաղաղութիւն ընծորհէր 'ի սպառ եկեղեցւոյ.
այլ զսակաւս 'ի քրիստոնէից տանջէին վասն
խռովութեանց յուզելոց 'ի ժողովրդեան, և
կամ վասն այլ ինչ իրիք պատճառանաց. զի
ահա անհամար վկայք գոն և առ կայսերաւ-
թեամբ Վղէքսանդրոսի և այլոց՝ առ որովք

1 Հերոն. պատմ. վար. Յուլիա։ Պալագ. է։
Պաւղ Բարս. Ճառ Ե, 'ի սրբ. 2 Յուստին. Պատասխ. Բ։

չգոյը բնաւ հալածուածն ։ Վանգատի սուրբն Ա՛ելիտան ՚ առ կայսրն Ո՛ստոնկինոս , զի համարձակ յանուն կայսեր՝ զանխուռ ՚ի նմանէ՝ հարստահարեին և կողոպտեին զքրիստոնեայս ՚ի ծածուկ և յայտնի ։ Նթէ և տանջանք և բռնութիւնք դադար առնուին , ոչ շինչներ ոխ և ատելութիւն ։ Հրաման էր հանապազ թշնամանել զքրիստոնեայս , խօսել և գրել ընդդէմ նոցա , նախատել զնոսա և այպն առնել զնոքօք ՚ի բազմաժողով թէատրոնս իսկ ։ Ո՛չ միայն չգոյը ինչ պատիժ վասն այսոցիկ , այլ և գովութիւնս տային , և պնդէին և ևս ՚ի նոյն ։ Շատ են զոր ասէն Ա՛ելոս առ Ո՛րոգինէսայ առ ՚ի յայտ առնել քանի՛ եպերանօք գնային ընդ քրիստոնեայս ։ Ո՛չնչնար էր նոցա տեսանել զոր հանապազ զպիղծ պաշտամունս հեթանոսաց , լսատահել ամենայն ուրեք պատկերաց դարչելեացն և ամենայ վայրացն , և լսել յամենուստ զանս ամբարշտութեան և անառակութեան ։ Խազում արուեստն պէտք էին նոցա և անյողդողդ մտաց առ ՚ի կարող լինել ՚ի մէջ այնչափ խափանաց պահել կենդանի զՀաւատս , և անարատ զվարս ։ Ո՛ւմն որոյ տկարս համարէին զանխոսիկ զոյց զՀաւատս սասանել կարող էին իմաստասիրացն խօսք կամ բանք [2] ։

[1] Ակ. Եւսեբ. Պամ. Դ. ին. ապեքս . Յաձախ . Զ ։ Որոգ .
[2] Տե՛ս առ ՚ի վեր ։ նկատ. ընդդէմ կնէս ։

Ա՛յլ և բազում իմաստութեան պէտք էին նոցա առ ի չափու ունել զազատութիւնն անկ որդւոց Աստուծոյ, և զանվեհեր համարձակութիւնն որ բարւոյ խղճի մտաց է վկայութիւն։ Վիտէին արհամարհել զտարապարտ արհամարհանօք նոցա և զանիրաւ զրպարտութեամբք՝ առանց սղմուկս յուզելոյ ընդդէմ զրպարտչաց կամ որոնջելոյ, կամ յատելութիւն գրգռելոյ ընդ նոսա։ Ջանային ամենայն փութով պնդութեամբ չտալ ամենևին պատճառս հալածանաց, կամ սաստկացուցանելոյ զայն և ևս։ Վասն գործելին եթէ հնար էր խաղաղութիւն ունել ընդ ամենայն մարդկան[1], և բարիոքքաղաքավարութեամբն պապանձեցուցանել և զանգիտութիւն անզգամաց և զտգիտաց[2]։ Ո՛չ գոյր կայիւն յամենայնէ որ ոչ կարևոր էր ի բարեպաշտութիւն, կամ գրգռել մարթ էր այնու զՀեթանոսս զորս ամենայն հնարիւք ջանային մանաւանդ յանկուցանել յհնքեանս. զի էին իսկ նոցա բազում ինչ իրք որովք հարկ էր նոցա որոշել յանհաւատից. և չէր ինչ պիտոյ աւելորդս կամ նորս ջանալ հնարել։ Վասն իրի յայն ամենայն որ ոչ էր հակառակ կրօնից նոցա կամ սուրբ վարուց, ոչ ինչ խոիր էր ընդ նոսա և ընդ այլ Հեռվմայեցիս, կամ ընդ այլ

1 ա Պետր. Գ. 16։ ժԳ. 18։ ա Պետր. Բ. 15։
2 Պիսպ. Թուղթ Ե. Հռոմ.

Հոյնս, և կամ ընդ բնակիչս այլ և այլ աշխարհս՝ յոր հասանէր բնակել նոցա։ Եւ ինչ փոյթ էր նոցա վիճել կամ քարոզել այնոցիկ որք չկարժարէին լսել զբանն, չատ համարեալ աղօթել վասն այնպիսեացն և ջանալ լինել նոցա 'ի շինութիւն համբերութեամբ իւրեանց և առաքինի գործովք, բարիս հանապազ հատուցանելով ընդ չարեաց[1]։ Այսբէն Յգնատիոս աստուածազգեաց ասէ զքինուոցն որ պահէին զնա. "Յաղթեր ինձ .. կան տան ընձառիւծունք, որ բարիս ընդ .. կալեալ՝ վտանգարգոյն ևս լինին. այլ 'ի .. խրատ է ինձ չարութիւն նոցա[2]"։ Այսբէն Պողիկարպոս ինդութեամբ և պատուով ընկալաւ զեկեալն յբմբռնել զնա, և եդ առաջի նոցա ընթերս, և արկ անկողինս զի հանգիցեն[3]։ Պատուէր ետ սուրբն Ակրիանոս տալ քսան և հինգ ոսկի գահեկանս՝ որում սպանանելոցն էր զնա։ Պատմուչան մի նոր ընծայ արար սուրբն Աքսիմիլիանոս գահճի իւրում[4]։ Յայ ոմն 'ի վկայից ամբաստանեալ և 'ի բանտ արկեալ վասն քրիստոնէութեան, իբրև արձակեցաւ՝ վաճառեաց զամենայն ինչս իւր, զկեաս բաշխեաց աղքատաց, և զինաւորգան ետ զրպարտչաց իւրոց՝ բարերարս

1 Տերտուլ. Պատասխ. ի՛ր։ Օդոստ. ընդդէմ Փաւստ. Ի։
2 Թուղթ առ Հռոմ։
3 Թուղթ Եկեղ. Զմիւռն։
4 Վկայաբ. սրբ. Աքսիմիլ։

իւր կոչելով զնոսա [1] : Այլ այն Պօղոս ա-
նուն՝ ի լսել զՔրիստոս գլխատմանն աղաչեաց
վասն աղգականաց իւրոց , վասն Հրեից՝
վասն հեթանոսաց , և վասն որոց առ նմա
կային . և գլուխ աղօթիցն էր վասն դատա-
ւորին որ դատապարտեաց զնա , և վասն դահ-
ձին որ կատարելոց էր զհրամանսն [2] :

Պերապանծ և ահ էր համբերութիւն նոցա
առ թագաւորս և առ իշխանս աշխարհիս :
Ըլուաւ ոք ուրեք արտնջելոյ նոցա ընդդէմ
պետութեան , կամ խօսելոյ քամնհանոք զիշ-
խանաց : Ո՛չ ամենայն շուք և զպատիւ գնեին
նոցա , և հպատակ կային յամենայնի ուր ոչ
էր երկիւղ կռապաշտութեան : Ո՛չ Հարկս
Հարկանէին անգիմադարձ և անտրտունջ և
առանց խորամանկելոյ . այլ և ի վաստակոց
ձեռաց իւրեանց յաւելուին ի վերայ յօգնա-
կանութիւն նոցին :

Ոչ միայն յուզէին աղմուկս և ապստամ-
բութիւնս , այլ և չհաւանեցան բնաւ ի գունդս
գունդս դաւաճանիցն [3] ընդդէմ կայսերաց ընդ
երիս դարան այնոսիկ , Թէպէտ և վըիժա-
պարտք ոմանք էին ոմք ունէին զաշխարհն ,
Թէպէտ և անողորմ և անգութ հալածուէին :
Վրիստոնեայք միայն ոչ միաբանեցին և ոչ
ջանացան Թափել զանձինս ի Հերձուած , ի

[1] Վկայաբ . Հռոմ . սեպ . է : զեսս . ը :
[2] Նեսեբ . յղ . վկայ . Պա . [3] Ցերծուղ . Պատասխ . խը :

Պօռֆետիանոսէ, ՚ի Կոմմոդոսէ, ՚ի Կարակալլայ և յայլոց բռնաւորաց բազմաց։ Այլ միայն յայնչափ անհնարին հարստահարութիւնս և յանլուր խժդժութիւնս՝ յոգիս ապաստան կային, և չկորհէին զէն առնուլ ՚ի պաշտպանել զանձինս, թէպէտ և բազմագոյնք էին քան զամենայն ազգս որ ընդ Հռոմայեցիս տային պատերազմ։ Այս ինծայպէս էր դարձեալ, զի յայնչափ բազմութիւն քրիստոնէայ զինուորաց՝ որովք լի էին բանակք Հռոմայեցւոց, ոչ ոք այլ ազգ ՚ի հրամանաց իշխանին իւրոյ կամ զօրագլխի վարեցաւ զինուքն. որպէս զի և լեգէոնք ողջոյն՝ որպէս զօրքոյն Աւրիկէայ առաւել յանձին կալան կամակար խոնարհել ՚ի սուր զպարանոցս՝ քան վերջանալ ՚ի պարտուց իւրեանց առ Աստուած և առ կայսրն։

Հազիւ ուրեմն յանձն առին բանալ զբերան ՚ի ցոյց անմեղութեան իւրեանց, և գիրս հանել ընդդէմ անհնարին լուսանացն զոր կրէին[2], շատ համարեալ դար մի ողջոյն անբարբառ ՚ի չարչարանս լինել հանգոյն աստուածայնոյ վարդապետին իւրեանց, որ բամբասեալ և ոչ փոխարէն բամբասեր, և առանց հակառակ կալոյ մատներ զանձն որում յանիրաւի դատէրն զնա[3]։ Փոխանակ պա-

1 Վկայաբ. սրբ. Մաւրիկ։ 3 ՚ի Պետ. Բ. 23։
2 Որոգ. ընդդէմ Կելս։

տասխանատուութեան բարեգործութիք նո-
ցա էին : Ու Աքրիանոսիւ կայսերք սկիզբն
արարին ցուցանել գրով զարդարութիւն իւ-
րեանց , այլ այնպէս հեղութեամբ , և դար-
ձեալ այնպէս հզօր և իմաստուն բանիւք՝ որ
դիւրին էր ի միտ առնուլ՝ զի առ սուրբ նա-
խանձու Հնմարտութեան գային ի գրել[1] :

Այս նոցա աննկուն համբերութիւն յաղ-
թանակեաց իշխանութեանց , և խոնարհեցոյց
զնոսա առաջի աւետարանին : Մինչև դա-
դարեալ հալածանաց , և ոչ գոյր թիւ քրիստո-
նէից : "Ահրիկեանք ոմանք եմք , ասէր Տեր-
„տուղիանոս , և ահա ընութիք զամենայն
„վայրս , զքաղաքս ձեր , զտունս , զաւանս ,
„զգանակս իսկ ձեր , զգեղս , զապարանս , զը-
„ծերակոյտն , և զՀասարակաց Հրապարակ[2]„:
Վանզի գոյնքրիստոնեայք յամենայն կարգս
և յամենայն մեծամեծ աւագութիւնս : Ի վը-
կայաբանութիւնս անդ է տեսանել և ատե-
նակալս և վերակացուս և փոխանակս բդեշ-
խից , և հազարապետս և գանձապետս և բը-
դեաշխս իսկ : Ու յաւտնին սպասաւորս , և
յերեւելի պաշտօնեայս կայսերացն Ադրոնի ,
Տրայիանոսի , Մարքոսանդրոսի , Պեւկոսի ,
Սաղերիոսի և Պիտկղետիանոսի էին քրիս-
տոնեայք[3] :

1 Եւսեբ . Պատմ . գ . իէ :
2 Տերտուղ . Պատասխ . ԼԷ :
3 Ա կայաբ . Հռոմմ :

Ո՛ զարմացեալ ժողովրդեան ընդ հանդէս առաքինութեան նոցա և ընդ բազմապատիկ աջանչելագործութիւնսն, սկսանէր իրաւունս առնել նոցա, և քարոզել բարձրաձայն Թէ մեծ է Աստուած նոցա, և ինքեանք սուրբք՝. մինչ զի երբեք երբեք՝ի տանջել վկայից ընթացեալ ամբոխին՝ի տեսիլն՝ի Թիկունս նոցա կայր ընդդէմ կամաց նոցին, և քարկոծեալ զդատաւորն փախուցանէր յատենէն։ Խաղաղ անգամ և նստարք և բանտապետք և պահապանք և զինուորք և դահիճք՝ի հատոս եկեալ՝ աղաղակէին միանգամայն՝ քրիստոնեայ եմք, և ընթացեալ միաբան հաղորդ լինէին չարչարանաց նոցա։ Վէպ եղև և դեղասանից անգամ՝ մինչ ծաղր առնէին՝ի Թէատրոնս զսուրբ պաշտամունս՝ դառնալ՝ի հատոս և լինել վկայք երևելիք։ Արուեստ տեսեալ հեթանոսաց՝ զի աշխարհ ամենայն՝ի քրիստոնէութիւն դառնայր, մտաբերեցին՝ի յետին անապօրոյն հրդեհ հալածանաց. այլ և այն ոչ ինչ ընդհատ յառաջնոցն առաւել եւս ծաւալեաց և սերտեաց զհաւատս. որպէս զի ամենայն ինչ ձեռն տայր քրիստոնէութեան՝ յորժամ Կոստանդիանոս ամբարձաւ եկաց նմա պաշտպան։

1 Եւսեբ. Պամֆ. Ջ. իբ։ 2 Վկայաբ. սրբ. Վռնիփակ. յամի 303։ Վկայաբ. Հռոմի։

Ա ՐԱՆ ԵՐԲՈՐԴ

ՅՕԴՈՒԱԾՕ ԸՈՒՆՉԻՆ

Թագաւորք քրիստոնեայք ։

Յերրորդ տան Ձառիս հասի աւասիկ յո-
րում առաջի կայ ինձ յանդիման ահնել զը-
վարս քրիստոնէից ՚ի խաղաղութեան եկեղե-
ցւոյ և յաղատութեան ։ Յերեքաբիւր ամաց
հետէ յոգւոց հանէին զՀետ խաղաղութեանս
այսորիկ՝ առ ՚ի բարձրացուցանել անարգել և
անխափան զպաշտօն Աստուծոյ. այլ ՚ի փորձոյ
իրաց յայտնի եղև զի օգտակարագոյն ևս էր
Հալածուին ։ Վակայն և յետ այնորիկ ընդ հա-
րուստ ժամանակս նոյն առաքինութիւնք և
վարք զոյս գծագրեցին՝ փայլեցին յեկեղեցւոջ.
բայց ինձ ինձ ցուցանել զոր ինչ արգասիք ե-
ղեն ազատութեանն անդէն ՚ի սկզբան ։

Այսպիսին նոր ինն սքանչելիք էին տեսանել Թագաւորս քրիստոնեայս . և յառաջինն դարս անհնարին ինն կարծէր խոնարհել աւագայ ընդ լծով խիստ կարգաց եկեղեցւոյ : Եւ ոք կարող էր միաբանել՝ ի մարդ զխոնարհութիւն և զմեծութիւն վարուց ընդ տիրական իշխանութեան և ընդ բազմագանձ լիութեան . նմին իրի ոչ ինչ յերկուանայր ասել Տեր-տուղիանոս՝ թէ “Կայսերք դառնային՝ ի քրիստոնէութիւն , եթէ էր ինչ հնարաւոր կայսր և քրիստոնեայ լինել միանգամայն[1] ,, : Նման սմին խօսեր և Ղուկինես[2] : Այլ ահա արար Աստուած և զքանչելիս զայս յանդիմանութեան տիեզերաց . և չիք ինչ մեծ քան զայս փոփոխումն լեալ՝ ի ժամանակին զորմէ բուռն հարեալս եմ խօսել . քանզի այս իսկ եղև պատճառք ազատութեան եկեղեցւոյ :

Ուր ահա այն ինչ՝ ի հաւատս դառնայր կոստանդիանոս , անդէն վազվազակի անուն Զիսոսէս և խաչն նորա բարձրանայր՝ ի գլուխ զօրաց Հռոմայեցւոց : Որ ցայնժամ արշաւարհ գործին էր տանջանաց , զպակաս պնուաւ հետև պճներ կայսերաց : Ուր մատուռն յապարանս[3] , ուր կայսրն մեկուսացեալ զօր հանապազ՝ ընթեռնոյր զսուրբ գիրս , և աղօթեր

1 Պատասխ . իե :
2 Ընդդէմ Կելս :
3 Եւսեբ . վարք Կոստանդ .
Բ . ժբ , ժգ : Դ . ժէ , իե : Սոզոմ . Ա . ը :

զկարգեալ ժամն, և առաւել՝ի կիւրակէս՝ յորում հրամայէր հանգիստ և հեթանոսաց՝։ Այրէր ընդ բանակին և վրան՝ի ձև եկեղեցւոյ առ՝ի կատարել զաստուածային պաշտամունս, և բաշխել հաւատացելոց զսուրբ խորհուրդս։ Յրթային զհետ բանակին քահանայք և սարկաւագունք և եպիսկոպոսք իսկ, զորս պահապանս կոչէր հոգւոյ իւրում։ Կառոյց քաղաք քրիստոնէից զՆիւզանդիոն՝ որ և Կոստանդնուպոլիս։ Օհակուն գիշերոյ զատկին տայր կատարել մեծահանդէս Ջրագալուցիւ ոչ միայն յեկեղեցիս, այլ և արտաքոյ ընդ քաղաքն ողջոյն, լուացանելով ջահս՝ մանաւանդ թէ սիւնս մոմեղէնս որք զսուրբ գիշերն զայն փոխէին՝ի գեղեցիկ լոյս տուընջենային։ Ի հրապարակս անդ մեծի քաղաքին էր տեսանել աղբիւրս զարդարեալս՝ի դրուագս պատկերաց քաջի Հովսւին, կամ Դանիէլի՝ի գուբն առիւծուց։ Զգանակին անդ բնաւուրեք կուռք կամ տաճարք դիպ։ Ոչ ո՞ք ոչ գիտիցէ զառատաձեռնութիւն Կոստանդիանոսի առ Տարս Արիկիոյ ժողովոյն, և զմեծաբանս զոր արար նոցա։ Այս պատրաստեաց նոցա կառս՝ածել զնոսա՝ի մագաց մեծի տեղւոյն Թեհեան իւրոյ՝, և զամենայն ժամանակս ժողովոյն նա կերակրեաց զնոսա, և ապա ին-

1 Եւսեբ. վարք Կոստանդ. 2 Սոկրատ. Պատմ. Ա. հ, ը. Բ. ժը։ Գ. ղ, հ։

քնին յուզարկաւորէր զնոսա մեծապարգեւս ։ Ի հուր ընկէց զԹուղթս ամբաստանութեանցն զորս տուեալ էին նմա ընդդէմ եպիսկոպոսաց։ Համբուրեաց զսպիս վիրաց՝ զորս տակաւին տանէին ՚ի մարմինս իւրեանց սուրբք խոստովանողքն նշանակս հալածանացն ։ Կամուտ ՚ի ժողովն առանց թիկնապահաց ցածութեամբ և խոնարհութեամբ , և ոչ բազմեցաւ մինչև հրաման եւտուն եպիսկոպոսքն ։ Յետ ժողովոյն մեծաւորք կոչուէնս արար ամենեցուն , ինքն էս ՚ի միասին բազմեալ ընդ նոսա ՚ի սեղան ։ Յայնժամ յայտնապէս տեսաք Թագաւորել Քրիստոսի և ՚ի վերայ Թագաւորաց ։

Գաւել էս մեծն Թէոդոս պանծացոյց ըզկրօնս արդեամբք քրիստոնէական առաքինութեանց՝ ։ Զզօրեր բազում , Կոստուած ապաւեան տանէր յամենայն դժուարին իրս , և զյաջողութիւն զինուց իւրոց նորա զօրութեանն գաւաներ պարգեւ ։ Զնոսաց հրբեւն բարկութեանն ՚ի վերայ Թէսաղոնիկեցւոց . մեծ էր յանցումն , այլ ըստ նմին եղև և ապաշխարութիւն նորա , և քան զամենայն եպիսկոպոսունս մեծ համարեցաւ զսուրբն Ամբրոսիոս վասն անպատուական Համարձակութեան նորա ընդ իւր ։ Ի գովութիւն առեալ է և դշխոյ կին նորա վասն բարեպաշտութեան իւրոյ և ողորմածութեան առ աղքատս ։ Կոանդն աստուածպաշ-

1 Թէոդոսեա . Պատմ. եկեղ. Գ . ԺԴ ։

տուԹեան պահեցաւ յաղագսոյն անդ նո-
ցա . այլ առաւել ևս փայլեաց ՚ի սրբուհին
Պուլքերիա Թոռն նոցա , որ նուէր զինքն ա-
րար Աստուծոյ ուխտիւք կուսուԹեան ՚ի հըն-
գետասան ամաց հասակին հանդերձ քերքքն
երկոքումբք , և այնպէս մեկնեալ առանձին
կեանս վարեաց ՚ի մէջ սրբուհեաց՝ պարապեալ
հանապազ յաղօԹս և ՚ի գործս բարեպաշ-
տուԹեան , զի մատեներիքն ժամանակին՝ վա-
նայ իմն նմանեցուցանեն զպալատն զայն , որ
սրբագոյն քան զամ վայրս Ճանաչէր ՚ի նոցանէ :

Ի կրԹարանի անդ առաքինուԹեան մնոյց
նա զեղբայր իւր զփոքրն Թէոդոս . որ զնորին
ձեռս ընԹանալով սրբուԹեան շաւղացն՝ վա-
ղայարոյց լինէր զօր հանապազ օրհնել զ՚ա-
ստուած միաբան ընդ քոյր իւր . ստէպ աղօ-
Թէր , յաՃախէր յեկեղեցիս առատ ընծայա-
բերուԹեամբ , պահէր բազում անգամ՝ մա-
նաւանդ զօրն չորեքշաբաԹի և ուրբաԹու .
էր նորա մատենադարան եկեղեցական գրոց .
ուսեալ էր ՚ի բերան զդիրս սուրբս , և խօսէր
զայնցանէ ընդ եպիսկոպոսունս իբրև զմի ՚ի
նոցանէ : Պատկառէր ՚ի նոցանէ , և մեծարէր
յոյժ զնոսա . պատուէր և զամենայն առաքի-
նի քրիստոնեայս : Ծննդեամբ մեծաւ
փոխադրեաց զազգս նշխարս սրբոց , և շի-
նեաց բազում անկեղանոցս և մենաստանս ՚ :

՚ Սակր. Պատմ. Է . ԽԲ : Սոզոմ. Թ . ՃԱ : Թէոդոր . Դ . ԼԲ :

Ոչ միայն ՚ի հրահանգս կրօնից ուսոյց զնա քոյր իւր, այլ և բազում խնամով խելամուտ արար զնա ամենայնի որ անկ էր կայսեր։ Ուսուցչաց երևելիք կէաք վարժապետէին նմա ՚ի գիտութիւնս, այլք մարզէին զնա ՚ի ձիերնթացս և ՚ի զէնս, և ուսուցանէին զնա ՚ի տօթ և ՚ի ցուրտ, ՚ի քաղց և ՚ի ծարաւ։ Իսկ յայլ ամենայն բարեձևութիւնս, ՚ի զգեստս, ՚ի շարժուածս և ՚ի գնացս՝ ինքնին քոյր իւր առաջնորդէր նմա. նա կրթէր զնա համեստս ծիծաղել, սիրելի ընծայել զանձն կամ ահաւոր ՚ի գէպ ժամանակի, և ունկն դնել երկայնմտութեամբ. որովք և յաջողեաց նմա իշխել բարկութեան իւրում, և լինել քաղցր և մարդասէր և գթած։

Ի յապիսի աղ էր Թէոդոս փոքրն ծնեալ ՚ի ծիրանիս յարևելս յապականեալ դարու։ Իսկ Մարկիանոս որ յետ բազում մեծամեծ վաստակոց և բազմապատիկ փորձոյ յաջորդեաց զնա, արիագոյն և հանդիսիւ և հանճարով զնոյն բարեպաշտութիւն եբեր յանձին և ըզնախանձ ՚ի վերայ կրօնից։ Ոչ ինչ պիտոյ են այլ հաւաստիք առաքինութեան նորա. զի շատ է ընտրութիւն սրբուհւոյն Պուլքերեայ, որ զնա խնդրեաց իւր ՚ի փեսայ առ ՚ի թագաւորեցուցանել զնա ՚ի միասին ընդ իւր, բայց միայն պահելով զկուսութիւն։

ՅՕԳՈՒԱԾՆ ԵՐԿՐՈՐԴ

Ձև եկեղեցեաց։

Իբրեւ դադարեցոյց Յոստանդիանոս զՀալածանս, անդէն վաղվաղակի յամենայն տեղիս սրբեին տաճարք՝ որպէս պատմէ Եւսեբիոս[1], և լինէին ժողովք եպիսկոպոսաց։ Յամենայն ուրեք՝ ի մի վայր եկեալ ժողովէին հաւատացեալք, և անխափան ևս էին՝ ի սաղմոսերգութեան և՝ ի պաշտել զսուրբ խորհուրդս, և հռչակաւ մեծաւ կատարէր ամենայն կարգ կրօնից։ Ոյժ որոյ՝ ի դէպ է խօսել աստէն զարարողութեանց առ հասարակ, սկիզբն առեալ՝ ի ստորագրութենէ եկեղեցեաց՝ որչափ հասին առ մեզ աւանդութիւնք գայնցանէ՝ ի գիրս, կամ՝ ճառագուածք՝ ի հին շինուածս։ Յոմ զայն նախ պարտ է՝ ի միտ առնուլ, զի անդստին՝ ի նմին ժամանակաց ոչ էր հրաման՝ զև սրբեալ զեկեղեցիս ըստ օրինաց՝ ժողովել՝ ի նմին առ՝ ի կատարել զաստուածային պաշտամունս. որպէս և ոչ հրաման էր պաշտել զխորհուրդս արտաքոյ եկեղեցւոյ կամ առանց սուրբ սպասուց։ Զայս ամենայն յայտնապէս է իմաստասիրել յամբաստանութենէն ընդդեմ սրբոյն ՅԹանասի[2]։

[1] Եւսեբ. Պատմ. Թ. ։ [2] Աթան. Պատասխ. Ն։

Ոըչափ ինչ հնար էր հեռագոյնս ի հասա-
րակաց բնակութենէն և յաղվիկ կառուցանէին
զեկեղեցիս, և շուրջ զնոքօք էին գաւիթք և
պարտէզք, և կամ բնակարանք նմին եկեղե-
ցւոյ պատկանեալք, և ամենայնին շրջապատեալ
յօրմոց [1]։ Այս ընդ առաջ ելանէր դուռն մեծ
կամ անդաստակ՝ ընդ որ էր մտանել ի բակ
սիւնազարդ քառակուսի, և շուրջանակի գա-
ւիթք յարկածածուկք և սիւնաբերդք, որպիսի
են քառանկիւնք մենաստանաց։ Ի գաւիթս
կային աղբատք, որոց և հրաման էր խնդրել
ողորմութիւն ի դուռն եկեղեցւոյն։ Ի բակին
էր աղբիւր կամ աղբիւրք բազումք առ ի լուա-
նալ զձեռս և զերեսս նախ քան զկալն յաղօթս,
ընդ որոց փոխանակեցին զնոսի աւազանք օրհ-
նեալ ջրոյ։ Ի կատարած գաւթին էին կրկին
անդաստակք, ուստի ընդ երիս դրունս էին
մուտք ի սրահ կամ ի խմբարան եկեղեցւոյն։
Կրկին աստի անդաստակս, զի մին էր ար-
տաքոյ, և միւսն ի ներքոյ, զոր կայան երա-
խայից կոչէին Ոչխար [2]։ Ի ներս ի խմբարան
անդր մեկուսի կային շինուածք ոչ ինչ նուազ
քան զերկուս. սկրտարանն էր ի մուտս
անդ, և ի ներքսակողմն սարկաւագանոցն
կամ աւանդատուն. և յորմանս յեկեղեցեաց

1 Ա՛Թան. Պատասխ. Բ։ Հատուած. Ջ։ Պաւլին. Թուղթ
Ա՛սէբ. Պատմ. Գ. Ջ. և վարք Գ՛Բ։ Գրիգ. Տրամախոս. Ի.
Կոստանդ. Գ, ՀԷ, ՀԸ, ՀՆ։ ԺԲ։
2 Մատթիոս Ջեռուձի՛ Նկարագ. * Նաջարեան.

կրկին սարկաւագանոցք էին։ Ի բազում եկե-
ղեցիս երկուստեք ընդ երկայնութիւնն էին
սենեակք կամ խուցք՝ խորանք կոչեցեալ ՚ի
դիւրութիւն այնոցիկ որք կամէին պարապել
՚ի խոկումն, կամ աղօթել առանձինն։

Եթէ նեղքին սրահ եկեղեցւոյն ընդարձակ
էր, յերիսբաժանէր երկոքումբք կարգաք սեանց
որք ՚ի վեր ունէին զկամարակապս երկոցունց
կողմնական սրահիցն յորոց ՚ի միջի կայր խմբա-
րանն, որպես ե տեսանել յայնեական վաղեմի
եկեղեցիս։ Ի խորս եկեղեցւոյն յարևելս կոյս
կայր սեղանն, և յետ կոյս սեղանոյն ժամատե-
ղին կամ սրբարանն[1]։ Յատակ տեղւոյն յետ
կոյս սեղանոյն կիսաբոլոր էր, և ՚ի վերուստ
գմբեթարդ կոնքաձև, և բացուած գմբեթին
կամարաձև[2]։ Մերձաւս քրիստոնեայք կառուցան
զառաջինն նմանող լինել սիներգրիոնին Հրէից,
յորում դատաւորք Հանդերձ նախագահին
՚ի միջի բազմին շուրջանակի ՚ի ձև կիսաբո-
լոր։ Ի սպիսկոպոսն ունէր զտեղի նախագահին
՚ի սրբարանի անդ ՚ի միջին բազմել, և երի-
ցունքն յաջմէ նորա և յահեկէ. զի եպիսկո-
պոսին բարձրագոյն քան զայլոցն էր։ Ի ազգմա-
կանն համօրէն կոչէր առեան՝ վասն նմանու-
թեան առենից աշխարհական դատաւորաց[3]։
Ի սպիսկոպոսն էր որպէս առենապետ, և երի-

1 Տիւքանժ, Կլկարագ. սրբ. Սոփիայ։
2 Թամմուզ. Մանեդր. Դ։
3 Գրիգ. Լծաբ. ՚ի տաղն։

ցունքն խորհրդականքն նորա : Խարբրաւանդակ
եր առեանն . և եպիսկոպոսին հարկ եր ինձանել
առ՝ի մատչել՝ի սեղանն : Խաղխամեայ անձըր-
պետաւ զատուցեալ եր սեղանն . և արտաքոյ
նորին եր և այլ անձրպետ՝ի խմբարանի ուր
կային երգիչք՝ վանն որոյ և կոչեցաւ պաս :
Երգիչքս այսոքիկ գպիրք էին, որոց պաշտօն
եր երգել յեկեղեցւոջ : Ի մուտս անդ դասուն
գոյր բեմ կամ ամբիոն, այս ինքն է բարձրաւան-
դակ տեղի կրկին ելանելեօք երկուստեք, ուս-
տի զընթերցուածսն ընթեռնուին : Երեք մի
միայն եր ամբիոնն, ի միջի անդ կայր . այլ կե-
կեղեցիս ուրեք երկուս առնէին ամբիոնս, զի մի
խափան լիցի տեսուրճ սեղանոյն : Ամբիոնն՝
ուստի զաւետարանն ընթեռնուին, կայր յաջ
մ եպիսկոպոսին, և՝ի ձախմէ ժողովրդեան .
և՝ի հանդիպոյ կայր միւսն, ուստի ընթեռնուի-
ին զընթերցուածս առաքելական թղթոց :
Ուրեք ուրեք և երրորդ առնէին ամբիոն առ
՝ի զմարգարէիցն զգիրս ընթեռնուլ :

Օ սեղանն դուն ուրեք փայտեայ առնէին .
զի գրեթէ միշտ եր տախտակ կճեայ կամ՝ի
պորփիւրէ . երբեմն և՝ի ձոյլ արծաթոյ կամ
յոսկւոյ՝ ընդելուզեալ ակամբք պատուակա-
նօք . քանզի և ոչ մի ինչ պատուական բաւա-
կան համարէին՝ի տանել զսուրբն սրբոց . և
զմեծարանս զայսոցա յայտ առնեն և աղօթք
և օրհնութիւնք օծման սեղանոյ : Սեղանն՝ի

1 Ընթեռ. առ միանձն :

վերայ քառեակ ոտից կամ սիւնակաց էր Տաճ-
տատեալ, որ ըստ նմին Համեմատութեան էին
'ի նիւթ ոյ պատուականէ. և տեղի սեղանոյն
ընտրեին ըստ կարի 'ի վերայ գերեզմանի ու-
րուք 'ի վկայից. զի սովորեալ նոցա ժողովել
առ տապանովք նոցա, անդ և եկեղեցիքն շի-
նեցան. և աստի զկնի սահմանեցաւ կանոնն
դնելոյ 'ի սեղանս զնշխարս սրբոց յօծանելն զՆ
նոսա: Յիշատակ կամ խոստովանութիւնս
կոչէին զգերեզմանս վկայիցս այսոցիկ. և էին
'ի խորս ընդ երկրաւ, ուր իջանէին յառաջոյ
կողմանէ սեղանոյն: Ընտաքոյ ժամու պատա-
րագի մերկ կայր սեղանն, կամ ծածկեալ ևեթ
անզարդ, և առանց ծածկութեին ոչ մի ինչ դը-
նէին 'ի վերայ նորա: Այս կանգնեցին սիւնս
չորս 'ի չորեսին անկիւնսն, որ զյարկ իմն խո-
րանաձև զսեղանոյն 'ի վեր ունէին, որ կոչեր
կիբորիոն 'ի ձևոյն, զի բերէր զկերպարանս
շրջուն բաժակի. քանզի անդ իմն բաժակի էր
առ նախնիս նովին անուամբ՝ ածանցեալ յա-
նուանէ պտղոյ իրիք առ Եգիպտացիս[1]:

1 Բարսղ. 'ի վկ. Յուլ:

ՅՕԳՈՒԱԾՕ ԵՐՐՈՐԴ

Ջարդք եկեղեցաց։

Եւ այս ամենայն զարդարեալ էր չքեղապանծ. կիբորիոնն և սիւնքն որ ի վեր ունէին զայն, էին գրեթէ միշտ համակ արծաթի, և կշռէին ոմանք ի նոցանէ լերս երկու հազար։ Ի մէջ սեանցն ձգէին վարագոյրք յայգնիս կերպասուց ի ծածկել զսեղանն շուրջանակի ի քառից կողմանց։ Ջարդարեալ էր կիբորիոնն պատկերօք և դրուագօք ոսկւոյ և արծաթոյ, յորոց մի էր և խաչն ի կատար կիբորիոնին։ Պախեալ կային զսեղանոյնն և աղաւնիք ոսկի կամ արծաթի ի նմանութիւն Հոգւոյն սրբոյ։ Էր մի ի կիբորիոնի անդ պահէր հաղորդութիւնն սուրբ վասն հիւանդաց, և էր մի ի տապանակս միայն որպէս այժմ։ Ջնոսոս կիբորիոնին ծածկէին երբեմն արծաթով, և կամ կձիւ պատէին զայն և զկնքն։ Սիւնք խարաւանին էին կձեայք, և խոյակք նոցա պղնձիք ոսկեզօծք. իսկ յատակն կձասալ և յեկեղեցիս ուրեք առ ի ներքոյքն առ հասարակ պատեալ կձով։

1 Ընտաս. ի Վեղեսոր. ի Կոստանդ. յամի 536։ Մատվէս Լևո Գ. ի Սահմ. Դ։ Ժող. Ցես. ի կարգս Հռոմ. ի։

Լ՚ի դարձն որ զկնի՝ ի կիր առին զպատ-
ճապակեայ միւսիոն նկարս, որ է կիտուած ՚ի
գունագոյն մանուշից խձից ապակեաց, որով
մարթ է զամենայն պատկերս ձեւացուցանել
անջնջելի։ Լ՚այլ՚ի վերայ այսոցիկ և սովորա-
կան նկարուք պաճուճեալ էին որմք եկեղե-
ցեաց, յանդիման առնելով զայլ և այլ պատ-
մուԹիւնս հին կտակարանաց, մանաւանդ զըս-
տուերս նորոյս, զտապանն Նոյի ասեմ, զպա-
տարագն Լ՚Աբրահամու, զանցեան ընդ ծով կար-
միր, զՅոշեան ընկեցեալ ՚ի ծով, զԼ՚անիել
՚ի մէջ առիւծուց՝։ Ի բազում տեղիս դար-
ձեալ յորմն անդ՝ էր տեսանել զպատկերս
փրկչին և զսքանչելագործուԹիւնս նորա, զբ-
ժշկացուցանելն զկոյր, զյարուցանելն զԼ՚ա-
զարոս։ Ալ կայէ Լ՚ւսեբիոս՝ զի ՚ի հրապարակս
Կոստանդինուպոլսի էտ դնել Կոստանդիանոս
զպատկերս Հովուին քաջի, և զԼ՚անիելի ՚ի
մէջ առիւծուց։ Լ՚ւր դարձեալ վկայէ այլուր՝,
զի անդստին յառաջին ժամանակաց անտի նը-
կարեալ պահէին հաւատացեալք զպատկերս
սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, նա
և զփրկչին իսկ. և աւանդուԹիւն էր առ նախ-
նիս անխափան պատուել այսու զբարեբարս
իւրեանց։ Լ՚այց սուրբն Ե Գոստինոս, ասէ զի
առ իւրովք ժամանակօք ոչ ևս գտանէին ձըշ-

1 Սոզ. Հռովմ. Ը, է, ԼՃ։ Գ. խթ. և Պատմ. Ի. ԺԵ։
2 Եւսեբ. վարք Կոստանդ.

գրիտ պատկերք նոցա [1], այլ ըստ կամն նկա-
րեալք, որպէս և արդ։ Հաւատոյս ասել եկե-
ղեցիք իւրաքանչիւր յանդիման առնէին զպատ-
մութիւն վկայից որոց ոսկերք հանդուցեալ էին
ի նոսին. և առ այս կրկին գեղեցիկ օրինակս
ի ներքս ածէ Պրուդենտիոս, զսրբոյն Կա-
սիանոսի և զսրբոյն Իպպոլիտեայ, և Յաե-
րիս զսրբուհւոյն Ֆուիմեայ [2]։ Յաւելեալ է
վասն տգիտաց առնէին զնկարս զայսոսիկ, ո-
րոց իբր մատեան ինն էին նոքա, որպէս ասէ
Կիրիղորիոս քահանայապետ՝ի գրել առ կայսրն
Լևոն աղաղակ պատկերամարտից. «Զքո
և կանայք՝ի գիրկս ունելով զայն ինչ մկըր-
տեալ որպիսի՝ ցուցանեն նոցա մատամբք, և
յուշ առնեն մանկապուհիցն հասակաւ և
անհաւատից զվարս նոցա, և ընդոստուցեալ
առ Յաուած՝ի վեր համբառնան զմիտս
նոցա.» [3]։ Պրուն եկեղեցեաց ընդելուզեալ
էին փղոսկրեայ և արծաթի և ոսկի զարդուք,
և վարագուրաւ ծածկեալք։ Ի գլխաւոր գը-
բունս դնէին և նշխարք սրբոց. և վասն այնո-
րիկ մեծարանս և պատիւս մատուցանէին հա-
ւատացեալք զրանց իսկ եկեղեցեաց [4]։

Սարկաւագանոցն կամ աւանդատունն էր
չինուած մեծ առ երի եկեղեցւոյն, ուր էր և

1 Օգոստ. յղ. Երրորդ. Ը. ՟ի։
2 Պրուդենտ. երգ ՟ի ևժ։
3 Գրիգ. Թուղթ Ա. ՟ի ժղ. նիկ. Բ։
4 Հերոն. առ Դեմետր։

գանձարանն անօթոց սրբոց [1]. վասն որոյ պաշտօնեայք ևեթ որոց հրաման էր ուսնել զնոսին՝ կարող էին մտանել անդր: [2]Ընդ պահէին և զիրք սուրբք, զգեստք քահանայականք և որ ինչ այլ ևս սպասք պատուականք ընծայք հաւատացելոց, և [3]ի տեղիս ուրեք սուրբք հաղորդութիւնն իսկ [4]ի փղոսկրապատ տիպ [5]: [6]Իսկ խորհրդանոցն էրնեբքին սենեակին կամսրահն յորում ժողովեր եպիսկոպոսն ընդ երիցունս իւր խորհել և խօսել [7]ի ծածուկ զիրաց եկեղեցւոյ, և կամ դարձեալ՝ պատրաստել [8]ի պատարագ. որպէս սուրբն [9]Արտինոս, որ սովոր էր անցուցանել անդ յաղօթս երիս ժամս նախ քան զսուրբ պատարագն [10]: [11]Ի տեղիս ինչ այնպէս ընդարձակ էին խորհրդարանքս այսոքիկ, որպէս զի մարթ էր և ժողովս գումարել [12]:

[13]Հազուագիւտ յոյժ էր թիւ բաժակաց և մաղզմայից, որ յառաջին ժամանակս ապակեայք էին, և բազումք ևս արծաթիւք և կամ յոսկւոյ՝ յաւուրս իսկ հալածանաց: [14]Հաճախ որպէս [15]ի մէջ [16]նոյն և առ [17]յատինս զըմպանակն նշանակէ, իսկ մաղզմայ զափսեայն կամ զսկաւառակ եկեալոց ցուցանէ: [18]Յոլովագոյնք [19]ի բաժակաց եկեղեցեաց կըռէին լտերս երկուս: [20]Աղըմայք էին կոնք կամ տաշտք մեծամեծք՝ մին

1 Բարսն. [21]ի վկ. Նոյեմբ. ժբ:
2 Պաւլին. Թուղթ ժբ:
3 Սեւեր. [22]ի սուրբն Մարտ:
4 Ժող. Կարթագ:

չև կրեալ նոցա երբեմն լտերս երեսուն, բայց կրեալն սովորաբար լտերս քսան։ Ընդստին ի ժամանակաց անտի սովորութիւն էր և մնալոյ նաց յեկեղեցիս լուցանելոյ, և լուցանէին բազում յոյժ և ի լոյս տուընջեան հանդերձ բազում ջահիւք[1]. զի ի վաղնջուց իսկ ժամանակաց նշանակք իմն մեծարանաց էին այնքիկ և ուրախութեան. զորմէ յիշատակէն և գիրք Մակաբայեցւոց[2]։ Հուր տանէին առաջի աւագանւոյն Հռովմայ. և պատմութիւն ինքնակալացն յանդիման առնէ մեզ ընդ այլ նշանակս բազմագունից ի մեծամեծ պաշտօնէիցն սեղան մի յորում եդեալ կայր մատեան ի վերայ բարձի, է զի հոլանի և է զի քօղաճաճուկ, և առ նովաւ աշտանակք կրկին մեղմնօք վառելովք. որ բազում իւիք զսեղանոցն մերոց բերէ զնմանութիւն։ Զընծայս անդ նախնի ժամանակաց առ եկեղեցիս տեսանել և աշտանակս ոսկիս, յորոց մէն մի կրեր լտերս քսան և չորս, և աշտանակս արծաթիս երեսուն լտերց։ Ի կիր արկանէին և մնէղնս անուշահոտս, և ի գաւառս իսկ, որպէս ի մկրտութեան անդ Սղովեայ։

Ո՛ մկրտարանն սովորութիւն էր առնել բռնչի և խոր, ուր իջանէին ընդ աստիճանս ի ջուր, որպէս ի բազանիս[3]։ Յետոյ շատ հա-

1 Հերոն. ի վիպէնտ. ֆ։ 3 Աճառաս. ի Սեղեւսոս։ Պրուդենտ. ի պեն Լաբենտ։ Գրիգ. Տուր. Բ։
2 ա Մակաբ. Դ. 22։

մարեցան աւազանք կՀեծայք կամ՝ի պօրփիւ-
րէ մեծամեծք ըստ նմանութեան լոգարանաց,
որ ապա փոխեցան՝ի կոնք, որպէս արդի աւա-
զանքն են սրբոյ մկրտութեան։ Կարգք պատ-
շաճեալք առ խորհուրդն զսրդարեին զմկրտա-
րանն, և սպասք սուրբք գնուալ ոսկեղէնք և
արծաթեղէնք առ՝ի պահել՝ինոսին զմիւռոնն
սուրբ, և յարկանել զջուր՝։ Հաղուստք՝ի սուրբ
անօթոցս բերելին գնմանութիւն գառին կամ
եղջերուի առ՝ի յանդիման առնել զգառնն
որոյ արեամբն սրբիմք, և զտեսչ հոգւոյ՝ որք
՝ի խնդիր Հստուծոյ որպէս զեղջերու ծարա-
ւեալ յաղբերս ջուրց փափաքին ըստ սաղմոս-
երգուին։ Լոր անդ տեսանել և զպատկեր
մեծի Հկրաչին Յովհաննու, և աղաւնի ար-
ծաթի կամ ոսկի կախեալ զսուրբ աւազանաւն՝
առ՝ի յանդիման առնել ակներև զմկրտու-
թիւնն Քրիստոսի, և զջրօրհնութիւն Հոգւոյն
սրբոյ որ իջանէ՝ի ջուրսն մկրտութեան։ Հա-
րեք ուրեք զաւազանն մկրտութեան և Յոր-
դանան կոչեցին։

Հստ այսմ օրինակի էին կառուցեալ եկեղե-
ցիք՝ի հնումն, և շինուածքն որ առնոքօք։ Հե-
ղոդ վարկանիմ ասել և զյարկայ բնակութե-
եպիսկոպոսին և զվիճակաւորացս, յորմէ յորդո-
րեցան՝ի դարան որ զինի՝ կանգնել առ նոքօք
և զմնաս բնակութեան կանոնիկոսաց։ Ոմն

՝ Պաւլին. Թուղթ ԺԲ։

զաք խօսել նոյնպէս և զպէսպէս անկեալանոցաց զորս սովորաբար առ մայր եկեղեցեաւն շինէին։

ՅՕԴՈՒԱԾՈ ՀՈՐՈՐԴ

Թէ զինչ խոր էր ընդ եկեղեցիս և ընդ մեհեանս։

Ասացն հեթանոսք յանդիմանէին զքրիստոնեայս՝ իբր թէ ոչ գոյին նոցա տաճարք և սեղանք և պատկերք ծանօթք, ոչ զոհք և ոչ ծուխք։ Ասէք քրիստոնեայք պատասխանի տային՝ թէ ոչ տաճարք, ոչ սեղանք նիւթեղինք և ոչ զոհք արիւնահեղք՝ ի դէպ են մեծութեան Աստուծոյ. և թէ չիք նորա այլ պատկեր բայ յԱրդւոյն, և հոգւոց բանականաց, որք նմանեալով Արդւոյն՝ նմանող Հօր լինէին. և թէ յամենայն ժամանակս և յամենայն տեղիս պատրաստ օրհնութեան մատուցանէին նմա՝ ի վերայ սեղանոց սրտից իւրեանց՝ վառեալք հրով սիրոյն. և դարձեալ, զի ծուխ ցնծութեան էր նոցա հանապազ՝ հրաժարել իւրեանց յաղցաւորացս, և վկայութիւն բարւոք խղճի մտաց, և յոյսն երկնաւոր։ Այսոքիկ նոքա պատասխանէին առ թշնամանս հեթանոսաց, և չասէին զնաւ թէ գուցեն և նոցա տաճարք և

1 Որոգ. Ընդդէմ Կելս. Ը։ Մինուկ. Փեղիքս։ Յաճախ. Ի։ Ը։

սեղանք, որպէս զնոցայն, թէպէտ և ոչ նոյնպիսիք։

Վասնզի սոքիմբք հեթանոսք ամենևին այլ ինչ ՚ի մեղոյն իմանային։ Ուեղան նոցա կրակարան ին էր ՚ի քարէ՝ կանգնեալ ՚ի հրապարակի յանդիման մեհենի կամբագնի դից, անյարկ, անծածկոյթ, յոյր վերայ այրէին զմիս և զգոհս, և հեղուին գինի, կաթն, մեղր և այլ նուէրս։ Ուեհեանք նոցա բոլորաշէնք էին կամ երկայնաձևք, և հաւասատութիւն նոցա և զարդք պատշաճեալք ին ըստ այլ և այլ դից, որպէս և տեսանել ՚ի գիրս Ա Խորովբայ։ Կազմագոյնք ՚ի մեհենաց փոքրիկք էին, և առանց լուսամտից աղօտաձաձանչք. և հագիւ տանէին զպատկերս կռոցն և զընծայսն, և ժողովուրդն չմտանէր ՚ի ներքս, այլ կայր արտաքոյ զսեղանոյն։

Ուսկ եկեղեցիք մեր զհամալսարանաց մանաւանդ բերէին զնմանութիւն, կամ զսրահից խորհրդոց՝ զոր հինք բասիլիկ կոչէին, զորս և ստորագրէ Ա Խորովբոս[1]։ Ընդ անդ աստեան բարձրաւանդակ, և աթոռ արկեալ ՚ի վերայ՝ յորում նախագահ ժողովոյն բազմէր, և քեմ ընթերցողին, բազմականք ունկնդրաց, գիրք, պատուհանք, լսպտերք, աշտանակք, և սեղան զոր չգիտեին իսկ հեթանոսք՝ թէ առ ինչ կանգնեալ էր. այս միայն յայտնի էր նոցա

[1] Խորով. Ե։

զի էր՝ինամ ինչ յորմէ ամենեքեան՝ի միասին կեբակրէին՝ ՝Ալմին իրի քրիստոնեայք զժողովանոցս իւրեանց եկեղեցի կոչէին կամ բասիլիկ կամ աղօթարան կամ վկայարան կամ ժառանգութիւն, տուն, և տեղի Աստուծոյ. և դուն ուրեք զտաճարի անուն տային. իսկ մեհեան կամ բագին բնաւ ոչ: Ազգամայն էր զի յանուն հիմնողացն իւրեանց կոչէին եկեղեցիք. որպէս՝ի Հռովմ ժառանգութիւն Հռովմէին և Իրերեան կամ Աիքստեան բասիլիկ կոչի աւագ եկեղեցի տիրամօրն, և երբեմն ևս՝ի տանէն որ անդ էր կանխաւ՝ որպէս Աատերան մայր եկեղեցի սրբոյն Յոհաննու: Ո՛պա և զտաճարս կանգնեալս՝ի հեթանոսաց փոխեցին յեկեղեցի, զդիպողս՝ի պաշտօն Ճշմարիտ կրօնից. որպէս՝ի Հռովմ զամենագիցն տաճար, զԱթենասցին, զառնական բազդին, և զայլոց ոմանց դից:

Ոչ միայն մեծակառոյց և գեղեցկակերտք էին եկեղեցիք, այլ և խնամով պահեալք և մաքուրք: Ասուրբն Հերոնիմոս գովէ զերեցն Նեպոտիանոս[2] վասն զանիցն որով զինչ էր հասեալազ եկեղեցւոյ նորա սեղան, և որմքն ոչ ծխոտեալք, մաքուր յատակն, և սարկաւագանոցն անփոշի, փայլուն անօթքն սուրբք, և փակակալն անդուլ առ դրանն պահակալ: Յայ-

1 Բառն՝ի վկայաբ. յՕ. 2 Թուղթ առ Նեպ. գոստ. Ե:

սոսիկ ահա պարապէին ստորին պաշտօնեայքն, փակակալք, լուսարարք, հոգաբարձուք, եկեղեցապանք, և կամ որ զինչ անուն և հաձոյ Թուեսցի ուրեք կոչել զնոսա[1]։ Այլ ձևոյ իսկ ձեռնադրութեանն և արդ ևս է՛ի միտ առնուլ զգործ փակակալաց, զի նոքա ազդ առնէին զժամ աղօթիցն. և յորժամ եմուտ զեօթնեբորդ դարու սովորութիւնն զանգակս հնչեցուցանելոյ, նոցա անկ եղև գործն։ Այսոցա էր սպասաւորութեի բանալոյ զդրունս եկեղեցւոյ՛ի կարգեալ ժամս, և հսկել զի անհաւատք և նզովեալք մի մտցեն՛ի ներքս։ Պարտ էր նոցա պահ ունել բանալեաց, և զգուշանալ զի մի ինչ կորնչիցի։ Պարձեալ՛ի գրոց տրամախօսութեան սրբոյն Կիպրիանոսի[2] յայտնի է զի լապտերաց վերակացուք լուսարարքն էին։ Յաւուրս հանդիսից նոքա զարդարէին զեկեղեցի մետաքսեփիւք և այլովք մեծագին կերպասուք, և սաղարթիւք և ծաղկամբք[3]։ Պարզաբար ասել, նոքա պատրաստէին որ ինչ կարևորն էր վայրացն սրբութեան մեծարանս ածելոյ և յորդորելոյ՛ի բարեպաշտութիւն։ Այսպէս արդեօք համարէին սպասաւորութիւնքս, որպէս զի չէր օրէն աչխարհականաց պաշտել զայնոսիկ. և որպէս զի մի՛ ծանրասցի պաշտօն սարկաւագաց՝ բարւոք Թուեցաւ նոր դասս կղերիկոսաց սահմանել վասն սոցին։

1 Բարոն. յամի 58։
2 Տրամախօս. Ա. Է։ Գ. իդ։
3 Պաւլին. ե, է։

ՅՕԴՈՒԱԾՕ ՀՈՆԳԵՐՈՐԴ

Չի զգալքս ի սպասաւորութիւն են կրօնից։

Վանդ Թէպէտ և քրիստոսական կրօնք համօրէն նեղբլին են և հոգևոր, այլ մարդիկ են և քրիստոնեայքն, և որպէս յայլս՝ ազդէ և ի նոսա զգայութիւն և երևակայութիւն։ Այլ ոչ ինչ իսկ արգելու ասել Թէ բազմագոյնք ի նոցանէ նոքիմբք ևեթ գործեն և կեան. և սակաւք յոյժ իմանալեացն սոսկապէս գտանին պարապեալք, և նոքին իսկ տատանեալք յոլովակի։ Ընժան է ասել և ի ձեռն զգալեացս յորդորել զբարեպաշտութիւն. զի եթէ հոգեղինք ոմանք էաք, հնար էր մեզ միօրինակ յամենայն տեղիս յաղօթս կալ, ի հրապարակս, ի պողոտայս, ի մեջ զինուորաց, նա և ի պանդոկս իսկ լի աղմկաւ և անառակութեամբ, և ի ժանտահոտ լուալիս ապականութեանց։ Այլ ընդ[ե]ր իցէ մեզ խուսել ի վայրացն որ տատանեն զխորհուրդս մեր և տառապեցուցանեն, բայց առ օգնել տկարութեան զգայութեանցս և մտաց։ Իբր ոչ եթէ կարօտի Ընտուած տաճարաց մերոց և աղօթարանաց, այլ մեք կարօտ եմք այսոցիկ. զի Ընտուած յամենայն տեղիս է և պատրաստ յամենայն ժամ լսել մեզ, սակայն մեք ապի-

կար եմք խօսել ընդ նմա ամենայն ուրեք ։ Եւ մին իւրմէ վայրապար է սրբել նմա տեղի առանձին , եթէ չարդարիցի այն կարևորօք եռանդն ածելոյ մեզ ։

( ) ըմենակ ինն , (զոր յաձախ իսկ է տեսանել ի մերում ժամանակիս առ անփոյթ ուրեքեան) եթէ յանպատահանաւոր ուրեք իցէ կառուցեալ եկեղեցի , ուր ձայն աղաղակի որ ի պողոտայն կամ ի հրապարակի՝ ի ներքս անդր ժողովոցի , և եկեղեցին իսկ այնպէս աղտեղի՝ մինչև չգտանել տեղի կալոյ կամ ծունր դնելոյ , և դարձեալ այնպէս լի ամբոխիւ՝ մինչև աղօթականացն այսր անդր տարուբերիլ ի խուժանէն , և կոխան ոտից նոցա լինել , և խափանել ատեպ աղօթիցն ի կականէ մանկանց և ի խռանէ ազգի ազգի մուրացկաց , յաւել և զայն՝ զի աչք քո ամենայն ուրեք զանազանորժս տեսանիցեն , որմն ծխոտեալս , պատկերս փշոտս և ոչ բարւոք զետեղեալս ի լոյս , անդրիս անճոռնիս և ծայրատուրս և այլ զարդս անհեթեթս . և զի մի արտաքոյ թողցուք ինչ ի հակառակացս զգայութեանց , և խոնկք ժահահոտք ծխիցին անդ , և մեղեդիք խառնաձայն հնչիցեն , ոչ ապաքէն դիւրին եւս իցէ քեզ աղօթել մտադիւր ի դաշտի կամ յամայի ուրեք տան , քան յայսպիսի եկեղեցւոջ ։ Իսկ եթէ տեսանէիր զեկեղեցին զայն ի դիպան տեղւոջ կառուցեալ , ջինջ , և

հեռի յաղկաց, և զժողովուրդն կարգեալ յիւրաքանչիւր տեղիս, և զերիցանին առ հասարակ վայելուչ և պարկեշտ զժամերգութիւնն պաշտելով, ապաքէն կամակար անդր ընթանայիր ունկն դնել սաղմոսերգութեացն, և աղօթել մտօք և լեզուաւ [1]։

Ա՛յսոցիկ ամենայնի քաջ զգուշանային 'ի հնուանի հայրապետքն սուրբք, որ յոյն գոլով կամ հռոմք ազգաւ, և բազումք 'ի նոցանէ իմաստասէրք քաջք՝ համառաք էին ամենայն պատշաճից։ Այլ ինչ զանխուլ էր 'ի նոցանէ զի կարգ, ևծութիւն և մաքրութիւն զգալեացս ծնանին 'ի մեզ խորհուրդս վեհս՝ յըստակս և անախտս, և ըստ խորհրդոց յառաջգան իղձք [2], և գարձեալ գժուարին է պարապել հոգևոյն յօգտակարն՝ յորժամ մարմինն 'ի վիշտս է, և միտք 'ի յոյզս։ Այժ կարևոր համարէին զերկիւղածութիւն, և ամենայն իրօք օգնէին այնմ. վասն որոյ և ջանային զի մեծապանծ փառօք կատարեսցի հասարակաց ժամերգութիւնն, և առաւել պատարագն սուրբ, և ըստ ամենայն հանգամանաց դիւր իցէ ժողովրդեան կալ անդ, և սիրելի իցէ նմա յարկք աղօթից, և բազում պատկառանօք կացցէ 'ի նոսին։ Այսց տարագիր առնէին անտի զպերճութիւն աշխարհական, զզարդս մոտիս, և զամենայն որ մեղկէ զսիրտ և

1 ա Կորնթ. ԺԴ. 15։ 2 Պղատ. յղ Հասարակ. Գ։

պատրէ զզգայուԹիւնս . զի դիւրել նոցա կա-
ՀԻՆ , և ոչ գրգռել զնոսա : Ա՛յսոցիկ ամենայնի
լեցի քեզ համօրէն՝ի վերայ կալ՝ի ստորագրել
իմում զկարգաւորուԹիւն աղօԹից պատա-
րագին առ Հասարակ :

ՅՕԳՈՒԱԾՈ ՎԼՅՅՆՐՈՐԴ

ԿարգաւորուԹիւն աղօԹից պատարագի :

ՅԱՄԵՆԱՅՆ կիւրակէս մատչէր պատարագ,
որպէս և երկիցս յեօԹնեկի՝ի չորեքշաբաԹի
և յուրբաԹու , և՛ի ծնունդ մարիամայ , և
յաւուրս պահոց , և յաՀաւ և ս ըստ սովորու-
Թեան յեկեղեցիս իւրաքանչիւր : Պատուա-
նէին և ուխտական պատարագս ըստ առան-
ձինն կամ Հասարակաց պիտոյից՝ : Նոր զի և՛ի
միաւմաւուր՝՝ի Հանդիսել կրկին ժողովու-
Թեանց՝ի միասին , կամ յիշատակի ննջեցե-
ցոց , բազում պատարագք մատչէին : Նպիսկո-
պոսն և կամ նոյն և ի քահանայ զամենայն
պատարագսն մատուցանէր , որպէս սովորու-
Թիւնս այս պահի ցարդ առ Նտինս յաւուր
ծննդեանն Ա՛ստուածոյ . և պատուին վանն
քահանայապետին Նևոնի երրորդի Թէ եղև

՝ Նպիսկ . յղ . Հերձ : Ոսկեբ . ՚ի ՅովՀ . Ճառ ԻԸ՝ Պոնտ .
Ժամակարգ . Ա . ԺԲ :

նմա պատարագել երբեմն եօթն անգամ յաւուր, այլ և ինն[ից] իսկ։ Ի կիւրակէս զկնի երրորդ ժամուն մատչէր պատարագն. անագան և յաւուրս պահոց՝ ըստ ժամուն յորում Ճաշէին՝ զկնի ինն ժամու կամ երեկոյեան ժամ երգուելեան։ Երբև հասանէր կարգեալ ժամն, խմբէր ժողովուրդն ի մայր եկեղեցին, անտի ի միասին ընդ եպիսկոպոսին և ընդ կղերիկոսաց գնալ ուր էին կայք կամ պաշտօն աւուրն. քանզի ըստ սմին օրինակի տակաւ յայց ելանէր եպիսկոպոսն ամենայն եկեղեցեաց իւրոց, և ի խմբովին և կարգաւոր չուոյ աստի յառաջ եկին թաւիրք[1]։

Ի մտանել ժողովրդեան յեկեղեցի և յառնուլ զկայ, եղանակէին դպիրքն սաղմոս հանդերձ կցորդիւ, որ և ցայժմ անուանին ժամամուտք։ Ընդ սարկաւագունք՝ և օգնականք նոցին կիսասարկաւագք և փականակալք՝ բաշխէին մոեղոցն իւրաքանչիւր տեղի, զի մի ամբոխ ինչ լինիցի։ Իսկ երբև կարգեալ յօրինէին, աղօթէին լուսեղէն վայրկի մի. և ապա ողջունէր եպիսկոպոսն զժողովուրդն, և ի ձայն բարձր հանգուցանէր զաղօթսն մաղթանօքն որ կոչի ի [2]ատինաց բովանդակութիւն, զի բովանդակէր ինն այնու զուխտս համօրէն հաւատացելոց[3]։

[1] Վալաւիր. Սարաբ. իմ։ [2] Խորհ. և կարգ Հռոմի. Կանոնք Ալաք. Բ. է, ձէ։

Յայնժամ եպիսկոպոսն բազմէր յաթոռ իւրում. որ քանզի՝ ի ծագս անդ խմբարանին առ բարձեալ էր՝ ի նա ձգելին ամենեցուն աչք. զի զՊատուաճ երևեցուցանէր յանձին իւրում հովիւն, և պարտ էր նմա լինել յօրինակ հօտին ըստ Պօղոսի, որպէս Քրիստոս նմա: Խազմէին ապա զնուաւ երիցունքն յաջմէ և յահեկէ՝ ի կիսաբոլորի անդ կոնքի տաճարին՝ յոտին կալով սարկաւագաց, որով զնմանութիւն իւն իմն երկնից բերէր անդ եկեղեցի ըստ գծագրութեանն Յովհաննու՝ ի Յայտնութեան՝:

Եպիսկոպոսն՝ի վերայ աթոռոյն, և մատեան յաջոյ ձեռին՝ որպէս նկարագրեն Հարք՝ յանդիման առնել զմարդկայինս կերպ որով երևեցաւ Պատուաճ: Քահանայքն յուշ առնէին զՀրաշափառ առեան քսան և չորից երիցանցն: Եպիսկոպոսն, ասէ սուրբն Իգնատիոս, նախագահ բազմի անդանօր փոխանակ Պատուճոյ. քահանայքն զառեղի ունին առաքելոց առենին, իսկ սարկաւագունք և այլ պաշտօնեայք հրեշտակք են՝ պատրաստք յաձենային ժամ՝ի սպասաւորութիւն և՝ի կատարումն հրամանաց Պատուճոյ՝: Դաւթի աթոռոյ եպիսկոպոսին կային աշտանակք եօթն, և

1 ա կորնթ. ի՛Ա. 1: ա երգ է: Ցհմ. Գ. 22: Ցիա. Ա. 7: 2 Իգնատ. Թուղթ առ Յայտ. Գ: Գրիգ. Աստ. Մագնես:

սեղանն՝ յոյր վերայ խունկս արկանէին ՚ի նը-
շանակ աղօթից, և ուր զնոսին էր գառն ան-
արատ՝ Թէպէտ և այլով կերպարանօք ։
Ընդ սեղանոյն էին մարմինք վկայից՝ ըստ նը-
մանութեան հոգւոցն զոր ետես աւետարա-
նիչն ՚ի ներքոյ սեղանոյն, որոց և ասացաւ՝ զի
հանգիցեն փոքր մի ժամանակ ՚ : Յակ հաւա-
տացելոցն ակումբ որ ընուին առ հասարակ
զնմբարանն՝ գեղեցիկ յանդիման առնէին
զանթիւ զանհամար բազմութիւն երանե-
լեացն այնոցիկ որ արկեալ զանձամբք հան-
գերձս սպիտակս, և արմաւենիս ՚ի ձեռին,
երգէին ՚ի ձայն մեծ զօրհնութիւնս Յաու-
ծոյ ՚ : Յսպիսի իմն տեսիլ առաջի առնէին
եկեղեցեացն ժողովք ։

Յորժամ ամենայն բազմութիւն ժողովոյն զե-
տեղեր, ՚ի վեր յամբիոնն ելանէր ընթերցողն
և վերծանէր զընթերցուած աւուրն ՚ի հին
կտակարանաց, և ապա ՚ի նորոյն՝ ՚ի գործոց
և ՚ի թղթոց առաքելոցն. զի զաւետարանն
ընթեռնուլ քահանային անկ էր կամ սարկա-
ւագի ։ Յե ՚ի հեշտալուր ևս ընծայել զընթ-
երցուածան, և ժամ տալ ժողովրդեան խոր-
հելոյ ՚ի նոսին, և ընթերցանելեացն հանգ-
չելոյ, խառն ընթերցուածոց գրոցն ասէին և
սաղմոս հանդերձ կցորդիւ, և վերջս ալե-
լուիայ զոր անդստին յայնոց ժամանակաց եղա-

[1] Յայտն. Զ. 9, 11։ [2] Ա՛գ. Ի. 9, 10։

նակէին նախ քան զաւետարանն : Ո՛չ ընթերցուածոն ընթեռնուին ՚ի հասարակաց բարբառ , կամ որով աղաւտրեարն խօսեր յաշխարհս իւրաքանչիւր . զի ահա յԱփրիկէ յաւուրս սրբոյն Գրիգորիոսի Թէոպհտ և տակաւին փիւնիկեցւոց բարբառովն վարեր ռամիկն , բայց չարկաւ քնաւ այն ՚ի կիր յեկեղեցւոջ : Այլ Թուի թէ ՚ի Ներսէսէ զԱրգիպտացւոց լեզուն ընթեռնուին . զի մեծն Ներսէս չգիտեր ասպաքէն այլ լեզու , և ՚ի լուր աւետարանին փոխեաց զվարսն [1] : Ասպանգոյիք յեպիսկոպոսաց ՚ի վերնագաւառս Ասորւոց չգիտէին պոյն , և ասորերէն միայն խօսէին , որպէս յայտ է ՚ի Ժողովոյ յորս կարօտ եղեն Թարգմանչաց [2] :

Ասկ եթէ յայլ և այլ լեզուաց խռներ ժողովուրդ յեկեղեցի , գոյն և Թարգմանիք որ մեկնէին զընթերցուածն : Այս պաշտօն էր սրբոյն Պրոկոպիոսի վկայի ՚ի Կեսարիոպոլիս Պաղեստինացւոց [3] զոր ընդ ընթերցանութեան և երգմնեցուցչութեան . զի զոր ընթեռնոյր ՚ի յոյն՝ մեկներ յասորին որ էր հասարակաց բարբառ աշխարհին : Այ զի և ՚ի կրկին լեզուս ընթեռնուին , որպէս ՚ի Հռոմայեցեկեղեցին , ուր յետ ընթեռնոյ ՚ի լատին՝ գառնային և ընթեռնուին զնոյնս և ՚ի յոյն .

[1] Վարք սրբ . Ներս . ա : [3] Եւսեբ. յոլ վկ. Պաղեստ. ա : Կարգ Հռոմ. ժ :
[2] Ժող. Եփես. Ժող. Քաղկ.

զի բազումք յարևելեայց գտանէին անդ։ Ընդ սակաւք յեկեղեցեաց արևելից դեռ ևս նովին վարին սովորութեամբ. որպէս այնոքիկ որք ընծեռնուն զաւետարանն՝ի բարբառ ասորի և կամ՝ի նախնին բարբառ՝ի ղպտի, ընծեռնուն ասպ զնոյն և արաբացի լեզուաւ՝ որ է հասարակաց լեզուն։

Ի վանս սրբոյն Թէոդոսի՝ի Պաղեստին՝ յերեսին եկեղեցիս այլ և այլ լեզուաւ կատարէին զպաշտամունս. և զպատարագին ևս զսկիզբն Ճանգերձ ընծերցուածովքն Թզղթոց և աւետարանաց յիւրաքանչիւր լեզու կատարէին, և ապա ամենեքին գային՝ի միվայր յեկեղեցին Յունաց՝ի Տաղորգութիւն։

ՅՕԳՈՒՄՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ճառք։

Ի ՎԱԽՃԱՆ ընծերցուածոյն սկսանէին Ճառք. զի եպիսկոպոսն ուսուցանէր ժողովրդեան զբանս աւետարանին և զայլոց գրոց սրբոց. է զի և ողջ գիրս մեկնելով նոցա կարգաւ, և կամ զկարևորագոյնսն ծաղկաքաղ արարեալ վարդապետելով նոցա։ Օ կարգաւորս մեկնութեացն զօրինակս է տեսանել՝ի

՝ Վարք սրբ. Թէոդոսի առ Բոլ. ի յունուարի ԻԸ։

բազմագոյս ՚ի Հառւից Հակեբերանին, և ՚ի Հառան սրբոյն Գոստանդիոսի յաւետարանն Յովհաննու. իսկ ծայրաքաղ մեկնուեց Հառք, որպէս Ամբրոսիոսին՝ որ առնու նախ խօսել ըստ նմանութեան մեծին Լարսղի զվեցօրեայ արարչութենէ, և շարայարէ ապա առ նմին զպատմութիւն Լոտի, զԱբրահամու, և զայլոց աւագ սրբոց Հին օրինաց, որք գարձեալ ՚ի նոյն կարգ գրոց գլխին։ Ի Հառւից աստի Հարց ՚ի միտ առնումք զի և յայնժամ գրեթէ նոյն կարգք էին ընթերցուածոց գրոց սրբոց ընդ այն ողջոյն յեկեղեցւոջ՝ որ մինչ այժմ. և նովքին կարգաւորութեամբ ըստ կարգի ժամանակաց տօնից պաշտէին տնօրինութիւնքն Քրիստոսի։ Յոլովք ՚ի Հառւից աստի և ՚ի մեկնութենէց են քարոզքն, զորս ապա նոքին Հարք ՚ի գրի արարին՝, և կամ նօտարք ըստ արուեստի նշանագրութեան՝ զորմէ ասացեալ է մեր յառաջագոյն՝ գրկին ՚ի Հառւէ նոցա։

Քարոզիչքն այնոքիկ աստուածարեալքն էին ընդվայրաբանք որպէս զիմաստակսն որ Համարտակէին յարտաքնոց Հեմարանսն ձախողակի նախանձու ընդդիմաբանելոյ իրերաց, և ելևէջս զիմիամբք առնելոյ նրբաբանութեամբք, կամ որք գրկինն ՚ի սեհեակս իւրեանց առ ՚ի Հանդիս առնել իմաստութեան իւրեանց և Հանձարոյ. այլ Հովիւք էին՝ որք

՚ Ա Կոր. Թուղթ Գ։

անպարապք ամենևին ՚ի հոգոց, ՚ի բարեգործելոյ և ՚ի լեցուցանելոյ զվէճն, չդադարէին և ՚ի քարոզելոյ, կարևորագոյն պարտս պաշտամանն իւրեանց համարելով զայն։ Վասն զի յառաջին դարս եպիսկոպոսք քարոզէին, մանաւանդ զի և ոչ էր անկ այլոց քարոզել։ Այսպս սկսան յարևելս զքահանայս ամենս գեթ բազանցեալս հանձարով յատեան հանել, որպէս զՄրոգինէս և զաշխարհականս իսկ. և յարևմուտս տեսանեմք զսուրբն Վեղիքս երեց զի քարոզէր ՚ի Կողզ յաւուրս անդ Հալածանաց. և այսպէս սակաւք են այսոցիկ օրինակք, մինչ զի բազումք զսուրբն Յովհան ոսկեբերան և զսուրբն Գրիգորիոս առաջին համարին յերիցունս՝ որոց տուաւ իշխանութիւն քարոզելոյ յեպիսկոպոսաց իւրեանց։ Վասն սուրբն Հերոնիմոս եպերէ զսովորութիւն եկեղեցեաց ամենից յորս չքարոզէին երիցունք յանդիման եպիսկոպոսին[1]։

Օ. Յոլովագոյնս ՚ի հարցն Ճառից օտարս համարին քարոզիչք մեր յօրինաց քարոզի՝ զոր ինքեանք սահմանեցին. իբր զի պարզ է նոցայն, և յերևի ՚ի նմա արուեստ, չիք անդ բաժանութիւն, ոչ նրբին պատճառաբանութիւնք և ոչ ցանկալի համառօտութիւնք. ամենք ՚ի Ճառից

[1] Օգոստ. յղ. գործոց Լատեր. Պաստ. Ե. Ի։ Պատմ. Ժէ. և Թուղթ առ Լեն։ Հերոն. առ Նեպոտ։ Վիտակ։ Սինես. Թուղթ ծէ։

նոցա ցուրտ իսկ էն, և յոլովք կարի համառօտք։ Վասնզի և ոչ Հարտասանս ոմանս հաւմարէին զանձինս սուրբ Հայրապետքն այնքիկ, և ոչ առաջարկեալ էր նոցա ատենաբանել այլ որպէս Հայր առ որդիս և վարդապետ առ աշակերտս՝ այնպէս ընտանեբար խօսել։ Այլ վասն այնորիկ Հառաք նոցա և առ այլ ազգս նոյնպէս անուանին խօսք կամ զրոյցք։ Ի մեկնել անդ զսուրբ գիրս՝ կամէին ուսուցանել ոչ քննաբանութեամբ կամ խնդիրս յուզելով, որպէս քերթողք ի Հեմարանս ի մեկնելն զՀոմեր և զայլ իւրգիլիոս, այլ աւանդութեամբ Հարցն առ ի պնդել զՀաւատս և ուղղել զբարս։ Ոչ անայլին շարժել զսիրտ՝ ոչ սաստկութեամբ ձևոյ բանիցն, կամ ուժգնութեամբ արտասանութեան, այլ մանաւանդ Հնմարտութեանցն մեծութեամբ զոր քարոզէին, և առաջնորդական իշխանութեամբն, սրբութեամբ վարուց իւրեանց և սիրոյն։ Հազուագիւտ անգամ յանպատրաստից Հառս արկանէին, որպէս յայտնի է ի սրբոյն Գրիգորէ Նոսաենոսէ, զի երբեմն այլ ինչ առաջարկեալ՝ և այլ ինչ յառաջ բերեր։ բայց դպիրք առընթերակայք արձանացուցանէին զբանս նոցա արուեստիւ նշանագրութեան[1]։

Ասելոց ժողովրդեան պատշաճէին զբանս իւրեանց։ Յաճենայն շարադրածս սրբոյն Գ-

[1] Գրիգ. Նշաբ. Հառ. ԼԲ։

գոստհնոսի պարզագոյն ևս են Ճառքն, և ե՛ զանակ բանիցն արհեստ հատուկտիր դիւրհմաց քան զԹզԹոցն. քանզի քարոզեր՛ի փոքրիկ քաղաքի ուրեմն նաւաստեաց ոմանց, երկրագործաց և վաճառականաց։

Եայց՛ի Ճառիւ պատասխանատուութեանց նորա, ևս առաւել՛ի գրոցն ընդդէմ Յուլիանոսի քաջ՛ի միտ առնումք զի ոչ էր նորա մտացեալ զհռետորութիւն՝ զոր ընդ բազում ամն ուսոյց այլոց։ Իսկ սուրբն Կիպրիանոս, Մբրոսիոս և Լևոն քանզի յականատուր քաղաքս քարոզէին՝ պերճ ևս և գեղալարդ յօդեն զնոսան. այլ և տիպք բանից նոցա զանազանք են ըստ նոր իմն ախորժակաց և հանճարոյ գործուց նոցին։ Օ՛ի ոչ էթէ՛ի բարեպաշտութենէ բանիցն իցեն թերութիւնքն, զորս հընդմուտք մարդկեղէնն գիտութեանց ստգտանեն արդ՛ի հարս. զանհարթութիւն լատինաբանութեանն նոցա ասեմ՝ և զյաճախութիւն այլաբանութեանց, զտկարութիւն փաստից, զրերք ուրեք, զվայրապար զարդս, զնաղս բառից և զչափս վանկից. այլ այսոքիկ էին յանցանք գարուս նոցա. զի էթէ յաւուրս Կիկերոնի և Տերենտեայ կեցեալ էր նոցա, իբրև ըզնոսան խօսէին։

Տիպք բանից հարց Յունաց նմանագոյն ևս են նախնի մատենագրաց նոցին. քանզի դեռ ևս ոչ աղաւաղեալ էր յայժ բարբառ աշխար-

հին, և զպլուռթիւնք խնամվեա պահելին յա-
րևելս. նմին իրի բազմագոյնք ի մատեհից
նոցա հարուստք և հաստատունք են յիմաստս
և գեղեցիկ։ Ա֊սեմասօս է սուրբն Կյրիզոր
Կ֊ազիանզու և Ճարտար ի տիպս բանից, այլ
մեծն Յովհան ոսկեբերան թուի ինձ անթե-
րի օրինակ քարոզեաց։ Ա֊եհիե նա բան առ բան
զընթերցուած աւուրն, նկարագրականացն
մանաւանդ միտ եդեալ իմաստից և օգտակա-
բացն ի վարս. զնովիմբ ածէ ապա զյորդո-
րական, որ թէպետ յոլովակի ոչ քաջադէպ մեզ
նուէր եանցն, այլ դիպողագոյն հանապազ ունին
դրացն պիտոյից և կարօտութեան, որում քաջ
տեղեակ էր իմաստուն Հովիւն և արթուն։
Պատահէ նա ախտից մի ըստ միոջէ. այլ մինչ
չև առաթուր հարեալ զմին, կամ քաջ բեկեալ
զզօրութիւն նորա, ոչ կասէ ի նմանէ։

Այլ քանզի ոչ ինչ փոյթ էր աստուածարելոց
արանցն այնոցիկ զհամբաւոյ, և ոչ երևելեացս
ինչ խնդիր էր նոցա, այլ զանպիղն զի զոգիս
շահեսցեն. և չհամարեին արարեալ ինչ մինչ
չև տեսեալ մեծ ինչ փոփոխութիւն։ Ա֊ովին ո-
գւով պնդէր զանձն Գոսմինոս[1] խափանել
զեկամուտ սովորութիւնն հասարակաց սեղա-
նոյ ի տօնս մարտիրոսաց, տեսեալ զի տակաւ
պղտաբոյծք լինէին. և թէպէտ հնացեալ էր
սովորութիւնն, յաջողեցաւ նմա բառնալ զայն

1 Թուղթ ԺԹ։

'ի միջոյ, ցուցանելով Ժողովրդեան քաջայայտ բանիւք զի սուրբ գիրք դատապարտեն զոր-կորստութիւն, և աղաչելով արտասուօք ընդ աւուրս երկուս անընդհատ՝ մինչև հաւանեցոյց զնոսա. որպէս ինքն իսկ ասէ՝, տոյգ Ճար տասանութիւն ոչ այն է՝ որ 'ի մեծաձայն գոչութիւն դրդիցէ զՀրապարակն, այլ որ լռեցուցանէն և արտասուել տայ։ Այս էր ինչ վտանգ 'ի միում եկեղեցւոջ բազում վարդապետութեանց լսելի լինելոյ. զի և ոչ այլ ոք քարոզէր կամ վարդապետէր, բայց միայն եպիսկոպոսն, կամ քահանայն զոր եպիսկոպոսն ընծայեցուցանէր. որ և հրամանաւ նորա խօսէր, և յանդիման նորա յոլովակի։

Ի քարոզութեան ժամանակին բայ էին դըրունք եկեղեցւոյ ամենեցուն, այլ և անհաւատից. և վասն այնորիկ զգուշանային հարք խօսել 'ի վերայ խորհրդոց հաւատոց, կամ օրինակաւ միայն խօսէին։ Այլ իբրև գարձեալ առ հեթանոսս բազում անգամ ուղղէին ըզբանսն առ 'ի հաւատս ձգել զնոսա։ Ի ժամանակի ընթերցուածոց և քարոզից նստէր ժողովուրդն կարգաւ, արք 'ի մի կոյս և կանայք 'ի միւս. որք առ և ևս զատեալ որոշելոյ կային 'ի վերնատունն՝ ուր ուրեք գոյին։ Յառաջնում կարգի բազմէին ծերք հասակաւ. հարք

1 Յղ. վարդապ. Քրիստ. Դ. իզ։ 2 Կանոնք Ղաոք. ԻԵ. ծէ։ Գրիգ. Ասծաբ. երգ իե։

և մարք առընթեր առաջի ունէին զտղայս իւրեանց. զի և զնոսա ածէին յեկեղեցի՝ յորժամ մկրտեալ էին. և յոտին կային երիտասարդք ուրչեր նոցա տեղի բազմելոյ։ Իսկ սարկաւագք ոմանք հսկէին անդուլ՝ի պահպանութիւն կարգացս այսոցիկ, որպէս զի ամենայն ոք ըզգաստ կացցէ, և մի ոք նիրհեսցէ կամ ծիծաղեսցի, կամ հծծեսցէ յականջս այլոց, կամ՝ նըշանացի ինչ խօսեսցի, այլ լուռեան և պարկեշտութեան զգուշասցին ամենեքին ընդ բըլնաւ եկեղեցին։ Յաւրինակ, ըստ պատմելոյ մեծին (1)գոսթինոսի՝, յոտին կալով ունկն դնէր ժողովուրդն քարոզութեան. այլ առաւել գովէ նա զսովորութիւն եկեղեցեաց որ յայնկոյս ծովուն, որպէս ինքն կոչէ, յորս ժողովուրդն բազմեալ ունկն դնէր։

Ի կատարած քարոզութեան արտաքս հանէին սարկաւագունք զամենեսեան որոց ոչ էր օրէն առաջիկայ գտանել՝ի ժամ պատարագի. նախ՝ի բաց հանէին զկոչեցեալսն ունկնդիրս ընդ անհաւատսն՝. յետ այնորիկ աղօթս արարեալ վասն երախայից, զնոսա ևս արձակէին. զկնի ապա աղօթեալ և վասն այսակրաց կամ դիւահարաց, զնոսա ևս արտաքսէին. նոյնպէս և զաւսանողսն կամ զարժանաւորս, և ս և զապաշխարողս։ Իսկ յեղանել ամենեցուն նոցա արտաքս, իբրև մնային միայն հաւատա-

1 Օգոստ. յղ կոչ. ընծ. թ։ 2 Կանոնք Առաք. Ը. ։

ցեալք՝ սկսանէին աղօթել վասն ամենայն եկե-
ղեցւոյ, վասն համօրէն դասուց կղերիկոսաց
և ժողովրդոց, վասն ամենայն հիւանդաց և
վշտացելոց, վասն թշնամեաց իւրեանց և վասն
հալածչաց։ Այլա սարկաւագն, որպէս քարոզ
՚ի հրապարակի, ազդ առնէր վասն որոյ պարտն
էր աղօթել. և եպիսկոպոսն ասէր զաղօթսն
ըստ օրինակին որ պաշտի արդ առ մեզ ՚ի ժամ
երգումեան, և առ Լատինս յաւուր աւագ
ուրբաթու։ Յետ աղօթիցն վերստին եպիսկո-
պոսն խաղաղութիւն տայր ժողովրդեան, և
սարկաւագն բարձրաձայն քարոզէր. Մի՛ ոք
խեթիւ, մի՛ ոք խաբէութեամբ կացցէ առաջի
սրբոյ սեղանոյս. ողջոյն տուք միմեանց ՚ի համ
բոյր սրբութեան։ Յա՛ս առնեաքն համբուրէին
ընդ միմեանս սիրով ՚։

Այսպէս Հռովմայ եկեղեցւոյն սովորութիւն
էր՝ որպէս և այժմ, զկնի քահանայագործու-
թեան նախ քան զՀաղորդելն տալ զողջոյն ՚։

ՅՕԳՈՒՆՔ ՈՒԹԵՐՈՐԴ

Յաղագս սուրբ զգեստուց։

Այ երբեմն այսպէս կազմեալ պատրաստեր
ամենայն, սկսանէին ասպա զվեցերորդ սրբոյ

1 Ժող. Լատ. ժԹ։ Դիտ. Նախկ. է։ Ձառ Դ., յԼեփես։
Նես. յղ. Վահանայպատ. եկեղ. 2 Կենսակերպ. Թուղթ Ա։

պատարագին[1]։ Ընդ սարկաւագք օդնականու-
թեամբ կիսասարկաւագաց տարածանէին
ծածկոյթն ի վերայ սեղանոյն և ի վերայ ըն-
ծայարանին, ուր և պատրաստէին զսուրբ ա-
նօթսն, ընդ որս զմաղզմայս և զսկիհս, և ար-
կանէին քօղ զնոքօք ի պահպանութիւն նոցին
սուրբ ի փոշւոյ։ Յայնժամ եպիսկոպոսն ինքեան
յանձռուոյ մատչէր առ սեղանն՝ դարձուցեալ
զդէմս առ ժողովուրդն, և զգեցեալ լինէր
հանդերձս պայծառս, որպէս և քահանայքն և
ամենայն պաշտօնեայք. քանզի անդստին յայնց
ժամանակաց ուրոյն զգեստք էին նոցա վասն
պաշտամանց[2]։

Այլ զգեստքն ոչ նորահնար լինէ էին. զի
քահանայապետն Կեղեստիանոս առաքէն ի
գրեն առ եպիսկոպոսսն Պաղեղտոյ յամին չո-
րեքհարիւրորդի քսաներորդի ութերորդի ա-
սէ. «Պարտ է մեզ ոչ զգեստուք զանազանել
ի ժողովրդենէ, այլ վարդապետութեամբ և
վարուք, և չինդրել արտաքին օտար ձեւովքն
ահաւորս ոմանս երևել յաչս պարզամտաց»[3]։
Ըստ ուրեմն հասարակաց հանդերձ էր առ ժա-
մանակօք սրբոյն Գրիգորիոսի[4]. և թագա-
լսին Լատինացւոց սովորական էր անդստին ի
ժամանակաց Պաղերիանոսի կայսեր։ Փորու-

1 Կարգ Հռոմ. ԹԲ։
2 Կանոնք Առաք. ՃԲ. ԺԲ։ ԻԲ. ԻԶ, ՁԲ։
3 Կեղեստ. Թուղթ Ե։
4 Գրիգոր. յոլ. Քաղ. ՈՂ։

բարն կամ ուրարն էր կտաւ նեղ և երկայն, զոր մաքրասիրագոյնք տանէին զանձամբք առ ի ջնջել նովաւ զքիրտն պարանոցին և երեսաց ։ Իսկ բազմանն էր անձեռոցին կախեալ զբազկէ ի պէտս սրբոյ սեղանոյն ։ Այս և շապիկն իսկ ասուեայ կամ կտաւ սպիտակ՝ ոչ առանձին իմն հանդերձ էր եկեղեցականաց զառաջինն, այլ հասարակաց ագանելի. որպիսիս կայսրն Լէոբեղնանոս [1] ընծայ արար առատաձեռնութեամբ ժողովրդեանն Հռոմայ հանդերձ մեծամեծ դաստառակօք կամ թաշկինակօք որ ուրարք ի լատինաց կոչին ։

Այլ իբրև սկսան եկեղեցականք հանապազ շապկաւն այնուհիկ գնալ, պատուէր տուաւ եպիսցանց ունել այլս առանձինն առ ի զգենուլ ի մատչելն ևեթ ի սեղան՝ վասն առաւել մաքրութեան ։ Այլն իրի ոչ ինչ անտեղի է կարծել զի և ի ժամանակին իսկ յորում հանապազ շուրջառաւ կամ թակալակաւ ընջեին, էին նոցա և այլք ի պահեստի վասն եկեղեցւոյ ևեթ հանգոյնք ըստ ձեւոյն, այլ ի մեծագին և ի կերպասուց կարեալք և գեղափայլք գունով ։ Այս մանաւանդ պատուիրէն կանոնք [3] երիցանց և սարկաւագաց չհատարել զպաշտամունս եկեղեցւոյ առանց ուրարի, զոր արգելուն տանել ստորին պաշտօնէից ։

1 Տրբերլ. ի Կղզ. և Թռ. մասին. Հրատ. Ա. ա. և Ե. ի ։ 2 Վրպիսկ. Լ Աբրղնան ։
3 Ժող. Լաոդ. ժբ, ժգ ։

Ղազարի դարձեալ պատուիրեին եկեղեցական-
նաց զպաշտամունս իւրեանց ահեղ և պատկա-
ռելի երևեցուցանել ըստ արտաքին իսկ ձևոյ,
և զմաքրութիւն դիմաց և զձեռաց և զհան-
դերձից՝ մաքրութեան սրտին և անմեղութեան
կենաց բերել նշանակ, և զգօնութեամբն և
պարկեշտութեամբ աչաց և կերպարանաց և
գնացից պատկառանս ածել այլոց, և ի բարե
պաշտութիւն յորդորել զնոսա։ Ի նչափ զգու-
շութիւն եր յայսոսիկ առաջնորդաց, զի սուրբն
Ղմբրոսիոս ի բաց մերժեաց ի վիճակաւորաց
իւրոց զերկուս ոմանս մանկահասակս, զիրն
տեսանելով զանվայել շարժուածս, և զվիսոյն՝
զի անձահս իմն քայլեր։ և եկք իրացն ստու-
գեցին՝ զի արդարութեամբ զերկոցունցն իսկ
դատեալ եր։ Սուրբն Կրիգոր Նազիանզու-
ացի սուրբն Բարսեղ վաղ ուրեմն յառաջքան զու-
րացութիւնն Յուլիանու [2] ի գնացից նորա
Լընդոստ ընդոստ խաղացմանէ ուսոյն, և յան-
հեթեթ կարկաչանացն ծանեաւն զդգուշ նորա
զանբարեձևութիւն։ Պարտ է գնել միշտ ի
մտի, զի յորում և հաւվմայեցիք էին հարքն՝
անեալք քաղաքականութեամբ մեծաւ, և յայլ-
նուական իմաստս ստոյգն վայելականութե,
և մանաւանդ զի խորհէին հանապազ յաս-
տուածային մատեանս, յորս գրեալ կայ թէ

1 Ամբր. յղ. Պաուլ. Բ. ժթ։ 2 Գրիգ. Աստ. Ճառ Դ։

«Հանգերձ մարդոյ և ծաղը երեսաց և քայլ ոտից պատմէ զնմանէ»[1]։

ՅՕԳՈՒԸՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Խորհուրդ սրբոյ պատարագին։

Ա ԿԵԱՒ եպիսկոպոսին՝ ի սեղանն սուրբ, առնոյր՝ ի ձեռաց սարկաւագաց զընծայս ժողովրդեան։ Այլ յեկեղեցիս ինչ ինքնին եպիսկոպոսն մատուցեալ ընդունէր զընծայս աւագաց, որպէս՝ ի Հռոմ զձերակուտին և զտիկնոց նոցա[2]. քանզի համօրէն քրիստոնեայք մեծամեծք և փոքունք՝ իշխանք և թագաւորք միաբան առաջի կային հոգևորական պաշտամանց[3]։ Ընծայս ևեթ պատարագի՝ զհաց և զգինի դնէին՝ ի վերայ սեղանոյ. իսկ զայլ ուտելիս, և զարձեալ զմիմիս զդրամս, և կամ որ այլինչ ընծայ առնէր ժողովուրդն՝ ի պէտս եկեղեցւոյ, ընկալեալ զայն սարկաւագաց՝ պահէին՝ ի տեղին որ վասն նոցա կարգեալ էին։ Այլ զերախայրիս պտղոց դնէին՝ ի վերայ սեղանոյ առ օրհնել զնոսա զկնի պատարագին։

Ընծայս պատարագի մատուցանէին՝ ի հացէն զոր հաւատացեալքն նուիրէին, և օրհներ

1 Սիրաք · Թ · 8։
2 Կարգ Հռոմ. ։
3 Կանոնք Առաք · Բ · է ։

եպիսկոպոսն։ Մինչեայն ոք զընծայս իւր ինքնին բերեալ մատուցանէր, ըստ որումայսոսկայսպէս վկայէ սուրբն Կիրիգոր Նազիանզոս՝ ի խօսեալն զինքնակալէն Աղեսիոս[1]։ Որինք իմն էին ամենայն հաւատացելոց՝ մանաւանդ որք հաղորդելոյն էին՝ ընծայաբերս լինել. և գժպատեհ թուէր հաղորդել մեծատանց ընդ նուէրս աղքատաց[2]։ Այլ եպիսկոպոսն անգամ յառաջ մատուցեալ տայր զընծայս իւր. այր վանն՝ի Հռովմ կարգեալ կայր մի՝ի կիսատարկաւագաց յընդունելութիւն ընծայից նորա։ Որով որպէս ասի յաղօթս ինչ[3], այնպէս յաճախէին նուիրանաց հայքն, մինչև ընուլ նոքօք ամենայն սեղանոյն. և շուչիայն էր անձեռոց իմն մեծ՝ զոր կալեալ երկուց՝ի սարկաւագաց տարածանէին ծայր՝ի ծայր ընդ սեղանն, յոյր վերայ ապա նախասարկաւագն, զի նորա պաշտօն էր, դնէր զամենայն հացսն՝ յարդարեալ վայելչապէս. և զայս խմանալի է ուր ասէն "Ուղղել զսեղան,,։ Դնէին ապա և զսկիհն հանդերձ գինւով՝ի քահանայապետէն[4], ընդ պարզուտ արծաթի հեղեալ զայն՝ի բաժակն՝ որպէս զի յատակ իցէ։

Կուրեալ եպիսկոպոսին զՀացն և զգինին, մատուցանէր ապա և խունկ՝ինչան աղօթից

1 Գրիգ. Նազ. Հատ. Ի։ յաղօթսն որ ի տանի ծննդեան
2 Կարգ Հռոմ. ԺԳ. ԺԵ։ Յովհ. Կարապետին։
3 Ըստ լատին. արտագրութեան 4 Կարգ Հռոմ. ԻԸ, Գ։

հաւատացելոց, որպէս ցուցեալ է՛ի Յայտնու-
թեան գիրն [1], ուր մի՛ է հրեշտակաց զՀո-
գևորական խուռնիկն անդադար մատուցանէ։
Ի նմին, որպէս և այժմ, զսեղանոյն, զընծայ-
իւք, զուխտի մանկամըբքն և զժողովրդեամբ։
Ոայց ազնիւ էին խուռնիկքն, լըբանոն, և որ այլ
և ս պատուականագոյն ազգ կնդրկաց ծանօթք
՛ի ժամանակին. և այնպէս առատութեամբ
՛ի կիր արկանէին զայն, զի եկեղեցւոյն Հռոմ-
մայ էին կալուածք ինկաբելքյ Ոսորիս և այլ
նահանգս արևելից։ Ի ժամանակի ընծայման
երգէին սաղմոս, որոյ արդ կցուրդն և եթ պաշ-
տի առ Ի ատինս։

Օ կնի ընծայմանն փակէին դրունք, և պա-
հէին զնոսա զգուշութեամբ սարկաւագունք
ոմանք և դռնապանքն որ անդէն կային [2], և
ջանային այլ և ս հաւատացելոց իսկ՝ քայց ըզ-
կնի հաղորդութեան։ Ելեք՛ի սարկաւագաց
շրջէին լուիկ ընդ եկեղեցին, զգուշացեալք զի
մի՛ ոք և դաշն ձայնիւ կամ նշանացի ինչ խո-
սէցի։ Եւ այլ ոմն՛ի սարկաւագաց սկէր ման-
կըտոյն, որք կային հուպ՛ի բեմ անդր եպիս-
կոպոսին. իսկ վասն տղայոց ազգ առնէր մարդ
նոցա՛ի գիրկան ունել զնոսա։ Ոյսպէս ամե-
նայն ժողովուրդն զգաստ և անշշունջ լսէր ա-
հիւ և դողութեամբ զգոհութեան աղօթից
յառաջընթաց բանիցն սրբագործութեան, որ

[1] Յայտ. Ը. 3։ [2] Կանոնք Առաք. Ը. ժա։

Ալանան կոչի[1]. զի ՚ի ձայն բարձր ժամարարն
ասէր զայն, և ժողովուրդն կցէր զամէնն, որ-
պէս և այլոց աղօթիցն: Այս որպէս է տեսանել
՚ի կարգաւորու-թիւնս աղօթից պատարագի
արևելեայց, երկար և ընդարձակ էին յոյժ
աղօթքն այնոքիկ քան զոր այժմ են[2]. զի ըզ-
կարևոր մասունս միայն կալաւ եկեղեցի հռով-
մայ, ուր յառաջ ժամանակաւ անցանէր հա-
մառօտիւ ընդ բնաւ ձառս պատմութեան հա-
ւատոցս, գոհութիւնս մատուցանելով Աստու-
ծոյ վասն արարչութեանն, վասն նորոգութեան
տիեզերաց զկնի ջրհեղեղին, վասն կոչմանն
Աբրահամու, վասն ընտրհացն առ ժողովուրդն
Իսրայէլ, և վասն մարգեղութեան Որդւոյ
Իւրոյ, և վասն փրկութեան ազգի մարդ-
կան:

Յետ սրբագործութեանն Հաշակեաղ եպիս-
կոպոսին[3] բաշխեր կարգաւ և քահանայից,
սարկաւագաց, կղերիկոսաց, Հպնաւորաց համ
միանձանց, սարկաւագուհեաց, կուսանաց և
կրօնաւորեալ կանանց, և մանկանց, և ապա
ամենայն ժողովրդեան: Այլ առ ՚ի վճարել
փութով զգործն երկարաձիգ՝ քահանայքն բա-
զումք ՚ի միասին բաշխէին զտէրունեան մար-
մինն, և սարկաւագունք ՚ի սուրբ բաժակէն.
և զի մի ամբոխ կացուցանիցեն ՚ի տեղւոյն,

1 Գրիպ. Աճաք. Ձառ Ի, ԼԲ:
2 Կանոնք Առաք. Ը. ԺԲ:
3 Կանոնք Առաք. Ը. ԺԳ: Ժող. Նիկ. կան. ԺԶ:

ըստ կարգի ընդունելութեան ընծայիցն ՝ ա-
ծելին քահանայք և սարկաւագունք կարգաւ
զսուրբ հաղորդութիւնն առանց խլրտելոյ ՝ի
կայից իւրոց բազմութեան ժողովոյն : Ա՛րք ՝ի
ձեռս իւրեանց ընդունելին զսուրբ մարմինն
Քրիստոսի, և կանայք ՝ի կտաւ ազնիւ՝ պատ-
րաստեալ առ այն [2] : Ի փչրանացն ճեացելոց ՝ի
սրբոյ հաղորդութենէն բաշխելին տղայոց. իսկ
որոց ոչն հաղորդելին՝ տային ՝ի հացէն նուի-
րելոց որ չէր սրբագործեալ, և աստի ճեաց
սովորութիւնն բաշխելոյ ժողովրդեան զմասն[3] :
Ի ժամ հաղորդութեանն երգէին սաղմոս, ո-
րոյ արդ կցուրդն լեթ ասի առ Յատիոս : Ի
չորրորդ դարէ անտի դադարեաց յաճախու-
թիւն հաղորդութեան. և արտասուէ սուրբն
Յովհան ոսկեբերան զի բազումք առաջի կայ-
ին սրբոյ պատարագին առանց մատչելոյ ՝ի
հաղորդութիւն[4], և բազումք լա՛ ՝ի տունս լեթ
հաղորդելին . յաւելու և ևս, զի և ոմանք մի
անգամ կամ երկիցս ՝ի տարւոջ հաղորդելին :

Յառաջելոցս ցայս վայր յայտնապէս տեսա-
նի՝ զի երկար էին յայնժամ կարգաւորութիւնք
աղօթից պատարագի . քանզի և ոչ այլ ինչ գործ
էր հաւատացելոց յաւուրս կիւրակէից, բայց
պաշտել զԱստուած : Յուրբն Կղիմեդոս առ ՝ի

1 Կարգ Հռոմ. ՟ը :
2 Եւագր . Պատմ. Գ . ՟ղ :
Նիկեփ . Պատմ. ԺԱ . ՟ի՛ :
3 Կարգ Հռոմ:
4 Ի Թուղթն առ Եփես .
Ձառ Գ . և Լեբր . Ձառ ԺԱ :

յայտ առնել Թէ քանի նուաղեալ էր յուժոյ, ասէ՝ Թէ հազիւ մարթ է ինձ կալ՝ի վերայ ոտից՝ի ժամերգութեան ընդ ժամն երիս։ Այլ կայն անդստին՝ի ժամանակաց անտի նոյն է՝ կաց մնաց կանոն պատարագի. և ձառք քարոզից և նորին սուրբք հօրն որ առ մեզ հասին՝ սուղ են և համառօտ։

ՅՕԳՈՒՍՏՈՍ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Հանդէսք պաշտամանց։

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ եկեղեցւոյ խառն ընդ երգս կատարէին, զի անդստին՝ի սկզբանէ յիշատակք լինին երգոց. բայց՝ի դէպ է կարծել, զի՝ի հաստատել եկեղեցւոյ՝ի խաղաղութեան՝ և ևս յաձախեցին երգք։ Այրբն Գոստինոս համարի՝ի սրբոյն Ա[մ]բրոսիոսէ մուծեալ յարևմուտս զերգ սաղմոսաց ըստ նմանութեան եկեղեցեացն արևելեայց[2]։ Ա կայէ սուրբն Խարսեզ[3] զի յաւուրս իւր ամենայն ժողովուրդն երգեր եկեղեցւոջ, արք և կանայք և տղայք, և ձայնի ջուրց ծովու նմանեցուցանէ զերգս նոցա. իսկ սուրբն Կղիմգոր Ա[ղեքսանդր]ացի՝ ձայնի որոտման[4]։ Այս ինքն սուրբն Ա[սկղիպիոս վկայէ

1 Գիրք Ը. Թուղթ ԼԷ։ 3 Վէցօր. Գ։
2 Օգոստ. խոստով. Թ. Ի։ 4 Գրիգ. Ընծաբ. Ձառ Ի։

այլուր զի և 'ի տունս և 'ի հրապարակս եր-
գէին սաղմոսս, և քաղցրութիւն երգոցն զար-
Թուցանէր 'ի միտս զբորբոք աստուածային բա-
նից որով յօրինեալ են սաղմոսք, և յոյժ սակս
իսկ հնարեցաւ տիրապէս երաժշտութիւն:
Լսուաին նախնի երաժշտութեան [1] ոչ էր խա-
փանեալ տակաւին, և ըստ իմաստից երգոցն
զանազանէին ազգ ազգ նուագաց՝ մեղմ կամ
սաստիկ, զուարթ կամ տխուր, լուրջ կամ ա-
զնոզորմ: Որ ինչ ապա 'ի գէպ էր մեծափառու-
թեան և սքանչութեան կրօնից՝ զայն ընտրանաւ
առնէին քրիստոնեայք, զգուշացեալք չխառնել
ամենևին 'ի սուրբ խորհուրդս և յօրհնութիւնս
Աստուծոյ զկնատ եղանակս, և որ մեղկեն զը-
սիրտ և յուզեն զապստամբ կիրս: Նազում
անգամ կշտամբեցաւ Պղիոս վասն իւրումն
Նաղիայ տաղին յորում բովանդակէր զվար-
դապետութիւն իւր, և զորոյ զչափ ոտիցն և
զեղանակաց առեալ էր 'ի պիղծ երգոցն Աո-
տադեայ [2]: Հանդերձ այսու ամենայնիւ քաղ-
ցրագոյն քան զդէպն Թուէին սքանչն Գոսահ
նեայ երգք արևմտեայց [3], և անեղկևան ևս հա-
մարեր նա զսովորութիւն սքանչն Թանասի՝
որ տայր սաղմոսել միւսանգամ 'ի գալոյ այնպիսի
ոգւոյն ոլորակաւ, որ առողանութիւն Թուէր
քան երգ: Համագունիցն երաժշտութեան

1 Աճաբ. 'ի Պալմ. Ա:
2 Պղատ. Հասարակ. Գ:
3 Խոսսով. ժ. ՚ի:

թողում քննել եթէ ՚ի գրիգորեան երգս մեր գտանիցին դէռ և այս հետք հին երգոցն այնոցիկ . զի կարի հեռացեալ թուիլ յայնմանէ սերկեան երաժշտութիւնս մեր : Վասն զի ոչ գոն ՚ի սմին արուեստի նախատիպք ճշմարիտք որպէս ՚ի քանդակագործութեան և ՚ի նմանատիպ տուեալ եան , յորս յերկերիւք ամաց հետէ աշխատ լինին արդիք նմանողք լինել հնոցն : Ասէ եղանակք աղօթից և ընթերցուածոց յայտ է զի սակաւ ինչ բերեն եւևէք ՚ի նպաստ եթէ ձայնի , և առ ՚ի նշանակել զարմունս տանց :

Համարիմ ցուցեալ ըստ բաւականին , զի նախնի աստուածարեալ հայրապետք քաջահմուտք էին իմաստութեամբ ՚ի կիր արկանելոյ որ ինչ ազգէրն ախորժաբար ՚ի զգայութիւնս՝ առ ՚ի տպաւորել ՚ի յոգիս և կարի իսկ թանձրամտաց զիմաստս բարեպաշտութեան : Զգեբերյանման մեզ նկարեսցուք զժողով հատացելոց Հռոմայ առ քահանայապետութեամբ սրբոյն Լևոնի ՚ի մեծի լատերանեան եկեղեցւոջ : Ասէզեցիկ եր տեսարանն յորժամ ՚ի հսկման գիշերոյ զատկին՝ զկնի օրհնութեանն հրոյն անդէն լուցելոյ՝ անթիւ բազմութիւնն ճրագաց նշողիւքն իւրովք տիւ ճաճանչագեղ զսուրբ գիշերն գործեր : Ասէդ եր տեսանել զհրաշափառ վայրն զայն լի անհամար բազմութեամբ ժողովրդեան , որք անխոռով և անշշունչ իւրաքանչիւր յիւրում կարգի ըստ տիոց ,

ըստ բնութեանն աւագութեան և ըստ անձ-
նիւբ պայմանի արձանացեալ կային։ Լը տե-
սանել՝ի նոսա և զպատրաստեալսն՝ի վկրտել
յայնմ՝ գիշերի, և զընկալեալսն երկաւորքք
յառաջ՝ի համբոյր սրբութեան եկեղեցւոյ՝
որոց լցեալ էր զկարգ ապաշխարութեան։

Ի Ճաճանչ մարմարակուռ և նկարակերտ
որմոյն շուրջանակի, և՝ի ցոլ արձաթոյն և ոս-
կւոյ և ականցն պատուականաց՝ որ՝ի սրբազան
անօթոցն Ճառագայթէր, մանաւանդ առ սուրբ
սեղանովն, խտտղէին աչք։ Յանչուշնջ լռու-
թեան գիշերոյն ոչ ինչ այլ լսելի լինէր, բայց
մարգարէութեանց յստակ և իմանալի ընթեր-
ցուածք, և տունք սաղմոսաց խառն ընդ նոսին
նուագեալք՝ ախորժագոյն զիրեարս գործելով։
Յայսքան՝ի մեծամեծ և՝ի չքնաղ իրաց զա-
նազանութենէ զմայլեալ միտք՝ յօժարագոյնք
առ՝ի պաղաբերութիւն աստուածախոսից բա-
նիցն գտանէին, պատրաստեալք յառաջագոյն
հանապազորդ խոհմտիւն՝ի նոսին։

Ոչ զինչ զսարկաւագացն ասացից զպար-
կեշտութենէ, և զայլոց սուրբ պաշտօնէից,
որ ընտրեալք և դաստիարակեալք յայնպիսւոյ
առաջնորդէ՝ կային՝ի սպասու առաջի նորա,
մանաւանդ Թէ առաջի Աստուծոյ՝ զոր հա-
ւատոյ աչօքն յանդիման տեսանէին հանապազ։
Այս զինչ դարձեալ զմեծվայելչութենէ նորին

1 Գրիգ. Ընդաբ. Ճառ Ի։

ինքեան քահանայապետին, որ յոյժ էր պատ-
կառելի գիտութեամբն իւրով, պերճախօսու-
թեամբն, նախանձու, արիութեամբն և այ-
լովք ամենայն առաքինութեանցն մանաւանդ:
Կանի երկիւղածութեամբ, և քանի՛ ջերմե-
ռանդն խանդաղատնօք արտասանէր ՚ի վերայ
սրբարար աւազանին զսուրբ զաղօթն՝ զոր իւր
իսկ յօրինեալ էր, և որ ՚ի յաջորդացն որին այն-
պէս պատուեալ վասն սրբութեանն՝ զի մինչև
ցմեզ աւանդեալ հասուցին զայն ընդ պարա-
գայս երկոտասան դարուց: Եւ այսուհետև
զարմանք թուին ինձ՝ զի քրիստոնեայք անդ
զինաման մարմնոյ ՚ի մեռանցնս արկանէին, և
զի զօրն ամենայն ծոմապահեալ, և անքուն ըզ-
գիշերն զայն սուրբ ղպարութեանն հանէին ՚ի
գլուխ յաղօթս առանց առնլոյ ինչ կերակուր
մինչև ՚ի վաղիւ անդր:

ՅՕԴՈՒՐԱՆ ՄԵՏԱՍԱՏՆԵՐՈՒՆ

Տճնք, և ուխտաւոր պանդուխտք:

Ոչ՚ ՚ի գալ հասանել աւուրն մեծի, և ՚ի
կատարել ժամանակի պահոցն՝ կամէին և մե-
ծամեծք ՚ի սրբոց, և պատուէր եւս տային, կազ
դուրել զմարմին. զի Թէպէտ և կարևոր էին
պահք ՚ի համբառնալ զմիտս առ Աստուած, և

սատար լինել աղօթիւ, որը վասն սահմանեալ իսկ էին տօնքն, սակայն 'ի կիւրակէս, 'ի տօնս և 'ի բնաւ յաւուրս ինանց արգելեալ էր պահել: Յինուանս կամ յիսներեակ կոչէին նոքա զամենայն միջոց ժամանակին 'ի զատիկ մինչև 'ի գալուստ Հոգւոյն սրբոյ, որով արդ արև մտեալք կոչէն զկիրակէ բուն բարեկենդան նին: Այլ նոքին իսկ միանձունք եգիպտացիք' որք մեծաջան տքնէին' զի մի սուղ ինչ թուլութեամբն վրիպեսցին յարգասեաց յաւաջադոյն ժուժկալութեանն, խիտիր առնէին տօնական աւուրցն: Այսուրբն Պախոմիոս ըստ հրամանաց վարդապետին իւրոյ սրբոյն Պաղեմոնի փոխանակ աշտուձ պաքսիմատին' զոր յայլ աւուրս առնուին երկոքեան 'ի կերակուր, բանզի ընդ ձիթոյ պատրաստեաց յաւուր զատկին[1]: Վասնայ ոմն սուրբ ազգեալ Այթուձոյ եբեր սրբոյն Աթենեդիկտոսի 'ի նմին աւուր աւելի ինչ 'ի ձաշ[2]. և սուրբն Այնտոն այլ իմն ազգ զգալի ուրախութեան յայտ առնելով յաւուր զատկի և պետեհկոստէին զգենոյր զպատգօտն արմաւենի' ժառանգեալ 'ի սրբոյն Պօղոսէ առաջին անապատականէ. և սուրբն Աթանաս արկանէր զանձամբ զվերարկուն զթոզեալն նմա 'ի սրբոյն Անտոնէ: Անդաստին 'ի նմին ժամանակաց սովորութիւն էր առ

1 Կասիան:
2 Վասն սրբ. Պախոմ. ը:
3 Դրիգ. Տրամախոս. Բ:

քրիստոնեայս փառաւորս զգենուլ, և պարարտ տրս Ջհաշել՝ · որով տօնս առնել՝ նշանակէ խընջոյս յօրինել։

Իսկ նովին պատուէրն և զտօնս սրբոց մարտիրոսաց, և բազմաժողով կատարէրն զայնոսիկ։ Օ՛ի թէպէտ զկիւրակէս և զայլ տէրունական տօնս ամենայն ոք յեկեղեցւոջ իւրում կատարէր՝ի միասին ընդ եպիսկոպոսի իւրում, բայց առ՝ի տօնախմբել զյիշատակս սրբոց վըկայից՝ ՚ի գերեզմանս նոցին ընթանային յամենայն կողմանց, մինչև բազում անգամ յոլովից եպիսկոպոսաց՝ի միասին հանդիպէր։ Ա՛ի միայն օրինակ շատ է առ այս՝ իմաստասիրել անտի և զայլս։ Ասուրբն Պաւլինոս [2] յիշէ յանուանէ քսան և աւելի քաղաքս և գաւառս Կտալիոյ, ուստի գային ամի ամի խումբ խումբ բազմութեան հաւատացելոց կանամբք իւրեանց և որդւովք՝ի քաղաքն Կորնթոս՝ի տօնի սրբոյն Փեղիքսի՝ի չորեքտասանյունուարի, ՚ի ցրտագին աւուրս ձմերայնոյ, յայցելութիւն միոյ ուրուք ևեթ՝ի խոստովանողաց։ Ասկ զինչ ևս ասացից զՀանուրց քրիստոնէից · զի՞նչ ըզտօնից սրբոյն Ստեփանեայ և Լաբենտեայ և առաքելոցն Պետրոսի և Պօղոսի՝ի Հռոմ [3]։ Ընդր՝ի հեռաստանէ գայլոց խռնիլն յայրս

1 Լատ. Ձառ Գ, յղ· Քառասան։
2 Պաւլին · ից ։
3 Պրուգինս · ից, ժա, ժբ։ Վկայաբ· Հռոմ· ի յունն· ին։

նայն ժամանակի. ուստի սկսան պանդխտու-
թիւնք ուխտաւորաց։ Սուրբն Ղեբքսանդր՝
յորժամ եպիսկոպոս Երուսաղէմ կացուցան
ընդ սրբոյն Կարկիսեայ՝ անդ ուրեմն ի սկիզբն
երրորդի դարուն, ի Կապադովկիոյ անդր ե-
կեալ էր յայցելութիւն սուրբ վայրացն։

Ի իսկ ի զօրաւոր նպաստից էր այս առ ի
զգայուլեաւք արծարծանել զբարեպաշտու-
թիւն. զի տեսանել ի մծոյ զնչխարս ուրուք
ի սրբոց, զգերեզման նորա, զբանտն, զշղթ-
թայս, և զտանջանարանս մարտիրոսութենն՝
այլ ազգ յոյժ զիւտն հարկանէր քան զՀամ-
բաւն ի հեռաստանէ։ Ամող զբանչելիսն
բազումս որ անդէն ի տեղւոջն գործէին, և
որք զհեթանոսս անգամ ձգէին՝ ընդհելով
նոցա կենաս և առողջութիւն, որ յոյժ ցան-
կալին էր նոցա։ Յայտ իսկ է ամենեցուն՝ զի
ի յերախայրեաց ազատութեան քրիստոնէից
եղեն խնամք սրբոյն Հեղինեայ[2] ի պա-
տուել զսուրբ տեղիսն որ Երուսաղէմ և
ընդ ամենայն երկիրն սուրբ, որով յայնմ հե-
ղոյ առաւել և աւելի յաճախեցին անդր ուխտա-
սրբք։ Յաւուրս Կոստանդիանոսի յերևեալ
զպայծառ միջաւուրք լուսեղէն նշանի խաչին
Երուսաղէմ[3], անթիւ անհամար ուխտա-

1 Եւսեբ. Պատմ. Ը. Ճ։ 3 Կիւրղ. Թուղթ առ Կոստ.
2 Եւսեբ. վարք Կոստանդ. Սոզոմ. Պատմ. Գ. Ժե։
Գ. Ջ։

ւորք գտան անդ յամենայն աշխարհայ՝ վկայք մեծի աբանելեացն ։ Այս վկայէ Հերմիմոս[1] ականատես եղով՝ զմեծ բազմութենէն որ հանապազ երթևեկէին յամենայն ազգաց, և վարդապետք և եպիսկոպոսունք ։ Այս ընդարձակութիւն տերութեանն Հռոմոյ, և հպատակութիւն աշխարհին ի միջերկրական ծովին, և պողոտայք լայնք և ընդարձակք ընդ ամենայն տեղիս յանցս զօրաց և կառաց՝ դիւրին գործէին զհանապարհորդութիւնն, և ոչ մեծ ինչ թուէր յայնժամ ի պանդխացւոց և ի պաղտիացւոց աշխարհէն հանապարհ առնել յԱգիպտոս, ի Պաղեստին և կամ ի Սիւրիա։

Ի սկզբան եղեալ սովորութեան բաժանելոյ զնշխարս, ի դէպ իսկ էր պատուել զսուրբս ի տեղւոջ անդ խոստովանութեան նոցա ։ Ի հնուանց սկսաւ սովորութիւնս այս. զի ի Հռոմ մինչև ի ժամանակս սրբոյն Դրիգորի, որպէս ինքնին վկայէ[2], փոխանակ նշխարաց սրբոց առաքելոցն յղէին կտաւս կամ թաշկինակս հպեալս ի գերեզմանն նոցին. և կամ առաքէին բանալիս ոսկեղէնս՝ ամփոփեալ ի նոսա խարտուածս ի շղթայից սրբոյն Պետրոսի։ Ոչողովուրդ իւրաքանչիւր նախանձաւոր էր ի պահպանութիւն նշխարաց սրբոց իւրոց իբր առհաւատչեից հովանաւորութե-

1 Հերն. առ Մարկեղ։ 2 Գիրք Գ. Թուղթ Ը. և Զ. Ի։

նոցին, և աստուածային օրհնութեանն առա-
տանալոյ՝ի վերայ քաղաքին և գաւառին, յորմէ
և մարմնաւոր իսկ օգուտք սկսան յառնախել
նոցա։ Օ՛ի երթևեկք պանդխտելոց ուխտա-
ւորացն հարստացուցանէին զքաղաքս, և առ-
ևծաբանաց սրբոցն որ՝ի նոսին հանգչէին՝
յորդորէին թագաւորք քաղաքս ապաստանի
առնել զնոսին և ապահարկս, որպէս արար
Կոստանդիանոս զքաղաքն Հելինուպոլիս՝ի
Խութանիա։ Ձի՛ք ոք որ ոչ գիտիցէ զՀռչա-
կաւոր ազատութիւնն՝ի Դաղղիա սրբոյն
Մարտինոսի Տուրոնեցւոյ, և զպատակառել
Գոթացւոց յեկեղեցւոյ սրբոյն Պետրոսի
յառնուլն զՀռոմ։

ՅՕԴՈՒԱԾՆ ԵՐԿՈՏՏԱՍՆԵՐՈՐԴ

Ժողովք։

Մ՚ԵՆ ևս համարձակութիւն էր յայնժամ
Ժողովոց, որով ստէպ ևս լինէին Ժողովք քան-
զի և՝ի սկզբանէ անտի էր այս սովորութիւն
յեկեղեցւոջ, և անդ ուրեմն՝ի վախճան եր-
կրորդի դարուն՝ բազում Ժողովք գումարե-
ցան՝ի զանազան գաւառս յաղագս խնդրոյ
զատկին։ Ձետ այսոցիկ անդէն վաղվաղակի

՝ Եւսեբ. Պատմ. Ե. իզ։

պատմէ Տէրտուղիանոս զգուշարելոյ ժողովոյն Հռոմայ, որոց պահովք սկիզբն առնէին[1]։ Յիշատակէ և Կիպրիանոս ժողովս բազումս գումարեալս Քրիստոսի յառաջ քան զաւուրս իւր։ Եւ ինքն գումարեաց յոլովս. և ասէ բազում ուրեք՝ զի պարտ էր սպասել դեպ ժամանակի գումարման ժողովոյ առուղղելոյ զիրս կաթուղիկէ եկեղեցւոյ, որպէս և զընդունելութիւն գայթակղելոցն ի հալածանս։ Ասացեալ ցուցանէ անդէն զխափանումն նոցին ի հալածանաց՝ վասն այսր անդր վախճտական անկանելոյ և թագչելոյ քահանայից և եպիսկոպոսաց. զի առաւել ևս ըզնոսա խնդրէին հալածիչքն։ Եւ ոչ ինչ վայրկ մի խաղաղութիւն լինէր եկեղեցւոյ, գումարէին ժողովք. մինչև երբեմն և յայլ և այլ գաւառաց գալ ժողովել ի միասին, որպէս կրկին ժողովքն Կոնտիոքայ ընդդէմ Պօղոսի սամոսատացւոյ[2]։

Ոսկ երբև ոչ ևս ուստեք երկիւղ գոյր հալածանաց, յաձախեցին գաւառական ժողովք, և սահմանեալ ևս ժամանակաւ գումարէին, այս է երկից ի տարւոջ, որպէս օրինադրեցաւ և ի Նիկիոյ ժողովն։ Ոսկ ապա ի մեծամեծ և յանսովոր վէձս հաւատոյ սկսան և տիեզերական ժողովք ընդհանուր եկեղեցեաց։ Եւ այնպէս կարևոր դատէին գաւա-

1 Ցղ. Պահ. ժգ։ 2 Նւսեբ. Պատմ. Ի. շ։

ռական ժողովը, որպէս զի [1]Եւսեբիոս ընդ մեծամեծ ջնասակարութիւնս հալածանաց [2]Լիկիանոսի համարի զնոսա զայնս՝։ Ընդ եր սովորական ատեան դատաստանի ամենայն իրաց մեծամեծաց եկեղեցւոյ, զոր միոյ ումեք եպիսկոպոսի անմարթ եր սահմանել։ Հաստատուն վարդապետութիւն եր՝ զի իշխանութիւն վճռոց և հրամանաց եկեղեցւոյ միաբան հաւանութեամբն հոլուացն պահէր, որք ոչ լիով՝ի յայտ գան՝ բայց՝ի սուրբ ժողովս։ Ընդ դատէին և զեպիսկոպոսունս, անդ և զժողովս սահմանէին. և վասն օծանելոյ իսկ եկեղեցեաց լինէին ժողովք, որպիսիք յաձախ եղեն առ Կոստանդիանոսիւ՝ առ՝ի դարման ջնասուց հալածանացն։ Իսկ զկարգս դատաստան ժողովոց ե տեսանել մանրամասնաբար՝ի յորրորդ ժողով Ջոլեդոյ՝։

ՅՕԳՈՒՆՔՆ ԵՐԵՔՏԱՍՆԵՐՈՐԴ

Հրահանգք ապաշխարութեան։

Ի ժամանակի աստ ազատութեան սկիզբն կալան և արգասիք մեծամեծք հասարակաց պահոց եկեղեցւոյ, մանաւանդ աղուհացիկ։

[1] Եւսեբ. վարք Կոստանդ. [2] Եւս. Պատմ. ժ. ջ։ Ա. ծա։

Եւ որ ազատ էր ի պահոց. ոչ աղնուականութիւն և ոչ հասակ ի բաց հանէր զոք յօրինացս։ Կադարէին գործք ամենայն, և որպէս անապատ իմն էր տեսանել այնուհետեւ և զըկարի մարդաշատ քաղաքս։ Ի մեծ ժամն աւուրն աղօթից պարապէին յեկեղեցիս, և ի լուր ընթերցուածոց և յորդորակաց. նմին իւրի երկար ևս էն ժամերգութիւնք յաւուրս պահոց։ Ձլինէին հարսանիք, և որք արգելեալ էին յաւուրն յայնոսիկ՝ թէպէտ և պահէր ոք[1]։ Ի՞նչև ի գալն ինքներորդ դեռ ևս չառնէին գաւառացիքն յաւուրս աղուհացից, չկրէին զկնս, և ձանապարհ անգամ չառնէին առանց կարևոր հարկի[2]։

Ի այս ամենայն առնէին վասն ապաշխարութեան, որում սբքեալ էին աւուրք պահոց. նմին իւրի զհրահանգս հանդերձելոցն ի միրգ տել, և զարձակումն ի մեղաց անկելոցն զկնի միրգտութեան՝ յաղուհացս անդր արկանէին։ Կատարեալ զկնգութեան տօնսն ծննդեան և զաստուածայայտնութեան՝ սկսանէին ապա ազօթել վասն թողութեան մեղաց, և յապաշխարութիւն կոչել զմեզաւորս. որպէս և ցայսօր առնէ եկեղեցի Լատինացւոց զկնի առաջաւորաց բարեկենդանին. և այս իսկ է յայտ-

1 Բարս. յղ. Պահ. Ձառ Ոսկեբ. ի Ծննդ. Ձառ Ա։
Բ։ Հերան. Թուղթ Ե, առ 2 Նիկոդ. Ա, առ Խորհրդ.
Լատա. և Ի՞, առ Նւսառք։ Խուզաբ. խե, խէ, խէ։

նապէս խորհուրդ ժամերգութեանէ առուրցն այնոցիկ Ընթերցուածքն՝ի ծննդոց՝ առաջի առնեն զզօրութիւն արարչին և զարդարութիւն նորա և զանչառութիւն։ Ընդ է տեսանել զԱդամ արտաքս անկեալ՝ի դրախտէն, և զվրիժապարտ տիեզերս ջրհեղեղաւ կորուսեալ, և այրեցեալ երկնառաք հրով զչորեսին ամբարշտեալ քաղաքս։ Որք միանգամ ստրջացեալ յօրինակաց յայսցանէ և՝ի հզօր յորդորակաց առաջնորդացն՝ դառնալ կամէին, բուռն հարկանէին զապաշխարութեան կարգաց զորս գծագրեցի՝ի վեր անդր, և որ խնամով և արդեաք պահէին զկնի ազատութեան եկեղեցւոյ քան յառաջ։ Ա՛յլ՝ի դադարել երկիւղի հալածանաց ներողագոյն և եղեն՝ի շնորհել հոգեվարաց զհաղորդութիւն։ Վասն ոչ զոք ազատ կացուցանէին յապաշխարութենէ, թէպէտ և յաւագայ ոք էր ըստ աշխարհի. զի ընդ նովին օրինաւք էին և իշխանք և սոսկականք։ Ընդ ուրեմն՝ի կէս երկրորդի Դարուն յանձին կալաւ զայն և կայսրն փիլիպպոս, և անմոռաց կացոյց մեռասցն յեկեղեցւոջ օրինակ մեծին Թէոդոսի՝։

՝։ Ինոմկենտ. Ա., Թուղթ առ Եքսուպեր. իբ։

ՅՕԴՈՒՆՅՕ ԶՈՐԵՔՏՈՄՆԵՐՈՐԴ

Սանձահարութիւն մոլորութեանց։

Ո՛Ր ԱՌԱՋՈՒՄՍ 'ի նախնի մոլորութեանց անհետ արարչին կայսեըք իշխանութեամբ իւրեանց, հրաման հանեալ չժողովել մոլորելոց 'ի միասին, և զարձեալ՝ խոյզ և խնդիր առնել գրոց նոցա։ Ո՛չ հեթանոս ինքնակալըք ոչ ինչ առաւել ազատութեի էր ուղղափառաց քան չարափառաց. զի ոչ ինչ խոիր առնէին հեթանոսք ընդ նոսա և ընդ սոսա, խոտեւլով և հալածելով առ հասարակ զամենեսին որ քրիստոնեայքն կոչէին։ Այլ զինի օրինադրութեանցն Կոստանդիանոսի և յաջորդաց նորա ոչ ևս իշխէին հերեսիոլոք 'ի մի վայր գալ գումարել, ոչ յայտնի և ոչ 'ի ծածուկ, հսկելով քաջ եպիսկոպոսաց ընդ ամենայն տեղիս։ Վ՛ասն որոյ բազմագոյնք 'ի նոցանէ եկին խառնեցան յեկեղեցի՝ ձշմարտութեամբ կամ առ երեսս, թէպէտ և փոյթ մեծ էր եպիսկոպոսաց չընդունել զնոսա անխտիր։ Այսպէս որ պնդեալք յամառեալք մեռան 'ի մոլորութեանն՝ չթողին հետևողս իւրեանց վասն անհեթեթ վարդապետութեանն, և վասն սալիբատ վարուց իւրեանց։ Վ՛ասին իբր ոչ ևս յիշին

։ Եւսեբ. Պատմ. Ե. 28։ Սոզոմ. Պատմ. Ր. 28։

անուանք Ա՝ աղեխտեանց, Ա՝նտոտիկեանց, Ա՝րկիոնեանց, և կամ այլոց և նսեմ աղանդոց։ Ա՝նիքեցւոյն աղանդ յերկարեաց քան զամենեցուն, ոչ ինչ գնալով առ նոսա սպառնալեաց և պատժոց մահու։ Ա՝ռեալ և ոչ ուրոյն դաս կազմէին Ա՝րիոսեանք առ Ա՝ռտանդիանոսիւ, իսկ առ յաջորդաւքն նորա գտին տարապայման պաշտպանութիւնս. քանզի հերձուածք գիւտք են մարդկային, և ոչ ընդ երկար ունին ընդդէմ կալ Հալածանաց։

Ա՝ռեալ և չկարօտի եկեղեցի աշխարհական բազկի, սակայն ոչ մերժէ զձեռն օգնականութեան նորա։ Հաճոյ էր Հայրապետաց զի Թագաւորք աստուածապաշտք պատուհաս՝ի վերայ կապկին հերեսիոլոգաց՝ յաքսորս առաքելով զնոսա, կամ տուգանս արկանելով նոցա, գեթ յահարկութիւն. այլ խնայէին՝ի կեանս նոցա։ Ա՝րքունք էին եկեղեցւոյ անայլայլելի՝ մի ըմբռնել առ՝ի մահ. և սոսկացաւ ընդ գործս եպիսկոպոսին Ա՝թանասի Վանն գուն գործելոյ նորա՝ի սպանուածն առնդապաետին Պրիսկեղեայ. ուր աստուածայինն Գրիգոսինոս բազում այլ և այլ Թղթովք խնդրեաց՝ի դատաւորսդ չմահանել՝ի մահ զԱ՝ետիոսկեղեանս[2] զազգ իմն Ա՝նոմոտեանց՝ դատապարտեալս վանն ահագին հա-

1 Յղ. Հերեսիոլոգ. գլխ. Ե, և Ը։

2 Գրիգոս. Թուղթ Ը, առ Վենիփ. և Խղ., առ Վենիկեան։

բըստահարուԹեանցն և դաւաճանուԹեանց ընդդէմ ուղղափառաց ։ Ընարգանաք իմն իցէն ասէ ՝ յարչարանաց քրիստոնէից սպանումն այնոցիկ որք զմարտիրոսական ետուն նոցա ըզփառս . և դարձեալ, եԹէ չկամիցին դատաւորք այլ պատուհաս փոխանակ մահու ՝ի վերայ ածել յանցուցելոցն , ոչ և այնչափ եղէք ղեցի իրաւունս խնդրել ՝ի նոցանէ ։ Վասկայն ոչ հանապազ յաջողեաց Հայրապետաց առնուլ զՀայոցաածս իւրեանց վասն կենաց Թըշնամեացն , և կամ այլոց մեղուցելոց . զի երբէք երբէք վասն խաղաղուԹեան աշխարհին լաւ համարեցան Թագաւորք չտալ Թոյլ կեալ այնպիսեացն ։

ՅՕԴՈՒԱՆ ՀՆԻՆՏՇՄՆԵՐՈՐԴ

Գնացք ժառանգաւորաց եկեղեցւոյ ։

ԸնդհանուԹիւն եկեղեցւոյ փոփոխումն արար ՝ի գնացս եպիսկոպոսաց և գերց ։ Վկսան յայնժամ և արտաքոյ տանել նշանս յայտարարս աստիճանի իւրեանց . այլ տիրապէս զանազանուԹիւն զգեստուց եմուտ զինի տիրապետելոյ խաւժադուժիցն , առ որովք անփոփոխ կալան վիճակաւորք զՀռովմայեցի տա-

բազ Հանդերձիցն, որպէս և զերգան և զլեզու[1]։

Հաղուագ ի նոցանէ կատարելագոյն վարուց տարփայեալք՝ գիրկս արկին Հասարակաց կաց կենաց ըստ օրինակի Հրեշտակեմայցոց եկեղեցւոյն, ի միում տան բնակելով ըստ մարթելոյ, և ի միասին Ճաշակելով։ Ոչ ինչ էր նոցա առանձինն, և որչափ ինչ տայր նոցա եկեղեցի՝ նուաճ զպետս ընդուն։ Հագուստքն իւրեանց կազմէին բազմաթիւ, և նահապետ տանն էր ինքն եպիսկոպոսն. որպիսիք էին գղերք սրբոյն Հուսեբիոսի բերկեղացւոյ, և սրբոյն Մարտինոսի, և սրբոյն Գոստինոսի, զոր և անուանէին գղերս կանոնաւորաց, կամ՝ ըստ կանոնաւորս[2] յորոշումն յայնցանէ որք ոչ Ճշդիւ ըստ կանոնաց կէին, թէպէտ վարքն և նոքօք եկեղեցի ի պետս իւր։

Իսկ նոքին իսկ որ ոչ հասարակաց վարէին կեանս՝ չընակէին միասին, այլ հանապազ երկուք կամ երեք ի միասին. իսկ առ երիցունս եկեղեցեացս որ ի գիւղօրէս՝ էին յաշա-կերտութեի և ի հրահանգս վարուց մանկտի ժառանգաւորաց՝ վկայ գնացից նոցա։ Հանգի պարտ էր ամենայն եթ աստիճանաւորաց՝ քահանայից, սարկաւագաց և կիսասարկաւագաց այնպէս լուսաւոր լինել ի մատոյ[3], զի անբամ

1 Թոմասին. Հրահ. մասն Ե, գլուխ Ա. է, նն։
2 Թուղթ ճ, ճԼԳ, ճԼԹ։
3 Թուղթ ժԳ, ժԴ։

բասեղիք էին ամենևին ։ Այլ ընդ եպիսկոպոսին բնակեր հանապազ մի յերիցանց կամ ի սարկաւագաց՝ ի նմին սենեկի ննջելով, յորմէ և սիւնկեղոս կոչեցաւ ի Յունաց կամ սենեկակից, որ եղև ապա անուն մեծի իշխանութեան ։ Այսրբն Գրիգոր քահանայապետ ոչ զոք ուներ առ իւր յապարանսն բաց ի կղերիկոսաց և ի միանձանց, և ի բաց արձակեաց զաշխարհական ծառայս առ հասարակ՝ մինչև զսենեկապանս իսկ իւր . որով և ցայսօր ժամանակի ի կղերիկոսաց եւեթ կարգին սպասաւորք քահանայապետին ։ Այս ամենայն ըզգուշութիւնք կարևորք էին անամուսին կենաց, և վասն այնորիկ գժպատեհ թուեր նոցա յաձախել եկեղեցականաց առ կանայս ի պատճառանաւք բարեպաշտութեան, ընդունել ի նոցանէ յընծայ հանդերձս և զարդս, կամ միրգս և քաղցրաւենիս, և որ ինչ տածէն զփափկութիւն ։

Այնժ էին շուք և պատիւ եկեղեցականաց . և թէպէտ յաւագութիւնս աշխարհիս ոչ գոյր եպիսկոպոսաց տեղի, և որպէս զսոսկականս ոմանս վարէին զկեանս անշուք և անպաճոյճ, սակայն մեծարեալ պատուէին և ի նոցունց իսկ յիշխանաց և ի թագաւորաց ։ Մինչ ոչ պակս մեծապատիւ մեծարեաց Կոստանդիանոս զՀարս Նիկիոյ ժողովոյն, ասացեալ է մեր

1 Օգոստ. յղ. Հասարակ. կէն ։ Ժող. Աբ. Գ, ը ։

զայն այլուր . իսկ ինքնակալն Աքսիմիանոս ի սեզան իւր ընկալաւ զսուրբն Արտինոս[1] հանդերձ երիցամբքն , և տիկին ինքնակալին պաշտեաց զնոսա :

Ի նոյ ժամանակին ընդ այնոսիկ սուղոր էին Հռովմայեցիք զանազան մեծարանաց անուա- նըս տալ իշխանաց , կոչելով զնոսա մեծապա- տիւս, փարաւոնս, երևելիս, գերապայծառս[2], ըստ իւրաքանչիւր աշխարհի և աւագու- թեան . բայց զեպիսկոպոսունս կոչէին սուրբս կամ երանելիս , յաւելեալ և զանունքս բա- րեպաշտ , երկիւղած , աստուածասէր , և որ ի սոցին սակի են յորջորջմունք, որ այնպէս սեպ- հականեալ էին եպիսկոպոսաց՝ ըստ և ի գատս և յամբաստանութիւնս ընդդէմ նոցա նովին անուամբք կոչէին , որպէս Ներսէսոր ի Ժո- ղովին Եփեսոսի և Պիտակոր ի Վաղկեդոնին : Ոչ նոյն անուանս տային և չարափառ եպիս- կոպոսաց . և ոչ ինչ խղճեաց Արտինոս ի խօսս իւր ի կարգեդոն ամենասուրբս անուա- նել զՅուվենտոս և զՊետրիկանոս՝ որք էին յաղանդոյն Նեստորեայ . քանզի թշնամանք էին նոցա զանց առնել զՀովքս :

Իսկ անուանակոչութիւնս Պատ՝ որ նշա- նակէ Հայր , մանաւանդ թէ և քան զկոչումն

1 Ամղ . Տրէգ . Բ , ա : Դ , Ամղ . Հռովմ . առ Գրիգ . Դ : Ի՛ , Ի՛ : Եմբրիա . ժ՛ Աքուիա . 2 Հերոն . Թուղթ առ կե- կան . Ճ՛Ե : Գերասնդ . Ի՛ : սոտ : Սեւէր . Ի՛նդն Մարտին :

հօր խանդաղատական, հասարակաց անուն էր ամենայն եպիսկոպոսաց՝, որով և ցայսօր կոչին երիցունք եկեղեցւոյն Յունաց։ Այլ՝ ի սկզբանէ կոչէր անխտիր պապն Աւուանելիոս, պապն Աղեքսանդրոս, պապն Յուլիոս, և պապն Աթանաս։ Տեսաք և կոչէին նոքա, և ամենայն Թուղթք առ եպիսկոպոսունս՝ ի չորրորդ և՝ ի հինգերորդ դարս այսպիսի ունին մակագիր. "Այս ամենասուրբ և ամենաքաջ պաշտ և գերյարգոյ Տէր այս անուն հայրապետ„։ Ամենեքին, որպէս՝ ի վեր անդր ասացի, յերկիր խոնարհեալ առաջի նոցա՝ համբուրէին զոտս նոցա. նմին իրի ոչ է պարտ զարմանալ՝ զի այժմ պատիւս այս որ մեծ ինչ Թուի մեզ՝ քահանայապետին մեծի պահեալ է, զոր՝ ի սկզբանէ հետէ առանձին իմն օրինակաւ յարգէն և մեծարէն համօրէն հաւատացեալք, և զոր եպիսկոպոսունք իսկ Հայր և Պապիոս կոչէին զնա, ուր ինքն եղբարս լոկ անուանէը զնոսա, որպէս և այժմ իսկ. զի քան զամենայն եկեղեցիս Հռովմէականն հաստատուն եկաց միշտ՝ ի պահպանութիւն նախնի սովորութեանց իւրոց՝։

Մեծարանք իշխանաց առ հայրապետս զօրացուցանէին զնոսա յոյժ՝ ի խնամս և՝ ի

1 Փանչիրոլ. ՝ի ծնունդս Կայսեր։ Բարսն. ՝ի վկայաբ. ՝ի ժ յունուարի։

2 Թուղթ Ինոմվկ. Ա, ՝ի Թուղթս Օգոստ։ Օգոստ. Թուղթ առ Վակեդոն։

պաշտպանութիւն այրեաց և որբոց և ողբոր-
մելեաց ամենեցուն. և առաւել 'ի խնդրել
զկեանս ինքասպարտից[1]: Իբր ոչ եթէ չէին
նոսիանձայոյզք արդարութեան սուրբքն այ-
նոքիկ, այլ գիտէին զի անաչառ խստութեան
ոչ պակասեն օրինակք, և վասն հոգւոց փըր-
կութեան վաստակէին: Օ՛ի թէպէտ և քրիս-
տոնեայք էին և թէ ոչ դատապարտեալքն 'ի
մահ, յորդոր մեծ էր այս նոցա յապաշխարու-
թիւն կամ 'ի մկրտութիւն. և ողորմածու-
թիւնս այս սիրելի ընծայէր զեկեղեցի և նոցին
իսկ հեթանոսաց:

ՅՕԳՈՒՄՆ ՎԱՐՇԱՄԱՆԱՐՈՒՐԴ

Ընդհանրութիւն եկեղեցականաց:

Ի ՄԵԾԱՊԱՏԻՒ մեծարանս յայսոսիկ ոչ
վերջանային յաղթատութենէ: Յաբրիկ
պարտ էր և այնոցիկ յեկեղեցականաց որքա՛ջ
ուսեալ էին զբանն Աստուծոյ՝ գործել վեր-
կիր, առանց կասելոյ 'ի պաշտամանէ իւրեանց,
կամ պարապել յայլ ինչ արուեստ առ 'ի պա-
հարել զկեանս և զհանդերձ: Այլ զայս թերևս
զկղերիկոսաց ևեթ իմանալի է, որոց յոլովա-
գոյնք ամուսնացեալք էին, և ոչ զսարկաւագաց

[1] ՚ի ծող. կարեաց. Ր:

կամ զքահանայից որք անպարապ էին յայլոց գործոց։ Ապակայն վկայէ սուրբն Եպիփան՝ զի բազումք յերիցանց և յեպիսկոպոսաց՝ ի քարոզութիւն աւետարանին յարէին և զվաստակս ձեռաց, ՚ի կիր առեալ արուեստս ինչ պատշաճս հանգամանաց պաշտամանն իւրեանց և պատուոյ։ Իբր ոչ եթէ տգէտք էին իրաւանցն իւրեանց, զի օրէն էր նոցա կեալ ՚ի տրոց ժողովրդեան, այլ զի խնդամտագոյնք կէին առանց ծանրանալոյ ումեք, և զի ցանկային առատաձեռնել աղքատաց։ Սուրբն Եարսեղ[2] գրելով առ սուրբն Եւսեբիոս սամոսատացի՝ խնդրէ անբասիր առնել զինքն վասն բազում ժամանակս յապաղելոյ զգիրն. քանզի գղերք իւր ՚ի ձեռնարուեստից կէին, վասն որոյ պարտ էր նոցա դադար առնուլ, և ոչ կարէին ուղևորել։

Եայց ուստի և հայթայթէին զպէտսն, պարտ էր նոցա յօրինակ զանձինս ընծայեցուցանել ժուժկալութեան և քրիստոնէական պարկեշտութեան[3]։ Ի կանոնս անդ դարձեալ եկեղեցւոյն Կիրիկեցւոց սահմանի եպիսկոպոսաց սակաւապիտութիւն ՚ի կերակուրս, և աղքատութիւն ՚ի կահս. զոր և արդեամբք ՚ի գործ դնէր սուրբն Գրիգորիոս

1 Եպիփ. յղ. Հերմ. Ձ։
2 Թուղթ ՄԿԳ։
3 Թոմասին. Հրահանգք. մասն Ա, գիրք Թ։

ըստ յուցանելոյ Պօսիդիոսի [1]. զի կերակուր նորա սովորական էին ունդք և բանջար. և՝ ի ձնորհս հիւրոցն ևեթ տայր ածել՝ ի սեղան երբեմն միս և գինի: Ա՛յս ինքն Օգոստինոս ասէ ուրեք զանձնէ [2] Թէ չկամիմ արկանել զանձամբ հանդերձս զոր զգենուլ չիցէ՝ ի ձահ և կիսասարկաւագի, կամ չմարթիցի տալ և աղքատի ումեք: Ի նոյն ժամանակս սուրբն Պաւլինոս փայտեայ սկտեղը և խեցեղէն անօթիւք վարեր [3], այն որ թողեալ էր անբաւ մեծութիւնս: Սուրբն Ա՛րտինոս աղքատին ձորձովք և յովանակաւ ջրջէր չայցելութիւն Թեմի իւրոյ [4]: Ո՛ր արմանայիկ առաքինեքեան ընդ ժուժկալութիւն և ընդ պահս զոր պահէին սուրբն Լուպոս՝ ի Տրիկասայ, սուրբն Վերմանոս Ա՛ստեսիոդորոնէ, և սուրբն Իլարիոս Ա՛րելատայ: Պատմեն վանս սրբոյն Ա՛նտիփանոս Հայրապետին Տիկինոնի՝ զի ոչ մոռաներ՝ ի բաղանիս, ոչ ընթերը բերնաւ, և չձաշակեր ինչ՝ բայց միայն բանջար և ունդս:

Սուրբն Ա՛սիլիոս յարևելս աղ և հայառնոյր՝ ի կերակուր, և ջուր լոկ ըմպէր, և մի միայն պարեգօտ էր նորա՝ ի զգենուլ: Ա՛յսմանն նմին կեայր և սուրբն Վրիգոր Ա՛զիանզոս:

[1] Վարք Ս. Օգոստ:
[2] Ճառ յՂ. Հասար. կենաց Մարտին:
[3] Թուղթ Ա:
[4] Սուրբիկ. Վարք սրբ.

Ասոիք սրբոյն Յովհաննու ոսկեբերանի պա-
տու ևս ամբաստանէին զնա, զի միայնակ ու-
տեր, և կեայր առանձինն։ Եւ ինքն Ասկեբե-
րան [1] եպերէ զեպիսկոպոսունս որ զգենուլ
կամիցին բեհեզեայ հանդերձս, և՝ի ձի աշտա-
նակել, և գնալ բազում ծառայիւք, և շինել
տուն՝ ունելով բնակարանս. որպէս այս ամե-
նայն ամբաստանութիւնք եղեն զՈղոսկ սա-
մոսատացւոյ՝ որ եկաց դար մի յառաջ քան զԱս-
կեբերան։ Ամբաստէին զնա՝ի փափկակե-
ցութիւն, և զի ուտէր կշտալինդ, և զգենոյր
փառաւորս, և գնայր ընդ քաղաքն սպասաւո-
րօք յառաջոյ և զկնի, զչքնաղական մանա-
ւանդ բերելով յանձին չքեղ պերճութիւն՝
քան զանպաճոյճ տեսիլ եպիսկոպոսի [2]։ Եւ
սակայն հայրապետ էր նա Կ.Պոլսոյ գլխաւոր
քաղաքի յարևելս, և երրորդ քաղաքի ընդ
արեգս։

Ա.նպէս պարկեշտս սովորեալ էին տեսա-
նել զեպիսկոպոսունս, մինչև պատճառս բամ-
բասանաց առնուլ չարասիրաց և պարսաւա-
դիտաց զփոքու իւիք վերջացեալս՝ի խոս-
տակրծութենէ նոցա. վասն որոյ գանգատի
Ասկեբերան [3] թէ են որ չարախօսեն զեպիս-
կոպոսաց վասն՝ի բաղանիս մտանելոյ, վա-

1 Ճառ Դ, ի Թուղթն առ Փիլիմ։
2 Ծոզ. Ասիոք. Բ, յամին 81ա։
3 Ճառ Բ, ի Թուղթն առ 270։

սքն ուտելոյ, վասն զգեհելոյ որպէս զայլս, վասն զծառայից Հոգալոյ, և վասն Ջօրուվ չըրՋելոյ։ Ա՛մէն իրի Ա՛միհանոս Ա՛րկեղիանոս այր հեթանոս, Թշնամի քրիստոնէութեան, յայտ առնելով որ ինչ արտաքին խաիր էր անդ ուրեմն ի վախձան չորրորդի դարուս ընդ պապն և ընդ եպիսկոպոսունս գաւառաց, որպէս զարմանալի ինչ յառաջ բերէ զի հայրապետ մայրաքաղաքին Հռովմայ կառս ունէր յայցելութիւն կողմանց կողմանց մեծի ընդարձակ քաղաքին, և հանդերձ վայելուչ առ ի զգենուլ և սեղան պատրաստեալ յընդունելութիւն աւագաց ինքնակալութեանն։ Ա՛ւ Թէպէտ ոչ ինչ ընդհատ խօսի սուրբն Վրիգոր Ա՛ազիանզու [2], արժանահաւատն քան զԱ՛մհիանոս, և զեպիսկոպոսաց մեծամեծ քաղաքաց, բայց խոստովանի և ինքն Ա՛մհիանոս՝ զի գտանէին դեռ ևս ի գաւառս գաւառս եպիսկոպոսունք գովելիք առաջի Ա՛ստուծոյ և մարդկան չափաւորութեամբն իւրեանց ի կեանսն, և աղքատութեամբն ի զգեստս, և պարկեշտութեամբ ի դէմս։ Ա՛ւ սուրբն Հերոնիմոս [3] սուղ ինչ գնահ՝ կոչէ զքահանայսն պետն Ա՛նտիոքայ մեծահարուստ վասն աղքատութեանն։ Ա՛ւ փոքրն Վիհնեսիոս որ եկաց ի յաջորդ դարու՝ վկայէ զԱ՛ւեսիոսէ քա-

1 Գիրք Ի՛Ե, գլ. Ը։ 3 Ա՛ւ Դեմետրիադ. Ը։
2 Ճառ Ի, Լ։

Հանապատեսէ աղքատացեալ առ ՚ի զայլս մեծացուցանելոյ։

ՅՕԻՒԻՐՆ ՆՕՔՆԵՒՏԱՄՆԵՐՈՑ

Փարթամութիւնք եկեղեցեաց։

Օ՚ի թէպէտ և մեծութիւնք բազում էին եկեղեցեաց՝ պատրաստեալք նոցա ընդ նախկին արգասիս ազատութենէ կրօնից, բայց սուրբք եպիսկոպոսունքն կամակար զաղքատութիւն յանձն առնուին։ Պ՚ժուարահաւատ արդեօք առաջիկայքս թուեսցին իրք զոր զմեծագանձ հարստութենէ եկեղեցեաց ասելոց եմ, այլ անժխտելիք են։ Պատմութիւնք վարուց Համօսրէն քահանայապետաց, սկսեալ ՚ի սրբոյն Սեղբեստրոսէ ՚ի չորրորդ դարէ անտի մինչև ցիններորդ դար, լի են նուիրօք զոր արարին եկեղեցեաց Հռովմայ նոքինքեանքահանայապետքն և կայսերք, և արք սուսկականք։ Այս էին ընծայքն սպասք և եղեալ ոսկեղէնք և արծաթեղէնք, այլև տունք մեծամեծք կառուցեալք ՚ի Հռովմ, և կալուածք անդաստանաց՝ ոչ յայտալացուոց աշխարհին միայն, այլև ՚ի մարզս ինքնակալութեանն։ Ըստ լծել յիշատակել զընծայսն յաւուրս Սեղբեստրոսի նուիրեալ, զոր յառաջ բերէ Սնաստաս, որ թերևս սխալէ կոստան-

դիանոսի մեծին Համաբելով՝ զոր այլ ոք արդեաք յինքնակալից, և թերևս Կոստանդին Պոգոնատոն, կամ որդին Հռոմանոս ընծայ արարին. այլ ոչ ոք մուացանին Համառեսցի զմանրապատումն անտնորա. զի յորում և ժամանակի նուիրեալ էցեն ընծայքն, զՀռոմէին եկեղեցեացյայտ առնեն: Զոր ահա յառաջ մատուցեալ Կոստատոսյ ստորագրէ որ ինչ դեռ ևս կային առ իւրովք ժամանակօք: Ի կոստանդեան կամ՝ի լատերանեան եկեղեցւոջ անդ տապանակ արծաթի երկու հազար քսան և հինգ լտերց, և առաջի նորա պատկեր փրկչին բազմաւալ յաթոռ բարձրութեան հինգ ոտնաչափ, կշիռ նորա հարիւր և քսան լիտր, և երկոտասան առաքեալք առ նովաւ, բարձրութիւն միոյ միոյ՝ի նոցանէ հինգ ոտնաչափ, և կշիռ ինիսուն լիտր, հանդերձ պսակօքն որ՝ի գլուխս նոցա՝յարծաթոյ զտոյ: Յետ կուսէ նոցա կայր և այլ պատկեր փրկչին, բարձրութիւն նորա հինգ ոտնաչափ, և կշիռ՝ի հարիւր քառասուն լտերց. և հրեշտակք չորք արծաթիք՝ իւրաքանչիւր հինգ ոտնաչափ, և կշիռ միոյ միոյ՝ի նոցանէ հարիւր և հնգետասան լիտր, յեռեալք ականիք պատուականաւնօք: Ոտող զբոլորեսին պսակն յոսկւոյ սրբոյ, կամ զբոլորակս աշտանակակալս զարդարեալս քսան գլխովք, որոց մէն մի կշռեր հնգետասան լիտր. Թող և զեօթանեսին սեղանին ար-

ծաթի՝ իբրաքանչիւր երկերիւր լտերց, և զեօթն
մաղմայս յոսկւոյ՝ որոց մէն մի կշռէր երեսուն
լտոր. և զսկիհան ոսկեղէնս քառասուն, որոց էր
լտոր մի կշիռ իբրաքանչիւր, և արծաթիս հինգ
հարիւր, որ կշռէին իբրաքանչիւր լտերս եր-
կուս, և զհարիւր և վաթսուն աշտանակն ար-
ծաթոյ՝ յորոց քառասուն և հինգ կշռէին լը-
տերս երեսուն, այլք քսան, և զայլ ազգի ազ-
գի սպասս։

Ի՝ւազան մկրտարանին էր կճեայ՝ի պորփիւ-
րոյ՝ համակ արծաթ ապատ, որոյ կշիռ արծա-
թոյն հասանէր յերեք հազար և ութ լտոր. էր
անդ և կանթեղ ոսկի լտերց երեսնից, յորում
այրէր բաղսամին երկերիւր լիտր. դարձեալ և
գառն արծաթի երեսուն լտերց, յորմէ հոսէր
ջուր. և պատկեր փրկչին յարծաթոյ զոյն՝
հինգ ոտնաչափ, և կշիռ նորա հարիւր և եօ-
թանասուն լտոր. և՝ի ձախմէ նորա պատկեր
սրբոյն Յովհաննու Ա՝կրտչի արծաթաձոյլ հա-
րիւր լտերց, և եղջերուք եօթն արծաթիք ջրա-
հոսք՝ որոց մէն մի կշռէր ութ հարիւր լտոր, և
բուրվառ յոսկւոյ սրբոյ՝ որ կշռէր լտերս տասն,
յեռեալ քառասուն և երկու ակամբք պա-
տուականօք։ Ամրով գումար ամենայն ոսկւոյն
զոր ընծայեաց եկեղեցւոյն և մկրտարանին՝
գտանին վեցհարիւր եօթանասուն և ութ լիտր
ոսկւոյ, և գումար արծաթոյն ինննհատասն հա-
զար վեցհարիւր եօթանասուն և երեք լիտր

արծաթոյ։ Եւ քանզի լիտրն հռովմէական հաւասար էր երկոտասան ունկեաց, գտանին հազար եօթնեւտասան մարկայք ոսկւոյ, չափ գաղղիական. և քսան և ինն հազար հինգհարիւր մարկայք արծաթոյ, որ գումարին աւելի քան զհնգետասան հազար լիբրայս, առանց յարգի կերտուածոյն, համարեալ զմարկայ ոսկւոյն չորեքհարիւր և յիսուն լիբրայ, և զմարկայ արծաթոյն երեսուն լիբրայ։ Եւ աւելագոյն ևս մատոյց նուէրս Կոստանդիանոս նմին եկեղեցւոյ և միրտարանին տունս և անդաստանս, որոց տարեկան հասք էին երեքտասան հազար ինհարիւր երեսուն և չորք դրամք ոսկիք, որ գտանին գրեթէ հաւասար հարիւր և հնգետասան հազար գաղղիական լիբրայից ամի ամի, առեալ զդրամն ոսկի հաւասար ութ լիբրայից և հինգ փողոց գաղղիականաց ըստ հաշուին զոր առնէ Պլան 'ի պատմական Ճառն զդրամոց գաղղիականաց։ Եւ այս ամենայն էին ինչք լատերանեան եկեղեցւոյն միայնոյ։

Եւ աստ ևս եօթն եկեղեցիս շինեաց Կոստանդիանոս 'ի Հռովմ. զսրբոց առաքելոցն զՊետրոսի և զՊօղոսի, զսրբոյ Խաչին Յերուսաղէմի, զսրբուհւոյն Ագնեսի, զսրբոյն Լաւրենտիոսի, զսրբոյն Պետրոսի, և զսրբոյն Մարկեղոսի. դարձեալ ընծայս մեծամեծս արար և եկեղեցւոյն զոր կանգնեաց սուրբն Պեղեստրոս։ Եւ շինել և եկեղեցի մի Յոստիա քաղաք, և միւս

այլ Յ՝ըլանան, ՚ի Կապուա և ՚ի Ղեկապոլիս։ Կլիմ ոսկւոյ սպասուց եկեղեցեացս էին հազար երեքարիւր յիսուն և ինն մարկաք, իսկ արծաթոյն երկոտասան հազար չորեքհարիւր երեսուն և եօթն մարկաք, որ առնեն առաւել քան զինհարիւր և ութսուն հազար լիրայս, թող զյարդ կերտուածոյն։ Ցարեւկան հասք նոցա էին եօթնեւտասան հազար եօթնհարիւր եօթնեւտասան դրամք ոսկիք, որ գումարին աւելի քան զչորեքտասան բիւրս դաղղիական լիրայից։ Ի վերայ այսոցիկ և խունկս անուշից պէսպէս ամի ամի առաքէին Ղգիպտոս և նահանգք արեւելից, որոց գինք էին աւելի քան զերկուս բիւրս լիրայից, հաշիւ արարեալ ըստ այժմու արժէից որ նուազ չոյժ արժէն քան յայնժամ։ Ղկեղեցւոյ սրբոյն Պետրոսի որ՚ի Հռովմ՝ էին յ՝նտիոք տունք և անդաստանք չուրջանակի. էին նորա և ՚ի Տարսոն Կիլիկիոյ և յ՝Ալեքսանդրիա և ընդ բնաւ Ղգիպտոս, ևս և զկողմանեք Ղփրատայ ստացուածք։ Ղւ մասն ինչ ՚ի կալուածոց աստի հատուցանէր նմա ամի ամի այսչափ ինչ իւղ նարդեան, բալսամոն, շեր, կինամոն, քրքում, և այլ ազգի ազգի խունկս անուշահոտս ծխանելիս՝ և ՚ի վառուիմն լապտերաց։

Յաւել և զեկեղեցիսն զոր դարձեալ նա ինքն Կոստանդիանոս և մայր նորա սրբուհին Հեղինէ եւուն կառուցանել Ղերուսաղէմ, ՚ի

Ալեքսանդրիա, և ընդ ամենայն երկիրն սուրբ. և դարձեալ զերկոտասան առաքելոցն, և զայլ եկեղեցիս զորս կանգնեացն նա՛ի Կիւզանդիոն. քանզի նորա ձեռակերտ էին ամենայն եկեղեցիքն որ անդ և որ՛ի Նիկոմիդիա և Նոտիոք արժանի մեծի քաղաքին՝։ Իսկ զինչ ասել իցէ զչքնաղութեառատ տրոցն առ ամենայն եկեղեցիս որ՛ի սահմանս ինքնակալութեան իւրոյ. դարձեալ և զյաջորդացն նորա, և զկուսակալսն և զաւագաց ամենեցունց որք հետ ընդ հետէ գային՛ի քրիստոնէութիւն։ Այլ զինչ դարձեալ զնուիրաց տիկնոջն մեծուհեաց, որք կամակար հրաժարէին՛ի մեծութենէ իւրեանց՛ի սէր քրիստոսական աղքատութեան, որպէս սրբուհին Պաւլա և սրբուհին Եւստոխիա՛ի Հռոմ, և սրբուհին Ոլիմպիադա՛ի Կոստանդնուպոլիս, և այլք բազումք։ Յաւել՛ի սոսին և զնուէրս ընծայից Հայրապետաց, որք մի քան զմի զանահնար լինէին ձոխացուցանել և զարդարել զեկեղեցիս իւրաքանչիւր, և ասպա զմնաւ ած քանի՞ ինչ հարստութիւնք էին եկեղեցեաց քաղաքացն մեծամեծաց՝ մայրաքաղաքաց գաւառացն այնոցիկ, որ ընդ այժմու պետութեանս հաւասարէին։

Վասն այնորիկ հայեցեալ զարմանամբ ընդ հարստութեն եկեղեցւոյն Ալեքսանդրիոյ յա-

1 Նշանակ. վարք Կոստանդ. Գ. ԻԶ, ԼԸ։ Ե. ՃԸ, ՃԹ։ ա. Պատմ. Գ. ԽԸ։

ւուբս սրբոյն Յովհաննու ողորմածի՝ որ երկիւղածութեամբ մեծաւ տքներ ՚ի մատակարարութիւն բազմագանձ եկամտիցն։ Յուգաձեալ ՚ի թղթոյ անտի սրբոյն Կրիգորի ՚ի միտ առնուսմք զգաստութիւնն զոր հասուցանէին նմա անդաստանք եկեղեցւոյն Հռոմայ յայլ և այլ աշխարհս, ՚ի Սիկիլիա, ՚ի Սպանիա, ՚ի Կաղղիա, և իւրամբ գերեաց որ գործէին զնոսա, զի մի ինչ պակասեսցէ նոցա ՚ի կարևորաց, և զի ՚ի հասից անտի հայթայթեսցին պէտք աղքատաց աշխարհին։ Յոչ մի ինչ յայսցանէ գժուարարհաւատ թուեսցի որոց սակաւիկ մի տեղեակք իցեն մեծութեան և գանձուց ինքնակալացն Հռոմայեցւոց, առ որովք ոչ մեծ ինչ համարէր և սոսկական նաց իսկ թողուլ կտակաւ ՚ի ժառանգութիւն բարեկամաց իւրեանց գիւղս և աւանս բնակչօքն հանդերձ։ Յե երկրորդ անգամ; բազում ինչք էին սահմանեալ ՚ի պաշտօն և ՚ի շուք կրոց, և բազում դրամք ծախէին ամի ամի վասն զոհից և խաղուց և այլոց հանդիսից սուտ կրօնից. նմին իւրմ գիւրին եղև մեծացուցանել զեկեղեցիս յընչիցն որք վասնէին յընդունայնութիւնն յայնոսիկ։ Նայց աւաւելագոյնք ՚ի գանձուց որ ընծայեցան եկեղեցեաց՝ էին ստացուածք քրիստոնէից յափշտակեալք ՚ի ժամանակս հալածանաց [2]։

1 Վարք Գրիգ. ՚ի Յովհ. ասրկ. Բ, ծԸ։

2 Նշանաբ. Վարք Կոստանդ. Բ. ՀԸ, ւԸ։

Ա.յս ամենայն Հոխուբ իւնք եկեղեցեաց ընդ իշխանութեամբ եպիսկոպոսաց էին Համօրէն. բայց Հայրապետքն սուրբք՝ի ժամանակիս յայն՝ միկ ոչ միայն չնդային ընդ այն, այլ և գանգատէին և ըղձանային ժամանակացն յորս՝ի տրոց Հաստատելոցն ընուին զպէտս աղքատացն և զլինակաւորաց և զեկեղեցւոյն։ Նաղում անգամ ջանացաւ սուրբն ( )գոստինոս դարձուցանել՝ի ժողովուրդն զկալուածս եկեղեցւոյն իւրոյ, այլ անհնար եղև ժողովրդեան յանձն առնուլ զայն՝։ Յանդիմանէ զքրիստոնեայս մեծն Յովհան ոսկեբերան՝ զի առ ընչասիրութիւն և անգթութեան իւրեանց բռնադատեցան եպիսկոպոսունք Հասս մշանջենաւորս սահմանել եկեղեցեաց, զի մի մեռանիցին՝ի սովոյ կուսանք նոցա և այրիք և աղքատք ակնկալութեամբ տրոց Հաստատելոց՝ որպէս յառաջին ժամանակս։ "Յորմէ յառաջ գան, ,, ասէ, երկու ինչ անպատեհք. ձեզ յանպիտա„նութիւն Հատանել և քահանայից Աստուծոյ ,, պատուհաս լիցի որ ոչ՝ի Հաճ է նոցա ,,։ Եւ դարձեալ ասէ. "Առաւել ծանր բեռն և Հոգ՝ի ,, վերայ կայ եպիսկոպոսաց քան վերակացուաց ,, և անտեսաց և վինակակալաց. փոխանակ զի ,, ոչ այլ ինչ պարտ էր նոցա զմտաւ ածել, բայց

[1] ժող. Ասիոք. յատի 341։ [2] Ոսկեբ. ի Մատթ. Հատ. Թումասին. Հրատ. մատն Ա, Չե։ դիք Գ, ժե։

„ զիրկուԹի՛ հոգւոց ձերոց, զօր աւհնային Ճրգ-
„նին նոքա յիւրա՝ յոր պարապել արժան էր Հալ-
„կասպահանջաց և գանձապետաց„: Լ՛ւ յաւե-
լու դարձեալ. “ՏմարդուԹի՛ ձեր ծաղր կացու-
„ցանէ զմեզ, զի Թողեալ զաղօԹս, զքարոզս և
„զայլ սուրբ պաշտամունս, կագեմք ընդ վաՃա-
„ռականս գինւոյ, ցորենոյ և այլոց արմտեաց.
„յորմէ և այնպիսի անուամբք երբեմն յորջոր-
„ջիմք, որ աշխարհականաց՝ի դէպ և պատա-
„հելն„: Վակայն և յաշխարհական հոգւոց աս-
տի քաջ գիտացին եպիսկոպոսունքն այնոքիկ
զերծուցանել զանձինս՝ կայսրեցեալ՝ի վերայնո-
ցա սարկաւագունս, և յետ ժամանակաց առան-
ձին գործակալս: Ո՛ւրն զի և՝ի բարեպաշտու-
Թեան վաստակն կամեցեալ ԹԷԹևաբեռն և ս
լինել, խնդրեաւ ընկալան՝ի կայսերաց կարգել
՝ի քաղաքս իւրաքանչիւր վերակացուս աղքա-
տաց՝ի պաշտպանել և՝ի խնամել զնոսա սիրո-
ղաբար՝:

1 ԺՈՂ. ԿԱՐԹԱՓ. Ե. ԿԱՆ. ԹՒ, յամի 398, և Բարոն. անդ:

ՅՕԻՒՈՒՆՅ ՈՒԹԵՏԱՍՆԵՐՈՐԴ

ՅԿԿԼԱՆՈՑՔ։

ԱՀ սուղ ինչ մասն ՚ի ստացուածոց եկեղեցեաց ՚ի կիր առին ՚ի կանգնումն և ՚ի գործման խնամոյ անկեալոցաց, որոց յայնժամ սկիզբն եղև հիմնադրութեան։ Օ՛ի թէպէտ և քաղաքականութիւն Յունաց և Հռոմոց սկսաներ հալածել ՚ի բաց զգատարկութիւն, և ըզմուրացիկս կարգս ՚ի գործ, այլ ոչ մի ինչ օրէնք էին նոցա ՚ի խնամս ողորմելեաց՝ որոց անմարթ էր իւիք սպասաւորել աշխարհին. լաւ ևս համարէին զմահ նոցա՝ քան զկեալ յուսկեծս և չարչարել. մանաւանդ զի և որք ՚ի նոցանէ սրտապնդէին՝ անձին առնէր։ Այլ քրիստոնեայք, որ ՚ի վեր քան զամենայն զիրկութիւն հոգւոց դիտէին, ոչ զոք առնէին անտես, և զտկարս և զողորմելիս քան զամենեսին առաւելագունի փութոյ և խնամոյ արժանի համարէին. վասն որոյ ժողովէին ոչմիայն զաղքատս իւրեանց, այլ և զհեթանոսս։ Այլ կայէ զայսմանէ ՚ի նախատինս իւր ուրացողն Յուլիանոս, և պատուէր տայ Արշակայ քրմապետին Վաղատիոյ կանգնել անկեալոցս իւրև զնոսա, և գանձել դրամս վասն աղքատաց։ Օ՛պատճառս աձման քրիստոնէութեան երից

այսոցիկ իրաց ընծայէ նա. հիւրասիրութեան նոցա, և փութոյ ի թաղումն մեռելոց, և զգաստութեան վարուց նոցա ։

Արկնակի օգնէին աղքատաց. նախ դրամովք, ի նոսա թողուլ զկոգ բնակութեանն ուր և գտանէր նոցա տեղի [2] ։ Յամենայն թաղս Հռոմայ սահմանեալ էր տեղի՝ որ սարկաւագանոցն կոչէր, ուր էր արկղ դրամոց ողորմութեան յանձնեալ ի մի ոք ի սարկաւագաց, որ առեալ անտի օրհնսի պիտոյն էր, և ապա տայր զհամար ։ Երկրորդ ազգ դարմանելոյ զաղքատսն, և օգտակարագոյն ևս նոցա, էր տուն և տեղի տալ նոցա բնակութեան, և կերակրել զնոսա միաբան ի միասին [3] ։ Այս վասն այնորիկ երբէք ազատութիւն եղև եկեղեցւոյ, անդէն վաղվաղակի կառուցին տունս և բնակարանս ի հանգուցանել զտառապեալս, զորս զամենեսին արդ անկեալնոցս անուանեմք, որոց ի հնումն այլ և այլ անուանք տային ի նմանոց ըստ այլ և այլ ազգի տառապելոց ։

Օ՛ի զտունս յորս մնացանէին զընկեցիկ տանդեայս կամ զանտերունչս՝ երախայանոցս անուանէին, և ուր զորբս՝ որբանոց ։ Այսպէս և ուր զհիւանդս դարմանէին՝ հիւանդանոց կոչէին, և ուր զհիւրս ժողովէին՝ հիւրա-

1 Յունարէն. Թուղթ խն։ 3 Գրիգ. գիրք թ, Թուղթ
2 Բառն. ի վկայաբ. ը Ի՛։ Կասիան. ժԸ. է։ ԻԱ։ Օգոստ ։

նոց, և ուր զծերսն՝ ծերանոց. իսկ աղքատանոց անուն հասարակաց էր ամենայն տեղեաց՝ ուր ժողովեալ կային աղքատք։ Յետոյառաջ իսկ ժամանակաւ նախ քան զանուանակոչութիւնս զայսոսիկ՝ գոյին բնակարանք տառապելոց, այլ ի հաստատել խաղաղութիւն եկեղեցւոյ կանգնեցան յամենայն երևելի քաղաքս։ Յորմանէն էր տեսչութիւն տեղւոյն ի միում յերիցանց, որպէս յԱղեքսանդրիա յաւուրս պատրիարգութեան Թեան Աղոփիլեայ ի սուրբն Խսիդորոս, և ի Յոսանդնուպօլիս ի սուրբն Օռիկոս, և ապա ի սուրբն Ամիխան։ Այնմ և ի սոսկացեալ կանաց ոմանք որ յընչից իւրեանց ընծայէին ըստ անկեանցոյց. որպէս սուրբն Պամբոս ի Պորտով, և սուրբն Կաղիկանոս յԱսիա։ Այս պատրիկ և հիւպատ կացեալ էր. նմին իբրև յամենայն կողմանց ընծանային զարմացմամբ տեսանել զայնպիսի ոք այր տոհմիկ, որ փառս և պատիւ յաղթանակի ընկալեալ, և բարեկամ եղեալ արքայի, խոնարհէր ի լուանալ զոտս աղքատաց, ի պաշտել զնոսա ի սեղանի, և ի ծառայել հիւանդաց յամենայն պետս նոցա[1]։

Յոր ոչ իմայեին ինչ ի ծախս հայրապետքն սուրբք վասն սոցին իրաց։ Կարձեալ ի ծախսպէս հոգւոյին ի Թաղուհին աղքատաց, և ի

[1] Գիրք Բ. յոյ. սրբ. Եկեղ. Բարձն. ի վկայաբ. ֆ գեկտ. Օգոստին. ի Յովհ. ճառ Ղ։ և ի՛ յոյնի. և ի՛ յայնիս։

փրկանս գերելոց ՚ի բարբարոսաց, որ յաձախ իսկ պատահէր զկնի կործանելոյ կայսերութեանն։ Ոմանսոցին վաճառէին նոքա և զսուրբ սպասս եկեղեցւոյ. այնչափ մեծ համարէին զերկուս ձայսոսիկ գործս ողորմութեան։ Օհ՛ չաչակաւորն ածից օրինակ. սուրբն Լեքսուպերոս եպիսկոպոս Տոլովայ յայն աղքատութիւն եհաս վասն այսր, մինչև զհաղորդութիւնն սուրբ տանել ՚ի սպասի, և զսուրբ արիւնն ՚ի բաժակ ապակեայ։ Լե սուրբն Պաւլինոս եպիսկոպոս ՚Նոլայ ՚յետ վաճառելոյ զամենայն, ետ ՚ի տարկութիւնն և զանձն վասն ազատելոյ զորդի այրւոյ միոջ։ Լյսպէս անբաւ գանձք եկեղեցեաց և ոսկի և արծաթի զարդք նոցա օրպէս յաւանդի լինի կալին անդէն, զի յարկածս հասարակաց և ՚ի ժանտախտի և ՚ի սովի յօգնութիւն հասանիցեն։ Լվնասն ինչ ծախեր ՚ի խնամս կենդանի տաճարացդ Հոգւոյն սրբոյ։ Նայնպէս և զգերիս մատնեալս ՚ի ծառայութիւն ՚ի սահմանս ինքնակալութեան գթաւթաւ առնելին, մանաւանդ զքրիստոնեայս ստրուկս հեթանոսաց կամ Հրէից։

1 Հերն. առ Հռուսս. ։ և վկայաբ. ՚ի սեպտ. իբ։ Գրիգ. Ցլամախաս։ 2 Ակերոս. Հերն. առ Նեապո։ Յովհ. սարկ. Վարք սրբ. Գրիգ. Դ. խե։

ՅՕԳՈՒՄՆՕ ԻՆՆԱՒՏՄՆԵՐՈՐԴ

Մենաստանք։

ՕՂՅՈՒ ժամանակաք իբրև ազատութիւն ընդհէր եկեղեցւոյ՝ հիմնեցին և մենաստանք։ Այսպէսին անդստին ի ժամանակաց հալածանաց բազումք ի քրիստոնէից փախուցեալ կային ի լերինս, մանաւանդ ի շրջակայ վայրս Եգիպտոսի, որպէս սուրբն Պօղոս որ առաջինն համարի յանապատականս։ Իսկ սուրբն Անտոն՝ յետ առ ժամանակ ի մերձ ի հայրենիսն Ձգնազգեաց կեանս վարելոյ՝ դիմէր յանապատ, զի համարձակագոյնս և ազատութեամբ ևս ի մեռելութիւն վարուց կրթեսցէ զանձն՝ հեռացեալ ի փորձութեանց որ ի մարդկանէ մարթէր հասանել՝։ Այս զառաջինն ժողովէր աշակերտս յանապատի անդ, և սահմանէր միաբանակեաց կեանս. և յայնմ հետէ ոչ ևս այլ Ձգնաւորս էր կոչել զնոսա, թէպէտ և այնպիսի էին կեանք նոցա, այլ միաձուռնս կամ միայնակեացս։ Իսկ որ միաբան ի միասին կային՝ կոչէին վանականք կամ միաբանակեացք. և անապատականք այնոքիկ կոչէին՝ որ յետ բազում ամն կալոյ ի միաբանակեցից վանս և ուսանէլոյ յաղթել ցանկու-

՝ Հերոն. Վաթք սրբ. Պօղ. Վաթք սրբ. Անտ։

թեանցն, մեկուսացեալ գադարնէին յանձին յամային վայրս։ Սակայն և միաբանակեցեալ կեանք ոչ ինչ ընդհատ եղեն 'ի միաձնակեցացն. զի բաց 'ի միաբանից ոչ զոք այլ տեսանէին, զատուցեալք բազմութեամ Հանապարհաւ 'ի շինից և 'ի քաղաքաց, և վարեալք յանձին յանջրդի վայրս, ուր զջուր անգամ հարկ էր 'ի հեռուստ ածել։ Ի ժամ աղօթից եւթ ընդ երեկս, և գիշերային տեսանէին զմիմեանս, անցուցանելով զօրն ողջոյն 'ի խոկումնս իւրեանց, յաշխատութիւնս, միաձնակ կամ ընկերաւ միով, հանապազ 'ի լուութեան։ Սոյն զի և սենեակք նոցա հեռի էին յիրերաց բազում միջոցաւ. զի չափակասէր տեղի չընդարձակ յամային անապատն։

Պաւղէն սուրբքս այսոքիկ, Պետրոս, Իլարիոն, Պախոմիոս և հետեւողք նոցին, ոչ նուրակրօն իմն վարուց 'ի մոլ եղեալ էին առաջնորդ լինել, կամ առաքինագոյն քան զՀարսն Հանդիսանալ, այլ զաւանդեալն եւթ 'ի սուրբ աւետարանէն անվթար պահել ըղձանալին, տեսեալ զի օր ըստ օրէ երթայր և իրթնանայր։ Հանապազ առաջի ածէին զվարս նախնեաց իւրեանց Հղնազգեցից, որպէս յՀոգիստոս՝ զաշակերտաց սրբոյն Պարիոսի, որք ըստ աւանդելոյ Պասիանոսի՝ արգելեալ կային 'ի տունս տունս զկողմամբք Պեքսանդրիոյ, պարապեալք յաղօթս, յընթերցմունս

սուրբ գրոց և 'ի ձեռագործս, մի անգամ և եթ առնլով կերակուր 'ի գիշերի ' : Որինակ ան-ձանց ունէին զնախնի հաւատացեալս եկե-ղեցւոյն Հրուսաղէմացւոց, մանաւանդ թէ զառաքեալսն և զմարգարէս : Ել 'ի խնդիր էին զարմանալի երևել յայլ ազգս նորանշան կենօք, այլ կեալ իբրև զչմարիտ քրիստո-նեայս [2] : Այս զսոյն զայս ուսուցանեն ամե-նայն ուրեք կանոնք սրբոյն Յարսղի, որ հա-մառօտութիւն իմն էն իրատուց աւետարանին զոր առաջի առնէ առ հասարակ ամենեցուն : Որինակ իմն. աւանդէ նա ուրեք վասն հան-դերձից՝ թէ պարտ է քրիստոնէի զգենուլ վասն պատշաճից, և առ պահպանութեան 'ի ցրտոյ [3] և 'ի ջեռակարութենէ օդոյ, բայց առանց աւելորդաց ըստ կարի, բաւական հա-մարեալ զմիակ հանդերձ 'ի ակտս տուընջեան և գիշերոյ. որ հնարաւոր իսկ էր 'ի կողմանն ուր բնակէը սուրբն : Այսուն ինչ իրք էն 'ի կա-նոնագիրսն՝ որ հրաժարելոց և եթ յաչխարհէ պատշաճիցին :

Այս միայն էր նոցա առանձինն, զի անկին և անստացուած կեանս վարէին, հրաժարեալք յընկերակցութենէ մարդկան, և հաւատացե-լոց իսկ, և յազգականաց : Զայլ ամենայն իրս էին հանգոյն ընտրելոց աշխարհականաց, ձե-

1 Կասիան. ԺԱ. Ե : առ Հռուսիկ :
2 Հերոն. առ Պաւլին. և 3 Բարսղ. կան. Բ. իբ :

ոջք իւրեանց Հայթայթելով զպէտսն լռու-
թեամբ, և ի դիմի Հարկանելով ախտից մի
ըստ միոջէ. զի մարտուցեալք ըստ օրինի, որ-
պէս ասէ Պօղոս [1], ստասցին զսրբութիւնն սրտի
առ ի տեսանել զՅստուած [2]: Այս եր հիմն
Հաստատութեան ամենայն գործոց նոցա:
Պատմէ մեծն Յովհան ոսկեբերան զիրս զայս
արժանի յիշատակաց զմանկանէ միոջէ [3], զոր
կամելով մօրն առնել քաջ քրիստոնեայ, զա-
ռաքինի ոմն միանձն կացոյց նմա դաստիարակ.
իսկ այրն սուրբ առ ի կրթել զնա ի բարե-
պաշտութիւն՝ այլ ինչ ոչ արար, բայց հրա-
հանգել զնա ի ծածուկ յամենայն վարժս կրօ-
նաւորական վարուց, ոչ ինչ խոիր ցուցանելով
արտաքոյ ի հասարակաց կենաց:

Պահէին անխափան առ ի սահմանել զան-
ժուժկալութիւն, և ձնդել զմարմին ընդդէմ փոր-
ձութեանց, և առ աղատագոյն և ևս պատ-
բաստագոյն յարդարել զմիտսն առ ի ջերմեռայ-
ինն խորհելոյ: Այլ պահէին հանդերձ
այնու զգուշութեամբ [4], զի չպակասէր նոցա
զօրութիւն բաւական ի վաստակել զոր հա-
նապազ, և ի ննջել սահաւ առանց խանգա-
րելոյ զառողջութիւն, որպէս զի կեալ նոցա
զամն բազումս առանց հիւանդանալոյ: Պատ-
մութիւն գրոց Հարանց վարուց յիշատակէ

1 Ք Տիմ. Բ. 5:
2 Մատթ. Ե. 8:
3 Ուս Հաւատ. Հայր:
4 Կասիան. Ե:

զբաղումն ի նոցանէ կեցեալ զամն ութսուն և հինսուն, և զբաղումն ևս հարիւրեմեան վախճանեալ և աւելի ևս ամաց. մանաւանդ զԵգիպտացի Հարս՝ որ հանճարեղագոյնք յամենեցունց վկայեալ էին։ Որոց բազում իմաստութեամբ կշռեալ զամենայն և երկար փորձովք սահմանեալ էին չերկարել զպահս քան զմի օր, և ձաշել զօր հանապազ զինի ինն ներսղդ ժամուն՝ առնելով երկու փոքրիկ պաքսիմասս որ կշռէին վեց ունկի, և ջուր լոկ։

Ակնհայտութիւն զբաղացուցանէր զնոսա ի մարս ընդդէմ խորհրդոց զաղքութեան և ագահութեան, ընկենլով ըստ կարի ի մտաց զլիչատակս անպատիւ որոց որ հրապուրեն զնոսա։ Կառուցին ընդ ագահութեան վերջին աղքատութեամբ և ձշմարտապէս անինչ և անստացուած կենօք, բաշխելով կարօտելոց զօր հանապազ որ ինչ յաւելոյր ի վաստակոց իւրեանց. և այնչափ բազում մեծերին՝ ըստ պատմելոց սրբոյն Գրոստինոսի՝ ողորմութիւնք յայտացանէ, մինչև ակաղձեալ ընալ նոքօք նաւաց։ Իսկ ընդդէմ բարկութեան մարտ գնային լռութեամբ, և ընկերակցութեամբ՝ յորում հարկ էր նոցա զիմանալ բեռն բառնալ։ Ցծուլութիւն հալածէին անդադար աշխատութիւնն, զարմանալի աղօթիւք և սաղմոսերգութեամբ, և զփառասիրութիւն և զամբար-

1 Կասիան. Ա. ԺԹ։ 2 Յղ. եկեղ. Ա. ԺՀ։

տաւանութիւն՝ հնազանդութեամբ և մեռեալ լութեամբ [1]։

Այլ միանձնուհք որ վաստակէին յանդաստանս, կէսք զխրեանցն մշակելով գերկիր, և կէսք վարձկանելով այլոց որպէս զայլ մշակս ի հունձս և ի կութս։ Այսպէս թերևս սկիզբն կալաւ բաժանութեան ի տասնեակս, որոց միւմ միւմ տասնապետ կայր [2] մի ոք յերիցագունից. քանզի այսպէս բաժանէին առնախինս ստրուկք երկրագործք։ Այլ կատարելոցն ի միանձանց կարի իմն զբաղումն թուէին այսպիսի աշխատութիւնք. վասն որոյ մեկուսացեալ յիւրաքանչիւր սենեակս՝ հիւսէին սպիրիթս ի հինունոյ, կամ կողովս, և կամ այլ ինչ հանգոյն ձեռագործս առնելով [3], որ ջերմասփաներ զնոսա ի խոկմանէ ի տուրբ գիրս, կամ յառ Այսուաճ ունելոյ հանապազ զմիտս սըն։ Համառօտ ասել, զանպիսին ամենեքեան պարապել ի գործ ինչ, կամ ի գաղափարել զգիրս, և համարէին հերետիկոսս զԱրեւտեանս (այս է զաղօթականս) կամ զԱեսսաղեանս, որք շատ ասէին զաղօթս փոխան աշխատութեանց [4]։

Այսպիսի աղքատին կեանք նոցա խիստ և նուաստ ի վերին երեսս՝ արհամարհ առնէր

1 Ոսկէբ. Ճառ. հԲ, ի վերջին։ Մատթ.։
2 Կանոնք սրբոյն Բենեդ. Ժբ. թիւ։ Կոյտմիլլա. Ա, գլ.
3 Կասիան. թգ։
4 Եպիփ. յղ. հերձ. ձ։

զնոսա յաչս զգայասէր մարդկանն, և ոմանց
ևս ՚ի քրիստոնէից. նմին իբրև խաղ առնէին
զնոքօք, և ոմանք հարստահարէին իսկ զնոսա
և ծեծէին, և արտաքս քարշեալ ՚ի սենեկացն
յատեան ձգէին զնոսա[1]. այլ սովիմբք մեծա-
պես ևս փայլեր հեղուԹիւն նոցա և համբե-
րուԹիւն։ Այս առաւել ևս մեծարէին զնոսա
և սիրէին իմաստուՆք առ հասարակ, ոչ միայն
՚ի ժողովրդենէ՝ այլ և յաւագաց. ոչ միայն
յաշխարհականաց՝ այլ և յեպիսկոպոսաց. որպէս
զի քաղցր անգամ ՚ի նոցանէ ընտրել զպայծառագոյնսն սրբու-
Թեամբ և իմաստուԹեամբ ՚ի պաշտօնեայս
եկեղեցւոյ, և յեպիսկոպոսուԹիւն անգամ։
Յայնժամ Թողեալ նոցա զվանս՝ դառնային
յաշխարհ իբրև զայլ վիՀակաւորս։

Այսուհետև Թէ յառաջինն անդ ժամանակս ոչ
ամենայն միանձունք առ հասարակ ուխտիւք
կապէին զանձինս։ Իստ սրբոյն Խարզի[2] լը-
ռելեայն ևեԹէ էր խոստումն նոցա առ կուսա-
կրօնուԹիւն. բայց Ձահոզագոյն գտաւ դնել
նոցա ուխտս յայտնապես, որպէս զի ՚ի դառ-
նալ նոցա յաշխարհական կեանս՝ ընդ ասպաշ-
խարուԹեամբ անկանիցին։ Այնժմ Յովհան
ոսկեբերան գոգցես ՚ի կամն կրօնաւորին ա-
պաստան առնէ[3] զդառնալն յաշխարհ, ՚ի խոր-

[1] Օգոս. յղ. գործ. Պիանձ։ ԺԹ։ Ոսկեբ. յղ. Նաիաս։
[2] Խարզ. առ Ամֆիլոք. [3] Առ Հաւատացեալ Հայր։

հրդակից լինէր ուսմանն՝ զի կրօնաւորացուսցէ զորդի իւր զտասնամեայիւք կամ ՚ի հասանել նորա ՚ի տիս մեղանչելոյ, և Թողեալ անդ զնա ՚ի մենաստանի տասն կամ քսան ամս մինչև ՚ի կատարեալ զարգացումն յառաքինութիւնս։ Այլ ինքն սուրբ Հայրապետան զամս հինգ կացեալ ՚ի մենաստանի, ապա եւ անտի վասն առողջութեան մարմնոյ. բայց ՚ի յանդիմանութեանցն առ Աթոդոր բարեկամ իւր՝ է ՚ի միտ առնուլ զի անգոնեալ էին որք ընդ կրօնաւորական կենաց մերկանային և զառաքինութիւնս առ Թեթևամտութեան իւրեանց կամ առ տաղտկանալոյ, և կամ առ այլ ինչ դարուվեղի պատճառանաց։ Այուբն Գոսոփոնս յայտնապէս ասէ՝, Թէ որք մեկնին ՚ի վանացն՝ հակառակ ուխտի իւրեանց առնեն, և մեղապարտ են զի ոչ կատարեցին զուխտն։ Ընդ ապաշխարութեամբ արկանէր եկեղեցի զայնպիսիսն, այլ չտային ինչ պատիժս արտաքոյ՝ բայց ՚ի նշանակութենէ յեղամոռութեանն։

Սրբութիւն կրօնաւորութեան այնպէս գերազփայլ ցուցաւ, զի ՚ի սուղ ժամանակի լցան արևելեք ոչ միայն կրօնաւորօք այլ և մենաստանօք՝։ Ընդ կանոնաւք եւեթ սրբոյն Պախոմ

1 Գոսոս. ՚ի Սաղմ. ՃԹ, 12, և ՚ի Սաղմ. ԺԵ. 12։ 2 Նակեր. Հառ. ԺԲ. ՚ի թուղթն ա առ Տիմ։ Գոսոս. յղ. սովոր. եկեղ. Ա. կէ։ Բառն. յոբ. կանոն. սրբ. Պախոմ. և թուղթ առ Եւսեբոք։

մեռոսի էին յիսուն հազար միանձունք բնա-
կեալք յայլ և այլ վանս ընդ առաջնորդու-
թեամբ միոյ աբբայի. որք առ ի ծնանիմբել
զսուրբ զատիկն ի մի վայր եկեալ ժողովէին։
Այլ գործ մի դիւրին էր յոյժ յայնժամ կա-
ռուցանել մենաստանս. չատանային կալուածս
և ոչ այլ ինչ, և չգոյր նոցա երկիւղ ի նա-
խանձուէ յաշաղկոտաց։ Այլ հրամանաց պէտք
էին և ոչ օգնականութեան առ ի թողուլ
զամենայն և խուսել յանմարդի լերինս, և
չինել անդ աղքատին խրճիթս փայտակերտ
կամ յեղեգանէ, զոր անպէն իսկ գտանէին,
և բնակել ի նոսա լռութեամբ և աշխատու-
թեամբ առանց ծանրանալոյ ումեք, այլ մա-
նաւանդ շահս բազումս բերելով հասարակաց
վանս առատ ողորմութեանցն զոր առնէին
ըստ ասացելոցս ի վեր անդր։ Այլ այսոքիկ
յառաջին ժամանակս. զի յորժամ թողեալ
կրօնաւորաց զվիայնարանս իւրեանց՝ յիրս աշ-
խարհի և եկեղեցւոյ սկսան ձեռնամուխ լի-
նել, արգել սուրբ ժողովն Քաղկեդոնի չկա-
ռուցանել այնուհետեւ նոր մենաստանս առանց
հարցանելոյ զթեմական եպիսկոպոսն[1]։ Այն-
չափ յաձախեցին մենաստանք, զի և մեծ ի
քաղաքս և ի շէնս սկսան կանգնել. վանն ո-
րոյ և ոչ էր արժան[2] զի արգաւանդագոյնքն

1 Կան. ձ. Գործք ժող. Ե. յամի 535։ 2 Ուրբաս. առ Ալեք. կա-
ւան. ձ։

յաշխարհս՝ Իտալիա, Սիկիլիա և Լուսադա վը-
բեպ եկանէին՝ի բարեացն. բայց և՝ի նոսին
մարգաշատ աշխարհս գիտացին կրօնաւորք
պատկառ կալ միաձնական վարուց, և զգու-
շանալ մնից և եղից մեհենատանին, և լուսնթե։

Որոց մեհենատանք մերձ՝ի քաղաքս էին՝
գայլին յեկեղեցի՝ի լուր քարոզութեան ե-
պիսկոպոսին, և հաղորդել սուրբ խորհրդոց.
և էր նոցա յեկեղեցւոջ առանձին տեղի, որ-
պէս և կուսանաց և այրեաց։ Հրամայեր
նոցա ունել աղօթատեղի և՝ի վանսն առ՝ի
կալ յամենայն ժամ յաղօթս։ Իսկ որ հեռի
բնակէին՝ի քաղաքաց՝ ունէին ընդ իւրեանս
ժամարար երիցուն, և մատակարար սուրբ
խորհրդոց. մանաւանդ թէ լաւ համարեցան
յետոյ զի՝ի մեհենատանս իւրաքանչիւր բը-
նակիցն գնթ մի օր՝ի քահանայից, և սար-
կաւագ մի կամ երկու. ուր և բազում՝ այն
էր զի նոյն ինքն քահանայն էր և աբբայ։
Այնուհետև ոչ մի ինչ հարկ լեալ նոցա ելա-
նելոյ արտաքս, կայլին իւրաքանչիւր՝ի մե-
նատանսն անտես՝ի մարդկանէ որպէս զմե-
ռեալս՝ի գերեզմանի։ Օ սոյն զայս պատ-
ճառեր հերեսիովտապետն Լուսիքէս, զի մի
յանդիման եղիցի ժողովոյն Կոստանդնուպո-
սոյ առաջի սրբոյն Վլասիանոսի՝։

Լայն և մեհենատանք կանանց յանապատս

՝ Ժող. Քաղկ. ՃՀ։

իսկ, ոչ կարի յոյժ հեռագոյնք ՚ի մենաստա-
նայ արանց, որպէս զի մարթել նոցա յօգնու-
թիւն հասանել ՚ի կարօտութեան ժամու. և
ոչ դարձեալ մերձաւորագոյնք յոյժ վասն եր-
կիւղի վտանգին և կասկածանաց։ Այ՚իանձնք
չինէին զքրիստոս նոցա, և նոքա միմիթարէին
զնոսա յամենայն խիստ տառապանս նոցա. իսկ
սոքա փոխարէն զՀանդերձս նոցա յարմա-
րէին, և կամ այլ այսպիսի սպասաւորութիւնս
մատուցանէին։ Այ՚ԼՀ զՀաղորդութիւնս զայս
սիրոյ առնէին ՚ի ձեռն ծերունեաց ումանց ըն-
տրելոց՝ որոց միայն օրէն էր մատել ՚ի վանս
կանանց։ Այ՚յսպիսի էր մենաստանն զոր կանգ-
նեաց քոյր սրբոյն Պախոմիոսի[2]։ Կառուցան
և ՚ի քաղաքս մենաստանք կանանց. և յայնմ
հետէ պատուէր եղև կուսանաց նուիրելոց
Այ՚ստուծոյ ժողով կալ ՚ի վանս միաբանու-
թեամբ. զի յառաջն յառանձին տունս բնակ
կէին։ Կուսանք աշխարհին Այգիպտացւոց և
Այ՚սորւոց հատանէին զգեստս վասն մաքրու-
թեան, բայց ոչ նոյնպէս յայլ կողմանս. զի և
ոչ միօրինակ կանոն էր յայսոսիկ ՚ի հնումն։
Օ՚Հանդերձս կուսանաց իւրոյ ժամանակին
ըստ այսմ օրինակի ստորագրէ սուրբն Յով-
հան ոսկեբերան. պարեգօտ կապոյտ՝ զգեալ
գօտւով, հողաթափք սեաւք և սրածայրք, քող
սպիտակ զՀակատուն, և լոգիկ սեաւ պարա-

[2] Վարք սրբ. Պախոմ. ԽԲ։

ծածկելով զգլուխն և զբոլոր անձնն[1]։ Պատկերք նկարագործք սրբոյ Կ[ա]թուղիկոսին ըզնոցունց հանդերձիցն Թուխն բերել զկերպա-
րանս։

Կամելով ապա եպիսկոպոսաց՝ ի միաբանական կեանս գումարել զժառանգաւորս եկեղեցեաց իւրեանց, զմիանձանց վարս կալան օրինակ, և զնոցին կարգս կանոնաց հաստատեցին՝ ի նոսա ըստ տանելոյ աչխատութենէ նոցա՝ ի վերայ ժողովրդեան։ Կին իւր յաձախ և ըզվանս երիցանց մենաստանս կոչէին, մինչև երկոցուն անուանակոչութեանցն յետ ժամանակաց զմիմեանց ունել նչանակութիւն։ Ի դարուն հինգերորդի բազումք եպիսկոպոսաց և յերիցանց Վաղղիոյ և արևմտից[2] ի բրև զմիանձունս կեին, և զձև նոցա զգենուին։ Յորըն Կրիգոր քահանայապետ՝ որ ակամայ հանաւ՝ ի վանից ուր խուսեաչն էր թաղեալ զմեծութիւնս աչխարհի, երբև ըզմիանձն եկեաց և յաթոռ քահանայապետութեանն[3], և ելից զապարանսն կրճնաւորօք սրբովք, ուստի ելին մեծամեծ եպիսկոպոսունք, ընդ որս և սուրբն Գոստինոս և այլք՝ առաքեալք Անգղիոյ։

Միակեցական կենաց ձչմարիտ սահման էր

1 Ոսկեբ. Ճառ Ը. ի Թուղթն ա առ Ցիմ։

2 Թոմասին. Հբաշ. մասն Բ, գիրք Ա, ըլ, ճն։

3 Յովհ. սարկ. Բ. ժե, ժը։

'ի բարձրագոյն և աստիճան կատարելու-
թեան ածել զՀոգիս սրբոց՝ որոց անարատ
պահեալ էր զպատմուճանն մկրտութեանն, և
դարձուցանել զմեղաւորս որ կամէին սրբել
զանձինս ապաշխարութեամբ։ Այլ ոչ իրի ընդ-
ունէին անդր զամենայն հասակս և զամե-
նայն դասս մարդկան. զմանկունս զորս մա-
տուցանէին ծնողքն առ 'ի տղայ տիոց զեր-
ծուցանել զնոսա 'ի վտանգաց աշխարհի. ըզ-
ծերս որք խնդրէին սրբութեամբ ելանել 'ի
կենաց, և զամուսնացեալս՝ որոց և կանայք
յանձն առնուին հրաժարական վարել կեանս։
Ի կանոնագիրս սրբոյն Վրուհատոսի արքեպիս-
կոպոսին Պարագայ[1] գտանեմք վասն սոցա ա-
մենեցուն առանձին կանոնս։ Որոց կանոնք
'ի վերայ կային երկար և բազմամեայ ապաշ-
խարութեան վասն յանցանացն գործեցելոց,
ապաքէն թէթև և թուէր նոցա 'ի մենա-
ստանս անդ անցուցանել զամն, յորս օրինակ
միաբանութեանն եղբարց և իրատ ծերոց յօգնու-
թիւն էին նոցա, քան թէ զնոր ինն վարուց
բուռն հարկանել 'ի մէջ աշխարհի։ Այլ ոչ իրի
բանտ ինն կամ տեղի աքսորանաց եղէն մե-
նաստանք՝ յորս պատժէին և իշխանագունք,
որպէս է տեսանել 'ի Պաղղիա յաւուրս առա-
ջին երկուց զարմից թագաւորացն, և յարևել-
զինի վեցերորդի դարուն։

[1] Կանոնք Հասար. ղ, է, ը, ժդ, ժե։

ՅՕԴՈՒԱԾՕ ՔԱՀԱՆԱՐՈՒԹ

Ջուգահչիւռ միակեցական կենաց ընդ կեանս առաքելոցն քրիստոնէից։

Ա՛ՒԱԿԵՑԱԿԱՆ կեանք քաջայայտ հաւաստիք են տեսչութեանն Աստուծոյ և խնամոց առ՝ի մշանջենաւորել յեկեղեցւոջ իւրում ոչ միայն զամբծութիւն հաւատոց, այլ և զգործս առաքինութեան. զի եթէ յուշ լցցին քեզ զոր միանգամ գրեցի յերկրորդ մասին մատենիկանս զկենաց քրիստոնէից, և բաղդատեսցես զնոսա ընդ կանոնաց սրբոյ Հօրն Նեղիկտոսի, և ընդ արդի սովորութեան բարեկարգ վենաստանաց, դոյզն խոիր գտանիցես ընդ սոսա և ընդ նոսա։

Յուցի անդէն թէ վերհագոյն աւետեանի զկրօնս համարեին, և խոտան առ նովաւ զաւետեանի իրս կենցաղոյս. արդ այսպէս առնեն և միանձունք հրաժարեալք յաշխարհէ՝ առ՝ի կարևորն Աւետ պարապել համարձակ. վասն որոյ կրօնաւորք իսկ կոչեցան, որ յառաջին հասարակաց անուն էր ընտրելոց աւետեան՝ի քրիստոնեայս։ Ապա իբրեալ և սովորեցին կոչել զմիանձունս, զՀրնաւորս և զկուսանս, առ՝ի յայտ առնել թէ համօրէն ընծայեալք էին Աստուծոյ։

Յաձախագոյնս յաղօթս կային քրիստոնեայք՝ միաբան և առանձինն հանապազօրեայ լով՝ ի նմին ըստ կարի։ Արդ ոչ ուրեք այնպէս գեղեցիկ կանոնաւալ են սաղմոսերգութիւնք, և ոչ այնպէս անվթար պահեալք որպէս՝ ի մենաստանս, յորս զեռ ևս այնպէս պաշտին՝ որպէս սահմանեալ էր սրբոյն Անեդիկտոսի՝ ի հազար և յերկերիւր ամաց հետէ։ Ել ինչ խափան ունելով կրօնաւորաց առ՝ ի կատարուածն պաշտամանն՝ հաստատուն ևս կալան զկարգն քան զվիճակաւորս. և թուի թէ նոքա յայս կարգաւորութիւն հաստուցին զժամ երգութիւնն՝ որպէս՝ ի բազում ժամանակաց հետէ կատարի։ Այսպէս և Յայնք ունին ըզկարմրագիր վարդապետութիւնս ժամագրոցն՝ որ՝ ի պէտս երևելի մենաստանաց։ Ի միանձանց եմուտ և ժամերգութիւն արևագալին և հանգստեան. զի՝ ի սկզբանէ այսօրիկ որպէս առանձին խնդրուածք առնէին յամենայն տունս քրիստոնէից և՝ ի մենաստանս՝ առ՝ ի սրբութեամբ սկսանել զօրն և կատարել. և վկայէ Կասիանոս՝ զի առ իւրով ժամանակօք սահմանեցան նոքին։ Պարտ է՝ ի մասինս յայսմիկ և զկանոնիկոսս ընդ միանձունս համադասել, զի զառաջինն մի կանոն էր ամենեցուն։

Յաձախ հաղորդէին քրիստոնեայք, նոյնպէս և բազմագոյնք՝ ի կրօնաւորաց. և ըստ

պատմէլոց Հռուփինոսի՝ աշակերտք սրբոյն Պողոսի զօր հանապազ մատչէին ՚ի խոր-հուրդն սուրբ։ Արօնաւորքն ժամանակս քա-զումս կալան սովորութեամբ պահելոյ առ իւրեանս զսուրբ հաղորդութեանն, զի առ ՚ի չգոյէ քահա-նայի ինքնին հաղորդեսցին։ Այլ թերևս վասն այսորիկ զերկեամս մի անհաղորդ մնացին ոմանք ոչ պահելով առ իւրեանս զսուրբ հաղոր-դութիւնն [1]։

Վրիստոնեայք պարապէին յընթերցուածն սուրբ գրոց. և զայս պատուիրէն առնել և կանոնք սրբոյն Կղեմեդիկտոսի [2], մանաւանդ ՚ի քառասնորդական պահս և ՚ի կիւրակէս փոխանակ ձեռագործի՝ յոր պատաղէին զօ-գուտ ժամն աւուրն. և այսր ևս կանոնի մնան ցայսօր հետք, թէպէտ և հարկ է խոստովանել զի քան զամենայն միաձեցական կարգաց պահ-պանութիւն այս այժմ առաւել անտես առնի։

Հռութիւն կարևոր էր՝ որպէս ասացի այլ-ուր՝ առ ՚ի չմեղանչել բանիւ, որ յոյժ յաձա-խեալ ՚ի մարդիկ մեղք են, թէպէտ և դատա-պարտեալ ՚ի գրոց. որպէս չարախօսութիւնք, քօսութիւնք, երդիծանք, խեղկատակութիւնք, զազրաբանութիւնք և դատարկախօսութիւն. և յայսմ է զի բարեկարգ ևս են մենաստանք՝ յորս խստագոյն պահի լռութիւն։ Հարս և

1 Հռուփին. Սահմ. Դ., ֆ։ 2 Կանոնք սրբ. Բենեդ. Բարսղ. Թուղթ Մ Ձ, առ Կեսր. Ձ. խը։

եղբարս կոչել զմիմեանս ըստ ալեաց և ըստ պատուոյն պայմանի՝ Հասարակաց էր ի սկզբանէ առ քրիստոնեայս։ Հնազանդ էին առաքելոցդաց իւրեանց և իշխանաց · միաբան կային ընդմիմեանս · ասպնջականք էին եղբարց իւրեանց, և ողորմածք առ աղքատս · և ահա զայս ամենայն տեսանեմք ցայսօր ի մենաստանս։

ՅՕԳՈՒԱԾՕ ՔՈՄՆԵՐՈՐԴ ԸՈՒՉՆԵՐՈՐԴ

Պատճառք միանձանցն զանազանելոյ յայլոց ըստ արտաքին ձևոյն։

Այլ ասիցէ ոք · եթէ կրօնաւորաց որպէս ընտիր քրիստոնեայս և եթէ կամք էին քաղաքավարել առ ինչ էր նոցա կերպարանս իմն օտար յայլոց բերել · վասն է՞ր այնքան նորաձևուԹիւն և յանզանազան իրս · առ իմ՞ ըզգեստն այն և տարազ գնացից և խոտրանք ի կերակուրս, ի ժամ քնոյ և ի բնակուԹեան · Համայն ասել, առ ինչ իցէ այն ամենայն հանդերձանք որովք երևին նոքա զանազան լեզուաք ազգաց ցլուեալք ընդ ազգս քրիստոնէից · ընդէ՞ր խոհրն այն ի մէջ այլ և այլ կարգաց կրօնաւորաց, և յիրս՝ որք չեն հրամայեալ կամ արգելեալք յօրինաց Աստուծոյ · Թուի հին այնպէս՝ Թէ պատրել կամիցին

սոքիմքք զայս ժողովրդեան առ ՚ի փառաւո-
րել ՚ի նոցանէ , և գտանել չնորհս ։ Այլեւս
է բազմայ դատէլն և խորհել և խօսել յան-
դուգն առ մեծի տգիտութեան հնոցն դա-
րուց . զի եթէ սակաւիկ մի ՚ի խորս նկատեալ
էր նոցա արտաքին ձևոյն միանձանց և կրօնա-
ւորաց , ՚ի միտ առնուին՝ զի առ նոսա ևեթ
կացին միայնի հետք նախնեացն ընթացից , և
նոքա միայն ՚ի խոտորել ամենեցուն և օտարա-
նալ ՚ի հնոցն չաւղաց՝ անստերիւր կալան զնո-
ցին գնացս ։

Այդ ՚ի հանդերձից սկիզբն արարեալ , ասէ
Ստեփանիկտոս սուրբ Հայրն ՚, թէ շատ է կը-
րօնաւորին պարեգօտ մի և գիգուղ և ուսանոց
՚ի պէտս աշխատելոյ ։ Պաքէն զառաջինն
ընդ բազում ժամանակս հանդերձ ռասկին ՚
էր պարեգօտ առանց աղաբողնի . իսկ զկըն-
գուղ որպէս վերարկու իմն ծածկէր զմար-
մին և զգլուխ՝ կրկին զանձամբ շինականք և
աղքատք [3] . որ յառ յապա դարս հասարակաց
զգեստ եղև ամենեցուն . և չեն իսկ ամք եր-
կերիւր զի դեռ և այնու վարեին Հայերոպա
՚ի մերում աշխարհիս , դիպողագոյն գտեալ
զայն առ ՚ի ցրտոյ պահպանութիւն ։ Իչ կղե-
րիկոսք ևեթ , կամ պարապեալքն ՚ի գիրս ,

1 Կանոնք սրբ. Ստեփ. Ծէ։ 3 Կանոնք սրբ. Ստեփ.
2 Ովասա . Ա , Թուղթ Ի . Լթ , Ա։
Մարտիաղ ։

այլ և ազատորեարն և աւագանին տանէին վեղար և կնգուղ ի զանազան նիւթոց։ Ընդ գուղն զոր նշանակէ սուրբն Ներսէս իկոս ի կանոնսն՝ էր միանգամայն և աղաբաղն մեկնաւոր. որպէս գլխարկն Կիստերսեան միանձանց, և աբեղին այլոց Ներսէսեան կարգաց առ հասարակ աստի էառ սկիզբն։ Ներսէսիկոս սուրբ Հայոց սահմանէ նոցա ի ժամ աշխատութեան և ուսանոց, որ առաւել լայն էր և կարճ քան որ այժմ. և որպէս յայնուանէն իսկ յայտ է, ծածկէր զուսս ի բարձուն բեռին, և պահպանէր զպարեգօտն։ Յուսանոցն կից էր և վեղար, որպէս և ի կնգուղն կամ յաղաբաղսն. և զերկուս հանդերձս զայսոսիկ զգենուն յայլ և այլ ժամանակս. զուսանոցն յաշխատանս, և զաղաբաղսն յեկեղեցւոջ կամ արտաքոյ վանաց։ Այլ յետ ժամանակաց եղև ուսանոցն որպէս բուն հանդերձ. վասն որոյ հանապազ զանձամբ տանէին, և ի վերայ նորին զգենուն զկնգուղն կամ զաղաբաղսն։

Արդ յայնմ եղև զի սուրբն Ներսէս իկոս զնոյն հանդերձս սահմանեալ էր իւրոցն զոր զգենուին աղքատք աշխարհին իւրոյ. և չզանազանէին իւիք, բայց միօրինակ ձևուիւ՝ որ կարևոր էր առ ի կարող լինելոյ միանձանց առնելոցն համակրօնից զգենուլ զնոյնս անխըտիր։ Եւ միթէ զարմանալ պարտ իցէ ընդ

խուն զանազանութիւնն 'ի հանդերձս նոցա ըստ ձևոյն և ըստ գունոյ ըստ գաւառաց գաւառաց, և ըստ վերստին հաստատութեան կանոնացն 'ի հաղալ և երկերիւր ամս։ Այսպէս և այլք 'ի կարգս կրօնաւորաց որ 'ի հինգհարիւր ամաց հետէ և այսր հիմնեցան՝ պահեցին անփոփոխ զտարազ հանդերձիցն զոր գտին յայնժամ յաշխարհսն իւրեանց։ Պարզկեն խըստակրօնութիւն ինն Թուխ արդ չզգենուլկտաւիս. սակայն զգեստ կտաւի բազում ժամանակօք յետոյ քան զաւուրս սրբոյն Անեդիկտոսի յաձախեաց, և ցայսօր 'ի Պոլսնիա չիք սովորութիւն ագանելոյ զայն. և ընդ բնաւ աշխարհն Ցաձկաց առանց պաստառակալաց դրնին 'ի մահիճս ներքնակ զգեստիւքն։ Այն զի և յառաջ քան զգործածութիւնն կտաւի պաստառակալաց՝ անզգեստ սովորութիւն եր 'ի քուն լինել, որպէս ցարդ առնեն Տաւացիք. վասն որոյ և հրամայեն կանոնք սրբոյն Անեդիկտոսի հանգերձիւք ննջել՝ առանց և զօտիսն անգամ լուծանելոյ։

Ոմանք յաղագս կերակրոյ ցուցի այլուր՝ զի ոչ միայն քրիստոնեից, այլ և զգօնագոյնք 'ի հեթանոսս ընդօվք և ձկամիւք կերակրէին, և 'ի լուր ընթերցուածոյ գրոց Ձաչէին։ Յայտ առաքելն նոյնպէս զի բազում այնոքիկ եին 'ի քրիստոնէից, որք և յաւուրս յոմն ոչ էր հրամայեալ յեկեղեցւոյն՝ պահեին, և յերկարէին

յաղօթս յառաջ և զկնի ձաշուն։ Այսմ որոյ ոչ նոր ինչ պատուէր յաւել սուրբ Հայրն Նեղիկտոս, մանաւանդ թէ բազում գթութիւն արար ընդ միանձնուն՝ հրաման տուեալ նոցա երկուս ազգս եփեալ կերակրոց առնուլ և սակաւ մի գինի՝ ի ճամբ ուտելոյ և ննջելոյ առ կրօնաւորս նոյնք ամենեցուն սահմանեալ էին մինչև յառաջ քան զայս դար. ձայնէին լինելոցդ կամ՝ի տանելոցդ ժամ առաւօտուն՝ որպէս գործաւորք առնեն ցարդ, կամ կանուխ ևս, և ընթրելին՝ի վեցերորդ ժամ երեկոյին։ Հրամանք սրբոյն վասն դադարելոյ և սկսանելոյ դարձեանց՝ի գործ՝ յայտ առնեն զի յուԹ ժամուց երեկոյին սկսաներ հանգիստ գիշերոյ, և յերկարեր մինչև ցլոր-դորդ ժամ առաւօտուն. որ է չափ ձգելիս առ՝ի կիր առնուլ զբուն ժամն գիշերոյ և չկորուսանել ըստ կարի՝ի ժամուց տուընջեան։

Ցեղն ննջելոյ առանց բաժանման սենեկաց՝ որպէս՝ի կանոնսն կայ նշանակեալ սրբոյն Նեղիկտոսի, գեղեցիկ ևս յայտ առնէ զշաւսարակաց կեանս. քանզի և ստոյգ միաբանակեցութիւն է ննջել միաբան՝ի միում սենեկի, և ձաշել՝ի միում սրահի։ Ազքատութիւն քաջ ևս յայտնի լինի անդ, և յամրի ևս կայ առաքինութիւն. քանզի դիւրին իսկ է առաջնոյդ գին տեսանել միանգամայն եԹէ գործիցի ինչ

1 Կանոնք սրբ. Բենեդ. կբ։

անդէն ընդդէմ պարկեշտութեան. զի և զայն իսկ սահմանեն կանոնք, լուսաւոր պահել հաւատազ զննջարանն, և առանց առագաստից կազմել զմահիճս, ոչ ինչ աւելի քան զանկողինս յարդեայ, և քան զվերմակ. որպէս ցարդ յանկեղեռնս պահի այս սովորութիւն, և է կարի վաղեմի: Իսկ խցկունք կամխուղք նախ նի միանձանց անապատաբնակաց էին տաղաւարք ինն կամ հիւղք մեկուսի յիրերաց, որպէս զխցկունս արդի Լամալդուլէցւոց. յորս քանզի երբեմն և երկու ընդ երկուս, կամ երբեք ընդ երիս՝ի միասին բնակէին, խցկունս կամ վանատունս կոչեցին և զփոքրիկ մենաստանս: Ի զի կոչեցին և հիւղս, թերևս վասն յայնպիսի խուցս օթևանելոյ՝ի հնումն և զերեցից. քանզի որ ինչ աղքատաց էր պատշաճ և տառապելոց՝ զայն կալան սովորութիւն միանձունք:

Պարզաբար ասել՝ի ձևս իսկ մենաստանաց թուի ինձ տեսանել ցհետս Ճարտարապետութեան տանց նախնի Հռոմոց, որպէս ստորագրեն Վիտրուվիոս և Պալլադիոս: Օ՛ի և կեղեցի մենաստանաց որ անդէն՝ի մուտս ընդառաջ լինի որպէս զի համարձակ մտցեն անդր աշխարհականք՝ թուի ունել զտեղի նախասրահին՝զոր Հռոմայեցիք անդաստակ կոչէին: Ինաեւ էին անդք՝ի բակ շրջապատեալ՝ի յարկաձածուկ կամարակապ գաւթից, զոր Յոյնք

սովոր էին կոչել սիւնապատս, այն է քառանկիւնի վայրապարկն մեհնատանացդ, ուր է դուռն եկեղեցւոյ, և ուստի մուտք են յայլ և այլ կողմանս մեհնատանին, որպէս 'ի ժողովեցողն և 'ի սեղանատունն: Եւ պարտէզն սովորաբար կետ կոյս բովանդակ շինուածոյն կայ՝ որպէս երևի յապարանս նախնեաց:

Կցեն այսոքիկ որպէս և են, այլ այս աներկբայելի է զի օրէնսդիրք միանձանց ոչ նոր ինչ խնդրեցին ուսուցանել, և ոչ օտար գնացիւք զանազանել յայլոց· այլ փոփոխումն բարուց մարդկան անսովոր երևեցուցանէ զգնացօնոցա, որպէս զհին կերտուածն՝ որք արդ նոր ինն երևին, զի նոքա միայն տակացին ընդդէմ երկարութեան դարուց: Եւ զոր օրինակ ի մաստուն Ձարտարապետք զհետ են խնամով դիտել քննել զհնութիւնն, դիտելով զի չքնաղ օրինակացն այնոցիկ աշակերտութեամբ պայծառացաւ 'ի յետին ժամանակս յայսոսիկ արուեստ նոցա, ըստ նմին պարտ է և քրիստոնէից հայել 'ի սովորութիւնս բարեկարգ մեհնատանացդ առ 'ի տեսանել անդ զկենդանի օրինակ վարուց քրիստոնէութեան: Պաքէն սակաւք արդ 'ի նիւթական և 'ի հոգևորականն շինուածոց անտի կան ինչ անշնաւելի 'ի ժամանակին, և հազիւ խակ բազմաց երևին խարխարեալ ինացուածք· այլ զոր օրինակ անձանձրոյթ պարապմամբ 'ի քննութիւն աւե-

բակացն այնօրիկ և ՚ի խորհ և ՚ի խնդիր գոյն
իսկ նշխարաց պատուական աւանդիցն, և բաղ-
դատելով որ ինչ զնոցանէ ՚ի գիրս յիշատակեալ
կան՝ ՚ի միտ առնումք զգեղապատշաճ համե-
մատութիւնս բոլոր շինուածոցն, և ՚ի վերայ
կամք չէմարտութեան գրելոցն. այսպէս բա-
զումբոյժ զարգասցի ոք ՚ի քննելոյ զսովորու-
թիւնս մեհնաստանաց, և առաւել եթէ ոք
համեմատեսցէ զկարգս և զկանոնս նոցա ընդ
խրատս աւետարանին և ընդ վարս առաքի-
նեաց որ ընդ ամենայն ժամանակս կային:
Վասնզի խոստովանեալ պարտ է՝ զի թանգարան
ամենայն հնութեանց մեհնաստանք էն. անդ
գտան բազմագոյնք ՚ի հին մատենից ՚ի վերըս-
տին ծնունդ և յաճումն գիտութեանց. անդ
՚ի վերս յայտնեցան և հարցն գրեան, և կանոնք
ժողովոց, և յայտնին օր ըստ օրէ ՚ի գրաւորա-
կան կարգս հին մեհնաստանաց եկեղեցական
հնութիւնք ցանկալիք: Այնիք բանիս, յապա-
կանել օր ըստ օրէ աւետարանին օրինաց յաշ-
խարհի՝ անդ անապակագոյն գտաւ նոցին պահ
պանութիւն:

ՄԱՆ ԶՈՐՐՈՐԴ

ՅՕԳՈՒԱԾՈ ԵՒԱՆԳԵԼԻՈՆ

Ձի Թուղացան տակաւ քրիստոնեայք։

Մանչ ինձ արդ ցուցանել զկրթնանալ քրիստոնէութե֊ան. քանզի ՚ի ձառ իսկ է յետ յանդիման առնելոյ զսովորութիւն նախնի քրիստոնէից, ասել առնմին զպատճառան վասն որոյ օտարացաք ՚ի նոցին շաւղաց։ Այս այնչափ զարտուղի գտանին գնացք մեր ՚ի նոցայոցն, որպէս զի ստորագրութիւն ձառիցս գնոցանէ Թուեսցի արդեօք բազմաց հանգոյն պատմութեանց զորս ձանապարհորդք գՀնդկաց և գԱիթէոպացւոց տան մեզ։ Իսկ որ կարի Թանձրամիտքն իցեն՝ յերկուանայցեն իսկ ընդ հաւատարմութիւն իրացն, ոչ հասու լեալ հաստատացն որ քաջայայտ են դիտնոց։ Արդ այսոքիկ եղիցին պատճառք տակաւ Թուլութեանն։

Իբրև մեծն Աստանդիանոս ձեռն ետ քրիս-
տոնէութեան, երամովին այնուհետև սկսան
դառնալ աղգք և աղինք, և լցան մարգարէիցն
բանք զեկեղեցւոյ՝ թէ բարձրասցի նա՝ի վերայ
գլխոց լերանց և եկեսցեն՝ի նա ամենայն հե-
թանոսք ուսանել զօրէնս Աստուծոյ և զնա-
նապարհս նորա[1]։ Օ՛ի հայեցեալ տեսանէին
զմեծամեծ նշանսն որ գործէին առ տապանս
վկայից, և զոլբութիւնն վարուց յոլովագունից
՝ի քրիստոնէից, և զանհնարն զօրութիւն հա-
ւատոցս՝ հաստատեալ գամ քան զգամ յան-
ողորմ հալածանսն ընդ ամն երեքտարին։ Ա՛յն
զի և ամօթ կրասպաշտութեանն, և առաւել-
եալ՝ի քերթողաց դիցաբանութեանն, ՝ի բազ
մաց հետէ այնպէս նշաւակեալ էր, զի բազ-
մագոյնք՝ի միտս ունողաց ոչ ևս հաւատային
այնոցիկ, այլ առ քաղաքավարութեան ևեթ
զհետ գնային կրօնից ժողովրդեան։ Այ-
սուհետև՝ի բերէ իբրև տեսին զի ոչ ևս պաշտպան կայր նմա
թագաւորութիւնն՝ թողին զայն դիւրաւ, և
բազումք եկին՝ի քրիստոնէութիւն։ Այլազուա-
նութիւն և առ զեղծմտութեան և ապականութեան
բարուց զառաջանն յանկրօնութիւն, զի մի գե-
րեսցեն զմիտս՝ի հնազանդութիւն հաւատոյ,
և կամ զի մի բռնադատեսցին հրաժարել՝ի
զեղխութեանցն կամ յանիրաւ շահից, և կամ
յանկալութենէ մեծանալոյ զօրաքաղութեաբ։

1 Ամբ. Թուղթ առ Օգոստ. ՃՁԸ։ Եսայ. Բ. 3։

Այլ երկու ազգք միրապէս հեթանոսաց կային այնուհետև. խաժամուժն տգէտ և թանձրամիտ՝ որում սովորութիւնն է իշխան, և՝ ի զգալեացս միայն ածեալ ձգի, և այլանդակամիտք ումանք մարդիկ որ առ ձախողակի քաղաքականութեան կամէին հաստատուն ունել զհեթանոսութիւն՝ զաչացուս մեծարանօք հնութեան, և այլաբանական մեկնութեամբք իմաստասիրաց ումանց զդիցաբանութիւնն։ Պըզատոնեանք զայնու ժամանակօք օտարացեալ էին յոյժ յունղվախոհ և՝ ի հաստատուն մտաց Պղատոնի և Նախնի ակադեմականացն և աշակերտաց նոցին. զի զյոռի մասունս վարդապետութեան նոցին խառնեալ ընդ պիւթագորական ուսման և ընդ խորհուրդս Եգիպտացւոց, նոր իմն աղանդ կազմեալ էին՝ հիմնեալ՝ի վերայ մոգութեան. և պատճառանօք պաշտամանն հոգւոց բարեաց և չարաց հաստատէին զամենայն նանրահաւատ կրօնս առ հասարակ։ Եպիկուր էին և կրօնք ուրացողին Յուլիանոսի. որպէս և տեսանել զվարդապետութիւն կրօնիցս՝ի գիրս Եպլուվեսի, Պղոտինեայ, Պորփիւրի, և Յամբղիկեայ. այլ սակաւք ումանք աշակերտեին իմաստակութեան նոցա, և և այս քան զևս խոտեալ անարգէր հեթանոսութիւն[1]։

Յայնչափ բազմութեան նորոց քրիստոնէից

[1] Օգոստին. ի Յովհ. Դ., 26, ձառ Բ։

դժուարին էր թէ չգտանէին ոմանք ըստ կէնցաղական հրապուրանաց սպրդեալք, ցանկութեամբ յաւագութիւն մատչելոյ ընդ քրիստոնեայ թագաւորաց, կամ զիջանելով ի կամս ազգականաց և բարեկամաց, կամ առ ահի տեառնց, և այլ ամենայն իրօք՝ որովք յորդորին և արդ որք ի վերին երեսս ունին զբարեպաշտութիւն։ Այլ յոլովագոյնք ի նոցանէ կային ընդ երախայս, և ոչ կարելով հպատակել քրիստոնէական խիստ կարգաց՝ յապաղէին յոյժ զմկրտութիւնն, մինչև ցօր իսկ մահուն, որպէս զի մի զձեռնաւ ազատութիւն մեղացն կորուսցեն՝ նեղեալ անկեալ կանոնաց ապաշխարութեան։ Այլ ին և այս որք առանց ձշմարիտ դարձի մկրտեին, և կէսք դարձեալ թեթևամտութեամբ մատչէին ի նոյն՝ ձգեալք յընդվայրաբանութենէ խորհրդոց, զոր հաւատացելոց աեթ օրէն էր ունկնել։ Ոմանք ևս մկրտէին առ անապաշտութեան և ուսանելոյ զամենայն կարգս պաշտամանց, և հաղորդ լինելոյ ամենայնի որ սուրբ էր, առանց խորհելոյ զձշմարիտն Աստուած և զկրօնս ձշմարտութեան ի սուտ կրօնից։ Ամենայն ձիգն և խիստութիւն առաջնորդաց չէր բաւական ի քնին մատուցելոյն ի մկրտութիւն. զի մարդիկ էին, և անհնար էր չըմբռնել նոցա երբեք ի պատրանս։

1 Լատն. ձառ Ջ. ԱՅՁա- ազեքս. առ Եւսեբ. Պաամ. յայան։ կիպր. յղ Ընկ։ Պիոն. Ջ. Լ.Դ։ Ընդ. Ը. ե։

Եւ ի չէմարիտ իսկ հաւատացելոց ոչ սակաւք հովանային տակաւ։ Կադարեալ միանգամ մարտիրոսութեան երկիւղին՝ ոչ եւս մօտանալոյ թուէր նոցա ի վերայ կացեալ մահ, եւ անդորրութիւն այլ իմն վտանգ մեքենայէր՝ բառնալով ի նոցանէ զզգուշութիւնն։ Եւ յաման իսկ հալածանաց խաղաղութիւնն ընդ ժամանակս ժամանակս թուլացուցանէր յայտնապէս զեռանդն քրիստոնէից. վասն որոյ ուժգին բողոք բառնային հարք, և զգաղթութիւն նոցա ցուցանէին պատճառս զայրանալոյ հալածանացն։ Խառն էր միշտ ընդ ցորենոյ ոլոմն, զքրիստոնեայս ասեմ՝ զորոց գրէ Ովսէնէս թէ յաձախէին յեկեղեցիս, խոնարհէին առ ոտս երիցանց, տային նուէրս ի զարդ խոհանոց, բայց զուղղութենէն վարուց և զհրաժարելոյ յախտից էր ինչ նոցա փոյթ[1]։

Իսկ զինչ ասել իցէ զժամանակէն՝ յորում արմատացաւ խաղաղութիւն, և քրիստոնէութեանն անուն ոչ միայն չէր յանդգնոյ, այլ և պանծալի իսկ էր։ Իբրև տեսին հաւատացեալք զի թագաւորք և իշխանք եկեալք ի հաւատս՝ հանդերձ մեծութեամբքն իւրեանց և իշխանութեամբ էին քրիստոնեայք, ոչ եւս այնու հետեւ յաւագութենէ, յընչից և ի բարեկեցութենէ երկնչէին։ Եւ ահա զարհնուրն

[1] Որոգ. ի թիւն, Ճառ ԻԹ. ի Յեսու, Ճառ ԻԱ. Ոսկէբ. ի Գործս, Ճառ ԻԹ։

տակաւ ցանկութիւն կենցաղական զբօսանաց, ագահութիւն և ամբարտաւանութիւն։ Այս աշխարհս, թէպէտ և լեալ քրիստոնեայ, ոչ վերջանայր ի գոլոյ աշխարհ. և զանազանէին քրիստոնեայք ի սրբոց և ի բարեպաշտից։ Յաձախ գանգատի մեծն Յովհան ոսկեբերան՝ զի ունկնդիրք իւր պատճառանս զօշաքաղութեան իւրեանց և երկրաքարշ կենաց պատճառէին զչինեղն կրճնաւոր, և զի հարկ էր նոցա կերակրել զկին իւրեանց և զորդիս և զընտանիս. որպէս թէ առ որս գրէրն Պօղոս ի Հռովմ և ի Կորնթոս, և զորս յորդորէրն ի կատարելութիւն և սուրբս զնոսա անուանէր, չէին կանամբիք, և չվարէին զՀասարակաց կեանս[1]։

Կրօնականութիւն բնութեան խանգարէ զմենայն. զեղծան մարգիկ քաղցրութեամբ իսկ աստուածային պաշտամանց և կարգաց եկեղեցւոյ. խրախուսութիւնք ծնօղականք անցին ըստ սահմանի քրիստոնէական զգաստութեան և պարկեշտութեան։ Հարկ եղև ի յորմոզդ դարու, որպէս յիշատակեցի այլուր, խափանել զըմբխրախուսս ի ծնս վկայից, և արգելուլ երիցանց չգտանել ի ինջոյս հարսանեաց։ Այլ ուրեմն եցոյց Աստուածն քանի դժուարին է զինադուլի աշխարհական ընդ հոգևորականին

[1] Ոսկեբ. առ Հաւատ. հայր։ և յորդորակ, ի Մատթ. Նառ. Ի։

միաբանել[1]։ Վերի է մարմինն. և ընդ գգուեչն կերակրովք և քնով և հանգստեամբ՝ ըմբռստանայ, և կապտե զՀոգին յաղաւտութենէ յերկնայինն խորհելոյ, և ի զօրութէ հակառակ կալոյ ցանկութեց. նմին իւրն անհնար է հոգւոյն կալ յիշխանութեանն առանց խստութեամբ գնալոյ ընդ նմա, և անդադար հսկելոյ ընդդէմ նորա։ Օ այս ամենայն իմա զժամանակացն զոր յերրորդ մասին գրոցս առաջի արարի. զի և զբիծս դուշաբերեայս յերևան նծեմ առ ի ցուցանել զպատճառս տակաւ թուլութեանն. այլ ոչ եթէ կամիցիմ նսեմացուցանել այսու զոր հաստատելի անդ զսովորութենէնց եկեղեցւոյ առ հասարակ և զկարգաց նորա, որ դեռ ևս անկուն ի հզօր զօրութեանն կային, մանաւանդ զօրբութենէ պաշտօնէիցն որ զաւրմանալին էր։

Պակաս ոչ է պարտ լռել և զայն, զի էին և ոմանք յառաջնորդաց կարի լիմն սիրողք մեծարանացն զոր ընդունէին, և ոմանք դարձեալ բամբասեալք ի զօշաքաղութենէն ընչիցն որոց մատակարարութենէն յանձն էր նոցա։ Որպէս է տեսանել զողջոյն լեալ առ Հարս սրբոյ ժողովոյն Վաղկեդոնի ընդդէմ Եւտիւքեայ և Նեստորի[2]։ Նա յառաջ քան զգ

1 Գրիգ. Նիւս. Առ Ջ։ ընդդէմ Կէս։ Բասիլ. ընդդէմ Եւբէց։ Օ. 2 Ժող. Քաղկ. գործ Ե, դասս. Թուղթ Իթ։ Որոգ. և Ժ։

դարն զայն Յուսեբիոս Նիկոմիդացի և այլք ի գլխաւորաց աղանդոյն Արիոսի, մանաւանդ Նէորդիոս որ յափշտակեաց զաթոռ Պետրոսանդրիոյ, թէ որպիսիք ոմանք էին սոքա, յայտ է ամենեցուն։ Յե թէպէտ գրեթէ չէր ոք յուղղափառ եպիսկոպոսաց՝ զորով մարթէր ստգիտել ինչ այսպիսի արկանել հաւաստեաւ, բայց զի էին և չարափառաց եպիսկոպոսունք և երիցունք, նոցին պարսաւելի գնացք նախատինս ածէին համօրէն քահանայութեան։

Պայթակղութիւն մեծ էր հեթանոսաց և հաւատացելոց անխրատից՝ տեսանել զպատուեալսն պատկառելի անուանակոչութեամբ ոխաբընդ այլ հայրապետս և քահանայս, խաժաւել զմիմեանս զրպարտութեամբք և բամբասանօք ի բան և ի գիր, սպրդել յարքունիս, և դաւով որսալ զնշխանս ի կուսակցութիւն իւրեանց. զի զայս ամենայն հնարէին չարափառք։ Զողորմին միանձունքն սուտ նախանձու զմիայնարանս իւրեանց, և գայլին ի քաղաքս՝ զել չփոթս, և անհնարին աղմուկս յարուցանէին։ Զայս ամենայն խռովութիւնք առաւել ևս յարևելս զօրանային, ուր եռանդունն ևս են միաք, և առաւել անյողդողդք. իբրև միանգամ բորբոքին ի նոսա ախտք՝ զամենայն այրեն և տոչորեն։ Զմիւսհետև երթայր և նըւաղեր պատիւ հաւատացելոց, որով և նոցին հաւատոյն։

Լ՚ինի ՚ի գայթակղութիւն մտաց տկարաց և արտաքնայարդար առաքինութիւնք հեթանոսաց. զի էին և ՚ի նոսա՝ որոց բարք անպարսաւք էին[1]. պահէին զխոստումն, առնէին արդարութիւն, հեռի կային ՚ի նենգութենէ և յագահութենէ, և համառօտ ասել՝ հպատակ կային օրինաց և կարգաց քաղաքաժողով միաբանութեանց, շատ համարեալ կեալ ըստ ուղղութեանց բանին, առանց չիմանալ եթէ ընդէրո՝ յորս պահանջէին քրիստոնեայք. որպէս թէ չէր յանձն առեալ և քրիստոնէից գնալ զհետ գերբաբուն բանին, որ այն ինքն է Խաչն մարմնացեալ: Համաստուհանքս այսոքիկ ըստ աշխարհի՝ կափուցեալ զաչս ընդգէմ մարգարէութեանց, նշանաց, և այլոց յայտնի հաւաստեաց աստուածութեանն Քրիստոսի, համարէին զհաւատս խօթամտութիւն և կանխակալ կարծիս, և մնապաշտութիւն զձնշուճն մարմնոյ, զկուսութիւն սուրբ, և զերաժարիլն ՚ի թաւտերց և յանիրաւ զբօսանաց:

Այսոցմանէ որոյ և ՚ի թագաւորել քրիստոնեայ ինքնակալաց դեռ ևս բազմութիւն յոյժ էր հեթանոսաց, և անհնար էր արգելուլ զնոսա ՚ի խօսելոյ կամ՚ի գրելոյ և յուսուցանելոյ հրապարակաւ[2]: Այսոր ազատութեան նախնի ի-

[1] Օգոստ. ՚ի յով. ճառ. խե. և ընդդէմ հակառակորդ. Օրին. և Մարգ:

[2] Եւսեբ. վարք Կոստանդ. Գ. ծԹ, ևն:

մաստասիրաց կացին մնացին հետք, և զնոյն գիտացին ի կիր առնուլ և հերեսիովք [1]։ Եւ ինչ աւելի ձեռնհաս եղեն առնել կայսերքդ յաջոյն դարս քան զփակել զմեհեանս և արգելուլ զղջհս և զայլ հասարակաց պաշտամունս դից, ընդ որ սրտմտէին հեթանոսք։ Որչափ ինչ միանգամ Ձգնեցաւ ծերակոյտն առ փոքրն Ասղենտիանոսիւ [2] ի վերստին հաստատուԹիւն սեղանոյ դիցն ՅաղԹուԹեան՝ այնչայտնի է։ Իշխէին իսկ բռնանալ ի վերայ քրիստոնէից՝ ի տեսանել զնոսա հակառակեալ մնոտի պաշտամանց իւրեանց. նմին իրի և առկայսերաք որ ջերմ էին ի քրիստոնէուԹիւն՝ տեսանեմք վկայեալ զոմանս վասն ի Քրիստոս հաւատոց [3]։ Պաղքէն և նոքին իսկ կայսերք անփոփոխ կալան զձևս ինչ բանից հեԹանոսականս, Թէպէտ և ոչ այլ ինչ այնոքիկ էին բայց պիտակ անուանք մեծարանաց, որպէս զդից կրել զանուն և ի քրիստոնէուԹիւն, և զմակդիրս դիւցական և սրբազան՝ որովք կոչէին արքունիք նոցա և գանձք և վիճակ նոցա և հրովարտակք և ծիրանիք, և ամենայն որ ինչ նոցա էր [4]։ Եւ այնպէս յաճախեալ բա-

1 Սոկր. Ա. ժբ։ Սոզոմ. Ծ.Ա. ը։

2 Ասերոս. առ Վաղենտին։

3 Վկայաբ. Հռովմ. ի յոբ. նուաբի ։ի մարտի ժէ. յոգոստ. ժէ։

4 Numen, domus divina, sacrum aerarium, sacrum patrimonium.

ռիցս, զի և երևելիքն 'ի սուրբ հայրապետս ոչ ինչ խղձին վարել նոքիմբք։

ՅՕԴՈՒՆՅՈՅ ԵՐԿՐՈՒՐԴ

Չեղծումն Հռովմայեցւոց։

Յայլ օր ըստ օրէ աձիր և բազմանայր ապա-կանութիւն յազգս հեթանոսաց։ Այր ինչ 'ի սկզբան աւետարանին ասացի թէ գոյին ախտք, նոքին դեռ ևս բռնանային. և բաց 'ի սակաւուց ոմանց անկրօնից և իմաստասիրաց՝ զորոց 'ի վեր այսր ասացի, չգոյր առ Յոյնս և ոչ առ Հռովմայեցիս զօրութիւն հակառակ նոցին։ Եւ ահա յայնմ ժամանակի կործանումն 'ի վերայ հասանէր ինքնակալութեան արևմտից, և յարևելս ևս չկարաց կալ յոտին 'ի բախիլն սաստկապէս։ Զի բարձեալ էին հրահանգք 'ի զինուորաց, իշխանութիւն և խորհուրդ և գիտութիւն 'ի զօրագլխաց, զօրութիւն յերիտասարդաց, իմաստութիւն 'ի ծերոց, և հայրենասիրութիւն յամենեցունց։ Այր իւրաքանչիւր զՀաճոյս իւր խնդրէր և զօգուտս. ամենայն ուրեք զրժանք և նենգութիւն[1]։ Հռովմայեցիք յօրացեալք 'ի մեզկութիւն և 'ի դատարկութիւն՝ զօրս 'ի խուժադուժ ազ-

[1] Ամմիան. Մարկել. ԺԴ. իբ։

գաց առնուլն ոսկիոք ի Թիկունս ընդդէմ պլըց խուժադուժից, և ինքեանք փափկայեալք ի գրգանս՝ պարծելին ընդ անմիտ քընքշանսն որ զամենայն ինչ վեր ի վայր տապալելոյ Իբրև լցան մեղք նոցա և ամբարշտութիւնք, եղեալ Աստուած զՀանդէս արդարութեան իւրոյ զգուշակեալն ի Յովհաննէ ։ Աբաւ Հռոմ, և բազում անգամ ասպատակեցին ի նմա խուժադուժք, և ինդրեցաւ ի նմանէ ապիւն վկայիցն որով արբեալ էր ։ Հաւասիկ այսոքիկ էին քնիկ պատճառք անկանելոյ պետութեանն Հռովմայ, և ոչ տարածութիւն քրիստոսական կրօնիցն՝ որպէս համարեցան յայնժամ հեթանոսք, և որպէս ի յետին ժամանակս Աբաեաւելի և այլ քաղաքավարք ամբարիշտք և տգէտք ասել յանդգնեցան ։

Ու քանզի ի մէջ այսքան խեղաթիւր և վատթարեալ ժողովրդեան՝ Հռովմայեցւոց աստիճանոյ՝ քնակէին քրիստոնեայք, դժուարին էր ընդունել վերս առաքինութեան նոցա . այն ըմ և չէին որոշեալ յանհաւատիս որպէս յաւուրս Հալածանացն, և ի գաւանացն ևեթ նոցա և ի բարեկամութենէ ճնայր նոցա զգուշանալ ։ Այլն իրի չէ պարտ զարմանալ ընդ ախտս զոր յանդիմանեն Հարք ի քրիստոնեայս անդ ուրեմն ի չորրորդ դարու[2] ։

1 Յայտն . ԺԲ ։ 2 Սաղոման. յղ Ա՞պաւտ. Ձ, Ե ։

Եւ սուրբն Ոսկեբերան չէր ազգականք զայն ի հեթանոսաց որ կամէին դառնալ, զի մի զարմացին ասէ զնդ այն և գայթակղեսցին։ Տեսանիցէք, ասէ, ի խուռն բազմութեան անդ որ ընդուն զնիւթական եկեղեցիս՝ արբեցողս, զբաղաղս, խաբեբայս, խաղացողս, լկտիս, գուսանս, դեղատուս, կախարդս, ախտարմալս, և զազգս ազգս ըղձից, որք հանդերձ այսու ամենայնիւ ընդ քրիստոնեայս համարին[1]։ Ընկերզուարթք խոստովան լինի Ա՛նիքեցւոց զի և ի չշնարհաւորութեան կրծոս գտանիցէ մնասակաւք, և այնպէս ախտամոլք, մինչև մոռանալ զխոստումն իւրեանց առ Ա՛ստուած։ Յաճախ խօսի վասն սոցին և ի գիրսն ընդդէմ Ովնատեանց, քաջ ցուցեալ զի պարտ է որոմանն կալ ընդ ցորենոյ մինչև ի ժամանակս հնձոց կամ դատաստանին։ Վասն պարտէ այլուր զայնոսիկ որ ի բարի կամ ի չար գործոց քրիստոնէից ոմանց կամ միանձանց իրաւունս համարէին զամենեսեան գովել կամ անգոնել առ հասարակ։ Ո՞սմին նման հաւասիս Թուլութեան քրիստոնէից է տեսանել և ի գիրս Ոսկեբերանի, և այլոց հարց որ ի նոյն ժամանակս կային[2]։

Ա՛ւ ինչ ասէ սահմանեալ էին, հարցանիցէ

[1] Օգոստ. յղ. Սովոր. և կեղ. լէ։ [2] Օգոստ. ի Սաղմ. խթ. 12, եև։ Ոսկեբ. ի Պաւղ. Ճառ. կԱ. և յղ. Ագաքեն. և առ Հաւատ. Հայր։

ոք, ապաշխարութիւնք հրապարակաւ և նզովք։
Այլ ՚ի սրբել զեկեղեցի ՚ի բազմութենէն մե-
ղաց, այլ ոչ յամենայնէ։ Այլ ՚ի դնել զապաշ-
խարութիւն պարտ էր մեզաւորին ինքնին խըն-
դրել զայն, կամ գոնեայ հպատակել այնմ՚։
Այլին իբր արժան էրնամ ինքնին խոստովան լի-
նել զմեղսն անձամբ զանձն ամբաստանելով,
կամ հաստատելով զբանս ամբաստանելեացն։
Իսկ նզովք վասն այնոցիկ էին՝ որք յետ դա-
տապարտելոյ բանիւ բերանոյ իւրեանց, կամ
իրաւամբք դատաստանաց, և կամ հասարա-
կաց վկայութեամբ, չկամէին ապաշխարել։
Այլ և յայնժամ հայրապետքն խմաստունք
և գթածք չփութային ՚ի վերջին փորձս այս.
չառնէին ընդ բանիւ զմեղաւորս որոց թիւ
կամ զօրութիւն բազում էր, և որոց չգոյր յոյս
ուղղութեան, կամ երկիւղ էր և քան զևս
զայրացուցանելոյ զնոսա, և կամ հերձուածոց
տալոյ պատճառս. ընդդէմ բազմութեանն խը-
րատուք և յորդորմամբ գնային, իսկ ընդդէմ
աննշանից խստութեամբ՝։ Վակայն որ յայտ-
նի և անզեղջ մեղաւորն էր՝ յառաջագոյն ազդ
առնէին նմա զահապին վտանգն յորում կայր.
յորդորէին փութալ ելանել անտի, է զի և
սպառնալիս ՚ի կիր արկանէին առ ՚ի բեհանել
զխստութիւն նորա. պաղատէին առ Աստուած

1 Օգոստ. Առաքան. ԸՐ։ 2 Որոգ. ՚ի Մատթ. Ճառ. Լե. և ՚ի Ցես. Ճառ. ԻԸ։

վան նորա, և ամենայն իսկ եկեղեցւոյն տային առնել աղթիս վասն նորա։ ||Նային սպասէին բազում ժամանակս, նմանող լինելով համբերութեան և երկայնմտութեան Տօնն պեծութեանց՝, և ոչ՝ ի գան յայն գեղ գարմանոյ մտաբերելին մինչև սպառեալ զամենայն հնարս սիրոյ, որպէս Հայր որ առ ապրեցուցանել զկենսաորդւոյն բռնադատիցն Հատանել իւրովի զձաղուն։ ||Այն սորին մարթ է ընթեռնուլ զՀառս ||սկսեբերանին յաղագս նզովից։

Այլ որոյ մեղք ինայր՝ ի թագստեան, կամ զի Յուսոյ ևեթ էր գիտելի, և կամ զի չէր մարթ ածել զնոսա՝ ի խոստովանութիւն, չգոյր նոցա գեղ գարմանոյ. վասն որոյ և չմարթէր փակել ընդդէմ նոցա զդրունս եկեղեցւոյն, և ոչ արգելուլ զնոսա՝ ի հաղորդութիւն խորհրդոց, եթէ ցայն վայր իշխէին ամբարշտել։ Հալածանք ևեթ զարդ՝ ի ցորենոյ փոձեալ ընտրելին. իսկ իբրև այնմդուլ և դադար եղև, ոչ ինչ արգելոյր զկեղծաւորութիւն՝ ի յարատևելոյ մինչև ցմահ։ Նայց քրիստոնեայք այսպիսիք վատք և պղերգք՝ ինասակարք յոյժ էին եկեղեցւոյ պղծախօս լեզուաւն և չար օրինակաւ, մանաւանդ առ ընտանին։ Պղերգութեամբ մնուցանէին զորդիս իւրեանց, ոչ վերջացեալ՝ ի մատուցանելոյ զնոսա՝ ի մկրտութիւն. և ահա յանդաստիարակութենէ աստի

1 Օգոստին. գիրք Գ., ընդդէմ Պարմին. և Թուղթ ԻԱ։

որդւոց առ տնին՝ բազում աղէտք ծնանէին յառաջին դարս, այն զի և ոչ գոյին վարժք և հրահանգք հրապարակաւ վասն մանկանց մկրտելոց։

ՅՕԴՈՒԱԾՆ ԵՐՐՈՐԴ

Արշաւանք ազգաց խուժադուժից, և բարք նոցա։

Ձ ինչ նուազ քան զվեցծումն Հռովմայեցւոց վերս հասուցանէր եկեղեցւոյ յարձակումն ազգաց խուժադուժից կործանելեաց զպետութիւնն Հռովմայ։ Պետարանն՝ իմաստութիւն գերաբուն՝ միօրինակ՝ ի բաց մերժէ զամենայն յանցանս որ նմա հակառակ կան. ոչ թանձրամիտք, ոչ խորամանկք, ոչ վայրագք և ոչ վատք՝ քրիստոնեայ լինել ոչ ունին։ Պնպէս անմիաբան են ընդ ձշմարիտ կրօնից խժակատնութիւն և անգթութիւն, որպէս զեղխութիւն և քնքշանք։ Պւթիւք և թշնամութիւն ոչ ունին կալ ընդ բարեպաշտութեան, որպէս և ոչ ընդ արդարութեան և ընդ ուղղութեան։ Պյն իրի բազում չարչարեցաւ եկեղեցի յահագին աղմուկս վայրագասուն ազգաց հիւսիսոյ՝ որք հեղեղատեալ ծածկեցին միանգամայն զամենայն սահմանս ինքնակալութեանն։ Պեծն Հերոնիմոս և այլք ի սրբոց հարց որք

կենդանի էին յայնժամ, նկարագրեցին սակաւուք զխուսր իրացն զպատկեր: Փայթ պընդուԹեան 'ի պահ անձին և ընկից 'ի քաղաքս առեալս յարձակմամբք, կամ յաչխարհս աւար Հարեալս 'ի Թշնամեաց, և Ձիգն չանկանելոյ 'ի գերուԹիւն, և զգուշանալոյ պարկեշտուԹեան կանանց, այս ամենայն աղէտք անհնարինք գիտեն սաստիկ պատերազմ յարուցանել անփոյԹ առնելոյ զՀոգևորաց: Վանդի արգարև աննկուն առաքինուԹեան պէտք են առ չընկձելոյ 'ի տեսիլ արիւնուռւշտ կոտորածին և արհաւրաց գազանային յաղԹուԹեանն: Ինչ ԹեռնուԹք ցայսօր 'ի ԹուղԹս սրբոյն Խարաղի, և յառաջքան գնորայն 'ի ԹուղԹս Գրիգորի սքանչելագործի, զապաշխարուԹիւնն սահմանեալս 'ի վերայ անկելոց յազգի ազգի մեղս յատպատակել խուժադուժիցն 'ի Կապադովկիա:

Ի ժամանակի յորում աւերեցին Վանդալք զՔրիկէ, այն որ 'ի վեր քան զամենայն Ձրմեղեցւոցանէրն գրիր սրբոյն (Գոստինոսի՝ էր վտանգ և մահ Հոգւոյ, որպէս Պոսիդիոս պատմէ. "Ցեսանէր, ասէ, զեկեղեցիս Թափուր 'ի քահանայից և 'ի պաշտօնէից, զկուսանս սուրբս և զկրօնաւորս սփռեալս աստանդ վտարանդի. զմինս չարաչարջ սպանեալս, զկէսս սրախողխող լեալ, և զայլս 'ի վերայ սահենայն ճեասուց 'ի մարմինն

„ և յոգիս և ՚ի հաւատսն՝ անկեալս ՚ի ծա-
„ ռայութիւն տերանց խստաց և անիրա-
„ ւաց : Տեսանէր զի լուեալ էին յեկեղե-
„ ցիս երգք և փառաբանութիւնք Աստուծոյ,
„ և զեկեղեցիս քանդեալ և կործանեալ ՚ի բա-
„ զում տեղիս . . . ոչ ևս էր որ ՚ի խնդիր լինէր
„ պատարագաց և սուրբ խորհրդոց, և կամ
„ թէ խնդրէր ևս՝ դժուարին էր գտանել զոք
„ որ մատուցանէր . . . . Ոգբ ՚ի հայրապետաց
„ և ՚ի ժառանգաւորաց խնամոքն Աստուծոյ
„ էին անկեալ ՚ի ձեռս թշնամեաց, կամ ՚ի՞ն-
„ զողբեալ էին յետ անկանելոյ, մերկ և թա-
„ փաւր յամենայն ստացուածոց և ՚ի յետին
„ աղքատութեան տառապէին, որպէս զի
„ անհնար էր ընդ զկարօտութիւնս նոցա „ :
Ի բանից աստի մարթ է ՚ի միտ առնուլ և
զանցս որ անպին ընդ այլ մեծամեծ աշխարհս,
ընդ Պարսիս ասեմ, ընդ Պաղղիա և ընդ
Լիւրիկէ [1] : Այլ որպէս հնար էր ՚ի յոյզս շը-
փոթիցս այսոցիկ ուսուցանել զժողովուրդս,
պատրաստել քահանայս և վարդապետս : Որ-
պէս մարթ էր եպիսկոպոսաց այլ առնել Հօտից
իւրեանց, կամ ժողովս գումարել յընտրու-
թիւն եպիսկոպոսաց աթոռոց, և ՚ի զգուշու-
թիւն կարգաց և կանոնաց : Այսբքն Կրիգոր
այսպիսի բանիւք հանդուցանէ զմեհնութիւն

[1] Հերան . յնդայ . Ե . և Կիպրոս . և առ Գերմանս . և Թուղթ յղ . Յուղարկ . և առ Ազերբաքիս :

գրոց Յակեկիէլի. "Մի՛ ոք ընդ այն գժգոհեսցի ցի՝ զի վախճան առնեմ բանիցս. բազմացան վիշտք և նեղութիւնք՝ որպէս տեսանէքդ, իսկ. սուրբք պաշարեցին զմեզ. ամենայն ուստեք սպառնալիք մահու. կեսք հասանեն առ մեզ ձեռնատք, այլք լսեմք թէ՝ ի գերութեան կան, և զայլոց թէ սպանեալք իցեն։ Արդ եթէ կեալ իսկ չէ օրէն, զիարդ հնար իցէ խօսել զիմանալի տեսութեանց սուրբք գրոց։" Այսոքիկ որոյ կարի իրաւամբք մաղթէ եկեղեցի յամենայն խնդրուածս իւր զհաշտաղութիւն և զանդորրութիւն ամենայն աշխարհի՝ որպէս զպարիսպ ամուր կարևոր ի կատարումն պաշտամանց կրօնից։

Այս թեպետ դարձան խուժադուժք, Յաղղնացիքն քրիստոնեայք եղեն, և Յունքն գոբարդացիք յարիոսական աղանդոյն եկին յուղղափառութիւն, այլ ոչ մերկացին զնոր ժակաութիւն ընդ բազում ժամանակս։ Ժակաութիւն իմն ինձ աստ զննաւորութիւնն զայն որ ոչ անսայ առաքինորդութեան բանին, այլ կրեցն յօժարութեան զհետ երթայ, և սովորութեան։ Իսկ քանի՞ հզօր է ինքնին սովորութիւնն, Յորոկեցիս անդր տեսանեմք և յայլ ազգս Յունաց՝ զորս կոչեմք վայրենիս։ Զան զամենայն մարդիկ սակաւ է նոցա ցանկութիւն առ կանայս, և դուն ուրեք վարեալք ի բարկութենէ։ Համբերողք

էն, իրաւասէրք և ընդհակառակք, զուարթառատք և հիւրասէրք : Հանդերձ այսու ամենայնիւ մինչև ցայսօր ժամանակի կարի դըժուարին է որսալ՝ ի նոցանէ՝ ի քրիստոնէութիւն զայնոսիկ որ ոչ՝ ի մանկութենէ ընդելացեալ և մնեալ իցեն առ Նազղիացիս : Իբր ոչ եթէ չիցէ նոցա հանձար կամ իմաստութիւն՝ ի գործս յորս վարժեալ էն, այլ տկարանան նոր ինն ուսանել՝ ի վերայ : Ձմարթին խելամուտ լինել՝ եթէ ի Քրստուած արարիչ ամենայնի, իշխան և տէր ամենայն ազանց. և թէ հարկ է զի մի միայն հաւատք իցէն ընդ ամենայն աշխարհ. և թէ գոյ միւս այլ հանդերձեալ աշխարհ՝ յորում հոգևորական և եթերքարիք խոստացեալ կան. և ս առաւել չկարեն առնուլ՝ ի միտ զբարձրագոյնս և զհրաշալիս՝ ի խորհրդոց հաւատոյ : Քանզի մատուցանեն հեզութեամբ քարոզելեացն, չտան ընդդէմ բանս, այլ՝ ի վախճան քարոզութեանն՝ ահա և ոչ մի ինչ գտանի՝ ի հաւանութիւն ածեալ զնոսա : Ո՛չ եթէ ոք՝ ի նոցանէ մկրտութիւն իսկ խնդրեցէ, առ՝ ի շահ անցաւոր ինչ օգտի խնդրէ զայն, և յորժամակի առ դուշաքեայ ընկճին ինչ իրաց՝ որում փափաքէ . զոր իբրև ընդունի, ոչ ևս յուշ լինին նմա ահագին խոստմունքն, և անդէն վազվազակի առ իբրև դառնայ մարդակերք լինել ընդ նոսա , և չարաչանչ սպանանել զքրիստոնեայս : Այն և այլ ազգք

խուժադուժից խօթամիտք և ապուշք, որպէս Ալեկրիտացիք և Վասիրաստանեայք, առ որս և ոչ մի ինչ գոյ իմաստութիւն կրօնից, և ոչ ի միտ առնուն զոր ոչ է զգալի կամ շօշափելի։ Ապաքէն պարտ է նախ զսոսա մարդիկս յարդարել, և ապա քրիստոնեայս։

Արդ թէպէտ և ոչ այսպիսիք ոմանք էին Վաղղիացիք և այլ ժողովուրդք յաղթողք Հռովմայեցւոց, այլ չգոյր նոցա յայնժամ բնաւ դպրութիւն. որսորդութեամբ պաճարէին զկեանս, չպարապէին յարուեստ ինչ կամ յերկրագործութիւն՝ սովորեալք ցանգ յաւարառութիւնս և յարիւնհեղութիւն, որպէս զի և տեսիլ դիմաց նոցա երկիւղ և արհաւիրս արկանէր ի Հռովմայեցիս։ Ի գնացս նոցա հայեցեալ տեսանեմք զայսոսիկ տիպս կերպարանաց խժականութեան, գողդողդութիւն և զանհաստատութիւն. քանզի և ոչ պատշաճ է մարդոյ անձնատուր լինել կրից ըստ դէպս իրաց։ Վասնզի և պարտ է համարձակութիւն ասել՝ զի բազում ինչ անումն և հակառակ միմեանց գործք տեսանին ի վարս առաջնոց թագաւորացն մերոց քրիստոնէից։ Այլովիոս և որդիք նորա ընդ մեծարանս և ընդ նախանձայուզութեան կրօնից՝ գործեցին անիրաւութիւնս և անգթացան։ Արքայն քաջ Վոնտրան զոր ի կարգս սրբոց դասեաց եկեղեցի՝,

՝ Վկայաբ. Հռովմ. ի մարտ ԺԲ։

ընդ անհամար բարեպաշտութեան գործոն արար և վրիպակս բազումս. և Վասպուրական՝ երևելին այն մենաստանաց կառուցիչ՝ ախտաժուժն ոմն էր։ Իբր ոչ եթէ չգտանէին և յայնժամ հայրապետք գերապանծք սրբութեամբք և առաքելական վառեալք զինու, բայց զփոքրագոյնն ընտրէին 'ի չարիս. և առաւել սիրելի էին նոցա թագաւորք քրիստոնեայք՝ թէպէտ և վատք և անկատարք 'ի վարս, քան թէ հեթանոսք հալածիչք եկեղեցւոյ։ Վասն զի ըստ հաւատոյին դիւրաւ դարձելոցն 'ի խուժադուժից՝ անտի ևս յայտ է, զի ընդ երկերիւր ամն քահանայք համարէն գոգոս հռովմայեցիք էին ազգաւ, որպէս յանուանցն է գուշակել։ Վարձեալ ընդ ժամանակն ընդ այնոսիկ բազում գանգատք լսելի լինէին զերիցանց ոմանց՝ վասն դիւրաբար յոյժ ընդունելոյ նոցա անդրէն յապաշխարութիւն զմեղուցեալս. որ և այսօրիկ իսկ պատճառք յողդողդութիւն խուժադուժ ազգացն այնոցիկ երևի լեալ՝։

՝ ժող. 8ոլ. Գ, յամի 589. գլ Բ։ Գրիգոր. Խրատք. ԼՂ։ Խիդ. առաջք. ժէ։

ՅՕԴՈՒԱԾՈ ՀՈՐՈՄԻ

Խառնել խաժադաժից ընդ Հռոմայեցիս։

Ի՝ԶԳԴՆ երկոքին Հռոմայեցիք և խաժադաժք խառնեցան տակաւ ընդ միմեանս. քայց որպէս ի խառնուրդս երկուց երանգոց երկաքանչիւր կորուսանէ զիւրն, և երբորդ ինն ի վեր երևի եղծիչ նոցին, ըստ նմին օրինակի համբոյր և կամակ բարեստացան խաժադաժք, և հաղորդութեամբն ընդ Հռոմայեցիս ուսեալ հրահանգեցան. իսկ զՀռոմայեցիս ծածկեաց տգիտութիւն և եղկն թանձրամիտք, որպէս զի ի վեցերորդ դարէ և այսր փոփոխութիւն մեծ եր տեսանել[1] գնացս արևմտեայց։ Ի ժողովս ուրեք արգելաւ եպիսկոպոսաց չընթեռնուլ զիրս հեթանոսաց. և սուրբն Գրիգոր կտակեալ զԱեսիդերիոս զեպիսկոպոսն Ղենայի՝ վասն ուսուցանելոյ նմա զքերականութիւն՝ ՚ևմին իրի սակաւք յոյժ յայմմ հետէ ՚ի ձեռս առնուին զպատմագիրս և զքերթողս և զայլ մատեանս արտաքնոց, առ ՚ի պատրաստել յայնոսիկ աւելի գիրս որ զկրօնից Ճառէին. առ որ ոչ արդեօք աւելորդք են և արտաքնոցն գիտութեանց ուսմունք, յորոց հետէ ընտրութիւն դատողականին և ՚ի քաջ

[1] Ժող. Կարթագ. Դ. ։ Գրիգ. Թ. Թուղթ ԽԸ։

ծանօթութիւն հին աւանդից։ Ո՛չ առ՝ի չըգոյէ օգնականութեան սուտ դիւրաբար՝ի ներքս սպրդեալ մտին մատեանք պաշտաւնեայք յանուն մեծահամբաւ մատենագրաց եկեղեցւոյ, և կարի խիճ դիւրահաւանութիւն աքանչելեաց։ Մինչեւ անհրկեայելի էին ամենեցուն անբաւ աքանչելիքն որ գործեցան՝ի ձեռս առաքելոց և աշակերտաց, և որ օր ըստ օրէ գործէին՝ի գերեզմանս վկայից, մինչև ոչ ևս քրննել զհարաշս. և որ՝ի պատմութեանցդ բազմագոյնս՝ի մէջ մատուցանէր և առաւել զարմանալիս, ընդունելի ևս էր։ Խոբձեալ և տըգիտութիւն քնաբանութեան զամենայն ինչ նորանշան դէպս տայր նոցա համարել աստուածայնասք բարկութեանն գերբնական նշանակս. հաւատարիմ եղեն ախտաբեր, և ահարկու խաւարումն լուսաւորաց, և գիսաւորաց երևումն[1]։

Նայց զթերին գիտութեան և քաղաքականութեան առաւելուն ընդին բարեպաշտութիւն, և չէմարիտ առաքինութեանցդ հանդէս։ Խարեկարգութիւնք ամենայն զորս յառաջ քերի յերրորդ մասին գրոցս՝ կացին անխափան մինչև՝ի դարն տասներորդ[2]։ Նոյ ոչ քնաւ երբեք քրիստոնեայք և իշխանք և թագաւորք այնպէս անդադար էին՝ի սաղմոսերգութիւնս

1 Վարք Լուդ. Բարեպ. Բ. գլուխ ա. գլ. ժէ. և մասն
2 Թոմասին. Հրահ. մասն Գ, գլուխ ա. գլ. ե։

և յայլ պաշտամունս կրօնից՝ որպէս ընդ ժամանական ընդ այնոսիկ. և ոչ դարձեալ այնպէս զգուշացեալք պահոց սնդուքեաց և սրբութեան տօնից՝ որպէս ընդ դարսն ընդ այնոսիկ: Այլ զինչ առաւել հռչակաւոր քան զեկեղեցական դաս մեծին Կարոլոսի, որ գրեթէ հանապազ ի Ճանապարհորդութիւնս դեգերեալ, զհետ իւր տայր բերել զնշխարս սրբոց և զամենայն զարդս և զսպասս կարևորս աստուածային պաշտամանց, և զբազմութիւն ընտիր ընտիր երիցանց և դպրաց. և քանյայլ ամենայն երևելի եկեղեցիս մեծավայելուչ ևս և շքեղ կատարէին անդ պաշտամունք: Այսգաւօրքյաջորդք նորա՝ զնա կալան յօրինակ. և իշխանք որ ամբարձին զաթոռ իւրեանց ի վերայ փլատակաց տանս այսորիկ, նմանողք նորա եղեն յայսմ և յամենայնի: Ընդ ամենայն ժամանական ընդ այնոսիկ կացին հայրապետք պայծառացեալք սրբութեամբ վարուց, ջերմ եռանդն աղօթիւք, և վառեալք նախանձու փրկութեան հոգւոց. որում վկայեն որք տընկեցին զՀաւատս ի Նեղգիա Վտաղնացւոց և ի Վերմանիա, և յայլ հեռաւոր նահանգս հիւսիսոյ: Իշխանութիւն եպիսկոպոսաց աձեալ աձեր և զօրանայր: Ոչ միայն արժանաւորութիւն քահանայութեան և սրբութիւն վարուց նոցա, այլ և Ճարտարութիւն նոցա ի գործս և գութ առ ժողովուրդն մեծարոյ առնէր զը-

նոսա ։ Ի խուժել քարքարոսաց՝ բազում ան-
գամ խափան եղեն սոքա կատաղութեանց յաղ-
թականաց, և վերծուցին զքաղաքս իւրեանց
յաւարառութենէ, մահու անգամ դիմա-
դրաւեալք ։ Յետս ընդ կրունկն դարձոյց զՏ-
տիղաս ի Հռովմայ սուրբ քահանայապետն
Պ Եւտդիոս, ի Տրոյիոյ սուրբն Լուպոս, և
Ա՛երեղիոյ սուրբն Նիհանոս ։ Իսկ սուրբն
Պեսիդերիոս լանգրացի, և սուրբն Վիկա-
սիոս Հռեմացի ի սուր Ա անդալաց ետուն
զանձինս ի վերայ հօտին իւրեանց ։ Ի դառնալ
խուժադուժ թագաւորաց ի քրիստոնէութե՝
եպիսկոպոսք խորհրդականք եղեն նոցա, և մը-
տերիմքն ի պաշտօնեայս նոցա ։ Ջ անայլին ըստ
կարի հեզութիւն և գթութիւն տնկել ի նո-
սա, բարեխօսելով ստէպ վասն ծանուննս իսկ
յանցուցելոց, և բազում հնարս հնարելով
առ ի փրկել զնոսա ի մահուանէ ։ Ա անա-
սորիկ փութով մեծաւ զգուշանային և իրա-
ւանց ապաստանի՝ զոր մեծարանք մարտիրո-
սաց և երևելեաց ի սրբոց ընծայեալ էին շիր-
մաց նոցա, որպէս ի Պաղղիա շիրմին սրբոյն
Ա՛արտինոսի ։ Ա՛ստի արդեօք յառաջ եկն սո-
վորութիւն կուրացուցանելոյ զաչս մահապար-
տաց ։ որով բարձեալ ի նոցանէ զՏնարս ՚ին-
սելոյ այլում՝ չնորհէին նոցա զկեանն ապա-
շաւել ի չարեացն, արգելլով զբազումս ի նո-
ցանէ ի մեռանելոյն։

Եպիսկոպոսունք համարձակութեամբ իւրեանց առ իշխանս՝ արգելուին դարձեալ զանիրաւութիւն և զհարստահարութիւն. տային միխիթարել զաղքատս, և խորհել զօգուտ հասարակաց, որը վասն և կամակար ծախելին զգանձս եկեղեցեաց։ Ընդերցին խնդրողք որ ինչ միանգամ արարին քահանայապետք[1] յաւուրց անտի սրբոյն Կրիգորի մինչև ի ժամանակս մեծին Կարոլոսի առ ի շինութիւն աւերանաց քաղաքին Հռովմայ, և ի վերստին կանգնումն եկեղեցեաց և անկեալնոցաց, և ի նորոգումն պողոտայից և ջրանցից. և դարձեալ առ ի վերծուցանել զՅոտալիա ողջոյն ի կատաղութենէ Լոնգոբարդացւոց, և ի զօշաքաղութենէ Յունաց։ Ընդերցին զվարս սրբոյ Սիլվեստրոսի, Գրեգորիոսի, Աղեքսիոսի, Հոդեգարոսի և զայլոց Հայրապետաց, որք ձեռնտու եղեն ի յանձանձանս աշխարհին, և ի միտ առցեն զի քրիստոնէութիւն ոչ միայն չինասկ քաղաքականութեան, այլ և ամուր խարիսխ է այնորիկ. զի սէր առաւել քան զանձնային ինչ զօդէ զմարդիկ ի միասին, և տայ կեալ ի խաղաղութեան և ի շինութեան։ Վասն կայն վկայեմք զայն զի ոչ կարեն քրիստոնեայք միրապէս աշխարհակալել. քանզի աշխարհակալութիւնք մեծամեծք դուն ուրեք յաջողեն առանց ելուզակութեանց։

[1] Ձնասա. վարք Սահանայապ. Հռովմ։

Յայս զօրութիւն մեծ եպիսկոպոսաց և աբբայից յաւելաւ տակաւ՚ի վերայ և աշխարհական իշխանութիւն, և կացին տեառք ոչ ինչ ընդհատ յաւադայ աշխարհի, մինչև իշխանութիւն ունել որպէս զնոսա զօրաժողով լինել ՚ի սպասահարկութիւն պետութեան, և անձամբ առաջնորդել նոցա ՚ի պատերազմ։ Այս այսպէս խառնեալ էր ազգաց յայնժամ ընդ միմեանս, զի անխտիր ՚ի խուժադուժից և ՚ի Հռովմայեցւոց ընտրէին եկեղեցականք. սակայն դժուարին էր փոխել միանգամայն ըզբարս նոցա, և առնել զի մի ևս իցեն որսորդք և պատերազմողք զինի ձեռնադրութեանն, ուր և հրամանք թագաւորաց ստիպէին զնոսա տանել զինս։ Այս պարզաբար իսկ՝ պարտ է խոստովանել, զի իշխանութիւնք ժամանակաւորք կցորդեալք ընդ եկեղեցական աւագութիւնս՝ եղեն մեծապէս պատճառք թուլութեան կարգաց։

ՅՕԴՈՒԱԾՆ ՀԻՒԳԵՐՈՒՊԻ

Սովորութիւնք քրիստոնէից արեւելեայց։

Ոտար էին յարեալը իշխանութիւնք այսպիսիք. բայց այլ չարիք յայլոց իրաց առին պատճառս։ Օ՛ի հերձուածք անհնարինք որ բուսեալ ճաւալեցան անդ՝ խռովէին յոյժ զդիս, և դղրդեցին՝ ի քաղաքատեղիս զՀիմունս հաւատոյ։ Իսկ՝ Նեստոր, անտի Նշտիքեաս կամ մնանաւանդ՝ Նէոսկորոս՝ զանթիւս աշակերտեցին աղանդոյն իւրեանց։ Ընդդատար էին վէճք և խնդիրք, ուստի յոլովակի շփոթք և աղմուկք յառնէին։ Ի վեր քան զամենեսեան բորբոքէին զմարտն քահանայքն և կրօնաւորք առաւել նախանձայոյզք կրօնից. իսկ իրրև սաքա յետինքս թաղեալ զմիայնարանս իւրեանց իջանէին՝ ի քաղաքս վրէժխնդիրք կարծելով լինել Կիւտուճոյ, առ ամենայն բռնութիւնս բաւականք գտանէին։ Որչափ ինչ միանգամ եղերունս աղէտաւորս գործեցին Թշնամիք Վաղկեդոնի սուրբ ժողովոյն, այն ոչ ինչ է զանխուլ։

Ամեցեալ կայսերացդ աշխարհական բազկաւ իւրեանց դադարեցուցանել զչարիսն, առաւել և բազմացուցին զնոսա. զի փոխանակ հրաման տալոյ՝ ի կատարումն վճռոյ եկեղե-

ցեայ՝ պատուհասելով և նուաճելով զօրութիւն զխռովարարս և զապստամբս, ձեռնամուխ եղէն յիւրս հաւատոց, և հրովարտակս հանին առ ի խաղաղել զվէձս՝ խորամանկելով զդաւանութիւնն։ Այս ապա վատ մարգահաձոյ թեամբ եպիսկոպոսաց համաձակեալք՝ բուռն հարին և ի կարգաւորութիւն եկեղեցական օրինաց, կամ թէ ասել՝ի սպառ եղծեալ խանգարեցին զայնոսիկ. զի միայն օրէնք էին նոցա հաձոյք իւրեանց։

Վէպէտ և դեռ յոտին կայր ինքնակալութիւնն, այլ ոչ ևս էր այն Դուովմայեցւոց՝ բայց պիտակ անուամբ, և ոչ Յունաց՝ բայց միայն ըստ բարբառոյ։ Այսոցունդրդ իմն էր այն յամենայն ազգաց խուժադուժից, Վրակացւոց, Լիբիկեցւոց, Խաւարացւոց, Հայոց, Պարսից, Ալիւթացւոց, Այսմատացւոց, Խուզղարաց, Ոռւսաց. նմին իրի յամենայն ձառս պատմութեանց աշխարհի առ հասարակ չիք քան զՅոյնս յետին ժամանակաց ազգ պիղծ և ապականեալ։ Պահէին զառաջնոցն սխտոս՝ թափուր ի նոցին քաղաքականութենէ և ի գիտութեանց և յարուեստից. սակայն և այնպէս քրիստոնեայք էին ամենեքին, և բազում զգուշութեամբ կալան ցայսօր զկերպարանս քրիստոնէութեանն։

Ի տիրապետել Հագարացւոց յարևելս՝ անմահք էր Յունաց չունել կցորդութիւն ընդ

նոսա. բազումք ի նոցանէ հնազանդեցան նո-
ցա Հոգեպատոս և Հոյսորիս առանց ուրանալոյ
զքրիստոնէութիւն։ Օ՛ի ի հաստատել Հա-
գարացւոյն աշխարհակալութեամբն զկէտ
իւր՝ չկարացեալ զպաշտամունս քրիստոսա-
կան կրօնից ի քաղաքն յորս եգիտ զայն։ . .
. . . . . .
. . . . . .

Եւ դարձեալ՝ բազում ինչ առեալ է Հա-
գարացւոց ի քրիստոնէական սովորութեանց։
Յօթեն անգամ յաւուրն աղօթէին քրիստո-
նեայք. Հագարացիք աղօթեն հնգիցս։ Պա-
հէին քրիստոնեայք զաւուրս քառասուն. Հա-
գարացիք պահեն զաւուրս քսան և ինն՝ի գի-
շերի և եթ Ճաշակելով, որպէս առնէին յայն-
ժամ քրիստոնեայք։ Քրիստոնեայք պատուեն
զօր կիւրակէին, Հագարացիք զուրբաթուն։
Յողովմէ մեք յեկեղեցիս յաղօթս և ի լուր
ընթերցուածոց գրոց սրբոց և քարոզութեանց
երիցանց. աղօթս առնեն և նոքա ըստ դէնի
իւրեանց ի մզկիթս, ընթեռնուն զկուրանն
և ունկն դնեն Ճառից առաջնորդացն իւրեանց։
Վասն յուխտս յերկիրն զոր սուրբ կոչեն նո-
քա, և ի շրիմն կալծեցեալ մարտիրոսացն
իւրեանց. առնեն բազում ողորմութիւնս, և
ամենայն ուրեք չինեալ է նոցա անկեղծոցս։
Քն նոցա և ազգ ինն կրօնաւորաց որք միա-
բան կեան, և խոշտանգեն սաստկապէս զմար-

մինս իւրեանց. քանզի չէք և ոչ միւսերևելի ձրդնուելեանց, որում և մարդիկ թափուրք յառաքինութենէ առ մնապարծութեան կամ առ զոչաքաղութեան չկարիցեն նմանող լինել. բայց ոչ յանձն առցեն նոքա քնաւ կեալ՝ի լռութիւն և յաշխատանս անտես յայլոց. քրիստոնէին պահեալ է այս։

Ամանք՝ի Ճանապարհորդաց մերոց մնելոց՝ի ծոց քրիստոնէութեան՝ հիացեալք ինչ՝ի տեսիլ կերպարանացս այսոցիկ կրօնից և մարդկեղէն առաքինութեանց անհատատից, դարձան՝ի հայրենիս գայթ՝ի գայթ մնօք անխորիք՝ի հաւատս։ Իսկ զիարդ բուռն էր արգելք փորձութիւն քրիստոնէիցն այսոցիկ եղկելեաց՝ որ ծնեալ էին՝ի քաղաքս իշխանութեան նոցա, և հարկ էր նոցա կալանդ զանձնայն աւուրս կենաց իւրեանց՝ի վիշտս և՝ի հալստահարութիւս, և որոց՝ի հրաժարել նոցա՝ի հայրենի օրինացն՝ յայլազգութիւն անշուշտ առաջի կայր նոցա։ Օ՜ արմանք են արդարև զի ոչ ամենեքին նոքա անկան՝ի հաւատոց. և քաջմութիւն քրիստոնէից որ կան տակաւին ընդ քնաւ աշխարհս արևելից՝ի հազար ամաց հետէ՝ անժխտելի հաւաստիք են հզօր զօրուէ աւետարանին . . . Պարձեալ և քրիստոնեայք քնակեալք ընդ իշխանութեամբ կայսերաց թագաւորելոց՝ի Կոստանդնուպօլիս՝ ոչ դոյզն կրեցին ինչս՝ի հոգիս հաղորդութեամբն ընդ

Հագարացիս և ընդ զանազան ջոկս հերե-
սիովտաց՝ որովք ապականեր աշխարհն արևե-
լից։ Ամենք ի Հրեից և ի Արաբակինոսաց, որ
են Ընտրեալքն աղանդակիցք Հագարացւոց,
յորդորեալ հաւանեցուցին զկայսրն Եւսին ի-
սաւրացի խորտակել զպատկերս սրբոց։ Կայսրն
Մ՚ելքայել Թէոլոսան եր կէս հրեայ՝։ և մանուկ
կայսրն Մ՚ելքայել երրորդ ընդ զովղոս զեղխու-
Թեանց իւրոց ժպրհեր կերպարանել ՚ի պաշ-
տօնեայս եկեղեցւոյ, և անօրէն ծանակուԹիւ
կատարել զկարգս պաշտամանց կրօնից, և և
զսարսափելի խորհուրդ պատարագին՝։ Յետ
սակաւ ժամանակի և ահա այլ ոմն կայսր, Լե-
ղեքսանդր եղբայր Եւսինի իմաստասիրի,
հայհոյեր արձակ համարձակ զքրիստոնէու-
Թիւն, և տրջանայր ընդ բարձումն կռապաշ-
տուԹեան։ Յայս ամենայն հայեցեալ կաս-
կածեմ զի Յոյնք կացին աղանդասէրք ան-
կրօնուԹեանն որ անց Լ՚տալիա. այլ այս
կասկած զննչանից ոմանց ևեԹ. զի ընդ այն
ամենայն ժամանակս յամենայն սահմանս ինք-
նակալուԹեան Յունաց անսասան արձանա-
ցեալ եկաց քրիստոնէուԹիւն. և կացին անդ
վարդապետք հզօրք, եպիսկոպոսունք քաջք,
միաբանակեացք անուանիք, և բազում մարտի-
րոսք իսկ ՚ի պաշտպանուԹիւն պատկերաց
սրբոց։

1 Թէոփանէս։ Կեդրենոս։ 2 Կեդրենոս։

ՅՕԴՈՒԱՆ ՎԱՅՑԵՐՈՊ

*Յովսրութիւնք արեւմտեայց։ — Ընկարգութիւնք որ ի տաս-
նեւրդ դարու։*

ՅԱՐԵՒՄՈՒՏՍ հասատատուն կային հաւատաք, և ոչ ոք թերահաւատեր ի կրօնիցն։ ԵՒ գոյին հերձուածք, բայց ահեղին օր ըստ օրէ տգիտութիւն և խաւարասութիւն։ Վասն գործոց մեծին Կարոլոս ամենայն զօրութեամբ իւրով՝ի վերստին բարգաւաճումն գիտութեանց և եկեղեցական կարգաց. այլ ոգւոյն յաջորդք նորա չետս կացին ի գեղեցիկ առաջարկութենէն. և ահա ի յոռեգոյն ևս անկարգութիւնս պարանեցաւ եկեղեցի և աշխարհնոցա։ Վերմանեաք էին գհաւատս մշակք աւետարանին ի Պաքսոնիա, ի Ֆռաւարիա և յայլ կողմանս Գերմանիոյ. այլ ի բողոքումն այնորիկ ի մէջ ապերասան ազգաց հարկ լեալ էր մեծին Կարոլոսի սրով և պատուհասիւք ձեռն տալ քարոզութեանն։ Այսին իբրև բազմաւք զաւաջինն բռնի եկեալ էին ի հաւատս, և վասն դաւանութեան ժամանակին անհնար լեալ էր հովուաց հսկել ի վերայ նոցա և զամենայն կարևոր ինամն ցուցանել, զի խորամուտ կանգաղեսցին կրօնք ի քաղաքն այն ինչ մշակեալս։ Այս ի դէպ է կարծել զի եկաց մի

նաց անդ բազում տգիտութիւն և անզգայութիւն հոգևորաց, և վասն այսորիկ իսկ Թերևս դիւրաբար ի ներքս սպրդեցին յաշխարհս հիւսիսոյ հերձուածք և չարափառութիւնք։ Իսկ ընդ տանի մարտք որ յերկարեցին զկնի Լուգովիկոսի Կարեպաշտի՝ ետուն մուտս տգիտութեան և անկարգութեան յառաջագոյն իսկ կողմանս տերութեանն Կաղղիոյ։ Ի լուսն ամենայն աղետից յարձակեցան ի վերայ և Կոլմանդացիք՝ հեթանոսք տակաւին, և կողոպտեալ աւերեցին զամենայն սահմանս երկրին։ Հունք կամ Հունգարացիք՝ հեթանոսք և նոքա արշաւեցին յԻտալիա. Սարակինոսք դողացուցեալ բազում ժամանակս զձովափունս՝ կալան ապա զՊուլիա և զՍիկիլիա. Թող և զՍպանիայեցոց աշխարհն զոր ի Հարիւր և աւելի ամաց հետէ ընդ ձեռամբ ունէին. որով և խուն այն ինացուածք սովորութեանց և քաղաքականութեանն Հռովմայ ի սպառ եղծեալ անհետացան։

Սակաւ էր աւաղելի կորուստ արուեստից և դպրութեանց և քաղաքականութեան, եթէ չինասէրն մեծապէս և կրօնք. այլ կրօնք չուներին հաստատութիւն առանց դպրութեան և հրահանգաց, որ պահպանէն զհաւատս և զուղղութիւն բարոյականին։ Հարկ ի վերայ կայ վերծանել զգիրս սուրբս, ուսուցանել և մեկնել ժողովրդեան. պարտ է հանել խնամով ա-

ռաքելական աւանդութեանց, և երբէք եր-
բէք սրբել զնոսա յաւելորդաց որ յինքնիշխա-
նութենէ ոմանց յաւելեալ ՚ի նոսին։ Զայս
ամենայն առնել գժուարին էր յոյժ ՚ի տառա-
պագին ժամանակին զորմէ խօսիմքս։ Հա-
զուագիւտ յաշխարհականաց և գիրս ոչ ուսնէին, և
չգիտէին և ընթեռնուլ. և եթէ էին իսկ
մեծամեծաց ոմանց հին մատեանք ՚ի թան-
դարանս, և զայն չիմանային, զի ՚ի լատին բար-
բառ էին գրեալք, որ ոչ և ես էր հասարակաց
իմանալի. և չէ և ես ոք գրէր գիրս ՚ի գաղղիա-
կան կամ յայլ յաշխարհիկ լեզուս, որք այն
ինչ սկսանէին երևեալ։ Իսկ պաշտամունք և
կեղեցւոյ և ընթերցուածք հասարակաց թէ-
պէտ և լատիներէն կատարէին, այլ դուն ու-
րեք մեկնէր ոք զայն։

Մեծամեծք ՚ի բերդս իւրաքանչիւր մեկու-
սացեալ կային, և անդադարք ՚ի սակաւաձեռն
պատերազմից ընդ միմեանս՝ չմարթէին իջա-
նել յեպիսկոպոսանիստ քաղաքս, և առաւել
յորժամ ընդ եպիսկոպոսս դէպ լինէր կռուել
նոցա։ Այլ ի իրի շատ համարէին առաջի կալ
պատարագի դրան երիցու իւրեանց առանձինն
և ժամերգութեանց մատակայ մենաստանաց.
այլ միանձանց ոչ էր անկ վարդապետել, և չէր
իսկ նոցա իշխանութիւն յանդիմանել զայլս։
Ընդ ուրեմն յինեներորդ դարու զանգատին ե-
պիսկոպոսք՝ զի ձոխք և իշխանք հեռացեալ

կային յեկեղեցեաց, և ստիպէին զնոսա գոնեա յաւուրս երևելի տօնից գալ անդր։ Այլ ի չորս աւուրս տարւոյն տակաւին օրէնք էին մատչել ի հաղորդութիւն համարէն քրիստոնէից, ի ծննդեան, յաւուր աւագ հինգշաբաթու, ի զատկին և ի պենտեկոստէի[1]։

Այս ոամիկն ոչ ինչ գիտնագոյն քան զազատն եր, բայ ի բնակելոյն ի քաղաքս ուրեք՝ յորս հովիւք քաջք առաջնորդէին։ Այլ այնպէս լռեալ էին քարոզութիւնք առաջնորդաց, մինչև կանոնս սահմանել ժողովոց ուսուցանել ժողովրդեան յաչխարհիկ լեզու գէթ զհանգանակն և զերեսունական աղօթսն, այս է զկարևոր մասունս կրօնից, զոր արդ քրիստոնեայք վարդապետութիւն կոչեմք։ Արդ ցոր վայր եհաս ուղիտութիւն և դիւրահաւանութիւն յաչխարհսն միգոյատ խաւարեալ ժամանակի, ոչ ոք հաւատայր եթէ չտեսաներ ըզհաւատին ցայսօր ի հնագոյն յայսմաւուրս։ Վանդի բազմագոյնք յանհարազատ վարուց մարտիրոսաց և այլոց սրբոց ի նոյն ամ զկնի իննեորդի դարուն ի վեր երևեցան, Ճարտարեալք ի ձախողակի բարեպաշտութենէ առ ի խմբել զժողովուրդն ի տօնս նոցա։ Այս վասն այնորիկ բազում այն է զի երևելեացն ի սրբոց առաւել ևս խարդախեալ գտանին վարք։ Ոչ այսու ժամանակաւք հնարեցան և

[1] Յաղ. Տիկին. յամի 855, գլ. ԺԵ. Լևն. Ճառ Դ։

սուտանուն կանոնագիրք Խսիդորի, որք մեծաւ պէս ձեռն ետուն ի փոփոխումն նախնեացն օ րինաց։

Երիցունք իսկ և ժառանգաւորքն մարթէին ուսանել զկարևորս՝ հարկաւորեալք զէն առ նուլ ընդդէմ թշնամութեան հասարակաց ի պահ անձանց և ընչից եկեղեցւոյ, ուստի կե րակրէին և ինքեանք։ Ազգմանց ի նոցանէ ըս տիպեալ յաղքատութենէ՝ ձեռն արկեալ էր յանարգ արուեստս, կամ աստանդականք քա ղաք ի քաղաքէ շրջէին հայթայթել զկեանս առ եպիսկոպոսի ուրուք կամ առ իշխանի։ Յոր գիտութիւն ապա հնար էր նոցա պարա պել, կամ որպիսոյ՛ կարգաց ուղղութե պատ կառ կալ։ Ազիւ ի ժողովս ուրեք կանոնի կոսաց մայր եկեղեցեաց, և ի մենաստանս ո մանոյ կացին անկորուստ աւանդք գիտութեանց և քրիստոնէական վարուց. զի և կանոնիկոսք և միաձուկք թուլացեալ էին ի նախնեացն առաքինութենէ. որպէս յայտնի է ի գեղեցիկ օրինագրութենէն Ղուկիոսի Խարեպաշ տի ի նորոգումն կարգացն այնոցիկ. այլ աղ մուկ շփոթից որ իսկ և իսկ յետ այնորիկ յա րեան, ի թշուառագոյն ևս սահման հասու ցին զնոսա. զի բազմագոյնք ի մենաստանաց եղեն յաւար Ղորմանգացւոց, և քանդեալ ա ւերեալ ի հուր այրեցան. և բազումք ի միայ նակեցաց և ի կանոնիկոսաց անկան ի սուր

նոցա, և կեսք ցրուեալ կեցին ընդ աշխարհիկս։

Օ մտաւ ած արդ զդառն տառապանս աղքատաց ՚ի հասարակաց աղէտից. որպէս հը նար էր այլ և յանձանձել զնոսա երիցանց, որ և ինքեանք տագնապէին գտանել զաւուրն պարէն։ Եւ ոչ մարթ էր գտանել զողորմութիւն ՚ի ժամանակին յորում սոքին կորստական սոփեր ուտել զմիս մարդկեղէն։ Վասնզի չէր ազատ վաճառականութիւն առ ՚ի ընդ զկաթոլիկութիւն աշխարհաց ոմանց յառաջագոյն այլոց։ Եւ հաղիւ գոյին եկեղեցեաց անօթք սուրբք. և ՚ի ժամանակիս յայսմիկ եղան կանոնք չվարել ապակեղէն՝ եղերեթաց կամ փայտեղէն բաժակօք, և զպղնձիսն իսկ անօթս նետրելով հրաման տային ՚ի գործ ածել։ Իբր ոչ եթէ տակաւին չհնային եկեղեցեաց կալուածք բազումք, այլ մեծութիւնք նոցին զնախանձ գրգռէին զիշխանաց և զթագաւորաց, որք զէն ՚ի ձեռս արձանացեալ կային հանապազ։ Զայ նախակի սրբ անարժանք գրաւէին զաթոռս եպիսկոպոսաց. և բազումք ՚ի մծտակայ իշխանաց զորդիս իւրեանց դեռ ևս տղայս՝ զհնոյ զբութեամբ եպիսկոպոսութիւն կացուցանէին առ ՚ի կողոպտել զեկեղեցիս յանուն նոցա։ Այսպէս այսմ օրինակի Հուգոն որդի Հեբերտոսի կոմսին Վերմանդիոյ՝ մեծաւ յաճոյս Հռեմայ ՚ի հնգամեայ հասակի։ Եւ ազատ եղև Հռոմ՚ի դառն աղետից աստի ՚ի զօրա-

նալ սակաւազօր բռնաւորաց չուրջանակի զնո-
վաւ։ Այլ ահա ՚ի տանեբորդ յայսմ դարու
յառաջին իսկ ամին տիեզերաց՝ յորում ցայն
վայր անվթար պահեալ էին կարգք եկեղեցւոյ,
՚ի վեր երևեցան բռնակալութիւնք, և ան-
դրէն ՚ի բաց տարագրութիւնք։

Այլ ժողովք իսկ դուն ուրեք գումարէին՝
խափանեալք ՚ի համաշխարհական հակառա-
կութեանց, որք այնպէս ահագինք էին՝ զի եր-
կիւղ էր և քաղաք ՚ի քաղաքէ չանապարհոր-
դել. նմին իրի ոչ միայն սատիկ էին աղէտք
եկեղեցւոյ, այլև ապաքինումն դժուարին։ Յի-
շատակք նախնեացն օրինակաց և կարգաց ջնջ-
ջէին տակաւ և կորնչէին։ Չեռանելով մարդկան
անպատիժ անպատուհաս զյանցանս՝ ընդելա-
նային նմին և խստանային։ Ել և սովորական
ինն էր հիւանդութիւն, այլ թմբրութիւն և ան-
զգայութիւն հոգւոյ։ Չխարհ ամենայն քրիս-
տոնեայ էր այնու հետև, որպէս զի ընաւորեալ
թուէր ՚ի մարդիկ քրիստոնէութիւն, և նոյն
և մի ինչ կարծէր քրիստոնեայն և մարդ։ Ել
և խոիր էր քրիստոնէի, այլ որպէս մանն ինչ
սովորութեան լեալ քրիստոնէութիւն՝ յարտա-
քին ձև և եթ սահմանէր։ Ել և առաքինու-
թիւն կամ ամբարշտութիւն որոշէին ՚ի մէջ
քրիստոնէի, հրէից և անհաւատի, այլ արարո-
ղութեամբք և եթ զանազանէին ՚ի միմեանց,
որք ոչ ինչ լաւագոյնս յարդարեն զմարդիկ։

ՅՈԻՒՐԱՆ ԵՒ ՆՈՒՆԵՐՈՒՊ

Պահպանուեցաւ կրօնից։

Եթէ ոչ Քրիստոնէութիւն, անհնար էր նմա ընդդէմ կալ ահագին բախմանն շուրջանակի. այլ յայտնի արար Քրիստուած թէ ընակէ յեկեղեցւոջ իւրում, և ոչ ինչ ՚ի յեղափոխութեանց մարդկան ունկին դը ղորդել զնա՝։ Այս աւանիկ աքանչելի ինն փայլեալ ցուցաւ զօրութիւն աւետարանին յամին յայսոսիկ թշուառութեան. զի թէպէտ և խաւար թանձրամած ունէր զաշխարհ, այլ ամենեքեան, և կանայք անգամ գեղջուկք, դաւանեին և պաշտեին զմի Քրիստուած արարիչ երկնի և երկրի, զՀայր և զԲՈՒրդի և զսուրբ Հոգին, և զՅիսուս Քրիստոս զնա ինքն միածին Որդին Քրիստոսոյ փրկիչ ամենայն մարդկան։ Քրմենեքեան դաւանէին թէ գոյ դատաստան և հանդերձեալ կեանք։ Համարէին կարևոր օրէնք բարոյականին յայտնի էին և խոստովանեալ յամենեցունց. ուր ՚ի բարգաւաճեալ աւուրս հնոյն Հռոմայ ոչ դադարէին իմաստասէրք խնդիրս յուզել զնոցանէ։

Եւ թէպէտ ոչ ըստ օրինացս այսոցիկ էին դնայք մարդկան, և սակաւք ոմանք ՚ի խոս-

՚ Սաղմ. խե. 6։

տովանողաց զնոսին՝ ի միտ առնուին յայնցանէ զկարևորս յուղղութիւն վարուց, սակայն և այնպէս մեծ էր աղդեցութիւն նոցա յոգիս վատթարագունից իսկ ի քրիստոնէից։ Այսպիսի լինէին բազում չարեաց, և զկարի իսկ խուժադուժս յաղագս ոչ դոյզն ի հեղութիւն ամրեալ՝ անսացողս և համբոյրս յարդարէին։ Այնէ ոչ զգուշանային ի մեղաց, գոնեա ոչ սակաւք ի մեղուցելոց ի վերջ և յապաշաւ գային, և գէթ անձամբ զանձինս դատապարտէին։ Պարզաբար ասացից. քրիստոսական հաւատք տարածեցին զամենեքումբք առ հասարակ զզգացումն մարդասիրութեան, զպատկառանաց և պարկեշտութեան, որ դուն ուրեք գըտանի այլուր՝։

Ի ժամանակին յորում այնպէս անչքացեալ դնէր վայելչութիւն եկեղեցւոյ՝ անկորուստ եկաց միաց աւանդութիւն վարդապետութեան և ուղիղ վարուց։ Ի մբաւանն յամենայն դասս մարդկան ընդ արևմուտս առ հասարակ վարդապետք հզօրք և սուրբք մեծամեծք։ Պայծառացան անդրէն մենաստանք ի Պաղեստինա հիմնարկութեամբ երևելի վանայն Կլմիոյ, որոյ առաջին աբբայք՝ սուրբն Դոմն և սուրբն Յովհաննէս ականաւորք էն բարեպաշտութեամբ և գիտութեամբ։ Կառոյց Եւտալիա սուրբն Հռոմանոս զվանս Կամուղոլեայ և այլ բա-

՝ Եւսեբ. Պատրաստ. աւետ. Ա, Գ, ևն. Զ, Ը։

զուսմ մենաստանս, և ետ ընծայեաց աշխարհի բազում աշակերտս երևելիս։ Զայնու ժամանակօք տեսանեմք և բազում հայրապետս լցեալս աստուածային նախանձու, զսուրբն Ներսոստանոս Հինգղիա, և զսուրբն Ուլգաբիկոս ի Գերմանիա, զսուրբն Գալեբտոս ի Հռհեմի՝ զառաքեալն Գաղմատացւոց և զվկայ. զսուրբն Վռիփակիոս զնահատակեալն ի Հռոսս, և զսուրբն Երունեն ի Պրուսիա, և զսուրբն Գերարտոս ի տհմիկ տանէ Վենետկոյ, պլովչն հանդերձ, որք քաջութեամբ իւրեանց և առաքինութեամբք և նշանագործութեամբ՝ հաստատուն կալան զաւանդ ողջմիտ վարդապետութեան և ըզկարգս եկեղեցւոյ։ Ի նմին ժամանակի եւ ընդելի եղեն սրբութեամբ և բազումք յաշխարհիկ արանց, ևս և յիշխանազանց, որպիսիք ոմանք էին Գերարդոս կոմս Գրիլակայ, Ստեփանոս թագաւոր Հունգարիոյ հանդերձ որդւով իւրով Էմերիկաւ, կայսրն Հնրիկոս և արքայն Հռոբերտոս։

Ի սրբոց աստի, և մանաւանդ յայնցանէ որք ի նորահաստատ ազգս կային, որպէս սուրբն Հնրիկոս և սուրբն Ստեփանոս, է ի միտ առնուլ զառաքինասիրութիւն ազգացն որ խուժադուժք ի հեռումայեցւոց անուանէին։ Այլ ըստ ոչ ոքուստ, զանկեղծութիւն, զսրբութիւն, զարհամարհութիւն հաճոյից և զգրգա

նաց մարմնոյ. յօժարք էին յարդարութիւն, ի հիւրընկալութիւն և յողորմածութիւն։ Յետ միանգամ առնէր զՀաշակ աւետարանին լըջա- միտ և անկեղծ և արի մարդկանն, ընկալան զայն այնուհետև սրտի մտօք, և վանդրեցին Հար- տարել մեկնութիւնս, և չկային յետս զար- հուրեալք ի խոչից։ Յութեպետ գնացք նոցա ոչ միշտ անյողդողդք էին և անայլայլակք՝ որ- պէս զնախնի Յունացն և զՀռովմայեցւոց, սակայն չդիտէին ձեռանալ կամ կեղծաւորել։

Խնամք և զօրութիւն սրբոց արանցս այսո- ցիկ աւագաց սկիզբն արարին դարձեալ աներ- կեւանութեան հասարակաց, երդմնի առնելով զնշխանս առ հասարակ՝ ի խաղաղութիւն տէրունական ,,. քանզի այսպէս անուանէին զանիշաչարութիւնն՝ որ ձգեր յերեկոյէ չորեք շաբաթուն ցլուսանալ միաշաբաթին յեօթ- նեակս իւրաքանչիւր։ Խոկ եկեղեցականք և միանձունք, պանդուխտք և երկրագործք կային յակաստանի զամենայն ժամանակս[1]։ Ա յս կա- նոն անյիշաչարութեան և ի բազում ժողովս հաստատեցաւ սպառնալեօք բանադրանաց. այսքան էր տակաւին զօրութիւն կրօնից ի միտս ամենեցուն, թէպետ և հիմունք քաղա- քաժողով միաբանութեան գրեթէ կործա- նեալ էին։ Դարձեալ և յաղագս բանադրելոյ զՀարկանողս եկեղեցականաց աստանօր լինին

1 Գլաբեր. գիրք Դ. Ե. Ե. ա, յամի 1041։

քանք առաւել քան յառաջնայն ժամանակս. զի յառաջնին դարս ոչ ոք մտաբերէր յայն, քանզի մեծարանքն ինքնին բաւականք էին խափանել զչարն. այլ յայսմ հետէ եկեղեցականք զօր հանապազ նշաւակ կային բռնութեանց։

ՅՕԳՈՒՆՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին ծաղկումն բարեպաշտութեան և եկեղեցական կարգաց։

ՕԳՈՍՏՈՍ յեկեղեցեաց քանդեալ կործանեալ էր Կորմանդացւոց, և զայլս ևս թողեալ անխնամ՝ կործանել նոցա իւրովի, ձախողակի կարծեօք մծտալուտ ի վերայ հասանելոյ կատարածի աշխարհիս անվրէպ ի հազարերորդի ամի փրկչին։ Իսկ իբրև անց զնաքօք զարհուրանաց աւն, և հայեցեալ տեսին զի դեռ ևս անսասան կային տիեզերք, ձեռն արկին կանգնել վերստին զեկեղեցիս՝ հոյակապս յոյժ ըստ ժամանակացն այնոցիկ, և բարձր քան զառնայն տունս և զապարանս մեծամեծաց[1]։ Կարգեցին և հաստոյթս առատս յորոց մեծ մասն էր ի տասանորդաց խափանելոց՝ և յընչից եկեղեցեաց գրաւելոց ի խը-

[1] Գլաբ. Գ. ՃԻ։

ռովութեան ամեն։ Ընդ ամենայն տեղիս մեծաւ ջանիւ զհետ եղեն ի ինդիր նշխարաց սրբոց, և զմեծագինս յականց պատուականացն ի կիր արկին ի զարդ նոցին, որպէս և տեսանել ցայսօր ի գանձարանս նախնի տաճարաց։ Յայնու ժամանակաւք ձեռն ի գործ արարին և ի կարգաւորութիւն երգոց և հանդիսից աստուածային պաշտամանց։ Ի նմին մեծասանեղորդ դարու Կոստիդոս միաբանակեաց Ալեքսեոն քաղաքէ Հռոմոբրիոյ հնարեաց ըզխազս, և զեղանակն՝ որ հիմն է համօրէն արդի երաժշտութեան։ Նշանաւք բարեպաշտօնաք զոր ի վեր անդր յիշատակեցի՝ օգնական լինէին ամենայն մասանց բարեացս այսոցիկ առատաձեռնութեամբ իւրեանց և օրինակաւ։ Յուագեմք ցայսօր զկորդոն զոր շարագրեալ է Հռոբերտոս, արքայն այն որ փառս գրեր անձին կալ ընդ երգեցողս յեկեղեցւոջ[1]։

Զգաստեմ ուրեք այնպէս երկայնաձիգ սաղմոսերգութիւնս՝ որպէս ի ժամանակին յայնմիկ. որ և յայտ է ի ժամերգութեանց Յարթուսեանց և այլոց կարգաց կրօնաւորաց որ յայնմ գարու սահմանեցան։ Յայնու ժամանակաւք միանձունք Լուսնեան վանաց յատնախեցին զպաշտօն ննջեցելոց. և սուղ ինչ յետոյ սկիզբն եառ ժամերգութիւն սրբոյ Կուսին։ Յո բաղումք առ եռանդան զաղմոսն

[1] Հելոյ, վարք Հռոբ։

ծայր ՚ի ծայր քաղէին հանապազօր ՚ : Ըստ ա-
զօթից և ժամերգութեանց առաւելին պա-
տարագք և սեղանք : Ել գայր թիւ այնուհետև
մատրանց . իշխանք իւրաքանչիւր ցանկային
ունել ՚ի դղեակս իւրեանց մատուռն , որպէս
զի մի լցեալ նոցա ՚ի ժամանակի պատերազմաց
խափանիլ յառաջիկայ լինելոց պատարագի և
պաշտամանն աղօթից : Այս մնապարծութիւն
իսկ անդ ՚ի ներքս խառնէր : Պատշաճագոյն
թուէր նոցա ունել գրան երէցս ՚ի տան , ամենք
համարելով յեկեղեցիս հասարակաց խառն
ընդ ռամկին կալ : Վակայն անհնար էր պաշ-
տամանցն յառնախելոց յայնքան ՚ի բազում
տեղիս կատարել նովին մեծափառութեամբ
որով կատարէին զայն հայրապետք իւրաքան-
չիւր շուրջ պատեալ ՚ի գաւուց եկեղեցակա-
նաց , որպէս սովորութիւն էր յառաջին դար :
Այս դարձեալ ոչ ևս գիտելի էր նոցա վասն ո-
րոյ իրաց սահմանեցանն բազումք յարարո-
զութեանց , զորս գեռ ևս պահէին աւան-
դութեամբ . և էին իսկ հասու նախնեացն
խոհականութեան : Ոմին իրի ոչ ևս յետ այնց
ժամանակաց զնոյն փոյթ ՚ի մէջ առնուին հե-
ռագոյնս յաշխարհական բնակութեանց և ՚ի
բազմամբոխ վայրաց կանգնելոց եկեղեցիս ,
կարծելով կորուսանել այնու ընդվայր տեղի
բազում ՚ի քաղաքս : Խարձան յեկեղեցեաց

1 Խարն . ՚ի վկայաբ . ՚ի նոյեմբ . ք : Պետր . Դամաս . ՃՀ ք :

դռնապանք և այլ աստիճանաւորք, որոց գործ էր պահ ունել մաքրութեան և կարգաց և լռութեան։ Յաջորդեցին նոցա եկեղեցապանք և սպասաւորք աշխարհիկք, և կամ թողաւ ի սպառ այսոցիկ սպասաւորութիւն. որով եկեղեցւոյ հանդէսք լցան չիմութիւք և աղմկաւ։ Իշխանք և դատաւորք և աւագք ժողովրդոց ի միասին սկսան բազմել ի դասուն ընդ վճռակաւորս, և ի բառնալ մեծարանաց՝ ամբոխին առ հասարակ և կանայք իսկ համարձակեցան մեծ մատչել ի սեղանն սրբութեան[1]։

Նոյց ելին իսկ ի նմին ի մետասաներորդ դարու ահագին ևս զեղծմունք արժանի ուշադրութեան, սիմոնականութիւն և անսրբութիւն։ Ցգիտութեան և աղքատութեան զօշաբաղս առագրեալ էր զերիցուսն, և անզգայս տառապանաց եկեղեցւոյ, զպատաղեալսն ի հայթայթանս կենաց իւրեանց։ Ոչ ածաւէին զհասս պաշտամանց եկեղեցւոյ և զաւաղնորդութիւնս անգամ. բազմագոյնք յեկեղեցականաց հարկն պահէին հրապարակաւ, և ոմանք անամօթաբար բանս իսկ ընդդեմ խօսէին կարգի կուսութեան՝ նորամուտ իմն սովորութիւն վարկուցեալ զգին, մանաւանդ ի Գերմանիա, յորում հանապազ գայթ ի գայթի կացին կրօնք։ Ոչ աքա տգէտք և թանձրամիտք՝ արուեստ իմն համա-

[1] Գլաբ. Ռ. ՚ի Պետր. Դամիան. ԺԷ, ԺԸ։

րեին զերիցուԹիւն, և իւրաքանչիւր ՚ի նո-
ցանէ կայր առանձինն՝ ոչ ինչ միտ եդեալ
ուսման կամ աղօԹից, այլ ՚ի անտեսուԹիւն
ընտանեաց պարապեալ։ Ի յայտ անհաս էին
մտաց նոցա գերաշխարհիկ պարծանք կուսու-
Թեան, և համարեին զսուրբ լուծն զայն բըռ-
նաւորուԹիւն անհանդուրժելի։ Այլ այս իսկ
էին պատճառք կատաղի սրտմտուԹեան նոցա
ընդդէմ Կղիպսոյի եօԹնեերորդի Հռոմայ
հայրապետին։ Մասնաւորեալ Պետրոս Դամիանոս
օգնականուԹեամբ Լևոնի ինններորդի և այ-
լոց քահանայապետաց որ կային յաւուրս իւր՝
՚ի դիմի հարաւ քաջուԹեամբ անօրէն սովո-
րուԹեանն. և առ արմատախիլ առնելոյ զան-
կարգուԹիւնն՝ հաստատեցին նոքա զկարգ
ուխտաւոր կանոնիկոսաց որք կային յօրինակ
եկեղեցականաց կալոյ միաբան ՚ի միասին, և
զգուշանալոյ կանոնական սահմանաց. և քա-
զուժ այն էր զի ՚ի ժողովոյ անտի կանոնիկոսաց
ընտրեին առաջնորդք և հովիւք՝։

՚։ Պետր. Դամիան. ԹՂ, ԹՀ։

ՅՕԳՈՒԱԾՈ ԻՆՆԵՐՈՐԴ

Փափռուսին կարգաց ապաշխարութեան։

Լսեմ յուղղութիւն աշխարհականաց գուն գործեցիր վերստին հաստատել զկարգս ապաշխարութեան։ Վասն եւ ամենեցուն միաբան էին կարծիք, զի ըստ սահմանեալ կանոնաց պարտ էր դնել զայն. այլ որոց ծանուցնա մեզանէքինն՝ զէն 'ի ձեռս էր, և անլսողք լինէին հրամանին և ապստամբք։ Խազումք եւս կամիլ ընդունել զապաշխարութիւն, այլ ըստ նորահնար կանոնաց ինչ որք մեղանիին յոյժ գնահինի խստութիւնն։ Ընդ ատեք եւս յետ ընդունելոյ զայն՝ ոչ առաւել ինչ ուղղութեան ցոյցս տային. որպէս զի ոչ այլ ինչ էր տեսանել, բայց վերստին անկումն 'ի նոյն մեղս, և անդրէն ապաշխարութիւն անօգուտ[1]։ Յորս քանզի ըստ մեղաց իւրաքանչիւր յաւելուին ապաշխարանք, որոց միանգամ երեմնիցս յանցուցեալ էր մարդասպանութեամբ, և երեսնիցս 'ի ատելգինութիւն կամ 'ի չնութիւն անկղիտացեալ, պարտ էր նոցա ապաշխարել ընդ բազում դարս. և աստի սկիզբն առին ներողութիւնք բազմամեայք նշանակեալք 'ի կանոնակս ուրեք։

1 Պետր. Դամման. Է։ Գրիգ. Էր, գիրք Է, Թուղթ ժ։

Օ՛ի որովհետև չպահանջէ ՚ի մէնջ Ա՛ստուած զանհնարինս, այնոցիկ՝ որոց ապաշխարանք ընդ ամենայն ժամանակս կենաց իւրեանց և անդր ևս ձգէին, շատ էր ծախել՚ի նոյն զճնացեալ աւուրս կենացն, և մեկուսանալ յառաւել ևս աներկևանութիւն անձանց ՚ի վանս ուրեք։ Այլ և զի դիւր առնէին նոցա՝ փոփոխելով զգործս ապաշխարութեան. զոր և յամենայն ժամանակս օրէն եղև առնել ըստ չափու զօրութեան կամ եռանդան ապաշխարելոցս։ Վ՛կայէ սուրբն Պետրոս Դամիանոս, զի փոխանակութիւնս այս հաւասար ապաշխարանաց ընդունելի էր ամենեցուն առ իւրովք ժամանակօք. և զկիր հաւասարութեան իսկ նոցա ՚ի ներքս ածէ ՚։ Օ՛ի հարուածք խարազանի երիք հազար ընդունի զմիոյ ամի կանոնական ապաշխարութիւն, և տասն սաղմոսք երգով և անդադար ձաղկանօք համեմատեր հազար հարուածոյ. որով համարէն գիրք սաղմոսաց հաւասարէին հնգից ամաց ապաշխարութեան։ Այս քանզի հաղորդութիւն սրբոց ածէ երբեմն զ՛յաուած ՚ի հաշտութիւն ընդ մեղաւորս վանն հայցուածոց և գործոց բարեաց եղբարց նոցա, ոմանք ՚ի սրբոց զպինու ժամանակօք կամակար եռուն զանձինս յապաշխարութիւն վանն այլոց։

Վ՛կանաւորն ՚ի նոսա էր սուրբն Դոմինիկոս

՚ Պետր. Դամիան. վարք սրբ. Հռոդ. և Դոմին. գլ. ՃԻ.

Լ՝որիկատոս կամ զրահազգեստն, այսպէս կո-
չեցեալ վասն շապիկս վերոս զգեցուց՝ զոր ՚ի
ձաղկէն ևեթ մերկանայր : Այս այսպէս անո-
ղորմ և ստէպ ձաղկեր զնձեն, յաւելեալ յայն
և պահս յաձախս և հակմունս և ծնրադրու-
թիւնս և զանձնային ազգի ազգի խիստ չըգ-
նուԹիւնս, զի սոսկումն է ընԹեռնուլ զվարս
նորա արարեալ՚ի սրբոյն Պետրոսէ Կամիա-
նեայ առաջնորդէ նորա : Օ՝ արհուրի բնու-
Թիւնս մեր սովորեալ արդ ՚ի փափկուԹիւն՝
ընդ անընդելեռանդն որով վառեալ էին քա-
զումք ՚ի սրբոց ժամանակացն այնոցիկ . բայց
Լ՝ուռւած արդեօք արկ ՚ի միտս նոցա այնպիսի
վարել կեանս առ ՚ի պէտս ժամանակին :
Վ՝ասնզի բնակէին նոքա ՚ի մէջ խեղաԹիւր և
խստապարանոց ազգի, և հարկ էր զգալեօքս
ընդոստուցանել զնոսա : Վ՝ասնք և յորդորք
սակաւ ազգէին ՚ի Թանձրամիտ և յանբան
մարդիկն սովորեալ յարիւնհեղուԹիւն և
յաւարառուԹիւն : Վ՝ամահչին զչափաւոր
ՃգնուԹեամբք վարժեալքն և ածեցեալք ՚ի
խիստ աշխատուԹիւնս և ՚ի մարտս պատե-
րազմաց, և որք զրահս հանապազօր զգե-
նուին :

Լ՝ալ երբեմն հայեցեալ տեսանէին զն ոմն ՚ի
սաստկասառոյց նահանգս գնայր բոկոտն, որ-
պիսի ոք Վ՝ռնիփակիոսն էր աշակերտ սրբոյն
Հռոմուալդոսի, և այլ ոմն ԹաԹաւէր ա-

ըեամբ իւրով ՚ի խարազանաբախին լինելոյ , որպիսի ոք Պոմպինիկոս էր անուանեալն Լ ո- ըիկատոս , ՚ի միտ առնուին զի աստուածա- սերք ոմանք էին նոքա , և առեցուղք մեղաց : Օ և զմտաւոր աղօթս առ ոչ ինչ համարեին , եթէ ոչ լսէին զերգս սաղմոսաց : Օ բոլմա- դակն ասացից . անմարթ էր նոցա յերկուա- նալ ընդ եղբայրսիրութիւն հրաշալի արանցն այնոցիկ որք ապաշխարէին անդադար վասն պլոց : Ամենափաղ լինի նոցա յարտաքին տեա- լենէն ՚ի բաց ՅօթՅափէին զդաժանութիւնն , և ունկն մատուցանէին երիցանց և կրօնաւո- րացն այնոցիկ , աքանչացեալք ընդ վարս նոցա , և բազումք ևս դառնային ՚ի հաւատս : Պարբ ձեալ և խարազանաբախութիւնքն և չղթայք երկաթիք , և այլ գործարանք ՚ի կիր ար- կեալք ՚ի ձնդել զմարմին՝ ոչ նոր ինչ գիւտք էին . զի զբազումս յայնցանէ առաքն առնէ մեզ Աէոդորետոս ՚ի պատմութիւնս վարուց ա- րանց բարեպաշտից . և վարք սրբոյն Սիմէոնի սիւնակեցի բաւական են ընդունելի առ- նելոյ զամենայն ազգս սաստիկ ձգնութեանց , յո կանգնք սրբոյն Պողոմբանոսի , որ եկաց ՚ի վախճան անդր վեցերորդի դարուն , սահմա- նեն յոլովից ՚ի յանցանաց միանձանց պատու- հաս հարուածս ձաղկանաց Յաուվ և բազումք ՚ի սրբոց այնու հետև կամաւորաբար ձաղկեին զանձինս :

Ընդ պատիժս սահմանեալս ի կանոնական սպասխարութեան յառնխեալ էր յոյժ և պանդխտութիւն ի հռչակաւոր սուրբ տեղիս Երուսաղէմ, ի Հռովմ, ի Տուրս, և ի Սամ պոստելա։ Ընդ ուրեմն յիննեերորդ դարու գանգատք լինին վասն բազմապատիկ զեղծմանց որ յայնմանէ ի նեղս անկան[1]։ Երիցունք և եկեղեցականք բազմամեղք կարծէին սրբեալ նոքիմբք զանձինս, և բաւական անդրէն ի գործ սպասաւորութեան։ Պատճառս առնուին նովաւ տեարք բռնանալոյ ի վերայ հնազանդելոցն, և հարկս պահանջելոյ ի նոցանէ ի պէտս Հանապարհորդութեան, և աղքատք առ ի մուրանալ և գատարկաշրջիկ լինել։ Վասն եւս ոմանք որ ընդ քաջ զաքս մերկք և շղթայակապք[2] ի սոսկումն ամենեցուն. Թէպէտ և սահմանեցան իսկ ոմանց յապաշխարողաց վասն մարգասպանութեան և այլոց ծանուցց անօրէնութեանց նժդեհական կեանք, և կրել զանձամբք զցոյց եղկութեան իւրեանց։ Այլ առաւել քան զամենայն ժամանակաց հռչակաւոր են ուխտագնացութիւնք որ վկայի մեռսանեերորդի դարուն։ Օ՛ի իբրև դուլ և դադար եղև Թըշնամութեան հասարակաց, և որպէս զսուրբս պատուեցան ուխտաւորք, սկսանէին այնու-

1 Ժող. Կաթլ. յամի 813։ 2 Ժող. Աքսուխկրան. յամի 787. գլ. ՝ԺԲ։

հետև ամենեքին շրջել յայց սուրբ տեղեաց, և և իշխանք և թագաւորք։ Քրքայն Հռոմ բերտոս[1] զաւուրս աղուհացից պանդխտեր ի սուրբ տեղիս, և չոգաւ նա ի Հռոմ։ Ո՛ւ ծանր ինչ Թուէր և եպիսկոպոսաց մեկնել հեռանալ վասն այսր յեկեղեցեայ իւրեանց. իսկ ընդ այլ այցելութիւնս գնալ յոխտ յԱրուսաղէմ՝ յաձախեաց յոյժ յամին հազարերորդի երեսներորդի երրորդի[2]։

ՅՕԳՈՒՆՆ ՏՐՄՆԵՐՈՒՐԻ

Խաչակիրք և ներոլութիւնք։

Ա՛յս սկիզբն առին խաչակիրք. զի զինչ էին նոքա, բայց ուխտաւորք կամ պանդուխտ զօրք գումարեալք ի բանակ մեծ։ Ա՛յլաքէն կարևոր էր առաջարկութիւն իրացն. զի ի քրիստոնեայ իշխանաց ոչ ոք առանձինն բաւական էր ղդեմ ունել յաղթութեանց Հագարացւոց, որ սխերիմ թշնամիքն էին հակառակաց դէնին նոցա։ Ա՛սպատակեալ աւերէին զՏաղիա յերկերիւր ամաց հետէ. զբառմիք ածեալ էին զՒկկիլիա և զՍպանիա ցւոց աշխարհն գոգցես առ հասարակ։ Իսկ

[1] Հելկոյ.

[2] Հելկոյ. Թուղթ Բենեդ. Ը., առ եպիսկ. Բուրգ։

զինուք խաչակիր զօրացն վանեալ Հալածեցան
'ի սահմանաց Լուբոպայ, և նկուն եղեն Լա-
գիպտոս և Ալ'ֆորիս. բայց չեղև գործ յօ-
գուտ կարգաց եկեղեցւոյ. զի Թէպէտ և էր
բարեպաշտութեամբ, այլ սոյն այս գործեալ՝
ըստ իմումն բանի՝ յաւել պատճառս Թուլու-
Թեան ապաշխարանաց. զի յայնժամ սկիզբն
եղև լինակատար ներողութեան, կամ արձակ-
մանն յամենայն կանոնական պատժոց, որոց
յանձն առնուին պանդխտել և զինուորել
տեառն. քանզի այսպէս կոչէին զպատերազմն
զայն, որով և անսովոր Թողութիւնս այս յան-
ցանաց վառեաց 'ի զէն զայնքան բազմու-
Թիւն. Միբեզի էր ազնուապունդ բազմու-
Թեանն որ յորս և 'ի մարտս մնեալն էր՝ տե-
սանել զտաժանաւոր ապաշխարութիւնս որ
սահմանէին 'ի պահս և յաղօԹս, և մանաւանդ
'ի ժամանակին յայնմիկ 'ի հրաժեշտ զինուց
և հեծելուԹեան՝ փոխեալ 'ի չու պատերազ-
մի. Ապաշխարութիւնն դարձաւ 'ի զբօսանս.
վիշտք և նեղութիւնք Հանապարհի առ ոչ ինչ
Թուէին յաչս արանցն պատերազմողաց, իսկ
փոփոխումն տեղեաց և տեսարանաց բերկրու-
Թիւն էր սրտի. Այն ևեթ աղեղորով ար-
դեօք առնէր զնոսա, զի ընդ բազում ժամա-
նակս պարտ էր նոցա հեռի կալ 'ի հայրենեացն
և յընտանեաց.

Սակայն երկայն Հանապարհորդութիւնն

այն հանդերձ բազմութեամբ ուղեկցաց չէր
ինչ պատշաճագոյն դեղ յուղղութիւն մեղու-
ցելոց։ Նոցի զղջութեան չկարէ կալ ընդ զգ-
բաղմունս խորհրդոց։ Այսմակարս բերիմք ՚ի
սփոփել զտաղտկութիւն ձանձապարհիս բերկրա-
կան զրուցատրութեամբք. և թերիք յիմաս-
տութենէ բազմախօսք ևս են։ Ընդադար ՚ի
հոգս տարուբերին միտք վասն կերակրոց և
օթևանաց, և դիպաց անդադար ՚ի վերայ հա-
սելոց։ Պիւրին է անցանել ըստ չափ ՚ի կե-
րակուրս կամ ՚ի քուն՝ առ ոգի առնուլ յանսո-
վոր խանջութենէ. և չէ մարթ վարել կեանս
չափաւոր և միօրինակ։ Ոչ զգանգանու-
թիւն բարուց այլ և այլ աշխարհացն ընդ որս
առաջի կայր անցանել նոցա մինչև ժամանելին
՚ի սուրբ երկիրն, զգրգիռս գժտութեանց
ներհակակիր մարգկանն որոց աննմանք էին
սովորութիւնք և բարքառ, զնրապոյրս զեղ-
խութեան բերրի և արգաւանդ աշխարհացն,
և հաղորդութիւն ընդ զեղծ և ապականեալ
ազգս։ Այս այսր է ՚ի պատմութեանց
զի բանակք խաչակիր զօրացն այնոցիկ ոչ հա-
ւասար այլոց բանակաց, այլ վատթարագոյնք
ևս էին քան զնոսա։ Ընդհանուր ախտք և պղծ-
ծութիւնք ձարակէին ՚ի նոսա, այն զորս ա-
ծեալ էր ուխտաւորացն յաշխարհէ իւրեանց,
և այն զորս ուսեալ յօտարոտի աշխարհին։

1 Ամվիլ։

Այմին իրի եթէ չու բանակացս այսոցիկ օգտեցին ինչ՝ ի պատուհասել զմեզ, ոչ այնչափ եղեն՝ ի պատուհաս մեղաց հաւատացելոց ի աստիճաց՝ որչափ անհաւատից և քրիստոնէից հերեսիուղաց, որոց ածին նոքա հարուածս ահագինս յաստուածակոյս կողմանէ։

Խաղումք և յեպիսկոպոսաց, յերիցանց և ի կրօնաւորաց չոգան զհետ խաչազգեաց բանակացն այսոցիկ, ոմանք՝ ի Հմմարիտ նախանձուէ, և կէսք վասն համարձակ ազատութեան, որք և օրինս կարծեցին անձանց զնս առնուլ ընդդէմ անհաւատից։ Այլ ինչ դժուարըն ե իմաստասիրել քանի՞ թուղութիւն կարգաց եկեղեցւոյ՝ ի ներքս ածեր այնպիսի համարձակութիւն լծորդեալ ընդ տգիտութիւնէ, որ ձգեալ էր զնորօք՝ ի բազում ժամանակաց հետէ։ Այրքին իսկ քահանայապետքն ուղղախոհք տեսանելով զչարիսն՝ սոսկեին լուել յերս յերս։ Պարտ էր առ յաջողութիւն մեծի առաջարկութեանն յանգետս լինել յոռութեանց իւրաքանչիւրոց։ Պարտ էր երեսս առնել իշխանաց զօրուն՝ ցորչափ քաջութեամբ՝ ի թիկունս կային քրիստոսական կրօնից, թէպէտ և վարուք իւրեանց անարգեին զայն։

Ընդարձակեցաւ ապա ներողութիւն խաչակրացն առ պատերազմողս ընդդէմ չարափառաց ոչ միայն ապաստամբելոցն յեկեղեցւոյ,

այլ և որք ի թագաւորացն իւրեանց վտարանք էին, որպես Աղիգեանքն ի Հռաղլիա։ Ընդ նորհեցաւ նոցին և ամենայն պատերազմաց՝ ուստի օգուտ ինչ էր կրօնից։ Եւ ի ձահ թուեցաւ անմանն հանել ի ընորհաց աստի զաղգ կանանց, և ոչ զայսոսիկ որք վասն տիոցն կամ այլոց հանգամանաց չէին կարող զէն կրել. վասն որոյ որ որք ի նոցանէ առնէր ողորմութիւն առ ի ծախս պատերազմին՝ ընդունէր թողութիւն։ Վարձեալ և ողորմութիւնք ի պէտս այլոց բարեգործութեանց քաւական համարեցան ի քաւութիւն պատժոց մեղաց։ Վարգեցան ներողութիւնք լիակատարք, կամ թուով ինչ ամաց, և վասն այնոցիկ որք օժանդակէին ի չինութիւն եկեղեցեաց. ոմով չափոք բազմապատկեալ էպիսկոպոսաց կանգնել զմեծակառոյց մայր եկեղեցիս, ընդ որս զարմանամբ ցայսօր։ Այսոյն ընդունէր և կանգնողաց զանկելանոցս, և կարգողաց նոցա հաստ, մանաւանդ որ վասն ուխտաւորաց հիւրանոցքն էին, և ուրկանոցքն վասն բորոտելոց յաձախեալք յոյժ ի ժամանակին։ Ընդ նորհեցան և աղքատաց թողութիւնք ընդ այլոց ինչ գործոց բարեաց. որով գրեթէ ըստ հաճոյս սահմանէր հատուցումն պատժոց մեղաց։ Իսկ կանոնական ապաշխարութիւնք ոչ ևս ի կիր առեալք, անկան ընդ հուպ ի մոռացօնս, և խոստովանութիւն ևեթ մեղաց եղև այնուհետև գժուարինն յապաշխարութենէ։

ՅՕԴՈՒԱՆ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ

Բազմաթիւն ուսուցչաց։

Այս խափանումն նախնի կարգաւորութէ եկեղեցւոյ յերեքտասաներորդումն պատահեաց դարու։ Ընդ խաւար առաջնոց դարուըն էանց անխափան զօրութեամբ աւանդութեան, և տգիտութիւն ոչ այնչափ վնասակար եղև նմա որչափ նորանոր ուսմունք։ Վանզի՝ ի սմին դարու սկսանէին՝ ի դպրոցս Թողուլ զանապակ վարդապետութիւն, և պարապիլ փաստաբանութեանց։ Աղիտատեղեակ Ձախեաց՝ ի բերանս ամենեցուն, և մեծարեցան նրբախօսութիւնքն տրամաբանականք և բնազանցականք՝ ի կիր առեալք Աքաքացւոց՝։ Կուազուրթիւն հնոյն մատենից և դժուարիմացութիւն նոցին ըստ փոփոխել շարբառոյ և սովորութեանց, առաւել և յորդորէր զամենեսին՝ ի խնդիր և յընթերցումն նոր գրոցս. որով դպրոցականն ասաուածաբանութիւն նախամեծար եղև քան զիսկականն. և առաւել քան զՀարս ընթեռնոյր Արդապետն վՃռոց կամ Աղբատիանոս. և խորհրդական խմաստք առաւել ինդրէին՝ ի սուրբ գիրս քան զնկարագրականն։

1 Ձառ. յղ. Գիտեց. է։

Յոլովագոյնք եպիսկոպոսաց յետ երկոտասանեւրորդի դարուն՝ պատաղետ լինին կենցաղականս, դուն ուրեք պարապէին ի քարոզութիւն և յուղղութիւն վարուց վինակաւորացն իւրեանց։ Այլ քանզի աշխարհականք, և մանաւանդ իշխանք, առ մեծի ոգիտութեան ոչ ինչ կարող էին ինքեանին վճարել, եպիսկոպոսունք և աբբայք էին առեւտրապիրք նոցա և պաշտօնեայք տերութեան, և նոքա դարձեալ դատաւորք համօրէն իրաց աշխարհին։ Այլ և ոչ հարկ էր նոցա խնդրել այլուր զկոչս աշխարհականս, զի իշխանութիւնք նոցա ժամանակաւորք շատ իսկ յաճախէին նոցա զգոյս։ Հաղուագանդամ հասանէր նոցա մղել մարտս, ամրացուցանել զբերդս, զօրաժողով լինել։ Յամենայն ժամանակի պէտք էին նոցա բազմութեան զօրաց, և գունդ գունդ ծառայից, և ամենայն ազգի ազգի պաշտօնէից։ Այլ ի բազմապատիկ գործս անդ անտես լինէին յաճախ հոգևորականքն՝ որոց պարտ էր զառաջինն տեղին ունել։ Պատիւ և գիտութիւնք, քարոզութիւնք և մատակարարութիւնք խորհրդոց պահեցան վարդապետացն ուսելոց ի համալսարանս՝ որ այն ինչ կառուցանէին յայնժամ, որպէս ցուցեալ է իմ այլուր[1]։

Ի խափանել զպղութեանց եպիսկոպոսաց

[1] Ձառ յղ. գիտ. ը, ի։

նիստ եկեղեցիս և՝ ի մենաստանս ըստ արկա-
ծիլ ժամանակին, կարևոր իմն Թուէին հա-
մալսարանքն այնոքիկ։ Պիւրին ևս էր այնու-
հետև քաջ ուսուցիչ գտանել՝ ի միում ևեթ
քաղաքի, որպէս՝ ի Փարիզ և՝ ի Տոլովսա,
քան՝ ի Թեմս իւրաքանչիւր, և մարթէր միոյ
վարժապետի զբաղումն աշակերտել։ Ծուէր
իսկ, զի երիցանց յաստուածաբանական մա-
կացութիւնս ևեթ պարապելոց պարտ էր
հզօր ևս հանդիսանալ քան զեպիսկոպոսունս
պատուելս և յայլ բազում հոգս. և զի աշա-
կերտելոց գիւրին ևս էր զարգանալ՝ ի գի-
տութիւնս՝ ուր ոչ յայլ ինչ բաց յուսմանէ
պարապէին։ Այլ՝ ի փորձոյ յայտնի եղև զի
համալսարանաց ծանուցք են դժպատեհու-
թիւնք։ Ընտրեր էր հասարակապատիւ ե-
րիցանց, որպիսիք էին ուսուցիչքն, ընդոյն ունել
սաստ իշխանութեամբ՝ ի վերայ բազմութեան
օտարազգի և անծանօթ ուսանողաց, որով
իշխէրն եպիսկոպոս ոք՝ ի վերայ վիճակա-
ւորաց իւրոց։ Պարապոյ ունելով ժամա-
նակ, բազում այն էր զի զեղծանէին նուաս-
՝ ի յուզել խնդիրս ընդվայրաբնիս քան օգ-
տակարս. և կրնտրութիւն ևս իրացն յորս
պարապէին՝ էր նոցա սխալել, զի անփորձք
էին առաջնորդութեան հոգւոց։ Այս աշա-
կերտելքն անդէն թևպէտ և խելամտէին՝ ի
տեսութիւն գիտութեանց, այլ ոչ՝ ի սպասա-

ւորութիւն եկեղեցական պաշտամանց, յորոց հեռի իսկ կային։ Այլ այսպէս անցեալք ըստ տիս մանկութեան, չինայր նոցա այլ եւս ժամանակ կրթել՝ի պատշաճս կղերիկոսի։ Այլ այն չարագոյն եւս, զի հեռի՝ի ճնողացն՝ բազում՝ի վատթարութիւն հատանէին, որ ոչ անսովոր ինչ է՝ի քաղաքն յորս բազում երթևեկք են ազգաց։

Ոչ դոյզն ինչ խափան եղև չարեացս կառուցումն գպրոցացն կրօնաւորաց, և ապա կիսոց յաշխարհականաց. և խոստովանել պարտ է զի գպրոցքն այնոքիկ եղեն որպէս զմենաստանս տեղի ապաւինի առաքինակրօն վարուց և հոգևոր գիտութեան. մանաւանդ Սրբոյն Ներսէսի եկաց նախագիծ օրինակ սրբագունիցն՝ի ժողովս միաբանութեան քահանայից։ Այլ զհամալսարանացն համագունդ բազմութիւն աստուածախնամ տեսչութեանն թուէր յաւելուած՝ի պահպանել՝ի յետին ժամանակս զաւանդութիւն վարդապետութեան և կարգաց եկեղեցւոյ։ Այոցմէ զօրութիւն շիջոյց զհերձուածն մեծ Արիոսի, և վճիռք նոցա որպէս զպարիսպս ամուրս զդէմ կալան սաստիկ յորձանաց վերջին հերձուածոցն։

Ոչ յետ բազում ժամանակաց զկնի հաստատութեան համալսարանաց մտին՝ի նոսա կրօնաւորք մուրացիկք, որք և կարի՝ի գէպ յօգնութիւն հասին եկեղեցւոյ՝ի թշուա-

ռութեան ժամանակին : Այլ թէպէտ և սուրբք և նախանձաւորք էին նոքա, այլ չէին հոլիւք, և չգոյր նոցա ժողովուրդ սեպհական, և ոչ սահմանն իշխանութեան նոցա . զի էին որպէս քարոզք բանին՝ որք ըստ հրամանաց աբբային իւրեանց շրջէին ընդ ամենայն թեմս առ՝ի դարձուցանել զհերետիկոսս և զմեղաւորս : Յաջողեր աշխատութիւն նոցա . այլ վաստակքն զոր վաստակէին՝ չէին առ հասարակ հաստատունք, զի չմարթէին հանապազորդել զքարտս, դարմանել մի ըստ միոջէ զամենայն ախտս քարուց, և կալ առ նոսա որչափ կարեւոր եր՝ի հաստել զնոսա՝ի բարիս : Օ՛ի ոչ էր մարթ առնել նոցա զայս, բայց առ սակաւս ոմանս որք կամակար զհետ երթային բանից նոցա : Այլն իրի անհնար եր քարոզութեանց նոցա այնպէս պաղաբեր լինել յամենեսին որպէս զեպիսկոպոսացն կամ զՅովաւաց՝ որ պարապէին՝ի սրբութիւն ժողովրդոց իւրեանց :

Պարզաբար ասել, ոչ ևս իշխանութիւն ստորին դասուց եկեղեցւոյ կցորդեր յաձախ ընդ գիտութեան և ընդ սրբութեան որպէս յառաջին դարս : Օ՛նոյն է ասել և զվարժից ըստ հաւատոյ թեան : Լուսոյիչք՝ երիցք կամ կրօնաւորք որք զաթոռս վարժապետութեան ունէին յայնժամ, գրեթէ ոչ այլով իւիք պատկառելիք էին բայց իւրաքանչիւր

վաստակովքն։ Ի չակերտաց իւրաքանչիւր օրէն էր ընտրել իւրեանց վարժապետ զոր կամէին. և աստի սկիզբն առին զանազանութիւնք կարծեաց և վարդապետութեանց ՚ի ինդիրս յորս հրամայեն և վիճելոյ։ Այլ տուաւ և աշխարհականաց զհետ երթալ այնոցիկ ՚ի քարոզեալ որք առաւել հաճոյ էին նոցա, և զայլս ոմանս ընտրել ՚ի խոստովանահայր և ոչ ըզհովիւս իւրեանց։ Որով յայնժամ քրիստոնէից ախտաւորաց գտանել ՚ի բազմութենէ երիցանց դիւրաբար արձակողս ՚ի մեղաց. և որք միանգամ կամէին պատրել զանձինս կամ զայլս՝ ոչ վերջանային գնալ յեկեղեցիս անզգաստք, և մերձենալ ՚ի սուրբ խորհուրդս։

Զբուռն ուղղիւ ապականութեան ժողովրդեանն տկարացաւ զգիմ ունել և բազմութիւն վարդապետաց. և բազումքինչ ՚ի մեծամեծ թուղթ եանց յօրէնս գրեցան։ Այսմ ձեռնտու եղև առաւել քան զամենայն ինչ տգիտութիւն նախնեացն գնացից. որով եկաք մատ սովորութիւնք յետ միոյ կամ երկուց դարուց զօրինաց կալան զտեղի՝ որպէս ՚ի սկզբանէ և այսր ընկալեալք։ Զօրինակ իմն, զարմանք են զի յաւուրս սրբոյն Ոսկեմայի չգիտեր ոք թէ զիարդ պահէին զծոմապահս յառաջ քան զդար մի. քանզի վկայէ սուրբն Աւերնարդոս՝ զի յաւուրս իւր անխափուր ամենեքեան, թագաւորք և իշխանք, քահանայք և ժողո-

վուրդք, ապատք և անապատք, մեծատունք և աղքատք չլուծանելին զպահս աղաւհասիկ մինչև ցմուտս արևու. իսկ սուրբն Յովհաննես ոչ միայն վկայէ զի յաւուրս իւր ոչ ոք անդրբգան զինեւորդ ժամին ձգելը զծոմապահս, այլ և ջանայ յուսանել զի ոչ է պարտ քրիստոնեի այլազգ պահել, և զի հին օրինացն էր անկ ձգել զծոմապահս մինչև ցերեկոյ։ Այսքան դիւրին է գտանել փաստս ի հաստատութիւն ազգի ազգի սովորութեանց յորժամ ստուգութեան իրացն չիցէ ոք տեղեակ։

Ի տգիտութենէ ասի և հին աւանդք որ ի մոռացօնս եղեալ էին՝ եկամուտք համբաւեցան։ Յորնոյն դարձեալ տգիտութիւն զվերկայութիւն արդեաց ապահովագոյն համարեցաւ կանոն քան զՆոյն, օտարս վարկուցեալ ի մերոյն զսովորութիւնս նոցա, և ընդ այն ոչ հայեցեալ թէ յորպիսի՛ ինչ իրս սահմանէր զանազանութիւնն այն. յայնս որով է ոք քրիստոնեայ, եթէ յորս ոչ ինչ ստանանէն քրիստոնէութենէ, որպէս հանդերձք և լեզու։ Այլ զի համարձակեցան զօր հանապազ նորանոր յուզել խնդիրս և նրբաբանել, գտան և բարեյաւօք ոմանք որ զգիրս իւրեանց առաւել ի տրամաբանութիւն մարդկեղէն քան ի գիրս սուրբս և յաւանդութիւնս հաստատեցին. որպէս այն թէ ոչ որպէս զՆաւատոյ Ձնմարտութիւնս իցէ ուսուցեալ մեզ Քրիստոսի լի բո-

վանդակ և զկանոնս ուղղութեան վարուց, և օրէն իցէ մեզ դեռ ևս ընդ նախնի իմաստասէրս խուզարկու այնոցիկ լինել։

ՅՕԳՈՒՒՆ ԵՐԿՈՏԱՍՆԵՐՈՐԴ

Մշանջենաւորութիւն ողջմիտ վարդապետութեան և օրինակ կաց բարեաց։

Ընդ ինձ կամք ի գրի առնել զանկարգութիւնս որ զհետ եկին ի թուղթենէ օրինաց բարոյականին, զի յայտնի իսկ են. և արտաքոյ իսկ արշաւէի ի կարգէ բանիցս եթէ կամիմ արձանացուցանել աստ զվատացն ի քրիստոնէից զվարս. զի ոչ եթէ վարուքն, այլ հաւատ տուքն միայն են նոքա քրիստոնեայ։ Այլ առաջի կայ ինձ ցուցանել և եթէ զարժանին քաղաքավարութիւն՝ որով Հմարիտքն քրիստոնեայք առանձնաւորին յայլոյն առնեն ցունց։ Ել երբեք այնպէս եթող Յ.թուած զեկեղեցի իւր՝ մինչև չգտանել ի նմա այսմ սրբական կենաց։ Օի ընդ առաջնորդութեամբ որոց և իցէ հովուաց յայլ և այլ դարս եթէ ընդ հայրապետաց, և եթէ ընդ երիցամբք կարգելովք ի նոցանէ կամ առաքելովք ի Հռոմայ հայրապետացն, եթէ ընդ աշխարհական և եթէ ընդ կրօնաւոր առաջնորդաց, եթէ

ընդ բնիկ և թէ ընդ այցելու հովուաք, նոյն կրօնաք և նոյն բովանդակութիւն վարդապետու-թէ կացին միացին ի նմա. հաւատքն միշտ ան-ապակ, և կարևոր մասունք բարոյականին ան-յեղլիք։ Հաստատուն եկաց հանապազ՝ թէ պարտ է պահել զպատուիրանս Աստուծոյ ըստ իմաստից աւանդութեան և վկայութեան նախնեաց, և յօրինակ նմանութեան ունել զսուրբս զորս պատուէ եկեղեցի տօնախմբու-թեամբ։

Եւ պակասեցին երբեք յեկեղեցւոջ կեն-դանի սրինակքս այսոքիկ։ Ի դարս իւրաքան-չիւր կացին առաքեալք՝ քարոզք անհաւատից, և դարք իւրաքանչիւր ընծայեցին նահատա-կըս։ Ի զեն յաւետնային ժամանակի կուսանք և ապաշխարողք բազումք. զի սոքա այս իղձ ձըղ-մարիտ ապաշխարութեան, որպէս ասէ սուրբն Երբնարդոս[1], յարոյց ի մէտասանեորդ դա-րէ և այսր զայրքան բազմութիւն նորանոր կարգաց միանձանց։ Ծոյլ և զհրաշալի և ըղ-գերաշխարհիկ արս զոր ընդ ժամանակս ժա-մանակս յարոյց Աստուած ի պահպանութիւն ողջամիտ վարդապետութեան, և յեռանդն բարեպաշտութեան հաւատացելոց։ Օ՛ի՞ դարձեալ վէհ և գերապանծ քան զնա ինքն զԵրբնարդոս, որ միալուծ յանձին եթէր զնա-խանձ մարգարէից, զդիտութիւն և զսերձա-

1 Ճառ յղ. սրբ. Պդրէի, և վարք սրբ. Մաղաք։

բանութիւն Հոյակապ վարդապետաց Եկեղեցւոյ, և վեհութեան վարուց Ձգնաղգեցիցն յանապատի, Թող զառաքելանման Հրաշագործութեանն։ Նրախտապարտ յոյժ գտանիմք Ննովկենտեայ երրորդի և այլոց Հոյակապ և իմաստուն քահանայապետաց ժամանակացն այնոցիկ, և Ալարդապետին վՁոոց և սրբոյն Ղեովմայի, և այլոց որք ի կարգ և յոճ մուծին զաստուածաբանութիւն։ Պարձեալ և սուրբն Վրանկիսկոս օրինակ երևելի արձանացաւ աւետարանական խրատուց ըստ նկարագրին, խոնարհութեամբ և վեհութեամբ վարուց արժանի աւուրց առաքելոցն։ Նյսու օրինակաւ դարուց ի դարս և ազգէ յազգ պահեաց Նստուած յեկեղեցւոջ իւրում զաւանդութիւն ոչ միայն վարդապետութեան, այլ և զառաքինի վարուց։

Ալան որպ Ձմարիտ է բանն. «Ցիսուս Նքրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս»[1]։ Ալայրապար ջանան ի բազում ժամանակաց հետէ զեղջք ի քրիստոնէից բառնալ ըզմեծարանս Հնութեան և օրինակաց սրբոց, պատՃառելով իբր Թէ այլ բնութիւն էր մարգկանն յառաջին դարս քրիստոնէութեան, և մարմին զօրաւոր ի տոկ պահոց և խիստ Ձգնութեանց, և Հոգի Հլու, և դիւրագործ առաքինութիւնք։ ՆյԹէ ի դէմս ածեմք նո-

[1] Եբրայ. ԺԳ. 8։

բա զՊետրոս և զՊօղոս՝ զի յաղքատութեան կէին և ի վշտս, տան պատասխանի թէ նո- քա առաքեալք էին։ Իբրեւ զՊետոն և զՊաւ- տինոս, զի բազում մեծամեծ չնութիւնս արա- րին, ասեն, սուրբք էին նոքա։ Իբրեւ զսուրբն Գրիգորիոս՝ զի ի միաբանական կեանս պա- հէր զերիցուսն իւր, և ինքն ևս հայրապետան անպատճառ վարէր կեանս, ի վերայ բերեն՝ թէ այդ ամենայն ժամանակացն այնոցիկ անկ էին։ Գուի ինն այնպէս թէ սրբութիւն այ- լոց, նախնի ժամանակ, և սկիզբն եկեղեցւոյ իցեն պատճառք օրինաւորք առ ի չապաշխա- րել, առ ի չհոգալ անդադար յօրինս Աս- տուծոյ, առ ի չերաժարել ի հաճոյից և յու- նայնութեանց աշխարհի, առ ի խնդրել զան- ձինն, և առ ի չլինել օրինակ բարի որպէս արժան է ուխտի մանկանց։ Կարծեն տալ պա- տասխանի ամենայնի՝ խորելոյ ժամանակս։

Յոստանան մեծարել զՆութիւն, և ար- դեամբք անգոնեն զայն։ Քանզելեաց դար Համարին զաւուրսն զայնոսիկ, և անհնարին՝ նմանող լինել այնը ժամանակի որերոյն։ Ար- քունեն, չընթեռնուն, չկամին խելամուտ լի- նել ժամանակացն այնոցիկ. զի խելամտու- թիւն նոցին լռելեայն իմն յանդիմանութիւն է խոտորնակ գնացից մերոց։ Անհնարին կար- ծեմք յոր ինչ ոչն կամիմք խրախուսել։ Որոց զՔեքսանդրի նուիրակի ընթերցեալ իցէ զա-

տեղաբանութիւնն՝ զոր յառաջ բերէ կարդինալն Վալերիչինի՝ ի սկիզբն պատմութեան իւրոյ, գիտիցեն եթէ ոչ ոք վայր պատճառանաց այսոքիկ զառածանին։

Օրաւոր էր, ասէ, եկեղեցի և առոյգ՝ ի մանկութեան իւրում. փայլեցուցց հրաշալի առաքինութիւնս. այլ արդ զառամեալ է և նուաղեալ՝ ի զօրութենէ։ Ոչղէն և նորա երեսին աւուրք գարնային. բայց արդ ձմեռն է նորա։ Ոչղէ զի՞նչ նշանակիցեն այլաբանականքն բանքս. մի արդեօք ընթացից տարւոյ և կամ կենաց մարդկան կամք իցեն նմանեցուցանել զառականութիւն եկեղեցւոյ, և յանդգնել կարծել՝ թէ անկատար էրնա՝ իսկզբան, և ժամանակաւ եհաս՝ ի կատարելութիւն, և հարկ իցէ նմա դարձեալ անկանիլ որպէս զբարածա եղծանելիս, կամ որպէս զգործս մարդկան։ Ոչ բնաւ իսկ ո՛ր փոփոխումն յետ քրոջութեան աւետարանին գտանիցի լեալ։ Ոչ թէ մարդկեղէն բնութեանս. այլ ջհակառակն նորին վկայեն փորձք և պատմութիւնք համօրէն։ Յաստուածային օրէնսն արդեօք և կամ՝ ի պարգևս չնորհացն նորա. այլ զօրութիւն Ոչստուծոյ անսուազելի է, և անսպառ բարութիւն նորա, և չէք ուրեք ասացեալ Ոչքրիստոս՝ թէ ըստ ժամանակաց փոփոխեցին օրէնք եկեղեցւոյ։ Ոչպաքէն փոփոխումն հին օրինաց և խափանումն խորհրդական պաշտա-

մանցն յայտնապէս նախասպատմեցաւ մեզ. իսկ աւետարանին պարտ է քարոզել մինչև ի ծագս երկրի, և մինչև ի վախճան աշխարհի: Եւ ոչ միայն խորհուրդք սուրբ հաւատոց, այլ և պահպանութիւն ամենայն պատուիրանացն ի Քրիստոսէ քարոզեսցին մեզ ոչ վայրապար ասաց լինել ընդ մեզ մինչև ի կատարած աշխարհի[1]: Այլ այսուհետև խաբէսցուք զանձինս մոռեօք, և մի այլ պատճառս պատճառեսցուք թուլանալոյ վարուց մերոց, քանզի զտգիտութիւն մեր և զմեղկութիւն: Այնչ ընդհատ ՚ի ճասակար է, ասէր քահանայապետն Դիոնիսիոս եօթնեերորդ, խախտել զհիմունս քարոյականին և զնրահանգաց նախնեացն[2], քան զհաւատոց նոցին. զի վերկոսեան միօրէ նակ յաւանդութենէ ընկալաք:

1 Մատթ. ԻԸ. 20: 2 Պատասխ. յղ. վճռոց:

ՅՕԴՈՒԱՆ ԵՐԵՒՏԱՑԱՆԵՐՈՒԴ

Թէ որ զեղծմանէք ի նեքոս մտեալ, և արդէս անտես արարան։

Ի ՉԻ զՆնացեալ զեղծմանէս անտես առնել եկեղեցի, սպասեալ դիպող ժամու արմատախիլ առնել զնոսին, և է զի դարձեալ դիւր առնել նախնեացն կարգաց առ խստասրտութեան մերոյ։ Յիմնեալդ դարու պահեր տակաւին հրամանն չորիցս հաղորդելոյ ի տարւոջ, այլ յայմմէնէտ ստունգանեցաւ. և որպէս վկայէ Պետրոս Իղեսացի՝ յաւուրս նորա քաղումք ի քրիստոնէից մի անգամ ևեթ ի տարւոջ մատչէին առ սուրբ խորհուրդն։ Օ յիջաւ եկեղեցի, և յօրէնս հաստատեաց զայն ի ժողովն Լատերանու։ Ի մատչել ձայնաւոր պատարագի չէր հրամայն մատուցանել թիւ պատարագ[2], զի մի ամբոխեսցի կարգ սպասաւորութեան մեծի խորհրդոյն. այլ սովորութիւնն յաղթեաց հրամանին։ Ի ժամանակօք սրբոյն Սովմայի յաւագ քան զամս չորեքարիւր՝ ձգէին ծոմապահք մինչև ցիններորդ ժամ, և մի անգամ յաւուր հրամայն էր Ճաշելոյ. ապա կանխեաց ժամ լուծանելոյ զպահն ցօր հասարակ, և հրամայն եղև ընթերցաց։ Ընդ զիջ-

1 Պետր. Իղես. Ճառ. ԺՀ։ 2 Ցոյց Հռաւեն. Դ, յամի 1317։

մունս դասելի է և զայն զի յիմաստութիւն խոստովանահարց ապաստան արար եկեղեցի զապաշխարութիւնս մեզաց, և յաձախեաց շնորհել ներողութիւնս, և դիւրել քաղցմվանական կանոնաց։ Համարեցաւ զի Թերքն՝ի կրճնաւորաց, օրինազանցք կարգին իւրեանց, կատարելագոյնք քան եթէ յաշխարհի կեին. և զի լաւագոյն էր մեղմել զխստութիւն պահոց աղօհացից՝ քան անտես առնել զեղծուածն նորին։ Լաւ ոչ եթէ արժան իցէ ասել իմաստասիրել՝ զի դիւրագոյն և իցէ արդ Ձանապարհ արքայութեան, և երանելի և իցեմք մեք քան զնախնիս մեր, և եպիսկոպոսունք և քահանայապետք վերջին ժամանակաց իմաստնագոյնս զանձինս ունիցին քան զնախորդս իւրեանց։

Ճատ է ընթեռնուլ զսահմանս կամ զկանոնս հրամանի թուղթեանցն առ՝ի միտ առնուլ՝ զի ակամայ զիջաւ այնոցիկ եկեղեցիսն՝ զի և բազումք յայնցանէ՝ի սովորութենէ՝ի ներքս մտին, և պահէ եկեղեցի ինամով զյիշատակս նախնի աւանդիցն։ Որպէս ահա պահել զերեկոյեան ժամերգութիւնն ընդ Ձաշուն նախ քան զՀայկերոյթ յաւուրս պահոց, և ամենայն կարգաւորութիւնք ձեռնադրութեանց և այլոց հասարակաց արարողութեանց իբր այն թէ բողոքեն Ձանապազ՝ զի մի նախնիք կարգացն խափանածք գրեսցին յօրէնս։

Այն և զեղծմունք զորս մինչև ի սպառ դա-
տապարտեաց եկեղեցի, որպիսի էին տեսա-
բանքն գժպատեհք զորս անամօթացան եր-
բեմն մուծանել և յեկեղեցիս, որք և արգե-
լան ի ժողովն Նասիլեան[1]. որպիսի էին և
խրախճանութիւնքն ի տօնախմբութիւնս սրբ-
ոց. զորոց զհետս տեսանեմք ցայսօր ի տօնի
Յարուցեալ, որ է Կիրակէ, և սրբոց պաշտպանաց գիւղից. և որպիսի
արգ զեղխութիւնքն են աւուրց բարեկենդա-
նին, որոց ոչ արգելօքս յայլոց իրաց լեալ իցէ ըս-
կիզբն՝ բայց ի գժկամակութենէ մտից ի պահս
աղուհացից: Այլ ոմանք յառաքելոց կամ յաշա-
կերտաց մարթեր ընդ միտս անգամ ածել զի
աւուրքն պատրաստութեան պասեքին պատ-
շաճք անառակութեան լինելոց էին:

Աւուրքն և ձմերիկ քրիստոնեայք հակա-
ռակ կացին հանապազ զեղծմանցս այսոցիկ:
Եւ ինչ զանխուսք է քանի հզօր զօրութեամբ ի
գիմի հարաւ նոցա աւուրքն Կարոլոս, և զիարգ
վաստակեցաւ զնախնին բոց առկայծել յոգիս
ամենեցուն ի գուշնաքեայ իսկ իրս կրօնից:
Այլ ոչ այլուամ իմիք ցանկայր սուրբ Ժողովն
Տրիդենտեան, և կամ որք ըստ նմանէ եղեն ի
գաւառս գաւառս ժողովք ի կատարումն օրէ-
նադրութեանց նորա: Այլ ոչ գարձեալ առ
այլ ինչ ի հարիւր ամաց հետէ նորոգին գասք

1 ժող. Բասիլ. գոմ. ԻԱ, գլ. ժ։

դասք կրօնաւորաց, բայց առ 'ի գառնալ յառաջին կարգս իւրեանց։ Այլ հանդուրժէր սրբ. Բուհին Մերեզա՝ պատանեօք խոհեմութեան կամ պատճառանօք գայթակղութեան չիջուցանել զեռանդն այնոցիկ սրբ. ցանկային նըմանող լինել առաքինոց սրբոց։ Ուղայր նա զի այսպիսի խոհեմութեամբ կործաներ աշխարհ. և հաստատէր զի և յաւուրս իւր, որ ոչ ինչ հեռի է 'ի մերոցս, չէր ուժգնք անհնար զսկզբան եկեղեցւոյ բերել յանձին զհանդէս առաքինութեանց։ Այլ առ այս ածէ յօրինակ զվարս սրբոյն Պետրոսի Ալկանտարացւոյ, որում վրկայ ականատես էր ինքն՝։

ՅՕԳՈՒՍՆ ՀՈՐՆԵՍՏԱՑՆԵՐՈՐԴ

Պէտք մատենիս այսորիկ։

Հաճեցեալ 'ի վկայութիւնս յայսոսիկ հը զօրս, 'ի դէպ համարեցայ առաքի առնել ամենեցուն զլաւդ եղեն և որպիսի պարտին լինել վարք քրիստոնէից։ Յայտնի իսկ են գիտոց որ ինչ ասացի, և ամենայնին առեալ 'ի մտոնէ նից որ 'ի ձեռս նոցա յածին, և գտցեն իսկ նոքա բազում ինչ իրս թողեալ 'ի միջ։ Բայց բազմագոյնք 'ի յայտնի եղելոց նոցին ոչ նոյն-

[1] Վարք սրբ. Թերեզայ. գլ. ԺԷ։

պէս քաջածանօթք են հաւատացելոց ամենեցունց, որոց արդեօք լիցին ՚ի չնորհել. Տեսցեն նոքա աստ, զի չէ օրէն սահմանել զքրիստոնէութիւն, որպէս առնեն բազումք, ՚ի վայրապար գործս ինչ, ՚ի սուղ ինչ աղօթս առաւօտին և յերեկորին, կամ յայն զի առընթեր ևեթ կան թիւ պատարագի ՚ի կիւրակէս, և խորեն զաւուրս աղուհացիկ կերակրովք ևեթ, յորմէ և զազատանալն ինդրեն ևեթ և ինչ պատճառաց նօք. կամ՝ զի մատչին երբեմն առ սուրբ խորհուրդս, և այնու գաղջութի՝ զի հրաշափառ տօնական աւուրքն գԺպհի են նոցա և տաղտկալի, ծախելով նոցա զայլ ամենայն ժամանակս յիրս աշխարհի կամ ՚ի զբօսանս կենցաղոյս ոչ ինչ ընդհատ ՚ի հեթանոսաց։ Այլք են սոքա չեն քրիստոնեայքն զորոց ջանացայ գծագրել զվարս։

Վերև և ոմանք յայնցանէ որք բարեկարգութեան պատճառանօք հերձեալ են ՚ի մէնջ, տեսանիցեն աստանօր զի չիք հաստատութի՝ հերձուածոյ նոցա. և ոչ այնպիսի էր նախնի եկեղեցին որպէս ինքեանք կարծեն. և վարդապետութիւնք մեր բնաւ իսկ օտար են յայնցանէ որ պատմին նոցա զմէնջ։ Տեսանիցեն զի անմտութեամբ յայժ հերքեցին բարեկարգիչքնոցա զսովորութիւն նախնեաց, ըզհաղորդութիւն ընդ միով տեսակաւ, զյարգութիւն նշխարաց սրբոց, զաղօթս վանից

ջեցելոց, զժուժկալութիւն պահոց, զուխտ կուսութեան, և զմիանձնական վարս։ Տեսանիցէն զի պատճառանօք բառնալոյ զնախապաշտութիւն՝ քրիստոնէութիւն իմն Թանձր ՚ի ներքս մուծին, յորում ոչ և ոք զհետ կրթի աւետարանական խրատուց, և պատուիրանք իսկ ոչ առաւելագոյն պահպանին առ նոսա քան յորոց հեռանան։

Յոյս մի այսպիսի է ինձ դարձեալ, զի հանդէս վարուց նախնեացն սովորութեանց ընդունտուսցէ և զնոսա որք առ կուրութեան չիոթեցին զչմարիտ կրօնս ընդ սուտ կրօնից, որ ՚ի մոլորութենէ կամ ՚ի խորամանկ քաղաքականութենէ ՚ի ներքս անկան։ Այնէ ոք ՚ի նայանէ կամիցի յառել ՚ի աքանչելի յեղափոխութիւն վարուցն ներգործեալ ՚ի քարոզութեան աւետարանին, և ՚ի զանազանութիւն չիմարիտ քրիստոնէից յանհաւատից անտի յամենայն ժամանակի, ՚ի միտ առցէ զի յոյժ առաւել հաստատիմն է քրիստոնէութիւնքան զոր կարծէքն, և խոստովանեսցի զի առանց մեծամեծ աքանչելեաց անմարթ էր նմա առնուլ հաստատութիւն. զի չհաւատալի և էր յեղափոխութեան այնպիսւոյ առանց աքանչելեաց յայտնել։ Այլ այնպէս իսկ հաւատարիմք էին քանչելիք, զի կարի յոյժ տարաժամ եղև մարդկան յերկեայս զնոսա արկանել։ Վասզի չէն հինք աւելի քան զամն երեքարիւր, որչափ հինք

գիտելի է մեզ հաւաստեաւ, զի [1]տալացիք ո-
մանք, թէպէտ և հանձարեղք՝ այլ տգիտք ա-
մենևին կրօնից, սարսուցեալք 'ի վեղծմանց՝
մուծին անկրօնութիւն։ [2]Ու զմայլեալք 'ի գեղ
հին մատենագրացն Յունաց և [3]լատինացւոց,
և սքանչացեալք ընդ քաղաքականութիւն ազ-
գացն այնոցիկ և ընդ կենցաղավարութիւն,
ոչ ինչ այնու հետեւ բաց 'ի նոցանէ ախորժելիս.
մանաւանդ զի վարդապետութիւնք մատե-
նագրացն այնոցիկ 'ի ձայն պատահէին ա-
պականութեան մարդկեղէն սրտի, և բարուց
հասարակաց 'մարդկան։

[1]Տալմացուցին զաղէտանորանոր աղանդոցն
ջոկք։ Ալ էնք զկարևորագոյն [2]չմարտութեանց
կրօնից դղրդեցին և կործանեցին զհաւատս
բազմաց, որք վասն ազգի ազգի ժամանակա-
ւոր իրաց ոչ լեաս կային 'ի դաւանելոյ 'ի վե-
րին երեսս զուղղափառ հաւատս։ [3]Ու առ ա-
զանդաւորս յայժ առաւել գտաւ բազմութիւն
այնոցիկ որք ոչ ևս յիշխանութենէ ուստեքիս-
փանեալ՝ 'ի ծայր չարեաց հասուցին զհե-
տևանսն չարաչար առաջարկութեամբ իւրեանց,
զառաձեալք 'ի սպառ յանհաւատութի՛, և քա-
ղաքականութի՛ իմն համարեալ կրօնս։ [4]Պիւ-
րաքար դժնդակ վարդապետութիւնն ծաւա-
լեցաւ։ [5]Սելով մանկաւոյն 'ի բերանոյ հարց
իւրեանց, կամ այնոցիկ որ հանձարեղք թը-
ւէին նոցա, զհենգնական խորամանկ զրոյցս

զկրօնից, և զհամարձակ իսկ քանս նոցա՝ ո-
րովք անհիմն համարէին զայն, առանց քննե-
լոյ յարեցան ՚ի բանս նոցա որ օժանդակէին
ախտից իւրեանց։ Վասասիրեցին վերհագոյնք
քան զոգեդ ոամիին երևել, և գեր ՚ի վերոյ
պարզմտութեանէ նախնեաց արշաւել. դարձեալ
և հեղգութիւն լաւ համարեցաւ կալ ՚ի
վարանս, կամ յախուռն դատել առանց աշխատ
լինելոյ ՚ի քննութիւն։ Ասող ասացեն, և յա-
սելոյ մի դադարեցցեն զոր կամին. բայց որ ինչ
՚ի գիրս յայսմ առաջ քերան բանք՝ կացցեն ան-
յեղլի, և մինչև ՚ի սպառ ձշմարտեսցի բանն
զոր վեր ՚ի վայր յեղյեղէ Աղոգինէս ընդդեմ
Աելսոսի, թէ Վկրիստոս կերպարանափոխ ա-
րար զաշխարհ, և ելից զսա առաքինութեամբք
որ մինչև ցայնժամ անծանօթք էին։

ՅՕԴՈՒԱԾՈ ՀՆԴԻՆՏՍՄՆԵՐՈՐԴ

ՎԵՐՋԱԲԱՆ

Ձհաւանսիկ ասացի որ ինչ զբարւոյ և զսուռ-
բութեանցն Իսրայէլացւոց և զՎկրիստոնէից
առաջի կայր ինձ ասել։ Ձհաւասիկ զՀնոց և
զնորոց կտակարանաց հաւատացելոցն գծա-
գրեցի զերևելի մասունս վարուց։ Յառաջ-
նումն ՚ի Ձհաւիցս, որպէս ինձ թուի, զբարւոք

պիտառութիւն ժամանակելիցս է տեսանել, և զպատշաճագոյն օրինակ կենցաղավարութեան ՚ի վերայ երկրի։ Իսկ յերկրորդումն ջանացայ ցուցանել օրպիսի՛ ինչ իցեն կեանք այնոցիկ ո՛ր ոց քաղաքավարութիւն յերկինս է, և որք ՚ի մարմնի կեան ըստ հոգւոյ զհոգևոր և զգեր֊ աշխարհիկ կեանսն որ Քրիստոսի հնորհացն են արգասիք։ Յորանելի զանձն համարիմ, ե֊ թէ գտանիցի ո՛ք որ ՚ի ձեռն գրոցս այսորիկ ՚ի միտ առցէ զձշմարիտ տիպս զգօն և քրիս֊ տոնէական կենաց, և ձգնիցի բերել զայնյան֊ ձին։

ՅՈՒՆԿ ԳԻՔՈՅ

ԿԵՆՑԱՂ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՈՑ

ՆԿԱՐԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՍ 1

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ՆԱՀԱՊԵՏԱՑ 9
ՅՕԳ· Ա· Ազնուականութիւն նոցա . . . . . —
Բ· Սատուռածք նոցա և գործ 14
Գ· Սահաւապիտութիւն նոցա 18

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՈՑ· 25
ՅՕԳ· Ա· Ազնուականութիւն նոցա . . . . . —
Բ· Մշակութիւն նոցա 32
Գ· Յաղագս սրբոյ երկրին Հանգամանացն, և արգասաւորութեան նորա 44
Դ· Սատուռածք խոպայէլացւոց 53
Ե· Աբուբսոք և Ձեռագործք 58
Զ· Յաղագս զգեստուց նոցա 65
Է· Յաղագս սղախից նոցա, և սանց 73
Ը· Յաղագս կերակրոց նոցա 78
Թ· Յաղագս միրուքեանցն Խոպայէլացւոց . 84
Ժ· Յաղագս ամուսնութեանց նոցա, և կանանց . 92

ԺԱ. Դասախարակութիւն մանկանց, կրթութիւք, և ուսուցին 103
ԺԲ. Քաղաքական կարգք Իսրայէլացւոց . . 124
ԺԳ. Ջբօսանք նոցա 127
ԺԴ. Սուգ նոցա 131
ԺԵ. Յուղարկաւորութիւն մեռելոց 134
ԺԶ. Կրնք նոցա 137
ԺԷ. Պահք նոցա և ուխտադրութիւնք . . . 151
ԺԸ. Մարգարէք Իսրայէլի 155
ԺԹ. Կառավարութիւն նոցա 160
Ի. Քաղաքական պետութիւն նոցա, և ազատութիւն, և տանուտէրական իշխանութիւն . 173
ԻԱ. Իշխանութիւն ծերոց 180
ԻԲ. Ատեան դատաստանաց նոցա: — Դուռն, և նշանակութիւն բառիս՝ սուրբ գիրս . . 183
ԻԳ. Յաղագս պատերազմաց նոցա 193
ԻԴ. Թագաւորք նոցա 199

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ՀՐԷԻՑ 208
ՅՕԳ. Ա. Գերութիւն նոցա . . . . . —
Բ. Դարձ Հրէից, և իրք նոցա ընդ տէրութեամբ Պարսից 212
Գ. Իրք Հրէից ընդ Ձեռամբ Մակեդոնացւոց . 219
Դ. Թագաւորութիւն Ասմոնեանց 230
Ե. Սովորութիւնք Հրէից՝ յետին ժամանակս. 234
Զ. Աղանդք և մեսսիասութիւնք 241
Է. Ճշմարիտ Իսրայէլացիք 249

ԿԱՆՑԱՂ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԳՐՈՑՑ· 253

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅՕԳ· Ա· Կեանք Քրիստոսի տեառն մերոյ . . . 255
Բ· Եկեղեցին Երուսաղէմացւոց 277

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՅՕԳ· Ա· Թէ որպէսի՛ ինչ էին հեթանոսք նախ քան զդաւանել իւրեանց ի Քրիստոս . . . 288
Բ· Հրահանգք ։— Մկրտութիւն 296
Գ· Ցաղագս աղօթից 304
Դ· Պարապմանն ի գիրս սուրբս . , . . . 309
Ե· Գործ նոցա և արուեստ 316
Զ· Պահք Քրիստոնէից 319
Է· Կերակուրքն 325
Ը· Պարկեշտութիւն քրիստոնէից 329
Թ· Ամուսնութիւնք 338
Ժ· Միաբանութիւն քրիստոնէից 343
ԺԱ· Ժողովք ։— Պատարագ 346
ԺԲ· Թաքնութիւն խորհրդոցն 352
ԺԳ· Զարախօսութիւնք զքրիստոնէից . . . 354
ԺԴ· Դարձեալ և այլ ևս զքրիստոնէից ամբաստանութիւնք 361
ԺԵ· Կարգ դատաստանաց ։— Տանջանք . . . 368
ԺԶ· Հալածանք 371
ԺԷ· Վկայաբանութիւնք սրբոց 376
ԺԸ· Բանտք 379

ԺԹ. Խնամք նշխարաց սրբոց 383
Ի. Խոստովանողք 386
ԻԱ. Նղովք 388
ԻԲ. Ապաշխարութիւն 389
ԻԳ. Վասն Ճգնաւորաց և կուսանաց 401
ԻԴ. Վասն այրեաց, և սարկաւագուհեաց . . 404
ԻԵ. Խնամք զաղքատաց 407
ԻԶ. Անպնդականութիւն 412
ԻԷ. Հիւանդք 416
ԻԸ. Թաղումն կամ յուղարկաւորութիւն մեռելոց. 418
ԻԹ. Եպիսկոպոսունք, և ուխտ եկեղեցւոյ . . 422
Լ. Համբերութիւն քրիստոնէից 436

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

ՅՕԴ. Ա. Թագաւորք քրիստոնեայք 445
Բ. Զև եկեղեցեաց 451
Գ. Չարդք եկեղեցեաց 456
Դ. Թէ զինչ խոկիր էր ընդ եկեղեցիս և ընդ մեհեանս 462
Ե. Չի զգալքս՝ի սպառաւորութիւն են կրօնից. 466
Զ. Կարգաւորութիւն աղօթից պատարագի . 469
Է. Ճառք 474
Ը. Յաղագս սուրբ զգեստուց 482
Թ. Խորհուրդ սրբոյ պատարագին 486
Ժ. Հանգէսք պաշտամանց 491
ԺԱ. Ցօնք, և ուխտաւոր պանդուխտք . . . 495
ԺԲ. Ժողովք 500
ԺԳ. Հրահանգք սպասաւորութեան 502
ԺԴ. Սահմանարութիւն մեղուցեալից . . . 505
ԺԵ. Գնացք ժառանգաւորաց եկեղեցւոյ . . 507
ԺԶ. Ընդունելութիւն եկեղեցականաց . . . 512
ԺԷ. Փարիսեցութիւնք եկեղեցւոյ 517
ԺԸ. Ընկերանոցք 526
ԺԹ. Մեհեանք 530

Ի. Զուգակշիռ միակեցական կենաց ընդ կեանս առաջնոցն քրիստոնէից 543
ԻԱ. Պատճառք միանձանցն զանազանելոյ յայլոց ըստ արտաքին ձևոյն 546

ՄԱՍՆ ՁՈՐՐՈՐԴ

ՅՕԳ. Ա. Ջի Թուլեցան տակաւ քրիստոնեալք . . 554
Բ. Ջէզծումն Հռովմայեցւոց 564
Գ. Ընդհանուր գազաց խուժադուժից, և բարք նոցա 569
Դ. Խառնեալ խուժադուժից ընդ Հռովմայեցիս 576
Ե. Սովորութիւնք քրիստոնէից արեւելեայց . 582
Զ. Սովորութիւնք արեւմտեայց։ — Ընկերգութիւնք որ ի տաճարսդրդ գարս 587
Է. Պահպանութիւն կրօնից 594
Ը. Վերստին ծաղումն բարեպաշտութեան և եկեղեցական կարգաց 598
Թ. Փոփոխումն կարգաց ապաշխարութեան . 603
Ժ. Խաչակիրքն և ներողութիւնք 608
ԺԱ. Բազմութիւն ուսուցչաց 613
ԺԲ. Մշանջենաւորութիւն ոգեամիս վարդապետութեան և օրինակաց բարեաց . . . 620
ԺԳ. Թէ որ զեղծմունք ի ներքս մտեալ, և որպէս անտես արարան 626
ԺԴ. Պէտք մատենիս այսորիկ 629
ԺԵ. Վերջաբան 633

ՀԱՅԿ ԱՍՈՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՑՈՒՆԴԱՄՆԱՑԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅ